Frequentelli

МАСТЕРСКАЯ
Е. Б. Тверь-Ярославская
Сивцевский пер. № 2

Ա. Ա № 8958.

ԲՈՒԼԱՆԸԽ

ԿԱՄ

ՀԱՐՔ ԳԱՐԵԱՔ

Հաւաքեց

Բ Ե Ն Ս Ի.

Խմբագրեց և հրատարակեց

Ե. ԼԱԼԱՅԵԱՆ.

ТИФЛИСКАЯ ГУБЕРНСКАЯ УЧЕНАЯ АРХИВНАЯ БИБЛІОТЕКА
ՀԱՅԿ. ՀԱՅՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
7/XI-1922
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Արտատպուած Ազգագրական Հանդիսից.

ԹԻՖԼԻՍ

Տպարան Կ. Մարտիրոսեանցի | Типографія К. Мартиросіанца

Орбеліановская ул., д. № 1—2.

1901.

Дозволено цензурою. Тифлисъ, 18-го Ноября 1899 года.

2010

2002

Մեծապատիւ

ՏԻԿԻՆ ԵՂԻՍԱԲԷԹ

ՍԱՐԳՍԵԱՆԻՆ

Խորին յարգանքով

Առիւրում է

Ե. ԼԱԼԱՑԵԱՆ

ԲՈՒԼԱՆԸԽ

ԿԱՄ

ՀԱՐՔ ԳԱՒԱՌ

Ռենսէի

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Հարքը Տուրուբերան նահանգի 16-րդ գաւառն է՝ որ հիմա կը կոչուի Բուլանըխ [1]։

Այս գաւառը երկու մասի կը բաժնուի, Վերին և Ներքին Բուլանըխներ, որոնք Խանդրէզ Հուէնէ (կիսավիճակ, փոքր գաւառ. միւդուրլըխ) հետ միասին կը լրացնեն հին Հարքը։

Ազգիս նախահայր Հայկ նահապետը՝ ըստ Մովսէս Խորենացու, Բաբիլոնից երբ վերադարձաւ, իւր առաջին բնակութիւնը այս տեղ հաստատեց. այն գիւղը՝ ուր առաջին անգամ բնակուեցաւ, իւր անունով կոչեց Հայկաշէն. (որ ոմանց կարծիքով Բլէջան սարի արևելեան ստորոտը, այժմեայ Խարբէ-շէր=աւեր քաղաք – կոչուած գիւղի տեղը կընկնայ), իսկ գաւառը՝ Հարք։

Հայկայ և իւր մօտիկ յաջորդներու ժամանակները երկրի կառավարութեան կենտրոնը Հայկաշէն եղած կը լինի. բայց վերջը Տարօնոյ երկրին տիրապետող նախարարութեանը ենթարկուելով՝ կը կառավարուէր վերջնոյս կենտրոնից, որովհետև նպաստաւոր գիրք չունենալով՝ առանձին նախարարութիւն չստեղծեց իւր համար։

Հարքայ առաջին եկեղեցին կամ եպիսկոպոսարանը հիմնեց ս. Լուսաւորիչը, որ կը գտնուէր Մանազկերտի մէջ. բայց որովհետև սորա եպիսկոպոսները երբեմն Մանազկերտի և երբեմն Հարքայ անունով կը յիշատակուին, կը թուի թէ, Ապահունիք և Հարք գաւառ-

---

[1]) Բուլանըխ բառը (տաճ.) կը նշանակէ պղտոր, երևի՝ երկրի սև հողերու և ճահճային մօրուտներու պատճառով, որոնք երբեմն գաւառի մեծ մասը գրաւած էին։

Այս յօդուածը հիմնովին ուղղել և դասաւորել եմ։

Ե. Լ.

ները մէկ թեմ կը կազմէին և մէկ եպիսկոպոս երկու թեմի անունով ևս կը յիշուի։

Այսպէս՝ ըստ Յովհաննէս կաթուղիկոսի, Խոսրով Բ-ի ժամանակ՝ Ալբիանոսը Հարքայ եպիսկոպոսն է, ըստ Բուզանդայ՝ Մանազկերտի։

Ե. Դարուն՝ երևի այս թեմը բաժանուեցաւ երկու մասի և իւրաքանչիւրը իւր առանձին եպիսկոպոսարանը ունէր, որովհետև Արտաշատի ժողովին ներկայացան Հարքայ անունով Մելիտէ եպիսկոպոսը, իսկ Ապահունեաց անունովը Երեմիա եպիսկոպոսը։

Ներսէս Ձինոզի ժամանակ, Դունայ ժողովին (645) Հարքայ անունով ներկայացաւ Ներսէս եպիսկոպոսը, որ կաթուղիկոսից անմիջապէս յետոյ կը յիշուի։

Մանազկերտի ժողովին ներկայ էր Ալփիոս եպիսկոպոսը. (Հարքայ անունով), իսկ Լաստիվերտցին կը յիշէ ոմն Յակովբոս եպիսկոպոս, որ Թոնդրակեցոց աղանդին հետևող լինելով՝ ճակատը աղուեսադրոշմով խարեց ժամանակի հոգևորականութիւնը։

Հագարացոց և Թրքական տիրապետութեան ժամանակները, երբ Խլաթ և Մանազկերտ քաղաքները Զահի—Արմէն կոչուած ամիրաները կը նստէին, Հարքը կը պատկանէր այս կենդրոններից մէկին կամ միւսին։

1053-ին, Մանազկերտի պաշարման ժամանակը, իբրև սահմանակից գաւառ Ապահունեաց և միևնոյն կենտրոն ունենալով Մանազկերտ քաղաքը, Հարքը ենթարկուեցաւ անշուշտ Տուղրիլ բէկի կատաղի արշաւանացը ու աւերածութեանցը։

Այնուհետև թէ քանի քանի ամիրաներու, բէկերու և ազդեցիկ բռնակալներու ձեռքը ընկած ու ելած է՝ այդ միայն ժամանակին յայտնի է։ Թուականիցս դար ու կէս առաջ, Բուլանըխը կը պատկանէր Տարօնոյ երկրին տիրող Ալագին-բէկի իշխանութեանը ու կը կառավարուէր Մէ-գրոբ ու Մէ-ռէլլէ կոչուած պաշտօնեաներով, իսկ Մանազկերտ քաղաքն ու գաւառը կը պատկանէր Բանուգի կոչուած թուրքերուն, որոնք մինչև այժմ ևս կան և տակաւին կը կոչուին Բէրդի Բէկեր։

Այժմ Բուլանըխ և Մանազկերտ (Ապահունիք) գաւառները Մշոյ առաջնորդութեան վիճակը կը կազմեն իւրաքանչիւրն իւր առանձին փոխանորդութիւնով։ Բուլանըխայ փոխ-առաջնորդը կը նստի Կոփա ս. Դանիէլի վանքը (միաբաններու աւագը), իսկ Մանազկերտին՝ որ սովորաբար քահանայ մ'է, ի Մանազկերտ [1])։

Քաղաքականապէս այժմ Վերին և Ներքին Բուլանըխները կը

---

1) „Ստորագրութիւն Հին Հայաստանի" Ինճիճեան (տես Հարք"). „Լուսայ" հանդէս, 1897, գիրք Ա. (տես Մշոյ Մէ-գրոբ)։

կազմեն մէկ Խ-ը (գաւառ), որ Բիթլիսի վիլայէթի մէջ կընկնայ և Մշոյ միութիւնի վիլայէթանը ենթարկուած է։

—

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Այժմեայ Բուլանըխը իւր քաղաքանապէս որոշուած յանտնի սահմաններովը՝ կընկնայ 59° 33′—60° 3′ արևելեան երկարութեան և 39° 12′ հիւսիսային լայնութեան աստիճաններու տակը. որով ամբողջ գաւառի երկարութիւնը հաւասար է $57^1/_2$ վերստի և լայնութիւնը՝ 23 վերստի։

Սահմանը.—Արևելքից և հիւսիսից՝ սահմանակից է Մանազկերտ (Ապահունիք) գաւառին և, այս սահմանակցութեան մէջ մի որևէ բնական բաժանումն—լեռ կամ գետ—չկայ. հարաւից՝ Խլաթ (Բգնունիք) և Տարօն գաւառներուն, անջրպետող գծերն են Քօսուրայ (Վարաժնունեաց) լեռնաշղթայն, Նաղուկայ լիճը և Քաքաւու գիւղի Ս-ը-ա-ն-ը-ը. արևմուտքից՝ Խնուս (Մարդաղի) գաւառին և Խանդրէզ Դ-ա-հ-ի-ն, մէջ տեղ ընկած լինելով Խօյլի-Բարա լեռը, Խամուր բերդի սարը և վերջնոյս կից Ջեռնակ լեռնաշղթայն։

Դիրքը.—Դիրքը լեռնային է և բաղկացած է անհամար մեծ ու փոքր Ս-ը-ա-ն-ե-ր-ից, դարու դաշտերից, բլուր և բլրակներից և զատնք բաժանող նեղ ու լայն և երկայն ու կարճ ձորերից ու ձորակներից։ Ամբողջ Հարք գաւառի մէջ կարելի է տեսնել մի քանի ոչ շատ տափարակ ու հարթ դաշտակներ, որպիսիք են ի Վերին Բուլանըխ 1) Խաչանոյ դաշտը, որ Խաչլուայ կամ Խաղանայ լճակից կսկսի և մինչև Քակաւու գիւղը կը տարածուի. 2) Կոփ գիւղի՝ Աջի սու, Ջօռեր, Բաստուար, Ալիս և Ջամբ կոչուած դուրանները ու յակոնները՝ որ դէպի արևմուտք երկարանալով կը միանան Մանազկերտի Հ-Ը-Ա-Ն-Գ (եօթներանգ) ընդարձակ դաշտին և կը վերջանան Արածանի գետի և Ջեռնակայ սարափանց վրայ. 3) Կողակայ դաշտակը. 4) Լիզ գիւղի Կ-ի-ր-ի մարգաստանը և Ջահբարաթայ գեղեցկադիր դուրանը (ի ներքին Բուլանըխ)։

Առհասարակ Բուլանըխին և շրջակայ գաւառները, իբրև

կից երկիրներ Բարձր Հայոց Բիւզէօլ լեռներու, կանուանուին (տաճկ.) «սրդոտ», որու իսկական նշանակութիւնն է թէև «սահմանագլուխ», բայց Հայ և Քուրդ ժողովուրդը Բոլշրոնոպոլի մըտքով կը գործածեն [1]:

Լեռներ.—Բուլանըխայ ամենաբարձր և գլխաւոր լեռն է. ա) Բէջան [2], որ ընկած լինելով դաւառի մէջ տեղը՝ բաժանուած է երկու մասի և, այդ մասերը կը կոչուին Վերին և Ներքին Բուլանըխներ: Բէջան լեռը բազմաթիւ թևեր և գագաթներ ունի, որոնցից նշանաւորներն են՝ 1) Դոնան. 2) Բերդի սար. 3) Զէր-ին. 4) Ջոլ Հայաղ. 5) Փոքր Հայաղ. 6) Խանչաս. 7) Քոսայ սար. 8) Քալոյ-տար. 9) Ջրուշլորս- սար. 10) Ջոլ ծախնոց. 11) Ձոտար Բուլաղ և այլն:

բ) Խոյլի-Բաբա [3].—Այս լեռը կը գտնուի Խնուսայ, Խանդրէզի և Ներքին Բուլանըխայ մէջ տեղը. Բէջանից յետոյ երկրորդը իւր մեծութեամբ:

գ) Խոմուր Բերդ—սար.—սկսելով Խոյլի-բաբա սարից հարաւ արևմուտքից երկարացած է Հիւսիս արևելք, որու շարունակութիւնն է՝

դ) Զերնոյ լեռնաշղթան, որ ուղիղ Հիւսիս-Հարաւ կերկարանայ և որու ամենաբարձր գագաթը 8867 ոտք բարձրութիւն ունի:

ե) Ներքին Բուլանըխայ Հարաւը երկարացած է Քոսայ լեռնաշղթան և՝

---

[1]) „ . . . և ինքն (Հայկ) խաղայ, ասէ, այլոց աղխիւն ընդ արևմուտս Հիւսիսոյ, գայ բնակէ ի Բոլշրոնոպոլ: գաշտի միում և անուանէ զանուն լեռնոպոլին Հարս“ (Խոր.):

[2]) Բէջան անունը նախ կստուգաբանուի՝ իբր Բէլայ Ջան (Բէլայ մարմինը), որ հաւանական չէ, ծերերու պատմածին նայելով՝ ոմն Բէջան թագաւոր, երբեմն տիրեր է այդ կողմերը և լեռը նորա անունով կոչուեր է Բէջան: Բայց որովհետև Խլաթի գաւառի Փրխուս գիւղացիք այդ սարից փչող քամին լեռան անունով Բէջ կանուանեն, որ ըստ երևոյթին՝ քրդերէնի, նաև պարսկերէնի օրէնքով, Բէջանի եզակի ձևը կրնայ լինել, պէտք է ընդունել, որ իւր յատուկ նշանակութիւնը կունենայ:

[3]) Փողովրդական աւանդութեան համաձայն՝ հին ժամանակ Խոյեցի մի ճգնաւոր այս լեռան գլուխը ճգնութեամբ պարապելով՝ սարը նորա անունով կոչուեր է Խոյլի-Բաբա (Խոյեցի հայրիկ):

ղ) Վերին Բուլանըխայ Հարաւը՝ Քակարլու գիւղի քառանեը կամ լեռնաշղթան։

Բուլանըխներն ունին մի քանի Հաղորդակցութեան դրռներ կամ կիրճեր՝ շրջակայ գաւառները անցնելու Համար. արևմտեան Հարաւային կողմից՝ Զաբէխայ գէօռ-էը, Ներքին Բուլանըխայ Հարաւը՝ Կէչա-ռաշա- ձորը, Վերին Բուլանըխայ Հարաւը՝ Գրռայ գէօռ-էը, Տարօն և Խլաթ երթալու Համար։ Խնուս գաւառի կողմից՝ Ջեռնակայ փոքր լեռնուղին։

Լեռ.—Բուլանըխայ, Բղնունեաց և Վարաժնունիքի մէջ տեղը ընկած է 1) Նաղա-էյ լիճը, կապտագոյն երեսով, քաղցրահամ ջրով և Համեղ ձկներով լիք. ձմեռը կը սառի և վրայով ճամբորդութիւն կը լինի։ Երկրի ռադման տեսակէտով շրջակայ գաւառները ոչ մի կերպ չեն օգտուեր այս լճից. միայն Բղնունեաց Փրխուս գիւղի յետևով առու մի կը բղխի և առանց արտօրէից ջուր բաշխելու՝ կը վազէ Վանայ ծովը. թէև երբեմն կը դադրի Հոսելուց. տարածութիւնը մօտ $2^1/_4$ ժամ կը Հաշուի։

2. Խաչլա-այ էամ Խաղանայ լճակ.—մօտիկ գտնուող Համանուն գիւղի և դաշտակի անունով այդպէս կոչուած. ջուրը պղտոր՝ բայց քաղցրահամ, և բազմաթիւ մանր ու բէդ ձկներով լիք. շրջակայ գիւղօրէից իւր բաշխած ջրովը Վերին Բուլանըխայ Նեղոսը կոչուելու արժանի է. ձմեռը կը սառի և վրայով ճամբորդութիւն կը լինի։ Այս լճակը գոյացած է անձրևաջրերից, բայց ժողովուրդը կը Հաստատէ՝ որ մէջը ջրի ակներ ևս կը գտնուին, թէև երաշտ տարիները դգալի կերպով կը նուազի. տարածութիւնը մէկ քառորդ ժամ է։

Լճակիս մէջ կան երկու փոքրիկ կղզիներ, ուր քաջ լողորները կարող են երթալ և գալ. սրանք թուչնոց ծերտից սպիտակած են և Հեռուից կրային գոյն ու փայլ ունին [1]։

---

[1]) Այս լճակի մէջ կը գտնուի նաև Պ-ուչ Ա-ֆ-ռոլ հրեղէն թուրը, որու մասին ժողովուրդը հետևեալ աւանդութիւնը ունի։

„Զէխեաղուպ գիւղի նախորդը՝ իւր նախիրը արածելու ժամանակ, պա-ռ-ի ինչը նանգիստ չմնար և պատահմամբ գետնից մի ինչ ռ-ռ-ոլ (կարծելով թէ քար է) վերցնելով՝ չար կովու կողքին կը խփէ, որ ծակելով կեն-

Գեսեր. 1) Մ՝ՐՄՊ գետ (Արածանին), որ Մանազկերտ գաւառից կանցնի Բուլանըխը և Զհար Բօրայ սեղմ կրճերը ճեղքելով կանցնի Տարօն: Վերին Բուլանըխայ Ձէրվանշէի գիւղի առաջ Արածանուն կը միանայ Խնուս գետը:

դանու կողերը՝ միւս կողմից դուրս կուգայ. նախորդը կարծուած հրաշալի քարը կը պահէ. պառաւ կերթայ Պ՝ՐՇ Ի՝ՄՈՐՔ մօտ գանգատի [1]). Թագաւորը նախորդը կանչելով կուզէ պատժել, բայց սա ցոյց կուտայ կլորակ առարկան՝ որ մէկ հարուածով կովու կողերը ծակելով անցեր էր միւս կողմը: Պռօշ թագաւորը շատ իմաստուն կը լինի, նախորդը առանց պատժելու ճանապարհ կը դնէ, պառաւին ևս իւր կովու գինը կը վճարէ, իսկ ՀԷՐ ԽՐԸ՝ որ Հրաշալի պողպատ կը լինի, ինքը կառնէ, և Նմոյշի համար կտոր մի վերցնելով, կը յանձնէ թուր շինողին իրեն համար նախ մի Հէրն պատրաստելու. հերոնը ստանալուց յետոյ մնացած երկաթն ևս կը յանձնէ մի ԲՈՒՐ շինելու: Թուր շինողը կիմանայ թագաւորի յանձնած երկաթի զօրութիւնը, այդ երկաթը կը պահէ և ուրիշ հասարակ մետաղից մի թուր կը պատրաստէ թագաւորի համար. ներկայացուած ժամանակ՝ թագաւորը հերոնը կը զարկէ թրի լաստին, որ ջրի նման ծակելով միւս կողմը կանցնի. վարպետը կը բռնուի իւր խարդախութեան մէջը և թագաւորի սպառնալիքի վրայ կստիպուի իսկական պողպատիցը պատրաստել Հրաշալի ԲՈՒՐԸ Պ՝ՐՇ ԻՄՈՐՔ: Այս թրի գլխաւոր յատկութիւնը այն էր, որ թշնամուն հարուած տուած ժամանակ՝ որքան էլ սա հեռու գտնուէր՝ ՃՈՒՂով [2]) կերկննար և հարուածը, որ անկասկած մահացու պիտի լինէր, կը հասցնէր:

Պռօշ թագաւորը կը ծերանայ. մտածելով որ իւր անցմանից յետոյ թրի ժառանգութեան համար իւր երեք որդոց մէջ անշուշտ խռովութիւն և արնհեղութիւն տեղի կունենայ, կը կանչէ երեց որդին և թուրը յանձնելով նրան՝ կը պատուիրէ տանել և ձգել մօտակայ աղբիւրի մէջը և գալ, ու ինչ որ կը պատահի պատմել իրեն: Երեց որդին թուրը կը պահէ. և ներկայանալով թագաւորին կը յայտնէ որ իւր հրամանը կատարած է. բայց պատահածի մասին ոչինչ չասեր: Թագաւորը թուրը կը յանձնէ ՄԻՋԻՆ որդուն. սա ևս միևնոյն կերպ կը խաբէ թագաւոր հայրը. վերջապէս կը յանձնուի փոքր որդուն, սա խկութեամբ կը կատարէ իւր հօր պատուէրը. և երբ հրաշալի պողպատը կը ձգէ աղբիւրի մէջ՝ ձիու գլուխը դարձուցած ամենայն ուժով կը փախչի, բայց երիվարի յետևի ոտքերը միշտ ջրի մէջ կը լինին, մինչև որ ջուրն իւր խաթը (չափը) կառնէ և յետև դառնալով ահագին ծով մի տարածուած կը տեսնէ—Խազանայ լճակը:

Քաջ-Էրէց ամենահզօրը թուրը առնելով իւր գլխու տակը կը դնէ և, մինչև այսօր էլ դեռ իւր գլխու տակը դրած է, ու ամէն ՈՒՐԲԱԹ օր՝ երբ միւս քաջքերը կուգան կռուելու հրաշալի թրի համար, մեծ իրարանցում և աղմուկ տեղի կունենայ ծովու յատակը. այդ պատճառով ջուրը կը պղտորուի և եթէ ուշադրութեամբ մտիկ անող լինի՝ որոտում կը լսուի ծովի տակից":

1) Ոմանք այս թագաւորի տեղը ԼՈՒՐ գիւղը կը համարեն և, ոմանք՝ ԿԷՂՀԷՂ (այժմ աւերակ) բերդը, որ Կոփայ վանքի վերևը կը գտնուի:

2) ՃՈՒՂ կը նշանակէ հեղուկ մարմիններու ծորելով երկարնալը, օրինակ մեղրի և հալած մետաղներու ճևալը, ծորելը:

Մուրաղ գետից ժողովուրդը առոգման տեսակէտով ոչ մի կերպ չօգտուեր, միայն դարերից ի վեր Արածանին իւր արած ճամբորդութեան միջոցին աջ ու ձախ խոտորելով կազմած է տափարակ, խոտաւէտ և սքանչելի դրքով ու յարմարութիւններով բարեբեր դաշտ ու դուրաններ, որանցից առատ բերք և խոտ ու արօտ կստացուի:

2) Քոռ ջուր.—Սա կը բղխի Խազանայ լճակից, որ պղտոր լինելու համար ՀՕՐ (կոյր) անունը ստացեր է: Քոռ ջուրը թէև փոքր՝ բայց շրջակայ գիւղերից իւր բաշխած ջրովը կարի օգտակար և բարեբար դեր ունի ստանձնած. բազմաթիւ ջրաղացներ դարձնելով և արտ ու անդաստաններու կենդանութիւն բաշխելով կը վազէ դէպի արևմուտք և կը թափի Արածանին: Այս գետակն ևս աջ ու ձախ ծռուելով առած է բնակչաց տրղմային (լիլ) գորշագոյն և վերին աստիճանի ընտիր ու պարար հողեր, որոնք ժողովրդական բարբառով ՅՈՒՆ կը կոչուին:

3) Սէ- ջուր.—Բլէջան սարի հիւսիսը գտնուող ԳՈՒՆԼԷ կոչուած փոքր լեռան տակից բղխելով կը թափի Քոռ ջրի մէջ. այս վտակը երբեմն կը բարձրանար Ալի՝ կոչուած դաշտի վրայ և կազմած էր Կոփայ երևելի շամբը, որ հետզհետէ ցամաքելով դարձած է այսօր ընդարձակ մարգագետին (տարեկան մօտ 2000 բարդ խոտ արտադրող):

4) Վարդ կամ Լոյս գետ.—Բլէջան լեռան արևմտեան կողմը գտնուած Փիոնք և Մալաքենդ գիւղերու աղբիւրներից գոյանալով և բաւական թուով ջրաղացներու և արտօրէից ջուր տալով կանցնի արևմուտք և կը թափի Արածանին:

Անհամար ու անթիւ են սառնորակ աղբիւրները, առուներն ու առուակները, որոնց մի առ մի թուելը անկարելի է, և որոնցով կարող է պարծենալ Բուլանըխը. այսպէս Կոնիէ-էնէ ու Զոռոր Բո-լաղը ի Բլէջան. Բլուր, Թեղուտ, Գեբօլան և ուրիշ գիւղերու աղբիւրները, որ կենդանարար զովութիւն և համ ունին:

Կլիմայ. Բուլանըխայ կլիման գիտնականօրէն չափուած չէ. բայց առողջարար է իւր բարձր և լեռնային դրքի շնորհիւ. թէև հիւանդութիւններից զերծ չէ ժողովուրդը, բայց այդ ոչ

եթէ կլիմային՝ այլ անմաքուր կենցաղավարութեան տալու է, որ յատուկ է գիւղական անյարմար բնակարաններուն *)։

Գարուն՝ հաճելի եղանակով կսկսի, թէև փոփոխական. ամառը շոգ և չորային, և Ֆարաոնայ երկրի նման թէև լեռները երբեմն մշուշով կը ծածկուին ու բաւական առատութեամբ գազայ կիջնէ, բայց նորա նման ենթարկուած չէ մարախի վտանգին, որ սովորաբար տաք տեղերը իւր պատրաստի հողը կը գտնէ։

Աշուն՝ երբ չորային է, գիշերները թանձր եղեամն կը նստի, որ քլաչափ խորութեամբ հողի ներսը կը թափանցէ, հակառակ պարագային՝ սուր և խայթող ցուրտ կը լինի տեղացող հողմախառն անձրևներու պատճառով։

Ձմեռուայ սկիզբները առանց շատ ցուրտ ու ցմախի անընդհատ ձիւն կը տեղայ և, ինչպէս ամառնային՝ նոյնպէս և ձմեռնային արևադարձներից յետոյ երկար օրեր միօրինակ պարզկայ կը լինին, որ կը կոչուի (քրգ.) ՀԷՐ (քաւսունք)։ Ձլայի ցուրտը վերջին աստիճան կը սաստկանայ, գետինը այնպիսի ուժով կը ժրէ՝ որ շինութեանց տանիքները կը տրաքուին, Խագանայ լճակի սառոյցը, որ արշինից աւելի թանձր կը լինի, կը բացուի և սառոյցի ճեղքուելու ձայնն ու որոտումը օրերով և շաբաթներով կը լսուի գաւառի ամէն կողմերը. գիշերները թանձր մէգ կը նստի ամբողջ գաւառի վրայ. մինչև որ արևը կը ծագի ու մէգը կսկսի կամաց-կամաց բարձրանալ սարերը։

Մշոյ աշխարհի ձմեռը շատ շատով կուգայ. Նոյեմբեր և երբեմն Հոկտեմբեր ամիսներից կսկսի ու կերկարի մինչև Ապրիլի 10—20, երբեմն աւելի երկար ու կարճ. անձիւն ձմեռներ ևս պատահեր են, ինչպէս կը պատմեն ծերերը. և այդպիսի տարիները կը կոչուին ԽԱ ԳՈՒՂԷ։

Յունուարի վեցը ձմեռուայ կէսը կը հաշուի, որից յետոյ կուգան «Ձլատ (փետրուար) օր քանց օր վատ» օրերը։ ԳԷՂԽԱՆՋԸ (գայլերը վառող, խանձող ցուրտը). ՊԱՐԱՆՑ ՅՈՒՐԸ,

*) 1892 թուականի խօլերան միայն 2—3 գեսեզերեայ գիւղերը տարածուեցաւ և թեթև զոհեր տանելով անհետացաւ։

ա. Սարգիսն ո՞ւ ի՞նչ բ՞էրը, Զիփը, Զը՞ռ-Զիփը, Տանայ և Տանատանայ օրերը, որոնք եօթնեակ օրեր ունեցող ցուրտ եղանակի անուններ են *):

Վերջին ՀԻՍԸ (օդի խառնակութիւն) կը համարուի (գոմէշներ ջարդողը), այսինքն՝ Ապրիլի 7-ը, բայց այդ ժամանակն ևս մեր երկրի օդ ու եղանակին չեն կարող վստահել և սովորութիւն ունին ասելու.

Հաւթէ Ադարէ՝
Ամառաբու սարէ դարէ,
Նա լը խախռէվ ու Ծուարէ,
Ա՝ լը Մուսուլ ու Զանգալ է»։

Ադար ամսի եօթին
Ձուրը եկաւ Ծառի գլուխը.
Բայց ոչ թէ ի Խախռև ու Ծուար, **)
Այլ Մուսուլայ ու Զանգալայ կողմերը։

Փետրուարի վերջերը բարդ ի բարդ ամպեր կը գոյանան, եղանակը կը մեղմանայ, օդը հաճելի քնքշութեամբ կանօսրանայ և երբեմն մանրիկ խլորիկներ (ձիւն) կը թափին ցած. վայրկենական փոփոխութեամբ կը տեղայ չոր ձիւն, ապա շլոփայ (ջրախառն և խոշոր դրքով ձիւն) որ լակլակ խառի (արագելի ձիւն) ևս կը կոչուի։ Բայց նորէն պարզկան կը ժրէ ձիւնը, որ հիանալի եղուճ կամ (քրդ.) ՀՈՒՐՇ կը գոյանայ և, որու վրայ ձիաւորներն անգամ կարող են ազատօրէն անց ու դարձ անել, նորից մի շլոփայ, մի չոր ձիւն, մի ԼԱԼԽ անձրև և դարձեալ ձիւն, ապա թանձր մառախուղ՝ որ օրերով գետնին կպած կը լինի, իրարու յաջորդելով կը մաքառեն մէկմէկու հետ, երկնելու համար Հայոց աշխարհի չնաշխարհիկ գեղեցիկը։

---

*) Հաւթ Զիփ,
Հաւթ Զրռ-Զիփ,
Հաւթ Տանայ
Հաւթ Տանատանայ
Էէ հաւթ ռօժժի՝
Էր պաշռաայ մանա։

(Եօթ օր Զիփ,
Եօթ օր Զրռ-Զիփ
Եօթ օր Տանայ
Եօթ՝ Տանատանայ,
Դեռ եօթ օր էլ
Յետև կը մնայ)։

Բայց Զիփը ասած ունի՝

Զիփ ըմ՝ ու Զիփէդարիմ,
Արքէ բարրմ՝ բուհարրմ,
Արքէ նա բարրմ՝
Սարրմ ու սարմրդարրմ.

Զիփ՝ ու Զիփէդարն եմ,
Թէ անձրևեցի՝ գարուն եմ,
Թէ չանձրևեցի՝ ցուրտ ու սառնամանիք եմ։

**) Բաղէշին մօտիկ՝ հայ գիւղեր են։

«Մարտ վեց՝ ձիւն ձեան ցեց», և «Մարտ ընին՝ լակլակ վրը ընին» գալով կողջունէ Հայոց գարունը։ Երկինքը կը մքքլէ (մթնանալ) և կը ցօղէ երկրորդ թաթախ անձրևը. բայց թաթախ անձրևները 8—10 թիզ բարձրութեամբ և հողի վրայ գմասուած ձեան համար ոչինչ են. անձրևը միայն կը կակղացնէ սպիտակ սաւանի մակերևոյթը և հարա- հովէն փչելով՝ ձիւնը կսկսի լըխկիլ (կակղանալ) կտոր կտոր դառնալ ու դարու- կողերը գլուխնին դուրս կուտան հնդամսեայ բանդարդելանոցից։

Երկրի սևութիւնը կսկսի արևելեան կողմից, Վանայ ծո- վու ազդեցութեան շնորհիւ, թէև ձիւն հալեցնողը հարաւ քա- մին և նոյն ուղղութեամբ տեղացող անձրևներն են։

Ապրիլի 10—15-ից յետոյ կսկսին ՀԷՅՐ-ՀԷՐԳԵՐը, կեանքն ու բնութիւնը նորոգութեան շրջանը կը մտնեն։

Հողմուցք. Հակառակ ուղղութեամբ փչող երկու ախոյեան քամիներ կը հասնեն Բուլանըխ դաւառը, որոնք երկրի բուսա- կանութեան վրայ զգալի ազդեցութիւն ունին և նորա բախտը կորոշեն։

1) Մշոյ հովէն, որ կը փչէ արևմտեան հարաւային ուղ- ղութեամբ. տաք երկիրներից գալով՝ տաք ու չոր է, հացա- բոյսերու վրայ կարմրագոյն ժանգ թափելով ցօղունները կը հարէ և, հատիկները կը նուազացնէ (բարակնալ, նուազրուկ դառնալ)։

2) Աջմո- հովէն, որ Պարսից կամ արևելեան կողմէն կը հոսէ, և Վանայ ծովու վրայից անցնելով՝ կենդանարար դով- թիւն և տամկութիւն կը շնորհէ բուսականութեան։ Կը լինին տարիներ, բոլորովին երաշտ, որ ամենևին անձրև չցօղեր, բայց այս բարերար քամու շնորհիւ առատ բերք կստացուի, ցորենի երկայնութիւնը կանգունից աւելի չլիներ, բայց կը ծանրաբեռ- նուին ատաք հասկերով։

Տարօրինակ է, որ այս հողմերը բոլորովին ներհակ ազ- դեցութիւն ունին Տարօնոյ դաշտերի բուսականութեան վրայ. ինչ որ մէկի համար կենդանատու է՝ միւսի համար մահացու է. դորա պատճառը՝ ժողովուրդը այս երկու դաւառներն անջրպե- տող լեռներուն կուտայ. որոնց մէջ գտնուած վնասակար հան- քերու վրայից օդը անցնելով կը թունաւորուի (?)։

3) Հարա- տամբ.—ուղիղ հարաւից կը փչէ գարնան սկզբներուն, որ երկրի սեւութեան գլխաւոր պատճառն է։

4) Հի-ոխ տամբ.—խեղդ աշնան և ձմեռ ժամանակ հիւսիսից փչող խայթող և սուր քամին, որ շատ երկար չտևեր։

5) Պարզեղ. — Հիւսիս-արևմտեան կողմից փչող խիստ ցուրտ և խայթող բարակ քամին, որու հոսելը նշան է երկնքի պարզա-էլա-ն, որ իրաւի իւր անունը կարդարացնէ։

6) Պակաս չեն նաև սարսոնի տամբերը (փոքրիկ թաթառ) և փոնորիքները, որ մինչև երկինքը կը բարձրանան։

7) Ձմեռները անպակաս են բէոը (բուք) և վէրոնեբէերը (զետնի երեսով եղած բուքը), Ծա-տամբերը ևայլն ևայլն։

—

Բուսականութիւն.—Համեմատելով շրջակայքի հետ, Բուլանըխը լեռնադաշտային երկիր լինելով՝ գերազանց է իւր ճոխ բուսականութեամբը։ Ստորև դնում ենք այն բոյսերի անունները, որոնց լատիներէնը կարողացանք գտնել, օգտուելով մասամբ բուսաբանական ռուսերէն ատլասից, մասամբ էլ Թիֆլիսի շրջակայքից ինձ ծանօթ բոյսերը պ. Աղէքսանդր Քալանթարի միջոցով ներկայացնելով երկրագործական մինիստրի լիազօր՝ պ. Մեդվեդևին *)։

Աղբաղբուկ Sisymbrium Sophia, Հորցած ժամանակ կընմանի մանանեխի խոտին։

Աբմարիրոն կամ Քարտիկ Geranium pratens եւ Geranium Robertianum.

Աղբաթց արիւն Anoplantus Fournefortii.

Ամիշ կամ Ամիշկ.—առուոյտը, երբ ամառը կը հնձեն, երկրորդ անգամ ջուր կուտան և այս անգամ աճող փափուկ առուոյտը կանուանեն ամիշ կամ ամիշկ։

Անոխ (Անանուխ) Mentha silvestris.

Առանթառան կամ Անթառամ Grafalium arenarium.

Արջընկոյզ Datura sfromonium փշախնձորի.

Աւելուկ Rumex obfusifolia, Հաստարմատ բազմամեայ բոյս, որու թփերը կը գալեն՝ ձմռան ձիթով կամ իւղով տապակելու կամ առանձին սխտորով միասին ուտելու համար, իսկ 1—1½ արշին բարձրութեամբ ցողունները կը գործածուին իբրև ծ-ոխ (Թիֆլիզցոց Խոշ կոչուած բանջարը)։

*) Պարտք եմ համարում այս երկու պարոններին խորին շնորհակալութիւնս յայտնելու։

ՀՍՍՀ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
7/XI 1922

Աւել հոտուկ Arlemisia. Ծաղիկ աւել.—մանիշակագոյն ծաղիկ ունեցող աւելխոտը. Ոսկոր աւել.—փայտի նման ամուր մի տեսակ ընտիր աւելխոտ.—Խաբուն աւել. Կարմիր աւել։

Բլթեմ, թէև ծաղիկ չունի, բայց նշանաւոր է իւր պատուական հոտովը. 1—2 թիզ բարձրութեամբ, հերթադիր թփերով, սակաւ ինչ նման դաղձի։ Գեղջուկ աղջկերանց միակ անուշունքը (духи), որ մանրելով և շաղախելով կը չորացնեն և իրե՛ց գօտիկներու մէջ կը դնեն։

Բաւեղ կամ Բաղեղ Convolvulus sepium և Orvensis L.

Գազ կլոր, Astragalus (tragagantus Caucasicus) Ուռ գազ, Տափակ գազ, Մեղուագազ, Կարմիր գազ, Թսան գազ։ Գազերը ընդհանրապէս բոյլ կարձակեն, Ծիթրենի նման մանր և բաց կարմիր գոյնով ծաղիկներ կուտան. չորացնելով վառարանի լաւ կպչան կը լինին և, յարդի պակասութեան ժամանակ, ճղճղնելով անասնոց կը կերցնեն, որ թէև անասունները ախորժակով կուտեն, բայց միսը կը դառնացնէ։ Նշանաւոր է նաև գազի խիժը (խէժ), որ շրեշից աւելի մաճուցիկ է։

Գաղտիկ ուռ Myosurus minimus.

Գիզ Testuca sp. գզուած բրդի նման՝ հատ հատ ճարխոտ, որ ընտիր ճարակ է անասնոց (լեռները բուսնող)։

Գորտնուկ Achilla mille folium.

Գորտնբուրդ կամ մամուռ. ջրերու և ճահիճներու վրայ գոյացած բուսական մազմզուկը, որ չորացնելով՝ շատ տեղեր բրդի փոխարէն բարձերու մէջ կը լցնեն։

Գուզիկ, Scorzonesa hispanica.—խինձ, նուիճ, այծամօրուք, վիշապախոտ։

Չիագուզիկ.—երկարարմատ գուզիկ, որ դառն կաթ ունենալու համար չուտուիր։

Դաղձ Mentha piperita.

Դասսոf Stipa pennata.

Դդմաճ—դդմի թփերու նման բոլորաձև բայց կաղամբի գոյնով և միմիայն գետեզերքը բուսնող բոյս և բանջար, նման asarum բոյսին. նորա թփերը խաշելով «ոչ» կը պատրաստեն։

Եզան լեզու plantagomedia.

Երեքնուկ Trifolium pratens.

Երնջնակ Eryngium planum.—դալար ժամանակ թէ հում կուտուի և թէ աղցան կը դրուի։

Թրուարաւ Rumea acetoso.

Փախ.—Հանրածանօթ և շատ գործածական բանջար (ըստ

Թիֆլիզցոց՝ Բոշ, և ս Ֆոշ, Խոշոշ (տաճ. եաբանի թուրփ, բուրչալաս), որու դալար որձան խաշելով և թթուեցնելով կուտեն, բայց ջղային թելերից կազմուած լինելով՝ դժուարամարս է։

Իշկաբնուկ Euphorbia sp.

Լոբսակ Mandragora Bryona Mocrophylla.

Լուի ծաղիկ, Anthemis nobilis.

Խաւարձիլ (խաւարձիլ Rheum Ribes. քրգերէն՝ Ռըմբէզ).—Ծանօթ իւր լիմոնահամ թթուութեամբը. սորա իգայինը (միայն թըփերը՝ առանց որձայի) կը կոչուի Գոբ։

Խոլորս Vicia cracca.

Խունդաս Verbascum thapsus.

Խուվխոս Scrophularia sp. s. vernolis, s. alota, s. (nodosa).

Ծնեբեկ Asparagus officinalis.—դալար ժամանակ իւղով, ձուով տապակելով կուտուի. մեծնալով՝ կը կոչուի Ջանոզոզ, կարմիր կլորակ և սև կորիզով պտուղներ տալուն համար։

Ծիբրեն Thimus acinos.

Կաւ Onopardon acanthium.

Կարմիր գլուխ (խոտ)—holeus lanatus.

Կեռոյ-կեռոյ (Պրտու) Tipha latifolia.

Կեռս կամ կեռտուկ.—Երկու տեսակ կայ, արտի՝ և սարի. ընտիրը սարի կեռտուկն է, որ գորշագոյն թուփ և որձայ ունի և հում կուտուի։ Իսկ արմատից ստացած կաթը՝ արևի դէմ դնելով կամ թեթև եփ տալով, կը մածնի և կը պատրաստուի հանրածանօթ ուշատ գործածական Ֆանը (մաստակ)։

Կիծուկ Sentaura cyanus-bacuhesa.—Դարնան սկզբներուն երեխայք կուտեն արմատը։

Կոր ճիլ Scirpus iacustris.

Կոպղ Carbina acaulis.

Կորնկան Coronilla varia.

Կորնկնուկ Trifolium arvens.

Կուռբ փսիկ Bromus mollis.

Կցկցուկ կամ Ուծաթխոս Equisetum arvense.

Հաջի բաս Butomus umbellatus.

Հաւաժոր Onosmu sp.—սորա գազարի նման կարմրագոյն արմատը գիւղացիք ձեռնափայտերու վրայ կապելով գոյնզգոյն կը ներկեն։

Ճարճուկ Cichorium intibus.

Ճլնլուկ (մանրիկ ճիլ խոտ).—Ջրափներ և ճահճային տեղեր բուսնող փոքր ճիլ խոտը։

Ճճնաros Paéonia officinalis. Փեննայ ծաղիկը։

Ծոմել Anthoxanthum adoratum.

Քաւռուսակ Glicyrrhiza-Glabra.

Մեղրաձուծք. Orobanche. Քրդերէն՝ Պարչ մէն (մաւռ բրդուած):

Մկնիփուռ Dipracus silvestris Huds.

Մորեմուկ Rubus idacus.

Մուշաբաղ Սաւռուկ Crocus vernus Welld.—կաթնատամ արմատ ունեցող սաւռուկը:

Նզլի ծաղիկ Tussilago farfara.

Ձանսխսորուկ Allium rotundum. սխտորուկի նման՝ բայց պրոլ նմանութեամբ թփերը քիչ լայն, հոտը զզուելի. անասունները ուտելով, կը փքին (ուռչիլ):

Ձոլ pisum.—(ոլոռն) թէ հում և թէ խաշած կուտուի:

Ձոնդեռ Briza media.

Պոչուկ Alopecurus pratensis.

Պոչուկ փսիկ Millium effusum.

Սանամաքի Thalictrum.

Սեւ սոնիճ Nigritella nigra.

Սինձ Tragopogon pratinsis.

Սիպեղ Bunium Falcaria.

Սպանդ կամ Սպանջ Peganum.

Տատաշ (տատասկ) փուշ:

Տափակ նիլ joncus effusus.

Տեղս Althaca. սորա ծաղիկները գիւղացի կանայք սապոնի մէջ կը ձգեն հոտ տալու և փրփրալու համար:

Տորնուկ.—վայրի, կեղծ տորոն:

Ցորնուկ Lolium perenne.

Փաւփաւ Peplis partula.—փրփրէ, անմէռուն, Թիֆլիզցոց դանդուռը:

Փսիկ խոս Gliceria fluitans.

Քապապա-համամա կամ՝
Քուպապ-քումամ և կամ
Քապանակ.
} Taraxacum officinale.

Քարագործ (քարաքոս).—Քարերու վրայ գտնուած բուսական քոսը, որ չորնալուց յետոյ երեխայք թրջելով ու քարով տրորելով՝ հիւթը ձեռքերնին կը քսեն հինայի նման կարմրութիւն տալու համար: Հանելու ժամանակ կերգեն՝

«Քարագործ, քարէն է ելի,
Ամրաբերդէն է թռի»:

Քոսայ խոս.—ցորնուկի նման, բայց անհասկ լինելու համար՝ քոսայ (գօշ) կը կոչուի:

Օշինդր Teucrium polium.
Ծեռ Matricaria.
Ձախուկ Ononis hircina jacq.
Ձոու բուր Ծաղկաւէտ, Sparganium ramosium.

Բուլանըխցոց լեզուով բոյսերի մասերն են՝

1. Քոչ (տան.) արմատ. քօքի վրայի մազմզուկները Ռէս։ Երմատը եթէ բազմամեայ է՝ կը կոչուի Ջէ՝, օրինակ՝ աւելուկի, առուոյտի, մարոխի և այլն արմատները։ 2. Ոչոյ. ցօղունը եթէ ծակ չէ, կը կոչուի ոչոյ, օրինակ, խաւարծիլի, ժոխի, բողի, կանկարի և այլն որձանները։ 3. Կոնոչ.—որձան կտրելուց յետոյ մնացած ստորին մասը կը կոչուի Ինոչ։ 4. Յորենի ցօղունը կը կոչուի ոչոչ, սորա կոթոզը՝ Ծոչ և Ծոչ։ 5. Տոոչ.—կանանցի և հասա փշերու կոթոզները։ 6. Կոչոն.—փայտի՝ կարճ կտրուած կոթոզը, որ դանակի պէս սուր կը լինի։ 7. Ոոչ.—փայտերու ճիւղերու կտրուած ստորին կարճ մասը. 8. Բոյսերու վերևի մասերն են՝ ա) Ռոչ, բ) Ծոչէ. գ) Խոչխոչ (օրինակ. պտուկի վերոնոչը կը կոչուի Խոչխոչ) բոյսերու բաժակաձև խաշխաշը, որ միևնոյն ժամանակ է սերմնարան, մի քանիսին մեծադիր կը լինի և կը կոչուի պոնոչ, օր. սղանգի, տաքդեղի (ծիծակա) և այլն պտուկները։

Բանջարները ձմռան պահելու համար ծամերու նման կը հիւսեն, և կանուանեն ֆոչէ, իսկ հիւսկէնը՝ ֆոչ։

Ցները ծածկելու համար քաղուած և չորչուցած բոյսերու որձանները կը կոչուին ոճոչ, նաև՝ ոչոչ (վերջինս քրդերէն)։

Ժամանակին քաղուած ու կապուած բոյսերու հաւաքը կը կոչուի Խոոչ. եթէ ժամանակը անցնի, խոտը դեղնանայ, ապա քաղուի, հոոչ։

Հանքային նիւթերը եւ ջրերը.

1) Կաղին (կաւճին). գորշ—դեղնագոյն և կաւճանման իւղային կաւանիւթ, որ գիւղական կանայք սապոնի տեղ կը գործածեն ծամերնին լը։ ուանալով, որոնց ասելով թէ կակուղ կը պահէ մազերը և թէ չթողուր որ ծծնուին (խառնուել)։ 2) Կաւին.—սովորական կաւիճներու գոյնից քիչ տարբեր, (աւելի դեղին կը զարկէ. քան սպիտակ), որ առատութեամբ կը գտնուի ամէն տեղ, աւելի շատ քանակութեամբ՝ Կոփայ վանքի քրտաները, որով գիւղական ուսանողները իրենց դպրոցական կարիքը կը լրացնեն։ 3) Օրակաւ.—սպիտակ դեղին, շատ հասարակ և ստորին կարգի կաւային հող, որով կանայք ծեփ և կոպիտ սրուաձքներ կանեն։ 4) Սպիտակ կաւ.—Ամեն տեղ առատօրէն կը գտնուի և շատ գործածական է գիւղացոց մօտ, որից կը պատրաստեն ցորենի, ալիւրի և ձաւարի փեթակներ, կանանց համար սընդուկներ, մեղրի փեթակներ, և սենեակներու սրուաձքներ։ 5) Կարմիր կաւ (խեցեղենի կաւ), որ երկու տեսակ ունի, ա) Ձէրմէ Ինոչ, (Ներքին Բուլանըխայ) Լիզ գիւղի կաւահանքից ստացուածը, բ) Բոոն Ինոչոչէն կաւ, (Վերին Բուլանըխայ) Կոփ գիւղի կաւահանքից ձեռք բերուածը։ Այս կաւերով կը շինուին բոլոր տեսակի ամանները, միայն կարմիր կաւով կը պատրաստուի Լոոնոչէնը։ 6) Կիր, յայտնի հանք առ այժմ յայտնի չկայ, և գործածութեան

համար ձեռք կը բերուին այս ու այն կողմեր ընկած հատուկոտոր կրային քարերը։ 7) Քարանանք. Զինուութեանց համար առաջին կարգի ամրութիւն ունեցող քարեր կը գտնուեն Կովի գիւղին մօտիկ Ալիս կոչուած քարահանքը, և տեղի անունով կը կոչուին Աշխար-հար, կարմրագոյն կամ ծիրանագոյն երանգով։ Իսկ կազմութեամբ խիստ փափուկ, գորշագոյն գոյնով քարեր կը գտնուեն Տրտօի, Մալաքինդ, Լիզ, Յատկոն և շրջակայ գիւղերու սահմանաց մէջ և կը կոչուին Փոր-հար (փուխր)։ 8) Աւազքար. որից կը պատրաստեն ջրաղաց, դնիք և երնեռի քարեր, և կը գտնուի գլխաւորապէս Ապրի գիւղը, բայց շատ լաւ տեսակից է։ 9) Դայլախազ քարեր. զանազան գոյնով և կազմութեամբ ամեն տեղ կը գտնուին, կան նաև հրաբղխային կլոր մանր քարեր ևս, որոնք ժողովրդի լեզուով կը կոչուին սոսոնի ընդ։ 10) Էր քար.—Թրբէ-Զիրոյ գետուկից և Ապրի գիւղից սկսած մինչև Արածանի գետի մօտ գտնուող Ազնաուրի բերդը, ամբողջ լեռնաշղթայն կազմուած է սրոճի անհամար կտորներից, որոնք կը կոչուեն էր-հար, որով դարբինները երկաթը կեռացնեն (լաւ կարմրացնել)։ 11) Նաւթիկ.—Զիռնակ սարի ետևը, մի տեսակ քարիւղ կայ, որ չօգտացաւ (քամի) ունեցող անասուններու ցաւագար անդամներուն կը քսեն և արդիւնք աջող է շատ անգամ։ 12) Խուշ-խրան աղբիւր.—Վերին Բուլանրխայ Լաթար գիւղին մօտիկ մի հանքային ջրի շատրուան, որ շատ անգամ փոխանակ ջրի՝ չոր աւազ կը ցայտէ վերև, և անախորժ հոտ ունենալու համար՝ քովից թռչող հաւքերը կսպանէ. 13) Հանքային ջրեր են նաև Կովի գիւղի առաջ գտնուած Զօռգօլի (ապի լիճ) և շրջակայ բազմաթիւ ակունքներու ջրերը, որոնց վրայ սերոյց կը բռնէ և դառն աղի համ ունին. այս ջրերը բնականաբար գիտնականօրէն քննուած չեն և չգիտցուիր ինչ նիւթեր կը պարունակեն։

Երբեմն քոսոտ անձինք Զօռգօլի ջրերով կը փորձեն լողանալ և կառողջանան ընդհանրապէս։

14) Նշանաւոր են աղահանքերը, որոնք առատ և մաքուր ճերմակ աղ կարտադրեն և կը գտնուեն Խնուսայ ու Բուլանրխայ սահմանակցութեան մէջը. որոնցից մէկը կը կոչուի Խրմէր ռոշ, կարմրագոյն աղ արտադրելուն համար և միւսն՝ սպիտակ ռոշ, սովորական սպիտակ աղ տալու պատճառով։

Կենդանիներ

Ա. Որդունք կամ ժժմունք

1. Պիտուկ.—մարդու փորի մէջ գտնուած ամենափոքրիկ որդը։ 2. Կրոր.—Գարնան սկզբներուն՝ ջրերու մէջ ձայն արձակող ճիճուն. 4. Տզրուկ.—4. Թրբուռ.—5. Կաղամբի որդ, հայլն։

Բ. Խեցեմորք.

1. Ճիտեօ (խխունջ), որու պատեանը կը կոչուի սրոճի, և իբրև բժժանք կը ծառայէ գիւղացոց։ 2. Ծմրուկ (մեծ և ազնիւ պատեանաւոր խխունջ). սորա սրոճիկն ևս իբրև ծմրկալու (մարմնու ջարդուելու, ջղաձգութեան) դեղ կը համարուի և կը կարուի երեխայոց քամակին։ 3. Սնկլի ականջ (узловатое ушко). 4. Խաչուփառ (խեչափառ). 5. Կիրիրայ կամ կոս կիրիրայ (կրիայ)։

Գ. Ջրային կենդանիք.

1. Ձկներ.—Ընդոռ, մուլի, ներոպեռի, պուշեղ ձուկ, ոչոռ ոռ (ընչացք ունեցողը, որ օձու նման բարակ կը լինի). խուլեղ, ալաքալաղի (կարմրախայտ)։

2. Ոնու գոrs (*կանանչագոյն գորտը՝ որ ջրերու մէջ կապրի*). Բ-ՌԻ՝ Ֆրոլ (*գորտի ամենափոքրը, որդի ձևով*).

Դ. Ցամաքային կենդանիք.

1. Սողուններ.—1) Յամաքի գորտ, 2) ոսոխ ՝Ներքոյ (*անջրդի տեղեր ապրողը*), 3) մողէ կամ մողուկ, 4) հարլեանոշ (пятнастый ужко). Ոձեր՝ զանազան տեսակի. ոՒ- օշ, ՝Ներքին օշ, Ծամերով օշ, կամ շահարան (*օձարքայիկ*), ՝Ներքի՝ (Ռ-ՀՈՒ) օշ, վիշապ օշեր (*մեծամեծ օձեր*)։

2. Բոյոններ (*միջատներ*). 1) ոջիլ (*մարդու, գոմէշի և ոչխարի վրայ գոյացած միջատը, որոնցից՝ մարդու ոջիլի ամենափոքրը կը կոչուի մանիր*։ 2) Գիւնայ, եզան և կովու ոջիլը (գենայ). 3) Մլիկ—*փայտոջիլ* (*թախթաբիլթի*). 4) Լու—*որու ձուերը կը կոչուին ռանդ*. 5) Տիզ—*ձիու և գոմշու ամորձեաց կպչող միջատը*. 6) Ճանճ, 7) Ճանճանճա (*խոշոր տեսակը*), 8) Պապուկ, (Նեպուկ կամ Նեպակ), *խոնաւ տեղերը գոյացած սպիտակ, բազմոտանի միջատը*։ 9) Ճինիրայ—*մորեխի նման ոտքերը բարձր՝ սևագոյն կամ չամչագոյն միջատը, որ հաց գտնուած տեղերը շատ կը հաւաքուին և գիշերով ձայն կը հանեն*։ 10) Թոքան բոյոն—*զզուելի հոտ ունեցող, սև գոյնով միջատը*։ 11) Զատկի բոյոն.—*կարմիր գոյնով և ոՒ-ոՒ-ՀՈՒ-ՀՈՒ* (*կետեր*) *յայտնի ՝Ներքի միջատը*։ 12) Թրէի բոյոն.—*կոյադնգիտ, թրեք կլորողը*. 13) Չիթարկ—*երկարաձիգ՝ խուզային մորթով միջատը. որից սպեղանի կը պատրաստեն իւղի մէջ ձգելով*։ 14) Դզեզ.—*ձայնաւոր բոյոնը*. 15) Ոսկի դզեզ. *փայլուն, ոսկեգոյն միջատը*. 16) Պիծակ.—*կեղծ մեղուն, որ դաշտերը՝ փշրու վրայ իւր բջիջները վարպետութեամբ կը հիւսէ և ստորին կարգի՝ ու սակաւ քանակութեամբ մեղր ևս կը շինէ*։ 17) Մեղոն (*մեղու*), 18) Բուեղ կամ կնէs, *որ ամառը անասունները սուր խայթոցով կծելով կը հալածէ*։ 19) Կիտուռ—*մորեխ*. 20) Մժիկ—*մժեղ, մժղուկ*. 21) Անկիմտուկ կամ սողսողիկ—*բազմոտանի երկար միջատը, որ գիւղական տներու առաստաղի կամ պատերու մէջ կը բնակի*։ 22) Կարիճ. 23) Սարանդոusիկ (*սարգ*) *կամ սեւ* Յարոյ. *սորա ոստայնանկած նիւթն ևս նոյն անունն ունի*. 24) Դաcտի սարանդոusիկ (Крестовикъ)։

Հաւքեր (*թռչուններ*).

Ապունիկ—*փոքրիկ ճնճղուկ*, 2. Ճնճուղ—*ծիտ թռչունը*. 3. Դեղձանիկ *կամ* դեղին ու ճնճուղ. 4. Արտուտիկ. *արտերու մէջ բնակող մի տեսակ ճնճուղ*. 5. Սարիկ. *սարեակ թռչունը*. 6. Զրզուռ *կամ* բալաքարիկ, *մորեխ ջարդողը*. 7. Լոր. 8. Ճուլոr. 9. Կաքաւ. 10. Ընդնիկ (*աղաւնի*) 11. Կաքաւ. 12. Պուպու, *յոպոպ թռչունը*. 13. Սարի պուպու, ՝Ներ- *թռչունը*. 14. Կեռոյ—Կեռոյ. *գետափները՝ Խակերու մէջ բոյն դնող՝ վզին կանանչ օղակ ունեցող թռչուն մի որ անախորժ հոտ կարձակէ*։ 15. Ծիծեռնիկ, *ծիծեռնակ*. 16. Բլբուլ (*սոխակ*). 17. Տատրակ, *աղաւնու նման՝ բայց բարձրավիզ գեղեցիկ թռչուն մի*. 18. Տիռիլի.—*ճնճղուկից քիչ բարձր և երկար ոտներով ջրային տեղեր ապրող թռչուն*. 19. Կիւիւ.—*յոպոպի նման՝ գլխուն սուր կնգուղ ունեցող սևափետուր թռչուն մի, որ ջրաւէտ տեղերը իւր բոյնը կը դնէ*։ 20. Գլիր—գլիր.—*Տիրլիլու կամ ճնճղուկի նմանութեամբ մի թռչուն, որ իւր անունը միշտ երգերով, կը թռվռայ այս ու այն կողմը*։ 21. Ճարեկ. *ագռաւի նման սևափետուր թռչուն*. 22. Ագռաւ. 23. Անձեղ. 24. Բաղ, (*ընտանի և վայրենի*). 25. Բաcբաղ. *կարմրագեղին փետուրներով և գլխին Բ-ռ (պսակ) ունեցող թռչուն*. 26. Ղազ (*սագ*).—*ընտանի և վայրենի*. 27. Կռունկ. 28. Ուroս. 29. Ճրcնարoս. 30. Աղզիխչոյ. *ջրի աղէզները (ափերը) ապրող, կռնկու նման բարձրա-*

վիզ թռչուն մի։ 31. Ջրխոսան (թանձր թռչունը). 32. Սորեկ. 33. Հկնկուլ, անծեղի նման ձկնորս թռչունը. 34. Կոնդոյ (քոռ բու). 35. Յուրուր (ցինուրուր). 36. Գիլիաւք (արծիւ). 37. Բազէ կամ աքմաջա. 38. Լակլակ (արագիլ). 39. Գիշերհաւուկ (Զղջիկ)։

Ա. Հորհոսանիք.—ա) Վայրենիներ.

1) Գայլ, 2) արջ, 3) աղուէս, 4) դէզ։ (վագր) ևս երբրմն կերևայ սարերը. 5) նապաստակ։ (նապաստակ). 6) ձագար. 7) ոչխար, որ՝ գիւղացոց ասելով, իւր պոչին միզելով կը ցանէ ոչխարներու վրայ, որոնք խկոյն կը սատկեն։ 8) Կուղ, 9) թռանուխ (աքիս). 10) Խչուրդ (քոռ մուկը), 11) Մուշ։, 12) Հմշ։ (սպիտակ և երկարաձիգ մուկը, որ ձմեռը հերմակ՝ իսկ ամառը գորշագոյն կը դառնայ)։ 13) Խարտոշ մուշ։—դաշտային սևաչեայ խոշոր մուկը։ 14) Ջրշուն (կուղը). 15) Ուղղ (ժողովրդական լեզուով՝ Օձուղ). 16) Վայրի ։ուռ. 17) Այծամ և 18) Վայրի ուղուր։

Բ) Ընտանի կենդանիները.

1. Ձուն, որ մի քանի տեսակներ ունի. Բոջի (բոնջի) կամ ։ուռնդ. (քրդ.) Տաճի (թազի, քերծէ). Գուրդի (քրդ.) կամ Գիլեհեզ շուն (մեծ գամփռ). Ջրբոջի ոչ սկուզդ և ոչ գիլեհեզդ, այլ սոցա մէջ՝ միջակ բարձրութեամբ շները։ 2. Կուռ, 3. Վանայ ։ուռ (գեղեցիկ և երկար մազերով կատու, Վանայ յատուկ). 4. Ուխուր. 5. Այծ, որու մէկ տեսակն է Ֆիլիզ կամ չուռ այծը, և որու մազերով կը շինեն Վանայ ընտիր շալերը. 6. Ի, 7. Գոմէշ. 8. Ձի. 9. Ջորի. 10. Էշ՝ կամ Կով։

Վերին Բուլանըխայ գլխաւոր գիւղերը.

1. Կոմ.—երկու Բուլանըխայ կառավարութեան կենտրոնավայրը (մէրքէզի հիւքմէթ) և առաջին բազմամարդ գիւղը ընդհանուր գաւառի մէջ, որ ունի մօտաւորապէս 450 տուն և 1409 արական անձ *)։ Գաւառի մէջլիսի իդարէն (վարչական ժողովը) բիւրայիթ մահքէմէն (նախնական դատարանը), և հեռագրատունը կը գտնուին այս գիւղի մէջ, գիւղն ունի երկու գլխաւոր թաղ, Էրքին և Ներքին, երկու եկեղեցի, մէկը ս. Աստուածածին և միւսը՝ Թուխ-Մանուկ անունով, և մի կիսաւեր մատուռ՝ ս. Ստեփաննոս։ Սոյն 1898 թուականին ձեռնարկուած է կանգնելու և մի մեծագոյն թուրք պաշտօնեաներու և երիտասարդ մահմէտականաց համար։

Այս գիւղը կը վերաշինուի դարու կէս ուելի առաջ, Ալադին բէկի տան տիրապետութեան ժամանակը, նախկին Կոխ անունով աւերակի վրայ, որ ծերերու ասելով եղէգնուտ շամբ մի կը ներկայացնէր, լիք վայրենի խոզերով և ուրիշ անասուններով։

Սորա անուան սկզբնաւորութեան մասին ժողովուրդն ունի

*) Պաշտօնական աղբիւրէ քաղուած.—կանանց թիւը յայտնի չէ։

հետևեալ ազգային աւանդութիւնը.—Արշակունի Տիրան թագաւորը ս. Դանիէլ ասորին խեղդամահ անել կուտայ Մանազկերտի մէջ (?) որու մարմինը՝ որ սրբոյն նախաւանդ կտակի համաձայն պարտ էին թաղել իւր ճգնատեղին (այժմու ս. Դանիէլի վանքը, որ $^1/_2$ ժամ հեռաւորութեամբ Կոփայ հարաւային կողմը կընկնայ), սայլի վրայ գնելով կուգան Կոփ գիւղի առջև, ուր սայլի ֆոֆի կոչուած տախտակը կը կոտրուի և, տեղի անունը կը մնայ Կոֆ։

2. Երկրորդը իւր մեծութեամբ և բազմամարդութեամբը վերին Բուլանըխայ արևելեան գիւղերու՝ է Զէխ-Եաղուպ գիւղը, որ մօտիկ 200 տուն բնակիչ ունի և $^3/_4$ ժամ հեռաւորութեամբ կը գտնուի Կոփ գիւղի արևելեան կողմը, մի ձորակի գլխին կանգնած, շրջապատուած բարդի ծառերով, զարդարուած բազմաթիւ ջրաղացներով, սրածայր ծիլ-պալ քարերով ու մի քըչփչան վտակով՝ որ կը հոսէ Խաչանայ լճակից։

Այս գիւղն ևս հաստատուած է 100—150 տարի առաջ տիգրանակերտցի Բաղչէճեան Սաֆար անուն հայու մի հոգատարութեամբ, բայց չգիտցուիր ինչ պատճառով Թրքական անուն կը կրէ վրան։ Զուտ հայաբնակ է։

3. Մերբար. Զէխ-Եաղուպ գիւղի հիւսիս—արևելեան կողմը. $^1/_2$ ժամ հեռաւորութեամբ. մի փոքրիկ ձորակի՝ և սորա առուի ձախ եղերքի վրայ հաստատուած, հազիւ 20 տուն հայ բնակիչներով։ Այս գիւղի արևելեան կողմը՝ վերոգրեալ առուի աջ ափին, թեղակոյտի նման հիւսիս—հարաւ ձգուած երկու բլրակներ կան, որոնց վրայ հին աւերակ բերդերու բեկորներ կը նշմարուին և որոնք՝ տեղական ազգայնոց աւանդածի համաձայն, կը պատկանին եղեր երկու հայ իշխան եղբայրներու, մէկի անունը Մինբրոպ և գիւղը նորա անունով՝ Մին-բար (?) կը կոչուի *)։

*) Յարգելով հանդերձ ազգային աւանդութիւնները, այստեղ իբրև նմոյշ ցոյց կուտանք, թէ ինչպէս ժողովուրդը անուններից պատմութիւններ կըստեղծէ։

„Իգա Թիֆլիս ինչ անուն է“ կը հարցնէ Թորոսը. պատասխան Կիրակոսի.—Մարդ մէ Թլլ (գիւղ մի ի Տարօն) մէկ Լլլ (գիւղ մի ի Բուլանըխ) կերթան Վրաստան. գեղ մէ կը շինին ուրանց. մէկ կըսէ՝ իմ գեղի անուն

Այս բլրակները կապուած էին մէկ-մէկու հետ մի կամուրջով երկու իշխան եղբարց երթևեկութեան և այցելութեան համար։

4. Լաթար.—կը կարծուի որ Լաթարը լինի Դաշտ գիւղը, ուր Պարսիկներ Տիրան թագաւորի աչքերը կուրացուցին։ Կը գտնուի Վերին Բուլանըխայ արևելեան հարաւային ծայրը. Կոմի գիւղից $4^1/_2$ ժամ հեռաւորութեամբ. այստեղ կը բնակին 20—30 տուն հայ և բաւական նշանաւոր անուն ու օջախ ունեցող շէխեր, որոնք հարկատու չեն, և գիւղը նոցա կը պատկանի։

5. Խարաբաշահր գիւղ (աւեր քաղաք). Բլէջան լեռան արևելեան ստորոտը և Կոմի գիւղի արևմտեան հարաւային կողմը կը գտնուի $1^1/_2$ ժամ հեռաւորութեամբ. կը կարծուի որ Խարաբաշահրը լինի Հայկաշէն —մեր նախահայր Հայկայ անգրանիկ գիւղը։ Այդ իհարկէ ենթադրութիւն է, բայց՝ ինչպէս անունը ցոյց կուտայ, գիւղը հաստատուած է հին քաղաքի մի աւերակներու վրայ և՝ բացի տեղական աւանդութիւններից, մօտ տարիներս գտնուած խեցեղէն ագուգաններով շինուած ջրանցքները և մօտակայ ընդարձակ այգեստանները *) ևս այդ քաղաքի գոյութիւնը կը հաստատեն և փառաւոր անցեալը ցոյց կուտան։

6. Խաչլու. — Համանուն լճակի հարաւային ափի վրայ հաստատուած քրդական գիւղ մի 25—30 տներից բաղկացած, ուր միայն մէկ հայ տուն կը գտնուի։ Այս գիւղը առաջ զուտ հայաբնակ էր. մի հոյակապ և հարուստ վանքով՝ ս. Կարապետ անուամբ։

Ներքին Բուլանըխայ նշանաւոր գիւղերն են՝

7. Ապրի. երևելի օջախ և ուխտատեղի քրդաց, ուր Հայերն

գնիմ վրէն. մէկ էլ կրսէ՝ չէ, թող իմ գեղի անուն դրուի վրէն. կը կռուին Բաբիշէն՝ (հաշտուել) սորա (յետոյ) երկուսէ զուրանց գեղի անուն մէկ տեղ կը գնին վրը էդ գեղին. գեղը կը կոչուի Թիլ—ւիշ և ապա (աղաւաղուելով) Թիքիլիս։

*) Խարաբաշահրի այգեստանները այժմ ևս „Էգէստան“ անունով յայտնի են ժողովրդին, ուր կոփեցի Ներկոյեան հովիւ Յակէն խաղողի ողկոյզներ կարողացեր է գտնել։

և ս երբեմն ուխտի կերթան. գիւղը կը պատկանի յոյդոց ոչդի միմեանց յաջորդող շէխերու՝ որոնք՝ կը պատմեն որ, յունական ծագումն ունին. և այժմեայ ջամի քրիստոնէական եկեղեցի մի է եղած։ Բլէջան սարի հիւսիսային արևմտեան ստորոտը կը գտնուի։

8. Լիզ.—Ներքին Բուլանըխայ ամենաբազմամարդ գիւղը, որը 250 տուն, զուտ Հայաբնակ. կը գտնուի Բլէջան լեռան արևմտեան կողմը, Ապրի գիւղից 1 ժամ հեռաւորութեամբ, Վարդ գետակի ձախ ափի վրայ։ Այս գիւղի մէջ կայ մի բլրակ՝ աւերակ բերդի մի բեկորներով, ուր 100-150 տարի առաջ նոյն գիւղացի Բօրոյ անունով Հայ մի պատսպարուելով մեծ քաջութիւններ է ցոյց տուեր թշնամեաց դէմ։

Միւս գիւղերն են՝ Յաչէն կամ Աչէն, Փրգաշէն (Բրգաշէն?) Ագրակ, Կոչակ, Առաձիկ. նաև Փիսա, որոնց անունները Հայկական կազմութիւն ունին թէև, բայց մի որևիցէ ազգային աւանդութիւն չկայ դոցա մասին։

Բուլանըխայ սրբավայրեր.

Գաւառիս մէջ կը գտնուին բազմաթիւ սրբավայրեր, որոնցից մեծ մասը աւերակ է և կը ներկայացնեն փոքրիկ խուցեր, քարակոյտեր, մի քանի տեղեր ոչ-աղան ծառաստաններ և այլն, ուր շարունակ ուխտագնացութիւններ կը լինին. ընտիր, զօրաւոր և խնդրակատար են մանաւանդ այն սուրբերը, որոնք բարձունքներու, լեռներու կատարներու վրայ են բնակուած՝ կամ ծառերով շրջապատուած. սոցանից առաջին տեղը տալու է՝

1. Կոփայ ս. Գանիէլի վանքին, *որ այդ գիւղի (Կոփ) հարաւային կողմը, ½ ժամ հեռաւորութեամբ՝ քարուտ բլրակի մի լանջի վրայ հաստատուած է. ունի փոքր՝ բայց ճաշակով շինուած եկեղեցի մի առանց զանգակատան։*

Վանքիս հիմնարկութեան ժամանակի վրայ պատմութեան մէջ որոշ ցուցմունք չկայ. բայց պէտք է կարծել որ Գ. դարին շինուած լինի. որովհետև ս. Գանիէլ Աստրին, որ այդ դարին Տիրան թագաւորից սպանուեցաւ, մարմինը ըստ վկայութեան Փ. Բուզանդի՝ թաղեցին իր ճգնատեղին. իսկ ըստ ազ-

գալին (տեղական) աւանդութեան՝ ս. Դանիէլի ճգնարանն էր այժմու ս. Դանիէլի վանքի հիւսիսը ընկած փոքրիկ ձորակի մէջ գտնուած քարաշէն մի մատուռը, որը ը-ա-ա-որ-ջ-ա-շէն ԷՒԷ-ղեցի կը կարծուի. և ոմանք կը կարծեն նաև՝ որ այդ ձորակը լինի Բուզանդի մանրամասն նկարագրած «Հայեաց դրախտը», բայց որովհետև չիշեալ պատմիչը կաւելացնէ և «Հանգեալ Յ-ո-ւ-ն ԷՐԷՆ», հետևապէս և Հայեաց դրախտը ոչ թէ Հարքայ՝ այլ Տարօնոյ մէջ կընկնայ։

Միշտ ս. Կարապետի վանքին ենթարկեալ լինելով, ինչպէս այժմ յետ ընկած է՝ փառաւոր անցեալ էլ չունի և, աչքի զարկող հոգևորականներ տուած չէ ազգին, գոնէ պատմութիւնը ոչինչ չը յայտներ բացի ոմն Յակովբոս եպիսկոպոսից, որ թոնդրակեցոց աղանդին հետևող լինելով՝ աղուխադրոշմով կնքուած է ճակատին հետ անունն ևս։

Վանքը պարսպապատ է և բացի ոչխարաց գոմից և մարագից, միաբանութեան սենեակները (թուով 8—9 հատ) և երկյարկանի փոքրիկ առաջնորդարանը պարսպի մէջ կը գտնուին։—Վանքը կը կառավարեն երեք վարդապետներ, որոնցից աւագը պաշտօնապէս թէև կը ճանչցուի Մշոյ Առաջնորդարանի փոխանորդ, բայց կառավարութեան (գաւառի մէջլիսի լիդարէի) մէջ ձայն չունի, և մէջլիսի խորհրդներուն չմասնակցեր։ Միաբանութեան թիւը կը լրացնեն մի քանի ծառաներ, տընտեսներ և այլն. դպրոց, ուսուցիչ, ուսանող, տիրացու (գոնէ ժամասացներ) և սարկաւագ չունին...։

Վանքը ունի ներկայիս 8—9 գոմէշ, 10 կով, 8 եզ, 60 գլուխ ոչխար, երկու ջրաղաց, մի գէն կամ ֆ-ա-ր-ծ-է-ծ, և ընտիր հող ունեցող արտեր, երեք մարգագետին և այլն. ջրաղացներն ու անշարժ կալուածքը կառավարութիւնը գնահատած է 87500 ղուրուշ (piastre) և, տարեկան $^{4}/_{1000}$-ի հաշուով, 350 ղուրուշ տուրք կը վճարէ արքունի գանձարանին, բացի ոչխարաց հարկէն (այժմ 4 ղուրուշ) և արմտեաց բերքերէն $11^{1}/_{2}\%$ի հաշուով նոյնութեամբ առնուած տասանորդը։

Վանքը եկամտի աղբիւր ունի ուրեմն 1) իւր արտերը, 2) ջրաղացներն ու դինկը, և 3) 12 կտոր գիւղերէ ստանալիք

ցորեն (պտղի) ձէթ, լուղ, պանիր, հոգեբաժին և այլն, որոնց մասին որոշակի ոչինչ կարելի չէ ասել, որովհետև ոմանք կամ հաշէ– բացակայ են այն տեղէն։

Նշանաւոր հնութիւն, մատեան, արձանագրութիւն և այլն չկան, միայն պարսպի հիւսիսային դրան վրայ գրուած է. «Այս վանքը մի ժամանակ այնքան մալ ու տաւար ունէր, որ գահոց գահ (24 ժամուայ մէջ) 50 (ծ) կողով թրիք կը թափուէր». թրքով ուղեր են վանքի փառաւոր անցեալը ցոյց տալ։

Տապանագիրներէն ուշագրաւ է մի այն հետևեալը.

«Այս է տապան Խաչատուրի,
«Քաջաքարոզ վարդապետի,
«Միաբանին Ուչ-քիլիսի,
«Ի թվին Հայոց... ի (եղծուած)»։

Այս այն արժանայիշատակ Խաչատուր վարդապետն է, որ Ելաշկերտցոյ յայտնի է «զարաբաղցի քաջ Խաչատուր վարդապետ» անունով. պարսկական արշաւանքներու ժամանակ, Բագրևանդայ ս. Յովհաննու վանքը աւաջնորդ եղած ատեն, զարմանալի քաջութեամբ ազգը պաշտպանելուց յետոյ, զերի կընկնայ Պարսից ձեռքը և, Պարսկաստան բանդ, չարչարանք կրելով՝ վերջապէս կազատուի և Կոմայ վանքը գալով յաւիտենական քնով կը հանգչի։

Ս. Դանիէլի ուխտագնացութիւնը տարին մէկ անգամ կը լինի Վարդավառի տօնին, ուր Բուլանըխայ և Մանագկերտի մօտիկ գիւղերէն բաւական բազմութիւն կը յաճախէ։

—

2. Համդաշէխ գիւղի ս. Թուխ մանուկ հին եկեղեցու մատուռ. Թուխ-մանուկ անունով եկեղեցիներ շատ կան Մշոյ աշխարհը, որոնցից շատ ժողովրդականութիւն վայելողը այս մեր յիշածն է, և, որու համար ժողովուրդ կաւանդէ թէ Տրդատ շինած է եղած, և քրիստոնեայ դառնալով նահատակուեր է և սուրբ դարձեր։ Թուխ-մանուկ եկեղեցիմ՝ ևս ի Կոմ կը գտնուի և շաբաթ երիկոնները կը յարգուի խնկով և ճրագլուսով (ձէթ)։ Առաջին Թուխ-մանուկի ուխտագնացութիւնը կը պատահի օգոստոսին—ս. Աստուածածնայ տօնին։

3) Մաշտոց (մէջիտոց) գիւղի ս. Յովհաննու մատուռը որ ծառերով է շրջապատուած և ամէն անգամ ուխտաւորներ կը յաճախեն։

4) Գրսայ ս. Յովհաննէսը. (Նազուկայ լճի հիւսիսային ափին, Գիրս գիւղի դիմացը). փոքրիկ անտառով պատած հին տեղակ վանքմէ, այս վանքի ծառերը սրբազան կը համարուին և, հայ թէ քիւրդ երկիւղ կը կրէ մի ճիւղ անգամ քաղել։

5) Ներքին Բուլանըխայ մէջ, Գրբիներ կոչուած և նորգենի փայտի անտառով ծածկուած սուրբը. այս տեղի փայտերն ևս անմատչելի են հայ թէ քիւրդ ժողովրդին և ճիւղ մ' անգամ վերցնողը կը պատժուի դիւահարութեամբ կամ փորձանքի հանդիպելով։

6) Խոյլի-բաբա սարի գլխու սուրբը, ուր ցաւագարներ կը դիմեն և այնտեղ գտնուած աղբիւրովը կը լուացուին։

7) Կոփ գիւղին մօտիկ Գոնկլիկ սարի գլխի սուրբը, որի համար կը պատմուի, թէ մի ճգնաւոր եղած է և գիւղացոց հորթերը գողնալով կապրի եղեր։ Բաւական հորթեր կորսուելէ յետոյ կիմացուի որ գողը Գոնկլիկի ճգնաւորն է. մի անգամ մի մարդու հորթն ևս կը կորսուի, կը բարձրանայ լեռը և, երբ ճգնաւորը հեռուէն տեսնելով եկողը կը հարցնէ. «Ի՞նչ վիճ է». —«Քու հէրն անիծած, չէ՞ մեր գեղն յմէն (ամենքը) անհորթիկ կով է» կը պատասխանուի։ Ճգնաւորը տեսնելով որ իւր գողութիւնը կը յայտնուի՝ կանչատանայ թէև, բայց երախտագէտ ժողովուրդը իւր հորթակեր ճգնաւորը կը յիշէ տակաւին և երբեմն երբեմն այցելութեան ևս կերթայ նորա սրբավայրին։

8) Եօնջալու և Կոփ գիւղերու մէջ տեղը, ճանապարհի վրայ կը գտնուի մի մատուռ և մէջը յունական գրերով ծածկուած մի շիրիմ, որուն ժողովուրդը Թադոս առաքեալ անունը կուտայ, անցնող դարձողը իւր ճանապարհը կը ծռէ և մէկ մէկ համբոյրներով և մացառներուն հանդերձի կտորներ փաթաթելով իւր ուխտը կը կատարէ։

Բերդեր

Բուլանըխայ մէջ կը գտնուին հետևեալ կիսաւեր բերդերը, որոնց մասին մի որևիցէ աւանդութիւն կամ գրոյց չկայ.

1. Բլէջանայ բերդ. Համանուն սարի վրայ կառուցուած. սրբատաշ վէմ քարէրով, որու Հոկայական պատերը տակաւին կանգուն կը կենան և միայն կտուրը կամ տանիքը քանդուած է։

2. Խամուր բերդ. Համանուն սարի վրայ կառուցուած։

3. Ջերնակայ բերդ.—Նոյն անուն սարի վրայ շինուած Հոկայական պարիսպներով մի աւերակ բերդ։

4. Ազնաուրի բերդ.—Վերին և Ներքին Բուլանրիները անջրպետող Թրբրէ-Ջիրոյ *) կոչուած գետակի արևմտեան ծայրը՝ Արածանի գետին մօտիկ, Հին աւերակ բերդ մի. որու շինութիւնը ժողովուրդը Ազնաուրներուն (դիւցազունք) կը վերագրէ։

5. Լզայ բերդ.—Համանուն գիւղի մէջ՝ աւերակ այժմ. դար ու կէս առաջ բոլորովին կանգուն էր, ուր ժողովուրդը թշնամեաց արշաւանքներու դէմ կը պաշտպանուէր։

6. Կելա հօշկ.—Կոմայ ս. Դանիէլի վանքին մօտիկ՝ Հարաւային արևմտեան կողմը, փոքրիկ բլրակի մի վրայ գտնուած աւերակ ամրոց մի, ուր՝ կը պատմեն թէ՝ կը նստէր Պուօշ թագաւորը։

Այս ամրոցի մէջ՝ արևմտեան կողմը, ջրհորի նման բաւական խորունկ հոր մի կայ, որուն ժողովուրդը Ջրդան անունը կուտայ, աւանդելով թէ՝ Կելահօշկայ թագաւորը չարագործները այնտեղ ձգել կուտար։

Վերոգրեալ բերդերն ու ամրոցները քննուած չեն մինչև հիմայ, որոնք թերևս թանկագին յիշատակարաններ և նոյն իսկ բևեռագրեր էլ պիտի ցոյց տային։

Բացի սոյանից բոլոր գաւառի մէջ անթիւ են այս ու այն կողմ ընկած գիւղերու, վանքերու, եկեղեցիներու և գանազան շինութեանց աւերակաց կոյտերը, հողաբլուրները, խաչարձանները և այլն, որոնց տակ թաղուած կը մնան հնութիւն ներկայացնող գանազան իրեր, որոնք ժամանակ ժամանակ երևան կուգան և տգիտութեան պատճառով կանհետանան. օրինակ՝ բրոնզէ գոլոշներ, մշնէր, ըռ-ը, դանակ և մինչև իսկ մարդակերպ (բրոնզէ) կուռքեր և այլն և այլն։

*) Ձիրիմ կամ դամբարան Ձիրոյ։

ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԻՒՆ

Բուլանըխայ ազգաբնակութիւնը երկու գլխաւոր տարրերից կը բաղկանայ. Հայ և Քուրդ. (միայն մի գիւղ Զէրքէզ կը գտնուի ներքին Բուլանըխայ մէջ). որոնք զետեղուած են 52 մեծ ու փոքր գիւղերու մէջ։

Գաւառիս հայ և Քուրդ բնակիչները, սակաւ բացառութեամբ, քաջառողջ, պնդակազմ, ջլուտ, երկայնահասակ. (ոչ շատ) մեծամասնութիւնը միջահասակ, թուխ երես (մեծ մասը). ցորենամորթ, խարտեշ շէկ և պուժիկ (չափազանց շէկ)— փոքր մաս միմիայն, և բաւական կանոնաւոր դէմքով անձինքներից կը բաղկանան։

Ըմբշամարտութեան հռչակ ունեցող անձինք ևս կը գըտնուին, բայց մեծամասնութիւնը միջակ ոյժ ունեցողներ պէտք է համարել, և՛ եթէ մի որևէ հիւանդութեամբ վնասուած չեն, արհեստի, ուսման և հողագործութեան մեծ ընդունակութիւն ցոյց տուած։

Կանայք՝ նոյնպէս են ցորենամորթ, թուխ երես, խարտեաշ, շէկ. պուժիկ (քիչ թուով), սևաչեայ, խաղտակն, թիկնաւէտ. լայն կրծքով, մեծամասնութիւնը միջահասակ, երկու տակ կամ հասակիկ և բաւական գեղեցիկ. բայց աշխատութեան ենթարկուած լինելով՝ գուարթ և կարմրերես չեն։ Կանայք առհասարակ ուշիմ, աշխատասէր և տնարար են ու մինչև անգամ մարդոց աշխատութեանց ևս կը մասնակցեն. Հնազանդ են՝ բայց կռուաշարներն ևս պակաս չեն. բարոյապէս պէնդ՝ բայց բացառութիւնը կազմողներու թիւն ևս աւելնալու վրայ է. սարսափելի տգէտ ու նախապաշարեալ են։

Բնակչաց ճիշտ թիւը գտնելը առայժմ անհնարին է, որովհետև կանոնաւոր վիճակագրութիւն չկայ։ Ղայբի մի-ուշիմները (ոչ մահմետական) զինուորական տուրքի ենթարկուած լինելով, ծրնուած արուները խսկոյն կարձանագրուեն. իսկ էգական սեռի ծնուածները՝ (գոնէ Բուլանըխայ մէջ այսպէս է) ոչ. թէև կանայք ևս «Օսմանիէ թէզքէրէ» կամ՝ ժողովրդական լեզուի մէկ

մէկ գլխաբէրեալ ստանալու համար առանձին կարձանագրուն, բայց Բուլանըխայ գիւղերու մեծ մասը սորանից էս ազատ է։ Արդ՝ երկարատև աշխատութիւնից յետոյ գտանք՝ որ ներկայ 1898 թուին, գաւառը տուած է արքունի գանձարանին 386,190 ղուրուշ *) զինուորական տուրք. իւրաքանչիւր անհատ պարտաւորեալ լինելով տարեկան 38 ղուրուշ վճարելու, ուրեմն կունենանք 10,163 անձ.—ընդհանուր թիւ Բուլանըխայ հայ արական սեռի անձանց։ Կանանց թիւը մեզ անյայտ և Քրդացը անմատչելի լինելով՝ բնակչաց ընդհանուր թուոյն վրայ ենթադրութիւններ անելուց հեռու կը փախչենք։

Այս հայ բնակիչները Տուրուբերան նահանգին սահմանակից հարաւային և հարաւ-արևելեան կողմերից գաղթող եկուորներ են, մի մասն էս՝ դարձեալ նոյն ուղղութեամբ եկող, բայց միևնոյն նահանգի տարբեր գաւառներու նախկին բնիկներ են։

Վերին Բուլանըխայ արևելեան գիւղերը՝ Խլաթայ (Բղնունիք), Խիզանայ, Մոկաց (նոյն անուն նահանգից) և Սրճեշի կողմերի գաղթականութիւն են. և սակաւ փոփոխութեամբ իրենց գործածած լեզուն Վանայ գաւառաբարբառն է կը պատկանի։ Վերին Բուլանըխայ արևմտեան գիւղերը և քիչ բացառութեամբ ամբողջ Ներքին Բուլանըխայ բնակիչները՝ Բշէրու, Սասնոյ, Խոյթայ, Մօտկանայ և Տարօնոյ գաւառներու նախկին բնակիչներից են և, սոցա լեզուն կը պատկանի Տարօնոյ կամ Մշոյ գաւառաբարբառին։

Այդ գաղթականութիւնը տեղի ունեցած է Ալադին բէկի տան տիրապետութեան ժամանակ. այդ ժամանակները տեղի ունեցած պարսկական և ուրիշ ներքին արշաւանաց և այլ խառնակութեանց պատճառով՝ գաւառները կրակի և սուրի կը մատնուէին, ու մաղապուրծ ազատուած խեղճ ժողովուրդը կը դիմէր Ռուսաստան **)։

Երբ Ալադին բէկի յետնորդք՝ Մշոյ փաշաները, ձեռք

*) Պաշտօնական աղբիւրից է առնուած։

**) Գեօքչայ և Ապարան գաւառներու հայերը մեծ մասամբ Բուլանըխի և շրջակայ գաւառներու բնակիչներից են։

զարկին երկրի շինութեան հող տանելու, զունդազունդ հայեր այս ու այն կողմից թափուեցան Տարօն, Բուլանըխ և շրջակայ իրենց իշխանութեան պատկանեալ գաւառները։ Տեղափոխութիւնը կը կատարուէր նշանաւոր գերդաստաններու միջոցով. որոնք խակոյն և եթ գիւղեր հաստատելով գերդաստանի օջախի հիմքը կը դնէին և գիւղի աւագութիւնը կստանձնէին։

Քրդեր.—Բուլանըխայ քրդեր (յատկապէս Հասանանցիք, որոնց վերաբերմամբ կը մասնաւորենք մեր խօսքը) կաստայական կազմակերպութիւն ունին։ Սրանց նախահայր Հաջի Մահմուդի երկրորդ ամուսնութիւնից սերած որդիքը զիրենք կանուանեն բոռ բոռ (ազնուական), իսկ նախկին կնոջ որդոց ներկայ սերունդը կը կոչուի ուշիր, որ թոռընութեան երկրորդական կարգի դասակարգն է. կը մնան ստորին դասակարգի քրդեր՝ որոնց ազգային անունն է խորմանջ և հասարակօրէն սոյ (հպատակ)։

Թոռընութեան հաւասար պատուաւոր տեղ կը բռնեն օջախի տէր հոգևորականները (Ապրի և Լաթար գիւղերու շէխերը), որոնք իրենց սեփական գիւղերը ունին, հարկատուութեան ենթարկուած չեն և քրդաց կրօնի ներկայացուցիչները կը համարուին։ Մինչ թոռընները միապետական երկիւղ և սարսափ կազդեն ռայա քրդին, շէխերը կրօնական զգայման հետ դարաւոր օջախի ներկայացուցչի պատկառանքը կընեշնչեն։

Ռայա քուրդը հողային սեփականութիւնից զրկուած է—ուր որ զետեղուած են նոքա, հողով ջրով թոռընները կը պատկանեն. որքան որ մի որևէ ազայի ծառայութեան մէջն են իրենց անունով առժամանակեայ ճանչցուած հողը կը վարեն ու ցանեն բոլորովին առանձին, բայց տեղէ տեղ դաղթել ուզած ժամանակ, բացի իրենց շարժական գոյքից ու կայքից, ոչինչի տէր դառնալ չեն կարող։

Բացառութիւն կը կազմեն մի քանի գուռ, ռայա քուրդ գիւղերը, որոնք տէրութիւնից հողեր ստացած են և Հայոց նման սեփական կալուածքի տէր են։ Սոցա գիւղերը, Հայոց նման, ունին իրենց ինոլիս (ծերերը), քահիյը, գգիրը և այլն գիւղերը կառավարելու, և գիւղական դատաւորութեան գործերը տեսնելու։

Իսկ ուր որ թոռընի հետ միասին կապրեն, երբէք ձայն չունեն ազնուական ազաներու դիմացը, որոնք անսահման իրաւունքի տէր կը համարուին իրենց գիւղերու հողին, ջրին և նոյն իսկ կրմանջի կեանքին ու գոյքին։ Բայց ազատութիւն ունին տէր դառնալու իրենց վար ու վաստակին, տաւար-ոչխարին և գիւղական խրճիթի կամ դաշտային ֆոնի տակ վայելելու քրդական դրացիական ազատ իրաւունք-

ները, որքան որ հնազանդ են իրենց աղաներուն. հակառակ պարագային զրկուելով իրենց ունեցածէն՝ ճանապարհ կը դրուին՝ կամ նոյն իսկ կսպանուին։

Քրդական կեանքը առանձին ուսումնասիրութեան նիւթ ներկայացնելով, այստեղ մի քանի ընդհանուր գծեր կուտանք միայն թուրքներու կեանքէն։

Հասանանցի թուրքները բնութեամբ անվեհեր, գուռոզ, պատերազմասէր և անկախ մի ցեղ լինելով, Տարօն եղած ժամանակ ընդհարումներ ունեցան Ալաղին բէկի զօրաւոր տան հետ, բայց մրցումը անհաւասար լինելով՝ տեղի տալով քաշուեցան Բուլանըխ և Մանազկերտ գաւառները, թէև երբէք վրիժ ապարտ չմնացին. այսպէս՝ երբ Ալաղին բէկեանք Խէլրդեան Ֆարրզ աղան Մուշ տանելով և վրան դայլի մորթի ձգելով շներուն խեղդել տուին, Հասանանցիք ևս, Խուրշուդ բէկը (Ալաղին բէկի տնից) Մանազկերտ եկած ժամանակ, յարմար առիթը ձեռքից չփախցնելու համար, չարաչար սպանեցին։

Թուրքները՝ իրենք իրենց ազնուականութեան ծագումն տալով, հասարակ—ԷՐՄԱՆՔ և նոյն իսկ ազգական ՀԱՅ դասակարգերից բնաւ երբէք աղջիկ չեն առներ, մեծ ստորութիւն է այդ նոցա համար. ամուսին կընտրուի ազգականութեան մէջից և, խիստ սակաւ անգամ պատուաւոր աշիրներից։

Բազմակնութիւնը հայրական սովորութեան հակառակ կը համարեն. այնպէս որ բացառութիւն կազմողները ընդհանուրի դիմաց խիստ փոքր թիւ մի կը կազմեն։ Ննջասենեակ է նոյնպէս առանձնելով ամուսին ձեռք բերելը (երբէք լսուած ու տեսնուած չէ), մինչդեռ այդ կորմանջի սիրելի սովորութիւններից մէկն է. տեսնուած չէ նոյնպէս որ թուրքն մի իւր կինը թող տայ (ապահարդան), եթէ նա դրժողոհ լինի իւր խաթունից՝ ի հեճուկս սորա, երկրորդ կին մի կառնէ և, եթէ ծուռ ճանապարհի վրայ տեսնէ, շատ անգամ հրացանի կը բռնէ։

Ծանրաբարոյ և վեհանձն լինելով՝ ուխտադրժութիւնը վատութիւն կը համարեն, և թուրքնի օջախին կամ վրանին դիմող անձը կը պաշտպանուի որքան էլ ծանր յանցագործ լինի։

Քաջ ձիաւոր են և, պատերազմից չփախչելը Խէլրդի տան նշանաբանը կը համարուի, եթէ նոյն իսկ մէկ մարդ հարիւրաւոր թշնամիներու մէջ անգամ ընկած լինի։ Խիստ քենառու են և վրէժխնդիր, ու վրէժխնդրութիւնը ՅՈՐԴՈՅ ԳՐԷ կը տեւէ, ըստ քրդական այս առածին՝ թէ «դուժմընեռ բաւաղ նաբէ դոսսի լաւաղ» (հայերու թշնամին որդոց բարեկամ չլինի)։

Երկու եղբայր մէկ ամանի մէջ հաց չեն ուտեր, այդ արդէն Տա-

լէհի կոակն է. այդ պատճառով շուտով նոքա կը բաժնուեն մէկմէկից և առիթ կունենան նորանոր հողեր ձեռք բերելու. շատ անգամ հայրը իւր կենդանութեան ժամանակ որդիքը կը բաժանէ մէկմէկից և առանձին գիւղեր կը յանձնէ նոցա իշխանութեան, ուր երիտասարդ թոռընը գիւղի իշխանութիւնը ստանձնելով՝ խմբերով ծառաներ կը հաւաքէ իւր շուրջը իւր հողերը մշակել տալու և ուրիշ ծառայութիւնքը կատարել տալու։

Ցեղի մէջ խռովութիւնը անպակաս է և յաճախ զիրար անխնայաբար կը ջարդեն, բայց հասարակաց թշնամու դէմ ցեղական ատելութիւնը, խռովութիւնը կը դադրի. եթէ սպանութիւնը ցեղի մէջ պատահի, արիւն առնելու սովորութիւն չկայ, յարմար առիթի կսպասեն, մինչև որ արիւն փոխարէն արիւն ըսուի։

Տարբեր էլի կամ աշիրաթի կողմից եղած թոռը, աշիր կամ նոյնիսկ կորմանջ անհատի վիրաւորանքի, կողոպտուելու և սպանութեան համար ցեղը վրիժառու կը լինի, որովհետև պատիւը ցեղին կը վերաբերի, և «գրաւ ժը դառանէ է» *) առածի համաձայն, թշնամու ամենահեռաւոր ազգականն ու բարեկամը անգամ կը պատժուի՝ երբ ձեռք ընկնի։

Բոլոր ցեղին (որ կը կոչուի Էշ) կիշխէ ու կը հսկէ մէկ տուն կամ այս տան գլխաւորը՝ որ իբրև մի մեծ գերդաստանի հայր կը կոչուի Էշ-աղէ (ցեղի կամ էլի աղան)։

Թոռըններու կանայք նոյնպէս վեհանձն, ծանրաբարոյ և գոռոզ են, թէև մահմետական՝ բայց թուրք կանանց նման մահրամա (ծածկոց) և նոյն իսկ սրտանոց (կրծկալ) չեն գործածեր. լաւ ձիաւորութիւն էլ կանեն և պատերազմի անգամ կը մասնակցին, երբ հարկը ստիպէ։ Երբ տղամարդը տունը չգտնուի, գիւղին ու ծառաներուն հրամայողը, եկող հիւրը հիւրասիրողը թոռընուհին է։

Թոռընուհիք գեղեցիկ են. նոցա սպարթև հասակը, խատուտիկ (բալաք) աչքերը և ոլոռած բուբուշն ու գուլանկները (ծամերու՝ ճակատի և երեսի կողմը թողնուած խոպոպները) գրաւիչ են, երբ թիկնանց վրայ փռուած հիւսուած վարսերը գլխակապի խառ ու մառ ծոպերու հետ միասին կընկնան նոցա դալար ու ճօճուն միջաց վրայ և նոքա իրենց յատուկ ողիկ մողիկ քայլերով կը շորորան ծանրութեամբ։

Բարոյասէր ազգ է. բացառութիւն ևս կայ։

Քրդաց յարաբերութիւնը Հայոց հետ աւելի մտերմական է քան Օսմանցոց. արհամարանքով կը նայեն տաճիկներուն, որոնց Ռումէ ազ-

*) ,,Գրաւը նախնիից պէտք է վերցնել'', չնայելով որ գրաւելի առարկան կարող է այնպիսի մի անհատի պատկանած լինել, որ բոլորովին անպտուտ է, բաւական է՝ որ թշնամի ցեղին կը վերաբերի։

-ը և ԷԷԽ (ապերախտ Հոռոմ) անարգական անունները կուտան։ Մեր խօսքը այսքանի տարուայ նկատմամբ չպէտք է հասկանալ, երբ նոցա ֆանատիկոսութիւնը գրգռուած է չարամիտ կրօնաւորներու դրդմամբ։

Կրօն.—Հայերը սակաւ բացառութեամբ Լուսաւորչական են. միայն 5—6 տուն լուտերական Հայեր կը գտնուին այս ու այն գիւղը։ Քրդերը Օսմանեան թուրքերու ԽԱՆԻ կրօնքին կը հետևեն և շՔԻ՛Ն ճիւղին կը պատկանին։

Կառավարութիւն.

Հայ գեղջկական դասակարգը. Հնուց ի վեր գիւղական Հայ Տանուտէրը օտար լեզուով կոչուած է ՈՒ- կամ ՄԷԼԻ. օսմանեան ԹԷՀԷՆԼԻ (օրինաց կազմակերպութիւն) դուրս գալուց առաջ ռէսութիւնը ժառանգական էր գիւղի ԽԱՆԱՔ կամ ՕՋԽ կոչուած տներու համար. Համայնքը տիրող դրութեան հպատակելով՝ սոյն ժառանգական—միապետական իշխանութեան ընդդիմանալ չէր կարող։

Հայ մելիքները իրանց նիստ ու կացով կը նմանէին թուրքն .քրդերուն, գիւղի (ռէսութեան) և երկրի (մելիքութեան) պաշտօնը իրենց ձեռքը լինելով, կազմելով մեծ դերդաստան, ունենալով ընդարձակ հողեր և հարստութիւն՝ մեծ ազդեցութիւն ունէին հասարակ դասակարգի վրայ. մէկ խօսքով, ժողովուրդը այս ու այն կողմը դարձնելու ղեկը նոցա ձեռքի մէջն էր *)։

Իւրաքանչիւր ռէս-մելիքը ունէր իւր բազմանդամ դերդաստանը. որ համայնքի հետ միասին կը կազմէին մի հայկական ԷՏ. որուն կիշխէր նա՝ իբրև ԷՏ-ՊԱՊԻ (ցեղապետ)։

Իշխանութեան առաջնութիւնը մէկմէկից խլելու համար խռովութիւնը անպակաս էր նաև ռէս-մելիքներու մէջը. որոնք շատ ան-

*) Նոցա հարստութեան վրայ մի գաղափար ունենալու համար յիշենք ի միջի այլոց Մանազկերտ գաւառի՝ Հոռոմ ԷՏԼԻ գիւղի ԽՉՈՅԻ տունը, որ հասարակ ժողովրդից տարբերուելու համար՝ 10—12 արծաթապատ խարազաններ շինել տուած էին, անհամար ոչխարաց կաթը դրսից վողրակներով կը հոսէր տան մեծագիր կաթսաների մէջ, տարին մի անգամ հազարաթող կանէին, այսինքն երբ ոչխարաց թիւը 1000-ի հասնէր, մի ոչխար կը թողնէին սարեր, երբ ընծայ Աստուծոյ՝ կամ նորա ստեղծած գայլ ու գազանին։ Նոքա առանձին աղտանք ունէին իրենց իշխանութեան տակ. որ ցարդ ԽՉՈՅԻ տան անունը պահած է. ընդարձակ արտ ու անդաստան, մարգագետիններ ու արօտատեղիք, ձիթհանք, ջրաղաց, ձիու, կովու, մատակի ջոկ ջոկ նախիրներ և այլն։ Միւս մելիքները նոյնպէս ազդեցիկ գրքի հետ պակաս հարստութիւն չունէին. բայց այժմ՝ միայն ստուերն է մնացեր այդ նշանաւոր օջախներուն։

գամ ստոր միջոցներու եւս կը դիմէին։ Ախոյեան մելիքներից այն կողմը միշտ յաղթող կը հանդիսանար, որ բազմաթիւ կողմնակիցներ և ծանաւանդ՝ շատ ֆէտէր (փայտով կուռողներ) ունէր. վրէժխնդրութիւնը՝ քրդաց նման, ռէսներու մէջ յորդոց որդի կը տեւէր, բայց տարբեր գիւղի կամ գաւառի գերդաստանաց հետ ունեցած մրցութեանց մէջ՝ խռովութիւնը կը դադրէր թէև առժամանակ, բայց ցեղական ոխն ու ատելութիւնը կը մնար։

Ժողովուրդը մինչև այժմ եւս, այս կարգի գերդաստանաց վատ կողմերը հաշուի չառնելով՝ կանուանէ իւր երկրի համար ասկիւն (անկիւն) և խոռ (եղջիւր)։

Տակաւին ժողովրդի յիշողութեան մէջ կենդանի կը մնան պատկեր ու կերպարանքը՝ պարթևահասակ, թիկնաւէտ, արծուէքիթ և լայնալանջ ռէս-մելիքներու, որոնք կը հագնէին լայն շալար (անդրավարտիք) մէջքը կապած պարսկական թանկագին շալ-գօտի, որ պորտից սկսած մինչև ծծերու տակը լայն կերպով կը փռուէր. կուրծքերը բաց՝ հանդերձներուն կոճակ չլինելու համար, այնպէս որ, նոցա կրծքի մազերը հեռուից անգամ նկատելի կը լինէին. գլուխնին կը դնէին կէս արշինից աւելի երկայն թանձր ֆէս, որու բոլորը թանձր փաթաթոց կար, բայց կէս մասը իւր գագաթից կարած երկար պլսովը (պուլս, ծոպ, փիւսկիւլ) թիկնանց վրայ կը դառնար ու գրեթէ մինչև մէջքը կը հասնէր։ Ազանելիքը կարմիր ջրմանէր (մոյգ) և, բոլոր հանդերձներու վրայ մի ֆէրէ (մուշտակ), կամ երկար դոշա, որ սովորաբար շալվարի վրայ ֆէշտրեին կը ձգուէր։

Քիւրքի փոխարէն կը գործածուէր Հաւրանի կոչուած լայն զգեստն եւս, որու թեւերը նոյնպէս կախ կը ձգուէր։

Տանուտէր մելիքից յետոյ կուգան գիւղի Հոմքոյ *) Ղէռհոմքոյ և՝ պաշէղ **) կոչուած դասակարգերը. սրանցից համփաները, երբեմն եւս կիսահամփէք, ռէսի հետ միանալով կը կազմեն գիւղական վարչական մարմինը, որոնք ինչպէս առաջ, նոյնպէս և ներկայիս, հասարակական ամեն ներքին գործերը կորոշեն ու կը վճռեն. մնացած պաշէղ և աղքատ դասակարգերը համայնական խնդիրներ վճռելու համար գրեթէ ձայն չունին այժմ, իսկ առաջ՝ բնաւ երբէք չունէին։

Դասակարգերու աստիճանն ու կարողութիւնը որոշող չափերն են պէյիք (պարսկական փուլ-փող բառը) և դոնքէ։

**) Հոմքո (պարսկերէն) բառի իսկական նշանակութիւնն է հոմքելոց, փոխաբերաբար՝ ոտ։

***) Պաշէղ ժողովրդական բառ է և կը նշանակէ ձաղ։

Առաջնակարգ տեղը թողնելով ռէսին՝ համփաները կը նշանակուին 4—6 պլիկ, կիսահամփէք՝ սոցա կէսը, պճեղները՝ 1 պլիկ կամ 2 դանգ, այսինքն $^1/_2$ պլիկ, որովհետև պլիկը հաւասար է չորս դանգի. աղքատները՝ $^1/_2$ և մինչև իսկ $^1/_4$ դանգ։

Դարձեալ առաջնակարգ ձայնն ու տեղը և veto-ի իրաւունքը թողնելով ռէսին՝ մէկ համփան ունի երկու կիսհամփի ձայն և իրաւունք, կիսհամփան՝ երեք պճեղի, և պճեղը՝ չորս ու հինգ դանգ ունեցողի։

Այս գրութիւնը գրեթէ ներկայիս էլ անփոփոխ կը մնայ։

Ներկայ գիւղական պաշտօնեութիւնը. Գիւղական ներկայ պաշտօնէութիւնը կը կազմեն 1. ռէսը (տանուտէր) 2. Ծերոց ժողովը (մէջլիսի էլիթիար). 3. Գրագէրը (քաթիպ) և 4. Գէրը (ստորին պաշտօնեայ)։

Բացի գզիրից, որ ձայն չունի, հասարակական խնդիրներ կարգադրելու և վճռելու համար իւրաքանչիւր մէջլիսը ունի մի ձայն, մի ձայնի իրաւունք ևս տրուած է քաթիպին. իսկ ռէսը՝ ինչպէս անունը ցոյց կուտայ *) Ծերոց ժողովի նախագահը լինելով կարող է մէջլիսներու որոշումը ընդունել կամ չընդունել։

Գիւղական պաշտօնեաներու հաստատութիւնը՝ պետական օրէնքի սրամադրութեամբ, այժմ դրուած է ընտրական սկզբունքի վրայ. ամէն մի դասակարգային հարուստ՝ թէ աղքատ, անհատի ձայնը օրէնքը յարգելով, իւրաքանչիւր գիւղացին կը մասնակցի իւր գիւղի գլխաւորի ընտրութեան ընթացքին ու ստորագրութեամբ։

Ռէս լինել ցանկացող անձը իւրաքանչիւր գիւղացուն կը ներկայացնէ իւր մաղբաթան (հանրագրութիւն), որպէսզի սա իւր ստորագրութիւնը կամ կնիքը դնէ վրան **)։ Մաղբաթայի մէջ ցոյց կը տրուին նախորդ ռէսի թուլութիւնը, անընդունակութիւնը, արքունի և հասարակական շահերուն վնասակար լինելը և նորընտիր ռէսի ընտիր ընտիր յատկութիւններ ունենալը։ Ընտրելի ռէսը մի քանի տասնեակ կնիքներով նախշուած մաղբաթան օսմանեան կլորակ-դեղին ոսկիներով միասին կը ներկայացնէ գաւառի գայմագամին և կստանայ իւր իշխանութեան բուլուրլթին (հրամանագիրը)։

Նորընտիր ռէսը կարող է նոր Ծերից ժողով կազմել, թափել հները (պաշտօնանկ) և ընտրել նորերը. կարգել քաթիպ ու գզիրը և այլն։

Գիւղական պաշտօնեաներ ու իւրաքանչիւրի գործը եւ ստացած վարձ կամ օգուտը։ Հասարակական ուրախութեանց, հարսանիքներու,

*) Ռէյս, նախագահ.

**) Կնիք չեղած ժամանակ թանաքի բիծ մի կը թողնեն ստորագրութեան տակ՝ մաղբ—սովորաբար ճկոյթը—զարկելու համար։

պակի հանդէսին ևայն, յատուկ հրաւէրով ռէսը կը մասնակցի և կտրական 5 զուրուշ տուրք մի կառնէ փեսայից։

Մի քանի գիւղեր պարտադիր եղանակով և մի մասը ի յարգանս ռէսի՝ գիւղացիք պարտաւոր են տանուտէրին եկող հիւրերուն հաւ, ձու, անասնոցը՝ խոտ, յարդ, գարի ևայլն տալ, նորա արտերը քաղելու, ծեծելու ևայլն գործողութեանց օգնել ևայլն։

Մէջլիսները ռէսի հետ միանալով՝ տէրութեան մի պաշտօնեայի մասնակցութեամբ, նորածին արուները արձանագրել կուտան արքունի տոմարի մէջ. մեռածները հանել կուտան. բայց առանձին երաշխաւորութիւն յանձն առնելով՝ որ նֆուսի (անձի) գողօնք տեղի չունենայ։

Գարուն բացուելուն պէս՝ կը կազմեն գիւղական անասնոց Խէրը որոշելով նախրորդի վարձքը. նոյնպէս հորէրը (հորթերու նախիրը) ճէրը (ճիւղ, հօտ ոչխարի). կը վարձեն Խոռոռէչիներ (մարգաստանի պահապան), Տիրաներ (արտերուն հաւասարապէս ջուր բաշխող ջրպան պաշտօնեան)։

Կարող են մէջլիսները երթալ ֆէքի (որոշելու) կերցուած արտերու, խոտերու և մարգերու, որոշելով տուգանքի քանակութիւնը՝ որը պարտաւոր է արտ ու խոտ կերցնող հովիւը, նախրորդը և կամ ով որ է, վճարել վնասուողին։

Սոյն պաշտօնէութիւնը կը հսկէ նաև տասանորդի կապալառուներու վրայ, ցորենի տասանորդը գանձելու ժամանակ, որպէսզի ժողովուրդը չկեղեքեն. ընդհանրութեան անունով տեղի ունեցած ծախքերը ղէնի վրայ կը բաժանէ և հարկահաններու հետ միասին կը հաւաքէ արքունի տուրքը։

Մէջլիսները իրենց կատարած ծառայութեանց համար ոչինչ վարձք չունին, իսկ ռէսները՝ մի քանի գիւղեր, սերման գլուխ $^1/_3$ արքունի կօտ ընդեղէն կառնեն և, մի քանիսը՝ ոչինչ։

Քոռէպէ պաշտօնն է գիւղացոց տուրքերը առնել և յանձնել արքունի գանձարանին, որու համար նա պատասխանատու է թէ պետութեան և թէ ժողովրդի առաջ. իւրաքանչիւր անհատի՝ ինչքան և քանի անգամ որ փող առնէ, պարտաւոր է իւր ստորագրութեամբ և կնքով ստացագիր տալ։ Քաթիպն ևս, կտրական վարձք սերման գլուխ $^1/_3$ արքունի կօտ ընդեղէն կստանայ, բացի Խէֆռոնէ (կալոցի վրայ ցորենից մասն հանել)։

Գէրը յատկացուած է ռէսի և քաթիպի ծառայութեանց, հիւրեր բաժանելու, հարկատան ոստիկանին ցոյց տալու տուրք տուող տուողը ևայլն. գգիրը գիւղից կստանայ տարեկան վարձ 8—10 Բուլանըխայ ֆէյ ցորեն, ոտնաման, մի ձեռք հանդերձ և այլն։

Ժողովրդի լուսաւորութիւնը

Դարերից ի վեր Բուլանըխայ գաւառակի լուսաւորութեան կենդրոնը համարուել է ս. Կարապետի վանքը։ Վերջին տարիներս Պօլսոյ Միացեալ ընկերութիւնը բացած էր Կոփայ ս. Դանիէլի վանքին և Լիզ գիւղին մէջ երկու ուսումնարան, բայց այսօր դոքա ևս փակ են։

ԲՆԱԿԱՐԱՆ

Բուլանըխայ ազգայնոց բնակարանները շատ վատ են առողջապահական տեսակէտով, գիւղացու տունը՝ է ննջարան, ճաշարան, խոհանոց և այլն. երբ 30—40 անձերից բաղկացած մի գերդաստան միևնոյն յարկի տակ նստի, կանգնի, լուացուի, հաց թխէ, կերակուր եփէ, ճաշէ ու քնանայ, հասկանալի է, թէ որքան վատառողջ կը լինի այդպիսի բնակարանը, մանաւանդ աղքատ դասակարգի այն տնեները, որոնց կից է անասնոց ախոռը, որ միջնորմով ջոկուած չէ և միևնոյն կարգով գիւղացին իւր անասնոց հետ միասին կը պառկի հանգըստանալու համար, մէկը քարէնման բարձի և միւսը մսրթմբան վրայ։ Դաշտային կեանքից, կենսատու օդի և ջրի միջոցով ստացած օգուտը, գիւղացիք կը տուժեն անյարմար բնակարաններու մէջ։

Գիւղական բնակարանները կը բաղկանան հետեւեալ մասերից.

1) Տուն, ուր գիւղացին կը բնակի։ Սա այսպէս կը շինուի։ Պատ շարողը քառակուսի ձևով գետինը մէկ կամ կէս արշինաչափ փորել տալով, կը ձգէ առաջին քարը որ կը կոչուի հիմ. հիման վրայ հետզհետէ կը բարձրացնեն պատը։ Դրսի կողմից պատ չշարուեր, այլ հողով կը ծածկուի, որու վերևի կողմը կը կոչուի հող քոշ պատ, իսկ ներքևինը՝ պատուշ (գրեթէ գետնին հաւասար մասը). լոկ տլից (հողէ ցեխ) և անտաշ քարերից շինուած պատի ներսի կողմը, քառակուսի փոքրիկ բացուածքներ կը թողնուեն, որոնք կը կոչուեն պշտոնդ (պատուհան և ոչ լուսամուտ) երկու շինութեան մէջնորմի մէջ թողնուած փոքրիկ ծակը՝ ոնդաս։ Քառակուսի պատերու իրար կտրած տեղը կանուանուի քոնջ (անկիւն), և սորա վերջին ծայրը՝ պոնջոխ։ Պատերից մէկուն մէջ կը թողնուի և մի մեծ անցք դուռ համար։

Երբ պատերը բարձրացան 4—5 արշինաչափ, սոցա առջև կը տընկուին հաստ գերանից սներ, որոնք կը կանգնեն ոնդաբէրու վրայ. պատերու և սներու վրայ կը դրուին գերաններ, որոնք հետզհետէ դարսուելով ու բարձրանալով կը գոյանայ պուշուշ (սուլ) խուշան (սրածայր տանիք)։ Գերաններու վրայ կը ձգեն մարդակներ. շոթի, ոչոխ և վերջը խոշոր յարդ ու խոնաւ հող և վերջապէս ոնշ։

Ծածկուելուց յետոյ խուբայի դրսու կողմը կը կոչուի ԽՈՒՐ, իսկ ներսին՝ ՅՈՒՐ (առաստաղ). խուբայի ծայրը ծակ մի կը թողնուի լոյս և օդ ներս թափանցելու համար և կանուանեն ԵՐԴԻՔ. մեծամեծ տներուն երդիքից ցած ուրիշ ծակ մ'ևս կը թողնեն ԾԽՈՒՇ անունով, որու անունը ցոյց կուտայ ինչ պաշտօնի ծառայելը։

Նայելով թէ խուբայի գերանները ինչ կերպով կը դարսուեն, նորա համեմատ ևս տան բռուածքը կը կոչուի ՀԱՂԱՐԱՇԷՆ կամ ՍԱՆԴԱՐՅԱՆ որոնց համար 400—500 ընտիր գերաններ կը գործածուեն, և ամենամեծ հաղարաշէն տներու յատակի տարածութիւնը մօտաւորապէս հարիւր քառակուսի արշին կը լինի։ Հարուստները տներու առաջ կը շինեն նաև պարսպապատ լայն ԲԱԼԵՐ։

Տան ներսի դռնից՝ փողանաձև մօտ երկու արշին լայնութեամբ երկու պատեր կերկարացուին, որոնց միջոցը կը կոչուի ՓՈՂԱՆ և սորա ծայրը կը կախուի դրսու դուռը. փողանի ծածկոյթի (յառիքի) ծայրը որ դրսու դռնից դուրս ցցուած կը մնայ, կանուանուի ՅՈՒՆ։

Դուռն ՇԻՄԼԻՔ (սեամ), ԳԷՌԴԷՆ (գրանդին) և երկու ՆՇԱՆԴՅՈՒՆԵՐԸ կը կազմեն մի քառակուսի շրջանակ, որու վրայ դուռը կը յենուի և ԾԽՈՒՆ (ծղխնի) ու ԽՈՒԽՈՒՇ (վերին ծղխնին) շնորհիւ կը բացուի ու կը դրուի։

2) ՔՕԽ (քրդ.)—Մեծ տներու վրայ թողնուած փոքրիկ՝ քառակուսի ձևով շինուած սենեակ։

3) Մառան. գրեթէ քօխերու նման՝ տափակ տանիքով, բայց քիչ մեծկակ ձևով կը շինուին մառանները, ուր կը դարսեն թան ու թացանը, թուփ ու թթուն և ամէն տեսակի մարականները։

4) ՅՕՂԱ (հիւրասենեակ), որ շատ անգամ ունևորները սրբատաշ քարերով կը շինեն. օդաները երկարաձև են, այսինքն երկու պատը երկայն՝ և երկուքը կարճ. մէկ կարճ պատի մէջ կը բացուի դուռը, փողանը և սորա դրսու դասը. միւս կարճի մէջ, դռներու դէմուդէմը, կը շինուի ԲՈՒԽԱՐԻ կամ ՕՋԱԿ, վառարանի տեղ ծառայելու համար. կողքի մէկ պատի կէսը ցած կը թողնուի և կունենայ ՈՒՐԱ (թումբ նստարանի համար), որ փայտէ ճաղերով կը ջոկուի կշտի ախոռից, գրեթէ միջնորմի տեղ ծառայելով ախոռին և ՅՕՂԱՅԻ (ախոռը հիւրերու ձիերու համար շինուած կը լինի)։

Յօղայի դրսու դռան աջ կամ ձախ կողմը, առաջը բաց, և փայտերով ճաղած մի բարձր սաքու կը թողնուի (տաճ.) ԱՅԼԷՆ (իբր թէ ՀԷՔՆԱՊՈՒՆ) անունով, որ ամարանոցի տեղ կը ծառայէ։

5) ԹԱՒԼԱՅ (քրդ.)—ԽՈՒՐ (անասնոց բնակութեան համար).—ախոռը բոլորովին երկարաձև կը շինուի երկու պատը կարճ և երկուքը երկար։ Մէկ կարճ պատից սկսած մինչև միւսը, երկու կողմից՝ հաւասար հեռաւորութեամբ բազմաթիւ սներ կը տնկուին, որոնց մէջը փո-

դանաձև կը մնայ՝ կարճ պատերից մինչև առաջի սները եղած միջոցը կը կոչուին ծ-մաղ. ծռմաղներից յետոյ եկող սներու միջոցները՝ ֆակ (ուղղութիւնը մէկ կարճ պատից մինչև միւսը կը գնայ)։ Իւրաքանչիւր ֆակի մէջ կը կապուի մէկ կամ երկու անասուն։ Ֆակերու և ծռմաղներու մէջ գետեղուած անասնոց գլուխները դարձած կը լինին երկայն պատերու առաջ ձգուած մսուրներու վրայ, և յետոյքը միջին փողանի վրայ։

Թաւալի մէջ տեղը կը շինուի մի փոքր փոս, ուր անասնոց թրիքը կը հաւաքեն և կանուանեն ը-ն-ոյ. այն քարը, որ թրքնոցի մօտ տնկուած է թրքի կողովը վրան դնելու համար, կը կոչուի ը-ը-նոցի քար, որու պաշտօն կատարող սանդխտանման և նոյն երկայնութեամբ փայտէ գործիքը կանուանեն ը-ն։

Ախոռը անպայման սալայատակ պէտք է լինի, որ անասնոց երթալով գալովը դար ու փոսեր չգոյանան։

6) Մարագ (յարդանոց).—իսկ և իսկ ախոռներու նման ծ-մաղներով ու ֆակերով կը շինուին մարագները, առանց սալայատակի և մսուրի, միայն յարդ ածելու համար։

7) Գոմ կը կոչուին ոչխարաց բնակարանները, որ մարագից ու ախոռից քիչ տարբերութեամբ կը շինուին, առանց սալայատակի և մսուրի, որովհետև ոչխարները խառնիխուռն կը նստին։

ԶԳԵՍՏ ԵՒ ԶԱՐԴ

կ ա ն ա ց.

Բուլանըխայ՝ ինչպէս և Մշոյ շրջակայ գաւառաց հայ կանանց հագուստը քրդական, տաճկական և յունական ձևերու խառնուրդ մի է, ռուսահայաստանի Բերդ կոչուած Յոյն գեղջկուհիներու տգեղ հագուստի մի տեսակը քիչ փոփոխութեամբ, տարբերութիւնը միայն հանդերձներու երկայն թողնելն է, մինչդեռ Հոռոմուհիք խիստ կարճ կը ձգեն։

Կանայք (նոյն և ազատ աղջիկները) կը հագնեն նախ ոպիտակ շապկի, սորա վրայ՝ սգողնաւոր կարմիր շապիկ, ապա մի քանի անբաներ՝ մանասայ. իփէքլի և խութնի նիւթերից պատրաստուած, մէջքը կը կապեն թանձր ֆոթ և շատերը սորա ու հանդերձներու հաստատութեամբը չբաւականանալով ֆաշ (համետ, կտոր մի հաստ թաղիք՝ կամ ինչևէ) ևս կաւելացնեն. գօտին կապելուց յետոյ՝ սպիտակ շապիկից սկսեալ բոլոր հանդերձներու առաջի մասը ծալելով յետևի կողմը կը տանեն և միգարի (գոգնոցի) թելերովը կամրացնեն։

Հարսանիքի և տօն օրերուն այս հանդերձներու վրայ կաւելացնեն ասուից պատրաստուած դ-ն անունով զգեստն ևս, որ նոյնպէս

կը քշտեն. դալմա չունեցողները ասուէ ՈՒՂԼՈ (կարճ պինժակ) եւս կը հագնեն, որ գօտու տակ վերջանալով դալմայի նմանութիւնը կունենայ։

Գլխի յարդարանք.

Աղջիկները հասարակ օրեր՝ ԷՈՒՄ եռանկիւնի ծալելով գլխներու վրայ կը ձգեն, որու ծայրերը ծնօտի տակով այս ու այն երեսի կողմը տարած՝ վերավազուկ (հարեւանցի) կամրացնեն, կամ գագաթի վրայ յետեւ առաջ տանելով կը կապեն, որ կը կոչուի ՇԱՒԻ. իսկ հանդիսաւոր օրերը գլխարկի վրայ կարած արծաթէ թասը կը գործածեն, որու ծայրերը կարճ օղակներով մահիկներ կան կախուած. ճակատին կը կապեն ՈՒԷՇԱՐ եւ երեսներից՝ ԸԷԷԲՈՒԷ կամ ԸԷԷՔ (տաճ. զիլֆ, խոպոպ) սրտանոցի (կրծկալի) երկու կողմերից կը կախեն արծաթէ ՇՇԱՆԷՐ եւ փորու վրայ՝ ԽՈՄԲ։

Վզից կը կախեն զանազան ուլունքներու հետ արծաթեայ ՎԸԸՆՈՒԸ, որու ծայրը մահեկով կը վերջանայ, թեւերուն կը կապեն ԲՈՒԶՈՒՆ և քամակին՝ ՄՈՒԼՈՒ (վահան), որոնք փոքրիկ բարձիկներ են վրանին մանր արծաթ դրամներ կարուած, դաստակները կանցկացնեն ՈՒՐՈՒՆ, քիթը՝ ոսկի կամ արծաթ ԽՈՒՔԷԷ (փոքրադիր ոսկի կամ արծաթ դրամ, կամ դրամի նմանութեամբ շինուած և փիրուզայ ակնով յեռած մի բան), ականջներից՝ արծաթէ ԳԷՆԴԷՐ. և սոցանով չբաւականանալով՝ մեծ մասը ճակատի մէջ տեղը լեղակագոյն թանաքով կը ԳԻՆ (կիտուած)։

Բոլոր հասակի իգական սեռը՝ կարծես պարտադիր եղանակով, ոտքերու ճաներու վերեւը, ԱԼԷՆ կոչուած մանր ուլունքներու շարան կը կապեն, որ շատ սիրելի է կանանց։

Հարսները վերոգրեալ զգսերից աւելորդ մասը թափելով՝ մինչեւ երեխայ բերելը ԲՈՒԸ եւ ոսկեշարը կը գործածեն, բայց յետոյ թասը ձգելով ՓԷՏԻ տակ կլորակ տախտակ ու բարձիկ մի կը դնեն, որ կը-անուանուի (ՔՐԴ.) ԽՔԷ. քոֆու բոլորը կը կապեն զոյնզգոյն մետաքսէ ԽՈՄԲԷՐ (փոքր ու նօսր թաշկինակներ), որոնց ծայրերը յետեւի կողմը կը կապուի ծոպեր գոյացնելով, եթէ ոսկեշարք չգործածեն, ճակատկապ մ'եւս կաւելացնեն ԴՈՒԷ մի աւելացնելով ճակատի վրայ (ճակատկապիչ՝ ցցունք)։

Միջին հասակի կանայքը այլեւս քօֆու տախտակը չեն գործածեր, այլ միայն ԲՈՒՅԷՆԸ, որ գլխարկին կոնաձեւ կուտայ։ Գլխարկի ծածկոյթներին ԷՈՒՄ (տպածոյ՝ նօսր նիւթ) և ԲՈՒՄԲԷ (կարմիր շղարշատեռ)՝ աղջկանց և հարսներու համար, ու ՀՄԷ *)՝ միջին հասակի կընկայ և պառաւանց համար։

*) Յատկապէս մարդոց և կանանց գլխակապի ու փաթոյթի համար Բաղէշ պատրաստուած նիւթեր։

Թէ աղջիկներ, թէ հարսներ և թէ մանկամարդ կանայք, ծամերնին 10—12 հիւստակ կը հիւսեն և ծոպերով, ծամ թելերով կամրացնեն, իսկ ջաջէ կանայք ու պառաւները, միայն երկու ճ-ը կը թողնեն և անծոպ ծամ թելերով կամրացնեն։

Ոսնաման

Ընդհանուր գործածական է թէ այր և թէ կին մարդոց համար, կարմիր և երբեմն սև գոյնով Բաղեշ ու Մուշ պատրաստուած ոչ կոչուած կօշիկը. երբեմն շատ յարդի էր կարմրագոյն և երկարափող ջամ (մոյգ) կօշիկը, բայց այժմ գործածութիւնից ընկած է. իսկ այժմ տարածուելու վրայ է եւրոպական կօշիկը (ոչէ կամ տուֆիլիկի ձևով) որ տաճկերէն ինդիրայ կը կոչուի։

Տանու ծառայութեանց մէջ կը գործածեն նաև ճրնիչ (հողաթափ) որ սօլի նման կարմիր ու սև գոյներով կը լինի։

Բրդական կանանց հագուստը և գուգ ու գարդարանքը նոյնպէս ճոխ ու բազմազան է, միայն նոցա աղջիկները շալի չեն գործածեր, այլ խամթերով կապուած ռաս ու քօֆու նման բան մի, որ յետուր կունենան փողերով ու սաղաֆիներով զարդարուած բանդէրը (ասուէ երէզ)։ Հանդերձներու ձևը շատ տարբերութիւն չունի հայկական համարուածից, տարբերութիւնը միայն նիւթի ընտրութեան և հանդերձները շատ բարձր չքշտելու մէջն է. օրինակ նոքա ինդիրէ—շիլա շապիկ երբէք չեն գործածեր, փալան դնելու սովորութիւն չունին, գոտիկը առհասարակ ոչ թէ երկար՝ այլ քառակուսի շալ կը լինի, և ուանկիլնի ծալերով մէկ անկիւնը վար կը թողնեն ծոպերով, որովհետև ծամրէ և մէնդիլ չգիտեն պատրաստել հայ կանանց նման։

Ծամերը հայուհեաց նման կը հիւստակեն, և ճակատի վրայ բոբ-ը կը թողնեն (ցցունք), որ լաւ սանրելով հաւասար կը մնրատեն. աչքի կը զարկեն մանաւանդ քրդուհեաց երկար և ոլորուն գոնդիները (երեսներու վրայ թողնուած մազէ խոպոպներ)։

Ադանելիքը նոյնպէս ոչ, ջամ և ինդիրայ։

Այր մարդոց հագուստները.

Ա. Հայերը կը հագնեն Բաղէշի կամ ամերիկեան կտաւներից շինուած սպիտակ շալվար, սորա վրայ չոխա կամ մանասայ եւայն էշ (ժիլետկա) որ բամբակէ կոճակներով և օղակներով զարդարուած կը լինի. ելակի վրայ՝ կարճ էշլէք (նոյն կերպ կոճակներով) ապա՝ կարմիր շիլայ կամ մանասայ ռիմաբի։

Սոցա վրայ թանձր գոտիներ փռելով՝ հարուստները կը հագնեն ասուէ կարճ ոչիռ, ադքատ ու միջին դասակարգը, մանաւանդ բանւոր մարդիկ՝ ֆիլրք այծի ինձի կոչուած մազէ և սալթայի մեծութեամբ

ապա, որ անմազ (քօսայ) կամ բոկուն (քիւ, ծոպ) կը լինի։ Հարսանիքի և տօն օրերը, երիտասարդները սալթայի վրայ կը հագնեն նոյն մեծութիւն և ռուսահայոց Նապոլեոն նման թիւերը կախ չուխա, որու քամակը կլապիտոնէ և գուտ արծաթաթելերից բանուած կը լինի. (հետզհետէ գործածութիւնից կընկնայ)։

Բաղէշի կտաւից կը պատրաստեն նոյնպէս ֆոխան, որու վրայ կը հագնին բրդէ և ասուէ շալվարներ. սրանցից առաջինը ներկուած կը լինի կամ աններկ։ Զուխայ շալվարը հին ժամանակ Բանավարայ անունը կը կրէր, որ Օսմանցոց հին անդրավարտիքի անճոռնի ձևն ու լայնութիւնը ունէր, իսկ այժմ քրդական շալվարի նման կը շինուի։

Բոլոր հանդերձներու վրայ երբեմն կը հագնուէր գուտ կեժի մազից պատրաստուած խիստ լայն ապա, որ Ընանի ապա կը կոչուէր, և այժմ գործածութիւնից ընկած է, որովհետև հիմա չուխա սաս (պայտաս) կը գործածեն, բայց անձև։

Գլուխը կը դնեն պատանիներ՝ ապոխան, երիտասարդներ՝ բրդէ կամ ջէթինէ ֆէս և ծերեր՝ անպատճառ քօլոս՝ որոնց բոլորը կը փաթաթեն եռոյտ, հոմէ, ֆուշէ (սեւագոյն մետաքսէ՝ և ուրիշ նիւթերից շինուած գլխի փաթոյթ), և այլն։

Մինչև պատանեկութեան հասակը՝ տղայոց գլուխը կը սափրեն այսպէս. ճակատի վրայ փունջ մի մազ կը թողնեն, որ կը կոչուի Բուբուշ. երեսներու կողմից թողնուած խոպոպները՝ ֆուլանի, բուբուշից վերև ամբողջ գլուխը շուրջանակի կը գերծեն, գագաթի ծայրը փունջ մի մազ կը մնայ, որու մէջ տեղը ասոդանման կածելեն, որ ֆապասոպանին Հայոր ուրիշ ազգերից ջոր *).

Երիտասարդական հասակին Բուբուշն ու գուլանկը կը վերջացնեն, միայն գլխու փունջը և իւր աստղաձև նշանը կը մնան ցմահ **)։

Երբեմն երիտասարդները այս փունջ մազերը երկարացնելով երկու հիւստակ կը հիւսէին, և ականջներից էլ գինգեր կը կախէին։

Մուրուք թողնելու սովորութիւն գրեթէ բոլորովին չկայ։

Ոսնամաց

Ոտնամաններն են՝ հասարակ (խամ), ներկուած և գրզուն չրուխներ (տրեխ), Բաղէշի և Մշու սօլ, երբեմն՝ յարգի ջամ և այժմ կօնդուրայ։

---

*) „. . . և մանուկն Արտաւազդ . . . և էր նա ի տղայ տիոց և ըստ հանրութեան օրէնի, ըստ իրենից Հայոց՝ որպէս օրէն էր, զգլուխ մանկաւուցն որպէս ի ժամանակին գերծեալ էր զմանկանն Արտաւազդայ, և ցոտոն (Բուբուշ և գուլանկ) էր թողեալ և ֆէս (գագաթի վրայի մազը) արձակեալ"։ (Փ. Բուզանդ)

**) Գլխու այս ձև սափրելն ևս հետզհետէ վերջանալու վրայ է։

Քրդաց հագուստը. Զապիկ և փոխանը կը պատրաստուին բաղէշի թանձր և ամերիկեան բարակ կտաւներից, շալվարը՝ աններկ բրդից, Վանայ գանազան գոյնի շալերից և ասուից, որոնց կոդքերը (միայն ասուէ շալվարին) կլապիտոն թելեր կը դնեն։ Քրդական շալվարը Օսմանցոց հին լայն՝ և երկարաձագ շալվարներից սկսեց տարբերուել վերջին տարիներս, որուն [illegible] անունը կուտան։ Կը գործածեն երկայն և կարճ անթարիներ, իշլիքներ, ելակներ, կրծքերը բազմաթիւ կոճակներով զարդարուած, հանդերձներու վրայ կը հագնեն [illegible], բսկուն և անմազ ասպներ, [illegible] չուխայ, մէջքերնին կը կապեն Սրղերդի և պարսկական թանկագին շալեր, և բոլոր հանդերձներու վրայ երբեմն՝ Հայոց նման թեւանի լայն [illegible], իսկ ամառները՝ շղարշանման սպիտակ ծածկոց, որ [illegible] *) կը կոչուէր և թուրքներուն ու պատուաւոր շէխերուն միայն յատուկ էր **)։

Մանկութեան ժամանակից սկսած՝ կը դնեն գլուխնին ազգային [illegible] գոտակը, որ բրդից կամ դիթիկից կը շինեն և այժմ ձեւը երկայնացնելով՝ ծայրը [illegible] (փոս) կը թողնեն, ու չորս բոլորը 30-ից աւելի եազմա և փուշիներ կը փաթաթեն որ շատ սիրելի է իրենց։

Թայա քրդերը գլուխնին կը գերծեն բոլորովին, միայն պատանիները Բուբուշ, գուլանկ, և գէս կարձակեն, բայց գագաթի վրայ Հայոց աստղանշանը չեն թողներ։

Թուրքներու որդիք նոյնպէս բուբուշ ու գուլանկ կը թողնեն և (մեծերն էլ) երկար գէս կարձակեն, մուրուք թողնելու սովորութիւն բնաւ չկայ (թուրքներուն), բայց բեղերու յետեւը բարձիկներ անպատճառ կը թողնեն՝ որ իրենց լեզուով [illegible] կը կոչուի։ Թայա քրդերու ծերերը երբեմն մուրուք կը թողնեն։

Ոտնամանները՝ տրեխ, ջզմա և կոնդուրայ։

---

*) Բասրա քաղաքի անունով։

**) Կարելու ձեւը տես կանանց արհեստագործութեան մէջ։

ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

I. Երկրագործութիւն

Բուլանըխցու ապրուստի մեկ միջոցը երկրագործութիւնն է. նորա հարստութեան հիմքը հողի վրայ է դրած։ Գիւղացին իրաւունքով հողը կը համարէ դրական հարստութիւն, ուրիշ՝ դրամական կարողութիւն, անասուն, ինչը կը համարէ «ձեռքի կեղտ, որ այսօր կայ՝ վաղ չկայ». նորա սիրտը կպած է հողին, ինչպէս մի անսպասելի հարստութեան աղբիւրին։

Բուլանըխցոց երկրագործութեան մշակելու միջոցներն են՝

1. հին ձև արօր.
2. բէջարայ.
3. գութան.
4. մանկեռ.
5. ցաք.

} տես պրէսոդներ.

Բացի նորանից որ վերոգրեալ գործիքները հին ձևով են, երկրի պարարտացման միջոցներուն ևս անգէտ ու անփոյթ է ժողովուրդը. և եթէ գաւառի հողը բնականից արգաւանդ և արդասաբեր չը լինէր, բոլորովին աղքատութեան ու թշուառութեան կը մատնուէր գիւղացին. իւր ողորմելի գոյութիւնը՝ հողի շնորհիւն է, որ կը քաշքշէ և մի կերպ կապրի։

Ինչպէս շրջակայ գաւառները, նոյնպէս և Բուլանըխը անտառապուրկ լինելով, ժողովուրդը ստիպուած է անասնոց թրիքը իբրև վառելիք գործածել, հետևաբար և սորանով չէ կարող հողը պարարտացնել, միայն կաղամբի բոստաններէրը «կ'աղբուին» փոշիով (ցանի այրուածք), որ բաւական ոյժ կուտայ հողին. սակաւ անգամ ոչխարի հօտերը կը նստեցնեն արտերու մէջ, սրոնց՝ մանաւանդ հէղէ, վերին աստիճանի ոյժ կուտայ գետնին, բայց այս ևս պատահաբար, որովհետև ժողովուրդը տգիտութեամբ չգիտէ գոնէ հօտերը հերթով նստեցնել այս ու այն արտի մէջ և, հովիւները առհասարակ կընտրեն այն ոչոչ էրոչ արտերը, ուր գիշերով իրենց հօտերը կարող էին հանգիստ և ապահով մակաղիլ։

Պարարտացման համար կը մնայ միայն մէկ միջոց, արտը հէրէլ և չէրէլ, այսինքն մէկ կամ երկու տարի ցանելուց յետոյ, երրորդ տարին միայն վարել և թողնել ամբողջ տարին պարապ, որ արևի առջև

այրուի, ուր այրած հողի հետ բուսական արմատներ ու գանագան խոտեր նոյնպէս այրուելով բաւական սնունդ կը պատրաստեն եկող տարուայ ցանքի համար։

Պատահաբար արտերը 3—4 տարով մնալով բէօր, այսինքն անվարել, բաւական կը հանգչանան, բայց այս՝ պարարտացման անուղղակի միջոցմ'է։

Բուլանըլցին (հայ) թէև բաւական ընդարձակ հող ունի, բայց թշուառութիւնն ու աղքատութիւնը կստիպեն նորան շարունակ պանդխտել և հողի մշակութիւնը թողնել երեսի վրայ։ Վար ու ցանք անելու համար հարկաւոր է ունենալ առնուազն չորս եզ, որովհետև երկրի հողը բաւական ամուր և բուսականութիւնը զօրեղարմատ լինելով երկու եզնով վարել չլինի, ամենայարմար և գործնական չորսը գոմեշեղէնն է. փոքրիշատէ կանոնաւոր լուծքմ' ունենալու համար, հարկաւոր է ունենալ երկու գոմէշ և երկու եզ. հողից լի ու լի կօգտուին նոքա՝ որոնք մէկից աւելի լուծքեր և լաւ անասուններ ունեն։

Երբ այս միջոցները պակսին, շատ անգամ երկու տուն կը միանան մէկ լուծ լծելու, և երբ բոլորովին կարողութիւնից կընկնին, պէտք է փոխով փող վերցնել, լուծքը վերականգնելու՝ կամ մէրի բայ դառնալ։

Մէրի բայությամբ եղած ցանքի օրէնքն այս է. գիւղացին կստանայ մի որոշ գումար և սերմացու ցորեն դրամատէրից. իր անասնոց հետ միասին կատարած 4—5 ամսուայ դառնաքիրտն աշխատութիւնից յետոյ, կալոցի ժանանակ, դրամատէրը ոչինչ մէջ տեղից կը վերցնէ, ապա մնացածը կէս առ կէս կը բաժնուի պարտատիրոջ (դրամատէր) և պարտապանի (մերիբայ) վրայ. իսկ դրամագլուխը կը մնայ դարձեալ պարտ, որը երբ գիւղացին աջողեցաւ վճարել, մերիբայութիւնը կը դադրի։ Օրինակ. եթէ Ա. վերառնէ Բ-ից 30 օսմանեան ոսկի (մերիբայութեան) պարտք և 100 կօտ *) (սերմացու) ցորեն, և եթէ կալոցին արդիւնք ունեցաւ 800 կօտ ցորեն՝ $11^1/_2$ % հաշուով 92 կօտ պետութիւնը կը տանէ տասանորդ, մնացած 708 կօտից 100 կօտը դրամատէր Ա կը վերցնէ իր սերմը, ապա 608 կօտը կէս առ կէս կը բաժնուի Ա-ի և Բ-ի վրայ. 30 ոսկին կը մնայ պարտք նոյնութեամբ։ Յարգը սովորաբար գիւղացուն կը մնայ, բայց վերջին տարիները բաժնողներ եւս գտնուեցան։

Երկրագործութիւնը կը կատարուի ընտանիքի իւրաքանչիւր անդամի մասնակցութեամբ, կանայք և փոքր աղջիկներն անգամ անմասն չեն այս աշխատութիւնից. ընտանի ամէն մէկ անհատը իր

*) Տես Ճ-ին և Ն-ը,

տան մշակն է. 6--7 տարեկանից սկսած, տան արու զաւակը արդէն աշխատաւորներու թուոյն մէջն է։

Պանդխտութեան պատճառով թէև շատ թուով անձինք կը բացակայեն, բայց խմբովին ապրելու սովորութիւն ունենալով՝ անպատճառ մի քանի անձինք եւ տունը կը մնան երկրագործութիւնը շարունակելու. նոյն իսկ պանդխտութիւնը շատ անգամ ընտրութեամբ և հերթով տեղի կունենայ, պանդխտացողը պէտք է դրամ աշխատի, իսկ տուն մնացողը տունը շահէ։

Ցանքի ժամանակը կսկսի գարնան սկզբից, սովորաբար մարտի սկիզբներից կամ կէսից՝ մինչև Մայիսի 10—15-ը, այս ժամանակամիջոցից առաջ՝ կլիմայի խստութիւնը թոյլ չի տար, իսկ մայիսի 15 ից յետոյ ցանքը անպէտք կը համարուի, որովհետև կամ չիբուսնի, կամ դժուար կը հասցնէ եղանակը.

„Մարտայ ցանիս՝ մարդ իս,
Ապրիլու ցանիս՝ կապրիս,
Մայիս՝ ցանիս վայիս, չցանիս վայիս"։

Աշնանային գիշերահաւասարից քիչ առաջ ու յետ կը ցանուին խոտերը և բուն աշունից մինչև խեղդ աշնան վերջերը աշնցան և գարընցան իսկ։

Մշակած հացահատիկները հետեւեալներն են.

1. Բուն ցորեն կամ Ներքնամաք-Գաբնցոնը, որու մի քանի տեսակները կան, ֆոայ ցորեն (անքիս, անմազ) Խորխուլլը (տմ. սեւահասկ) ցորենը՝ որ քառակուսի հասկեր ունի և այլն. 2. բուն աշնցան կամ ոչխարաքոռը, որ առհասարակ աշուն կը ցանուի, միայն երբ անպէտք սերմունքները միջից ջնջելու համար գարնան սկզբին ցանեն՝ կը կոչուի հուբեթի։ Սպիտակահատի կամ աշնցանի ընտիր տեսակն է խոտը, որ տեսանք վերև, թէ երբ կը ցանուի և անպատճառ ջրբէր պէտք է լինի։ 3. Տրիկն, գոյնով գարնցանի նման, բայց նուազրուկ ու նիհար հատերով և խիստ դժուարամարս. այս հացահատիկը շատ քիչ կը մշակուի, սորա հաչրենիքը կը համարուի Բզնունեաց (Խլաթ) գաւառը։ 4. Ջուֆեանը (քրդ. գարէ ցորեն). տեսքը գարու, բայց համը ցորենի է, սա եւս աշնցանի կարգիցն է իբրև սպիտակահատ, և աշուն ու գարուն կը ցանուի։ 5. Գարի, որ կը ցանուի խեղդ աշնան և գարնան սկզբներուն։ 6. Կրեկ. Յունիսի ամսուայ վերջերը կը ցանեն։ 7. Գարի-կորեկի մի տեսակը։ 8. Կարարա. 9. Կանճարկ, որու փշոտ գնդաձև գլխու մէջ կը գտնուին սպիտակ հատերը, որոնք ձէթի կարտադրեն։ 10. Ոռ, 11. Սիսեռ. 12. Քուշնայ (ոլոուն) 13. Սերբ (կտաւատի նման ձէթի տուող)։ 14. Կանաբ (կանեփ)=Cananbis. սերմունք տուողը. սերմ չարտադրողն եւս կը կոչուի շեխ (Խաչենը ըստ գիւղացոց). կա-

նանփի հունդը կանուանուի ՝ՈՒՊԷՊ, յայտնի իւր ընտիր ձիթովը, որով կերակուր կը պատրաստուի։

Այս հացահատիկներից ամենից շատ տարածուած են գարնցանը, աշնցանը, գարին և կտաւատը. որոնցից ստացուած արդիւնքն է ժողովրդի ապրուստի միակ միջոցը, որ թէև բաւական առատութեամբ կստացուի, բայց արտահանութեան միջոցներ չլինելով՝ աժան տարիները չհաւատալու աստիճան ցած կիջնէ, «հողին հաւասար կը դառնայ». դրամատէրերը օգտուելով հանգամանքից կը գրաւեն երկրի բերքը և թանկութեան ժամանակ տասնապատիկ բարձր գնով կը ծախեն թշուառ ժողովրդի վրայ։ Այսպէս ամենաաժան տարին, ցորենի ՝ԷՐ (5 կօտը)=4½ փութի, կաժէ 12 ղուրուշ (1 ռուբլի կամ 1,032 ռուբլի) *), իսկ ամենաթանգ տարին, 200 ղուրուշի (17 ռուբլի 20 կոպ.) ներկայ 1898 թուականին՝ 1 քիլայ կամ 4½ փութը ցորենի ծախուեցաւ 45—50 ղուրուշով (3 ռուբլի 87 կոպ.—4 ռուբլի 30 կ.)։

Գաւառի ընդհանուր արդիւնաբերութեան որքանութեան մասին մի գաղափար տալու համար ուրիշ հնարաւորութիւն չունենք, միայն՝ նայելով որ, Բուլանըխայ՝ ներկայ (1898) տարուայ տասանորդը ծախուած լինելով 653,160 ղուրուշ և 2240 քիլ ցորենով և, իւրաքանչիւր քիլը տէրութիւնը գնահատած լինելով 10 ղուրուշ, կունենանք $\frac{653160}{10}=65316+2240=67556$ քիլ ցորեն։

Վերոգրեալ 653,160 ղուրուշի ⅓ մասը, այսինքն՝ 217,720 ղուրուշ, ԽՈՐՈՒԼ բաց երթանք, այն է՝ խոտերու, բոստաններու, մեղրի փեթակներու տասանորդական արժէքը, որ անշուշտ դրամով կը վճարուի, կը մնայ՝ $\frac{435440}{10}+2240$ քիլը,=45784 քիլ։ Որովհետև տասանորդը կը գանձուի 11½ %, սոյն հաշուով ընդհանուր գաւառը ներկայ թուականիս ունեցած է՝ 398127 քիլ գրեթէ, կամ՝ 716621 փութ բերք (ցորեն, գարի, կորիկ, կտաւատ և այլն)։

Որովհետև կապալառուները փորձ վարպետ են իրենց արհեստի մէջ, պէտք է գիտնալ որ նոքա պետութիւնից գնած տասանորդը գանձելուց յետոյ, դեռ աւելին ևս կը կթեն ժողովրդից, հետևաբար և մեր ցոյց տուած հաշիւը եթէ ոչ ճիշդ, գոնէ՝ ճշգրութեան մօտիկ համարելու է։

Շմշակուած գետինը կը կոչուի ՝ԽՐԷ, եթէ մշակեն ցորեն ցանելու համար, դեռ չցանուած՝ կանուանուի ՀԷՐ։ երկրորդուած հերկը՝ ՀԷՂ կամ ՝ՅԷՂ (յեղյեղել). հերկ ու հեղի վարերը պէտք է ուղղահայեաց կտրեն մէկ զմէկ, այսինքն՝ հակառակ ուղղութեամբ վարուեն, որպէս զի „վար հետ վարի“ չգայ։

*) 100 ղրուշը, այժմեայ ընթացիկ գնով (փիացա) հաւասար լինելով 8 ռուբլի 60 կոպէկի։

Որոշ սահմաններով մշակուած գետնի մի մասը կը կոչուի �, եթէ արտը յարմարութիւն չունի ջրուելու՝ կանուանուի ոռքէն (անջրդի), իսկ ջրբուողը՝ ջրաբէր. գիւղերու առաջ գտնուած ամենամօտիկ արտերը կասուեն աղքէն (աղբուելու կամ աղբուած). գետափնեայ այն արտերը, որ գետաջրի այս ու այն կողմը խոտորուելովը, լիլ կամ տղմային հողերից են կազմուած ու գորշագոյն են, կը կոչուեն ոլոռ կամ յոլոռ, քարքարոտ և խոշոր աւազ ու քար պարունակող արտերը՝ խրէշ կամ խռաշ, կաւճային խաւերով յատակ ունեցող հող կամ՝ արտը՝ ռոմ կամ ֆղէշ։ Զարունակ խոնաւութիւնից մաճուցիկ հողերը կանուանուին նէղ, (հողի կանոնաւոր խոնաւութիւնը՝ հաբռոռ), իսկ վիսրուն ու հատ հողը՝ ոբռոռ։

Երկրագործութեան ամենայարմար և առաջնակարգ տեղերը իրաւունքով կը համարուեն 1. սև հողից կազմուած արտերը. 2. յակոնները և 3. կարմրասև հողերը. միւս՝ խրաճ. գղեճ կամ տաթ և կլէզ հողերը՝ երկրորդական են։

Արտերը կը լինին հռռոլոռ. էրէնշէ (երկարաձև) և շատ հեղ՝ անկանոն ձևերով։ Տարբեր անձնաւորութեանց պատկանեալ արտերը մէկ մէկից կը զատուեն բարակ կորդ գետիններով, որոնք կը կոչուեն ոքռռ (սահման)։

Վար.—Արօրով, բեչարով, գութանով կամ մանկեռով արտը փորելը կը կոչուի վար. արտը եթէ մեծ է, վարելու ժամանակ գիւղացին կը բաժանէ ֆոծէրռ, որպէս զի անասունները երկայն ճամբայ կտրելով չյոգնեն.



Քառակուսի ձևով ֆ գծերու մէջ պարունակուած հողը մի գորշ է, ռֆ գծերը կը կոչուեն ռռ ռֆռռ. ցց... կէտերը կանուանուեն ցռ. որոնք, առաջին ակոսից սկսած սովորաբար 7—8 չէռ (լայն քայլք, բացուածք սրունքի) կը լինին. և ծայրերը կոշտեր կը տնկուին, որպէս զի ցորենը ցանած ժամանակ որոշ չափով ցփնուի (ցանուի). ցորեն ցանողը առ ափանից առափան երթալով գալով կը ցանէ (2 անգամ), ապա արօրը կը վարէ, որու իւրաքանչիւր բացառածքը կանուանուի յոլոռ (ակոս)։

Արտը վարելուց յետոյ, իւրաքանչիւր օրուայ վարը պէտք է շուտով ցռէլ ցաքով կամ տափանով, որպէս զի հողի հարունքը (խոնաւութիւնը) չելնէ և արտի մակերևոյթը հարթուի, որ քաղոցի ժամանակ գերանդին դիւրութեամբ հնձէ։

Արտերը ջրելու համար, ցանելուց յետոյ 7—8 քայլ լայնութեամբ ակոսներ՝ կը բացուին, որոնց միջոցը կանուանուի ֆոբ. մեծ կօրին՝ ֆէլեռֆոբ, որու ակոսը երբեմն ևս ֆանոբոյ կը կոչուի, եթէ ճանապարհը դարուփոս է և ֆէրոզ *) բարձրացուցած կամ կարգաւորուած է. ջուրը կը վազէ ակոսներով և ոռոֆէրով կելնէ կօրիներու վրայ։



Ահա ցորենը ցանեցին, վարեցին և ցաքեցին. ցորենահատիկը մայր հողի արգանդի մէջ նախ կը մղլոնի, ապա ծնէլը կը թափէ դուրս, որ երբ գեղեցիկ կերպով կսկսի թփուօշնալ (թուփ տալ) և մէկ երկու թգաչափ բարձրանալ՝ կը կոչուի ալշոֆուշ և իւր գեղեցիկ մուգ կանաչ գոյնը՝ մոֆ ֆանանչ։ Երբ հնձելու մօտ կը լինի՝ բայց դեռ դալար է՝ կանուանուի էղէն ու գոյնը ֆնֆոֆոնէն, իսկ երբ խիստ չորանայ և ծերուկի նման կծկի՝ կոնծել։

Գարուն բացուելուն պէս ցանուած ցորենի ցանքը կը կոչուի հէր, իսկ ամենայետինը (Մայիսի 10—15) ֆոնէն։

Ցորենի բոյսի մասերն են՝ քօք (տաճ.)=արմատ, ծղօտ կամ ծոն, կրութ (հասկ) և փո կամ փոթ՝ կուտիը ծածկող մազերը։

Հունձ.—Ցորեն քաղելու համար հարկաւոր է մի դազգահ (կազմուածք), այսինքն երեք մարդոց միաւորութիւն, որոնցից մէկը պէտք է քաղէ և կը կոչուի հոլոոբ. միւսը կապէ՝ և ֆոպոոբ, իսկ երրորդը փոցխէ—փոցխոբոբ։

Ցորենը ընկած ժամանակ գերանդու բացած կորաձև բացուածքը կը կոչուի ֆ և սորա ծայրը հաւաքուած ցորենը՝ ծոբ։ Եթէ հընձողները 2—3 քոլքոհ լինեն և մէկանց երեք հոգի հնձեն, առաջին ֆ բացանողը կը կոչուի ֆոֆ, երկրորդը՝ ֆոֆոլքէր և երրորդը պէչոբ։

Խոտի հունձը ցորենից սորանով կը տարբերի, որ ֆոֆը եթէ ձախից աջ կը հնձէ և աջ կողմի վրայ ծոբ կը կազմէ, ֆոֆոլքէրը պէտք է աջից ձախ հնձէ և առաջինի ծոբը ծոբ ընէ, այսինքն ծորերը չհըն-

*) Կորգ կամ ջնգոտ չայիրներից բոլորակի կտրուած հող.

ձուած խոտից ջոկէ. ցորենին ծոր թափել չպէտք է անել նորա համար, որ հնձուածի հասկերը չհնձուածին դպչելով չփշրուեն։

Հնձուած ցորենը կոպրոը նախ խոշտէր (քրդ. գուրգ) կը շինէ, ապա բոլոր-բոլոր կը դիզէ. բարդը կը բաղկանայ 30 խուրձերից *)։

Ծեծ և կալուկոս.—Բարդոցները կրելով սայլերով՝ կը թափեն կալերու մէջ, կամ կը դիզեն մէկ կողմը կամաց-կամաց ծեծելու (մանրելու) համար. իւրաքանչիւր տուն իւր յարդանոց—մարագի առաջ ունի բաց գետին՝ որ կը կոչուի կոլ։ Ցորենը խրձու կերպ կոլ կը ձգեն, հարուստ տները, 20 բարդի չափ, խուրձերը ուղղահայեաց և խիտ կը կանգնեցնեն և 40—50 անասուն վրան հանելով կը տրորեն նախ, կամ՝ որ ամենագործածական ձևն է, խուրձերը արձակելով կը գգգեն (ժողովրդական լեզուով՝ աշնէլ, աշնէլ **) և առաջ անասուններով տրորելով՝ ապա սովորական գործիքներով կը մանրեն։

Կալի դիրքը (ցորենի) բոլորակի լինելով շրջանակ մի կը ձևացընէ։ Կալը ձգելով ցորենը կը մանրեն կոխով, (նկար դ) կոխով և ջրջրով։ Կամը երկփեղկ տախտակներից միացած գործիք մէ (տես նկար դ.), որու մէկ կողմը սուր գայլախազ քարերով ծածկուած է ցորենը մանրելու համար։ 10—20 թուով և շղթայով վզերից մէկ մէկու կապուած անասնոց խումբը կը կոչուի կոխ. իսկ ջրջան է երկու անիւ ունեցող գլանաձև մի ոչ, որու վրայ շարուած ուրագի ձևով սուր երկաթները ածելու նման ցորենը կը մանրեն։ Բոլորակի պտտելով առաջ կընկնին մի քանի կամեր, սոցա յետևը կոխ, ապա ջարջառը, որոնցից կամն ու ջարջառը կը կտրտեն և կը մանրեն, իսկ կօռին ոտներով մանր ու բէգը կը խառնէ իրար։

Մէկ ջարջառ, մէկ կօռի և 3—4 կամ մի շաբաթուայ մէջ կարող են 15—20 բարդ ցորեն ծեծել ու մանրել։

Մանրած ցորենախառն յարդի կոյտը կը կոչուի բէղ. թեղերը երկարաձև կը լինեն և այնպէս կը ձգուեն, որ փչող քամին ուղղահայեաց կտրէ, սակաւ բացառութեամբ Բուլանըխցոց թեղերը հիւսիսից հարաւ կամ քիչ շեղ հիւսիս. արևմուտքից հարաւ արևելք կերկարացուին, որովհետև քամին կը հոսէ արևմուտքից կամ արևմտեան հարաւից։

Ցորենը ջոկելու համար յարդի քամուն տալը կը կոչուի էրան ***). զտուած ցորենակոյտը՝ ջէղջ. մանրուկ ծղոնները՝ յարդ, ջէրդ, նաև՝ դարման, յարդի շատ մանր մասը՝ մաշեղ կամ մղեղ. իսկ խոշոր մնացածը՝ կոշ-

*) Խոտի խուրձը նախ խոշոմ կը շինեն, ապա երկու խոշոմը միացնելով կը կազմեն մէկ խուրձ. ցորենը խոշոմ չունի։

**) Արմատն է՝ աշան։

***) Ցորեն զտող կամ երնող մեքենաներ էլ բաւական թուով ներմուծուած են այժմ գաւառի մէջ։

ՀՈՒ։ Կուճոնի մէջ եթէ կը գտնուին չծեծուած հասկեր, ԽՈՀՈՒՆՔ (բոյսերու արմատներ, կոճեր) և խոշոր ծղոններ՝ որոնք պէտք է նորից կալսուին, մանրուին, կը կոչուին ԽՐԵՂ։

Գաւառի բերրիութիւնը.

Ի՞նչպէս է գաւառի բերրիութիւնը, կամ բարդ որոմն որքան բերք կը թափէ—այդ իմանալու համար պէտք է ծանօթանանք մի քանի չափերու հետ։ Ժողովուրդը կը գործածէ երկու տեսակ չափեր.— ԳԻՆԱՆ և ԱՐՈՒՆԻ. առաջինի վրայ վստահել չէ կարելի ուղիղ հաշիւ ներկայացնելու համար, միօրինակ չլինելու պատճառով (մեծ ու պզտիկ). կը մնան միայն արքունի չափերը, 1. ԽՈՄ, (նկար. V. բ.) 2. ԹԷ, 3. ԾԻԼ (նկար V. է.)։

1. Արքունի կօտը կը կշռէ 12 հօխայ կամ 36 ֆունտ, (3 գրվանքան հաւասար լինելով 1 հօխայի), 1 ԹԷԸ երկու կօտ լինելով = 24 հօխայի կամ 1 պուտ և 32 ֆունտի, ԾԻԼԸ կը պարունակէ 2 քիլ կամ 48 հօխայ, այն է՝ 3 պուտ և 24 ֆունտ։

Բուլանըլը Հայաստանի ամենաբերրի գաւառներից մէկն է, և իւր բարեբերութեամբը կարող է մրցել Ճիրակայ, Տարօնոյ, Խնուսայ և Բինգօլ լեռներու արգասաւէտ բարձրութեանց հետ։ Ականատես անձանց վկայութեան նայելով՝ միմիայն մէկ հարիւր գոյացած ցորենի ԹԷԼԻ վրայ նկատեր են 1—95 ցողուն, հետևապէս և՝ 1—95 հասկ, իւրաքանչիւր հասկը ուղիղ մէկ ԹԷ *) երկայնութեամբ. փորձի համար չափելով իւրաքանչիւր բարդը տուեր է 4 շնիկ (14 պուտ 16 ֆունտ)։

Որովհետև, ինչպէս վերը յիշեցինք, հողի պարարտացումն չլինելով՝ երկար մշակութեամբ երկրի թափը, ուժը կոտրեր է, և այսօրուայ Բուլանըլը 30 տարի առաջ եղած բերրիութիւնը չունի. բայց և այնպէս այս օր ևս, գարու մէկ բարդը կը թափէ 4—5 շնիկ (14 պ. 16 ֆ.—16 պ.)

Խռամի	բարդը	կը թափէ	3—4 շնիկ	(10 պ. 32 ֆ.—14 պ. 16 ֆ.)
Գարնցանի	»	»	$2^1/_2$—3 »	(9 պ.—10 պ. 32 ֆ.)
Կորեկի	»	»	5—6 »	(16 պ.—21 պ. 20 ֆ.)
Կտաւատի	»	»	3—4 »	(10 պ.—32 ֆ.—14 պ. 16 ֆ)։

Մշակի համար առանձին 6 միրու (արքունի) կօտ, այն է 5 պուտ 16 ֆունտ ցորեն ցաներ են՝ և ստացուած է 18 բարդ ցորեն, ընդունելով որ եթէ բարդը $2^1/_2$ շնիկ ցորեն տուած լինէր, 18 բարդից կը ստացուէր 45 շնիկ կամ 162 պուտ բերք, որ այժմ, գուցէ. անհաւատալի թուի, բայց իրողութիւն է։

*) Վերև՝ իբրև հացահատիկներու չափ գործածուած ԹԷԸ արաբերէն է և կը նշ. ԹՈՄ, ԷՐՈՄ (bsisseau), իսկ վերջինս՝ բուրթ և ցուցամատերու բացուածքի չափին կասուի։

IV. ԱՐՀԵՍՏ ԵՒ ԱՐՀԵՍՏԱՒՈՐՆԵՐ.

Ա. Նաճարներ (հիւսն, դուլգար). Ինչպէս ամէն արհեստ, նոյնպէս և նաճարութիւնը կը սովորեն մէկմէկից աշակերտութեամբ. մինչև սովորելը, աշակերտները բոլորովին ձրի կը ծառայեն ուստաներուն. երբ «չրաղ» կը լինին, այսինքն կաւարտեն, 1—2 տարի կստանան առնուած վարձքի $^1/_3$ կամ $^1/_4$ մասը, ապա հաւասար կէսը։

Եթէ մէկ գիւղի մէջ մէկից աւելի նաճարներ գտնուին, ժողովուրդը կը թեմեն (մուշտարի) և ամէն մէկը իւր թեմի համար կը պատրաստէ հետևեալ գործիքները. ատաղձը կը հոգայ ռաշպոլ և դուլգարը կստանայ միայն իւր ռաբոտխանէ (շինելու վարձքը). իւրաքանչիւր գործիքի դէմ կը նշանակենք իւր շինելու գինը, որ կրկնակի կերպով որոշուած է հին ժամանակներից ի վեր և այսօր ևս ընդունուած է նաճարի և ըէմէրս համաձայնութեամբ, միայն մի քանի տեղեր այս վարձքերը կը տարբերեն մէկմէկից։

Խարազանի ելը կամ՝ խարազնելը (տես նկար I. Բ. 1.), որ հասարակ ձեռնափայտի մեծութիւնն ունի, և հաստ կողմը փոքր ինչ կեռ է. այս կեռ գլուխը կը տաշէ նաճարը, ապա շաղափով կը ծակէ խարազանի ոլորը (մտրակ, դամշի) անցկացնելու համար։

Կոնդրէս (նկար I. Զ.), փայտէ կեռ օղակ մի, որու մէկ գլուխը կը քարտուի և միւս ծայրը երկաթէ գամով վրան կ'ամրացուի.

Զգոռոյ (նկար I. Ը.), կանտրիւի նման փայտէ երկարաձև օղակ մի։ Կանտրիւ ու ձգատուն արօրի սարքը կամբողջացնեն, (տես ոլոր)։

Բանդի (նկար II. Բ.), կեռ գլուխ փայտ մի. որով կապրարը (տես հունչ) ցորենը կը հաւաքէ խուրձ կապելու համար։

Այս չորս փոքրիկ գործիքներու շինութեան համար նաճարը ոչինչ վարձք չստանար թեթև աշխատութեամբ պատրաստելու համար։

Փոյլ (նկար V. ա.) ատամնաւոր փայտէ գործիք մի, որ քաղած ցորենի և խոտի աւելի մանրուկները հաւաքելու կը ծառայէ։

Ելնու մոտ (նկար IV. բ.) խուրձը սայլի վրայ բարձրացնելու և ցորենը աշնելու (տես կալու կուտ, ոշոն) գործիք.—անվարձ։

Հորոնէլի (նկար IV. գ.). թեղը երնելու, ելը խառնելու կամ շրջմրջելու գործիք ատամնաւոր. 3—4 ղրշ. կամ 25,8 կոպ.—34,4 կոպ.։

Բայց ընդհանրապէս հորոնէլի կստացուի Մուշ քաղաքից ինչպէս և ելմը (նկար Դ.) Բասէնից։

Հարոր կամ ոլոր (նկար I. Դ.), գետնի վարող, հերկող և հեղող հանրածանօթ գործիքը։

Ուրոր սարքելու կերպը.—Արօրի գլուխը կանցկացնեն փոկով լծան վրայ կապուած (բէյնէրս մէջ տեղը) կանտրիւի մէջը. ֆորձհորը կանտրիւի մէջից արօրը կը քաշէ. գոմէշները կերթան և արօրն մաճ-

կալի հսկողութեամբ կը վարէ։ Երբ մենակ երկու գոմէշ քաշեն արօրը՝ լուծքը կը կոչուի ամէնի, որպէսզի գոմշուկները չյոգնին, հարկաւոր են զոյգ մի օգնական եզներ. շղթայի ներքեւ կանցկացնեն արօրի արմնտայինն և ամոլան գոմէշներու միջովը երկարացնելով ոգեաւորով շղթան կը կապեն փոքր լծան մի վրայ. որուն կը լծուին երկու եզներ և, կը կոչուին հօրեր. որպէսզի վարելու ժամանակ հօրեքի շղթան ցածնալով գոմէշներու ոտքերը չընկնան, յետոյ գործիքը կանտրիւի կշտից կը կախեն՝ որ շղթայն վեր բարձրացնէ. (եթէ շղթայի փոխարէն կանանփից հիւսուած ոլորուն թոկ գործածուի՝ վերջինս կը կոչուի հօրոյ)։ Եթէ շղթայի, հօրստի և փոկի կապոցը բկիներու մէջից աջ ու ձախ խոտորուի՝ կասեն նոր *) անցաւ աջ՝ կամ ձախ կողմը։

Արօրն ունի երկու դոն՝ ամէ՝ (գոմէշներու զոյգը) և հօրեր՝ (եզներու զոյգը), ամոլը կառավարող և մանճ բռնող երկրագործը կը կոչուի մանճկալ, հօրեր քշող և սորա լծան վրայ նստող փոքրիկ երկրագործը՝ հօրոց։

Եթէ արօրի առատամն ու համը կը կպմեն բուռանէն՝ արօրը կը կոչուի նոր, եթէ սրանէն՝ ոռնէ. եթէ արօրի վերջին կողմը, համի և առատամի միացման տեղը, բացուի և վերջինները հեռանան մէկմէկից, կասուի արօր եղու չոխու (դանակ). եթէ արօրի ծայրը կանդրիւ մէջից ծռուի և ելնէ լծան վրայ, կասեն արօրը պոճկոյս. եթէ խոփը ծռուի՝ նոխոս, եթէ առատամի ծայրը, խոփի տակ, թաց հող բռնէ և արօրը չմտնէ ի հող, կասեն արօրի նշան է բռներ։

Արօրի շինութեան վարձքը 6 զուրուշ (51. 6 կոպ.) է։

Լոծ (ամոլան և հօրքի նկար I ա.). լծան սամոտիքի ծակերից մինչև գլուխները կը կոչուին ինճկ (լծան)=3 զրշ. կամ 25,8 կոպ.։

Գոբան (նկար II.)։

Սա խորունկ վարելով՝ արօրի նման մէկ ամոլով և մէկ հօգիքով չբանիր, այլ 7—8 ամոլներից և հօրեքներից կը բաղկանայ, որոնք դոն կը կոչուին հետևեալ անուններով.

1. Ամէ. 2. ոճգոն. 3. խարջգոն. 4. խոյոր դոն. 5. մինդոն. 6. փոշգոն. 7. հօրեգոն։

Պարզ է, որ զութանով եղած վարը արօրի նման չլիներ, որովհետև, զութանը՝ ակօս բացած ժամանակ, կշտի տախտակը հողը կ շրջէ մէկ կողմի վրայ, եթէ նորից վերադառնայ միևնոյն ակօսի կըշտին վարելու, այս անգամ հողը կը շրջուի հակառակ կողմով, բացի

*) Սայլի վրայ ցորենի բարգը կապող պարանը՝ որ կը կոչուի ճոպան երբ ծալուի նոյնպէս կանուանեն նոր (ծալել). փոխաբերաբար մի տեղից շուտով փախչելը և քիչ միջոցի մէջ շատ ճանապարհ կտրելը նոյնպէս կը կոչուի նոր (ծալելու նման կտրել ճանապարհը)։

սորանից [illegible] կունդը դուրս կը մնայ և մեծ անիւը ակօսի մէջ մըտնելով համը կը բարձրացնէ և ձևիչն ու խոփը այլ ևս չեն կարող վարել. այլ գործը (տես [illegible]) դնելուց յետոյ, յաջորդաբար մի ակօս գործի այս կողմից և մի ակօս միւս կողմից կսկսի վարել. մէջ տեղ թողնելով բաց գետին, որ կը կոչուի [illegible] որ հետզհետէ բարակնալով կանուանուի [illegible]:

Գութանով միայն հերկ կը լինի և ոչ [illegible]. գութանի կապելը (շինելը) կարժէ 50 ղուրուշ կամ 4 ռուբլի 30 կոպէկ:

Բէչարայ (անճար)=փոքր գութան, որ անիւներ չունի, և համը առատամի վրայ կը դրուի արօրի նման: Բէչարան կազմելը կարժէ 15—20 ղուրուշ կամ 1 ռուբլի 29 կոպ.—1 ռ. 72 կոպ.:

Մանէր (նկար IV. գ.), առհասարակ գութնվար հերկերը երբեմն ևս արօրով եղած հերկ ու հեղ արտերու փուխր հողերը վարելու համար այս գործիքը կը գործածուի, կարիք չունենալով խորունկ վարելու. մանկեռին կը ձգուեն երկու (3) պարդներ (տես նաև [illegible]) որոնք կը կապուին լծան, և վրան կանգնելով վարը կը վարեն. սորա շինելը կարժէ 5—6 ղուրուշ 43 կոպ.—51,6 կոպէկ:

Վարանող գործիքները վերջացան, այժմ հարկաւոր է տափնող հարթող և հաւասարեցնողը, և սորա համար հնարուած է՝

Ցաւ (նկար II գ.). երեք (1, 1, 1) կեռ գլուխ փայտերու մէջ կանցկացնեն երեք երկայն փայտեր, որոնցից առաջինները կը կոչուին [illegible] և վերջինները [illegible], սոցա մէջը կանցկացնեն՝ կամ ճիշտը՝ կը հիւսեն, դալար փայտեր (14), որոնք կանուանուեն [illegible], ապա [illegible] փայտերը ձգելով՝ արօրի նման լծան վրայ կամրացնեն և վրան կանգնելով վարածը կը հարթեն կամ կը [illegible]: Ցաքի միայն գլուխները և ճաղերը շինելը կարժէ 3 ղուրուշ կամ 25,8 կոպէկ.

Սայլ [illegible]—(նկար III. գ.) արօրից յետոյ գիւղացու ամենապիտանի գործիքը.

Սայլի կազմել կապելը կարժէ 50—60 ղուրուշ կամ 4 ռուբլի 30 կոպ.—5 ռուբլի 16 կոպ. իսկ կնդներ մարանելը՝ (մասունքը միացնել իրարու) կարժէ 40 ղրուշ (3 ռ. 44 կոպ.):

Բալէր (նկար III. բ.) կը ծառայէ ձմեռ ժամանակ, և կը շինուի 10 ղուրուշով (86 կոպ).

Դահուլ (նկար III. ա.)=ձեռքով քաշելու փոքր բալխիր. որու պարորները կամրացուեն քաշերու վրայ և կը շինուի 15—20 ղուրուշով (1 ռուբլի 29 կոպ.—1 ռ. 72 կոպ.):

Դանէլ կը կոչուին այն փոքր սայլերը, որոնք թեթև ապրանք կամ ծանրութեան փոխադրելու կը ծառայեն և կնդները դօղ (օղ) չունեն. գռնել Բուլանըխցիք կստանան Բասէնից:

Ճաշու գոնել 1—2 ղուրուշ (86 կոպ.—1,72 կ.) (տես, մանկատաՃութիւն, Ճնունդ և մկրտութիւն)։

Օրոց (օրօրոց)—20 ղուրուշ (1 ռ. 72 կ.)։

Անոռներ. 2—3 ղուրուշ (17,2 կոպ.—25,8 կոպ.)։

Փայտէ ոնդոռ (20 դրուշ=1 ռ. 72 կոպ.)։

Մահճակ (փոխանակ մահճակալի)—40 ղուրուշ (3 ռ. 44 կոպ).

Սէր գոռ (տախտակէ)։

Ծղնիներ գոռ.—առաջինից այն տարբերութիւնն ունի, որ փոխանակ տախտակներու, դալար փայտերով կը հիւսուեն, որոնք կը կոչուին ոլոր։ Աղտուած դռները թրիքով կը Ճեփեն՝ ցուրտը ներս չվազելու համար։

Փանդներ (գիւղական, փայտաշէն). որու մասերն են՝ 1. սողնակ (պարզունակ, задвижка). 2. հոսքեր, որոնք կիջնեն սողնակի քարտերու (փոսերու) մէջ և կարգելեն յետ ու առաջ երթալ, 3. բալնիք (բանալիք) և, այս երեք մասունքները պարունակող կրիայի նման փայտը՝ նիզակ *)։

Բանալին սովորաբար մէկ կողմից կունենայ քարտեր կամ հատեր, եթէ երկու կողմից լինեն շինուած, կը կոչուի ճեխոնդ (սատանայական)։

Ըոպի (նկ. V. ժ.) (¹/₄ մաս կօտի), գիւղական նոր (նկար V. Թ) ոչոնդ նոր (նկար V. Ը։). որոնք կստացուին ուրիշ տեղերից և միայն նստարը կամրացնէ անվարձ։ Արքունի կօտից քիչ մեծութիւն ունին ջրհորի, կաթի և այլ գոլորները (գոյլ), որոնք նոյն կերպ դրսից կստացուին և կը պատրաստուին։

Ընդի (նկար V Ի) (20 ղուրուշ=1 ռ. 72 կոպ.).

Ջրաղացի ոլոր, որու մէջից աղունի ցորենը կը թափի քարերու մէջ։

Լանդոռ (քրդ.) կամ նեյոր, որով փալախ խոտից ջուլ կամ նեյ (խոտէ չուան, պարան) կը պատրաստեն (նկար V. Ե)։

Քարման (իլիկ, ռոք, թեշիկ), որոյ մասերն 1) պոչը, 2) գլուխը և 3) ծիծեռը (վերջինս երկաթէ) նկար V Զ.)

Առնոռնի (նկար V Դ,Ե.) բուրդ մանելու քարմանի օգնական փոքր գործիք մի։

Սանդրոնոզ տուն բռնելը՝ կարժէ 20—30 ղուրուշ.

Հաղարջէն տուն բռնելը՝ 40—50 ղուրուշ (տես քնոնդոռ)։

Գրդնոզ. հացը բացանող գլան, անվարձ.

Սեղան (հացի) 1. կլոր. 2. ծալովի։

---

*) Թերևս սորա նմանութեամբ բերանը (մարդոց) կանուանեն նիզակ, որ կը թուի թէ առաջինի արմատն է։

Բ. Դարբիններ.

Ընդհանուր գաւառի մէջ կը գտնուին 4—5 դարբիններ, որոնցից ստորին կարգի առարկաներ պատրաստողները կը շինեն և կը կարկատնեն հետևեալ երկաթէ գործիքները։ Իւրաքանչիւրի դիմացը կը նշանակուի իւր շինութեան վարձքը։

Փոքր և մեծ մեխեր, որոնցից վերջինները կոր գլուխ ունենալով կը կոչուին նուէր։ 20—30 փարայ=4.3 կոպ.—6,4 կոպ.։

Ծիծեռ (քարմանի), (նկար Ա. Զ 3) 10 փարայ=2—3 կոպ.

Հերոն 20 փարայ=4,6 կոպ.

Նուէր (ոտնամանի լուսնաձև պայտեր), մեխերով միասին ամրացնելու համար կօշիկի վրայ 1 ղուրուշ=8,6 կոպ.

Կէս (նկար Ա. Ա) խոտի կամ ցորենի խուրձը քաշելու գործիք, որու պոչը փայտ կը լինի, միայն շինելը $2^1/_2$ ղուրուշ $21^1/_2$ կոպէկ, երկաթի գնով 5 ղուրուշ=43 կոպ.

Գէրանդու էհմ (կոտրածը անագով կպցնել). որ կը կատարուի այսպէս.—անուշադրի մանրուկը կը դնէ կոտրածի վրայ, ապա հրաշէկ դարձուցած հատոյ անուն գործիքը կը քսէ անագին և, հալածը վերցնելով կը քսէ անուշադրին, որոնք նախ կը լուծուին, ապա սառելով կամրանան և կամրացնեն կոտրածը. մէկ լէհմը կարժէ $^1/_2$—1 ղուրուշ=4,3 կոպ.—8,6 կ.։

9. Ճչեռէ—пряжка (գօտեփոկի կամ ղայիշի), կարժէ $^1/_2$ ղուրուշ=4,3 կոպ. (նկար Ա. ԻԳ.)։

10. Գուրբէ ճողէր. 2 ղուրուշ=17,2 կոպ։

11. Դանակ կամ չախու (նկար Ա. Գ.) որու կոթը կը պատրաստուի անասնոց եղջիւրից։

Մեծ կամ գլխաւոր դարբինները կը շինեն

1. Մանկան (նկար Ա Ե.)—մանգաղ. 5 ղ.=43 կ.

2. Մարանդէ (մեծ մանկզոն), 7 ղ.=60, 3 կ.

3. Գէրանդէ, որու մասերն են փայտէ պոչը կամ գէրանդէրէ, բերան, դէր, պուրկ և նուէ։ (Վերջի մասը պոչի կողմից գերանդին երկար գործածուելուց մաշուելով կը կոչուի չուղ (գուցէ լաց ազգի անհատներու նման բարակ)։ 17—20 ղրշ.

4. Չուղ (նկար ԿI. Բ.) փայտ քաղելու (կտրելու) գործիք 5 ղ.= 43 կոպէկ։

5. Դուր 5 ղ. 43 կոպ.

6. Շաղուք 1 ղ.=8.6 կոպ.

7. Հատոց ուրուք 8 ղ.=68.8 կոպ.

8. Ոսնուրուք (առաջինից մեծ) 20 ղ.=1 ռ. 72 կոպ.

9. ԽՆԴՈՅ (տախտակ հարթող գործիքը) *) որուն մի քանի տեսակները կան, ԷՂԲԱՌ (տախտակի եզրը քերող), ՄԻՋԱՌ (փայտի միայն մէջը տաշող, քերող) ՈՒՐՈՒՆ ԳԵՂԷ (մկնատամ) որ ծայրը փոքրիկ ատամներ ունենալով, երբ տախտակը քերէ՝ ետևը ատամներու թուով փոսիկներ կառաջացնէ, մէկ ունդան կարժէ 5 ղ.=43 կ.

10. ՀՂՈՒՅ (զինջիլ) 25—30 ղ.=2 ռ. 15 կոպ.—2 ռ. 58 կ.

11. ԽՈՓ (տես արօր)—20 ղ.=1 ռ. 72 կոպ.

12. ԽՈՓ ՂՊԷԼ (մաշուած ծայրին երկաթ աւելացնել) 4—5 ղուրուշ=34.4 կոպ.—43 կոպ.

13. ՓՈՒԼՆԻ ԽՈՓ (տես գութան) 80 ղուրուշ=6 ռ. 88 կոպ.

14. ՓՈՒԼՆԻ ԽՈՓ ԶՕԳԵԼԸ՝ 20 ղուրուշ=1 ռ. 72 կոպ.

15. ՅՈՒԼ (տես գութան) 18 ղուրուշ=1 ռ. 55 կոպ.

16. ՈՂԼԻ ԶՕՂԵՐ (օղ) (տես ՈՒՅԼ) 70 ղուրուշ=6 ռ...

17. » ՊՈՒՈՅ (« ») 5 ղուրուշ=43 կոպ.

18. ՊՈՒՈՅԻ օղեր (« ») 1—2 ղուրուշ=8.6 կ.—17, 2 կ.

19. ՈՒԼԼ $2^1/_2$ ղուրուշ=21,5 կոպ.

20. ԼՆՓՈՒ (երկու ակիշ շղթայով մէկ մէկու կապուած) 5 ղուրուշ 4 կոպ.

21. ԽՈՐՋԼՈՒ (լաչերկաթ) թունդրի վրայ դնելու երկաթ. որու վրայ ամաններ կը շարուին, 10 ղուրուշ=86 կոպ.

25. ՈՒԼՋԼՈՒ—խմորտաշտը քերելու թաթաւոր փոքր երկաթ. $^1/_2$ ղուրուշ=4,3 կոպ.

23. ԿՈՒ, որու ձկան քամակի նման եղած սուր կողմը կը կոչուի ԽՈՐԷԿ.
24. ՀՄԲ—մեծ կռան
} դարբնի համար պիտանի գործիքներ։

Իսկ ԽՈՐՈՅ (lime), քարթիկ (փոքր խարտոց), ԴՈՐԲԻՆ (մեծ խարտոց), սղոց և դարբնի ՈՒԼ կամ ՀԷՊՆ կոչուած երկաթէ գործիքները դրսից կստացուին։

Գ. պաsсարող (բնա) և ուsսա պատշարողները կը շինեն գիւղական ամէն կարգի շինութիւնները (տես ԲՆԱԿԱՐՆ) և օրական վարձ կստանան 5—10 ղուրուշ (43 կոպ.—86 կոպ.)։ Սոցա գործիքներն են.

1 ԼՐ (երկար թել) պատի ուղղութեամբ բռնելու համար որ սա յետ ու առաջ չբարձրանայ. 2. ՅԵՐԱՅ ԳԻՐԼ (treielle de maçon). 3. ՀԵԼ, ՀՐԱԼ (отвѣсь—կապարալար)

Գաւառի մէջ կը գտնուեն նաև վանք, եկեղեցի, պարիսպ, կամուրջ և այլ սրբատաշ քարերով շինուելիք շինութեանց վարպետ-

*) Ունդան եթէ սովորականից մեծ լինի կը կոչուի ԳՈՊԱՆԷՐ (տափակքեր?)։

ներ, որոնք ռաբ անունով յայտնի են ժողովրդին, և այս կարգի շինութիւնները կառուցանելու համար առանձին սակարկութիւն կը լինի ուստաներու և ժողովրդի մէջ։

Գ. բրուտներ. Ներքին Հուլանըխայ (Ալիզ գիւղի) բրուտները տեղացիներն են, իսկ վերին Հուլանըխայ համար Բաղէշի մօտ գտնուող Խուլդիք գիւղացի բրուտներից կը հրաւիրուեն, որոնք գաւառի մէջ գտնուած կաւերից կը պատրաստեն հետևեալ ամանները.

1. ։ոքի։ ջուր խմելու փոքր աման։

2. ռաչուրայ—երկարաձև՝ քլաչափ բարձրութեամբ ջուր խմելու աման։

3. ռաքա կամ սաֆեկ—թզաչափ բարձրութեամբ մէկ կանթով ջուր խմելու աման. այս երեք փոքր ամանները միասին՝ ժողովրդական բարբառով կը կոչուին ջրխմել։ Բրուտը սոցա համար առանձին վարձք չառներ, այլ մեծ ամաններուս վրայ հաշուելով կը ծախուեն։

4. փարջ—կժան նման փոքր աման, մէկ կանթով, 4 հատը 1/3 արքունի կօտ *) ցորեն կարժէ։

5. պէ։ով փարջ (շռնիթ). նոյն գնով կը ծախուի։

6. բէրբէր։—փոքր փարջ, որու կոկորդը խուլ կը թողնեն և փոքրիկ ծակեր կը բանան որ ջուրը բղբղացնէ. (նոյն գնով)։

7. խնդրէր։—փարջի բարձրութեամբ՝ բայց գլխէ գլուխ լայն թողնուած և առանց կանթի, (նոյն գնով)։

8. դաբուր։—մեծ խնդրիկ և մէկ կանթով. 2 հատը 1/3 կօտ ցորեն.

9. ։ոշ. խսկ նման փարջի՝ բայց գրեթէ մէկ արշին բարձրութեամբ. 1 հատը 1/3 կօտ ցորեն.

10. ։էս ։ոշ.—կժան կէս մեծութեամբ. 2 հատը 1/3 կօտ ցորեն.

11. ։ոշ ։ոշ.—բերանը տափակ և սովորական կժան մեծութեամբ։ (Նոյն գնով).

12. ։ուրաս.—2—2 1/2 արշին բարձրութեամբ՝ լայնափոր, նեղ տակով և տակից քիչ լայն բերան ու շրթունք ունեցող աման. գինը մէկ մեծ կարասի՝ 5 1/3—6 2/3 կօտ ցորեն.

13. ։ոսուրաս.—առաջինի կէս մեծութեամբ և կէս գնովը։

14. ։ուրսի ։ոփ.—կիսկարսի կէս մեծութեամբ և կէս գնովը։

15. ռեսի
16. ռաստր բէրի
17. ուրաշ բէրի
} ։ուրսի ։ոփէց քիչ փոքր և մէկ մէկից սակաւիկ մի տարբեր ։ուրսիներ, որոնց իւրաքանչիւրի գինը 1/3—2/3 կօտ ցորեն է։

18. պուրաս (նաև պուրաս ըստ ոմանց) գրեթէ հաւասար բարձրութեամբ և լայնութեամբ, երկու կանթով աման (տաճ. չոմլեր) կերակուր եփելու աման, բայց սա դրսից կատացուի, բրուտները չգիտեն պատրաստել։

19. ճեռի։—պուտուկից բարձր և երկարաձև՝ երկու կթանով աման. գինը՝ 1/3—2/3 կօտ ցորեն։

20. ջուս լայնափոր և հաստ ճեռիկ.
21. ընդրոփ կարասանման ճեռիկ.
} 2/3—1 կօտ ցորեն.

22. ծուփի։—փոքրիկ պուտուկ (կճուկ), սա ևս դրսից կատացուի։

23. ռեխաշ (թերևս խաշեռ) փոքրիկ ծուփի։, որով իւղ կը հալեն։

*) Այսուհետև միայն ։ոշ կը յիշենք առանց ուրուն բառի։

24. ՃՆԼԷ.—մեծ ոչխարի, պուտուկի կամ ծափիկի ձևով։

25. ԷՐԿՈՅ (ԷՐԿՈՅ).— ուխալի մեծութեամբ՝ բայց մէկ կթանով և տարբեր ձևով զինուած ման, 3-ը $^1/_3$ կօտ ցորեն։

26. ՃՈՒԷ.—ճոռ (ծուռ) ունեցող քթոց (նոյն գնով)։

27. ԷՈՈՅ (տաճ.).—ԷՈՈՂ, խեցեղէն պնակ, քեղան. 4 հատը $^1/_3$ կօտ ցորեն։

28. ՄԼԸՐԼ.—մեծ քասայ։

29. ՓԷՇՈՎ (քրդ.) այսինքն՝ ՈՒՈՂՐՈՅ. ճիշտ քասայի նման միայն մէջ տեղը մի կաւէ ցից կը շինուի, ոտքը վրան դնելու համար։

30. ՊՈՇՊ.

31. ԷՐԽՈՐԷ.—պզտիկ տաշտ.

32. ՅՅՈՄ.—խնոց, որով մածուն կը հարեն իւղ հանելու համար (Նկ. VI. Դ.) $5^1/_3$—$6^2/_3$ կօտ.

33. ՓՈՎԷՐ (քրդ.) ՅՈՓՈՐ.

34. ԳՈՐԷ
35. ԳՈՒԳԷ } փոքրիկ ամաններ, մէջը ուլունք, փող ածելու։

Փայտեղէն ամաններ

36. ՓԳՈՒՇ.
37. ԷՈՒԷ.—մեծ գդալ.
38. ՀԷՐԷՓ —մեծ չոկեկ.
39. ԷՈՒԷ. (հոդէ կօտիկի նման).
40. ՓՈՒՇ.—մեծ և խոր կօտիկ.
41. ՊՆՈՒ.— մեծ և բացաձև ՓՈՒՇ.
42. ԽՈՐ ՊՈՇՊ՝
43. ԳՈՒԼԷ, փայտէ դոյլ.

} բոլորը դրսից կստացուին.

Եթէ երկարաձև ամաններու միայն վիզը կոտրուի՝ ամանը կը կոչուի ՊՈՒԼԷ, եթէ վիզը և փորի կէսը գնայ և մնայ միայն ոտքը՝ կը կոչուի ՀՈՊ *)։

Ե. Սափրիչ (բարբարներ). Իւրաքանչիւր գիւղի մէջ կը գտնուեն մէկ երկու սափրիչներ, որոնցից շատերը շատ անգամ ածելի էլ չունին և դանակով կը քերթեն մարդոց գլուխն ու երեսները, և վարձք կստանան տարին մէկ մարդուն՝ «սերման գլուխ» մէկ գիւղական կօտ ցորեն ($^1/_3$-ը արքունի կօտի, կամ 4 օխայ=12 ֆունտի), այսինքն՝ մէկ մարդու համար՝ 1 գ. կօտ գարնցան, 1 կօտ աշնցան, 1 կօտ գարի, 1 կօտ. կտաւատ...։ Բայց ընդհանրապէս սափրիչները լիովին չեն վարձատրուեր «ժամանակու» հաստատուած իրաւունքովը և երբեմն այս իրաւունքի փոխարէնը՝ ՅՈՒ, ՅՈՒՊ, ԽՈՊ և այլն վճարելով բաւականութիւն կուտան։ Մի քանի տեղեր էլ՝ սերման գլուխ մէկ գ. կօտ ցորեն կառնուի։

Զ. Ճոպան մանողներ. Այս արհեստաւորները կոնոփէց, ոյծոմաղէց և տաւարներու պոչի-մազից կը պատրաստեն՝

*) Պղնձեղէն ամաններու անունները քրդերէն կամ տաճկերէն լինելով զանց կառնենք։

1. Սաֆլէէ՝ լծան սամոտիքը լծկան տաւարներու վզին կապելու համար.

2. Կանանփից՝ կապեր, անասուններրը կապոտելու համար.

3. Հէրոպոյ (տես արօր և հերէ).

4. Ճոպան՝ մազից և կանանփից. ցորենի, խոտի... բարդերը սայլի վրայ կապելու համար։ Սոքա ունին իրենց առանձին ֆէյեռոնէրը վերոգրեալ առարկաները պատրաստելու համար։

Ի. Փինաչիներ (հնակարկատ). Սոքա կը կարկատեն հին տրեխներ և ոտնամաններ ստանալով 1—1½ ղուրուշ. և կը պատրաստեն դէրդրոն տրեխներ—1—2 ղուրուշ (8,6 կոպ.—12,9, կոպ.—17,2 կոպ.)։

Մի քանի արհեստներ գիւղացին իրեն համար կը սովորի և իբրև միջոց շահագործութեան չծառայեր նորա համար. օրինակ՝

1. Հասրաթ կամ խամ շրոխ (տրեխ), որ չխաղախորդուած կաշուց կը պատրաստեն։

2. Նէրիճ պրէխ.—Որպէս զի ոտնամանը ձմեռուայ տիլ ու ճլճեխին թրջուելով չհոտի, խամ կաշին կը ներկեն կաղթփով, արջասպով, գխտորով և նռան կեղևով, որով ոտնամանը կարմիր կապուտ գոյն ստանալով կը իրոռ և թացութիւնը չծծեր։

3. Դէշրոն շրոխ—Կաշին երբ աղաղ (տես ներքևն՝ աղաղ կամ աղաղոց) դրին և լաւ փափկացաւ. մազերը վրայից կը քերեն և կսկսեն ճմռել (տրորել) ձեռքով՝ կամ փայտի և սուր երկաթէ գործիքներու վրայ երկար բարակ քսելով, երբ բաւական ճերմակցաւ մոռ երէսից ձէթ կը քսեն և կսկսեն նորից ճմռել, ապա կը պատրաստեն դէշրոն շրոխներ, փուէր (տես արօր) շրխէր, խարշոնի ոլորներ և այլն։

Փուէր երկու կտոր երկարաձև կաշիներ ոլորելով կը շինուի , և գլխաւորաբար արօրը քաշելու համար կը գործածուի, իսկ լորխը՝ փոկի վերև ասած երկու կաշիները որ կտրուած չեն մէկմէկից, ոչ թէ ոլորելով՝ այլ տափակաձև իրարու վրայ կը ծալուի և սայլի համար կը ծառայեցնեն. խարազանը նոյնպէս փոկի նման՝ բայց երեք բարակ և ոլորուն առասաններից կը շինուի, վերևի գլուխը օղակ մի կը պատրաստուի որ կը կոչուի իշէ, ներքևի գլխից ուրիշ կտոր մի կաշի կաւելացուի՝ որ կանուանուի շէֆ, իսկ ոլորը կոշու միջոցով խարզնկոթից կախող փոքր և բարակ կտոր առասանը՝ վաբէխ։

Տրեխներն ունեն հետևեալ մասերը.—էլ, իրոն և պուէ. այն ծակտիք՝ որոնց մէջ առասաններ կանցկացնեն տրեխը ոտաց վրայ ամրացնելու համար՝ կը կոչուեն իոպէպ *)։

Գոփոյ և սուֆքէն (սուֆքրա), այծի, ոչխարի՝ երբեմն ևս երնջի կամ արջառի ամբողջ մորթը աղաղ դնելով և դէրդրվ կը պատրաստեն. առաջինը երկրագործները վրանին կապելով կը գործածեն, իսկ երկրորդը հացի սեղանի տակ կը փռուի։ Կամ մորթիք առանց դրդելու կը յանձնեն մրդրոնէրոն (ցիգան, բոշա). շինել տալու համար մաղ, խարմաղ, փուէմաղ և սուրպ կոչուած

*) Երբ տրեխը ծակուի և մի կտոր կաշի դնեն մէջը առանց կարելու, այդ կտորը կանուամեն ոդրան, իսկ երբ տրեխի ծակտիքը առասաններով կարկատնուի կամ իրարու վրայ քաշուի՝ կը կոչուի խրոնէլ և սորա նմանութեամբ ծաղկատարն կը կոչուի խրոնու։

մաղերը. (ձիերու պոչի մազերից պատրաստուած մաղերն ևս կը կոչուեն ձարեմաղ)։

Հաւերու ազդրամորթին ևս կանայք ալիւրի մէջ ձգելով կը փափկացնեն և կը պատրաստեն մաշէր աչաց դեղ (ծարեր) ածելու համար։

Ը. Անասնաբոյժ (Քաբար). Քաբար կը կոչուեն անասնաբոյժները, որոնք գլխաւորապէս անասնոց և մարդոց կոտրած անդամները կը կապեն, անասուններ կը նրբէ (մալել, կուրտ)։

Եղն ու ոչխարը կը կրտեն ձուերը ոլորելով և քշելով դէպի վերև՝ կաշու տակը, և յետոյ թելով ամուր կը կապեն վայր չգալու համար, իսկ գոմէշներուն՝ ամորձիքի կաշին հատու ածելով բանալուց յետոյ, հրաշէկ երկաթով ջղերը խարելով կը կտրեն և պլորներու մէջ կածեն ձիթով խարկած ալիւր։

Կոտրածը նորէն համար՝ տես «հիւանդութեանց» բաժինը։

Թ. Ջուլհակներ.—որոնք միայն բրդեղէն թելեր կը գործեն՝ 1 արշին գործուածքին ստանալով $^1/_2$ դուրուշ կամ մէկ գիւղական կօտ ցորեն։

Թ. Բժիշկներ (հէքիմ). Բացի գիւղական հէքիմ պառաւներից, կան այր մարդիկ՝ որոնք հէքիմութիւն կանեն և վարձքերնին սակարկութեամբ կորոշեն. 30—40 օր մէկ հիւանդ խնամող բժիշկը կստանայ շատ շատ մի ԷՂ մի կով, կամ 100—200 դուրուշ (8 ռ. 60 կոպ.—17 ռ. 20 կոպ.)։

ԺԱ. Օղեգործներ (Մեխանաճիք). Այդի չունենալով գինեգործութիւնը անծանօթ է Բուլանըխցոց, միայն օղի կը պատրաստուի չորէնուրիշ նիւթերից օղի քաշել չգիտեն, կը պատմեն միայն, որ մի քանի տարի առաջ Կոփ գիւղացի Աւետիսեան Ռէս Ղազարը, արմատի վրայ ձմերուկներ ծակելով՝ մէջը մեղր կածէր և կը թողնէր մնալ այնքան ժամանակ, մինչև որ մեղրը ձմերուկի միջուկը լուծելով բոլորովին հեղուկ դարձնէր, ապա այս հեղուկը սովորական կերպով (չամիչի նման) պղնձի մէջ լցելով կը շոգիացնէր (քաշել) և կստանար առաջնակարգ մոռիկ։ Օղու հօխան կամ 400 դրամը Բուլանըխայ մէջ կարժէ 4—5 դուրուշ=34,4 կոպ.—43 կոպ.։

Դրսից կուգան նէնէճ, լոռոռէր (թաղիք պատրաստողներ) ռոյռռէր (նալբանդ) և այլն։

Խիստ ցանցառ թուով կը գտնուեն ռոռդէր, սրանք գաւառի մէջ գտնուած վայրենի անասունները՝ վայրենի ոչխար և այծ, արջ, գայլ, աղուէս, ջրշուն կամ կուղբ և այլն կորսան և մորթիքը կը ծախեն քաղաքացոց վրայ։

Գայլը առհասարակ կորսացուի ձմեռ ժամանակ այսպէս. կենդանին հալածող ձիաւորները նախ մէկ կողքի վրայ ընկած համբնթաց բաւական ժամանակ կերթան ուր որ գայլը կը ձգտի հեռանալ. որովհետև անասունը երկիւղից շարունակ ստիպուած է նայել զինք

հալածողներուն, պարանոցի ջղերը կը փայտանան մէկ կողմի վրայ երկար նայելուց, ապա ձիաւորները կանցնեն միւս կողմը, և գիտնալով որ այլևս դայլը չէ կարող առաջուայ նման պարանոցը դարձնել դէպի իրենք, կը մօտենան և քթի վրայ թեթև հարուած մի տալով վայր կը գլորեն։ Ականջները բռնելով փայտ մի կանցկացնեն բերանը՝ որ կը կապուի ամուր գագաթի վրայ, ապա ձիու վրայ դրած ողջ ողջ գիւղը կը բերեն և երկանաքար մի շղթայով վզից կախելով շներուն խեղդել կուտան և կը զուարճանան։

Ոչ իբրև շահագործութեան միջոց, այլ ընտանեկան պէտքը լրացնելու համար կը սովորեն 1. ԽՈՂՎ գործել, որու ամենափոքրը կը կոչուի ՀՈՓՈՒ (թունդրի փոշին թափելու համար), միջակ մեծութիւն ունեցողը՝ ԽՈՂՎ և ամենամեծը՝ ՈՍԿԻ (սակաւի) *)։ 2. ԽՈՒԼ (խսիր, փըսիաթ), որ կը պատրաստուի ՃԼԷՆ և ՓԼԽԿՆ. 3. ԶՄԲԻՆԷՐ (զամբիւղ) — իբրև ամոռ, նստարան և բ) ձիթհանքերու մէջ կտաւատի փոխինդը ածելու և ճզմելու համար։

Սորանցով գրեթէ կը վերջանան Բուլանըխցոց (այր մարդոց) արհեստները. նոքա՝ որոնք վերոգրեալ արհեստները չգիտեն կամ հոդատէրեր չեն, կը պարապին ՃԼԽՈՒԼԵՍՄԲ։

ԶՄՈՒՆ ՃԼԽՆԵՐ կը վարձուեն 30—40 դուրուշով (2 ռ. 53 կոպ.— 3 ռ. 44 կ.) և մէկ շաբաթ ու փոխուն՝ 22—23=1 ռ. 89 կ.—1 ռ. 97 կոպ. արժողութեամբ։ Այս մշակները կը ծառայեն մօտ երեք ամիս ժամանակ։

Ամռան մշակները կը վարձուեն 10—12 (Բուլանըխայ) քիլայ ցորենով (44 պուդ—54 պ.), 5—6 արքունի կօտ ցորեն և ս ցանել կուտան՝ որից կստացուի մօտաւորապէս 30 արքունի կօտ ցորեն, բացի այս վարձքից ամռան մշակները կստանան նաև մի զոյգ գուլբայ, մի շապիկ և մի փոխան մէկ ՀԱՒ (գլխու փաթաթոց) և մէկ ՈՍԿԻ (կարճկեկ կապա). ծառայութեան միջոցը կը տևէ գարնան սկզբներից մինչև ս. Յակոբայ կամ նախրթողի պահոց շաբաթը։

ՀՕՍՈՒՆԵՐԸ կը վարձուեն 5—6 (Բուլանըխայ) քիլայ ցորենով և նոյնչափ հանդերձներով։ Հօտաղութեան ժամանակամիջոցը կսկսի գարնան սկզբներից և կը վերջանայ Ցխոնոյ կամ Հոբնեբոզի շաբաթապահքին։

Այն մշակները՝ որոնց ծառայութեան սկիզբը կսկսի Քաղոցից (Հունձ) և կը վերջանայ կալուկտի հետ՝ կը կոչուին ԲՆՈՍՈՒՅ։

ՁԵՌԱԳՈՐԾՈՒԲԻՒՆ ԿԱՆԱՆՑ, կին արհեստաւորներ. ԳԻՒՂԱՑԻ ԿՆՈՋ ձեռագործները կը պատրաստուին գլխաւորաբար ՈՅԹ ՀԱՂ, ԸՔԲԻՆ և

*) ՈՍՔՈՒՆ (բաթաթ. հաց թխելու համար ուռենիից հիւսուած գորձիք) և ԲՈՆԻՆԷ (սալ, հացաման) կստացուին ցիգաններից։

բերդ մանածներից։ Մանած կը պատրաստուի ֆորմանով և օգնական ոոնոոթիով, բուրդը մանելուց յետոյ մատներու վրայ արած փաթոյթը՝ որ կը կոչուի ԼՈԼՈՒԼ, հետզհետէ մեծացնելով կը շինեն ԽԾԿԻ։

Կծիկները կամ ԲԷԼ ԽԸ ԽԷՐԿԷՆ կամ գործել տալուց յետոյ կը ներկեն։ Ո՞րտեղից կստանայ գիւղացի կինը զանազան գոյնի մանածը.—հետեւեալ պարզ միջոցներով՝ զորս կընձեռնէ իրեն շրջապատող բնութիւնը.

1. Թուխ գոյն ստանալու համար հարկաւոր է բռնել բոյոդոյ, այսինքն ամանի մէջ ածել մէջ (մարդու կամ կնոջ), երկարէ նորնէր և ՀԼԷՔ կոչուած ներկի խոտը, և մի քանի օր ջրով պահելուց յետոյ, մանածը դնել մէջը որոշ օրերով։

2. Դեղին գոյն ունենալու համար, մանածը ՀՈՍ ՋՐՈՎ կեռացնեն և չորացնելուց յետոյ ԷՀԼՈՒՆ խոտով միասին լաւ կը խաշեն և կստանան դեղին ու բոյդեղին գոյնի մանածներ։

3. Կանանչ գոյն ունենալու համար դեղին մանածը պէտք է թաթախել ՀԷՂԷՆԻ ԽԷՐԿԻ ՄԷՋ։

4. Կարմիր գոյնը կարելի է ստանալ՝ մանածը նախ շապ ջրով եռացնելով, յետոյ մանրած գէրոր և ՈՈՐՈ վրան ցանելով և լաւ խաշելով։

5. Գէշեղ կարմիրը (թունդ կարմիրը) ունենալու համար մանածը մի քանի ժամ կրաջրի մէջ կընկղմեն, յետոյ ԷՕԼ ՋՈՒ (եօթն անգամ) լուանալով՝ խլաւորով (բացկարմիր գոյնով մի քար է) և գէշեղ դեղով (կարմիր ներկ) կը ներկեն։

Այլ մարդոց հանդերձներու կար ու ձեւը.

1. Զոգին.—սորա երկայնութիւնը ուսերից մինչև ոտաց ճանները կիջնէ. նիւթը կընտրուի մեծ մասամբ Բաղէշ պատրաստուած հաստ ու բարակ՝ կամ ամերիկեան կտաւներից. կտաւը իրանի լայնութեամբ կը ծալուի և վերոյիշեալ երկայնութեամբ կը կտրուի (բաժ, հասակ). վերևի կողմը լուսնաձև՝ մկրատով կը պորեն (պոր հանել) և կը ճղեն փոքրաթը (օձիք) մինչև պորտի վերև. յետոյ կը կտրեն ԸՆԷՐԸ, ԽՈՅՈՒԼԸ (անութի տակի կտորը) ՈՈՂՆԸ (խօլտուխի վարի բարակ կտորը), ՎԻԼԸ և ՀՈՇԿՆԵՐԸ։ Որովհետև շապկի թեւերը փնջել չգիտեն (բիւզմա) իւրաքանչիւր թեւի ծայրը մէկ մէկ ԷՐԷՂ կը կցեն ձեռաց վրայ կապելու համար, որոնք կը կոչուին ՀՈՇԿ, որ քրդերէնի ԽԸՇԽ (նոյն բանը) բառի հայացի ձեւն է։

Զապկի վիզը սովորաբար երկու տակ կը լինի և կը նախշուի ԽՈՐՄԻ և ԼՈՒԽ թելերով (երիտասարդներուն). փողպատի երկու կողմը նոյնպէս կարմիր թելերով զուգահեռական ուղղութեամբ նախշեր կամ

*) Նոր առնուած կտաւը ճերմակացնելու համար, 1—2 օր կենդանիներու թրիքի մէջ դրած կը պահեն՝ որ բաւական կսպիտակացնէ, և կանուանեն խոար դեղ։

գծեր կը շինեն, իսկ հուսիկները՝ մանաւանդ կանանց, մետաքսէ թելերով բաւական նրբութեամբ կը պատրաստեն (նախշել) և ծայրերից պոռնէր (ծոպ, փիւսկիւլ) կը կախեն։

Թէ շապկի և թէ միւս հանդերձներու վրայ գնացած կարերու անուններն են՝ պարկոր, ծակոնոր, շուլալ, կոնոռ, բղբուռ կար և խնթալ (խնդալ, հանդերձի կարուած ծայրը ոլորել, ներսը դարձնել՝ նորից կարելու համար)։

2. Թոռմէռ (փոխան). կը պատրաստուի Բաղէշի կտաւից. երկայնութիւնը գօտեկապի ներքևից կսկսի և մինչև ճռնէրը կիջնէ. կը-տաւը հարկաւոր լայնութեամբ կը ծալուի և տոպրակի նման կը կարուի. տոպրակը նորից երկու տակ կը ծալեն և ներքևի կողմէն նեղ բռնելով մկրատով կը կտրեն հետզհետէ լայն թողնելով վերևի կողմը. այս կերպով ձեռք բերուած եռանկիւնի կտորը որ կը կոչուի ընոմէռ յոգ, վերևը ներքև դարձնելով (լայն կողմը վերև՝ իսկ նեղ կողմը ներքև) կը կարեն տոպրակի վրայ և կունենան վարտիք կամ փոխանը։ Կողքերը՝ երկու կողմից, բացուածքներ կը թողնեն ջէջ անունով, վերևի մասը երկու մատ լայնութեամբ ծալած կը կարեն և կանուանեն խոնջանդոյչ, սորա միջովը կանցնի խոնջանը որ փոխանը կը փնջէ մարմնոյ վրայ։ Բրդէ կամ ասուէ շալվարներու խոնջանադարձները ուրիշ կտորից պատրաստուելով կը կոչուին խանչ և ոչ խոնջան դոյչ։

3. Շալվար (բրդէ կամ ասուէ) միևնոյն կտորները ու անունները ունի և գրեթէ նոյն ձևով կը կտրուի ու կը կարուի ինչպէս շօմբոնը։

4. Անբոխ (պարեգօտ, կապայ).—այս հանդերձը երկու տեսակ նիւթերից կը պատրաստուի, դուրսը ընկած կտորը՝ որ կոչուի էրէռ՝ կը լինի Բաղէշի շէլլ (կարմիր կտաւ), և զանազան մանասայ կոչուած նիւթերը, իսկ ներսը մնացած կտորը՝ որ կանուանուի ասոռ՝ առ հասարակ Բաղէշի կտաւ։ Երկայնութիւնը ուսերից կսկսի և, մինչև ծունկները կիջնէ. առաջի կողմը՝ փողպատը վերևից ներքև բաց կը թողնուի. և թև բերանները 1/4 արշին երկայնութեամբ կապոյտ կտաւ կը կարուի անպատճառ խոփոխ (կապարիչ) անունով։

5. Իշլիք (իշլիք, կարճ անթարի), կը շինուի գլխաւորաբար մանուսայ երեսից և կտաւէ աստառից, երկայնութիւնը ուսերից կսկսի և մինչև ազդրագլուխները կիջնէ։ Անթարու նման կը կտրուի և կը կարուի։

6. Ելէկ (եէլէք, բաճկոնակ). անթև իշլիք, նիւթերը կըտրուեն գլխաւորաբար մանուսից և մետաքսեղէնից (երեսի համար) և կտաւից (աստառի համար). երկայնութիւնը կսկսի ուսերից և մինչև գօտեկապը կիջնէ։ Փողպատներից մէկի վրայ կը շարուին գլխէգլուխ կոճակներ և միւս կողմը՝ ծանէր (զայթանից)։

7. Սալա (կարճկեկ պինջակ), որու ետևի նիւթը կը լինի շոլա (ասուլի) և աստառին՝ չէջայ՝ կամ կապուտ կտաւ՝ երկայնութիւնը ելակի չափ։

8. Լպաստայ.—երեսը և աստառը միայն սպիտակ կտաւից կարուած սալթան կը կոչուի լպաստայ, որու աստառի և երեսը մէջը բամբակ կը դրուի և իրար կտրող գծերով կարեր տալով բշտիկի նման ուռուցներ կը գոյանայ. այս է Բէբէ՝ կարը։

Գիւղացի կնոջ ձեռքով ձևած ու կարուած այր մարդոց հանդերձները սոքա են, սոցանով կը լրանայ գրեթէ և հանդերձներու թիւը. մնացած սաս (պայտաս), չուխա շալվար և այլն կը պատրաստեն դերձակները։

Կանանց հանդերձներու կար ու ձեւը.

1. Սալաթ շալվար.—այր մարդոց շալվարի նման կը ձևուի ու կարուի. նիւթը կընտրուի Բաղէշի և Ամերիկեան կտաւից, երկայնութիւնը՝ մինչև ծնկները։

2. Կարմիր շալվար.—նիւթը կընտրուի Բաղէշի շիլայից (կարմիր կտաւ), նախնիքներէն մնացած ծիրանի կտորից կարմիր շալվարներ ևս կը տեսնուին մեծ օջախ տներու մէջ։ Երկայնութիւնը մինչև ճաները կիջնէ, և սորա՝ ինչպէս և բոլոր անթարիներու փէշեր ու ծայրերը, աստառի կողմից, 1 վերշոկ լայնութեամբ կապոյտ կտորներ կը կարուեն ուջեվ անունով (թերևս ուջի՝ տաճկական բառը, որ կը նշանակէ շուր, երեզ)։ Կար ու ձեւը այր ու կին մարդոց սպիտակ շալվարներու նման։

3. Անարի.—երեսի նիւթը՝ մանուսայ, ղարիպ, գեղի, խաչի և այլն. աստառը՝ անպատճառ շիլայ կտաւ, երկայնութիւնը՝ ուսերի, սկսած մինչև ճաները։

4. Թանոյ.—Հանդերձներու թևերը զուսպ պահելու համար մի ծայրը հաճի և միւս ծայրը խոնջանի և խունջանդարձի նման կարուած ու փնջուած տոպրակիկ մի է, մօտ կէս արշին երկայնութեամբ։

Կանանց հանդերձները կը լրացնեն ղրամանոցը, մէնդիրը, որոնց մասին վերև գրուեցաւ և՝

5. Դալմայ.—նիւթը ասուլից. ձևը ֆարաջայի նման, բայց ոչ այնքան լայն և իրար անցնող փողպատներով, երկայնութիւնը ուսերից մինչև ճաները կամ պճանները. փողպատներն ու փէշերը կլապիտոն *) զայթաններ կարած։

Դալմայ հանդերձը կը պատրաստեն դերձակները։ Հանդերձը կը կոչուի հալա և շուր, եթէ միայն տօն և հարսանիքի օրերուն հագնեն՝

*) Ոսկեթելի նմանութեամբ արծաթէ կամ պղնձէ թելեր։

կանուանեն պահոնի հալաւ. ամէնաւուր հաղածը՝ ը-բ-որ. հին հալաւը կը կոչուի ջրի, ջրիկ, փոր, ջրջ և այլն։

Կանանց արհեստներ.

1. Աղաղ կամ աղաղոց (կաշի խաղախորդելու միջոց). աղաղոցը երկու կերպ կը լինի. ա) ամանի մէջ կածեն բաւական քանակութեամբ աղ և ջուր, դաբաղէլը կաշին կը դնեն այս հեղուկի մէջ 4—5 օր, որ լաւ կը փափկանայ, թէև անախորժ հոտ կարձակէ. հանելոց (պատրաստուելուց) յետոյ, դուրս կը հանեն կաշին և շուտով կսկսեն քերել մազերը, և ճմռել ձեռքերով կամ տրորել սուր երկաթի կամ փայտի վրայ մինչև ճերմակելը (մնացած գործողութիւնը տես «դբղուն տրեխ» պատրաստելու մասին)։ բ) Կաշին առանց աղաղոց դնելու՝ լաւ կը քերեն մազերը և մոտ երեսի վրայ սղկած (մանրած, լոսած) շապ ցանելով՝ ծալած կը դնեն քարի տակ 1—2 օր, որ լաւ կը փափկանայ, յետոյ կսկսեն սովորական կերպով ճմռել և տրորել մինչև ճերմակնալը։ Վերջին կերպ կը խաղախորդուեն միայն տրեխներ, իսկ աղաղոցով՝ գոգնոցներ, ռուքներ, փոկեր և այլն։ Աղաղոց դնող կանայք կստանան չնչին և անորոշ վարձք, ալիւր, ցորեն, յարդ, խոտ...։

2. Սապոն եփելը.—Սապոն պատրաստելու համար հարկաւոր է ունենալ բորակ, ներ և դամ (հարպ, ոչխարի պոչի իւղը). կերը որ (քրդ.) կը կոչեն ջրի, նախ կայրեն և ջրախառն ամանի մէջ պահեն ունենալու համար ռեզ ջուր, դամակը առանձին ամանով կը հալեն և վրան աւելացնելով թէզ ջուրը 5—6 օր, օրական 2—3 ժամ կեփեն մինչև որ բոլորովին ճերմակի, ապա կոտրած ամանի հօտելու (վարի մասը, ռուք) մէջ լցելով կուենեան կաղասպար կամ խուլիպ սապոններ։ Ամենափոքր խալիպը կը կոչուի հրոյ։

Երբեմն սապոնի մէջ կը ձգեն պեղպ ծաղիկ և սերմ, լաւ փրփուր տալու և հոտ ունենալու համար։

Պէտք է ասել որ այս կերպ պատրաստուած սապոնը լաւ կը մաքրէ ճերմակեղէնը, միայն դամակի անախորժ հոտը կը մնայ մէջը, որ չեն կարող բոլորովին վերջացնել։

Սապոն եփող կանայք վարձք կստանան դարձեալ սապոն։

3. Թոնիրը (քրդերէն՝ տանտուր) նկար V. ա. կը պատրաստուի կարմիր խոյ, որ նախ մանրելով՝ վրան կաւելացնեն որոշ չափով աղ, ապա լաւ կը շաղախեն մինչև որ հուլի (հասել օլմախ, պատրաստուել). վարպետը կառնէ մաս մաս պատրաստուած կաւից (իւրաքանչիւր մասը կը կոչուի դոփ). բոլորակի հիմք կը դնէ և օրական մէկ կարգ կամ դոփ կը շինէ, չորնալուց յետոյ կը դրուին երկրորդ, երրորդ... դափերը մինչև որ սովորական բարձրութեանը հասնի, ամենից վերջ կը շինուին (2) ջրմնիները, որ քիչ լայն և դէպի յետ դարձած կը լինեն։ 10—15 օր լաւ

չորացնելուց յետոյ տան յատակի մէջ տեղը, ուղիղ երդիքի դէմը, կը փորեն և թունդիրը հորելով 1—2 օր լաւ կը թրծեն։

Թունդիրն ունի շրջանակ, նոյնը, ան և ապարոյ. կաւից շինուած Ո այս ձև ագուգան կը դրուի ական բերանը թունդրի ներսի կողմը և, ակը (ծակ) գետնի միջով աստիճանաբար բարձրանալով տան տախտի մէջ դուրս կուտայ, որ մի կտոր շորով կը գոցեն և կանուանեն ական շոր։

Թունդրի շինութեան վարձքը կը լինի 2—3 արքունի կօտ ցորեն։

4. Թարէնէր—պատ երեսով յարկ յարկ շինուած խորշեր՝ պատուհանի նման, որ կը պատրաստուեն սպիտակ կաւից, տան աման չամանները դարսելու համար։

5. Անդուէնէր.—փայտաշէն սնդուկները կարելի է ասել հագուստդիւտ են, գիւղացի կնոջ սնդուկը կը շինուի սպիտակ կաւից այս կերպ։

Սպիտակ կաւը մանրելով՝ աւազի փոխարէն վրան կաւելցնեն մանր յարդ, 3—4 օր, օրական գրեթէ մէկ ժամ ոտքերով շաղախելուց յետոյ, գրեթէ կը թթուեցնեն, և դաբէր վերցնելով կը շինեն սնդուկը որ սովորաբար խորանարդ ձև ունի. առաջի կողմը բացուածք մի կը թողնեն փայտէ դուռը կախելու համար։ Ամէն կին կը պատրաստէ իրեն համար հարկաւոր սնդուկը։

6. Փեշեմ և ամբար.—սնդուկներու նման սպիտակ կաւից կը պատրաստեն յա-ար-բէլը-ի փեթակները և ալիւրի ամբարները. փեթակները քառակուսի և երկարաձև են, բայց աւելի հսկայական են ալիւրի ամբարները. սոցա առաջի կողմը երկու ծակեր կը թողնուեն, վերևինը՝ որ մեծ կը լինի, կը ծառայէ ալիւրը ներս ընդունելու. իսկ ներքևինն՝ որ կը կոչուի ծործ, ալիւրը դուրս տալու։

Զաւար-բլղուրի փեթակները՝ մեծ ծակի փոխարէն վերից բաց կը թողնուին, բայց միևնոյն կերպ մէկ մէկ ծործ կունենան։

7. Բնէշ նոյ.—այս արհեստի մէջ կանայք ընտրեր են կանանց ներքին հիւանդութիւնները։

Մեծ մասը բժշկութեան վարձ չեն առներ, «հոգու վարձքի» համար. առնողներն ևս չնչին բաներով կը բաւականանան։

8. Կէպանէ նոյ.—Ադքատ և թշուառ կանայք տուն ու տեղ, և ապրելու ուրիշ միջոց չունենալով՝ հարուստներու տները ծառայութեան կը մտնեն էպանուելու անելու, այսինքն՝ հաց թխելու. տարեկան վարձքը կը լինի 10—20 ղուրուշ, մէկ թօփ շիլայ և օրական 3—4 հաց։

III. Կաթնատնտեսութիւն.

1. Կաթ և նորանից ստացած օգուտները.—նորածին անասնոց առաջին անգամ տուած կաթը՝ որ կը կոչուի էյզ, եփելով կը սնդի

և կանուանուի ՀՈՒ մէկ երկու օրից յետոյ խիժը կը փոխուի սովորական կաթի, որու երեսը գոյացած հում սերը կը կոչուի ՀԱ, եփուած կաթի երես գոյացածը՝ ԵՐ։

Թանձր սեր ունենալու համար, կաթը եռցուցած ժամանակ քիչ ալիւր կաւելացնեն և հոյ-հոյ առնելով կը դարսեն իրարու վրայ. որպէս զի սերի հացերը ծակ ծակ դուրս գան և լաւ պահպանուին՝ ցորենի հատիկներ կը ցփնեն վրանին։

Հաղդատելով Խլաթ (Բզնունիք) գաւառի հետ, Բուլանըխայ բուսականութիւնը լաւ ԵՐ չարտադրեր, մինչդեռ առաջինի համար կը պատմեն, թէ կաթի երեսը այնպէս թանձր սերոյց կը գոյանայ՝ որու վրայ՝ պատահեր է քանի անգամ, որ այծի ուլը ելեր է և սերի հացը չէ փշրուել։

Եփած կաթի մէջ եթէ քիչ ԸՌ կամ ՄԾՈՒՌ ածեն, կաթը կը պնդի և կը լինի ՄԾՈՒՌ, ածելիք ԸՌԸ կամ մածունը կը կոչուի ՄԻԼՈՒԳ. (եթէ մակարդ չլինի, ընտիր դեղթափքարն ևս կը մակարդէ կաթը, ինչպէս փորձուած է)։

Մածունը ջրով կածեն ձաձի մէջ և, երկու կին այս ու այն կողմ կանգնած՝ կը տանեն բերեն բաւական ժամանակ երգելով՝

«Հար ձաձում, հար ձաձում,
Տանիմ բերիմ դմբցում,
Մեղր ու կարագը ընձի,
Թան ու թան ջուրը քրզի»։

Այդ տարուբերի միջոցին մածունը կը բաժնուի երկու մասի, ջրային մասը կը կոչուի թան, իսկ պինդը՝ ԿՈՒՊ։

Կարագը աղելով կը ձգեն բզկի մէջ, մինչև որ բաւական շատանայ։ Եղեմոյ պահոց պղնձները կը շարեն վառուած թունդրի վրայ՝ և կարագը կը հալեն ունենալու համար ԵՂ (իւղ), իւղի երեսը գոյացած շիճաւկայտին սպիտակուցը կանուանեն ԸՌԷՆԷ (թանիչք)։

Թանը նոյնպէս կեփեն, որ երկու մասի կը բաժանուի, այսինքն մի մասը կը պնդի՝ որ դեռ չզոռած կը կոչուի ՇՈ և զոռելուց յետոյ ԾՈՒՌԻ, միւս մասը (ջրայինը) որ այլևս անպէտք կը դառնայ՝ կանուանուի ՇՈՒԿ (շճուկ կամ շիճուկ)։

Ժաժեկը այլևայլ ձևերով ու մեծութեամբ գնդաձև կը չորացնեն և կանուանեն ՀՈՐԸՌ, որից ձմեռներ կերակուր կը պատրաստեն (տես չորթնել ճաշն ևայլն)։ Կամ պանրով միասին (առանձին ևս) կը սեղմեն ամաններու մէջ ձմռան ուտելու, և կամ՝ առանձին ու լոյծ վիճակի մէջ կը հաւաքեն ձմռան համար, որ այլ և այլ ծաղրական անուններ ունի, ՇՈՒՊՈՅ, ԲՈՒՆԸՌԱՆ, ԽՈՇԱԿԻՆ ևայլն։

Մածունը հաւաքելով կը պահեն մինչև ձմռան, որ կը կոչուի

բոած մածուն. համեղ ուտելիք է նաև ռէբի և մածնի հաւաքը, որ նոյնպէս ձմռան համար կը պահուի և քրդերէն կանուանուի ռուշոտ (մածնասեր)։

Պանիր պատրաստելը.—Պանիր ունենալու համար անպատճառ հարկաւոր է դեղջուրը։ Դեղջուրը կը պատրաստեն մեծ պասի առաջ Եշ. օրը. կառնեն թանի շտուկը և մէջը կածեն անասնոց շէլը (chille—խաղաց մամացը), ծիրան և վերջինս չգտնուած ժամանակ՝ շոմիչ, որոնք երկար մնալով ամանի մէջ՝ թունդ բաղադրութիւն մի կը գոյացնեն։

Երբ կաթը քիչ կսկսի տաքնալ՝ (կանանց յայտնի), չափով մի տեղ ջուր կը լցեն կաթի մէջ և կսկսեն խառնել. մէկ քանի րոպէ յետոյ՝ հեղուկը կը նստի, այսինքն՝ երկու մասի կը բաժնուի, մի մասը կը պնդի և կանուանուի պանիր, որ ձեռքերու վրայ առնելով կը քաշեն և կերկարացնեն շինելու համար ջեղ կամ նոճ պանիրը *)։ Ջրային մասը՝ որ կը կոչուի դարձեալ շոռ, կամ կը թափեն, կամ դոմշուկներու ձագերը կը լուանան նորանով։

Կաթի մնը նախապէս վերառնելով, Բուլանըխցոց շինած պանիրը խոզոտ, համեղ և զօրաւոր չլիներ։

Պանիրը բղիկներու մէջ դնելով ժաժիկով միասին լաւ կը սեղմեն և գլխի վայր դարձնելով կը դնեն մառաններու մէջ, որպէսզի պանրի ջրային մասը սուզուելով դուրս երթայ և չհոտեցնէ. իսկ բղիկներու չորս կողմը ցանի փոշի կը լցեն։

Ժաժիկ, պանիր, շանդոյ, բռնած մածուն, տովմաստ և այլն կը կոչուեն մարդոյ (պաշար, պարէն, ուտեստ)։

Թան ու մածունն ևս ընդհանուր անունով կանուանուեն ըսոյտ։

Ուսեաս.

Հացի պատրաստութիւնը.—Հացը կը պատրաստեն ալիւրէն. մի քիչ տաք՝ և մեծ մասը սառը ջրի մէջ կը լուծեն ըբխոյը (մայեա). ապա ալիւր աւելացնելով կը շաղախեն, և կը թողնեն 2—3 ժամ որ փոյ (եկ խմորի, թթուել)։

Սուփրէն կը փռեն, հացի տախտակը կը դնեն սուփրի վրայ և խմորը գունդ գունդ անելով՝ որ կը կոչուի խոր փոնդ, կը շարեն սեղանի վրայ, և գրդնակով (գլան) բանալով կը պարզեն բաֆաբոյի երեսին ու կը կպցնեն թունդրի կողերուն. այդ պատմառով էլ կասեն հաց կոնչ և ոչ թխել կամ եփել։

Հացերու տեսակներն են 1. ջչ (լաւաշ).

2. Բաֆաբոյ, կոլորակ ձևով.

3. Ծոկուլիկ կամ ըսքլոպոյ, երբ բաբուճի ծակը շատ լայն է.

*) Իւրաքանչիւր փաթոյթը պանրի՝ կը կոչուի քոնիկ։

4. Դ-ԷՆ—երկարաձև բաբուճ.

5. Բ-ՂԷՐՋ, -ՆԷՆ կամ Խ-ՆԷ խմորից շինուած թանձր հաց.

6. Կ-ՆՈ—շատ փոքր Բ-ՂԷՐՋԻ։

7. Փ-ՐՆԻ. մի քանի խմոր գունդ միասին երբ կը ձգեն պատուկի ոռքի վրայ և եփուելով կատանայ սորա ձևը, կը կոչուի փուռնիկ, որու մէկ կողմը կուռի և կը դառնայ կորնթարդ, իսկ միւս կողմը կը մնայ գոգաձև։

8. Կ-Ռ. թունդրի կողերից երբ խմորը ճեւալով (ծորել) կընկնայ մոխրու վրայ և անձև կեփուի կը կոչուի Ն-Ռ։

Ի ւ ղ ա հ ա ց ե r.

9. Գ-Ռ.—Սա և՛ս կը պատրաստուի անեկ կամ խուկլի խմորից. և փոքր մասը ջուր՝ իսկ մեծ մասը իւղ աւելացնելով կը շաղախեն. (երբեմն ջրի փոխարէն կաթ կը գործածեն). ապա գունդ շինելով մէջը կը լցնեն իւղով խարկած ալիւր, որ կը կոչուի Խ-ՐԷ, և կը կողեն. ձևը բոլորակի է. իսկ եթէ եռանկիւնի լինի՝ կանուանուի Խ-Ռ Գ-Ռ։

10. Հ-ՒՂ.—իւղով խարկած ալիւրի վրայ կը լցեն Ռ-Ռ (rob, բէ.բմէզ) կամ մեղր և շաղելով կածեն լանգառիներու մէջ (երկաթէ պնակ, թէփշի). երեսի վրայ չամիչ կը շարեն ու սառեցնելով կը գործածեն։

3. Գիւղական խոհանոցը. կերակուրներ.

Գիւղացու սեղանի վրայ թէև բաւական թուով տաք կերակուրներ կելնեն, բայց դոքա արդէն եղած թուից այն դին չեն անցներ, դարեր առաջ եղած ճաշն ու փլաւը այսօր և՛ս նոյն անփոփոխ կերակուրներն են. առաջադիմութիւն չինելով՝ բազմազանութիւն և՛ս չունի գեղջուկ խոհանոցը. ինչպէս ամէն արհեստը նոյնպէս և խոհարարութիւնը կանգ առած է և կը կենայ իւր անշարժութեան մէջ։

Կերակուրները գլխաւորաբար Ն-ՐՆԷՆ են քան Ճ-Ռ-Ն, գիւղացին միս շատ քիչ կը գործածէ և, այդ յայտնի պատճառով, միս տուող ոչխար, կով ու մատակը նորա Ն-ՐՆՆԷՆ է, թան ու թացանի աղբիւրը, իսկ եղն ու գոմէշը՝ Ջ-Ռ անասունները։

Կաթնեղէն ու մսեղէնից յետոյ մեծ տեղ կը բռնեն Բ-Ռ-Ջ-Ն-Ը-Ը, որոնց պատրաստութեան հետ ծանօթանանք կարգով։

Ճաւար եւ բլղուր.

Կերակուր կազմող նիւթերու մէջ տեղ կը բռնեն նաև ճաւարբլղուրը։ Ճաւարը սպիտակահատ ցորեն է, որ դնկով (տես նկար VI.) կը ծեծեն այնքան՝ որ հատիկները թեփից մերկանան բոլորովին. յետոյ թեփից ջոկելով կը չորացնեն և կը լցեն փեթակները։ Իսկ Բ-ԼՂ-Ռ-Ը *) խաշած ցորենի ճաւարն է։

*) Բ-ԼՂ-Ռ բառը տաճկերէն է, սորա հայերէն անունն է ըստ Խլաթցոց՝ Խորոմ։

Բլղուրը կաղացուի երկանքով (երկանաքար), որ եթէ սովորականից խոշոր աղացուի՝ կը կոչուի «ջրանք»։

Ա. Եղեղեն կերակուրներ.

(Նիւթերն են ձաւար, բլղուր, ալիւր, իւղ և այլն).

1. Ճմռ.—Նոր թխած հացը տաքտաք կը բրդեն և իւղ վրան ածելով լաւ կը ճմռեն ունենալով ամենապարզ կերակուր—ճմռ։ Գովական է կորեկի հացի ճմուռը։

2. Փլա (եղինձ). Ջուրը եռացնելով կաւելացնեն աղած բլղուր, որ հետզհետէ կը պնդի և կը դառնայ փլա. փլաւի մէջ կածեն «ոսպ, սիսեռ, սոխ, կոնջար, ծոխ, սուրուճ և այլն, նայելով թէ այս բանջարներից որ մէկն է աւելացուած, նորա համեմատ և փլաւը կը կոչուի՝ «ոսպով, սիսեռով, սոխով և այլն։

Փլաւի վրայ կածեն կամ զուտ հալած իւղ, կամ «ոխոած», այսինքն՝ ջրով խաշած սոխ և հալած իւղ միասին։

3. Տոլմայ.—աղած բլղուրի վրայ տաք կամ սառն ջուր կածեն՝ որ թոուի (թրջուելով կակղանալ), վրան կաւելացնեն մանրած սոխ և ռեհան. ապա կաղամբի թթուած. թուփ առնելով ջոկ ջոկ կը փաթաթեն և կը դարսեն պտուկի մէջ. եփելուց յետոյ իւղ կամ սոխուած ածելով կուտեն։

4. Ճաշ.—ձաւար աղալով ջրով կեփեն, որովհետև առաջ ջրի կը լինի, ընդոսով (ճաշը խառնելու համար յատուկ պատրաստուած մի փայտ) կը խառնեն այնքան ժամանակ՝ մինչև որ պնդի. այս վիճակի մէջ արդէն պատրաստ է, որու վրայ արդար իւղ ածելով կուտեն։

5. Զորքանի ճաշ.—Զորթանը տաք ջրով տրորելով կունենան թարմ թանի նման մի հեղուկ, որ ածելով ճաշի վրայ կը դառնայ զորքանի ճաշ. վերջնոյս վրայ ևս կաւելացնեն արդար իւղ և կուտեն։

6. Աչբէ ճաշ.—Այս կերակուրը ունենալու համար ձաւարի փոխարէն աչբէրը ջրով կեփեն և թնթոցով հարելով կը պնդացնեն, վրան կաւելացնեն խաղ և բուռ կամ խաղ ու մեղր կամ առանձին իւղ։

7. Ածիլ.—ցորենն ամաններու մէջ թրջելով խոնաւ տեղեր կը պահեն մինչև ծիլ արձակելը, ապա ցորենն ու ծիլերը միասին սանդի մէջ ծեծելով ջուրը կը քամեն և այս ջրի վրայ ալիւր աւելացնելով լաւ կեփեն մինչև ալրէ ճաշի նման պնդանալը ու կարմրելը. ածեկը բաւական քաղցր և համեղ ուտելիք է, բայց և շուտով կը տատնի (զզուել) ուտողը։

8. Սոմէր.—կորեկից պատրաստուած ճաշը կը կոչուի «սոմէր». ջրի փոխարէն կաթ կը գործածեն։

9. Բոռանի (ճաւիկով և դդմով).—Ճաւիկ (ճակնդեղի կամ բազուկի

թփերը) դդումը խաշելուց յետոյ կը քամեն ու վրան կաւելացնեն սխտորով մածուն և իւղ։

10. Եղով բաղուկ.—բաղուկը խաշելով կեղևը կը լոկեն (սոկել կաշին) և վրան իւղ կամ սոխուած ածելով կունենան եղով բաղուկ։

(Նիւթերն են իւղ և ձու)

11 Զուաչեղ.—Եռացած իւղի մէջ հաւկթի միջուկը եփելով կունենան ձուաձեղը։

12. Ամլետ.—Զուաձեղի վրայ երբ սխտոր ու մածուն աւելացնեն՝ կերակուրը կանուանուի ամլետ։

13. Մելէ.—Ջրով խաշած սոխի վրայ երբ ձուաձեղ աւելացնեն՝ կունենան մելէ։

14. Ջրվջուր (ձրվջուր), հաւկիթ, սունկ և սոխուած միասին եփելով կը կոչեն ջրվջուր։

Բ. Մսեղեն կերակուրներ

14. Մսով փլաւ.—Եփուած մսի վրայ ձգած փլաւը, որ դարձեալ իւղով կուտուի։

15. Մսով պուլմա.—Ծեծուած մսով և բլղրով փաթաթած տօլման, որ դարձեալ առանց իւղի չեն ուտեր։

16. Մսով ճաշ.—Վերոգրեալ ճաշը՝ վրան աւելացուած մսով։

17. Ջուրաբ.—Ձաւարը փոխանակ աղալու՝ կը ուռեցնեն (տես վերև) և սովորական ճաշի նման՝ բայց մէջը միս ձգած՝ եփելով կը պատրաստեն ջուրաբը։

18. Հարիսայ.—Ձաւարը ջրով և մսով առանձին պղնձներով նախ կեփեն, ապա բարկ (շատ վառուած) թունդերը կարաս իջեցնելով եփուած ձաւարն ու միսը մէջը կը լցեն և երկար ժամանակ կարսով կեփեն ու մեծ թնթոցով կը հարեն այնքան, որ դրեթէ միսը կը հալուի և հարիսէն լաւ կը կցի, ապա ճաշի նման իւղ ածելով վրան՝ կուտեն։

19. Կոլուիկ.—Աղցած բլղուր, փայտէ կոճի վրայ լաւ ծեծուած մսի հետ խառնելով՝ խմորի նման կը շաղեն, և վրան մանրած սոխ ու ռեհան աւելացնելով՝ փոքրիկ գնդեր կամ մատի նման կոլոլներ շինելով կեփեն, այս է կոլուիկը։

20. Քոֆթա.—Կոլոլիկը եթէ խոշոր և կլորաձև շինուի՝ կը կոչուի քոֆթա, միայն սորա մէջ կը լցեն բրինձ, կամ ծիրան և կամ նռան հատիկներ։

21. Սոջուխ.—Անասնոց հալալ ոչխարու մէջ լցելով կոլոլիկի կամ քուֆթայի նիւթերը՝ ջրխաշ անելով լաւ կեփեն, ոմանք յետոյ եռացած իւղով ևս կը կարմրացնեն։

22. Ցէխնի (եախնի). Այս կերակուրը երկու կերպ կեփուի, 1. կամ

միայն միս՝ որու վրայ կաւելացնեն տաքդեղ, մանրած սոխ և ռեհան, և 2. կամ՝ կաւելացնեն կարտօֆիլ, ծիրան, դդմի ոչալ *) և այլն։ Այսպէս կը պատրաստուի նաև ԽՈՂՄԷՎ ԷԽԻՆ, որուն ԽՈՓՈՒԽ անունը կուտան, որ երևի ռուսաց ԽՈՊՈՒՍԿԱ է և պանդուխտներու միջոցով այս անունը փոխադրուած է ի Բուլանըխ։

Գ. Ձուս մսեղեն.

23. Քաղաղ (խորոված) որու պատրաստութեան ձևը ծանօթ է ամենքին։

24. Թաւայ հաղաղ (տապակի խորոված).—միսը լաւ ծեծելով՝ փոքրիկ գնդիկներ կը շինեն և ալիւրի մէջ թաթախելով՝ եռցուցած իւղով կը տապակեն։

25. Խաշ.—Անասնոց գլուխը և ոտքերը տաք ջրի մէջ թաթախելով մազերը կը լոկեն, յետոյ կրակի բոցի վրայ բռնելով մնացած մանրիկ մազերը և մազարմատները կը խանձեն և եփելով կունենան խաշը՝ որ առանց սխտորի չուտուեր։

26. Խափամ.—Ուլու կամ գառան ողջ մարմինը հանելով՝ փորը կը դատարկեն և մէջը կածեն աղցած բլղուր՝ խառն սոխով և ռեհանով. յետոյ պուտուկի մէջ դնելով՝ բերանը այնպէս կը ծածկեն, որ շոգին դուրս չելնէ. 5—6 ժամ այդպէս փակուած եփելով կունենան խափամայ։

27. Խորվոր (խորոված). ոչխարի կամ գառան ողջ մարմինը լաւ մաքրելով ու պատրաստելով՝ նախապէս վառուած թոնդրի մէջ կը կախեն ոտքերից, տակը մի ման կը դնեն, որ հոսող իւղը հաւաքուի. ապա թոնդրի բերանը մեծ տաշտով (հողէ) կը ծածկեն և չորս կողմը տլով (հողէ ցեխ) կամ թրքով կը ծեփեն. իսկ տաշտի վրայ կը դնեն կլորած տէ գնդիկ միս. երբ գնդիկը չորացաւ՝ կը նշանակէ որ խորվուն լաւ եփուած է։

28. Խէշբաղ.—այս կերակուրը հովիւները կը պատրաստեն այսպէս. մորթուած անասունի միսը մանրելով կը լցեն նորա փորու մէջ (փորը կը շրջեն որ թրքի հոտը չտայ մսին). տոպրակի նման կը կարեն և գետնի տակ թաղելով՝ վրան զօրաւոր կրակ կը պատրաստեն, միսը հիանալի կերպով կեփուի և համեղ կերակուր կը դառնայ։

29. Խայշայ.—միսը իւր իւղով լաւ կը խարկեն և ամաններ ածեւով կը պահեն մինչև ձմռան. այս է խայշան։

Դ. Խ մ ո ր ե ղ է ն.

30 Բէշ.—Խմորը հացի նման բանալով տապակի մէջ եռցած իւղով կեփեն. կը կոչուի բէշ։

*) Դդումը կաշու առասաններու նման բարակիկ հանելով կը չորացնեն եախնի և այլն կերակուրներու համար, որ կը կոչուի ՈՉՈՒ կամ ՈՉՈՒՇ։

31. Խաղողոմոխ.—Հաւկթի միջուկը ալրով միասին այնքան կը հարեն որ փրփուրի նման կը դառնայ, յետոյ մաս-մաս առնելով եռացած իւղով կեփեն և կունենան խաղողոմոխ, որ կը նշանակէ խաղողոմոխ (ընտիր բրդուճ)։

32. Ալաս.—Խմորը ոտքերով այնքան կը շաղախեն որ քարի նման կը սկսի, յետոյ գունդ-գունդ անելով հացի նման կը բանան և առասանի նման թել-թել կը կտրտեն ու չորացնելով կը ձգեն փլաւի մէջ։

Բ. Տապկած մրգեղեներ.

33. Ճէնոյ (խնձորի չիր, չորուկ), Խոխ (տանձի չիր), Ջամիչ և Ծիրան, (իւրաքանչիւրը առանձին, ի հարկէ), չափաւոր ջրով կը խաշեն և սակաւ ինչ իւղ աւելացնելով կը գործածեն։

Գ. Պասաւուր կերակուրներ.

(Նիւթերն են դարձեալ ձաւար-բլղուրը և իւղի փոխարէն կտաւատի կամ կանեփեսի ձէթ).

34. Զիլոյ ճմուռ.—միևնոյն կերպով կը պատրաստուի ինչպէս որ իւղով ճմուռը, միայն սորա հետ հում սոխ ևս մանրելով կուտեն։

35. Զիլոյ փլաւ.—աղցած բլղուրը սովորական կերպով պատրաստելով՝ վրան կաւելացնեն կաղամբի թթուած թթի մանրուկ, և դեռ եփը չառած ձէթ ևս չափաւոր կաւելացնեն և վերջին եփը տալուց յետոյ կը պատրաստեն սոյն փլաւը։

36. Զիլոյ պոլմա.—սովորական ձաւով պատրաստուած տօլման է, միայն եփելու ատեն ձէթ (կտաւատի) կաւելացուի։

37. Ճաշ և հաբեռայ.—պատիկ աւուր նման պատրաստելով այս կերակուրները՝ կանեփեսի ձէթի հետ *) բուսպ խառնելով իւղի նման կածեն վրանին և կը գործածեն։

38. Զուպէ.—նոյն ջուղաբը, միայն եփելու ատեն կտաւատի ձէթ ևս կաւելացնեն։

39. Ջալջուր (պաս օրուայ).—աղցած բլղուրը կանեփեսի կաթով կեփեն և վրան կաւելացնեն սոխ, տաքդեղ, ռէհան, և չափաւոր ծիրան կամ ջամիչ, վերջը կաւելացնեն սոցա վրայ և կանեփեսի ձէթը ու նորից եփ կուտան. ապա սառեցնելով կը գործածեն։

40. Շուրվա **).—աղցած բլղուր պարզ ջրով կեփեն և վրան կա-

*) Կանեփեսի ձէթը այսպէս կը հանեն.—Կանեփեսը բովելով սանդի մէջ կը ծեծեն և վրան տաք ջուր ածելով ձեռքերով կը տրորեն և նախ կանանչ գոյնով ձէթը կարտագրեն, յետոյ ջրի քանակութիւնը աւելացնելով նորից կը տրորեն և կունենան սպիտակ գոյնով հիւթ մի՝ որ է՝ Կանուանեն։

**) Շուրվան տաճկական չորբա բառի փոփոխուած ձևն է. սորա հայերէնը ըստ Խրատցոց է՝ Ջրուն։

ւելացնեն՝ երբեմն ոսպ (ոսպով շուրվա=ոսպնապուր) երբեմն միայն ոռխ ու տաքդեղ եւայն։ Միայն պարզ ջրով և բլղրով պատրաստուածը կը կոչուի ռեյոռա շուրվա։

41. Փէրուէ.—ոսպ միայն ջրով եփելով՝ վրան կաւելացնեն խմորի գնդիկներ և մանրած տաքդեղ։

42. Քրջէ.—Թթուած կաղամբի թփերու մանրուկը լաւ կեփեն աղցած բլղրով միասին և, վրան կաւելացնեն կանփետի ձէթ կամ կաթը ու կունենան դրջէը։

43. Մշշ.—բազուկը (ճակնդեղ) կամ դդումը մանրելով՝ ոսպով, սոխով և տաքդեղով միասին կեփեն և կունենան մշշը։

44. Ջրխաշ.—Սպիտակուկ բանջարը պարզ ջրով և սակաւ ինչ ոսպով եփելով՝ վրան կաւելացնեն սխտոր ջուր և կունենան ջրխաշը։

45. Ասէլէ.—Այս բանջարը խաշելով լաւ կը քամեն և սխտոր աւելացնելով կը գործածեն։

Է. Թացանից պատրաստուած կերակուրներ.

46. Դալ.—նոր ծնած անասնոց առաջին կաթը՝ կամ խիժը, կեփեն որ կը պնդի և կը դառնայ մածունի նման՝ բայց ծակծակած։ Դալը առհասարակ բուսով կամ մեղրով կուտուի։

47. Կամնով շուրվա.—Հասարակ շուրվայի նման կեփուի և նիւթերն են կաթ ու բլղուր՝ կամ վերջինս չգտնուած ժամանակ, բրինձ։

48. Ապուր (թանապուր, սպաս). թանը կեփեն և կսկսեն շարունակ խառնել. և որպէսզի չկտրի՝ հաւկթի միջուկ և ալիւր, խիւս շինելով կաւելացնեն թանի վրայ. այս խիւսը կը կոչուի ռէնիռա. ապա կաւելացնեն սռնած ձաւար և զանազան բանջարներ,—ճաւիկ, դդում, կաքուեղիկ, ծնեբեկ, գնձիկ եւայն։

49. Քալաձ.—ոսպը նախ ջրով լաւ կը խաշեն. ջուրը քամելով՝ միայն ոսպի վրայ կածեն բաւականաչափ թան և, նորից կսկսեն եփել, յետոյ հաց բրդելով մէջը կը գործածեն։

Բոլոր կերակուրները ընդհանուր անունով կը կոչուեն ռա։

Ը. Աղցան, թուփ ու բրու եւ բռուածք.

50. Աղցանի համար ամենագործածական բանջարներն են՝ ինիռա, ճոխ, ռիշեռ, էրնջանի, որոնց որձաները մաքրելով ամաններու մէջ կը դարսեն և վրան կաւելացնեն ԷԲԽԱՐ (խմորի մայեա) և իբրև համեմունք՝ սոխ, սխտորուկ եւայն ու տաք ջրով միասին։

Թ ր ո ւ.

51. Գարնային բանջարներից թթուի նիւթ կը մատակարարեն ղանիռա, շոգիմուռը եւայն, ամռան՝ բաղնի ճուռին, բաղրոնը, յմերնի թուռը, իսկ ձմեռը՝ առհասարակ ինոյմբը։

Թթու բռնելու կերպը այս է. նիւթը (վերոգրեալ բանջարները) կը մանրեն և կը լցեն կարասներու մէջ. յետոյ վրան կածեն տաք ջուր, իբրև համեմունք՝ պղպէղ, մանրած սոխ և ռեհան։ Միայն ձմերկի փոքրերը չեն մանրեր, որու թթուն կանուանեն պէջէղ (ձմերկի փոքրը կը կոչուի պլէճ) թթու, բազուկը խոշոր կտորներով թթու կը բռնեն և, սորա թթուն էլ կը կոչեն խոռոբին, որ գինու նման կարմիր կը լինի։

52. Բուրուածք.—կաղամբի գլուխները համարեա 2—3 կտորներու բաժնելով՝ ամանի մէջ կը դարսեն և վրան կաւելացնեն նախապէս թթուեցուցած տաքդեղ և իւր թթու ջուրը, սոխ, ռեհան և այլն։

Բուրուածքը շատ ընտիր և զօրաւոր կը լինի՝ երբ կաղամբի վրայ կաւելացնեն՝ պանիր, խաղող և բաղրաջ, որոնք՝ մանաւանդ վերջինս, գինու գոյն և զօրութիւն կուտան բուրուածքին։

Կերակուր ուտելու ձեւը.—փայտէ կլորակ և մեծ սեղանը կամ բռնեկը կը դնեն սոխոր (յատակի) վրայ, վրան անհաշիւ սպիտակ ծաղիկ լօշերը կը փռեն և մեծ հաղարաղով, լանգառով և այլն, միայն մէկ տեսակ կերակուր (օրինակ հաշ, փլաւ, տօլմա և այլն) կուգայ մէջ տեղը, ու 1—10 ձեռքեր կերթան ու գան մէկ ամանի մէջ։

Այր ու կին միասին հաշել չգիտեն. նախ՝ այր մարդիկ հաշելով դուրս կերթան. ապա նոյն կերպ կը հաւաքուին հիժ ու երեխայ, աղջիկ ու հարս, կին ու տանտիկին և կսկսեն հաշել։

II. Անասնաբուծութիւն.

Ընտանի կենդանիները, բացի իրենց տուած օգուտներից, գիւղացու աշխատութեան անբաժան ընկերներն են, նոցա գոյութիւնը անհրաժեշտ է, ուստի և ժողովուրդը կը հետեւի անասնաբուծութեան։

Եղած անասուններից թթուով աւելի շատ կը պահուի ոչխարը. այժմ ժողովուրդը աղքատնալով անասնոց թիւն ևս սկսած է պակասիլ, օր. 20—30 տարի առաջ, Բուլանըխայ առաջնակարգ տներու համար կը պատմուի, որ իւրաքանչիւրը 1000—1500 գլուխ ոչխար կը պահեր. այժմ ամենաաղքատը 5—10 և ամենահարուստը 200—300։ Աւելի մեծ քանակութեամբ ոչխար կը պահեն քուրդերը՝ քան հայերը։

Մնացած լծան տաւարները այնքան կը պահուին, որքան որ պէտք զգացուի։ Տեսանք՝ որ կանոնաւոր լուծք մի լծելու համար հարկաւոր է առնուազն 2 եզ և 2 գոմէշ. միջին դասակարգի հարուստները կունենան 8—10 եզ և նոյնքան գոմէշ, առաջնակարգ տները 15—20 եզ և այնքան էլ գոմշեղէն, որոնցով մինչև 3—4 լուծք կը լծուի և երբեմն աւելի մնացածները փոփոխակի կը գործածուեն, որոնք կը կոչուին փոխոր սաւար։

Լծան տաւարներից աւելի կամ պակաս կը պահուին նաև ղեռները,—ոչ, մոռացայ և, բուչլոններ՝ էլ։ Բարձականներու թիւը կը լրացնեն նաև էշերը, որոնցով թէ սեփական և թէ վարձով, արմտիք կը փոխադրեն քաղաքները, օրինակ Բուլանըխից մինչև Բաղէշ կամ Մուշ, մէկ քեալայ (4½ պուտ) ցորենի համար կառնեն 8—10 դուրուշ, կարաւանի 2½ օրուայ ճանապարհի համար։

Սակաւ թուով ձիեր ևս կը պահուեն հեծնելու և, երբեմն աւելին ծախելու նպատակով, իսկ ջորի պատրաստելը քիչ անգամ կը պատահի։ Ոչխարաց նման ձի կը պահեն աւելի թուով՝ քրդերը։

Ձմռան անասնոց կը յատկացուին առանձին շինութիւններ. գոմ ոչխարաց՝ և ախոռը (թաւլայ) միւս չորքոտանիներու համար։ Վերջիններս նոյնպէս ջոկ ջոկ ախոռներ կունենան, օրինակ, գոմէշները (լծան) կը պահուեն գոմնոց կոչուած ախոռներու մէջ, ուր իւրաքանչիւրը մէկ գոմի մէջ (տես գիւղական շինութիւնները – բնակարան), առանձին կապով կը կապուի մսուրի փայտին, փայտէ ճաղերով կը ջոկուի կշտին կապուած միւս անասուններից (նոյն կերպ փակերով և ճաղերով շրջապատուած) տակը թանձր գոյն կը լցուի և առանձին ասելիով կը կերակրուին բոլորը միասին. օրինակ՝ յարդի հետ՝ խաշած գարի և քուշնայ. կտաւատի ոսպոռ (կամ քրդերէն քուսպ) խոտ, առուոյտ և այլն։

Միւս սեւատաւարները—մատակներն ևս—թէև կարգով կը կապուեն մսուրներու վրայ, բայց մէկ փակի մէջ 1—2 հատ միասին։ Որքան որ երկրի ձմեռը տեւէ, խեղճ անասունները բոլորովին բանտարկուած կը մնան ախոռներու մէջ. 24 ժամուայ մէջ կը կերակրուեն ու կը ջրուեն երկու անգամ,—ոչ երբ և ոչ գիշերին. բայց ունևորները՝ երեկոները թեթև ընկերք մի ևս կաւելացնեն *) լծան տաւարներուն։ Գոմշեղէնները շաբաթ 2—3 անգամ կը լուացուին ջրհորներու առաջ և, ամիսը 1—2 անգամ կտաւատի ձէթ կը քսեն ոջիլները ջնջելու համար, գոմշեղէններու պահպանութեան համար ամենալաւ միջոցը լուանալը և ձիթելը կը համարեն. դորա համար, կասեն. գմշուն հարցուցին թէ քանի՞ տարի կապրիս. ասաց. Ջուրն ու ձէթը գիտեն. այսինքն ջուրն ու ձէթը, որքան շատ՝ այնքան ևս երկարակեաց կը լինիմ։

Սեւատաւարներու ոջիլները ջնջելու համար՝ ծերոյով կը քերեն,

*) Բոլորովին առանձին խնամքով և հոգատարութեամբ կը պահպանուին բուլլոնները (ցուլ, անկուրտ գոմէշները). իւրաքանչիւր տուն իւր սիրելի բուղան ունի, որ բացի սովորական կեր ու դարմանից, ընկերք ու ոչոտ ևս կուտան, ձիթով խմոր հաց կը կերցնեն, օրական 1—2 անգամ կը լուանան և այլն։

նաւթ կը քսեն և երբեմն, ԼԾՈՒ կոչուած դառն փուշ-խոտը կը կերցնեն, որ դառնացնելով անասնոց միս և արիւնը՝ ոջիլները իրենք իրենց վայր կընկնան։ Բայց այս միջոցները այնքան թոյլ են, որ սեւատաւարի ոջիլն (գենա) մեծ թուով զոհեր կը տանէ։

Մեծ խնամք կը տանեն նաև տաւարներու տակը մաքուր պահելու, դորա համար 24 ժամուայ մէջ 5—6 անգամ թրիքը կաւելեն և թրքնոցներու մէջ հաւաքելով դուրս կը տանեն և կալերու մէջ կը հաւաքեն կամ կը պարպեն վառելիքի համար։

Տարբեր է ոչխարաց խնամքը։ Զմեռնային արևադարձից առաջ, ԷՐԷ ՕՐԵՐԸ ԼՈՒՐՀ ԵՆ, 24 ժամուայ մէջ ՄԷԿ ՆԵՓՈՒ դարման (կեր) կուտեն (փոփոխակի ցարդ և խոտ) և մէկ շաբաթուայ մէջ 2—3 անգամ կը ջրուեն, կը պատմեն՝ թէ քրդերը, որոնք աւելի հմուտ ոչխարաբոյծ կը համարուեն, ամիսը 2—3 անգամ ջուր կուտան ոչխարներուն։

Օրերը երկարանալով՝ օրական (24 ժամուայ մէջ) երկու անգամ կը դարմանեն և նոյն կերպ ևս կը ջրեն։ Ոչխարները իրենց կերը կը վայելեն դուրսը, ձիան վրայ, որոնց կայանը կը կոչուի (քրդ.) ԷՐՈՒ-ՓԷՈՒ, իսկ ներսը, դոմերու մէջ, առանց կապ ու մսուրի խառն ի խուռն կը նստեն, որոնց ՆՈՒ նմանապէս դուրս չտարուիր, այլ օրական 1—2 անգամ չոր փայտեն ցանելով կը ցամքեցնեն, որով սոցա թրեքը դիզուելով և կոխոտելուց ամրանալով կը մնայ մինչև գարուն որ վառելիքի համար կը կտրատեն և կը չորացնեն։

Ժառանգականութեան օրէնքը ժողովրդին յայտ լինելով, կենդանեաց սեռը ազնուացնելու դրութիւնն ևս Ծանօթ է, բայց բոլոր անասուններու համար յայտնի եղած միջոցները չեն գործադրեր, միայն առանձին նկատողութեան կառնուեն ոչխարներն ու ձիերը, որոնց սերունդը ազնուացնելու համար ընտիր արուներ (սերմացու) կը պահպանեն։

Այս մասին դարձեալ առաջին քայլը արած են Քրդերը, որոնց ՄՈՒՐԻ, ՍՈՒՐԻ, ՋԷՔԻ և այլն ցեղի ձիերը խիստ նշանաւոր են իրենց գեղեցկութեան և արագընթացութեան կողմից, և որոնց ՀՈՒԼ—ՆԻ-ԺՈՅԳՆԵՐ ու անխառն սերնդեան պահպանման գրաւոր վկայականները դարաւոր պատկառելի հնութիւն կը կրեն վրանին։

Մեծ զգուշութեամբ կը պահպանուեն մատակ ձիերը, իսկ նախիրը թողնուածներուն ամօթոյքը ԽՈՒՀ (երկաթէ կամ մագէ օղակներ) կանցկացնեն, որ անազնիւ ձիերը չկարողանան մերձենալ։

Ոչխարաց արուները նոյնպէս յունիս—յուլիս ամիսներից սկսած առանձին կը պահուեն և աշնանէ 40 օր անցնելուց յետոյ արձակ

կը թողնուին էգերու մէջ. (քրդերը աւելի ուշ կը թողնեն). երբ ոչխարաց ծնունդը կսկսի դէջ մայրերու կաթը բոլորովին կը յատկացուի գառնուկներուն. որոնք մի քանի շաբաթից յետոյ, բացի կաթից, կը կերակրուեն մանր խոտով, չէրով (ալիւր և ջուր) և կտաւատի կոպտոնով (քուսպ). մինչև որ գարունը բացուի, բնութիւնը «արևով շապիկ հագնի, և մարդ ու անասուն միասին թափուեն դար ու դաշտը։

Անասնոց իբրև արօտատեղի իւրաքանչիւր գիւղի շրջակայքը և լեռներու կողմերը, թողնուած են ընդարձակ գետիններ (մերա — արօտատեղի)։ Այս արօտատեղիները Քուրդը կը խփէ իւր ֆրէ (վրան) և Հայն կը կանգնեցնէ իւր գոմը, մինչ բնութիւնը դեռ դալար է, անասունները ճարակ կը գտնեն լեռներու վրայ, իսկ ամառը, որովհետև լեռներու արօտը կը չորանայ, կիջնեն դաշտերն ու մարգաստանները, որ ժամանակ արդէն, գոնէ Հայու գոմը կը վերջանայ, երկրագործական զբաղմունքը շատնալու համար։

Գիւղական համայնքի շահը և զբաղմունքի պէսպէսութիւնը կստիպեն գիւղացիները, անասունները խմբովին արածեցնել և պահպանել (ամառները) վարձած մարդոց հսկողութեան ներքև։ Իւրաքանչիւր տեսակի, կամ մի քանի տեսակը միասին, անասունները ջոկ խումբ կազմելով, այդ կազմակերպութեան համեմատ ևս, կով, ձի, եզ, էշ և այլն առանձին խմբով կը պահպանուեն ռաթէր անունով։ Սորա պահապանն ևս կը կոչուի ռաթերդէ, որ իւրաքանչիւր տաւարին կստանայ $^2/_3$ արքունի կօտ ցորեն (24 ֆունտ) և օրական մէկ հաց տան գլուխ։

Մատղաշ ձագ (գոմշու) և հորթերն ևս ջոկ կը խնամուեն հորբաբէ հսկողութեան ներքև, որ իւրաքանչիւր հորթին կստանայ վարձ $^1/_3$ արքունի կօտ ցորեն (12 ֆունտ) և տան գլուխ օրական մէկ հաց։

Ճիւղ (հօտ) և սորա կազմակերպութեան օրէնքները։

Իւրաքանչիւր գիւղի մէջ կը լինի 1—6 ճիւղ. սովորաբար ճիւղը պէտք է 1000 գլուխ ոչխար ունենայ, բայց այժմ 5—600-ից աւելի չէ։ Ճիւղը կը կազմէ գլխաւորաբար գիւղի ռէսը կամ շատ ոչխարատէրը, որու անունով և կը կոչուի Թորոսի կամ Կիրակոսի ճիւղ, միանգամայն և՝ ճիւղ կազմողը կասուի ճղղլուխ կամ (քրդ.) սարջէջ երկրորդական կարգի ոչխարատէրը, ռաթ, երրորդականը, ռաթաթ կամ (քրդ.) բէնջէջ, մնացած ոչխարատէրերը առհասարակ, (քրդ.) ջէջ որոնցից ամենաքիչ ոչխար ունեցողը բերատեղին նստելու կարգին համեմատ կը կոչուի պուէդ։

Գարնան սկզբներից մինչև Համբարձումը ոչխարները թէև դուրս կը մնան գիշերով, բայց ցերեկով կը բերուին գիւղը և իւրաքանչիւրի

ոչխարը իւր դռան առաջ կը կթուի. կթելուց յետոյ կը տանեն արօտի և մանաձելու գիւղի մօտերը. այս թեթև պտոյտը և արօտիկը կը կոչուի ՀԱՆԵԼ։

ՃԻՒՂ ՀԱՆԵԼԸ.—Ճիւղ հանել կը նշանակէ գառները և ոչխարները ջոկ ջոկ խմբերու բաժնել և ցերեկով այլ ևս գիւղը չբերել. այլ դաշտը յարմար դրքով տեղերը կայան որոշել, ուր ոչխարատէր կանայք քղիկ և կթոց շալակած կերթան կթելու ոչխարները. այս կայանը կը կոչուի ԲԷՐ կամ ԲԷՐՈՒԷՆ (քրդ.) և կթող կինը ԲԷՐՈՒ։

ԲԷՐՈՒՈՐՆԵՐԸ փողանաձև կը նստեն այսպէս. մէկ կողմի գլուխը կը նստի ճղղուխը կամ սարջօլը, սորա անմիջապէս կողքին՝ ԸՆԸ. թեւից յետոյ, այսինքն երրորդ տեղը, թեւտակը կամ ընջօլը, և միւս ջօլերն ըստ կարգին մինչև ամենավերջին ԴՈՒԷՆԸ։ Միւս կողմի գլուխը կը նստի ԸՆԷՐՈՒ մէկը, ապա ԸՆԴՈՒԸ և այլն մինչև սորա ԴՈՒԷՆԸ. նստելու այս ձևը պաշտօնական է և մէկ մէկի տեղը նստելու իրաւունք չունի։

Ոչխարը փողանաձև նստող բէրուորներու միջովը կանցնի մէկ մէկ և իւրաքանչիւր ոչխարատէրը իւր ոչխարը ճանչնալով *) կը բռնէ կթելու համար։

Մինչև ճիւղի ելնելը հովիւը կը կերակրուի ՃՈՒԷԼԻՆ հաշուով, բայց գիշերուայ համար ջօլերից կստանայ լօրական 2—3 հաց. երբ ճիւղը ելնէ ճղղուխը կամ սարգօլը պարտաւոր է տալ 1 թաղիք, մէկ էշ (հովուի հացը և ծանրութիւնքը կրելու համար), օրական 8 հաց. 1 քղղիկ մածուն և 1 ման գատ տալ հովուին. թեւը՝ օրական չորս հաց 1 բղղիկ մածուն, 1 ման գատ. միւս ջօլերը 4—5 օր անգամ մի մէկ մէկ ման գատ և օրական 2—3 հաց։

Հովիւը կունենայ և մի օգնական որ (քրդ.) կը կոչուի ԳՈՒՆՋԻ (ոչխարը ետևից քշող), որ հովուի հաշուով կը վարձուի և կը կերակրուի. սովորաբար ճղլին կստանայ 6—7 գառ և ծառայութեան միջոցը կսկսի ճիւղ հանելու օրից մինչև գառ կնտոցը (ասրակտուր)։

Հովիւը վարձ կստանայ 20 ոչխարին մէկ գառ.

10 ոչխարին մէկ բուրդ $^1/_3$ արքունի կօտցորեն, 1 զոյգ տրեխ։

Գառնարածի պահպանութիւնը և վարձը նոյն են ինչ որ հովուին։

Ընտանի կենդանեաց անուանները և տեսակները, սեռի և հասակի համեմատ.

Կովի ծնած արուն՝ կամ էգը, նախ կը կոչուի ՀՈՐԼԷ, (հորթ), մէկ տարեկան հասակից սկսած էգը կը կոչուի ԴՈՒԼԷ, յետոյ ԷՐԻՆՋ. իսկ արուն՝

*) Ոչխարները կը ճանչցուեն ՆՇԱՆՈՎ, Աւագ Հինգշաբթի օրը ամէն ոչխարատէր իւր գառնուկներու ականջները որոշ ձևերով կամ կը կտրէ կամ՝ հրաշէկ երկաթով կը խարէ։

մոլի և ապա ամբ (արջառ). սերմացուի համար չկտրուած աջառը՝ բոլոր (ցուլ), եթէ բուղուրը լաւ կուրտ չառնէ, կը կոչուի (քրդ.) տրոխրզ (անկուրտ կամ կիսակուրտ), կրտուելուց զկնի՝ ենչ։

Մատակի ծնած արուն՝ կամ էգը, կը կոչուի յոֆ, յետոյ էգը կանուանուի ամբրի. սերմացուի համար չկտրուած որձ ձագը կը կոչուի բոլոր (ցուլ) և կրտուելուց յետոյ՝ նրոն։

Ոչխարի ծնած արուն՝ կամ էգը կանուանուի ֆոս. երկու տարեկան որձ գառը՝ (քրդ.) ամբրի (որոճ), յետոյ՝ (քրդ.) հոֆեզ, սերմացուի համար չկտրուած հոգրմը՝ խոչ խոչ։ Պոգրճուլթեան հասակն ունեցող էգ ոչխարը կը կոչուի (տաճ.) ճիշ, ծնելուց յետոյ՝ մոխ (քրդերէն՝ ֆ)։

Այծի ծնած արուն կամ էգը՝ կը կոչուի ուշ, երկու տարեկան էգ ուլը՝ (քրդ.) պշոխր (ալոջ). որձը (քրդ.) հաւուր. սերմացուի համար չկրտուած հաւուրը՝ (տաճկերէն) ըռաֆ (նոխազ, քոշ)՝ կրտուածը (քրդ.) ենրի։

Իշու և ձիու ծնած արուն, կամ էգը, տոտոն։

Նոր դուրս եկած հաւու էգը, վոնի, արուն, նախ ճպոշ և ապա ճիպ (աքաղաղ). գահցած հաւ ու ճիտը միասին ընոտ։

Երինջը երբ վաղաժամ ցուլ գայ և ծնի կը կոչուի հոպճի, վաղաժամ ծնածը՝ (ծննդեան օրերը չլրացած) օր պոյոս, այսպէս և բոլոր անասնոց նաև կանանց վաղաժամ ծնունդը։ Սովորական ժամանակին ծնող երինջը նախ կը կոչուի ասլրն ծին, յետոյ՝ նով։

Աւարիկը ծնելուց յետոյ նախ՝ ասլրն ծին կամ նոբեր ապա մոպոն. ամուլ կով կամ մատակը կանուանուի էրեմոն։

Նոր ծնած ոչխարը կը կոչուի ճիշ, յետոյ մոխ. նորածին պշոխրը դարձեալ պշոխր, ապա էծ (այծ)։

Թուխս նստող հաւը կը կոչուի էշոպոն. կճեպը խիստ փափուկ հաւկիթը կը կոչուի ըռոխի և ամենափոքր հաւկիթը՝ յոս սոպի։ (առաջինը այսպէս ասած, անժամանակ ծնունդ. և երկրորդը՝ գաճաճ ձուի)։

Կով, մատակ, ոչխար, էծ և ձին կը ծնին, էշը՝ (քրդ.) կը ըռլեի, գայլ, արջ, շուն, աղուէս և այլ կը ցնփնին կամ կը ցրրին, հաւը հոնիր ֆոնի և յոֆ նը հոնի։ (Միայն կինը նը պոնի).

Կով, եզ, երինջ և աջառը միասին կը կոչուին սոսոսոր. գոմէշ, մատակ, ձագ և աւարիկը մէկէն գոմնեզեն. էշ ու ձին՝ հորոմ ոլոխ?. հաւն իւր ձագերովը և աքաղաղովը միասին՝ հոսոնճ։

Վզին օղակաձև սպիտակ գիծ ունեցող գոմէշը կը կոչուի գոզլի։ (օղակաւոր), ճակատին փոքր փունջ մի ճերմակ մազ ունեցողը, հոսոլի։ Նոյն ձև մուսլիկ եզը նոշ (նալ-պայտ), երբ նալը շատ մեծ է՝ (քրդ.) բոչոյ։ Ոտքերը, մինչև ծնկները, շէկ մազերով և դեղին կճղակներով եզ կամ գոմէշը կանուանուի չոլ, խատուտիկ կամ պիսակ ունեցող աչքերով եզ կամ գոմէշը կը կոչուի չոխոլ, ուղղաձև կոտոշներ ունեցող գոմէշը պոլ և եզը փեր։

1. Փոնոլ—ձիու, իշու, ջորու և ուղտի կուն կանուանուի փոնոլ.
2. Պոսի (փթիր)—ոչխարի և այծի կղկղանքը։
3. Թիքրեն—դաշտը ցրիւ ընկած թրիք.
4. Կոսոխ—գոմշու մէկ անգամ թրքածը որ կլորաձև կը չորանայ։
5. Տոբի—պտրուկի հաւաքսը, որ գոմերու մէջ թանձրանալով

կը կտրատուի և կը չորացուի վառելիքի համար. տարթը փայտի չափ գօրաւոր վառելիք է։

6. Պասմա (բասմա (տաճ.)=կոխուած. կալերու մէջ հաւաքած և քառակուսի կտրատած չոր թրիք, որու ամեն մէկ կոտորը կը կոչուի գոմբ։

7. Ամբ—ձեռքով շինուած թրիք.

8. Ընբէռ կամ Էրէն.—ախարի մէկ տեսակը, որու մէկ կողմը թուչնոյ գլխաւ նման բարձր կը լինի (ախար բազէ?)

Ընդհանուր անունով բոլոր չորացած թրիքները կը կոչուին ցոն։

Թուչնոց կղկղանքը կը կոչուի ծէր, որից ժողովուրդը չգիտէ օգտուել։

Քրդաց զբաղմունքներն են 1) անասնաբուծութիւն. 2) ընջերութիւն (տաւարի վաճառական). 3) երկրագործութիւն. 4) հովուութիւն. 5) մշակութիւն։

Թուրքն Քուրդը միմիայն թէջերութիւն կանէ, Աշերը՝ թէջերութիւն, երկրագործութիւն և կորմանդն՝ երկրագործութիւն, հովուութիւն ու մշակութիւն։

Վաճառականութեան կենդրոններ.

Բուլանըխ և շրջակայ գաւառներու վաճառականութեան միակ կենդրոնն է Բաղէշ (Բիթլիս) քաղաքը։ Բաղէշից յետոյ, երկրորդ կենդրոնը Մուշն է։ Բայց որովհետև Մուշ քաղաքը առևտրական հրապարակի վրայ Բաղէշից շատ յետ ընկած է և մինչև անգամ իւր շրջակայ գիւղօրէից բաւականութիւն տալ կարող չէ, հետևաբար և Բուլանըխցին սակաւ անգամ կը դիմէ Մուշ, և միայն այն պարագային, երբ ցորեն, դարի, կաշի և այլն աւելի նպաստաւոր գներով կարելի կը լինի ծախել։

Վերոդրեալ քաղաքներից յետոյ, երրորդ տեղը տալու է գաւառիս կառավարութեան կենդրոնավայր Կոփ գիւղին, ուր 30-35-ի չափ խանութներ կան (դարձեալ քաղաքացոց ձեռքը) և քաղաքներից այդ տեղ փոխադրուած ապրանք, մրգեղէն և այլն թանկ գնով կը վաճառուեն գիւղացոց վրայ։

Գիւղեր ներմուծուած ամէն կարգի ապրանքները (բացի կերպասներից և ասուի կտորներից) գրեթէ միայն ցորենով կը փոխանակուեն. մրգեղէնը մանաւանդ նահապետական դրութեամբ, նայելով ցորենի արժէքին, քաշքեաբ (հաւասար) էրկուով, էրեքով և մինչև իսկ չորով ցորեն կը տրուի և փոխարէնը միրգ կառնուի։

Ի. նկ.



ТИФЛИССКАГО СОБРАНІЯ БИБЛІОТЕКА

Ա. Լուծ—1) կնճակ, 2) բկի, 3) սամի, 4) սամօտ, Բ. խարազան—1) խարզնկոթ, 2) մտրակ, 3) շամի, 4) ոլոր, 5) գլուխ, Գ. արօր—1) առատամ, 2) համ, 3) մամ, 4) թուր. 5) հաւուկ, 6) մանանբուռ, 7) արմնտա, 8) գորնեւոր, 9) խոփ, 10) շղթայ, 11) մեծ օղակ, 12) ագռաւուկ Դ. Կանդրիւ Ե. ձգատայ։



Ա. գութան—1) առատամ, 2) համ, 3) թուր, 4) մանձ, 5) մանձաղբէր, 6) փայտ-մանձուր, 7) թև, 8) խոփ, 9) ձեւիչ, 10) շղթայ, 11) արմնտայ, 12) մուսիկ, 13) կունդ, 14) խարզան, 15) սեռ, 16) բարձ, 17) արմնտայ։ Բ. բանոքի, Գ. ցաք—1) կեռ գլուխ փայտեր, 2) ցաք գլուխ, ցաքճաղ, 3) պարոր-փայտեր, 4) ցաքլիցս։

III ՆԿ.



Ա. գահուկ, Բ. բալխեր —1) և 2) քաշեր, 3) և չորրորդ կոպիք, 7, 6...) սրքատա (ցից), 8) պարոր, Գ. սայլ — 1) մուրուք, 2) ականջ, 3) առեղ, 4) և 5) կոփ, 6), 7), 8) տախտակներ, 9) աշտամաղ, 10) թիեր, 11) սրքատա (ցից), 12) հեց, 13 որձաչ, 14) անհոգ, 15 կեռ երկաթներ, 16) բարձ, 17) լակոտներ, 18) ակռաներ.

IV. ՆԿ.



Ա. փոցխի—1) պոչ, 2) գլուխ, 3) ակռաներ, Բ. երկու մատ, Գ. մանկեան—1) գլուխ, 2) մատներ, 3) պարոր, Դ. հորսելի, Ե. մանգղոն, Զ. կամ.

Ա. Գ. Դեղ. Բ. Գ. Դ. Ե. Զ. Է. Ը. Թ. Ժ. Ի. Լ. Գ. Դ. Ե. Զ. Է. Ը. Թ. Ժ. Ի. Լ.

VI. ՆԿ.



Ա. Թոնդեր—1) ակ, 2) շրթներ, 3) կողեր, Բ. լոգ, Գ. չախու—1) կոթ, 2) լեզու, 3) ճասճիկ, Դ. ծծուկ։

Ն. Խուրշուդեան Գ. Լեկեան Գ. Կիսակ. Գ. Լեկեան. յաղագս դեղերանոցի. Գ. կիսակ. յաղագս դեղերանոցի. Ա. Գ. Գ. Գ

Ընդհանուր գաւառի 52 մեծ ու փոքր քրդաբնակ և հայաբնակ գիւղերը կը վճարեն արքունի գանձարանին՝ տարեկան

Հողային և կալուածական տուրք	183,050	ղուրուշ
Զինուորական տուրք (միայն Հայերը)	386,190	»
Ջահու (թէմէ թօպթ. գիւղի) տուրք.	15,573	»
Հանրային կրթութեան նպաստ (մէարիֆ). . . .	1,435	»
Գումարը . . .	586,248	

Աւելացնենք սորա վրայ կապալով տրուած տասանորդի գումարը՝ 653,160 ղուրուշը նաև փէ 10 ղուրուշ հաշուելով 2240 քիլ ցորենի գինը՝ կունենանք 653,160+22400 *) . . . . . 675,560 ղուրուշ

Ընդհանուր գումարն է՝ 1,261,808 »

Այս հաշուի մէջ չէ գաւառի աղնամը (ոչխարաց տուրքը) որու հիշդ թիւը չկարողացանք ձեռք բերել։

ТИФЛИССКАГО СОБРАНІЯ БИБЛІОТЕКА

*) Գիւղերը կը ծախուի կապալառուներու (միւլթէզիմ) վրայ թէ ցորենով և թէ դրամով, օրինակ այս տարուայ աշարի վերադրեալ գնի վրայ աւելացուած է նաև 2240 քիլ (գրիւ Պօլսոյ=1 պուտ 32 ֆունտ) ցորենով։

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲԱՐՔ

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՐՍԱՆԻՔ

Ա. ԽՕՍՔ ԱՌՆԵԼ

Երբ Մրտօն իմացաւ որ իւր տղան ծռած է Կարոյի աղջկայ վրայ, և «երկու ոտքը մէկ ուօլ դրած» (վճռած է) անպատճառ այդ աղջիկը պիտի առնէ, տղային Հայր և մայրը առանձնանալով կը խորհրդակցին։

«Կնիկ, ինչ կըսիս, էդ տղէն կանելէ հալալ-մալալ (անպատճառ) զէդ աղջիկ կուզէ, ըսեր է՝ օր գիսի իմ պապ չկարդէ, կը թողիմ երթամ Թիֆլիս, Ստանբօլ, աշխարքէ աշխարք. կառնիմ զիմ գլուխ՝ կը կորիմ, իմն օր կայ՝ էդ աղջիկն է, չկայ՝ էդ աղջիկն է, օր էդի չեղնի, ես աստուոր չըմ մտնայ, ինչ կըսիս, կնիկ, իմալ էնինք»։

—Քա՛ մարդ, ապա ես գինամ, ուր (աղջկայ) պապուն ու մամուն (ծնողաց) աստուածութեն խսուր (ազակասութիւն) չըտուեր է, աղջիկ, կըսին, ժիր ու հօրորդի է. էրող դարձող է (գործունեայ) օջախզադայ է (օջախի որդի). խօրօտկութենին, զաթի (արդէն) իսկի խսուր չկայ, ուր մամու պէս քուլֆաթ (կին, ընտանիք) ներքև արեգական չճարուի. ըսած է՝ «տես զմամ՝ զաղջիկն առ». դու լէ գնա ուզէ, իմալ օր Աստուած հաչ էրեր է (սիրեր է, կամեցեր է), էն հըմալ կեղնի։

Մարդ ու կինը երբ զիրար համոզեցին, կը կանչեն տանու քահանան, մէկ երկու մերձաւոր բարեկամ և կուզարկեն աղջկայ հօր տունը. մինչ սոքա ճանապարհ կընկնեն, տանեցիք մի հատ «ՈՒՐ ու ՇԷՐԷՓ միասին կը կապեն «ԻՆ» ի վէր, որ երթացողները դատարկ յետ չդառնան, գործերնին աջող լինի։

Երթացողները որոնք կը կոչուեն տեղական բարբառով

ուզող, խնդրող) սովորաբար երեկոյեան, ուշ ժամանակ կը ներկայանան ապագայ խնամուն։

«Բար՝ իրկուն» խօսքը կը լինի ուզընկաններու առաջաբանը։

—Աստծու բարին, իմ գլխուն յերեսին եկաք, կը պատասխանէ ապագայ խնամին. և դառնալով տանեցոց կը հրամայէ շուտով ջուր դնել (թաղիք, անկողին փռել), աթոռ և զմբել պատրաստել։

Աղջկայ հայրը,—Թաժա (նորից) բարի էք եկի, իմ գլխուն՝ յերեսին, խէր եղնի (բարի լինի), դուք եղա վախտ յօղա՝ (այստեղ), էդ ինմալ հանպտու (հանդիպել)։

Ուզընկանք.—Աստծու բարին քեզի, փառք Աստծու՝ խէր է. ըշտէ (ահա) հաղբր (պատրաստ) տես. քու սէրն է զմբզի բերի յօղա. խնդիրք մ՝ ունինք քըզնէ. քու օջըխէն մարդութենի ումուջախ (յոյս) ունինք (մարդութենի ումուջախ ունենալը կը նշանակէ աղջիկ ուզել և բարեկամ (մարդ) դառնալ միմեանց)։

Աղջ. հ.—Բարի էք էկի, հաղար բարի, ձեզ՝ խնդիրք վրը իմ գլխուն ու յերեսին, ամա (բայց) ես ինչ գինամ ոն (ով) է, ոն չէ, վին (ում, որուն) է, վին չէ, (թէև գիտէ ում համար որ պիտի ուզեն իւր աղջիկը, բայց ինչպէս կասէ գիր զացին, զինք ելը դոնէ)։

Ուզընկանք,—Ըշտէ, եկերենք խնդիրք կէնենք օր դու զքու աղջիկ տաս Մրտոյի տղին։

Աղջ. հ.—Աղջիկ մ՝է, խօ մեծ բան մէ չէ. եաղմէ մ՝է, կը թալիմ վրը ձեր ձեռաց (ինչպէս մի թաշկինակ, որ մէկին նուիրած ժամանակ, ձեռքի վրայ կը ձգեն)։ Ամա, աղբէր մենք լէ տան ու տեղի տէր ինք, կնիկ ու ճիժ ունինք, աղբէր ու տղայ ունինք, մենք զիրար տեսնանք, հարցունք, յիմնանք (իմանալ) ընդրա (նոցա) կամք լէ ինչ է, ճրզի սաղ ջուհապ (պատասխան) մէ կիտանք։

Ուզնկանները այդ օրը թէև դատարկ կը դառնան, բայց աղջկայ հօր ասելը թէ (աղջիկը) եաղմէ մ՝ է ելը յգեմ յեր յեաոց այդ արդէն կողմնակի խոսք ասելն է։

Բ. տնտես երթալ։ Եթէ խնամացուներն տարբեր ցեղերից են, իմանալու համար աղջիկ ուզողի տան «ՈՒԼՈՒՔԸ (սարքը), կարողութիւնը, անասնոց քանակութիւնը, խնամացուի ԾԱՓՈՒՄԸ, ինչ տեսակի մարդ լինելը, և այլն. աղջկայ տան կողմից ծածուկ մէկը կուղարկեն լրտեսի ձևով վերոգրեալ ԷՈՐՈՒ բաները քննելու, որ կը կոչուի «ԽՈՒԶ ԵՐԹԱԼ։ Թող տնտես երթացողը իւր պաշտօնը կատարէ, մենք տեսնենք թէ ինչպէս աղջկայ ՀԷՐՈՒՆ (հօր տանեցիքը) զիրար կը համոզեն «ՈՂՋՈՒՀՈՒՊԸ տալու։

Հայրը.—«աղջի(կ), լա՛ օ, (քրդ-որդի) էգ մարդիկ (լինելիք խնամու մասին է խօսքը) մրզնէ մարդութենի ումուջախ ունին, (աղջիկը գիտէ հօր նպատակը), դու ի՞նչ կըսիս, լա՛ օ, ըռզա՞ իս (բազի, հաւան) օր խօսք տանք մարդոց։

Աղջիկ.— Ապա ես գինա՞մ, ընձնէ յօրին կը հարցուս, կըպտպտայ աղջիկը, որ երեսը մէկ կողմ ոլորած՝ ձեռքով կամ պատը կը փորփորէ, կամ ոտաց ծայրովը հողի հետ կը խաղայ։ Դու յրսօր (յայսօր) իմ պապն իս, իմ զլխու տէրն իս, օր ձեռքսի բռնիս թալիս ի ջուր՝ ես կռնա՞մ (կարե՞մ) քու ձեռքն ոլրիմ (ոլորել)։

Հայրը.—Զէ՛, լա՛օ, աղջիկն օր կայ՝ ուր զլխու սուլտան է, (ինքնիշխան, ազատ) հարի քու կամք լէ չեղնի, ես էն մարդոց խօսք չըմ կռնայ տայ *), ի՞նչ կըսիս, ըսէ սանք (տեսնենք)։

Դարաւոր սովորութեան համաձայն աղջիկը կամաչէ համարձակ իւր կամքը յայտնել հօրը, բայց մայրից ոչինչ չծածկեր, մօր և աղջկայ խօսքերը մէկ լինելով, այսքանս կը յայտնէ. «իմ մամ գինայ»—հայրս գիտէ—ու կը փախչի հեռուն, ասել է՝ թէ համաձայնութիւնը կայացաւ։

Ընտանեաց անդամները (եղբայր, եղբօր կին և այլն) աղջիկ տալու կամ չտալու խնդիրը բոլորովին հօր կամքին յանձ-

*) Բանիմաց մարդիկ միայն իրենց աղջկայ կամքը կը հարցնեն, մեծ մասը խեղճ աղջիկները տաւարի նման կը ծախեն. Թող փեսան հարուստի տղայ լինի, խալան (բաշլըդ, փարձանք) շատ տայ, „գլուխը քարն ինն տուած“ աղջիկները կարող են խօսալ, ում ուզենան, նորան կը բաշխեն, աւելի ճիշտը՝ կը ծախեն։ Աղջիկներն ևս իրենց վրէժը կը լուծեն շատ անգամ, սիրած տղայի հետ փախչելով։

նելով, կողմնակի անձանց միջոցով լուր կուղարկուի տղայի տունը համաձայնութեան մասին, բայց խնդրին «պաշտօնական» կերպարանք տալու համար, հարկաւոր է առնել երէքորդ խօսքը կամ.

Գ. «Հարէ կըրըն»-ը *). Նախորդ ուղնկանները, որոնց կը-ընկերանայ նաև տղայի հայրը, կը ներկայանան աղջկայ հօրը, որոնք սարէն-ձորէն խօսք առնելով, խօսակցութիւնը վերջա-ալէս կը կանգնի խոմէ-ընէ վրայ։ Աղջկայ հայրը թէ սրտով համաձայն է, թէև կողմնակի կերպով լուր արդէն տրուած է, բայց այս դլխից դործը ծանր կը բռնէ, հիմակուանից կը-յայտնէ որ իւր աղջկայ ընայ (ընկերը, նմանը) բովանդակ աշ-խարհք չճարուիր, և թէ ծանր խոյն պիտի առնէ։ Մեր խնա-մացուն ևս խոսքը չէ՝ որէրէր, ծանրութեամբ ցոյց կուտայ՝ որ ինքն իսալանից վախեցող մարդ չէ (թէև սիրտը կը տմփտմփայ), և միմիայն մարդկութենի փափաք ունի։ Երբ ուղնկանք նորից կառաջարկեն հաստատելու խնամութիւնը, աղջկայ հայրը (նախապէս յիշած խօսքերով) այո կասէ, և այդ «այոն» կը-կոչուի հարէ էրբն։

Հարէ կրրընից յետոյ տղայի հայրը կելնէ և աղջկայ հօր ձեռքը կը պագէ, այդ ևս կը կոչուի յէտ պոգէջ. իսկոյն մի-մի մատանի կանցկացնեն հարսի մատը, կամ զոյդ մի ապարանջան կամ ընա, կամ շամբէ և այլն կը յանձնեն խնամու տան, որոնք կը կոչուին նշան (հարսի)։

Սեղան կը պարզուի, օղին մէջ տեղ կուգայ և թեթև ուրախութիւն մ'անելով կը մեկնեն խնամիները. (օղին կը հա-զացուի տղայի հօրից, իսկ կերակուրը՝ աղջկայ տան կողմից)։

Դ. հաց կիսելը եւ ա. խալանը. Մի քանի օրից յե-տոյ, տղայի հայրը լուր բարեկամներն ու ազգականները հրա-ւիրելով դէջ ա- ղա-նոյալ կերթայ իւր խնամու տուն՝ հաց կիսելու. խնամու տունը ուրախութիւն անելուց յետոյ, երբ հացկերոյթը կը վերջանայ, քահանան հարսի նշանը կօրհնէ. աղօթքի ժամանակ խնամիները դլխաբաց, մէկ կամ երկու լա-

*) Քրդերէն այո, անել (ասել)։

ւաշ Հայ ծալած և բռնած ունին ձեռքերնրուն մէջ, երբ տէր-տէրը կը հարցնէ.

(Աղջկայ հօրը) «Դու քու աղջիկ տուէր եդա մարդու տղին».

—Հրամերես, կը պատասխանէ սա:

(Տղայի հօրը) «Դու լէ իդա մարդու աղջիկ սրտով ուզեցիր քու տղին». և երբ սա ևս «Հրամերես» ասեց, «Աստուած օրհնէ, շնաւոր (շնորհաւոր) էնէ» կը ձայնէ քահանան. «Աստուած շնաւոր էնէ» կը ձայնակցի ժողովուրդը: Իսկոյն խնամիները բռնած հացը «ՀՈՇԷՐՎ ԷՐԷՆ», որից մի մասը կուղարկեն փեսային և միւս մասը հարսին ուտելու համար:

Հանդիսականք զուարճութեան համար, հաց կիսելու ատեն խնամիներու գլուխները կը խփեն մէկմէկու:

Առանց մի որևէ սակարկութիւն տեղի ունենալու, տղայի հայրը կը վճարէ առաջին խալանը 5—7 ոսկի օսմանեան. աղջկայ հայրը վեհանձնութեամբ կը վերցնէ և բազմականք կը ցրուեն:

Ե. Ճեաճտուէ եւ երես դնելը. Նշանտուէքի երթը կամ տղամարդիկ միայն, կամ սոցանից յետոյ կանայք ևս առանձին կը կատարեն: Երթին կը մասնակցին ազգական, բարեկամ, դրացի և այլն. խումբը դէօլ ու զուռնայով կառաջնորդուի աղջկայ տունը, «ԷՂՆ ՈՐ-ՔՐԷԼ» կը պարզուին, գիւղական կերակուրներ առատ-առատ կը բերուեն մէջ տեղ, օղին կը խմեն, կերակուր կը վայելեն և կը զուարճանան. Հարսին դրուած առաջին «ՆՇՈՒ» վրայ կաւելացնեն մի քանի նոր զուգ ու զարդարանքներ, ոտնաման, ԼՈՄՊԷ (կարմրագոյն մետաքսէ ծածկոց գլխու) և այլն, այլ է «ՆՇՈՒՈՐ-ԷՀԷ», ապա մեծ ՀՈՒՓՈՒՆ մէջ տեղ կը դրուի և կնքաւորից սկսեալ բոլոր բազմականքը կարողութեան չափով անասուն, փող և այլն կը նուիրեն հարսին, սովորաբար գիւղի ՓԷՂԷՐԸ (տղամարդոց) կամ մի կին (կանանց համար) մէջ տեղ կուգան և ամէն մէկ նուիրելուն բարձրաձայն կը բռան.

«ԶԷՆ ՄՆԱ ՔՈՒՐ ՈՂԷ» (կնքաւորը) երինջ մ' եկաւ հարսի էրէ», Աստուած զուր (իւր) որդիք բաշխէ, բարով խէրով տես-

նայ ուրանց (որդոց) ՝ՀՈՆԱՀ ՈՒ ՝ՀՈՐՄԷՐԸ (պսակը), օր եղնի, ուր տղէկներուն եղնի. (այսպէս հանդէս և ուրախութիւն իւր որդոց համար լինի). շէն մնայ, շէն...»:

«Ձէն մնայ հօղբէր Բրսօն, ոչխար մ՝ եկաւ հոբոի երէս», (նոյն բարեմաղթութիւնքը կը կրկնուին), շէն մնայ, շէն»:

«Ձէն մնայ սանէր (սանհէր) Պետրոս, հոբէնի (կամ փոդի քանակութիւնը) մ՝ եկաւ և այլն և այլն:

Ամէն մէկ կանչելուն բոլոր բազմականքը կը ձայնակցին «շէն մնայ, շէն»: Վերջը գլիրը դարձեալ բարձրաձայն կը բօռայ, «շէն մնայ տուող՝ չտուող, գալացող, չգալացող, Աստուած ուրանց վատ օր չիտայ, օր եղնի՝ ուրանց տղէկներուն եղնի, 500 դուրուշ փարայ (փող). մէկ երինջ, չորս ոչխար... Հորթիկ եկաւ Հարսի երես, շէն մնան, շէն... շէն մնան, շէն, շէն մնան՝ շէն» ու կը կարէ զիւր ձայնը: Այսպէս բօռացողը կը կոչուի ՝ՀՈՆՉՅՈՂ, իսկ նուիրաբերութիւնը՝ երէս դնէլ:

Նշանօրհնելը և հաց կիսելը կը համարուի ՝Էս պոռչ, որ շատ անգամ միասին և սեղի կունենայ:

Զ. Նշանլիութեան ժամանակամիջոցը, խնամիներու յարաբերութիւնը. Նշանլիութեան ժամանակամիջոցը, բացի մի քանի սակաւ բացառիկ դէպքերից, մէկ տարուց աւելի չըտևեր. նշանդնելու օրից Հարսի լեզուն կը կապուի իւր սկեսրայրի տան ամէն մէկ մեծ ու փոքր անդամի ներկայութեանը, նաև սկեսրայրի, թաղեցոց և դրկեցներու առաջը. դաշտ ու դուրաններ չափող, բանջար քաղող, դաշտի մէջ ոչխար կթող և ազատութեամբ մեծացած ազատ որդի գեղջկուհին կը փակուի տան մէջ, և եռանդով իւր կար ու կութին *) նախշ ու նմուշին հետամուտ կը լինի. իւր հօր հետ միասին մանած կը ներկէ, բճեր կը գործէ, միզար կը նախշէ և իւր սկեսրայրի տան անդամներու թուոյն համեմատ մէկ-մէկ ձեռագործ կը պատրաստէ:

Տղայի տան պարտականութիւնն է ՝Նոռ-՝Հոպէոց տօներուն Հարսին ընծայ տանել (թամազի, ոտնաման մրգեղէնով միասին), և շաբաթուայ մէջ 1—2 անգամ ՝Հրոպ կամ Ճաշոց

*) Կութ կթնել կը նշանակէ թեթև կար կարել:

կերակուր ուղարկել (կարագ, սեր, մածուն, գաթայ և գիւղական ճաշ, փլաւ, տօլմա և այլն)։

Առհասարակ խնամի տներու յարաբերութիւնը շատ քաղցրը կը լինի սկզբները. նոքա շատ անգամ դաշտային աշխատութիւնները միասին կը կատարեն, մէկմէկու պակասութիւնները կը լրացնեն և այլն, զիջողութիւնը և զոհողութիւնը ի հարկէ տղայի տան կողմից կը լինի, որովհետև տղայի տան «հօր մօրուքը աղջկայ հօր ձեռքն է»։ Կանցնին օրեր, շաբաթներ և ամիսներ, Նշանածներ անհամբեր կսպասեն բախտաւորութեան օրուան-հարսանիքին, որ ընդհանրապէս տեղի կունենայ ծննդեան տօնից կամ առաջ կամ յետ և, մեծ մասամբ, բարեկենդանին։

Ի. Հատուկտուր եւ բ. կամ վերջին խալանը. Հարսանիքի օրերը երբ մօտենան, տղայի հայրը պարտաւոր է օր առաջ երթալ՝ իւր խնամին տեսնել, որ սա իւր աղջկայ ***** ***** (պատրաստութիւն տեսնել) և ժամանակին պատրաստ լինի։

Խեղճ գիւղացու հոգեքանդումն է, սիրտը դող կընկնայ, արդեօք քանի ոսկի և ճ՚ալ (փողի հետ տրուելիք մահուդ, շալ-գօտի, պայլտօ և այլ ընծաները) տալով պիտի կարողանայ գոհացնել իւր խնամին, պատրաստի դրամ չունի նա. ստիպուած է իւր լծան գոմշուկները կամ հեծկան ձիերը կամ կթան տաւարները ծախել կամ մէրէֆայ *) դառնալ և կամ ծանր տոկոսով (40—50%) դրամ վերցնել։ Ինչ կերպ էլ լինի և ինչքան ծանր նստի իւր վրայ՝ ճարահատեալ է դումար վերցնել, որովհետև «հարկ կայ երեսով»։

Կը հրաւիրուին դարձեալ տանու քահանան, ****** ***** և մի քանի բարեկամներ ու միասին կը ներկայանան խնամուն. սովորական հարց ու բարևից յետոյ, ատեանը բաց կանէ հետևեալ նախաբանով.

—Խնամի ջան, Աստուածային հրամանաւ և կանոնիւք սուրբ Հայրապետաց (երեսը կը խաչակնքէ) իմալ օր յԵւայ Ադա եղեր է, իմալ օր աշխարքի կարգ ու կանոնն է, դու

**) Տես երկրագործութեան մասին յօդուածը։

զքու աղջիկ տուեր ես իդա (այս) մարդու տղին, էդ լէ եկեր է օր ջբրէլ ֆեռնայ, հրամանք խտաս (տաս)՝ երթայ զուր սրպիսուԹեն տեսնայ, դու լէ զքում, օր էդ գործ յելնայ գլուխ։

— Ֆառայիմ քու սուրբ կարգին, աղէկ հրամանք կընիս, ես ինչ իմ ըսի, խնամին լէ խօ խամ (անփորձ) չէ, փառք Աստծու աղջիկ ու տղայ է կարգի, ջրէն ու կարդ գինայ, (խալանի մասին կը յիշեցնէ)։ Թըզ (թոզ) հանէ Ֆանք ինչ է բէրի, օր մենք լէ զմեր նստել կանելն յիմնանք (իմանալ)։

Տէրտէր.-Աստուած օրշնէ զիմ խնամին, (դառնալով իւր ընկերներուն) «օջախ չեղնի պուճախ» *), աղբէր, ըսած ին մեծորէք (մեծորայք), (դառնալով խնամուն). իշալայ (ինշալլահ, Աստուծով) քու օջխին դէմ էրող մարում (մահրում, զրկեալ) չերթայ, լէ (այլ) խնգիրք կէնինք, օր զքու միտք բայան (յայտնի) էնիս, ուզէ տեսնանք, դու ինչ կուզես, քու խնամին ինչ պիտի տայ։

Աղջ. հ.—Տէր-տէր, ֆառայիմ, իմն օր կայ՝ դէմ ու դրուստ է (ուղղախօս մարդ մ՝ եմ), իմ բօկ ֆարա չկայ (ելևէջ, աստիճան, փոսիկներ), ես խօսք չըմ կռնայ պահի, ես կուզեմ 30 դանայ ոսկի, (լիրայ օսմանեան) վեց ֆաղջ **) չուխա, երկու աջմու շալ, երեք թօփ (ծրար, պուրակ) հալպու (Հալէպ) մանասայ (բամբակէ գործուածք), երկու թօփ ֆէֆուգի (մետաքսէ գործուածք) երկու թօփ ֆոՒԸԽ (նոյնպէս մետաքսէ), ջուխտ մէ կոնդուրայ (կօշիկ), քահէլ ձի մէ (քեօհլան, նժոյգ), երեք աղաջ չուխա լէ ջոջ զոնքըջ փերթիկ (զոնքանջին տալիք ընծայ), սաքամ՝ (պայլտս) լէ ընձի թըզ բերէ ու Աստուած զուր բանյաջողէ։

Քաւոր ու ընկերակիցները.—եա՛, եա՛, եա՛, Աստուած խէր էնէ, աղբեր. ինչ կէնիս, խօ չըս թաՒլնի զհայն (տղայի հայրը)։

Ոդ. հայրը.—(խնամուն). աղբէր, ինչ կէնիս դու, տրլպիս (կաշխատիս) զիմ տՒուն աւրիս, հրմալ չեղնի՛ օր քու աղջիկ յեդայ իմ տուն կտոր մէ հաց ուտէ։

*) Ֆոզովրդ. առաջ՝—Տոհմիկ օջախի որդին, պուճախ (անկիւն) նրստող աղքատի, անտոհմիկի նման չլինիր։

**) Երբեմն ֆաղաջ կանգուն կը գործածուէր, և այդ (փայտ—աղաջ անուան գործածութիւնը մինչև հիմա կը մնայ։

Աղջ. Հայրը.—Յօրեն քու տուն կը քանդիմ, շատ բան իմ յուզի (ուզել), «զդէվէն (ուզտը) հեծեր իս՝ կուզէ կուզ կը փախնիս», տղայ կարգել հրմալ խօլայ է (դիւրին), չրգինայ օր ես խալան կառնիմ, յօր յաւալքէ քրզի ես բայան էրի (առաջուց յայտնեցի), օր իմ դուռ եկող՝ խալան կիտայ։

Տես զԹօրոյի տուն, զՊարտոյի տուն, իմալ ժաժ եկած են. դու լէ հրմալ, յօրին իմ աղջիկն է ընդոնց աղջիկներուց պակաս, թէ ես իմ ընդնցնէ այսախ (ցած)։

Տղ. Հայրը.—Բաշ թաջի ես (գլխու թաղ իս, տաճկ. խոսակցութեան ձև, որով գիմացին կը մեծարուի). ոն է քրզի, քու օջխին անուն դրի օր ես գնիմ, ես կրսիմ փշում է (փրշուր մի, քիչ) ֆոռ-ֆոռ էրէ (երկիւղած եղիր, զթացիր)։

Աղջկ. Հայրը.—Յէւել պակաս մ՝ ելթայ (աւելի, պակաս՝ մի՛ խօսիր).

Տղ. Հայրը.—Ի՞նչ կրսէ։

Աղջ. Հայրը.—Ի՞նչ կրսիմ, խալան տուր։

Տղ. Հայրը.—Զրմ կռնայ էդ խղար խալան տայ։

Աղջ. Հայրը.—Զրս կռնայ յորին եկար կանար իմ դուռս, ես լէ գիմ աղջիկ չրմ իտայ։

Տղ. Հայրը.—Խնամալեն ու ախրաբալքեն (յարութեան և վերջին ժամանակն) տուր։

Աղջ. Հայրը.—Խիամաթ վրը քու արևուն։

—Տօ ինչ կրսէ։

—Ի՞նչ կրսէ ինմալ է, խօ դու իմ հոդին չրսառնի՛.

—Յէլի կորի՛ իմ տնէն։

—Կելնամ երթամ. խա՛-հա՛-հա՛-հա՛. էլ աղջիկ կտրաւ աշխրքէն, սրբ Կարապետու գերեզման լէ գինայ՝ հա՛ վաղ իդա գահ (ժամանակ) կերթամ ուրիշ աղջիկ մէ կուզիմ։

Տէրտէրը կանգնած.—Վասն Աստծու սիրոյ, խաթրի համար եղնի, օրշնածներ, հրմլա մ՝էնէք, իդա էնելու բան է՝ օր դուք կէնիք, զձեր ձէն կտրէք, ամօթ է, խալղ լսին՝ ինչ կրսին, չէ՞ յրսօր կայ՝ վաղ լէ կայ, յերես յերսի կառնէ, էլման դուք գիրար կը տեսնէք։ Ըսած է, «յերես մէ կուու էրէք,

մէկ բարիշելու (հաշտուելու), չէ՞ Աւետրան կըսէ, Բ-ուլ-ուէ մը մէ՛ղանչէ։

Աղջակայ հայրը.—Տէր-տէր, ինամ էնիմ, էդ մարդ իմ Ըաբ-ուամբէ (ծուռ., ներհակ երակին) քիսուց (դպչեցուց)։

Տղի հայրը.—Տո՛ չէ՝ դու լէ զիմ հոգո- հոգէ հանեցիր, հա եկաւ հասաւ յոդա (մատով ցոյց տալով կոկորդը)։

Աղջկայ հայրը.—Չէ, տէրտէր, քաւոր, աղբերտան, Աւետարան կըսէ՝ Բաց ըռիմ մըչ ամաչիմ (բաց ասեմ՝ ոչ ամաչեմ) ես զիմ ըսածներ կառնիմ, թէ չիտայ՝ Ամուսած զուր բան յաջողէ, յուր վէր (որ վայրով, կողմով) եկեր է, թըղ դենի երթայ։

Տղայի հայրը կը կծկի մէկ կողմ, տէրտէր նորից ոտքի կելնէ. մէկ ձեռքով մէկ խնամին և մէկէլ ձեռքովը՝ միւսը կը բերէ իրարու մօտ, զօրով ձեռք ձեռքի կուտայ և, «Ես իմ կարգն առերիմ, յընկերիմ ձեր յոտք, խնդիրք կէնիմ իմ քահանայ հալալ, որ դուք բարիշիք, թըղ ձըր ձէն մարդ չըհասկանայ» ասելով իրը թէ կը հաշտեցնէ. բայց խնամիները կուռող դայլերու նման խոլոր կաչքին մըկմէկու։ «Պան (աղա) ես կը կտրեմ դիսալան (կորոշեմ), թըղ ետայ 25 ոսկի, երեք աղաջ չուխա, մէկ աջմու շալ, 2 թօփ մանասայ. մէկ թօփ իփակլի, 2 թօփ խլաթնի, ջուխտմէ կոնդուրայ, ձի—մի պէտք չէ,զոքնջ փիրթիկ լէ թըղ աղաջ ու կէս տայ, աղբէր, չէ՞ էդ մարդ լէ տանուտեղի տէր է, խեղճ է. սաքօ մ'լէ թըղ դերէ. ինչ օր մնաց պակաս բաշխէ մըղի ու իդա ջաղահաթին (տաճկ. ջէմայէթ, ժողով)։

Քաւորն ու ընկերակիցները.—Աղէկ է, աղէկ, մըր հոգու դէմն եղնի՝ շատ աղէկ է, օխուքով կտրեց տէրտէրը, հըմալ եղնի՝ օր «նա շիշ եանսրն, նա քապաղ» (տաճկ. առաջ, ոչ շամփուրը այրի , ոչ խորովածը)։

Վերջապէս համաձայնութիւնը կը կայանայ և տէրտէրը «պահպանիչ» ասելով գործը կը վերջացնէ, և խալաւը հոգոչորը կանէ։

Ու այժմ խնամին «ընդհուր և ընդջուր» անցած պէտք է համարել, կամ ինչպէս ժողովուրդը գիտէ ասել. «ծովն անցաւ», առաջ կը մնան միայն գետակներ և առուներ։ Վայր-

կենական փոփոխութեամբ խնամիները կը հաշտուին, փոքրիկ հացկերոյթ մի տեղի կունենայ, որուն կը նախագահէ տէրտէրը կթղան ձեռքին.

«Էհ, սիրելիք, ձեր բռնած գործ Աստուած օրշնէ, Աստուած ուր (հարսին) յոտնէն շատ խէր (բարիք)՝ Աստուած Սիմաւօն ծեր էնէ (ծերունի Սիմէօն)՝ Աստուած մէկ բարձի ծերացու, (Ամէն, ամէն, ամէն), կենդանութեն քաւոր աղա..... և, կը խմէ օղին։

Աղջկայ հայրը.—Օրշնեա ի տէր, ծառայիմ, (փաղաքշական ձևով) բեր զաջդի համբուրիմ. հեռստացուցի (բարկացուցի) զիմ տէրտէր։ Դառնալով խնամուն՝ խնամի, յընցանք դարձանք մեղայ (կարդա՛ մեղաք) Աստծու, մենք էլման մարդու բարեկամ ենք, մեր մէջ փշռում է (քիչ) զրցուք եղաւ. ամա դիր քու յոտաց տակ, խէր տեսնաս քու Բաղրէն (առևտուրիցդ), Աստուած ուր յոտնէն շատ խէր իտայ, (դառնալով Քաւոր աղին և ընկերներուն), կենդանութեն Քաւոր աղա..... աչք իք, գլուխ իք, յոնցի (այնտեղից) հարի յօդա վրը իմ գլխուն ու յերեսին իք եկի, կենդանութիւն և կը վայելէ օղին։

Տղի հայրը.—Օրշնեա ի տէր. խնամի, կենդանութեն, Քաւեր..... կենդանութեն, (ծանր հառաչելով), խնամի, Աստուած խանէն (տունը) օրհնէ, շէն պահէ, Աստուած մարդութենից պակաս չենէ, մենք լէ յընցանք դարձանք՝ մեղայ Աստուծու, աֆ էրէ (ներէ). կենդանութեն ջաղամաթիւն (ժողովին).,..

—Անուշ անմահութեն, կը պատասխանեն բաղմականքը (ամէն ՀԷՆԴԱՆՈՒԹԵՆ ԱՆՈՒՇ ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆ մի կը յաջորդէ)։

Նոյն բարեմաղթութիւնքը կանեն քաւորն ու ընկերները։ Խալանը կը վճարուի և խնամիները կը բաժնուին։

Խալանը կարելի է տալ նաև 5—10 օրից յետոյ, մանաւանդ ճաշէրը, որոնք ընտկանաբար պատրաստ չեն գտնուիր, և պէտք է տեսակը և քանակութիւնը գիտնալուց յետոյ քաղաքներից գնել։

Հարսի ջհէզը (օժիտ, բաժինք).—Մէկ երկու շաբաթ յետոյ աղջկայ հայրը կը գտնուի մօտակայ քաղաքը, ուր, պէտք

է խոստովանել, որ առաջ խալանի մեծ մասը, երբեմն նաև ամբողջ խալանը, կը ծախսէ յօգուտ իւր աղջկայ օժիտին. նա պարտաւոր է առնել.

ա. Անկողին եւ հանդերձ

1 եօրղան (վերմակ), 1 դօշակ և 1—2 բարձ, որ շատ անգամ հարուստները մետաքսեղէնով կ'երեսեն	200— 300	դրշ
1 ճերմակ շապիկ	15— 20	»
1 կարմիր » » »	20— 30	»
1 մանասայ անթարի (կապայ)	30— 35	»
1 իփաքլի » » »	35— 40	»
1 խուրթնի » » »	60— 70	»
1 դալմա	130— 140	»
1 չուխայ միզար	40— 50	»
1—2 թամազի հատը 20—25 դրշ. . . .	40— 50	»
	570—735	

բ. զուգ

մէկ զոյգ ապաբանջան	200—300	
1 բուղմաճուկ	30— 40	
1 թաս (գլխու)	40— 50	
1 զոյգ գիլբաղի (գիլֆ, խոպոպիկ) որու ծայրերը 5 դահեկան արժողութ. ոսկիներ կը կախուին.	50— 70	
1 զոյգ շոռնէ (կրծկալի այս ու այն կողմը կարելու զուգս	200—300	դրուշ
1 քամար	400—500	*)
	1490—1995	դրուշ

Մօտ 20 օսմանեան լիրա, որ այժմեան ֆինանսական կարժէ 172 ռուբլի ռուսական փող, (լիրան 8 ռ. 60 կոպէկ):

Նայելով վիճակի և կարողութեան, նիւթի ընտրութեան, բաժինքի քանակութեան, զուգս ու զարդարանքի նորաձևութեան և արծաթի յարգին՝ ջհէզի գները կարող են վերևի ցուցակից շատ բարձր և շատ ցած լինել:

Ձենք հաշուեր խալանի հետ առնուած մի քանի նիւթեր ևս, որոնցից նոյնպէս մէկ երկու ՝ՈՆԼԱՐԻՆԷՐ կը պատրաստուին

*) Երբեմն մէկ ֆամբրը մինչև 1000 դուրուշ ևս կարժէր, արծաթի մաքրութեան և խոշորութեանը համար, որովհետև երբեմն արծաթը մաքուր լինելով 1 գրամը (1/400 մասը հօխայի) կարժէր 2½—3 ղուրուշ, իսկ այժմ 1½—2 դուրուշ.

աղջկայ համար, իսկ մնացածը, ինչպէս սովորութիւն է, կը բաժանուեն տան կանանց վրայ։ Ընտանեկան կռիւներ յարուցած ժամանակ «տէգեր Վանայք» որքան աղմուկ կը հանեն մէկ մէկու «երես տալով»,—աղջիկ մէ կարդեցիր ինչ հասաւ ընձի։

Ը. Տաշտադրոնի.—մի ժամանակ սովորութիւն կար, որ համայնքը «տղայ կարդողին» օգնելու համար, իւղ, պանիր և այլն կը նուիրեր։ Համայնքի նուէրները ընդունելու համար տան մէջ կը դրուէին կարգով մեծ ու փոքր ՊՈՇՈԷՐ, իւղ, պանիր և այլն տեղաւորելու համար, այդ կը կոչուէր ՊՈՇՈ-ԴՐՈՒ, որու անունը մնացեր է, բայց սովորութիւնը վերջացեր։

Թ. Բարաբու *) և Հարսնածի. Երբ տղայի հայրը իմացաւ, որ իւր հարսի «ոտք ու ձեռքը տեսնուած է», պատրաստութիւն կը տեսնէ երթալու և «առօք փառօք» իւր հարսը բերելու։ Երթալուց մէկ երկու օր առաջ 1—3 ոչխար, երբեմն ևս եզ՝ կամ կով մի կուղարկուի աղջկայ հօր տունը, որպէսզի կերակուր պատրաստուի երթացող հարսնածի համար (ԲԱՐԱԲՈ)։

Եթէ հարսը ուրիշ գիւղից պէտք է բերել, տղայի հայրը կը հրաւիրէ իւր ՓԷՈՈՅ—ՈՐԴՈ- միջոցով՝ ԸՈՔՔՔԷ (հրաւէրի) անունով ազգականներ, բարեկամներ, դրացի և գիւղացի, թուով 50—60 ձիաւոր, որոնք զուգուած զարդարուած, զինուորուած, դհոլ ու զուռնայով կելնեն ճանապարհ դէպի խնամու գիւղը։ Հրաւիրուածները կը կոչուին Հարսնածի. Հարսնածի մեկնելուց առաջ մի պատգամաւոր կուղարկուի խնամու տուն լուր տալու, այդ պատգամաւորը կը կոչուի ՊՂՈ-Է։ Աղուէս աղբօր պաշտօնը խիստ վտանգաւոր է, երբ խնամու գիւղին կը մօտենայ, չարաճճի երեխայք և երիտասարդներն անդամ կընդառաջեն և փառաւորապէս կը դնդսեն. քար ու կոշտով, ցանով ու թրիքով և չէմ կտորներով կուտան հա՛ կուտան խեղճ աղուէսի գլխուն, մինչև որ մի կերպ կազատուի և խնամու տուն ապաստանելով կստանայ իւր ԲԱՇԽԵՇԸ 2—3 ղուրուշ կամ մի ոչոգ դուլբայ։

Հարսնածի երթը.—Բոլորն ընտրածուրիկ (ընտրեայ) թոռը

*) (քրդ.) Հրուի ՊՊՊՇ դրկելու իբր ընծայ, փեշքէշ։

ու գեղեցիկ երիտասարդներ են, քրդական շորեր հագած, ծոպերով փուշիք (սև փաթթան գլխու) սրածայր և պոռ՝ (ծայրը վոս) դրֆթիկ քօլօսներ ու կամ բազմերանգ նախշուած արախչիններու շուրջը փաթաթած, պեխերը սրած, ընտիր ձիերու վրայ հեծած, ձեռքերնին երկայն և հաստ փայտեր՝ և ոմանց՝ նաև զէնքեր առած, երգելով քրդական ջէնէր, ձիարշաւով և ջրինդով առաջ կերթան։ Ահա և մի խումբ ձիաւորներու՝ որ աղջկայ գիւղի կողմից կը դիմաւորէ հարսնածին, ջրինդով (մականախաղ) մրցութիւնը կսկսի, մէկն իւր ձին, միւսն իւր ձեռքի ոյժը կը փորձէ, մական կը ձգեն, հարուած կուտան, կերգեն, կը բօռան և հարահրոցով կը մօտենան գիւղին. բայց վերջին խմբի նպատակն է հարսնածից «ջէ» փախցնել, որ եթէ յաջողուի իրենց, հարսնածի համար մեծ անպատուութիւն կը համարուի։ Ջրինդի իրարանցման միջոցին դիմաւորող խմբից մէկը հարսնածի անդամներից մէկի քօլօսը առնելով կը փախչի, բոլոր ձիաւորները կընկնին յետևից, կողմնակիցները կը քաջալերեն, հակառակորդները կը հալածեն մինչև գիւղը, եթէ բռնել աջողեցան՝ լաւ կը դնդսեն, իսկ եթէ ոչ՝ կորագլուխ կը լինեն, և 10—20 դուրուշ տալով քօլօսը յետ կառնեն։

Երբ քօլօս փախցնել տեղի չունենայ, ձիաւորները խաղը շարունակելով և իբրև ախոյաններ մրցելով կամաց կամաց կը մօտենան գիւղին. գիւղի առաջ ջրինդի եղանակը զուռնաճին կը փոխէ մի տեսակ «ոյնէրգէ՝ որ բաւական սրտառուչ է. և երբ կը մտնեն գիւղը, խնամու բարեկամները, ազգականները և դրացիները, ընդունուած սովորութեան համաձայն, կընդառաջեն հարսնածին և իւրաքանչիւրը 1—2 ձիաւոր կը հրաւիրէ իւր տունը ու հանդէսը կը վերջանայ։ Խնամու տունը կիջևանեն հարսի սկեսրայրը ու քաւորը իւրեանց պարագաներով և «հոչէչի» ու «զուռնաճի»։

Տղայի հօր իւր հետ տարած պատրաստութիւնքն են՝ 1—2 խորվու *), մէկից երկու եզան բեռ (չորս հակ) դաթայ, մէկ բեռ հալվայ, 3—4 լիդր օղի, մի քանի ոսկիներ՝ «նեղ տեղայ

*) Ուխտար մի ամբողջովին եփուած և լաւ կարմրացուցած։

համար» ինչպէս կանեն գիւղացիք և մէկ երկու ձմէ, որոնք, ինչպէս պիտի տեսնենք, Ներ Սէրէ պիտի ազատեն խեղճ խնամին։

Ժ. Հրաւէր, դամ եւ ճաշկերոյթ. Երեկոյեան խնամիներու կողմից մէկ մէկ մարդ կուղարկուեն Հարսնածի մարդիկը Հրաւիրելու աղջկայ հօր տունը, եթէ պատուաւոր մարդիկ կը գըտնուեն՝ Հրաւէրը կը կատարուի դհոլ ու զուռնայով. զուռնաճին Մէղէրա նման ծանր ու բարակ եղանակով, մեծ և պատուաւոր Հարսնածի դուռը կանգնած՝ մօտիկ կէս ժամ զուռնան կերգէ և առջևը ընկած կը բերէ խնամու տունը. այդ երգեցողութիւնը կը կոչուի դամ անել։

Թէ հոգու Հաց տալու և թէ Հարսանիք անելու համար, երբ ճաշկերոյթ կը լինի, միակերպ կը նստին գիւղացիք և, պատրաստութիւնն ևս համարեա միևնոյնն է. նոյն հարիսան, նոյն Հացը, նոյն սեղան սուֆրէն. տարբերութիւնը միայն օղիի և Հոգեկան տրտում կամ ուրախ տրամադրութեան և դէմքի արտայայտութեան մէջ է։ Սրածայր խուրայով տան մէջ երկու կարգ և բոլորակի կը նստեն. մէջ տեղը փողանաձև բաց թողնելով նստարանի տեղ կը ծառայեն թաղիք, կապերտ՝ երկար ծալուած, եղէգնի և խոտի խուրձեր, ցանկոշտ, աթոռ, զմբել և այլն. փողանի մէջ կը դրուեն գիւղական կլոր և երկփեղկ փայտէ սեղաններ, և ինչ որ պակաս մնաց, կապերտի կտորներ, Բէբի Ֆիլարներ և այլն և այլն. դեռ «Հաց չքաշած» միքանի մարդիկ օղիով լիք մէկ մէկ քասայ ձեռքերնին առած՝ կը պտտեն բազմականաց առջևով և փոքրիկ կթղաներով կը հրամայեն խմիչքը. խմողները կասեն. «Կենդանութիւն, Աստուած շնաւոր էնէ, Աստուած բարի վայելում տայ»։

—Անուշ անմահութեն, անո՛ւշ եղնի, անո՛ւշ կը պատասխանեն օղի ցրուողները։

Մէկը կը խօսայ, միւսը կերգէ, ուրիշ մի բարեմաղթութիւններ կանէ, զուռնան կը վզվզացնէ, դհոլը կը գմփռտայ և, Հարահրոցն ու աղաղակը «տունը կը վերցնէ ու կը դնէ», մէկ խօսքով «շունը զտէր չճանչնայ». օղին խմելուց յետոյ՝ որ շատ երկար չտևեր, կուգայ «Հարիսէն և կը կտրէ զխսէն»

(խօսք ու զրոյցք). այդ կերպ ուտել խմելուց յետոյ կը հաւաքուեն մի մեծ ախոռ և, կին, մարդ, տղայ, աղջիկ, հարսնած, խնամի, հայր, քիւրդ, ամբողջ գիւղի մեծ ու փոքրը, առանց հրաւիրանաց, միասին պար բռնած կը խաղան (գհօլ ու զուռնայով) համարեա մինչև առաւօտ:

Այդ գիշերն է որ հարսնածը հիւրասիրող տանտէրերը մեծ զգուշութիւն կը բանեցնեն, որ թշնամի մարդիկ հարսնածի ձիերու պոչերը չկտրեն, որ մեծ անպատուութիւն և անարգանք է, և ինչպէս շատ անգամ պատահեր է, այդ կերպ անարգուած անձինք սրտի կսկիծէն մեռեր են:

ԺԸ. Ծաղկոց. հաւսի գովք եւ հիբադրէք. Հարսնածի դալու հետ՝ համարեա միաժամանակ կը հրաւիրուին հարսի ընկերուհիները, բարեկամներու և ազգականներու աղջիկները, որոնք մի գիւղական ոչ առանձնացած՝ կսկսեն խօսել, պարել և խաղալ ու նորա վերջին տխուր բոպէները սփոփել, քանզի չգիտեմ սուտն ու զորդը, ըստ երևոյթին հարսնացու աղջիկները շատ տխուր կերպարանք ցոյց կուտան և միշտ կուլան հայրենի օջախից բաժանուելու համար: Մտնենք ծաղկոցը. ահա հարսը գլխաբաց նստած է ընկերուհիներու մէջ տեղը. նոցանից ամենաքաղցր ձայն ունեցողը ծնկան եկած է հարսի ետևը, նորա ծամերը մէկ-մէկ կը հիւսէ (հիւսել) և մորմոք ձայնով կերգէ.

Ա.

Զէմքիկ մի ժաժա,
Ես եմ ժաժալու.
Տախտիկ, մի թնդա,
Ես եմ թնդալու.
Հողիկ, մի սուա,
Ես եմ սուալու.
Ծառուկ, մի դողա,
Ես եմ դողալու.
Տերև, մի թափի,
Ես եմ թափելու.
Արև մի պատի,
Ես եմ պատելու.

Լուսին, մի պատի,
Ես եմ պատելու.
Աստղեր մի ցոլաք,
Ես եմ ցոլալու.
Կռունկ, մի կռա,
Ես եմ կռալու...

Բ.

Զհէրիկ խաբեցին կուռէ մէ գինով,
Զմէրիկ խաբեցին թօփիկ մէ շիլով.
Զաղբէր խաբեցին ջուխտակ մէ ջզմով,
Զքուրիկ խաբեցին մատիկ մէ հինով.
Զղրամի հանդուրց արձրկեցին՝
Զաղջիկ մամուց ջոկեցին։
Մէրիկ, մի աւլի դտախտիկ,
Որ չաւրի քու աղջկայ հետիկ,
Թրդ մնայ քի նմուշիկ,
Որ հանիս քու սրտի հասրաթիկ։
Զչամիչ մաղով մաղեցին,
Աղջկայ ջէրեր լցեցին,
Զղարիբ ճամբայ դրեցին։

Հարսի դովքը վերջանալուց յետոյ, կը զարդարեն և ընկերուհիներով միասին կը տանեն պարելու։ Պարը դեռ չվերջացած հարսը կը մեկնի իւր ծաղիոցը, ուր մի կին հիւսոյով լիք քասէն ձեռքին կը մտնէ և, նախ հարսին, ապա ընկերուհիներու ձեռքերը կը հիւսէ, յետոյ մէկ առ մէկ կայցելէ բոլոր հարսնածի մարդոց և, ստանալով $^1/_2$—1 ղուրուշ, բոլորի ձեռքերը հինա կը քսէ։

ԺԲ. հարսի հրաւէրը, ուսահախին.—Դեռ լուս չլուսացած՝ հարսը կը տանին իւր ռ—ոոոյի (վարպետի) տունը. և երբ մէկ կողմից հարսնածը սովորական դոմ ու զուռնայով կը հրաւիրուի խնամատունը, քաւորն ևս կերթայ հարսը հրաւիրելու վարպետի տնից. այնտեղ պարտաւոր է վճարել իբր ռ—ոոոա-հախի (վարձք վարպետութեան) գլուխ հոպէլէն և շորեր հագցնելէն ջոկ, 20—30 ղուրուշ, և ապա ինքն հարսի առաջ և

գհոլ ու զուռնան սորա առաջ ընկած՝ փառաւորապէս կուգան խնամու տունը։

ԺԹ. հալաւ orհնէէ,հացկերոյթ, բեռ քանդելէն, աղբր զօտին եւ վերջին հրաժեշտը.—Ամբողջ գիշերը, խնամու թոնդրի մէջ հարիսի կարասը կրփթփթայ ու կը ճթճթայ, առաւօտեան հետ հարիսէն պատրաստ է արդէն. ինչպէս երեկոյեան այժմ եւս բազմականքը նոյն կարգ ու կանոնովը նստած են, թեթեւ օղեխումից զկնի կը վայելեն ճաշը, ճաշէն յետոյ (տղայի հայրը) խնամուց 5—10 դարուշ տուրք առնելով՝ (բեռ-քանդելէն անունով) հալվայ-զաթայի եւ խորովուի բեռները կը քանդեն. միսը ճղճղնած, զաթան ու հալվան կտոր կտոր արած եւ մաղերու մէջ ածած կը բերեն եւ հեռուէն կը նետեն բազմականաց, որոնք հապճեպով կը վերցնեն ու ագահաբար կուտեն. սորանէց յետոյ հարսի զուգմ ու գլխու կապոցները մաղի մէջ դրած տէրտէրի առաջ կը հանեն, որ օրհնելով (հալաւ-օրհնէք) իւր վարձքը կստանայ եւ ամէն բան կը վերջանայ։

Ջուտով հարսը հագած ու խփած, կարմիր քօղը մինչեւ գօտեկապ երկարութեամբ երեսին ձգած կուգայ մէջ տեղը, ուր բարձրաձայն կուլայ ու կը հեկեկայ. հարսի մայրը, քոյրերը, եւ ընկերուհիները նոյնպէս կուլան ու զուռնաճին մորմոքիչ եղանակով կը բորբոքէ տխուր սրտերը։ Կեսրայրը կը մօտենայ իւր խնամուն եւ ձեռքը համբուրելով կը խնդրէ նորա հայրական օրհնութիւնը աղջիկ ու տղայի բաղդաւորութեան մասին. հայրը լալով կօրհնէ ու կը համբուրէ իւր խնամու երեսը. մէկ երկու խօսք, մի քանի զրոյց ու բարեմաղթութիւնք եւս, ու ահա զուռնաճին հրաժեշտի եղանակը կը հնչեցնէ, հարսը կը մեկնի հայրենական օջախից, եւ մինչ սկեսրայրը դրսու դռան շէմը կը փոխէ՝ հարսի եղբայրներից մէկը դռան կշտին կանգնած ձեռք կը ձգէ խնամու օձիքը եւ կը պահանջէ ԱՂԲՈՐ ԳՕՄԷ, որ ընդունուած սովորութեան համաձայն անպատճառ կը տրուի *) ու հարսնածը կընկնայ ճանապարհ։

*) Ընդելով Չատուկտուրի օրը ամէն հաշիւ ու պահանջ վերջնականապէս կորոշուի, բայց ուխտագրուած խնամիները երբեմն նոր խալ (3—4 ոսկի) եւ ճակեր կը պահանջեն. տղայոց հայրերն եւս խնամիներու ագահու-

Մեկնելուց առաջ սովորութիւն ունին գողանալ խնամու տանից գդալներ, բայց առանձինն խո՜փ մէ (ամանի բերան ծածկոցը) որպէս զի Հարսը Բերան խո՜փ (շատ չխօսեցող) լինի։

Երբ Հարսնածը գիւղին կը մօտենայ, ամբողջ գիւղացիք մեծ ու փոքր, գլուխնին տնկած կը թափուին տանիքները. դարձեալ նոյն ձիարշաւ, նոյն ուրախութիւնն ու Հարահրոցը և յաղթական Հպարտութեամբ կը մտնին գիւղը, իսկ Հարսը կիջևանի իւր քաւորոջ տունը, ուր սէտք է մնայ մինչև պըսակի օրը։ Հարսի Հետ իւր ազգականներից մէկը կընկերանայ մինչև սկեսրանց գիւղը, և կը կոչուի Հարսաղբէր։

ԺԴ. Ազպալուացք, ազապ չարիներ, նուրա, պսակ եւ բուր պաստրասելը։ Հարսնածի ճանապարհ ելնելուց անմիջապէս յետոյ, երբեմն և առաջ, փեսայի ընկերակիցներու շապիկները կը Հաւաքեն յատուկ Հրաւիրակներու ձեռքով փեսայի տունը՝ լուանալու Համար, որ կը կոչուի աղպալուայ. այդ նըշան է որ շապկատէծ երիտասարդները կը Հրաւիրուին լինել աղապ-չարի (ամուրի զօրքեր) փեսային. երկրորդ օրը նոքա արդէն Հաւաքուած կը լինեն. իսկ բարեկամաց կանայք և աղջիկները Հրաւիրելու Համար փեսայի տնից մի աղջիկ ձեռքը մէկ-մէկ աման կերակուր դրած, բարեկամներուն կը տանէ և կը Հրաւիրէ Հարսանիքին. Հրաւիրակ կինը իւրաքանչիւր տնից կստանայ մէկ-մէկ թաշկինակ, կամ Եաղմա իրը ընծայ։

թիւնը պատժելու Համար, ինչպէս որ իսկապէս պատահած է, մեկնած միջոցին դռան դրած շան չալմաններու մէջ ևս փող կը ձգեն։

Զատ խալան առնելը մեծ պարծանք կը Համարեն, մանաւանդ աղջիկները խիստ կը Հպարտանան երբ մեծ խալանով կարգուին։ Կը պատմեն որ երբ Կ. գիւղից մի աղջիկ կը տանեն եղեր ուրիշ գաւառ, ճանապարհին Հարսնածը Արածանի գետին մօտեցած ժամանակ, մէկզմէկ կզգուշացնեն որ չլինի թէ Հարսը ընկնայ ջրի մէջ, Հարսի սկեսրայրը կատակ անելով կասէ. „Վնաս չուն՝ եթէ Հարսը գնայ ջրի Հետ, շատ խալան ենք տուած,,։ Սա իսկոյն ձիու գլուխը դարձնելով վազ կուտայ դէպի Հօր տունը. Հարսնածը թէև կը Հետապնդի՝ բայց չկարողանար Հասնել։ Երբ աղջկայ Հայրը զարմանալով իւր որդու արտասովոր արարմունքի վրայ կը Հարցնէ պատճառը. „Ձէ, Հայրիկ, կը պատասխանէ աղջիկը, մինչև որ 30 ոսկի նորից խալան չառնես, ես Հարսնութեան գնացողը չեմ“։ Որոշումը վճռական էր. 30 ոսկի վճարուեցաւ, կասեն, և ապա աղջիկը ընկաւ ճանապարհ։

Ազապչարիները ամենից առաջ հոգ կը տանին պատրաստել 1. Ռոշտ, (այս նուրձն է փայտի մի ծայրը ամրացուցած մի կլոր տախտակ, մի թիզ կամ թիզ ու կէս տրամագիծ ունենալու չափ մեծութեամբ. կլորակ տախտակի վրայ կամրացնեն չորս կամ հինգ փայտէ թռչնակներ, որոնք կը կոչուին կաքաւ կամ ըղ-ընիլ (աղաւնի), ըղենիկներու մէջ սեղը կը շարեն եռանկիւնի գոյնզգոյն մանաճով հիւսուած գեղեցիկ պսակներ, որոնց ծայրերը կեղծ (թղթէ) վարդեր կը շարեն, տախտակի մէջ տեղը ճիւղակ մի կը տնկուի՝ որու ծայրը մէկ ռոշտ կամ խոյոր կը ցցեն. պսակները տախտակի վրայ ամրացնող բարակ փայտերու ծայրերը եռացնելով նռնան կոթի վրայ կամրացնեն, որոնց վրայ մրգեղէնի շարան կը կախեն և գոյնզգոյն բրդերով կը զարդարեն։) 2. փեսայի գլուխը զարկելու պոռչ, (որ նոյնպէս եռանկիւնի ձեւով կը կազմեն գոյնզգոյն թելերից, իսկ ծայրը աքաղաղի երկու փետուր կամրացնեն, որ կը կոչուին ջղ *). 3. մի ռոշտ, որոյ հարկաւորութիւնը կը տեսնենք յետոյ։

Փեսայի հագուստը. – Ահա ձեզ մի երիտասարդ, որ հագած է ու խփած բոլորովին նոր հանդերձներով, գլուխը քըրդական սպիտակ քօլոս դրած, քօլոսի չորս կողմը կարմիր և մանիշակագոյն փուշիկներով փաթաթած, որու մէջ տեղը ճակատի կողմից վերոգրեալ պսակը տնկուած է, մէջքը պարսկական ընտիր շալ՝ մինչև ծծերը փռած և վրան ամրացուցած կեռ դաշոյն մի. հագին կամ լայն քանաքարոյ կամ քրդական նեղ շալը (լայն ու նեղ անդրավարտիքներ). իսկ ոտքերը կարմիր երկարափող ջրմա (մոյգ) կամ ղանդուրոյ (նոր ձևի կօշիկ), բոլոր հանդերձներու վրայ, թևերը կախ, ուսերովը ձգած է ֆարաջալի նման լայն ու երկայն չուխա դալման և, թագաւորավայել հպարտութեամբ կանգնած է ազապչարիներու մէջ տեղը։

Պսակի նախապատրաստութիւնը.—Պսակուելուց մի օր առաջ ազապչարիները փեսան կը լողացնեն. լողացնելու ժամանակ տակը մի խոյոր երիլ կը դնեն, որ չարքեր չվնասեն։

*) Ջղ բառը չգտնուեցաւ ոչ հայերէն և ոչ տաճկերէն բառարաններու մէջ, երևի ճիւ-ղ կամ ճիւ-ղ։ բառերու աղաւաղումն է։

Պսակի հանդիսականաց համար պատրաստելիք հարիսայի մէջ ձգելու համար երբ մի ոչխար մորթեն, փունջ մի մաղ կը պոկեն և կենդանու աչքեն մէջ ընդնիսելով երեք տեղով կը հանգուցեն ու ֆէչած ֆողէֆի մի հետ միասին կը յանձնեն փեսային՝ որպէս զի թշնամի մարդիկ փեսան չֆողէն (սեռական անկարողութիւն պատճառել)։

ԺԷ. պար, թագաւորագովք եւ բոսոն (պարտէզ) դնելը. —Պսակի նախընթաց երեկոյեան՝ նորից լայն ու երկայն ախոռը դատարկելով՝ գրեթէ գիւղի ամբողջ հասարակութիւնը հաւաքուելով, դէօլ ու զուռնայով կսկսին խաղալ (պարել)։ Երբ «պարը կը բոլորի», յանկարծ փեսան իւր ազապչարիներով, ձեռքերնին մէկ-մէկ վառուած մոմ բռնած ներս կը մտնեն, դռնէ դուռ անցած միջոցին, զինակիր ազապչարին «թուրը» դռան դրանդու մօտ բարձր բռնած կը ձայնէ՝ «թառ թագաւորին».—«Ա՜ստծու բարին թագաւորին» կը ձայնակցի ժողովուրդը։ Որովհետև այդ օրուայ պարի գլուխ կանգնելու (քրդ. գովընդքէշի) պատիւը փեսային կը պատկանի, փեսան խսկոյն պարի գլուխը անցած, ազապչարիներով բոլորուած, վեհանձնութեամբ կը շորշորայ ու կը խաղայ։ Հարսը նոյնպէս պարին կը մասնակցի, բայց փեսայից յետոյ կանանց շարքը բռնած ֆոֆոբ ասէնֆուռնէամբ կը խաղայ, մանաւանդ երբ, ինչպէս կը պատահի երբեմն, հարսնութեան քօղը վար կառնեն։

Պարը չըվերջացած՝ փեսան իւր ազապչարիներով կառանձնանայ մի տեղ, թագաւորագովքը սկսելու և բոսոնը դնելու։

Բոլորակի կը նստին ազապչարիները, մէջ տեղը բազմած աթոռի վրայ փեսան. կըհրաւիրուի «փեսայ գովացող» անձ մի, որ կանգնած փեսայի ետևը կամ կողքին, քաղցրաձայն կսկսի երգել.

«Թագաւոր բարով, հազար բարով,
Դու վարդ իս կանանչ տերևով.
Ստուած զէն քու արևն օրշնէ
Երկնուց գետնուց զօրութենով»։
«Թագաւոր բարով, հազար բարով,
Դու վարդ իս կանաչ տերևով,

Ճստուած զէն քու արևն օրշնէ,
Յերուսաղէմայ զօրութենով»։
«Թագուոր բարով, հազար բարով,
Դու վարդ ես կանաչ տերևով,
Ճստուած զէն քու արևն օրշնէ,
Էջմիածնայ զօրութենով»։
«Թագուոր բարով, հազար բարով,
Դու վարդ իս կանաչ տերևով,
Ճստուած զէն քու արևն օրշնէ,
Սրբ Կարապետու զօրութենով և այլն և այլն»։

—

«Մեր թագուորն էր աջ, խաչկոթ խաչ ու մաչ,
Բինիշն էր կարմիր, արևն էր կանաչ.
Մեր թագաւորն էր աջ, խաչկոթ խաչ ու մաչ,
Պսակն էր կարմիր, արևն էր կանանչ և այլն և այլն»։
«Կանչէք բերէք զթագուորահէր.
Որ կիգէր շորորն ի ծառին,
Ծնդրիկ զարկէր սուրբ սեղանին,
Խէրն ու բարին մեր թագուորին»։
«Կանչէք բերէք զթագուորամէր,
Որ կիգէր շորորն ի ծառին և այլն և այլն»։

Յորդորակ

«Մեր թագուորին ծաղիկ պիտէր ծաղկունաց.
Ծաղիկն էլ ընչենի պիտէր ծաղկունաց,
Ծաղիկն էլ [illegible] պիտէր ծաղկունաց,
Որ փթփթէր ճութն ու տերև հրտ իրաց,
Ջէն քաղինք բերինք թագուորին ծաղկունաց։
Մեր թագուորին ծաղիկ պիտէր ծաղկունաց.
Ծաղիկն էլ ընչենի պիտէր ծաղկունաց,
Ծաղիկն էլ նշենի պիտէր ծաղկունաց,
Որ փթփթէր և այլն.
Մեր թագուորին ծաղիկ պիտէր ծաղկունաց,
Ծաղիկն էլ ընչենի պիտէր ծաղկունաց,
Ծաղիկ թզենի պիտէր ծաղկունաց,
Որ փթփթէր և այլն։

Հետզհետէ կը յիշուին նռնենի, վարդենի, պալասոն (պալասան) և այլն և այլն։

Տարբեր եղանակով յորդորակ.

Էդ դիզան, բէդ բէդ դիզան, տեսէք էն ոՐն է,
Էդ դիզան բէդ բէդ դիզան՝ գեղի ռէսներն էն,
Կռնկներ կանչեն չօլէն, տեսէք էն ոՐն է,
Կռնկներ կանչեն չօլէն՝ սարկաւերդներն էն,
Էդ հաւքեր գիվրխալին տեսէք էն ոՐն է
Էդ հաւքեր գիվրխալին՝ էն աղջկներն էն,
Ճշնարօս գիվրխալին տեսէք էն ոՐն է,
Ճշնարօս գիվրխալին՝ էն հարսներն էն։
Զուն եկաւ պարկն ի բերան տեսէք էն ոՐն է,
Զուն եկաւ պարկն ի բերան գեղի գզիրն է.
Ցախաւել յետև գռան տեսէք էն որն է,
Ցախաւել յետև գռան՝ գզրի կնիկն է։

Գովքից յետոյ կը հրաւիրուի մի սափրիչ, որ կոկսի թագաւորի գլուխը ածու ածու սափրել և իւրաքանչիւր ածուն նուիրել ազապչարիներու անուան՝ ստանալով $^1/_4$—1 ղուրուշ վարձ. մէկը փողը կը հաւաքէ և կոկսի թագաւորի բօսոսանը խանչցնել. —«Զէն մնայ. . . ազապչարին» զթագաւորի բօստան կանչցուց՝ 10 փարայ ($^1/_4$ ղուրուշ) եկաւ թագաւորի յերես»։ Կանչցնելուց յետոյ՝ բոլորը միասին կը բօռան. Ա՜ստուած շնաւոր էնէ, Ստուած շնաւոր էնէ։

ԺԶ. Պսակ. Երբ լուր կը տրուի փեսային և իւր ընկերակցացը, թէ ամէն պատրաստութիւնք տեսնուած են և հարսը շուտով ճանապարհ կելնէ, ազապչարիք վերցնելով նուռ, թուր և այլն շրջապատած փեսայն՝ կընկնան ճանապարհ։ Մինչ սոքա կանգնած կսպասեն՝ ահա կանանց և աղջկանց խումբը հարսը մէջերնին առնելով միւս կողմից կերևան, վերջինները պէտք է այնպէս ճանապարհով մի դան՝ «որ ճամբէն ղճամբէն չիորէ», որպէսզի փեսան խոպ չեղնի, երբ խումբերը կը մօտենան միմեանց, կանայք հարսը կը վազեցնեն և սորա կուրծքը ուժով կը դրմփացնեն փեսայի պարիկին բարձրաձայն բօռալով. «Ա՜ստուած շնաւոր էնէ» (երեք անգամ)։ Թէ ժամ երթալու և թէ ժամից վերադառնալու ժամանակ, հարս ու փեսան

պինդ կպած կը պահեն մէկմէկու, որպէսզի թշնամի մարդիկ մէջ թեղուն անց ու դարձ չանեն և փեսան չխոցեն։

Փեսան գոտուց կը հանէ թաշկինակի մէջ դրած խնչորը և մինչև ժամու դուռը բռնած կը պահէ բերանի վրայ կամ քթի տակը. հարսի չորս կողմը շրջապատած քաւոր քոյրերը, սանամէրները, մօտիկ ազգականաց կանայքը զգուշութեամբ կը պահպանեն հարսը և ծանրաքայլ առաջ կերթան։ Փեսայի անմիջապէս երկու կողմերից, մէկդին ազապ չարիք՝ թրով և նռաճով զարդարուած, միւս կողմը աղջիկներ և մանկամարդ կանայք, փողանաձև երկարացած ծանր ծանր պարելով կառաջանան դէպի եկեղեցին. գիւղի ամբողջ հասարակութիւնը ներկայ է, զուռնան ուժով կը փչէ, դհոլը կը գմփռտայ, ինքը զուռնաճին կողմողի, աչքերը կը ծռմռէ, թշները կը փքեցնէ, ծունկ կը կոտրէ, յետ ու առաջ կերթայ ու դայ, աչքերով կը հսկէ աղջկանց խաղալուն և ԽԽՆՈՂԻ եղանակը սրտնեռանդն կեղանակէ։ Ցեսնելու է թէ ինչպէս փողանաձև կանգնած հասակաւորներու մէջ տեղը, փոքրիկ աղջիկները ձեռքերնուն թաշկինակները ծածանելով շաչան-խաչի թեթև խաղը շէնքով շնորհքով կը խաղան. կարմիր ԲԷՆԷՇ ուսերուն և խնձոր բերանին դրած թագաւորը, քթի տակէն կը նայէ հանդէսին և կը զուարճանայ հպարտութեամբ. թափորից դուրս, երեխայք երեսներին ալիւր քսած, տեսակ տեսակ ծամածռութիւն ու միմոսութիւններ անելով կը վազվզեն այս ու այն կողմը. փեսայի մերձաւորներից մէկը իշու վրայ հեծցնելով՝ պոչը կուտան ձեռքը ու չորս կողմից ձնթօփ և քարուկոշտեր կուտան հա՛ կուտան խեղճի գլխուն ու արևուն, բայց նա ոչոքի խՈՒՐՔԷՆ չդիպչի հասարակութեան զուարճութիւն պատճառելու համար։

Հանդէսը երբ կը մօտենայ ժամու դրան, ժամկոչը կը պահանջէ իւր ԴՈՆԷՊՈՒՏԸ (2—3 ղուրուշ) և զոյգը բազմութեան հետ կը մտնեն եկեղեցի։ Եկեղեցու մէջ փեսան չպէտք է երբէք ծիծաղի, որպէս զի ԱՅԾԵՐԸ ՊՏՈՒՈՒԽՆ. և երբ քահանան պսակի խորհուրդը կը կատարէ, զոյգը չոքած կը լինի, գլուխ գլխի տուած. այդ ժամանակ փեսան գող կատուի նման՝ ծածուկ, հարսի մատից մատանին կը հանէ և իւր մատը կանց-

կացնէ. աղօթքից յետոյ ով որ շուտ կարողացաւ կանգնել՝ իւր բոլոր կեանքի մէջ զուգակցին վրայ հզօր կը լինի։

Պսակելու վարձքը՝ որ կտրական 20 ղուրուշ է, քաւորը կը վճարէ, ազապչարիք նոյնպէս $2^1/_2$—3 ղուրուշ կուտան տիրացուին, թուրը սեղանից վերադարձնելու համար։

Պսակի խորհուրդը երբ վերջացաւ, քահանան կեղանակէ «Առաւօտ լուսոյն» և զուռնաճին եկեղեցու դռնից առնելով նոյն եղանակը՝ կը շարունակէ մի քիչ, ու յետոյ կը փոխէ դարձեալ Ռեխտաղի։

Փեսան այս կողմից փոխանակ խնձորին՝ Աւետարանը կը դնէ բերանին. դարձեալ նոյն հարահրոցն ու աղաղակը, նոյն Ռեխտաղն ու չաչան-խրզին, և այդ կերպ թափորը կը հասնի մինչև տան դուռը. ուր սկեսուրը չորս հատ լաւաշ (հաց) ձեռք առած՝ խաղալով կընդառաջէ նորազոյգ ամոլին ու հացերը խաչաձև կը ձգէ հարսի գլխուն։ Խեղկատակութիւն սիրողները կը վազեն և «կեսուրը կը հանեն կեսրայրի շալակը», ծափ կուտան և հարայ կը բռնան. իսկ երբ տան ցուիքին կը մօտենան որ ներս մտնեն, վերևից չամէչ ու ընկոյզ ղրուն դը ցգնեն հարս ու փեսի գլխուն։ Ներս մտնելով, քահանայի առաջնորդութեամբ զոյգը իւր շրջապատողներով միասին եօթ թուղթի բոլորը կը պտտէ և հանդէսը կը վերջանայ հարիսայ ուտելով։ Բայց հարսին ամենից առաջ մածուն կը կերցնեն, որ սորա նըման ողիսակ երբէ դուրս գայ. իսկ փեսան իւր ազապչարիներով առանձին կը ճաշեն. որոնք՝ հացկերոյթից յետոյ, (սկսեալ փեսայից) բռունցքի մէկ հարուածով իրենց ոյժը ցոյց կուտան մէկ մէկ ոսոյ կոխելով։ Երեկոյեան դարձեալ «լէն ու երկայն» ախուռը դատարկելով՝ դհոլ ու զուռնայով կսկսեն խաղալ ու պարել համարեա մինչև առաւօտ և հարսանիքը գրեթէ կը վերջանայ. թէև շատերը հներու եօթ օր ու եօթ գիշերը լրացնելու համար կը շարունակեն մինչև 2—3 օր գիշերով խաղալ և ուրախանալ։

ԺԷ. Նուռն կտրելը, փեսայի այցելութիւնը իւր աներոջ տան. փէշքէսը եւայլն։ Սովորութիւն կար հին ժամանակ եօթը, իսկ այժմ 2—3 օր յետոյ նուռը կտրէլ, այսինքն «պսակ

վերացուցանելոյ» կարգը կատարել. այդ 2—7 օրերու մէջ փեսան առանձին կապրի իւր ազապչարիներու՝ իսկ հարսը իւր հարսնուհիներու հետ։ Կը պատահի՝ որ անզուսպ փեսաները երբեմն ծածուկ գողանալու հարսներու մօտ, բայց արթուն հարսնքոյրերը կը հսկեն և դատարկ յետ կը դարձնեն։

Նուռ կտրելու համար կուգան քահանան, քաւորը և մէկ երկու բարեկամ, որոնք օղեխում և հացկերոյթ անելուց զկնի, քահանան խորքը կը կատարէ, բայց նախապէս զոյգ մի գուրբայ կը պահանջէ, որ հարսի ձեռքը խրէ ձեռքանոցի ձէնիշ-համար. յետոյ փեսան ազապչարիները առած այցելութեան կերթայ աներանց *). նոյն տեղ ևս օղեխում ու հացկերոյթ տեղի կունենայ, որից յետոյ փեսան կելնէ համբուրելու աներոջ ձեռքը և կը խնդրէ հրաման մեկնելու. իսկոյն աներանք սեղանի վրայ կը դնեն 3—4 արշին չուխա իրը այցելութեան փէշէշ, ոմանք (հարուստները) յէ մի նուիրելով կը պատուեն իրենց փեսան. փէշքէշը տանող էլ կը լինի չտանող էլ։

Փեսան վերադառնալով կարձակէ իւր ազապչարիները և կը մտնէ ննջասենեակը։

Բերանբացէք եւ ազպուրենի նշանը.—Առագաստ մրտնելու գիշերը հարսը չխօսար իւր փեսայի հետը մինչև որ մի փէշէշ չստանայ, որ կը կոչուի Բերանբացէք։ Մէկ երկու օր յետոյ կը հաւաքուեն կանայք տեսնելու հարսի երես ողիոյ-ընան—յոնոր-ընան—նշանը,—արեան բիծեր ճերմակ սաւանի վրայ։

Բարկինա (ըստ ոմանց Բարչինաճաչ).—Պսակից 10—20 օր յետոյ հարսի մայրը, քոյրերը և ուրիշ մերձաւոր ու ազգական բարեկամաց կանայքը կը հաւաքուին, հարսի ջհեզը հանդիսաւոր կերպով տանելու. եթէ գիւղից գիւղ կերթացուի, ջհեզը կը բառնան եզներու վրայ. գիւղի մէջ առհասարակ մարդիկ շալակելով կը փոխադրեն։ Խնամու տուն ջհեզ բերող կանայքը ուտել-խմելուց յետոյ **), ջհեզի կապոցը մէջ տեղ կուգայ, և մի կին առանձին առանձին կը վերցնէ նիւթերը և շեշտելով կը համարէ.

*) Եթէ աները համագիւղացի է։

**) Բուլանրխայ մէջ կանայք ոգելից ըմպելիք խմել երբէք սովոր չեն. բայց սովորութիւն է ամեն մէկ հացկերոյթին ասել ՀԷՐ-ՆԷՐ, ԽՄԷՔԷ։

Նախշուն գուրբաներ 40—50 զոյգ	120—150 ղրշ.
Տաս զոյգ սունապան, (զանգապան)	100—120 »
Քսան հատ արախչի	100—120 »
Վեց-եօթ մեզար (նախշուն)	120—140 »
10—15 սրտանոց	50— 45 »
Միզարի նախշուն թելեր 6—7	60— 70 »
10—15 [illegible] (ձիու պախսուրցի պարաններ).	20— 30 »
100-ից աւելի [illegible] (բեռ կարելու թելեր) .	? ? »
	570—705 »
Հաշուելով վերևը արդէն յիշուած հարսի հանդերձեղէնն ու զուգը՝ գումարով	1490—1995 »
Ընդհանուր ջհէզի բոլոր արժէքը կը լինի . .	2060—2700 »

Նշանտուէքի երէս դնելը— նման նորից մի լանգառի մէջ տեղ կը դնեն և ջհէզ բերող կանայքը կսկսին մէկ առ մէկ փող նուիրել հարսին. բարկենճակի, ինչպէս նաև նշանտուէքի փողերը կը պատկանեն հարսին. որ առանձին կը շահեցնէ «[illegible]» (սէրմայե, դրամագլուխ) անուանով, և շատ անգամ իւր զուգս ու զարդարանքները կը ծախէ առանձին սարմիան աւելացնելու համար:

Հարսի բերած վերոյիշեալ ջհէզից, գուրբաները, սունապանները և արախչիները կը բաժանուին ընտանիքի արական անդամոց, իսկ մեզարները, սրտանոցները և միզարի թելերը կանանց վրայ. լոխտակոթերը և լարանները ընդհանուրի գործածութեան կը յատկացուին:

ԺԸ. Դարձ.—Պսակուելուց 4—5 շաբաթ յետոյ սովորութիւն ունին հարսի հէրանք՝ վերադարձնել աղջիկը իրենց տունը, որ կը կոչուի [illegible]. դարձը կը կատարուի յատուկ հրաւիրակ կնոջ ձեռամբ: Մնալով 3—4 շաբաթ հէրանց տունը, վերադարձը նոյնպէս [illegible]ետայի տան կողմից գնացող հրաւիրակ կնոջ ձեռքով կը կատարուի, որովհետև հարսները մենակ երթևեկելու (նոյն իսկ գիւղի մէջ) ազատութիւն և սովորութիւն չունեն, մինչև որ «[illegible]» երեխան ծնեն, որ այնուհետև ազատաբար կերթան ու կուգան «[illegible]» տունը մինչև խորին ծերութեան հասակը:

—

Ամուսին ընտրելու ձգտումը նահապետական ժողովրդի մէջ աւելի բուռն ձևերով կարտայայտուի, որպա համար էլ կոպիտ միջոցներու կը դիմեն.—աղջիկ արևանդելու (փախցնել), որ մինչև օրս էլ գոյութիւն ունի և մեծ պարծանք ու քաջութիւն կը համարուի:

Առևանգութիւնը տեղի կունենայ գլխաւորաբար աղջիկ ու տղայի համաձայնութեամբ,—սիրահարութիւն, երկրորդ՝ երբ աղջիկ բոլորովին անհամաձայն է և առևանգութիւնը կը կատարուի բռնի, կոպիտ ուժի միջոցաւ. առևանգողները կաշխատեն շուտով աղջկայ կուսութիւնը խախտել, որպէսզի կամայ ակամայ աղջիկը հնազանդեցնեն:

Փախստական ապաստանարաններն են հայ ու քուրդ աղաներու տները և մեծ օջախները. նաև վանքերը, ուր մեծ պաշտպանութիւն ցոյց կը տրուի աղջիկ ու տղայի, ընծանելով կը պատուեն, պսակել կուտան իրենց կնքաւորութեամբ և ապահով միջոցներով կը վերադարձնեն փեսայի տունը: Եթէ ժամանակին իմացուի, աղջկայ ծնողքը, ազգականները ու մերձաւորները վրէժխնդիր հոգով կը հետապնդեն և շատ անգամ կամ աղջիկը կը վերադարձնեն կամ սպանութիւն և արնհեղութիւն տեղի կունենայ. իսկ երբ չաջողուի, վրէժլուծելը կը թողնեն ապագային, նման առևանգութեամբ տոհմային վրէժխնդրութեան յաղուրդը գոհացնելու:

Երկրորդ ձև ամուսնութիւնը կը կատարուի համարեա թէ ինքնայբ, որու պատկերը ցոյց տուինք «Հարսանիքի» մէջ, խալանի սակարկութիւնը, «աղջիկը թաշկինակ մ՚է, որ պէտք է ձգել ուզողի ձեռաց վրայ», և թէ՝ «խէր տեսնաս քու զազրից» (առևտուրից) խօսքերը ցոյց կուտան, որ վերջին ձև ամուսնութիւնն ևս վաճառում մի է:

Ամուսնութեան հասակը որոշուած չէ, կլիման կամ «հող ու ջուրը» պատանեկական արբունքի չափը ցոյց կուտան, պատանու ձգտումներն ու խլրտումները ծնողաց կիմացնեն որ ամուսնութեան ժամանակը մօտեցել է, և առհասարակ տղայք 15 իսկ աղջիկները 12-ից սկսած կը կարգեն (պսակել):

Օրօրոցի ամուսնութիւնը խիստ սակաւ կը պատահի, բայց

(5—6 ամաց) երեխայութեան ժամանակ կատարուած նշանագրութիւնը երբեմն տեղի կունենայ և պատահած դժտութեանց ու ամուսնացողներու անհամաձայնութեան համար հետզհետէ վերջանալու վրայ է։

Ճիւղահամարը որ կը կոչուի պոբ ու ջէղ հաշուի կառնեն եկեղեցու կանոնագրութեան համաձայն, բայց առաջնակարգ տները երբեմն օրէնքը ոտնակոխ կանեն և մինչև չորս աստիճանի հեռաւորութիւն ունեցող արենակից ազգականները կամուսնացնեն։

Ամուսին ընտրելու պարագային, ծագումը, դերքը և օջախի համապարուէնը (հաւասարութիւնը) ի նկատի կառնուի, խոնարհանը (տոհմիկ, օջախի որդի) խանդանի, հարուստը հարուստի և աղքատը աղքատի հետ կամուսնանայ։ Թէև օջախի տղան ստորին դասակարգի «խօրօտիկ» աղջիկը կառնէ, բայց օջախի սրածայր խուբան չըղիջանի աղջիկ տալու իրենից ցած աղքատի խրճթին. բացառութիւն կը պատահի միայն այն պարագային՝ երբ օջախի աղջիկը մինչանի, խեղանդամ, կաղ և այլն կը լինի։

Քիչ կը պատահի նոյնպէս որ այրին կոյսի հետ պսակուի ժողովուրդը կարծես այդ միաւորութեան անյարմարութիւնը կուզէ ցոյց տալ, երբ կուզէ հաւատացնել, թէ «այրին ու կոյսը որ պսակուին, օդ (հարբուխ) և հագի ցաւ կը տարածուի». բացի դրանից, եկեղեցին ևս արգելած է այդ կերպ ամուսնութիւնը և ժողովուրդը կամայ թէ ակամայ կը յարգէ իւր եկեղեցու օրէնքը. սորան ևս բացառութիւններ կան։

Երկրորդ ամուսին կառնուի այն պարագային միայն, երբ մէկ կինը չբեր (ամուլ) է, կամ անբժշկելի ցաւով վարակուած է (գոդութիւն, Տիրամօր եարա և այլն), կամ անբարոյական է։ Առաջին և երկրորդ պարագլուխներուն՝ երկու ամուսիններն ևս կը պահէ ու կը պահպանէ այրը, իսկ երրորդին՝ կարձակէ միայն անբարոյականը։

---

*) Այրիներու ամուսնութիւնը ոչ թէ եկեղեցին, այլ թունդրի վրայ կը կատարեն։

ՏՂԱՔԵՐՔ ԵՒ ԿՆՈՒՆՔ

Դաշտան կամ Ծաղիկը բուլանըխցոց լեզուով կը կոչուի Հալա։ Կանայք գիտեն որ Հալաւից յետոյ եթէ մերձաւորութիւն լինի արգասաւորութիւնը անխուսափելի է։

Երբ մանկամարդ կանայք չլղանան, տատմէր (գայեակ) վարպետները չարգասաւորողին բերանքվէր կը պարկեցնեն, նախ աջ ձեռքը և ձախ ոտքը, ապա ձախ ձեռքը և աջ ոտքը կը քաշեն, փորը և մէջքը կը շփեն բաւականին և մէկ կամ երկու Հաւկիթի միջուկ կածեն քամակի վրայ, սորա վրայ կաւելացնեն ֆէր կամ դարբնի ֆուրայի փոշի ու շորով կը կապեն։

Եթէ այս միջոցը չօգնեց, քանի մի տարի սպասելուց յետոյ, կիմացուի որ կինը ամուլ է, որ բուլանըխցոց բարբառով կը կոչուի չէբէր։

Չբեր կանայք նախատանքի չեն ենթարկուեր, ամլութիւնը, ինչպէս նաև ամէն բան, Աստծուն վերագրելով, նոցա վիճակը արգահատելի կը Համարեն և կարեկցութեամբ զանազան ճարեր կառաջարկեն։

ա) Եթէ կինը գեր է, նուռ կը խմցնեն որպէս զի արգանդի ճրագուն Հալի, վերջինս արգելք Համարելով արգասաւորութեան։

բ) Մանրաճ ֆոպոր կը կերցնեն.

գ) Հնդիկնգուլ ուտել կառաջարկեն.

դ) Հոյ ու պանիր կոչուած խառը կը գործածեն (ուտելով)։

ե) Երուսաղէմայ ֆոյոր *) կոչուած բուսական արմատը կը կերցնեն։

ը) Խուռնի, գլուխ օղի, ֆէր, ֆոպոյա Ղաղի մանրուն և ջաբարի ֆուր **) լոսելով և խառնելով իրարու, անլուայ կտաւի վրայ քաշած կը կապեն չբերի մէջքից։ Այս նիւթերէն մի քանիսը մածուցիկ լինելով ամուր կը կպչեն քամակին որ կը մնայ բաւական ժամանակ և քանդելով վերք կը բանան։

*) Թերևս ս. Գրոց մանրագորը։

**) Ջաբար կը նշանակէ ամանաբոյծ (բէյտար), և ջաբարի ֆուր անասնաբոյժներու գործածած ընտիր և առաջնակարգ կուպրը։

Երբ որ վերոգրեալ ճարերը չօգնեցին, քաւթառ պառաւները խորհուրդ կուտան Բաբէչ փոխէ, այլի մարդութիւնը (սերմ ունենալը) կասկածելի համարելով։

Իմանալու համար արդեօք կինն է չրեր, թէ մարդը ներքինի, նոր խեցեղէն ամանի մէջ ջոկ ջոկ ոսպ կը լցնեն, ապա ամուսինները մեզել կուտան և կը դնեն դիշեր դուրսը աստղերու տակ, ծիլ արձակող (բուսնող) ոսպը երկուքից որունն որ է, դրական պատասխան կուտայ և չարձակողը բացասական։

Մարդու համար նաև խորհուրդ կը տրուի սերմը թափել ջրի մէջ, եթէ ընկղմի՝ ներքինի չէ, նաև նոյն կերպ հաւկիթի դեղնուցի մէջ կառնեն և տաք տեղ կը պահեն, եթէ որդունք գոյացան մարդը Դամէր (քրդ. ոչ մարդ) չէ, այլ խկապէս կինն է չրերը։

Երբ մարդկային ոևէ հնարք չրերեց, կը դիմեն սուրբերուն և կուխտեն, որ եթէ զաւակ ունենան, նուիրեն մուրադատուր սրբուն։

Ժողովուրդի ասելով՝ կինը կը յղանայ և կը ծնի 9 ամսուայ 9 օրուայ և 9 փոխէ (րոպէի) մէջ. հաշուի սկիզբը կըսկսի արգասաւորութեան այն կէտից, երբ երեխան կսկսի խաղալ, որ 9 լուսնական Դոր ռ- փո-ղից *) յետոյ՝ կը ծնի։ Այս բնական ժամանակամիջոցից մէկ կան երկու օր առաջ եղած ծնունդը չապրիր և, կը կոչուի օրպաչաս **)։

Բուլանըխայ հայ իգական սեռը երկրագործութեան ծանր աշխատութեանց չմասնակցեր, օրինակ ցանքի, քաղի և այլն, թէև իւր բաժին ընկած աշխատութիւնն ևս քիչ չէ. այնպէս որ յղութեան ժամանակն էլ պարտաւորեալ է սովորական կերպով տանու ծառայութիւնները կատարել.—խմոր շաղել, հաց թխել, ոչխար կթել, կաթը շալաքով դաշտից բերել և այլն։

Շարքաշ կեանք վարելով դիւրութեամբ երեխայ կը ծնեն. պատահեր է որ նոյն իսկ աշխատութեան մէջ երեխան ծներ է առանց երկունքի ցաւ պատճառելու ծնողին։ Որովհետև ծնելու օրերը մօտեցած յղի ձիերը դիտմամբ հեծնելով կը շրը-

*) Լուսնի առաջին քառորդը կը կոչուի Դոր, իսկ վերջինը՝ փո-ղ։

**) Վիժածը կը կոչուի չշնոռ։ (անցուցած)։

ջեցնեն որ գիւրութեամբ ծնեն, այդ ժողովուրդը իւր փորձառութեամբը ստուգած լինելով, յղի կանանց աշխատութիւնը այնքան էլ երկիւղալի չեն համարեր, բացի ծանր առարկայ վերցնելուց։

Յղի կանանց մասին եղած հոգատարութիւնը.

ա) Հոգ կը տանեն որ երբ կինը «մտափոխ» լինի, նորա ցանկութեանը բաւականութիւն տան, որպէս զի երեխան չբնոյ (վիժել). գիւղացի կինը զարմանալի հակամտութիւն ցոյց կուտայ մտափոխութեան ժամանակ հող և հացի ԽԷՐԻ (թունդրի կողը մնացած հացի այրուածք) ուտելու, ապա բանջար. մրգեղէն և այլն։ Երբ մտափոխութիւնը չափազանց է, ինձոր մի շան լակամանի մէջ կը լուանան և առանց լմացնելու կուտան մտափոխին որ ուտէ։

բ) Մեծ հոգ կը տարուի որ յղի կինը չԼՊՂՈՒԽ։ Թպղոտութիւնը, պառաւներու ասելով, հետևեալ կերպով կառաջանայ։ Մի ուլունք կայ՝ որ կը կոչուի ԼՊՂԻ ՈՒԼՈՒՆՔ, երբ մէկը թշնամաբար այդ ուլունքը յղի կնոջ վրայ բռնած քամէ (հուպ տալ), կինը անպատճառ կը թպղոտի։

գ) Թպղոտած կինը յղի կնոջ վրայ եթէ շէնքայ (անցնել) վերջինս անպատճառ կը տկարանայ այդ ցաւով, և դաւակ չունենար, եթէ ունենայ էլ երկար չապրեր։

դ) Թպղոտած կինը երեք անդամ յղի անասունի փորոտակով պէտք է անցնի ու դառնայ, որպէս զի ցաւը անցնի կենդանուն։

ե) Միաժամանակ ծնող կամ ցնդնող տաւարի, շան, իշու և այլ ծնունդներու վրայով երեք անդամ շէնքալ կուտան, վերջինները թպղոտութիւնը վերցնելով կը տատկեն, իսկ կնոջ ծնունդը կապրի։

զ) Ուտելու նպատակով բերանը գորտ կամ ճնճղուկ առած՝ օձ երբ տեսնեն, իսկոյն կաղաղակեն՝ օձ, թող, օձ, թող, այս (այսինչ) կնոջ (անունը կուտան անպատճառ) թպղի դեղն է. առնելով գորտը կամ ճնճղուկը կը կարեն թպղոտածի գօտու վրայ կամ ծածուկ կը կերցնեն. օձու բերանը տեսած գորտը առնելով կը չորացնեն. ԷՕՀԸ դուքան (խանութ) պտտելով ԷՕՀԸԷ-

բոնգ ապրշում թել և մէկ ասեղ (եօթը թել և եօթն ասեղ) կը դարկեն գորտան մարմինը, յետոյ կուղարկեն վանքերը (այս ճարը գործածողը Մշոյ ս. Կարապետի վանքը ուղարկած էր) պատարագի առջև օրհնելու. ապա նորից եօթը խանութ պըտտելով եօթ կտոր պղպատ կը բերեն և օղ մի շինելով կը կախեն թպղոտածի պարանոցից, իսկ գորտը իւր վերոգրեալ սարքով բարձի մէջ կը պահեն:

Իսկ երեխան ծնած ժամանակ, կնոջ ծննդեան տեղը մի ոչխար կը մորթեն և երեխայի հետ հաւասար ծանրութեամբ մէջ կշռելով՝ մի կճուճի մէջ կածեն և կը հորեն ծննդեան տեղը:

Է) Եթէ այս միջոցները չօգնեցին, կինը ծնելուց յետոյ նորածին երեխայի ականջի բլթակը կը կտրեն և ծածուկ կը կերցնեն մօրը:

Ը) Երկու իրարու շատ մօտիկ խաչքարերու մէջից կանցկացնեն երեխան:

Թ) Այլազգի՝ Հասոյ, Ալոյ, Իսոյ, Ոլոյ... անուններով կը կնքեն երեխան: Այլազգիք ևս՝ միևնոյն նպատակով «Խաչոյ» անունը կը դնեն երեխայի վրայ:

Ժ) «Մնոց» անունը կը դնեն, որպէս զի ամէն մարդ մնա՛ց, մնա՛ց կանչելով երեխան մնայ=ապրի:

Ժա) Յղութեան ժամանակ կնոջ պատահելիք փորձանքներէն գլխաւորն է նաև՝ երեխայի ծոռ-ելը (իւր բնական դրքից խոտորուելը), որ եթէ վարպետներու ցոյց չտան, կը մեռնի երեխան և կը մեռցնէ նաև մայրը. այս պարագային փորձ վարպետ են հովիւները, որոնք ոչխարներու վրայ փորձեր անելով օրինակելի հմտութիւն կստանան:

Ժբ) Խորհուրդ կուտան յղիներուն, որ ճանապարհին պատահող երկու մարդոց մէջ տեղը չանցնեն, որպէս զի երեխան ծոռած չլինի: Կոխուածք եղած երեխան ևս երկար չապրեր, նիհարանալով և մաշուելով կերածը չկրնար մարսել և օր մի չէ օր մի անպատճառ կը մեռնի:

Ժգ) Գիտեն նաև որ յղութեան ժամանակ երեխան ինչ անձնաւորութեան դէմ խաղայ, նորա կերպարանքն ու բնաւո-

թութիւնը կատանայ, մանաւանդ կայծակ զարկելու ժամանակ։ Եթէ սրբու դէմ խաղայ՝ երեխայի մարմնու վրայ՝ խաչ կը նկարուի, եթէ քրդու դէմ խաղայ՝ վերջը կը տաճկանայ, եթէ իշու դեմ խաղայ՝ տխմար կլինի։ Սովորական խօսակցութեանց մէջ մէկի տխմարութիւնը ծաղրելու համար, կասեն «իշու դէմն է խաղցի»,—եթէ տգեղ լինի, կասեն այս ինչ տգեղ մարդու դէմն է խաղցի, և այլն։

Ծնունդ

Երբ կնոջ ծննդեան օրերը կը լրանան և երկունքի ժամանակը կը մօտենայ, կինը տքտքալով կանանց շրջանի մէջ կը յայտնէ՝ որ ինք ցաւ է. իսկոյն ոռոմէր (դայեակ) կը հրաւիրեն, որ առանձնացնելով կինը՝ շարունակ պտտել կուտայ, որովհետև նստիլը հեշտածնութեան վնասակար է։ Կը պատահի որ կինը մի քանի օրեր ցաւով կը տանջուի և դժուար «կաղատուի», այդպիսի պարագաներուն՝ երբեմն հրացան կարձակուէր երդիքից ներս. իսկ հիմա ողջախոհ ճանչցուած մարդու *) խոնջանը կը տանեն կնոջ վրայ. նաև քամակի կողմից կը շալակեն կինը և զգուշութեամբ կը շարժեն, այնուհետև ծոնի գեռին զարկած՝ կը ծնի երեխան։ Այս տանջանքները տեսնելով Աստուած, կը գթայ նորա դրութեան վրայ, և ինչ որ այս ծամին խնդրէ, լսելի է Աստծու։

Եթէ երեխան թմրած կամ կիսամեռ լինի, իսկոյն սառ ջրի մէջ կը դնեն և ոտքերու տակը կը տիտիեն (թեթև հարուածել), եթէ բոլորովին ընդարմացած լինի, երեխայի ընչերը՝ որ պորտի միջոցով կպած է փորին, կրակի մօտեցնելով կը տաքացնեն և շփելով պորտը տաքութիւնը կը տանեն դէպի մարմինը։

Իսկ եթէ առողջ ծնի, իսկոյն աչքերը կը շփեն, քթից կը փչեն որ օդը ներս վազէ, ապա տատամէրը առնելով մկրատ կամ դանակ մի չորս մատ երկայնութեամբ պորտը կը կտրէ, յե-

---

*) Այնպիսի մարդու՝ որու բարոյականութիւնը երբէք կասկածելի եղած չէ, և ինչպէս ժողովուրդը կասէ՝ „խոնջան վրը հարամի չէ արձակուած“, այսինքն իւր անկողնից զատ ուրիշը չէ գիտցած։

տոյ մնացածի ներքևը՝ փորի մակերևոյթի վրայ, մետաքսէ թելով կը կապէ, որ ինքն իրեն մաշուելով մէկ քանի օր յետոյ կը կտրուի, կտրելուց զկնի շորի կտոր այրելով կը դնեն պորտի արմատի վրայ՝ որ լաւ խարէ և վերքը առողջանայ *)։

Պորտն ու ընկերը հոգի տակ կը թաղեն, իսկ շատերը միայն պորտը չորացնելով կը պահեն որ չարչիներու (մանրավաճառ) տոպրակը ձգեն, որպէս զի երեխան հարուստ լինի. պատի գլուխ էս կը թաղուի, բայց չգիտցուեր ինչ նպատակով։

Եթէ՝ պորտ կտրող տատմէրը բարի բնաւորութեան տէր է, երեխան էս բարի կլինի, և ընդհակառակը, դորա համար երբ երեխայ մի չար լինի՝ պորտ կտրողին յիշոց կուտան։ Կը հաւատան որ պորտ կտրելու ժամանակ թէ լաց ու կոծ պատահի, երեխան անբախտ կը լինի։ Զարունակ ձախորդութեան հանդիպող մարդը սովորութիւն ունի ասելու «ինձ էնիմ իմ պորտն է հրմալ կտրուկ»։

Առհասարակ անդրանիկ ծնող կինը ոռնջոռ (խեթ) կունենայ. սանջուն կտրելու համար մայր և աղջիկ եօթն անդամ կը պտտեն ծննդականի բոլորը, յետոյ պարան մի փաթաթելով կնոջ բոլորտիքը, պտտող կինը մանգաղ մի կառնէ ձեռքը և սորա աղջիկը կը հարցնէ.

«Մամ՝, ինչ կէնիս».

—Տղացկանի սանջուն կը քաղիմ, կը պատասխանէ մայրը։

(երեք անդամ)

Նորածինը եթէ արու է մեծ ուրախութիւն կը պատճառէ ընտանիքին, մանաւանդ կինը առանձին հպարտութիւն մի կարտայայտէ դէմքի վրայ ողջոյ բերելուն համար. թէև պառաւները բարեբախտութիւն կը համարեն որ ոռնջոռնիկը աղջիկ՝ և անդրանիկից յետոյ ծնողները արու լինին։

Երեխայի պորտը կտրելուց յետոյ, տղացկանը՝ (ծննդական) իւր ծննդարանից, որ սովորաբար ախոռներու գլուխը կը լինի, տուն բերելու ժամանակ, ձեռքը երկաթէ շիշ մի կուտան և, դռնէ դուռ անցնելու պահին «Յիսուս-Քրիստոս» կը մրմնջեն

*) Եթէ պորտը անմիջապէս արմատից կտրուի, աղիքները դուրս կուգան և երեխան կը մեռնի, ինչպէս փորձը ցոյց տուած է։

և երրորդութեան անունովը կը խաչակնքեն։ Տղացկանը տեղ ու բարձով կը պարկեցնեն, երեխան իւր փաչուչքով (խանձարուր) փաթթութեան կը դնեն մօր աջ ոտքը գեռնի վրայ մինչև մկրտուելը, բայց մայրը պարկած ատեն երեսը մի՝ ոտքը չը դարձնէ։ Տղացկանի գլխու տակ անպատճառ կը դնեն մի համայնչ, մի դանակ և ուրիշ երկաթի ոտքեր, որ չարչեր չմօտենան։ Երկիւղած տատմէրը այդ ժամանակ քթի տակից կը պտպտայ հետևեալ աղօթքը.

«Եկան սարով, եկան ձորով,
Եկան իրեք կանանչ կապով,
Մէկն է Յիսուս, մէկն է Քրիստոս,
Մէկ՝ Զնդաննց ? Ասուածածին *)»։
«Հրեշտակ դէմ դիպաւ բարով,
—Դոր **) կերթաք յառէջ բարով,
—Կերթանք դուռնի հիւանդին,
—Զինճիլ ***) բերինք բոլոր պատին,
—Իրեք բևեռ կէր էն խաչին,
—Մէկ սիրտ սատանին.
—Մէկ՝ բերան գէլ գազանին,
—Մէկ շուռ գայ կէս գիշերին,
—Գայ Նստի վերև ոտոյնէն,
—Բալնիք թալէ վերև բարձին,
—Ջուր գայ գալոց ****) Քրիստոսին,
Պահապան հրեշտակ, պահապան եղնիս»։

Խստութեամբ կը պատուիրեն տղացկանին՝ որ պարկած տեղից չելնէ և ամենևին չնստի, որպէս զի Ամէջայ ոտ չառաջանայ։

Տղացկանի համար կը պատրաստեն ամենից առաջ խալնոյ ոտոր, ալրէ ճաշ, յոյնչեղ, ֆիլոյ կամ խղոյ տապակած ուրուր, դանկ և այլն, որոնք՝ տատմօր ասելով, փորը կը պաղէն և օգտակար ազդեցութիւն ունին ծննդական գործարանաց վրայ։

Մօտիկ ազգականներ, բարեկամներ, դրացիք և մանաւանդ տղացկանի մայրը պարտաւորութիւն կը համարեն նման օգտակար կերակուրներով պատուել ծննդականը, շնորհաւորել

*) Ասուածածին ս. Կոյս Մարիամը։ **) Ո՞ւր։ ***) Զղթայ։ ****) Գալուստ ?

նորա աջող ծնունդը և բարեմաղթել նորածնին երկար ու-ամ ու-ամ։

Եօթն օր շարունակ տղացկանը պառկած կը պատուի և վերև չիշուած կերակուրներով կը կերակրուի, ցերեկով ամենևին դուրս չելներ, միայն երեկոները, և այն՝ ընկերակցող կանանց հետ, ձեռքը երկաթ բռնելով և դռնէ դուռ անցնելու ատեն Աստուծու անունը չիշելով։

Երկրորդ օրից սկսած՝ տատմէրը ամէն օր երեխան տաշտի մէջ դնելով դաղջ ջրով կը լողացնէ և, լողացնելուց յետոյ, երեխայի բոլոր անդամները մէկ առ մէկ կը քաշէ և կը շփէ կանոնաւոր ձև տալու համար, վերջը գլուխը ձեռքերու մէջ բռնած կը բարձրացնէ և կը ցածացնէ երեք անգամ ասելով.

Թեթուաջրիկ

յէրկէն վզիկ։

Թեթուաջրիկն ևս նորա համար է, որ երեխայի վիզը կարճ չմնայ կամ ծռվիլ չլինի. ապա երեխան դրկած կը հանէ դուրս, դառնալով դէպի աղօթարան խաչ կը հանէ և կը վերադառնայ տղացկանի մօտ, ապա տղացկանից կը հարցնէ երեք անգամ.

«Ե՞ս իմ թեթև, թէ դու».

—Ես իմ թեթև, կը պատասխանէ տղացկանը.

«Աստուած հօրով մօրով ջոջցու» կաւելացնէ տատմէրը և երեխան կը դնէ մօր կշտին։

Եթէ այդ ժամանակ՝ երեխայի հայրը (առաջին անդամը լինելով) ներս մտնէ, 1) երեխան կը տանեն հօր շալակը և կը դնեն իւր տեղը, 2) եթէ հայրը չընդունէ՝ դուրս կը հանեն և ներս կը բերեն և 3) երկաթի կտոր ջրի մէջ ձգած՝ երեխան կը լողացնեն, որպէս զի ֆոխուած չլինի։

Խոնչա *) եւ կնունք

Ընդունուած է երեխան անկնունք չթողնել 7 օրից աւելի (բացառութիւն կը կազմեն տկարները), որովհետև չը կընքուածը անսուրբ է։ Մկրտութեան օրից մէկ երկու օր առաջ տատմէրը կը հրաւիրեն, որ սանամօր կողմից ընծաներ տանէ

*) Խոչականն է՝ ղոնչ, որ կը նշանակէ ֆոխուած, տալիք ընծայն նմանեցնելով ծաղկի ֆոխուի։

կնքահօր. այդ ընծաները կը կոչուեն խոնչա, որ սովորաբար մաղի մէջ կը դնեն, երեսը եռպլայով (գլխու կապոց, փաթթոց) կը ծածկեն և, տատմէրը գլխու վրայ դրած կամ քովընդի բըռնելով կը տանէ կնքահօր տուն, իմացնելով որ պատրաստուի ընտանիքի անդամներէն մէկն ու մէկը ֆոռոզ (կնքահայր) դառնալու։ Գիւղական խոնչան կը կազմեն.

4—5 զոյգ նախշուն բուռ (գուլբայ) . . .	10—12	զուրուշ
2—3 սախ (սռնապան)	10—15	»
1—2 նախշուն արախչիներ	5—10	»
Մրգեղէն	2— 3	»
6—7 գաթայ	6— 7	»
	33—47	»

մօտաւորապէս 3—4 ռուբլի։

Տատմէրը կստանայ քաւորից 2—3 զրշ. կամ նոյն արժողութեամբ այլեր, ցորեն և այլն. իսկ սանամօր կուզարկուի խոնչայի փոխարէն, եթէ հարուստ է քաւորը կամ առաջին ծնունդն է սանահօրը, մի երինջ, կամ մի ոչխար (60—40 զուրուշ արժողութեամբ), իսկ փոքրիկ սանիկին շապկացու՝ 3—4 արշին չիթ (բասմա, տպաձոյ)։ Թէև ամէն անգամ պառկելուն սանամէրը պարտաւոր է խոնչայով իւր քաւորը պատուել, բայց սա միայն առաջին ծնունդին վերոգրեալ կամ նման ընծաները կուզարկէ։ Յաջորդ ծնունդներուն ընծայ կամ կուզարկէ չնչին բան մի, կամ բնաւ ոչինչ չուզարկէր։

Մկրտութեան ծէսը շատ անշուք կանցնի 'ի գիւղեր, հրաւէր, կնքաճաշ չեն պատահեր կամ քիչ կը պատահեն։ Երեխան մկրտելուց յետոյ կը յանձնուի տատմօր, որ՝ եթէ կնքաճաշ պատահի, միասին կը վերադառնան հիւրերի հետ քահանան և քաւորը սանահօր տուն. տատմէրն փաչուչքը կը տանէ և կը դնէ իւր նախկին տեղը մօր կշտին. բայց այս անդամ մաղէ վրայ, ըստ ոմանց մեռոնի սրբութիւնը յարգելու համար և, ըստ ոմանց «Հազար չար 'ու բարի կայ էն ոքի» (այն պատճառով). թէև մաղի վրայ ևս շատ չեն թողներ որպէս զի ծաղիկ շուտ չհանէ։ Ցան մէկ անկիւնը կը պատրաստուի դեղջուկ սեղանը, որու վրայ դրուած ճաշ (կորկոտ) փլաւ, յուղ, դոլմա և այլ կերակուրներով կը պատուեն հրաւիրածները, բայց ոչ թէ քաղաքացոց նման մի քանի կերակուրներ մէկ անդամ կը դարսուեն սեղանի վրայ, այլ վերոգրեալներէն մէկ՝

կամ երկու տեսակը։ Գինի արդէն գաւառի մէջ չճարուեր, և օղին էլ խիստ սակաւ կը գործածուի։

Մկրտութեան համար քահանան կտրական վարձք կըստանայ քաւորից 5 դուրուշ, բայց երջանիկ է՝ եթէ կանխիկ դոնէ 2—3 դուրուշ ևս ձեռք բերել կարողանայ. այդ 5 դուրուշիկը շատ անգամ ապառիկ կը մնայ, քանի անգամ յանձնարարութեամբ ուղելուց յետոյ կը տեսնէ որ ԽՈՂՔ չկայ, փոխարէնը մի խուրջ խոտ կամ մի հողով յեղդ կը պահանջէ իւր ասնասնոց համար, և եթէ սոքա ևս չլինին՝ կը սպասէ մինչև կալոցին 1—2 կօտ ձեռք բերելու. բայց շատ անգամ այս ևս չյաջողեր և քահանայի առնելիքը կը մնայ բուն ՍՊՈՒՆԻ։

Ծօթնեղորդ օրը տատմէրը կուգայ երեխայի շորերը փոխելու և վերջին անգամ լողացնելու, և ստանալով վարձք 1—2 դուրուշ կամ կօտ մի ալիւր կերթայ, այնուհետև տատմօր պաշտօնը կը կատարէ տղացկանի կեսուրը կամ մեծ տէգերկինը. որոնք իբրև փորձառու մայրեր՝ երեխան ամէն օր մինչև քառասունքի լրանալը, կը լուանան և սապոնի փոխարէն հաւկթի դեղնուց կուտան գլխու վրայ, և թեթևաշրջիկը անելուց յետոյ կը փաթաթեն իւր շորերովը ու կը քնացնեն։

Քառասունքի մէջ պահուած սովորութիւնքը

ա) Կրօնական պարտքը և անձի առողջութիւնը յարգելու համար ամուսինները քառասունքի մէջ իւրեանց անկողինը սուրբ կը պահեն։

բ) Ծննդեան օրից մինչև քառասունք լրանալը, տղացկանը ցերեկով դուրս չպիտի ելնէ, այլ միայն երեկոները և այն ընկերակցող կանանց հետ, որոնք դռնէ դուռ անցնելու ատեն պարտաւոր են «Աստուծոյ անունը» տալ։ Այս երկու սովորութիւնները հետզհետէ թուլանալու վրայ են։

գ) Երկու կին երբ միաժամանակ՝ կամ մի քանի օր յետու առաջ ծնեն, նոցա ՀՈՒՇՈՒՆՔՆԵՐԸ ՀԸ ԽՈՒՇՈՒՆ ԷՐԵՐ. այս պարագային եթէ մի կնոջ այրը միւսի տան քովը անցնի, կամ տունը երթայ, վերջնոյս երեխան ՀՈՒՇԱԾ կը լինի. պարտաւոր է առաջինի կինը վերջնոյս երեխան ծծեցնել, եթէ զլա-

նայ՝ ծածուկ կոխուածքոտ երեխայի շորերը կը տանեն և ծիծ տալը զլացող կնոջ երդիքից ներս կը թոթվեն։

դ) Միաժամանակ երկու տղացկան խնամող տատմէրը, երբ մէկի մօտից միւսին երթայ, վերջնոյս երեխան մինչև տան դուռը տատմօր առաջ կը տանեն և, սա գրկելով կը տանէ ներս դնելու իւր նախկին տեղը որպէս զի կոխուածք չլինի։

ե) Քառասունքի մէջ երբ հում միս դրսից ներս բերեն, երեխան դուրս կը հանեն և բերելով երեք անգամ մսի վրայ կը դնեն և կը բարձրացնեն որպէս զի կոխուածք չլինի։

զ) Քառասունքի մէջ եթէ տղացկանի դռնով մեռել անցնի, երեխան դուրս կը տանեն, որ ցո–ը երթայ ննջեցեալի հետ. եթէ երեխան քնած լինի, շորերը կը հանեն դուսը և թափ կուտան մեռելի ետևից։

է) Քառասունքի մէջ հօր շորերը երեխայի վրայ չպէտք է ձգել, որպէս զի խորշո–ն *) չլինի։

Ընայելով այս նախազգուշութեանց, երեխայք շատ անգամ ֆոխուածք կը լինին. իմանալու համար թէ արդեօք ինչից է առաջացեր, եօթ տուն ման գալով դրամ կը մուրան և այդ դրամով մոմ կը դնեն, մոմը հալելով իլիկի գլխի ծակի միջով կը թափեն ամանով լիք ջրի մէջ, եթէ մեռելի յա ապացո՝ կոխուածքը մեռելից է և 1) մեռելի գերեզմանի մօտ կը տանեն և ջուր կը լցնեն գլխուն։ Եթէ մոմը ջրի երեսին շաղ կերպարանք ստացաւ՝ շաղ լաչանի մէջ կը լողացնեն։

Կարծելով որ լուսնական Նոր ու Ֆուլի երեխայք կը հիւանդանան, քառասունքից յետոյ երեխան կը հանեն լուսնի առաջին եղջիւրի ներկայութեանը ասելով. «նոր, նոր, թաժա թագաւոր, իդա(այս) ու իդա գլուխ, իդա գլուխ իդա ու», փոփոխակի երեխայի գլխուն ու և ուսուն գլուխ ասելով կը շրջմրջեն այս ու այն կողմը, որպէս զի չտկարանայ. այդ հիւանդութիւնն էլ կանուանեն Նորէնոց **)։

Նորէնոցը կտրելու համար դրամ մի կուտան քահանային

*) Տես հիւանդութեանց բաժինը—խորշո–ն.

**) „ „ „ —Նորէնոցք.

որ պատարագի ներկայութեանը դնելով կխաչուսնի ձեւով կը կտրէ, որ կը կախեն երեխայի վզից։

Մանկատածութիւն

Մկրտութիւնից անմիջապէս յետոյ հոգ կը տարուի որ երեխան հանգիստ քնանայ. երեխան քնացնելու համար գիւղացիք ունին 1) օրոց (օրօրոց) և 2) ճոր*). օրոցի կամ ճոր-ի մէջ կը դնեն թանձր բարձանման մի տոպրակ որու մէջ պինդ սեղմած խոտ կը լցնեն, և կը կոչեն ՄԷՋ? մթէլի վրայ մէկ երկու կտոր կտաւէ հին շորեր կը դնեն և սորա վրայ կածեն նախապէս տաքցուցած չոր և սրսուռ հոգ **), որու վրայ երեխան այնպէս կը պառկացնեն՝ որ յետոյքը միայն ընկնայ հոգի վրայ, հոգի մի մասը կը լցնեն նաև երեխայի գոգը, որպէս զի մէզը չթափի ճուներու վրայ և չխարշէ մատղաշ մարմինը. ապա հոգշորերը կը փաթթեն երեխայի ոտներուն և քիթ կոչուած լայն երէգներով ամուր կը ժրեն երեխայի ոտք ու ձեռքը (ուղիղ պարզելուց յետոյ) ու կսկսին օրօրել մինչև քուն բերելը։ Այդ դարդարանքներու և շշուանքներու ժամանակն է, որ գիւղացի կանայք ցած և անուշ ձայնով ու հազիւ լսելի եղանակով կերգեն օրօրներ, բայց ավա՜ղ որ քրդերէն լեզուով։

Քնացնելու համար՝ մամիկները «քուն դքուն կը բերէ» խօսքը առաջնորդ ունենալով, օրուայ մեծ մասը և ամբողջ գիշերը երեխան օրօրոցի մէջ քնած կը պահեն, և որքան որ լաց ու ճիչ արձակէ, մօրը կ'ստիպեն որ կաթ տայ և օրօրելով քուն բերէ։ Քնած ժամանակ երեխայի երեսը բոլորովին կը ծածկեն և, կը զգուշանան որ մի տեղից լոյս ներս չթափանցէ, որովհետև երեխան պրկուած լինելով լոյսին նայելու համար աչքերը միայն պիտի ծռէ այն կողմը և երկար նայելով աչքերը շէջ դուրս գան։

Քնից արթնցնելով փոքրիկին շորեր կը հագցնեն, հա-

*) Անից սիւն ձգուած՝ երկու տակ պարանով կապկպուած և վրան շորերով փաթաթած օրօրոցը, որ փայտէ. օրօրոցից աւելի հեշտ կը դառնայ և հանգիստ կը քնացնէ երեխային։

**) 1—2 տարեկան հասակը՝ հոգի գործածութիւնը կը տեւէ, որ հայ. քուրդ, ժողովրդի կողմից ընդունուած ընդհանուր սովորութիւն մ՝ է։

բուտնները՝ մէկ շապիկ, մի չիթ անթարի (կապա), ոտքերը ԲՔԼԷՆԷ կամ բրդէ գուլբայ, մէջքը շորից կարած նեղ գօտիկ, գլուխը մի ֆէս կամ ձեռակար սպիտակ կտաւէ արախչի, որու վրայ կլոր և տարբեր ձևերով ու մեծութեամբ ու վրան Աստուածածնայ պատկերը նկարած սաղաֆներ կը կարեն. չորս կողմից կաւելացնեն ըղեղ և պաշտաղ, փիրուզ և զանազան քարեր, քամակի վրայ կը կարեն ԱՐԾԻՒ և ԾՄՐԻՒ կոչուած խըխունջի պատեանները, որպէս զի երեխան չաչքուն (նազայ) չհիւանդանայ, չԾՄՐԻՒՅ (ջղաձգութիւն) և այլն: Հարուստի կամ միամօր զաւակներուն՝ գոտկի բոլորը դրամներով զարդարած արծաթ շղթայ ևս կը կարեն, որ սովորաբար մէջի մի կունենայ մէջ տեղը:

Ազքատները այս զարդարանքները չունին, միայն մէկ շապիկով և կապայով կը բաւականանան, բժժանքներէն գոնէ մի մասը կը գործածեն նոյն նպատակով:

Բոժոժներով զարդարած փոքրիկ մանուկը տան բոլոր անդամները ձեռքէ առնելով կը թռցնեն և կուրախանան հետը, միայն խիստ զգուշութեամբ կը բանեցնեն որ երեխան գլխիվայր չգարձնեն, որպէս զի ԽՈԽՈՅ չշրջուի. ապա գլխով կանեն, մանկական լեզուով *) խօսքեր կուղղեն, կը ծիծաղին և այլն, և երբ կարողացան երեխան ժպտեցնել, կարգ մի հմբոյներով մանկիկը կը ճաճաւացնեն, մինչև որ ճաճաւալը կը փոխուի սուր լաց ու բողոքի, ապա կը յանձնեն իւր մօրը:

Կերակուրը՝ բացի իւր մօր կաթից, երբ քիչ քիչ զարգացաւ, տաքցուցած կաթ ևս կը խմցնեն: Եթէ մայրը կաթն-

---

*) Բուլանըխցի մայրերու ու մանկական լեզուն հետևեալ բառերից կը բաղկանայ.

1. կորջու—գլուխ,
2. չաչոյ-աչք,
3. գրզոյ—ատամ,
4. քթոյ—քիթ,
5. թաթոյ—ձեռք,
6. տոտոյ—ոտք,
7. փապա—հաց,
8, պուպու—ջուր.
9. կակա—միրգ,
10. բժոյ—ճրագ,
11. զիզի-խաղալիկ,
22. ճիճի—պապղուն. առարկայ, ապակի.
13. կուչու—շուն,
14. հրոյ—գառ.
15. կոժոյ—գոմէշ
16. ճուճու—հաւ,
17, պրսոյ—միս.
18. ֆուֆու—կաթ. խմելիք,
19. տրխէ—զարկ, խփէ,
20. մրնի—մրնի. կանգնիր,
21. աշ, քրՀխ
22. զզուելի է:
23.պաճի—պարկի,
24. տիտի—ն ստի

առատ ծծեր չունենայ, այս ու այն կնոջ ծծեցնել կուտան և, այծու մորթուց ծծեր ու պոռ-ին ձեռք բերելով կաթով կը լցեն և կը գործածեն, մինչև բաւականին մեծանալը, այնուհետև քամած մածուն շաքարով խառնած կը կերակրեն, ձեռքը մսի, հացի կտոր, չոր ու թաց մրգեղէն և այլն տալով կը մեծացնեն, այնպէս որ արթուն եղած ժամանակ գիւղական երեխան անպատճառ ձեռքը մի բան ունենալու է:

Երեխան ծծից կտրելու համար՝ առհասարակ պտուկներու ծայրը անասունի լեղի, պոռ-ղեղ և այլն կը քսեն, երբեմն նաև կը խաբեն, կը սատեն, կը ծեծեն մինչև որ հետզհետէ վարժուելով մոռանայ բոլորովին ծիծ ուտելը:

Երբ փոքրիկը սովրեցաւ ոթոռ (անասունի նման ոտներու վրայ երթալ) կը թողնեն այդպէս երկար ժամանակ. աղախին պահելու սովորութիւն կամ կարողութիւն չունենալով, խեղճ երեխաները այնպէս անխնամ կը թողնեն տանջուելու: Այդ ժամանակ կը սովորեն պատերու հողերը փորփրել և բնազդմամբ տանել բերանը, որով կ'ենթարկուին հող ուտելու ախտին, մինչև 10—12 տարեկան հասակը կը տևէ և անհաճոյ դեղնութիւն կը պատճառէ: Զրկուելով նաև մայրական անուշ դգուանքներէն, որովհետև լիգական սեռը բաւական զբաղմունք ունի, երեխայք ստիպուած են նաև լալ և աղաւորել (երեսը ծռած լալով խնդրել) և երբ բաւականութիւն չտրուեր խեղճերուն՝ Ռալլոնելու- (դալկանալ, ուշաթափ լինել լալու ժամանակ) տանջանքին կ'ենթարկուին:

Թալցնելը կտրելու համար մեծ պասի առաջին շաբթուայ մէջ օր մի կիրակի կը պահեն ի պատիւ Ռալլոնի, որ թերևս ալքի, թղպայի և այլ նման չար ոգի մի է:

Ափքելը վերջացնելու համար գոռնէ անունով կառքիկ մի շինել կուտան, որու ետևից երեխան բռնելով տան մէջ կը պտտի, մինչև որ կը սովորի առանց օգնականի քայլել: Գիւղացի երեխայք առհասարակ ուշ ոտքի կելնեն, ամենամեծ պատճառը այս է՝ որ կրայնի նիւթեր պարունակող կերակուրներ քիչ կը գործածեն և լաւ չեն խնամուիր: Ուշ քայլող երեխան մաղի վրայ դրած եօթ տուն երթալով հացի ։-ոռ (թոն-

դբրի կողքից փոշու վրայ ընկած և անձև թխուած և ալրած հաց) կուզեն ասելով.

«Կուտ մէ տուէք մեր կտան՝ (երեխան կուտի նմանեցնելով)

«Ելնայ կանի վրը տոտան»։

Նոր ատամ հանած ժամանակ, ցորեն, ոսպ և սիսեռ միասին խաշելով ա՛ֆ-ասորին կոչուած հատիկը կը պատրաստեն, և երեխայի գլխու վրայ կածեն, ապա կը բաժնեն տան ընտանորին ու մօտիկ բարեկամաց։

Խօսալու համար գլխաւորապէս մայրերը, գիւղացոց ասածին պէս՝ կսկսին երեխայոց հետ մանկական լեզուով ալ՛լալ (թոթովել), եթէ ուշ լեզու ելնէ, դարձեալ մաղի վրայ դրած կամ շալակած 7 տուն ման կուգան հաց մուրալով և, ամէն մէկ տուն մտնելու առեն ասելով՝

«Ռաքն երկեր է լեզու կուզէ»։

Լեզուաբացի ինչպէս նաև ջրոտ բերան երեխայի դոժինքը (լորձիւն) կտրելու համար կնքահայր կամ անդրանիկ մէկը ճկոյթ մատը կը թաթախէ երեխայի բերանը։

Երբ աչքերը ժաժան (արագ-արագ այս ու այն կողմը դառնալը խաղալ) ջրաղաց կը տանեն, որ պտտուղ քարերու վրայ նայէ և աչքերը ժաժալուց դադրին։

Երբ առաջին ատամը փոխեն, մայրերու խորհրդով երեխայի ընկած ատամը կը տանեն ձգելու դռան ճխանի տակ (ծղինք) ասելով երեք անգամ.

«Առ քրզի շան ակռայ,

«Տուր ընձի գառան ակռայ»։

Բուլանըխցոց բարբառով երեխան կը կոչուի ճէ՛ (արու լինի կամ էգ) նաև էրէ՛ռայ, ղա՛ռայ, որդի։ Արու հիժը՝ ղաղայ, էգը ա՛ղջիկ։ Անդրանիկ հիժը կը կոչուի ա՛ռջինէ, վերջինը յետինէ և սոցա մէջ ծնուողը միջենիկ։ Երկրորեակը կը կոչուի (քրդ.) ջեվէ, միամօրը մէկուճար։ Անժամանակ ծնունդը կը կոչուի ը՛ պակա՛ռ, վիժածը յանցու՛ռ, իսկ ապօրինի հիժը էյճ. երկրորդ, երրորդ... կնոջ հետ եկող երեխաները վերջին մարդու համար ոչ թէ որդի այլ մռլի կը կոչուեն։

Նորածինը եթէ այլանդակուած, խեղանդամ և արտասովոր կազմութիւն ունենայ կանուանուի յուսյ, յուսյանէ, ա՛ճլամէ *)։

*) Անունները թէև կան, բայց յուսյանէ արժանի ծնուող պատահած չէ մեր օրերը. այսպէս նաև ա՛ղա՛ և էֆ ծնած մարդ կամ կին իբրև հեգնանք կը

Զաւակ, որդի, երբեմն եւս գոռ եւյոգ բառերը ոչ այնքան սեռ ու հասակը ցոյց կուտան, որքան որ փաղաքշական մտքով կը գործածուեն, բայց ձիձ երեխայի ամենափոքր հասակին հոմանիշ է. երեխոյ ճժուց մեծին կասուի, ապա՝ եթէ արու է, ոզոյ եւ էգը աղջիկ կը կոչուի։ Պատանեկութեան հասակը ընտանը **) բառով բացայայտելուց զկնի, երիտասարդը կանուանեն (քրդ.) խոռոգ կամ (տաճ.) ջահէլ. ամուսնանալուց յետոյ արդէն մարդ է, որ ծերանալով կը կոչուի հալւոր (ալեւոր). չափազանց ծերը գըռնոռ (կծկած, կուչ եկած, դատկած) եւ չափազանց գըռըխուկը՝ նոռոռ (castor, ջրշուն?) Պատանեկութեան հասակ ունեցող աղջիկը կը կոչուի հոռոռ (հասած) ամուսնանալու ժամանակ խոռ? ապա ջոռ (իբր դահցած), ամուսնանալով հարս, երեխայ բերելուց յետոյ դէդ, մի քանի երեխայ բերելուց զկնի ծրեռոյ դէդ (միջին հասակի կին), ծերացածը ոռոռոռ (քրդ. պիր), շատ պառաւը գոդդէձ, ջէջ եւ գոռեռոռ։

Մանկանց դաստիարակութիւնը

Երեխայք դեռ ոտք չելած ու չխօսեցած ինչպէս տեսանք, ընտանիքի մէջ մխիթարական խնամք ու կացութիւն չունին. երբ կսկսին քայլել ու խօսել մայրերը ծանրութիւնից մի կերպ ազատուելով թռչնոց նման ձագերնին կարձակեն դուրս, ուր մանաւանդ ամառները, երբ բնութիւնը «սրեւով շապիկ կը հագնի», բնութեան փոքրիկ որդիք քարի, փայտի, հող ու ջրի հետ խաղալով ու տրորուելով կը մեծնան առանց կրթիչ ձեռքի մի հպատակելու։ Գիւղական չարքաշ ու կիսավայրենի կեանքի հիմքը այս օրուանից կը դրուի. եթէ քաղցի կարիքը եւ տուն դառնալու բնազդումը չլինէին. թերեւս ընտանիքի մէջ եւս չպիտի վերադառնային։

Մարմնական կոպտութեան հետ երեխայոց միտք ու հոգին եւս անմշակ, խոսպան եւ անկոզպար կը մնան։ Անանատես լինելով կոպիտ ծնողներու նիստ ու կացին, լսելով շատ տարածուած տգեղ հայհոյանքներ, երեխայք իրենց մայրերէն առնելով այս դասերը հրապարակի ու փողոցի մէջ մէկ մէկու վրայ կը ծախեն ճչոտելով։

Տարուայ մեծ մասը բոբիկ, գօտեւարձակ, կնտրոզ, մէկ տակ շապկով դաշտ ու փողոց թափառելուց յետոյ, երբ աշունն կը մօտենայ, բնութեան սաստկութիւնը կը համախմբէ իւր փոքրիկ որդիքը բնակարաններու մէջ, ուր կեանքը նեղ գալով իրենց օրուայ տաք մասը

չիշուեն, գուցէ կը գտնուեն դաւառի մէջ՝ բայց ծածուկ պահուելու համար յայտնի չեն. **) շնութիւն գործելու ընտրանք (կատարելութիւնը) ունենալու հասակը։

կիսամերկ կանցկացնեն տանիքներու վրայ ճոճ (վէգ) և ուրիշ խաղեր խաղալով, իսկ երեկոյեանները (արուները) կը հաւաքուեն ֆախոռներու գլուխները և ձիթահանքերու անկիւնները դարձեալ խաղալու և խնդալու. ախոռն ու ձիթխանձն են մանուկներու միակ ռեսթորանը։

Այնտեղ ոչ լուսիւն և ոչ կարգ ու կանոն ասած բան կայ, հսկող ձեռք կը պակսի որ զանոնք կարգի հրաւիրէ, ձիթհանքի բանուորաց հարահրոցը, դերաններու ճռճռոցը և երեխայոց աղմուկն ու աղաղակը ոդը կը թնդացնեն։ Երեխայք հասակի և մեծութեան համեմատ խումբերու կը բաժնուին. ոմանք ճոճ կը խաղան, ոմանք մոմ-չիկ. մի քանիսը հաւաքուած՝ հեքիաթներ կը պատմեն. մի քանիսը բարձրաձայն հանելուկներ և շուտասելուկներ կառաջարկեն միմեանց, մէկը առաջարկածը չլուծած, հինգ վեց հանելուկ ևս կարկտի նման ինքը կը թափէ հակառակորդի գլխուն. յետոյ խումբերը միանալով կը թանձրանան, աղմուկ ու աղաղակ կը բարձրացնեն, կը խնդան, կը ճռճռան և ինչ գիտեմ, հազարաւոր երեխայական անմեղ խաղ ու զուարճալիք մէկ տեղ կուգան ու կերթան։ Մանուկ սերնդի ոսկի ժամանակը ի զուր տեղ կանցնի կերթայ. ինքն իւր կորուստը չզգար, և իրեն զգացնել տուող չկայ. շատ անգամ, հայրերը իրենց ոբոքոյի տղայքը երեսէ հեռացնելու համար կուղարկեն ձիթհանքերը, որպէս զի ընտանիքի հանգստութիւնը չխանգարեն։

Ինչպէս կը պատահի, մի քանիսը գիտենալով, որ «կարգալը եփուկ հաց է դրուկ մարդու ծոց», իրենց որդիքը գիւղական քահանայի մօտ կուղարկեն կարգալու, որոնց գիտութիւնը քերականից կսկսի և, սաղմոս-նարեկով կը վերջանայ։ Այդ կարդացողները կը լինեն ոբոքոյու, որ յետոյ ոբոքոյ դառնան և իրենք ևս նոյն կերպ կարդացնեն ուրիշները։

Իսկ աղջիկները երբ կը փորքեն (փոր ձգել, մեծանալ), կտոր մի կտաւ և ասեղ մի կուտան ձեռքերնին. մանկավարժ մայրերու խորհրդով նոքա ասեղը առանց թելի կը խթեն կտաւի մէջ ու կը հանեն, որպէս զի, մարդերը նորոնեն, այսինքն վարժուեն։ Երբ վարժուեցան, այս անգամ ասեղը թելով կուտան և ամբողջ կտորն կը դրջեն, այսինքն, առանց նմոյշի ուղած կերպովը կը նախշեն։ Վարժապետ մայրը դասը կը փոխէ և ասելի շինուելու մի քանի հատ կոկել տալով կը յանձնէ աշակերտուհուն. սոքա են մեր սանուհու դասական առարկաները. նա այս անգամ պէտք է գործէ և ոչ կարէ։ Սկզբնական դասը շրջիկ գործելն է. շորտիկը գոտիկի ձևով ֆուֆայկի նման, նեղ ու երկայն գործուածք է, և միագոյն կամ բազմերանգ թելերով կը պատրաստուի մի քանի հատ մանր ու բէդ շորտիկ գործելուց յետոյ,

աշակերտուհին քիչ առ քիչ կը նախապատրաստուի հասարակ բուռ (գուրբայ) գործելու։

Միւս կերպ՝ նախշուն բուռ գործելու, կար ու ձև սովորելու համար, աղջիկները պէտք է տանել ոստի մօտ։ Ուստան է գիւղի մէջ համբաւաւոր կար ու նախշ գիտցող կինը. նորա մօտ կը սովորեն բացի բուռ գործելուց՝ պատրաստել նաև ոսկէր, նախշել ձեռագործ պրոտոնոց, տիլոր, շոնէոր, ձևել ու կարել հանդերձներ և այլն։

Մայրերից կը սովորեն կով, ոչխար և մատակ կթելը, լուացք անելը, հանդերձ կարկատելը և այլն և այլն։ Եթէ գիւղացի աղջիկը վերև յիշած շորտիկից սկսած բուռ ու սախը... գործել ու կարել գիտցաւ, հանդերձ ձևեց ու կարեց, ոչխար ու տաւար կթել սովորեցաւ, շատ ծէր ու հրրդէ կը համարուի. «մատներով մարդ կը շինէ» կասեն, և եթէ՝ «աւեր տան մէջ սիւն է». թէև շատ անգամ մինչև «հերանց տան ասեղը չեղնի՝ կարել չգիտեն»։

Գիւղացի աղջիկը սարսափելի տգէտ է, ոչինչ բանի վրայ գաղափար չունի, նահապետական ժողովրդի որդին կարդալ չէ՝ թղթի երես անգամ չտեսներ, և ինչու գիտնայ կարդալ գրելը, «էրէց կեղնի». իգական սեռը մանաւանդ, բացի պառաւներէն, տարին 3—4 անգամ հազիւ թէ եկեղեցու երեսը տեսնայ, և այն՝ հաղորդութիւն առնելու պատճառով։ Աստուած, Քրիստոս և սրբոց անունները հեքիաթի ձևով մանիկներէն կը լսեն. բայց խիստ երկիւղած ու կրօնասէր են, նախնեաց կրօնքի մնացորդները կանանց միջոցով փոխանցուած է «յորդւոց որդի» մինչև մեր օրերը. աղօթքի, ժամ ու պաշտաման և ուխտագնացութեան սովորութիւնքը պահպանելը նոյն սրբազան պարտականութիւնն է, և ջոջիկներէն սովորած կրօնական սուտ և անսուտ կանոններէն շեղուելը նոցա համար սրբապղծութիւն և անլուր յանցագործութիւն է։ Այսպիսի աղքատ կրթութեամբ և պաշարով գիւղացի աղջիկը պիտի դառնայ մայր, որու վրայ է դրուած ընտանիքի բարոյական հիմքը։

Մանկական խաղեր

1) Տիտոխի. Աղջիկ ու տղայ միասին չեն խաղար. աղջիկները խաղալու համար կը հաւաքուին մի տեղ, և նստած՝ շուրջանակի բոլորը ձեռաց մէկ թաթը պարզած կը դնեն իրարու կշտին այնպէս որ բոլորակ կը կազմէ. և գլխաւորը մէկ մատով՝ առնելով իւր կշտին նըստողից, կսկսի թաթները մէկ մէկ համրել ասելով.

«Տիտոխիկ, տիտմարոխիկ.
Զուռնաթխիկ, թուխ մանուկիկ,
Եփէ դաթայ ու կուլուջայ *)

*) Կլոճ, բաղարջ.

Եղնի վրէն ու պնդնայ,
Հաղնի իդա, խմէ իդա
Ելնա՞յ ինա՞»։ Ուրոր երգը վերջացաւ՝ այն տեղ նստողը ձեռքը պիտի վերցնէ և այսպէս շարունակ մինչև որ բոլորը մէկ առ մէկ ձեռքերնին վերցնեն։

Տիտոխիկ խաղ-երգի մի տեսակն է և հետևեալը. վերոյիշեալ տողերը կրկնելուց յետոյ՝ կաւելացուի.

«Վիր՝ տուն իս իջի»,
—Գոզալին,
«Էս Գոզալ,
Էս Մուրադ,
Էս գիլբար,
Էս Բաղդասար,
Էս Բաբրօն,
Էս Գաբրօն
Էս կատուն՝
Է՞ս մուկիկ»։

2) Էջ—Էջ.—4—5 աղջիկ մի տեղ կանգնած, ձեռքի ճոկաններու—(կեռ գլուխ փայտ) մի ծայրը աջ ոտքի թաթի վրայ կը դնեն, կանգնած տեղից ուժով կը ձգեն առաջ և, Էջ-Էջ-Էջ-Էջ ասելով առանց շունչ քաշելու կերթան բերելու, երբ ճանապարհին մէկի շունչը կըտրուաւ, նորա գլխարկը կամ փաթթանը ճոկաներով կը հարուածեն և գլխարկատէրը կաշխատի խլել. երբ աջողեցաւ առնել՝ խաղը կը դադրի նորից սկսելու համար։

3) Ափուն.—Աղջիկներու ամենասիրելի և շատ գործածական խաղն է ափունը, երեք-չորս հատ կլորակ փոքր քարեր առնելով բոլորակի կը նստեն, առաջ մէկը կը վերցնէ քարերը և, «կցոյ-մցոյ՝ փառք Աստծոյ» ասելով խաղի սկիզբը կը դնէ. քարերէն երկուսը կը դնէ գետին, մէկը կը մնայ ձեռքը որ վեր ձգելով կաշխատի ձգած քարը և ներքև մնացածները միասին վերցնել առանց թողնելու՝ որ մէկը վայր չընկնէ։ Ափունքը զանազան տեսակ շարուածք և քարերու շարուածք ունենալով մէկ առ մէկ նկարագրելը աւելորդ է, միայն անունները յիշելով բաւականանանք. նոնոբ, նոնոր, շրթէլ (շորթելով քարերը հաւաքել), ծառոյ, օղոբ, օղորղորոյ, պուլուն, առլիկ, փամբոյ (խաղալու ժամանակ գոմփով (կռուփով) հարուած տրուելու համար), պնչոյ (խաղցողը միաժամանակ պինչը (քիթը) բռնած կը խաղայ) ճնոպման (լարուած թիզը կը կոչուի ճնոպման թիզ, որով շորթելիք քարերու միջոցը կը չափուի և բաւական հեռու ընկած քարերը կը հաւաքուի վերև ձրգած քարի հետ միասին) և այլն և այլն։

Տղայոց խաղեր.

1) Դմբո—դմբո.—սովորաբար մեծը փոքրի ձեռքից բռնելով կը հարցնէ.

«Դրմբո—դմբո».

—Հա՜ (կը պատասխանէ փոքրիկը).

«Քու մամ ինչ է եփի,

—Քաղաճաշ.

«Ի՞նչ է թալի մէջ.

—Կատուի դօշ.

«Քրզի ինչ է կորի.

—Ոսկէ մատնիք.

«Դո՞ր է կորի.

—Ժամու տանիք.

«Ես իմ գտի՝ ու չրմ իդա» ասելով՝ լաւ կը դնդսէ ու կը փախչի, և ծեծուողը ետևից կընկնայ՝ որ բռնէ։

2) Աչխոցին.—Մէկի աչքերը կը կապեն և կսկսեն չորս կողմից հրել, զարկել և փախչել, երբ կապած աչքերով կարողացաւ մէկը բռնել՝ այս անգամ նորա աչքերը կը կապեն։

3) Ծէր կամ դէր.—Ծէրն ևս աչխոցիկի նման է. բայց աչքերը բաց։

4) Շռնչոր.—Սա ևս ծէրի նման է, միայն երկու մարդ յետ ու առաջ մէկ մէկու ձեռք բռնած մէկ տեղ կը կանգնեն, և ընկերները բոլորելով կը զարկեն ու կը փախչեն. երբ մէկը բռնուեցաւ՝ իւր ընկերով միասին մէկ տեղ կուգայ։

5) Բա՛ որ՞ տարաւ.—5—6 հոգի բոլորակի կը նստեն, մէջը կը կանգնի մէկը՝ որից մի բան առնելով կը պահեն. սա դառնալով մէկից կը հարցնէ՝ «բա՝ որ տարաւ»—ես ի՞նչ տարայ, հա ինա տարաւ, կը դառնայ սորան, «բա՝ որ տարաւ» միևնոյն, պատասխանը ստանալով՝ կսկսեն ծիծաղել։ Այս խաղը այնքան կորսուած կամ պահուած իրը գտնելու համար է, որքան և զուարճութեան։

6) Սաղ.—«բա՝ որ տարաւ»-ի նման բոլորակի նստող խմբի անդամներից մի բան կը գողանան և «ՀՂ» ասելով խիստ գաղտնի և զգուշութեամբ ձեռքէ ձեռք կանցկացնեն, իսկ առարկայի տէրը կաշխատի բռնել այն անձը՝ որու մօտ կը կարծէ թէ կըգտնուի գողօնքը։

7) Ղաղալոյ.—Երկու խումբ կը կազմուի, մէկը կերթայ գիւղի մէջ պահուելու, միւս խմբի ներկայացուցիչը առաջին խմբից մի մարդ իւր հետ առնելով կերթայ թագնուածները փնտռելու։ Պահուող խմբի ընկերը կը բռնայ բարձրաձայն՝ «Ղազալոյ, եկանք (գիւղի) վերին թաղը, ելանք . . .-ի տանքի վրէն, ահա կիջնանք ներքին թաղը,

Լայն Լայն. Թագնուող խումբը տեսնելով որ փնտռողները հեռու կը գտնուին, կարձակուեն առաջին խմբի վերայ և անխնայ կը ծեծկռտին. Ծեծուողները կաղաղակեն «ռա՛յ, ռա՛յ...» այսինքն՝ հպատակ ենք ձեզ՝ խնայեցէք։ Գերի խմբի ներկայացուցիչը կուգայ և խաղը կը դադրի։

8) Զոռ.—Մի քանի անձ կը կանգնին որոշ շրջանակի մի մէջ, նոյնքան մարդ ևս դուրսը կանգնած՝ յարձակում կը գործին. ներսինները կաշխատին շրջանի մէջ յարձակողներուն խփել, խփուողը խաղալուց կը դադրի. եթէ շրջանի մէջ գտնուողներէն մէկը չափազանց հեռանայ՝ դուրսեցիները հեռացողի հետքը ուղիղ գծով կը կըտրեն և սա էլ խաղալու իրաւունքից կը զրկուի. այսպէս դրսից և ներսից անդամները փոփոխակի կտրուելով՝ դուրս մնալու իրաւունքը մեծամասնութեան կը մնայ։

9) Գերի.—Յարմար ասպարէզի մի գլուխը երկու կողմից 10–20 անձինք կը կանգնեն. մէկ կողմից մարդ մի կերթայ ՝դիմացի խմբից գերի բերելու, վերջինս մի մարդ կուզարկէ եկողի առաջ, եկողը կը զարկէ և, կը փախչի, և զարկուողը ետևէն կընկնայ. եթէ հասաւ և բռնեց՝ գերի կը տանէ, և այսպէս շարունակաբար։

10) Երկեր Ռոռոյ.—Ճիշ կամ փալախ խոտ ամուր ոլորելով՝ ծայրը ռոփ (գունդ) կը շինեն, որ կը կոչուի Ռոռոյ. փէրի խաղի նման այս ու այն կողմը կանգնելով, մարդ կուզարկեն մէկ մէկու մօտ, որոնք փոխանակ ձեռքով զարկելու՝ թուռայով կը խփեն։

11) Գեր Ռոռոյ.—Զոռ կոչուած խաղի նման մի որոշ շրջանակի մէջ կատարուած խաղն է. դրսի և ներսի մարդիկ թուռայով իրարու կը խփեն և հարուած ընդունողը խաղալուց կը դադրի։

12) Ամենից աւելի երեխաները կը խաղան ճանի և հոշ կոչուած զանազան խաղերը, որոնց նկարագրութիւնը զանց կանենք ձանձրոյթ չպատճառելու համար։ Կան նաև ֆէրի, ֆոռ-ֆոռ, Աֆտ-աֆտ, պաղէ-պաղէ, ֆայլի Լայն Լայն մանկական խաղեր, որոնք աւելորդ կը համարենք իշել մանրամասն։

Ն

Ա.

Այր մարդոց մի քանի անուններ և սոցա կրնաստեալ ձեւեր

—

Աւետիս, Աւոյ, Աւէ, Աւիկ.
Սաքել, Ղաքոյ, Ղաքէ.
Աբրահամ, Աբրոյ, Աբրէ, Աբրիկ.
Արշակ, Արշոյ.
Անդրէաս, Անդրաս, Անդրոյ, Անդրէ.
Աստուածատուր, Աստուր, Սուատուր, Ասոյ, Ասէ.
Ակիզ, Ազոյ (տե. սիրելի, յարգի).

Բ.

Բաղդասար, Բղդոյ, Բղդէ.
Բարսեղ, Բրսոյ, Բրսէ.

Գ.

Գասպար, Գասպար, Գսպոյ, Գոպէ, Գպէ,

Գրիգոր, Գրգոյ, Գրգէ, Գրոյ, Գրէ, Գրիկ.
Գալուստ, Գալոյ, Գալէ.
Գէորգ, Գեւոքէ, Գեւոյ, Գեւէ.

Դ.

Դանիէլ, Դանէլ, Դնոյ.
Դարման, Դրմոյ, Դրմէ.
Դաւիթ, Դաւոյ, Դուոյ, Դաւէ, Դուէ.
Դաշտոյ, (քրդերէն Դաշտ, դաշտը ծնած).

Ե.

Եղիազար, Եղազար, Եղոյ, Եղէ, Եղիկ.
Երանոս, Երոյ, Էրոյ.

Զ.

Զօրոյ, Զաքար, Զքոյ, Զքէ.

Թ.

Թէոդորոս, Թորոս, Թորոյ.
Թադէոս, Թադոս. Թադէ.
Թումաս, Թումաս, Թումոյ, Թումէ.

Ի.

Իսրայէլ, Իսրոյ, Իսոյ.

Կ.

Խաչատուր, Խչոյ, Խչէ, Խչիկ.
Խորշուտ (Խուրշիտ—արեգակ).

Ծ.

Կարապետ, Կրպոյ, Կրպէ, Կրպիկ.
Կիրակոս, Կիկոյ, Կիկէ.
Կոստանդին, Կոստան, Կոստոյ.

Հ.

Հայրապետ, Հայրոյ.

Ղ.

Ղուկաս, Ղուկոյ, Ղուկէ.

Մ.

Մատթէոս, — Մաթոս, Մաթէ, Մաթոյ.
Մելիք. } Մլքոյ, Մլքէ.
Մելքոն } Մլքիկ, Մելոյ.
Միսակ,—Մուսակ, Միսոյ.
Մովսէս, Մոսոյ, Մոսէ, Մոսիկ.
Մխիթար, Մխթոյ, Մխոյ, Մխէ. Մխիկ.
Մանուկ, Մնուճ, Մնոյ, Մնէ.
Մհէր, Մէհրէ, Մէհրոյ.
Մարտիրոս, Մարտոյ, Մարտէ.
Մուրադ, Մուրդոյ, Մուրդէ, Մուրէ.
Մկրտիչ, Մկուճ, Մկրոյ, Մկրէ.
Միքայէլ, Մուքայէլ, Մքէ.
Մարգարայ, Մարգար.

Յ.

Յարութիւն, Յարութ, Յարթեն, Յարոյ, Յարէ, Յարիկ,
Յովսէփ, Յովսոյ, Յովսէ, Յովսիկ,
Յովհաննէս, Յովան, Յոհան, Յոհնոյ,
Յովոյ, Յոհնէ, Յովէ, Յոխիկ, Յոխէ.
Յակոբ, Յակոյ, Յակէ.

Ն.

Ներսէս, Ներսոյ, Ներսէ.
Նիկողայոս, Նիկողոս, Նիկոյ.
Նազար, Նզրոյ, Նզրէ.
Նահապետ, Նհոյ.

Շ.

Շահէն, Շահոյ, Շհոյ.

Ո.

Ուսրշատ, Ուսրէ, Ուսրոյ.

Պ.

Պարոյ (Պարոյր?).
Պետրոս, Պիտուն, Պետոյ, Պետէ, Պետիկ.
Պօղոս, Պօղսոյ, Պօղսէ, Պօղսիկ.
Պապոյ, Պապէ, Պապիկ (Պապ?).

Ս.

Սեդրակ, Սեդրոյ, Սեդոյ.
Սիմէօն, Սիմոյ, Սմոյ, Սիմէ, Սիմիկ.
Սարգիս, Սրքոյ, Սրքէ, Սասին.
Սաղաթիէլ, Սաղաթէլ, Սաղոյ.
Սահակ, Սհակ, Սհոյ.
Սարուխան, Սարոյ.
Սողոմոն, Սողոյ.

Սևոյ (Սևուկ, սև).
Ստեփան, Սեփան, Սեփոյ.

Վ.

Վահան, Վանոյ.
Վարդան, Վրդոյ, Վրդէ, Վթին.

Տ.

Տօնապետ, Տօնոյ, Տօնէ.

Փ.

Փերովբէ, Փերովբ.

Բ.

Իգական սեռի անուններ

—

Ալոյ (Ալագեղ?).
Ալմաստ, Ալմէ, Ալմոյ } Էլմաս, ադամանդ.
Աղրութ. եաղութ, յակինթ.
Ալգուզ. ելգրգ, աստղ.
Ալկուն, Թերևս Հալկունի.
Արմաղան, ընծայ, պարգև.
Անթառան, անթառամ.
Ասմար, Ասմոյ } Քրդ. թուխ.
Դիլբար, գեղուհի. սիրուն.
Դեղձուն, դեղձ կամ դեղձանիկ.
Եւոյ (Եւայ).
Եղսոյ. Եղիսաբէթ.
Եղնեկ, աղաւնեակ.
Եղնոյ, եղնիկ.
Զմրութ, Զմոյ } զմրուխտ (ակն).
Զլֆիկ, Զլֆոյ } զիւլֆ. խոպոպիկ.
Զօզան. ամարանոց, եայլաղ.
Զարդար. զարդարանք?
Զարէ (քրդ.) էրոռ, նաև դեղին, թերևս դեղոռ նման.
Զեռէ (քրդ.) զէռ, ոսկի.
Խօրօտ.
Ծաղիկ.
Կաքաւ
Կաքաւոյ
Կթուն. ընկոյզի միջուկը.
Կեժոյ. շէկ, շիկահեր.
Հռոմ, Հռոմիկ } Հռիփսիմէի աղաւաղեալը.
Հուրնիկ—հրեղէն.
Հուրի—մալաք—հրեշտակ.
Համաս (Համասփիւռ).
Ձունոյ, Ձունիկ } ձիւն.
Ղազալ, Ղազոյ } այծեմնիկ.
Մահի—(պարսկ.) ձուկ, փղոսկրն ևս մոյն կանուանեն.
Մահումէրի, Մէրի } տաճկ. անուն.
Մաքոյ—մաքի, ոչխար.
Մայրամ, Մայրոյ } Մարիամ.
Նարկիզ,
Նուշիկ, Նուշոյ } Նուշ.
Նանոյ, Նանիկ } Թերևս հայոց Նոնէ դիցուհու անունը.
Նունոյ—Նունիա.
Նազլի—Նազելի.
Նախշէ
Նախշուն
Ոսկուն.
Զուշան, Զուշոյ.

Զողոյ
Զողեր
Զողան
Զողշդան } արևու շող.

Զամամ—փոքրիկ հոտաւէտ սեխենի.

Զարան
Զարոյ } շար, շարք.

Զաքար,

Զարբաթ—տճ. օշարակ.

Զիչաք
Զիչոյ } ծաղիկ, տաճ.

Զմչրաղ

Զինար
Զինոյ } սօսի ծառ (տաճ.)

Զէյրոյ
Զէյրան } եղնիկ.

Զաւահիր—գոհար.

Զանջան.

Զանփաս—սնդուս.

Ռեհան.

Սրսուռ—փափուկ և հատ-հատ հող և այլն.

Վարդոյ—Վարդուհի.

Վարդեր.

Վառվառ (է).

Վարսոյ
Վարսէ } վարսերով. ծամերով.

Փամպուխ
Փամպոյ } փափլիկ ինչպէս բամբակ.

Քիշոյ
Քիշմիշ } անկուտ չամիչ.

Ֆիդան
Ֆիդոյ } ընձիւղ, մատաղատունկ.

Ֆարֆուռ (Ֆաղֆուրի), ճենապակի.

Ֆինջան
Ֆինջոյ } սկահ, գաւաթ.

Ֆընդրղ—կաղին, պնտուկ։

Անուններու կարգը պէտք է դասել հետևեալ զանազան մակդիրներն ու ծաղրական անունները, որոնք ժողովուրդը սրամտութեամբ յատկացնել գիտէ մի որ և է բնական արատ կամ պակասութիւն ունեցող անձի։

1) Հասակը կը կոչուի բոյ, ըստ հասակի մարդիկ կը լինին երկայն, որու տեսակներն են լաչաչ, բարակ ու երկար ոտներով, էր էրեր (մարդուկէս) ոտ? ցոկլոլա, լանլան (արագիլ), կոբ, որու տեսակներն են ուռն (պարսկ. խոբ, թերևս քարի նման կոլոլ) խոթ կամ կոթլիկ (կարճ ու հաստ), խոշ կամ ջոջոթ (կիսահասակ) և ոճուռճ մռճուռճ (գաճաճ)։

Կարճահասակներու համար կասեն նաև՝ «թիզուկէս գետնի բզէզ»։

2) Եթէ մէկի գլուխը շատ մեծ է, կը կոչուի գոգոյ. գոգ գլուխ (գլխու նմանութիւն ունեցող գոգին կոչուած ամանին նմանեցնելով), կամ հոգ գլուխ (շրթունք կոտրած ամանին նմանեցնելով՝ որ հոգ կը կոչուի)։ Երկարաձև գլուխը կանուանուի պուլուռ կամ ջոջ կամ սուրուբին։

3) Խոտոր պարանոց մարդը ծուվնուչ։

4) Ներս ընկած աչքերը կը կոչուին գոբ աչ կամ խոփուշին, դուրս ընկած և խոշոր աչքերը չորնոն աչ կամ բիլոր կամ շիլոր։ Ծուռ նայողը՝

ընչ կամ ոչդրոն կամ ճախոս. աչքերը նեղցնելով առարկայի վրայ նայողը պոռ (կարճատես), վերևից նայողը բանչալոն. մէկ աչք գոցած՝ միւսով նայողը ճոռ (ճտող), երբ աչքի կոպերը շրջուած ու դուրս դարձած են՝ ճոռոն կամ պոռոն աչք։ Կոյրի անձնասիրութիւնը չվիրաւորելու համար իւր ներկայութեանը կանուանի մոռոր, իսկ բացակայութեանը (տաճ.) ջոռ (կոյր)։

5) Գոյնի կողմից աչքերը կը լինեն նանան, նպրոպ, սև, չափազանցը (քրդ.) բալոյ (խատուտիկ) և չափազանց կապուտն ընչ (չինական ամանի գոյնի նմանութեամբ)։

Քիչ սևութիւն ունեցող մարդիկ կը կոչուին ըռոխ երէս, չափազանցը (քրդ.) ռոշոյ (սևուկ) կամ ոպոբ, ոչ սև և ոչ սպիտակը ցորենոմրը (ցորենի գոյն ունեցող). սևի հակապատկերը ոպիոնէն, ընչ, չափազանց շէկը պոնչ կամ ղոռ։ Ձէկ ու կարմրերեսը նրբրթեռ, դեղնածը՝ դեղնոն, նռոպոն։ Երեսին բծեր ունեցող շէկ մարդիկ կը կոչուին պիոնոպ ծաղկատարը ջոնոն։ Երեսի վրայ ընդ միշտ գտնուող շիթերը ծէն և մարմնոյ վրայ գտնուած սև նշանները, (հայ կամ քուրդ) խոշ։ Եթէ քիթը բնականից կրճատ է՝ պնչոպ, եթէ տափակ ու անդուր է՝ թփխուկ (նստած) կամ փչոն (կոտրած—ջնջուած)։

6) Քթէն խօսացողը կը կոչուի խնդոպ։

7) Լայնաբերանը կանուանուի ղոշ, ծռած բերանը՝ ճոռ բէրան, ճոռոյ, ճոռմոռն։ Ձրթունքը կը կոչուին մոռն, եթէ հաստ ու դուրս տուած է՝ պոռպոռոշ մոռն, մոպոշ մոռն կամ մոռոշ։ Ցցուած ակռայ ունեցողը՝ պոռշ, թափած ակռէքաւորը փեռոպ, ռնչպոպ։

8) Փոքրագէմ, մանր աչք և քիչ կարճ ու ցցուած քիթ ունեցողները կը կոչուին նէնրին, սրածայր բարակ քթով և դէմքովները ռոռոռնին (աւելի կանայքը), նիհար և այտոսկրները ցցուած մարդիկ՝ պշոռ։ Դէմքը առհասարակ կը կոչուի ռեռոմոռն։

9) Ունքի կոպերը ծածկող մազերը կը կոչուին ռեչին (արտևանունք), յօնքեր ծածկող մազերը ռոռ (յօնք), գլխամազերը մոշ (երբ կարճ է) և ծոմ (երբ երկար է—կանանց)։ Ճսանրուած ու գիսախսիւ մազերը բրոռէն։

Գանգուր մազերը կը կոչուին նոնծոն, գոռոշ կամ գոշին։

Մազերը ըստ գոյնի կը լինին ըռոխ, սև, ընչ, ղոռ (շատ շէկ), ղոնչոպոյ (չամչի գոյնով ոչ շէկ և ոչ սև)։

Մազ չունեցող գլուխը կանուանուի ոպոր և (տաճ.) ռեռոշ, սակաւամազը ջոռոյ (գօշ)։

11) Բռունցքը կը կոչուի գոմ կամ գոմոռ, երբ կտրած կամ այրուելուց կեռած են մատները, մարդը կը կոչուի խոփ կամ ճանչոպ։

Գոմֆոսի հարուածը կը կոչուի դարձեալ գոմֆոս, իսկ բաց ձեռքին (մէկ թաթի) ձեռք (ապտակ)։

12) Հազիւ նշմարելի կաղալը կը կոչուի խ՚ծ՚ը, կաղացողը կը կոչուի ընկոս։ Ոտաց մատները երբ այրուելուց կեռած են՝ մարդը կը կոչուի կոնկլեկ կամ ռոնոլեկ և, սորա քայլքը ռոռլեկը։

13) Նիհարը կը կոչուի ղբուռ, նիհար ու բարակը լաւոզիկ, ղարղեկ, նաղարոսկ. գերը՝ խլոս, կլորիկ, շատ գերը որ օրօրուելով կը քայլէ ֆմֆոց, ղմֆոս։

14) Զուտ շուտ խօսացողը կը կոչուի ղաղվեր, ջրվրուի բերանից եթէ խօսալու ժամանակ թուք ցայտէ և խօսքերն անորոշ դուրս գան ֆլֆեր. կմկմալով խօսացողը կոկոս. կնկոսոն, բառերը կրսատ պռատ արտասանողը ռեղ կամ ռեղոռ։

ՄԱՐԴԱԿԱԶՄԱԿԱՆ ԳԱՒԱՌԱԿԱՆ ԲԱՌԵՐ.

—

1. Հոգեռոն.—Գանկոսկրներու միացման տեղը, ճակատի վերևը որ մանկութեան ժամանակ փափուկ կը լինի.

2. Խոխ.—Գանկ (խալամ) անասնոց (մեռնելուց յետոյ).

3. Շլոռ.—Ծոծրակի տակ՝ վզի վերևի մասը (շլինք)։

4. Վզի ֆոշոր.—անրատոսկորները.

5. Խառնոն.—քթի կրճիկային միջնորմը.

6. Օղոն.—Խռնչուկի վարի մասը.

7. Պռոռոճոն կամ՝ Պռոճռոճոն } Ծոծրակ.

8. Անիջնոռ—քունք.

9. Լռոռոռն.—բիբ.

10. Խռոլոն.—կոկորդ.

11. Խոռնոռ.—որկոր թռչնոց.

12. Սոռոռին.—որկոր չորքոտանեաց։

13. Ծոռոռն.—արգանդ, աւելի անասնոց համար կը գործածուի.

14. Թռռոճռոճ.—Թռչնոց որկորը, ուր կերածը կը հաւաքուի աղիքներու մէջ անցնելուց առաջ։

15. Սրքառռ.—նորածիններէն յետոյ դուրս եկած փառը (անասնոց).

16. Հոռոմոռխ.—հաստաղիք (անասնոց).

17. Սռճռոռ կամ հոլոռ աղիք.—բարակ աղիք.

18 Տրոռնիռ —յետոյքին կից աղիքը.

19. Հոռոքռնիրնին. — ստամոքսի ծալծալ թերթիկները.

20. Իրնիռոմ } Երիկամունք.
Քռոռճին
Պլոճին

21. Փոլռոճ.—միզափամփուշտ.

22. Կռոռ.—կուրծք (անասնոց).

23. Դոռ (սրտի) կուրծք (մարդոց).

24. Սրոռքռոռ.—կրծքի ծայրի ոսկորը որ պոչիկի ձևով կիջնէ փորու մէջ։

25. Նռռոռ.—ծծերու ստորին հաստ մասը, որու վրայ են ծծերն ու պրտուկները (անասնոց)։

26. Ճռռ.—գիստը մսով միասին (ծունկից մինչև ազդրագլուխը).

27. Խեյրոպ.—ազդրոսկորի կլորակ գլուխը.
28. Թելյոն.—Խնձորը գաւակոսկորին միացնող ջիղը.
29. Զոռ.—Մկանունք մսի.
30. Դնդեղ կամ նոնդոն.—փափուկ միս։
31. Ճիլոյ.—Սրունքի ոսկորը՝ առանց մսի.
32. Թուռաղ. — Սրունքը ծածկող փափուկ միսը.
33 Մոնչ. վէգ ոսկորներու մօտ գտնուած փոքր ոսկորները.
34. Սանդր (ոտքի).—ոտքի թաթերու յօդախաղերը.
35. Կոնկք.—կեռացրած մէկ թաթը.
36. Ճոն.—երկու նոյն միանալով կը կազմեն մէկ ճանկ.
37. Խլէն, դաստակ և բաշկոսկորը.
38. Ցանքեռաղ.—անուրթ ընդ անուրթ։
39. Փեռ կամ ընաղ.—ուսոսկորը.
40. Մոխրապեղեղ—փոքրիկ պեղեղներ կճղակներու ետևի կողմը (չորքոտանիներուն)։
41. Պոբեն —քամակ.
42. Զորոզ.—ողնաշար.

ա) Գլուխը կը համարուի հոգու կայանք, այդ ցոյց կուտայ արդէն հոգեորոն բառը. գլխու մէջն է նաև խելքը, և երբ մէկը ապուշ լինի՝ կը կոչուի ցնորոն, իբր շոգու նման խելքն ու միտքը (հոգին) ցնորած։

բ) Գանկոսկորներու կեռ դծերով միացած տեղը կանուանուի ճակատագիր, որով Աստուած գրած կը լինի մարդու գլխից անցնելիք ամէն շար ու բարի պատահարք և այլն.

գ) Փոս ծոծրակ ունեցողը խեռնոտ (խեռ, նախանձ) կը համարուի։

դ) Աչքերէն շատը վատ է (գժնեայ), որով աչքը ռէնը (նազար) առաջ կուգայ։

ե) Հոգեոգէ անհարթութիւնը առաջացեր է՝ Աբրահամի իւր Իսահակ որդին կիսամորթ անելուց. դանակով կոկորդի մի մասը կը կտրէ թէ չէ՝ հրեշտակը կարգելէ, բայց կէս կտրուելուց հոգեոգ կառաջանայ։

զ) Սիրտը կը համարուի քաջութեան զգացման տեղը, օրինակ եթէ մէկը քաջ է, կանուանեն սրտոտ։

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԵԱՆՔ

Ընտանիք կը կազմեն 1) հայր և որդիք իւրեանց կանանցով, որդիներով ու թոռներով. 2) միայն եղբայրներ իւրեանց կին և որդիներով և 3) հօրեղբայր և եղբօր որդիք նոյն կերպ, 2—50 անձ։

Բուլանըխցոց ընտանեկան կեանքի վրայ ակնարկ ձգելով երկու կարգի կենցաղավարութիւն կը տեսնուի, մէկը հին, նահապետական, ազնիւ կեանքի շարունակութիւն, որ տակաւին մինչև մեր օրերը մի քանի բազմանդամ տներու նիստ ու կացի վրայ կը տեսնուի, իսկ միւսը որ աւելի շատ տարածուած է, առաջինի աղաւաղեալ պատկերն է։

Առաջին կերպ կառավարող 40—50 անդամներից բաղկացած ընտանիքի գլխաւոր տէրը և իշխողը տան «պէյ» մօրս կամ ջօջա՝ն է, որ սովորաբար մի քանի որդոց հայր կամ եղբայրներու աւագը կը լինի։

Տան ջօջաւորը երբ դռնից ներս կը մտնէ, իւր որդիքը (եթէ հայր է գլխաւորը) կամ եղբայրները (երբ ջօջաւորը աւագ եղբայրն է) ոտքի կը կանգնեն, սոցա հետ միասին հարսներ, կանայք, թոռներ, ծոռներ, եւայլն, ձեռք սրտի վրայ դրած՝ լուռ ու մունջ նորա (ջօջաւորի) հրամանին կսպասեն։ Ամօթի քօղը պատուած կը լինէր եղբայրներէն կամ սմսանացած որդիներէն մէկը, եթէ տան «պէյ» մօրս ներկայութեանը իւր կնոջ հետ խօսի, որդին գիրկն առնէ և մեծաւորի առաջ կանգնի. եղբայրներէն միայն անմիջապէս կրտսերը իրաւունք ունի նստելու ջօջաւորների հետ, միւսները մանաւանդ կանայք ամէն մէկ ծակ ու ծուկ կը փախնեն իւրեանց որդոց և կանանց հետ։

Այս պարագային ընտանիքի ջօջաւորը կարելի է նմանեցնել մի օտարական պատուելի հիւրի, որու հետ պէտք է յարգանքով և ակնածութեամբ վարուել մինչև որ տնէն մեկնի։

Երկրի սովորութեան համաձայն, հիւրասիրութիւնը պարտադիր լինելով հիւրի հետ ճաշելու և հիւրը զբաղեցնելու իրաւունքն ու պատիւը տան գլխաւորին կը պատկանի, միւսները (եղբայր կամ որդի) ձեռք սրտի վրայ դրած սեղանին կը ծառայեն։

Կրտսեր եղբայրներու և որդոց ջօջաւորին արած պատիւներէն մէկն ևս այն է որ նա ֆիզիքական աշխատութեան չպէտք է մասնակցի, այլ միայն իբրև տան ներկայացուցիչ ընտանիքի շահերը պաշտպանէ գիւղական իշխանութեան մօտ, այդ պաշտպանութիւնը այն կերպ կը լինի, որ օրուայ ու գի-

շերուայ մեծ մասը գիւղական «էշ» օդան գտնուի, հասարակական խնդրոց մասնակցի և եթէ ի վնաս իւր ընտանիքի մի որ և է վճիռ կը կայանայ՝ գիմադրութիւն անէ, խօսէ, վիճէ և վճիռը քանդել տայ։

Ընտանիքի իւր ջօջաւորին ցոյց տուած հպատակութիւնը ոչ թէ բռնութեան այլ ինքնայօժար սիրոյ արդիւնք է, որովհետև գլխաւորը իւր իշխանութիւնը իւր անձի օգտի համար չգործածէ, այլ յօգուտ տան ընտաւորին և, սորա մեծ ու փոքր անդամը իւր խնարհ ծառայութեան մէջ սրտի բաւականութիւն և պարտաւորութեան լրումն կը տեսնէ. «Ան (ով) որ զուր մեծ չճանչնայ զԱստուած լէ չճանչնայ», կասեն գիւղացիք, և թէ «տեղ մ՝ որ մեծ չեղնի քարմէ (մի) պէտք է դնին էնին մեծ»։

Բայց և այնպէս նահապետ ջօջաւորի իշխանութիւնը ոչ այնքան սրտի որքան մտքի վրայ կը ներգործէ. այս թերին կուգայ լրացնել «ՊՈՊՈՒԼԻՆԸ» (տանտիկին), որ սովորաբար ջօջաւորի կինը կը լինի. մինչ առաջինը պատկառանք կազդէր, վերջինս սէր կը ներշնչէ, առաջնի իշխանութիւնը «ՊՐՊՈՒԼԻՆ» է, վերջինս ներքին. իրաւունքով կասեն գիւղացիք. «մարդ դրսու պատ է, կնիկ ներսին». այս առածը կարդարանայ ընտանիքի արական անդամոց վերաբերմամբ ընդհանրապէս և, տան ջօջաւորին, մասնաւորապէս։ Ճիժ, երեխայ, տղայ, աղջիկ, հարս կնիկ և մինչև ամուսնանալու հասակն ունեցող երիտասարդները սրտերնին տանտիկին մօր առջև կը բանան, գաղտնիք նորանից չթագցուի, եթէ զլուխ ցաւի, նորան կը յայտնեն. եթէ անօթնան՝ հաց նորանից կը խնդրեն։ Մինչ տան ջօջաւորը ֆիզիքական աշխատութեան չմասնակցեր, տանտիկինը զարմանալի համբերատարութեամբ օրն ի բուն ոտքի վրայ կանգնած ընտաւորի ամէն կարիքին բաւականութիւն կուտայ. երեխայի լացը կտրող նա է, հիւրին սեղան պատրաստող, բանտոր, մշակ, կին, մարդ ջոկ ջոկ կերակրողը նա է. հարսներին ոչ ոք իրաւունք չունի և առանց նախանձելու, տանտիկին մօր չյայտնած իւղին, պանրին, թան ու թացանին մօտենա-

լու։ Ընտանիքը այս պարագային կուզէ յարգել այս ճշմարտութիւնը «թէ մէկ ձեռք Բարձուն (օրհնուած) է»։

Ինչպէս մարդիկ դուրսը, նոյնպէս և կանայք ներսը աշխատութիւնը թէև խմբովին կը կատարեն, բայց աշխատութեան տեսակը բաժանուած է անդամոց վրայ, առաջիններուն դաշտը կը հսկէ բանուորներու ամբոխը (ոչ թէ ջօջաւորը), իսկ ներսը տանտիկինը։ Գործ կամ աշխատութիւն որովհետև միութեամբ և հնազանդութեամբ առաջ կերթայ, դարուն բացուելուն պէս առաջիններէն մէկը հօտաղ է, միւսը մանճկալ, մէկը ցանող ու վարող ու միւսը քաղող, երկրորդը կապող, երրորդը փոցխող, չորրորդը կրող ու ծեծող և այլն։ Երկրորդներէն (կանայք) մէկը գունդ ու գրդնակ անող, միւսը խմոր շաղող, երկրորդը ոչխար ու տաւար կթող, երրորդը ձձում դարկող և այլն։

Նոր բերած հարսի պարտականութիւնն է երեկոյ առաւօտ, տան տախտ (յատակը) աւելելը, ծեխ (աղբի) թափելը, առաւօտը քնից վերկեցողներու ոտնամանները պատրաստ պահելը, անկողինք վերցնել ու դասելը, լուացողներու ձեռաց ջուր ածելը և այլն և այլն. և այս ծառայութիւնը կը տեւէ որքան մի ուրիշ նոր հարս բերուած չէ։

Նոր հարսը չպէտք է խօսայ իւր սկեսրայրի հետ ցմահ, կեսուրի հետ մինչև 1—2 որդի բերելը, տէգրերու հետ մինչև 10—15 տարի և երբեմն մինչև խորին ծերութիւնը. տալերու հետ 5—6 ամսից մինչև մէկ տարի. բաժան դասերու (մարդու ազգականներու) հետը մինչև 10—15 տարի (միայն մարդոց)։ Ընտանիքից ու գերդաստանից դուրս ամէն կին ցմահ, իւր կնքաւորի հետ ոչ միայն խօսելու սովորութիւն ու իրաւունք չունի, այլ և ներկայութեան ելնելը մեղք կը համարուի։ Նոր հարսները պարտաւոր են նաև դրացի ծերերու պատիւը պահելու համար, իրրև իրենց սկեսրայրի հետը չխօսել 5—6 տարի։

Այս պարտաւորութեանց ու սովորութեանց անթերի կատարուելուն կը հսկեն տան ջօջաւորը, տանտիկինը և սովորաբար շատ ու քիչ տարիքոտ ընտանիքի ամէն մէկ անդամը, մեծը փոքրին հսկելով։

Կանցնին օրեր ու տարիներ, ջօջաւոր նահապետի ու տան-

տիկին մօր կեանքի արևը կը խոնարհի դէպի մուտքը, ծերութեան պատճառով այժ և ընտանիքը առաջնորդելու ընդունակութիւնը կը կորսնցնեն, բայց յարգանքն ու պատկառանքը նոյն կը մնայ։ Կը կանչեն նահապետն ու մայր տիկինը ընտանիքի ամենաընդունակ տղան (եղբայր կամ որդի աւագութեան օրէնքով) և մեծ հարսը (սոցանից մէկն ու մէկի ընտանիքը) և վերջին օրհնութեան հետ կը յանձնեն նաև տան կառավարութեան զեկը նորընտիր յաջորդին, այնուհետև հոգով և մարմնով ընդ միշտ հանգստանալու։

Այս կերպ կառավարող ընտանիքներ այնքան փոքր թիւ մի կը կազմեն որ ընդհանուր գաւառի մէջ մատներով կարելի է ցոյց տալ։

Ընտանիքը այդ օրինակ կառավարող սովորութիւններէն մեծ մասը այսօր խանգարուած կը տեսնենք. որդիք և առհասարակ ընտանիքի մեծ ու փոքր ամէն մի անդամը, իւրեանց պարտականութիւնը կատարելու մէջ կը թերանան. հին կարգերու խանգարուելովը և նոր կեանք մի սկսելու համար որոշ օրէնք ու սովորութիւնք չլինելով, ընտանիքը կործանման— շուտով բաժանուելու հարկին կենթարկուի։ Դորա ինչպէս և ամէն չարիքի գլխաւոր պատճառը պանդխտութիւնն է։ Տգէտ գիւղացիք պանդխտելով մեծ և բազմամարդ քաղաքները, տեսնելով քաղաքի համարձակ նիստ ու կացը, քաղաքացի տղայի ազատ վարմունքը իւր ծնողաց հետ, պանդուխտ գաւառացին ևս նոյն համարձակութիւնը կուզէ մտցնել իւր դռնից ներս. կը տեսնէ որ քաղաքացին հարուստ է, իւր աշխատութեան մեծ մասը կը ծածկէ ծնողներէն առանձին զրամագլուխ շահեցնելու համար։

Երբեմն պանդխտութեան վայրերէն նամակ կուղղուէր մի-այն յարգելի պապուն մամուն, այժմ պապուց մամուց յետոյ կինն ևս կը յիշուի, մինչդեռ հօր ներկայութեանը ոչ միայն կնոջ անուն տալը, այլ կշտին կանգնել, դէմ ու դէմ կնոջ նայելը մեծ ամօթ կը համարուէր։

Տան ջօջաւոր հայրը թէև իւր ընտանիքի գլխաւորն է, բայց նորա իշխանութիւնը լոկ անուանական է, և իրենց պար-

տականութեան սահմանից անցնող անհնազանդ որդիքը դժուարութեամբ կը կարողանայ զսպել։ Կարելի է ցոյց տալ այնպէս ընտանիքներ, որ եղբայրները իրենց հօր կենդանութեան ժամանակ մէկ յարկի տակ փոքրիկ ընտանիքներ կազմելով իրենց որոշ և սեպհական շահերովը կը կառավարուին և երբեմն հայրը չմեռած կը բաժնուին մէկմէկից։

Քանի որ հայրը դեռ առոյգ է, այնքան դժուարութիւն չկայ ընտանիքը կառավարելու, բայց երբ ուժից և կարողութիւնից կը զրկուի, այդ պարագային կը նմանի երեխայի, որու ապրելը կախուած է ծնողաց հոգութիւնից. արհամարհուած և լքուած օրուայ մեծ մասը ախոռի և տան գլուխը իւր մնացորդ օրերը կը համարէ խնդրելով Աստծուց որ իւր ամանաթին (հոգին) շուտով առնէ, զգալով որ ընտանիքին մի աւելորդ բեռ կը նկատուի իւր գոյութիւնը։ Որդոց այդ տմարդի վարմունքը ծնունդ տուած է հետևեալ առածը, «Աստուած տայ լաքուն որ տայ ձագուն». ասել ուզելով, թէ Աստուած ձագին (որդուն) որ տայ՝ ձագ լաքը (ծնողքը) չի խնամիր։

Ընտանիքի այսպէս ասած այր մարդոց կամ արտաքին կենցաղավարութեան կանոնները նոյն ինքն իրենք մարդիկը, խանգարել ջանալով, ներքին կամ որ այն է կանանց նախկին համակրելի միութիւնը քանդուած, համերաշխութիւնը եղծուած և տանտիկիններու իշխանութիւնը սահմանափակուած կը տեսնենք։

Այս գեղծումներուն բնականաբար հանդիսատես է փոքրիկ սերունդը (աղջիկ և տղայ), որոնք իրացնելով հայրերու մայրերու և իրենցից մեծերու տգեղ օրինակները, պէտք է ապագային ընտանիք կազմեն միևնոյն ուղղութեամբ. թէև աղջիկները հերանց տան վէճերուն չեն մասնակցեր, որովհետև գիւղացի աղջիկը իւր հօր օջախի մէջ իբրև «հիւր» կղզայ ինքը զինքը, մտածելով «թէ այսօր կամ վաղը չկամ»։ Բայց որովհետև գիւղացոց ամուսնութիւնը վաղաժամ կը կատարուի մանաւանդ մեծ ընտանիքներու մէջ, յընթացս մի քանի տարիներու բաւական թուով երիտասարդներ կամուսնանան և օջախի մէջ կը մտնեն տարբեր կազմուածքի և բնաւորութեան

տէր բոլորովին տգէտ և անկիրթ աղջիկներ, որոնք երէկ չէ՝ հանդիսաւոր աղջիկներ էին, բայց այսօր հարս են և շնորհիւ հարստութեան իրաւունքի տէր են։ Աւանդական «քօղի» տակ համարելով հարստութեան օրերը, որից երբ կանցնին ֆեոդալներ շրջանը, ընդարձակ ասպարէզ կը բացուի առաջները օրինական ամուսկ, վէճ, կռիւ և խռովութիւն հանելու։ Արծարծելով վէճը կանցնի կանանց շրջանից մարդոց շրջանը և ահա «ամենայն ինչ կատարեալ է»—բաժանումն անխուսափելի է։

Բաժանման գլխաւոր պատճառները

Ընտանիքի բաժանման սկիզբը գլխաւորապէս կանայք կը դնեն, երբեմն և մարդիկ. վերջիններս գիւղական ծանր աշխատութեան ենթարկուած լինելով հաւաքական ոյժի, ընկերակցութեան և միացած ձեռքերու կարօտ են. այդ միութիւնը գիւղական կեանքի պարզ հետևանքն է։ Կանայք խմբուած լինելով տան մէջ և մանաւանդ բծախնդիր բնաւորութիւն ունենալով, չնչին բաներու առիթով վէճ ու կռիւ հանելու առիթներ շատ կունենան. այդ վէճերը երբեմն այնքան սուր կերպարանք կստանան, որ մարդիկ ուրիշ միջոց չգտնելով Աբրահամի և Ղոտի նման եղբայրական խաղաղ առաջարկութեամբ կը բաժնուին իրարմէ. երկրորդ և ամենամեծ պատճառը դեռ հօր կենդանութեան ժամանակ որդոց առանձին դրամ պահելու և հարստութիւն դիզելու ամենաւատ սովորութիւնն է (սարմիա)։ Տեսանք ինչպէս «սրմիայի» հիմքը կը դրուի։

Սարմիան կաճի ոչ միայն իւր բերած շահովը, այլև շատ անգամ տնից գողցուած և ծածուկ ծախուած զանազան առարկաներու գնովը, որ ընականաբար ունեցողի և չունեցողի մէջ շուտով կարող է խռովութիւն սերմանել։ Ի՞նչ կը նշանակէ օրինակի համար երբ երկու եղբայրներ տան ամէն ծառայութիւնքը կատարելով հաւասարապէս քրտինք թափեն և, մէկն ունենայ 40—50 օսմ. ոսկի, *) իսկ միւսը բնաւ չունենայ. մէ-

*) Գիւղացի «սրմիայի» տէրեր 10 օսմ. ոսկուց սկսած 100—200 ոսկուց աւելի չեն ունենար. սորա հետ քանի գլուխ ոչխար, եզ, մատակ և այլն ունեցողներն էլ կը լինեն։

կի ամուսինն ու որդիքը սարմիայի շնորհիւ լաւ հագնուած ու զարդարուած լինին միւսին բոլորովին մերկ. երբ տան ջօջաւորը պարտաւորուած իւր սարմիա ունեցող որդուց փոխարինաբար դրամ վերցնէ և ինչպէս մի օտարական շարչարելով հընչումն դրամով կամ համարիք ընդեղէնով տոկոս տայ...

Դրամատէր եղբայրները առաջուայ նման սիրով և «սրտացաւանքով» չեն աշխատեր տան օգտին, «իմ ու քում»-ի հետ ծուլութիւնն ու անտարբերութիւնը կը մտնեն դռնից ներս, և քանի հատ ոսկի ունեցողի համար այլևս տան շէն կամ աւեր մնալը հոգ չպատճառեր, որովհետև վստահ է (սարմիայի տէրը) որ եթէ տունը քանդուի (բաժանուել) էլ. ժառանգութեան մի մասին գոնէ տէր է ինքը և պատրաստի դրամովը կարող է նոր «տուն ու տեղ» դնել և ապրել թերևս առաջուանից աւելի լաւ:

Գ. Բաժանման պատճառ կը դառնան նաև ինչպէս գիւղացիք կանուանեն «խորթ ու մուրուները» *), այսինքն երկրորդ կամ երրորդ կանայքը, որոնք հարսներու և տղայոց մէջ խռովութիւն սերմանելով տները բաժանել կուտան:

Դ. Բաժանման իրրև երկրորդական պատճառներ են երբ հայրը որդիներէն մէկը շատ կը սիրէ և կաշխատի ընդհանուրի ժառանգութիւնից մի նշանաւոր արտ, կալուածք (ջրաղաց և այլն) նուիրել սիրած որդուն:

Ե. Երբ եղբայրներէն մէկը շատ որդիք ունենայ և միւսները ոչ, չունեցողները կուզեն շուտով բաժանուել, որպէս զի իրենց պատկանած ժառանգութիւնը չվատնուի յօգուտ բազմաթիւ որդիք ունեցողին և այլն և այլն:

Ընտանիքի անդամոց անուններ ըստ սեռի եւ հասակի. Նշանուած աղջիկ ու տղան (դեռ չպսակուած) կը կոչուին նշանած, նշանը. պսակուելուց յետոյ՝ տղան փեսայ և աղջիկը հարս, փոչրաւոր (փոքրաւոր), երկուքը մէկանց՝ ամուսին կամ էրեկ ու էգեկ (այրիկ ու կնիկ): Երկրորդ... անդամ պսակուած այր ու կին կը կոչուին որբեվերի (որբ և այրի):

---

*) Մորու կամ խորթ մայր:

Փեսայի հայրը կը կոչուի հարսին՝ ներեր (սկեսրայր), մայրը՝ նոռոր (սկեսուր), եղբայրը՝ ռեփր (տագր), քոյրը՝ ռուլ (տալ), սոցա որդիքը՝ ռեփեր կամ ռուլջ ուրդ (ուղղականի վ սեռականի կամ տրականի մէջ կը ջնջուի)։

Հարսի հայրը կը կոչուի փեսային ռներ, մայրը՝ ղնոռջ (զոքանջ), եղբայրը՝ ռներչռփ, քոյրը՝ ռնեկ։ Երկու քոյրեր առնող փեսաները կը կոչուին մէկմէկու՝ (տաճկ.) պռաձնոռ (քենեկալ)։

Հարսի և փեսայի ծնողքը, եղբայրները, քոյրերը, և բոլոր արական և իգական սեռի ազգականները կը կոչուեն իրարու խնամի։

Որդին իւր հայրը կ'անուանէ պռռ, իբրև կոչական՝ աբոյ, (քրդ.) կեհս, հաւր՝ պապ է, պապոյ, ջոջպապ. մայրը կը կոչուի մամ, իբրև կոչական մամոյ, մա, մարէ, մէրիկ, նանէ, նա։ Հօր և մօր մայրը՝ ջոջս, ջոջկի, դադէ (քրդ.) (մօր եղբայրը և բոլոր սորա արու ազգականները՝ տեռի)։ Հօրեղբայրը՝ հաղբէր, սորա կինը՝ հաղբէրկին, տատոյ որդիք՝ հաղբօր ուղս, հաղբօր ուղջի։

Ընտանիքի իրաւունքները. Ընտանիք կազմող եղբայրներ կամ հօր եղբայր ու եղբօր որդիք կը կոչուեն (տաճ.) ղարե (ընկեր), որոնք պետական օրէնքի ուժով և աւանդական սովորութեամբ հաւասար ժառանգներ են. ժառանգութիւնը ժառանգներու թուոյն համեմատ հաւասարապէս կը կիսուի։

Ինչպէս ընտանիքի ազդեցութիւնը և պատիւը բարձր պահելու համար գիւղերու մէջ, գիւղացին՝ բացի ուրիշ յարգելի պատճառներից կը սիրէ համախմբուել (2—40—50 անդամ) մէկ յարկի տակ, նոյնպէս և երկրի մէջ նոյն ազդեցիկ դիրքը ձեռք բերելու նպատակով՝ փոքր եղբայրները՝ մեծից բաժանուելու ժամանակ յօդուտ սորան մի կարգ զիջողութիւններ կանեն, որպէսզի պապական օջախը միշտ շէն ու պայծառ մնայ։

1) Այն լեռնանման մեծ, սրածայր և 4—500 գերաններով կազմուած տունը, ուր 40—50 անձ կը բնակէր առաջ, կը թողնեն մեծ եղբօր իբրև կանգնած օջախ, իսկ իրենք նոր տներ կը կանգնեցնեն. առաջինը կանուանեն մեծ ռուռ, իսկ իրենցը ղառէրռ կամ փոքր ռներ։

2) Որպէսզի օջախին դիմող ամէն մէկ հիւր առաջուայ նման հիւրասիրուի, ուտէ, խմէ և օջախի անունը բարձր մնայ, ընդհանուրի ժառանգութիւնից կը յանձնեն մեծ եղբօր տան մեծ օրռ (հիւրասենեակը) իւր ոչնոռ, օդայնի կից ախոռը և օդայի սարքը—փռուածք և այլն։

3) Ընդհանուրի ժառանգութիւնից օդայի ծախքերուն կը յատկացուին մի ուռ, 10—20 գլուխ ոչխար, 1—2 ձի և այլն։

Դեռ չբաժնուած՝ երբ եղբայրներէն մէկին 2—3 արու որդիք

ամուսնացուին, որոնց համար տնից կը հոգացուի խոլոխ ծախքը, բաժանուելու ժամանակ խալանը ի նկատի կառնուի, և նոյնքան գումար կը թողնուի որդիք չամուսնացնող եղբօր։ Եթէ այս զիջողութիւնը կամքով տեղի չունենայ, օրէնքին դիմելով պահանջել կուտան։

Արտեր և մարգերը եթէ գոյգ թուով են՝ հոտոր (համարժէք) անելով կը բաժնուեն. կետ (կենտ, կոճատ) մնացած արտը ճոպանով կը կիսուի։ Արտ արտի հետ համդար դրած ժամանակ՝ պէտք է մեծ եղբայրը դոնէ և փոքրը վերջոնէ, յետոյ ուրիշ երկու համդար արտ պէտք է փոքր եղբայրը դոնէ և մեծը վերցնէ փոփոխակի մինչև վերջը։

Բաժանուելու ժամանակ պատրաստի գտնուած արմտիք, պաշար, մարակայ (նպար), իւղ, պանիր, բուրդ և այլն ոմանք անձի թուոյն համեմատ կը բաժնեն, և այդ մեծ ազնուութիւն կը համարուի, իսկ ոմանք (նոր սերունդը) շաբոխ թուոյն համեմատ։ Տան պարտքը նոյնպէս՝ կէս առ կէս կը բաժնուի, բայց եղբայրներու սրմոխ անձեռմխելի է։

Անասունները նոյնպէս հոտոր անելով կը դնեն ու կը վերցնեն. իսկ ման-չամանները շէրիքներու թուոյն համեմատ կը բաժնեն։

Հայրը որդոց ժառանգութեան մէջ բաժին չունի. բայց որդիք պարտաւոր են ցմահ պահել և պատուել։

Իգական սեռի ժառանգները (քոյրեր) արականներու հետ (եղբայրները) օրէնքը թէև հաւասար իրաւունքի տէր կը ճանաչէ, բայց սովորութիւնը առաջինները զրկած է իրենց իրաւունքներից. մեծ ամօթ ու անազնուութիւն կը համարուի եթէ հօր անցմանից յետոյ քոյր մի իւր եղբայրներէն ժառանգութեան մասն խնդրէ, եթէ՝ մինչև անգամ ամենաթշուառ դրութեան մէջ էլ լինի (ամուսնացածը)։ Եթէ աղուս է՝ հիւրի նման իւր հօր տունը կապրի մինչև ամուսնանալը, և եթէ ամուսնացած է, «կտոր մի հաց գտեր է գնացեր յետև» կասեն գիւղացիք։

Իգական սեռի ժառանգը իւր հօր ժառանգութեանը կուզէ տիրանալ, 1) երբ հօր արու ժառանգ չմնայ. 2) երբ մերձաւոր ազգական էլ չունենալով ժառանգութիւնը պիտի անցնի գերդաստանի հեռաւոր ճիւղի մէկ կամ մէկ քանի անդամներու։ Որովհետև աղէր ու հարդէր կը համարուի եթէ աղջիկը մերձաւոր ազգականներու, իւր ժառանգութեանը տիրապետելուն ընդդէմ ելս բողոք ու պահանջ կը հանէ։ Մինչ հայերը աղուանիկ անուան տակ իգական սեռը կը զրկեն իւր իրաւունքներէն, քուրդը իբրև բնական օրէնք, աղջիկը բացէ բաց զրկած է հայրական ժառանգութիւնից։ Այդ օրինակ օրէնքի ու ազնուութեան այնքան ընտելացած է իգական սեռը, որ աւելի լաւ կը համարեն եթէ իրենց ժառանգութիւնը արնակից ազգականներուն

մնայ քան թէ օտարի (ամուսինների) տղայոց. 30—40 տարի ամուսնութեան օրից անցնելուց և բազմաթիւ որդիք ունենալուց յետոյ էլ կինարմատներու ՀԵՂԷ (սէրը, համակրութիւնը) հէրանց և արենակցաց կողմն է. այդ յատուկ է այս կողմի հայ և քուրդ իգական սեռին։

Ժառանգութիւնը օտար սերունդի կանցնի ԹՈՓԵՈՅՈՒԵՆ միջոցով. երբ օջախին արու ժառանգ չմնայ, տնփեսան կը ժառանգէ աներոջ շարժական և անշարժ գոյքը։ Եթէ տնփեսայի կնոջ մէկից աւելի քոյրեր լինին, ժառանգութիւնը հաւասարապէս կը բաժնուի տնփեսայի և իւր կնոջ (իբրև մէկ ժառանգի) և միւս քոյրերու վրայ։

Որդեգրութեան դէպքեր տեսնուած չեն. հետևապէս և այս մասին մի որևէ սովորութիւն կամ օրէնք մեզ ծանօթ չէ։

Հիւանդութիւնք եւ գիւղական ճարերը.—Բացի մի քանի համաճարակ հիւանդութիւններից, որոնց գիւղական ժողովուրդը ՀՅԱՍՈՒՄ (ցասումն, Աստուծոյ բարկութիւն) անունը կուտայ, միւս բոլոր հիւանդութեանց համար մէկ մէկից սովորելով և փորձերու վրայ հիմնուելով, դեղ ու դարման գտած է նա, որոնց մենք ՖԻ-ՀՅԱՆ ՃԱՐԵՐ անունը կուտանք։

Ճարերից մի մասը, ինչպէս ասինք, ժողովուրդը պատահական բժիշկներից կը սովորի, մի քանիսը նոյն իսկ կենդանիներից. օրինակ շատ մարդիկ ականատես եղեր են որ ոզնին օձու միս կերած ժամանակ՝ փուքով կը վազէ և ԸՈՒԼԷՆ կամ ԾՈՒԾ կոչուած բոյսի թուփերը կուտէ, որպէսզի չուռի և չպայթի, ինչպէս փորձուած է. և այդպէս, ժողովուրդը վերքի ժահրը և դեղուածի թոյնը թափելու համար թորթիկ կը գործածէ. կարիճի խայթուածը առողջացնելու համար խրուն-դատի (Verbascum thapsus) թուփը կը դնէ վերքի վրայ։ Ճատ ճարերու սկիզբը պատահմամբ գտած է. այսպէս երբ գիւղացին արտը վարելու ժամանակ արօրի խոփով գոմէշի ոտքը վիրաւորէ, խսկոյն կը ՀԻՊԷ վերքի վրայ և աջող արդիւնք կունենայ. եթէ ձեռքը վիրաւորէ, կամ այրած շորի մոխիր և կամ սարդի ոստայն կը գործածէ և արդիւնքը դարձեալ աջող կը գտնէ, վերքի ուռոյցը (նախքան պատռուելը) շուտով հասցնելու համար տաւարի թրիքը ձիթով կամ խմորի կտորը իւղով շաղախելով վրան կը կապեն, վերքից թարախ ծծել տալու համար, եղան լեղու (plantagomedia) կամ կաղամբի թուփ կը գործածեն։

Բաւական առաջ գնացած է վիրաբուժութիւնը, որով պարապողները աջողութեամբ մարդոց և անասնոց կոտրած ոտք ու ձեռքը

կը կապեն և 10—15 օրէն կառողջացնեն. բացառութիւն կը կազմեն անասուններից միայն ձիերն ու էշերը որոնք հարամ օրեր կը կոչուին, և ինչպէս փորձը ցոյց տուած է, սոցա կոտրած ոսկորները չեն կապուեր. միւս կենդանիներուն եւս միայն կտրուած ոտքերը չառողջացուեր։

Գիւղացիք բացի իրենց սրածայր տներից ուրիշ բնակարաններ չունին. միայն մեծ տներու վրայ երբեմն կը գտնուեն փոքրիկ սենեակներ, որոնք (քրդ.) կը կոչուին հոլ։ Հետևաբար և երբ մէկը հիւանդանայ, տան մէջ ու սովորաբար թունդրի դլուխը կը պարկի։ Ո՜րքան անտանելի է հիւանդի վիճակը, երբ թունդրի ծուխը, կերակուրի հոտը, չարաճճի երեխայոց ժժժոցն ու աղաղակները, ընտանիքի անդադար անց ու դարձը և բարձրաձայն խօսակցութիւնները խեղճ տկարի անհանդիստ վիճակը աւելի և աւելի կը ծանրացնեն. մանաւանդ եթէ հիւանդութիւնը վարակիչ է և մէկ տան մէջ 10—15 անձինք մէկանց կը պառկին։

Նոր հիւանդացողի համար ամենից առաջ հոգ կը տարուի որ շատ տաք մնայ. այդ նպատակին մեծ ծառայութիւն կը մատուցանէ գիւղական թունդիրը, որ ամէն օր կը վառուի և ամբողջ տունը կը տաքացնէ։ Հիւանդը այնպէս կը պարկի, որ ոտները մինչև թունդիրը հասնեն. վրան կը ձգեն թանձր անկողիններ ու կապերտներ, գրլուխը փաթաթելով կը ծածկեն, որպէսզի քրտնի և շատ անդամ քրտինքի միջոցով հասարակ հիւանդութիւնները կը վռնդեն։

Առանց իմանալու լաւն ու վատը, համարեա ստիպելով կառաջարկեն հիւանդին զանազան թաց ու չոր մրգեղէններ, և կը համոզեն որ անպատճառ ուտէ. այս պարագային մայրերու հոգատարութիւնը չափազանց է, հիւանդ որդու «աչքը բացանելու» համար չորս կողմը կը դարսեն միրգ, կերակուրներ, մածուն, պանիր և այլն և երբ հիւանդը կարծուած քնից կը զարթի, մէկ առ մէկ կերակուրներու անունները կը համրէ, միրգ ցոյց կուտայ և գովելով կուզէ ախորժակը սրել, և նորա ասելով եթէ «ժիր լինի» և զօռով ուտէ առաջարկած կերակուր կամ միրգը, անպատճառ կառողջանայ։

Հիւանդի մօտիկ ազգականներ ու բարեկամները, և եթէ ծանօթ անձնաւորութիւն է, գրեթէ բոլոր գիւղացիք, մէկ առ մէկ այցելութեան կերթան. այդ այցելութիւնը պարտաւորութիւն կը համարեն և «ձեռ դարտակ» չպէտքէ ներկայանան. սովորաբար թաց ու չոր մրգեղէն կը տարուի և ամէն մէկ այցելուն կաշխատի «աչքը բանալ» միրգ ուտեցնելով։

Վարակիչ հիւանդութիւններից միայն շոլ (տիֆ) կոչուած ցաւից կը վախենան և այս մասին զգուշութիւնը այսքան է, որ հարե-

ւանի տունը երթևեկութիւն չանեն, իսկ եթէ հիւանդութիւնը մի ընտանիքի մէջ է, տանեցիք ամենևին զգուշութիւն չեն բանեցներ, և եթէ ցոյց տուողներ էլ լինին վարակման վտանգը, կը ծաղրեն «յօրին Աստուած զդա (հիւանդը) կը տեսնայ, զմրզի չը տեսնայ» պատասխանը տալով. այդ պատճառով էլ միևնոյն դդալով ու ամանովը կը կերակրուեն հիւանդն ու առողջները։

Երկրի մէջ դաւառական բժիշկներ չկան արդէն, ունենալու համար մտածողն ով է. կը մնան արքունի զօրաց ջառուհներն ու հեկիմները (վիրաբոյժ և բժիշկ), որոնք մատչելի չեն ժողովրդին, ասպարէզ կը մնայ 1) ղանաղան մարդոց, որոնք նման հիւանդութեամբ երբեմն տկարացեր են և այս ինչ ու այն ինչ ճարերովը լաւացեր և, խորհուրդ կուտան գործածել այդ ճարերը. 2) հեկիմ պառառներու, որոնք յայտնի են ժողովրդին իրենց գիտութեամբը. և 3) գաւառի մէջ կամ դուրսը գտնուած նշանաւոր ինքնուս հեկիմներու, որոնց հետ առանձին սակարկութիւն կը լինի հիւանդը լաւացնելու համար։

Այս վերջինները հազիւ գրել կարդալ գիտեն և հին հեկիմաթ (բըժշկարան) ունին, որոնց առաջնորդութեամբ գանազան դեղրունք (դեղօրայք) կը պատրաստեն հարկ եղած ժամանակ գործածելու։ Նոցա շարժական դեղատունը ընդամէնը մի թեթև խուրջին է, ուր դարսուած կը լինեն բազմաթիւ նոսուներ. գանազան գոյնի մալհամներով և դեղերով։ Ամէն տեսակ հիւանդութիւն բժշկելու ձեռնամուխ կը լինեն, բայց ինչպէս ստուգուած է, աւելի աջողակ են վիրաբուժութեան ճիւղին մէջ, իսկ ներքին հիւանդութեանց նկատմամբ խեղճ են։

Ա. գլխացաւեր.

1. Ջրածաւ.—Թունդրի կամ վառարանի ծխից բռնուած գլխու հիւանդութիւնը. գլխու վրայ սառ ջուր ածելով կամ ճակատին ձիւն շփելով ցաւը կը հալածեն։

2. Գլխու նոր ընկնելը.—(տես սնոտիապաշտամանց բաժինը).

3. Գլխու դարդ.—Այս ցաւը աչքերը կը մթնացնէ, ճպուռ կուտան, ախորժակը կը կապուի. ա) շոգ, սուր քենալ գրեղ (կարմիր ծաղիկ, սուտ ներկ) և Բարի օղի խառնելով իրարու՝ գլխու վրայ կը կապեն. բ) բաւական քանակութեամբ աղ խարկելով տաք բովով՝ հիւանդը լողացնելուց յետոյ գլխու վրայ կը կապեն և կաշխատեն քրտնեցնել տկարը. գ) ճակատի երկու կողքերին Եխու *) կը կպցնեն։

4. Նուռ նռլ (ինջուածք գլխու). ա) հիւանդի գլուխը ածելով՝ տաքջրով և սապոնով կը լուանան, և նզուլի ծաղիկը (Fussilago far-

*) Գիւղական Եխուն է մանրած խնկան և բարկ օղու բաղադրութիւնը, որ Խոյոյ Ռոշի վրայ քաշած կը կապեն քամոտ տեղաց վրայ։

fara) եփելով խիւս կը շինեն և կը քաշեն գլխու վրայ. կամ չորացնելով ու մանրելով քթախոտի հետ քիթը կը քաշեն. բ) Բորակով կը լուանան որ նզուլի եռը (քորուելը) անցնի, գ) Հինայ շաղախը սափրած գլխու վրայ կը քսեն. դ) Ֆէս գլխարկը այս ցաւին մեղմացուցիչ կը համարուի։

5. Գլխու փորք կամ ուռքը վերջացնելու համար, միայն բորակաջրով կը լուանան։

6. Թրլուն (գլխու)—տես սնոտիապաշտամանց բաժինը.

7. Գլխու խոց.—ա) Ծխախոտի ոչնչ (Ծխամորճի մէջ գոյացած աղտը) ձիթով կեփեն և խոցի վրայ կը կապեն. բ) Խնձորի չիրը կայրեն և մուրը կը քսեն. գ) Բորակը լուղով կամ թթով եռացնելով կը գործածեն։

8. Կոչնչ (քրդ. ?)—այս ցաւով կը տկարանան միայն մանուկները և պատանիները, որոնք սաստիկ և խորը կը հազան, ձայներնին կը կտրուի, թոքերը կսկսեն խշխշալ. շնչարգելութիւն կունենան և այլն։—Հիւանդի հոգեւորը կը սափրեն. ածելիով վերք կը բանան արիւն առնելու համար, և ոչ փորք մէջ կը կապեն վերքի վրայ. արդիւնքը շատ յաջող է։

Բ. Աչքացաւ.

9. Ձմեռ. ճնահարութիւն աչաց. ա) քարթու (հին) հաց կը թրջեն և կակղացնելով կը դնեն աչաց կոպերու վրայ. բ) ձմերկի չորացած կեղևը նոյն կերպ թրջելով կը կապեն. գ) հին տրեխի կաշին նոյնպէս թրջելով կը գործածեն. դ) յմէնի փոր կոչուած ուլունքը կը քսեն աչքերուն, կամ ջրի մէջ տրորելով ջուրը կը գործածեն։

10. Հոնոբոնի (hemero lapie)—Հաւու թոքը եփելով շոգին կուտան աչքերու դէմը. տես նաև սնոտիապաշտամանց բաժինը։

11. Ճպուն.—Կտուրը (ճպուռ) տուող աչաց ցաւը որ ընդհանրապէս ամառը կը տարածուի և վարակիչ է. ա) Ջուրէ դեղդիրով կը քաշեն աչքը։ Ջպլեղն է այրած և մանրած շապի ու հաւկիթի դեղնուցի բաղադրութիւնը։ բ) Ջրբնան գործածել։ Սա այսպէս կը պատրաստեն.—հաւկիթի սպիտակուցը ջէրլի նոռով այնքան կը տրորեն որ կը դեղնի, ապա հում շապով հարելով երկու մասի կը բաժնուի, ջուր և տիրդ. ջուրը կը կաթեցնեն աչքը, իսկ տիրդը կը կապեն աչաց վրայ։ գ) Կարմիր սուտ ծաղիկը (գեվազդեզ) թանաք շինելով կածեն աչքը։ Երբ ճպուկոտ աչքը ցուրտ առնէ, որ գիւղացիք կանուանեն (քրդ.) Ռեշնայ, դ) Խոռվոտ կամ նէրէ փոյրի կեղև, կամ մէ ղրի չանէ կը ծխեն աչքերու դէմ. ե) ուռի թուի և դաղձ կը կապեն. զ) ջէղլի նոռ, փոյ նոռ (բուսական դեղօրայք), խորոնքիլ (մեխակ), խոնի, խորոքիքոր (սև

պղպեղ), ՆէՄԼ շաքար (պաղ շաքար) հաւկթի սպիտակուցով միասին ձուի կճեպի մէջ կածեն, և եփելով ջուրը կը կաթեցնեն աչաց մէջ, իսկ տիրդը կը կապեն վրան. է) Անալի կարագ կեռացնեն և մէջը պաղ շաքար ու հաւկթի դեղնուց խառնելով կը լցեն աչքը։

Երբ վերոգրեալ միջոցներով աչաց ցաւը չբուժուի և ժամանակ անցնելով վրան ԱՉԷԷԸ ցաՀ ԼՈՐԷՆ (ցաւը կոտրուիլ, մնալ), աչքացաւը անբուժելի կը համարուի։

ը) Երբ չափազանց արիւն հաւաքուի աչաց մէջ և դեղերով չը-կարողանան վերջացնել, ԽՈՐՈՊ կոչուած խոտի արմատի կաթը կը կաթեցնեն աչքը, որ սարսափելի այրող զօրութիւն ունի և նոյն ըսպէին թանձրացած արիւնը արտասուախառն կը թափէ ցած։

թ) Ձատերը շապով և սառ շաքարով ցաւած աչքի կոպերու տակ կը քերեն։

12. Ընդ ԸՆԴ. սպիտակութիւն աչաց բբերու վրայ.—ժ) կաթի շոգին կը տանեն դէպի աչքերը, ժա) կնոջ ծծի կաթը կածեն. ժբ) ՆԷԾՈՒՆ ՓԷՏ ծաղիկը չորացնելով և մանրելով կը փչեն աչքերը). անասնոց քթախոտ կ'փչեն). ժգ) ոգնու լեղի և որցմն (գիվան) խոտի հունդի կաթը միասին կը կաթեցնեն աչքը։

Մի երիտասարդ հաղորդեց ինձ հետևեալ ճարը որ սովորած էր իւր բժիշկ մամիկից.—շիկամորթ օձու սիրտ ու թոքը պէտք է վերցնել և տաք տեղ պահել այնքան ժամանակ որ որդնոտի, ապա այդ որդունքը եփել և ջուրը կաթեցնել ԸՆԴ ունեցած աչքի մէջ։

Գ. Ականջացաւ

13. ԱԿԱՆՋԱՅՈՒԸ երբ թեթև է՝ ա) նոր եփուած հացի բուշտը կը պատռեն և ականջը շոգու դէմ կուտան։ բ) սոխի կամ սխտորի ծիլը ձիթով եփելով ականջի մէջ կը դնեն և ձէթը կը կաթեցնեն. գ) երբ ցաւը բաւական ծանր է, շատ գործածուած ձիթամանը լաւ կը տաքցնեն և ականջը գոլու դէմը կուտան. դ) ականջի թարախն ու աղտեղութիւնը մաքրելու համար ԱԿԱՆ ՀՈՒԼ քսած շորը պատրոյգ անելով մի ծայրը կը վառեն և միւս ծայրը ականջը կը դնեն. քիչ ինչ վառուելուց յետոյ ամբողջ աղտեղութիւնը կը հաւաքուի շորի վրայ։

14. ԽՇՈՒԿՈՒ.—ականջը երբ խլանայ, ա) ԽՈՒԼ ԽՈՐ, և մեղրի չանչ եփելով ջուրը կը կաթեցնեն. բ) ոգնու մէզը կածեն ականջը և խընձորի կտորը կը դնեն վրան։

Դ. Բերանացաւ.

15. ՊԱՍԱՀԷԼ (պասահար լինել).—Երկար պաս պահելուց բերանի մէջ և լնդերու վրայ քեղրթուկի նման վէրքեր կ'առաջանան. ա) գաղ-

տիկուռ (Myosurus minimus) և դաղձ կուտեն, կամ ծեծելով ջուրը կառնեն բերանը, բ) կապոյտ շապի փոշին կը ձգեն բերանը։

16. Լ՝ոյս—խարանֆիլ, դեղին կոճ և տաք կոճ լոսելով և փոշիացնելով կը ցանեն ընդերու վրայ։

Ե. Ակռացաւ.

17. ա) Փայտէ դդալի պոչը կը տաքցնեն և ակռայի վարի մասը կը խարեն, ապա սխտոր կը դնեն վրան. բ) երնջակ բանջարը խաշելով կամ ջնջխելով (ջարդել) կը դնեն հիւանդ ակռայի վրայ. գ) խարանֆիլի կտոր կը դնեն ակռաներու մէջ տեղը. դ) լիմոն աղը պէտք է ջրի մէջ լուծել և ընտիր գայլախազը (չախմախ տաշի) կրակի մէջ կարմրացնելով մէջ ձգել և, ծածկել որ շոգին դուրս չելնէ, սառելուց յետոյ ցաւած ակռայի վրայ առնելու է. արդիւնքը յաջող է՝ եթէ ատամը փտած կամ որդնկեր չլինի։

18. Ակռաներու որդունքը հանելու համար, կառնեն աղուաշբանկի (hyoscyamus niger) հունդը, ձիթով թրջած շորի մէջ կը փաթաթեն, ապա ջրով լիք ամանի բերանին դրած՝ կը վառեն և ծուխը ձագառով դէպի բերանը կը տանեն. ջրի երեսը սպիտակ որդի նման բաներ կընկնեն և կը հաստատեն որ իրաւի որդ է։ Ձատերը խաբեբայութիւն կը համարեն այս միջոցը. որովհետև կարծուած որդերը ցիշեալ բոյսի հունդը կը համարուի։

Զ. Կոկորդացաւ և զանազան հիւանդութիւններ.

19. Փնաճ ժամանակ, պարանոցի՝ բարձի վրայ ծուռ ընկնելուց կոկորդի ներսի կողմը կուռի և դուրս կուտայ, որը կանուանեն Ն՝ուռ ընկնուչ—բութ կամ ցուցամատը կոկորդն ի վայր տանելով ուռոյցը կը տրորեն, հուպ կուտան, կամ բութ մատը ծալելով քիմքը վեր կը բարձրացնեն։

20. Ջ՝ոյղիկ.—Ծանր կմունքը կը կոչուի յ՝ոյղիկ. (տես սնոտիապաշտամանց բաժինը) երբ կմունքն ու ձանձողիկը կամ նման կոկորդացաւերը ցոյց տրուած միջոցներովը չառողջանան, ուռոյցը շատնալով ցաւ պատճառէ, ա) անթառամ ծաղիկը (gnafalium arenarium) կը ծեծեն ջրով և դրսու կողմից կը կապեն ուռոյցքի վրայ որպէս զի պատռի. բ) տեղտի ծաղիկն ու կոճակաձև խաշիաշը (սերմը) հաւկթի դեղնուցով կը հարեն և ուռոյցի վրայ կը կապեն, իսկ վերջնոյս վրայ բամբակ կը դնեն։

21. Ծծայս (կանանց).—կաթի լերդելը (մածնիլ, թանձրանալ) կանանց ծծերու մէջ, որ մեծ ցաւ կը պատճառէ. ա) հիւանդ ծիծը ջրով լիք կժան վրայ դնելով՝ սանրով ծիծը կը սանրեն. բ) աւազ կը

կապեն ծծի վրայ՝ որ կաթը լուծուի, գ) աղ և կաղամբի թուփ միասին կը կապեն։ Արդիւնքը յաջող է կանանց ասելով։

22. Կողցաւ.—Կապոյտ թանձր թղթի երեսի վրայ բարկ օղի քսելով՝ վրան կը ցանեն խնկան փոշի, և կը կապեն կողքի վրայ որ խիստ կը կպչի և կը մնայ այնքան՝ մինչև որ վերք բանալով ինքն իրեն պրծնայ. բ) տարթով եռացած ջրով բաղնիք կը դնեն. գ) սանամաքի խոտը խաշելով հիւանդը խաշիլի մէջ կը պարկեցնեն և սորա ջրովը կը քրտնեցնեն մի քանի ժամ. դ) կողացաւը երբ թեթև է՝ իւղով կը մաժեն (շփել) կամ ՀԷԼՈՒԼ (խաֆ) կը խարեն։

Նորածին երեխայոց կողերը նախապէս հրաշէկ ասեղով կը խարեն, որ վերջը վերոգրեալ կողացաւը չունենան։

23. Փաձեղ (փայծաղացաւ).—ա) Արևով կամ պարզ օրը վարպետը սուր դանակով ձախ կողի տակ՝ ծծի ներքև, վերք կը բանայ, ասեղի քթով երակը բարձրացնելով արիւն կառնէ և բոլորի հրագուն կը կորէ հանէ. յետոյ սիսեռ ծամելով՝ վերքի բերանը կը դնեն որ շուտով իրար չգայ, մինչև որ ցաւը վերջանայ. (արդիւնքը յաջող է ընդհանրապէս). բ) ցաւագար կողը լաւ մաժելուց յետոյ, վարպետը բաց ձեռքը մեղրի մէջ թաթախելով կը դնէ ցաւոտ տեղաց վրայ և քիչ մնալուց գկնի շփելու ձևով ձեռքը յետ ու առաջ կը տարուբերէ, որպէս զի մեղրը մորթը բարձրացնէ և փայծաղը իւր բնական դիրքը առնէ։

24. Պորտ ընկնելը.—Ծանր առարկայ վերցնելուց երբ պորտը խախտի և ցաւ պատճառէ՝ վառած մի հրագ կը դնեն պորտի վրայ և սորա վրայ կը կորձեն մի բղիկ (սրուակաձև բղոց). միջի օդը կանօսրանայ և բղիկը մթնոլորտի ճնշմամբ ժրելով պորտի շրջակայքը կը փնջէ ուժով ու պորտը խրբփալով տեղը կուգայ. յետոյ իւղ քսելով կը մաժեն։

25. Պուչի ընկնելը.—Պոչոսկորի խոտորելը իւր բնական դրքից,—մատը տանելով պոչիկի տակը զգուշութեամբ կուղղեն, և իւրաքանչիւր վերցնելուն՝ կարագ իւղ քսելով քամակի վրայ՝ կը մաժեն ընդ երկար։

26. Ճուչիւ նամ ցածիւ (աղեթափութիւն, hernie).—Ջաբարի կուպը և ձուխ անլուայ կտաւի վրայ դնելով կը կապեն ձուերու առուկներու վրայ և, երբ հողիլը նոր է՝ խկոյն կը լաւացնէ։

27. Ջրնոց (մկղարդելութիւն).—ա) Երբ մկղուկի մէջ քար գոյանայ՝ ուղղակի ծծելով կը հանեն, բ) ջերմուկներու մէջ գոյացած ուլունքանման կրային քարերը փոշիացնելով ջրով կը խմցնեն. գ) նուռ ծեծելով ջուրը կը խմեն և տիրդն կուտեն։

28. Կոպ նորոպոսն փեռոյնց.—Նորապսակ փեսաները երբ սեռական անկարողութիւն կստանան, որու պատճառը գիւղացիք կախարդութեան կուտան և կանուանեն նոպ, քանդելու համար՝ ընտիր խունկ

պղնձով լիք ջրով կեռացնեն և հրաշէկ դարձած մեծ երկաթ մի (աբոլի խոփ եւայն) կամաց կամաց մտցնելով ջրի մէջ շոգին կը տանեն փաթաթած շորերու կամ անկողնու միջոցով դէպի երիտասարդի առնիքը և շարունակ շփել կը տան վերջինս։

29. Բէլ ռայոռղէ (Gonorrhé *).—ա) Ամենալաւ ճարը կը համարուի ողջ դդում մի փոշու տակ թաղելով շատ լաւ եփել, մէջը ձիթապտղի ձէթ ածել և հիւանդը բաղանիք (ванна) դրած ժամանակ՝ առնիքը դդմի մէջ անցկացնել տալ, մինչև որ առնանդամի կեղտոտութիւնը վայր գայ թափի. բ) շատ գործածուած հին ձիթափարջը նոյն կերպ լաւ տաքացնել և նոյն կերպ գործածել։ (Գործածողները առաջին ճարին հաւանութիւն կուտան)։

30. Սիֆիլիսի դէմ գործածուած ճարերը ինձ անյայտ են. այսքանս լսուած է՝ որ դեղահատեր (սուլէմանի) կուտան հիւանդին և ծռէ կը նստեցնեն։

Ի. Փորացաւեր.

31. Խոլինճ (Colique).—ամենապարզ միջոցն է մէջքը ջարդելմնացած ճարերու մասին՝ տես սնոտիապաշտամանց բաժինը։

32. Խէռ (տաճկերէն՝ սանջու).—ա) վռէռ ջրով տրորելով կը խմեն. բ) սխտոր կուտեն. գ) շոպ տրորելով ջրով կը գործածեն. դ) ։ռռ (onopardon acanthium) փշի սերմը կուլ կուտան. ե) գաղտիկուռ (Myosurus minimus) խոտը խաշելով ջուրը կը խմեն կամ հում հում կուտեն. զ) ռէջռ։ բանջարը ձիթով տապակելով կը գործածեն. է) ռռէ։ բանջարը նոյն կերպ իւղով տապակելով կուտեն։

33. Կապ (փորու)=պնդութիւն. փորու պնդութիւնը քանդելու և լուծում պատճառելու համար ա) հաւու ծերտ ջրով տրորելով կը խմեն. բ) այժմ սկսած են Հնդեռղէ կոչուած ձէթը (դդմենու իւղը) խմել՝ որ ֆէնոֆէրչռէ ձէթի նմանութիւնն ու զօրութիւնն ունի։

34. Մայռէլ (տաճ.)=hemorroïde—թթախտութիւն, տեռատեսութիւն եւայն։—Մայասիլը երկու տեսակ կը համարուի. ոչ և եփ. որձն այն է՝ որ երաստանին պտուկներ դուրս կուտայ, որը այրիչ դեղերով կը խարեն, և երբ այս միջոցը չգործածեն, կտաւատի բաղմը (ծեծուած ցօղունը) ծուխ կուտան պտուկներու դէմը, որով կը թարախակալին և շուտով կը պատռուին. իսկ էգը անպտուկ ցաւն է, որ արենահոսութեամբ և պարբերական խիթերով կը շարունակէ տան-

*) Gonorrhé բառով ցոյց տրուած բէլսայուղի ցաւը գուցէ ռռռռռռ։ չէ, որը բժիշկները վենեռական ցաւոց կարգը կը դասեն. այդ հիւանդութիւն ունեցողները կը հաստատեն՝ որ բէլսայուղին մրսելուց առաջ կուգայ և տաճկերէն էլ կը նշանակէ մէջէ հրեր ցռբռ ռռեր։

ջել հիւանդը. երբ ոտքերը սառեն կամ շատ մրսի և այլն, ճարերն են՝ ա) քար կամ աղիս լաւ կը տաքացնեն և վրան ջուր ածելով գոյացած շոգին կը տանեն դէպի նստատեղին. կամ աղիսի վրան կը նըստեն. բ) մազից պատրաստուած գուլբայ կը հագնին որ ցաւը փորից քաշէ ոտները. (քրտինքի միջոցով). գ) բուժիչ յատկութեամբ նշանաւոր՝ Հարդամ շիւռ (մշտադալար) բոյսը. որ քինաքինայի նման դառն է, կեփեն և ջուրը կը խմեն։ Գործածողները այս խոտի բուժիչ զօրութիւնը կը հաստատեն. դ) Սանամաքի խոտը նոյն կերպ կը խաշեն. ե) օձու թուր խոտի (sparganium ramasium) արմատը կը խաշեն և ջուրը կը խմեն. զ) Մորեմուկի (մորենու) արմատը նոյն կերպ կը գործածեն. է) Անթառամ ծաղիկը նոյնպէս. ը) Հաց ու պանիր (խոտի) արմատը չափազանց կեփեն և մէջը բարկ օղի ածելով կը խմեն և այլն։ թ) Մայասիլի պատճառով երբ նստատեղին քոր գայ, կանափի կանայ թփերը ծեծելով դեղահատի (հապ) նման ներսը կը տանեն։ Իշու և ուղտի մէգն ևս օգտակար կը համարուի։ ժ) Հիւանդին հանգստութիւն պատճառելու համար, թաղիքի կտորը աղաջրով լաւ կեռացնեն և վրան հաւկթի դեղնուց լցնելով տկարը կը նստեցնեն վրան, դեղնուցը ինքն իրան կը քաշուի ներսը և բաւական կը հանգստացնէ։

35. Տաց հարիւ.—Ծննդական կանայք երբ մրսեն կամ թթուեղէն ուտելով որովայնի տկարութիւն ունենան՝ ժողովրդական լեզուով կը կոչուի գաց հարիւ.—ա) նոր զենած ոչխարի տաք տաք մորթու վրայ պրջոց ցանելով կը փաթաթեն և կը քրտնացնեն. բ) հին յարդը խաշելով մէջը ձէթ կածեն ու հիւանդը խաշած յարդի մէջ կը պարկեցնեն։

36. Փորի որդ (ճիճու).—երեխայոց փորը երբ ճիճու գոյանայ՝ ա) ոսկ կը թրջեն և ժամերով թողնելուց յետոյ անօթուց կը կերցնեն. բ) հում նոնքեր կուտեն. գ) խորոսանի (եղևնահունդ) սև չամիչի հետ ծեծելով, առանց նախապէս հոտը քաշելու, թթուած կը կերցնեն.— արդիւնքը յաջող է։

Ը. Ոտաց եւ ձեռաց հիւանդութիւնք.

(կոտրուածք, այրուածք, կորուածք և այլն).

37. Կոտրած ոտք ու ձեռք հետևեալ կերպով կը կապուի. նախ կոտրուած անդամը զգուշութեամբ տաք ջրով և սապոնով կը լուանան. մեղմով քիչ կը ձգեն՝ որ ոսկորները իրենց բնական դիրքն առնեն, ապա տաք կոճով և հաւկթի դեղնուցով խարան (եախու) շինելով կոտրուկի վրայ կը կապեն, յետոյ թաղիքը աղաջրի մէջ լաւ կեռացնեն՝ ու խարանի վրայ կը փաթաթեն, իսկ վերջնոյս վրայ չորս հատ տախտակներ դնելով ամուր կը կապեն. կապոցը չքանդուիր 10—15 օր՝ մինչև որ ոսկորները կպչեն։ Արդիւնքը շատ յաջող է։

Եթէ կոտրածը ծուռ կպչի, նորմալոյց յոնը (ալաբալըղի), որ այդ նպատակով չորուցած կը պահուի, կակղացնելով ծուռ կպած ոսկորի վրայ կը կապեն ժամերով, ձուկը նախկին կոտրածը կը վերանորոգէ, ոսկորները կը բեկբեկեն, որ ժամանակ կաշխատեն ուղիղ կապել։

38. Այրուածքի դեղը.—այրուածքը երբ թեթեւ է՝ ա) թանաք կը քսեն. բ) իշու արիւն կը քսեն. գ) հաց ու պանիր, խոտ, գաղտնիկուռ, դաղձ և խռով խոտ լաւ կեփեն, այրուածքին կովու իւղ քսելով դեղն ևս վրան կը կապեն. դ) տորոն և սոխ եփելով կը քաշեն վերքի վրայ. ե) երբ վերքը կառնէ ճերմակնալ, գաղնիկուռ և գինոբէ փոշիացնելով կը ցանեն վերքին. զ) հաւկթի դեղնուց, դեղին կոճ և կովու իւղ մալհամ շինելով կը գործածեն։ Երբ վերքը ցուրտ առնէ (թաշանայ), է) թթու պաստեղ (փասթել) կաթի մէջ կը տրորեն, մէջը մանրած սոխ ածելով կեփեն, վրան ձէթ և ալիւր ևս կաւելացնեն, դարձեալ կեփեն և կը գործածեն, սորանից յետոյ գաղտիկուռ կամ դեղին կոճ լոսելով և մանրելով վերքի վրայ կը ցանեն. վերջի վերջոյ՝ կապուտ շոր դմակի մէջ եռացնելով՝ վերքին կը կապեն։

39. Մրուածքի այրուածքի.—(հարեր) ա) կտաւատի փոխինդը կաթով կեփեն, ապա սոխ և քիչ մի իւղ աւելացնելով թեթեւ եփ մ՝ ևս կուստան և կը քաշեն մրսածութիւնից առաջացած այրուածքի վրայ մինչև 10 ժամ. բ) գաղտիկուռ աւելուկի թուփ, ճնճղու պաշար, հաց ու պանիր (խոտը) և սոխ ծեծելով իւղով, ձիթով և ալրով միասին կեփեն և կը գործածեն. գ) խամ հող (արտի) ջրով կեփեն և կը քաշեն մրսածի վերքին. դ) ոչխարի սպիտակ թոքը հում հում կը կապեն. վերքը չորցնելու համար ե) գաղտիկուռ, կամ հինայ կամ՝ դեղին կոճ մանրելով կը ցանեն։

40. Կորածքի վերքի դեղ.—Վերքը եթէ թեթեւ է՝ վրան կը դնեն ոչ, ոտրքի ոսկոյն, վաղոբ և այլն կսկծեցուցիչ նիւթերը. եթէ շատ մեծ է՝ նախ ասեղով կը կարեն, ապա մեղր, շոգ, այրած ընդեղ կամ յոխոյ և փգփնած հաշան լաւ կը հարեն և կը դնեն վերքի վրայ. այս առաջին դեղը կը կոչուի (քրդ.) հա կամ հեա. յետոյ մալհամներով կառողջացնեն։

41. Վայր ընկած նոր ծնեծուներոց ջարդուածքի դեղ.—ա) ձիու փայտենի կոյտի մէջ կը նստեցնեն կամ կը պարկեցնեն. բ) նոր գենած ոչխարի մորթը տաք-տաք կը փաթաթեն. գ) ջնջխած հաւ կը կապեն հարուած ստացած անդամի վրայ։

42. Զան խածածքի դեղը.—ա) ծծումբ և ալիւրի խմոր միասին կը դնեն վերքին. բ) կծող շան մազը կայրեն և վերքի վրայ կը ցանեն. գ) կանփեռ (կանանփի հունդ) ծեծելով կաթով կեփեն և կը քաշեն վերքին. դ) կտաւատի փոխինդ եփելով կը կապեն վերքին, ապա ծրծումբ մանրելով կը ցանեն վրան։

43. Մատներու քցպնոտիկը (քցիպ *) տալը).—Ճարեր. ա) բրոնզէ (թուջ) մատանիք կանցկացնեն մատները. բ) մէգով կը լուանան. գ) պանրի շօռ ջրով կը լուանան և անլուայ բրդով կը փաթաթեն քնած ժամանակ. դ) ձիթով կը խարեն։

44. Մոգիշոնէ.—մատներու ծայրի ուռիլ և թարախակալիկը՝ որ շատ անգամ եղունգները վար կը թափէ. երբ ցաւը նոր է՝ ա) եռացած կաթի մէջ կը դնեն կամ՝ բ) եզան պինչը կը մացնեն մատը մի քանի բոպէ. գ) ողջ գորտի փորը ճեղքելով՝ նոյն կերպ մատի վրայ կը կապեն. երբ կսկսի դեղնել՝ դ) եղաւաշ (լուղ և ալիւր) կը կապեն. ե) այս ճարից յետոյ երբ վերք բացուի, հաւկթի դեղնուց, դեղին կոճ և դմակի լուղ մալհամ շինելով վերքի վրայ կը կապեն։

45. Մոմոցոս.—Մատի շունչի սաստիկ ցաւը, որու առաջը եթէ շուտով չառնուի մատոսկորները, վար կը թափէ։ Մումարը որովհետև վերին աստիճանի քոր և այրուածք կը պատճառէ և, առաջ ոսպի նման սև գնդիկի ձևով կերևայ, ա) իսկոյն և եթ ոչխարի այրած պտրուկով (ցած կոր թրեք) կը խարեն տեղն ու տեղը փճացնելու համար. բ) կամ սևացած տեղը ճեղքելով մազանման մի թել քաշելով կը հանեն. այդ պատճառով գուցէ ցաւը կոչուած է մոմոցոս, որ քրդերէն կը բացատրուի ջոմոց. 3) ոմանք ափի մէջ տեղը ճեղքելով կամ մազը կը քաշեն, կամ եռացած լուղով կը խարեն որ մումարը ինքն իրեն փճանայ։

46. Գորգոնոյ.—ձեռքի, ոտքերու, մատներու՝ երբեմն ևս գլխու վրայ բուսած չոր ոստերը կը կոչուեն գորգոնոյ, որոնք վերջացնելու համար՝ ա) մետաքսէ թելով ամուր կը կապեն. մետաքսը ոգիով կամաց-կամաց կը վերջացնէ գորտնուկը. բ) շուն երբ միզէ՝ հողախառն կառնեն և կը կապեն վրան. տես նաև սնոտիապաշտամանց բաժինը։

47. Կոծոծ կամ ինծիծ.—ջղաւոր և խորարմատ գորտնուկը, որ նոյնպէս մետաքսէ թելով կը կապեն. տես նաև սնոտիապաշտամանց բաժինը։

48. Քարիեծ.—ոտաց տակը կամ կրնկան վրայ գոյացած վերքն կը կոչուի քարիեծ. (ճարեր) ա) թանապուրի եփուած ճաւարը կը կապեն ուռոյցի վրայ փափկացնելու համար. բ) գոմշու նոր (տաք) թրիքը ձիթախառն կը կապեն վրան. գ) կուպր և դմակ միասին խառնելով կը գործածեն։

Առհասարակ ուռոյց, շիթ, քարխէծ և այլն հասցնելու և պատռել տալու համար. կառնեն կատուի մազ, օղի, սապոն և մանրած կա-

---

*) Քցիպ բառը երկու նշանակութիւն ունի. 1. ժլատ, կծծի. 2. մատներու ծայրը՝ եղունգի շուրջը, մսի տառ (կտոր) թողնելը, բարակ կաշի արձակելը։

պար, հաւկթի դեղնուցով կը հարեն և կը կապեն ուռոյցի վրայ. արդիւնքը նշանաւոր է. պատռելուց յետոյ՝ եզան լեզու խոտը (plantagomedia) կը կապեն վէրքի վրայ թարախը ծծել տալու համար. եթէ եզան լեզու չգտնուի՝ կաղամբի թուփ կը գործածեն։

49. Խոշրոտ.—Նորածին երեխայոց մարմնոյ, գլխու և կերպարանքի վրայ դուրս տուած կարմիր խոցերը, որոնց արմատը երևի խոր է, մեծ ցաւ կը պատճառէ և շատ անգամ մահացու է. (ճարեր). ա) Նորածին երեխայն երբ առաջին անգամ կ'աղբէ, այդ աղբը (կղկղանքը) չորցնելով կը պահեն և լոսելով խոշրուկի վրայ կը ցանեն. բ) Սուրբ (կարմրագոյն թթուաձնատ կապարի, minium) կը քսեն. գ) կտաւատի փոխինդը կաթով շաղախելով կը քսեն. դ) Խորոն (մի տեսակ կուպը) կը քսեն։

50. Ծաղիկ.—գիւղական միակ ճարը ծաղկի դէմ՝ պիէր է (կիտուած, պատուաստ), որ այսպէս կը կատարուի.—Ծաղկով հիւանդացած երեխայի ծաղկի բուշտերից մաս մի կառնեն, տխել ուզած երեխայի ձեռքը ասղի քթով կը ծակծակեն և, ծաղկի բուշտը չամչի հետ միասին ծեծելով վէրքի վրայ կը դնեն։ Պէտք է ասել, որ այս պարզ և դեղեցիկ միջոցը շատ աջող արդիւնք կունենայ, բայց գիւղացին իւր դատապարտելի անհոգութեամբ ընդհանրապէս զանց կառնէ տրխելը, երեխաները մեծ զոհ կուտան կամ թշուառանան կուրութեամբ։

51. Ջրծաղիկ.—Խոշոր դրքով ջրալից ծաղկախտը, որ անվնաս կանցնի, և կաշխատեն միայն տաք պահել հիւանդը։

52. Վարդախտ (կարմրուկ, scarlatine).—Ցաւալի է յայտնել որ գիւղացին վարդախտի դէմ պաշտպանուելու միջոցներ ու ճարեր չունի. միայն կաշխատեն հիւանդը տաք պահել և, երբ վէրքերը կսկսեն թռռմել՝ նոր շիլայով (կարմիր կտաւ) կը փաթաթեն տկար երեխայի ամբողջ մարմինը։

53. Նրբեղ.—Երեսի, ձեռքերու, թևերու կամ ոտքերու երևացող և արծարծող մի թեթև քոր, որ կը քորուի, երբեմն կը ջրջրայ և լուսնի նոր ու փլի հետ կը նորոգուի ու կը վերջանայ. (ճարեր). ա) երբ թեթև է՝ անօթի ժամանակ ակռայի կեղտը կը քսեն. բ) կանանցի ցօղունի և մոշի փայտի ձէթը հանելով կը քսեն երեթիկին։

Կանանցի ցօղունը կամ մոշի փայտը վառելով՝ վառած ծայրը կը դնեն խեցի ամանի վրայ և ձէթը դուրս կը հանեն։

գ) Ձիրուկ կոչուած միջատը իւղի մէջ ձգելով՝ կը սատակի. ապա սատակած միջատն ու իւղը հարելով կը պատրաստեն մալհամ, որ կը քսեն երեթիկին. դ) կը թքեն հողի վրայ և սխտորով տրորելով՝ տիլը (տիղմ, ցեխ) կը գործածեն (տես նաև նախապաշարմանց բաժինը)։

54. Մալուտ.—զգուելով կերակուր ուտելու պատճառով՝ մարմնոյ

վրայ բլթակներ դուրս կուգան և խիստ կը քորուեն։ Ճարեր. ա) խակոյն սառն ջրով կը լողացնեն և մազէ թել փնջած մարմինը կը հանեն (տրորել). բ) սուսր (minium) կը քսեն։

55. Գը- (քոս). Ճարերը ա) անձրևի հեղեղաջրով կը լողանան քոսոտները. բ) ցողուտ (շաղ) կանանչներու մէջ կը թաւալեն. գ) շապ և աւելուկի արմատը ծեծելով միասին կը քսեն. դ) վառօթ և ձէթ շփելով կը քսեն քոսերուն և կը նստին արևու դէմ՝ կամ հով—գոլ թունդիրը. ե) ՝ՐՐՈՒՆ խոտը՝ որ վերին աստիճանի այրող զօրութիւն ունի, եփելով կը գործածեն։

56. Խ-ՀՐ (հումբա-կարմրացաւ, érésipile), գլխաւորաբար երեսի և ձեռքերու վրայ կերևայ այս կարմրագոյն ուռոյցաւոր ցաւը, որ կը քորուի և սաստիկ կայրի. (ճարեր) ա) տուաձուրիկ շնորհք ունեցողը 7 հատ գարեհատ առնելով մէկմէկ կը թաթախէ կաթի մէջ և կը գծէ ուռոյցը. բ) ծխախոտի թուփը թրջելով մեղր կը քսեն երեսին և կը կապեն ուռոյցի վրայ։

57. Ի-ՆՋՈ-Ղ (օձացաւ, érésipèle). Սա մի վտանգաւոր հիւանդութիւն է (վէրք), որու մէջ կը կարծուի թէ՝ օձու նման թելիկներ կան. (ճարեր) ա) շան լակոտ ջնջելով (ջարդել) կը կապեն վէրքին. բ) խլուրդ մուկը նոյնպէս ջնջելով վէրքի վրայ կը դնեն. գ) քարթու հաց թրջելով կը գործածեն. դ) խոռոմ ձաւար (տմ. բլղուր) ձիթով կեփեն և կը քաշեն վէրքի վրայ. ե) Ի-ՆՋՈ-ՂԷ ուլունքը կը դնեն վէրքի մէջ։

58. ՃՈՄՔԷ ԷՐ-Ի ԿՈՂՈՒԹԻՆ.—առանց հիւանդին իմացնելու՝ շան լակոտ կեփեն և միսը կը կերցնեն. գործածողները այս ճարի օգտաւէտութիւնը կը հաստատեն. իսկ բժիշկները շեշտելով կը հաստատեն՝ թէ «գեշ բանը գէշ բանով կը վերջանայ»։

59. Ռ-ՄԷ (յօդացաւ, rumatisme) ա) ոգնու միս կուտեն. բ) ոստին (ցամաքային) կրիային միսը կը գործածեն (ուտել). գ) սարի սոխը ծեծելով կը տաքցնեն և կովու մածնով միասին կը քսեն. դ) արջու ճրագուն կը քսեն ցաւոտ տեղերը. միս ուտելն ևս օգտակար կը համարեն. ե) ոչխարի անլուայ բուրդը կը փաթաթեն քամոտ ոտք ու ձեռքերուն. զ) կիր և մատկու կաթ շաղախելով կը քսեն և կամ արևու դէմ կը կանգնեն կամ հով-գոլ թունդիրը կը մտնեն. է) նաւթիկ (քարիւղ) կը գործածեն։

60. ԱՌԷ Ո- Ի-ՈՒՊ ԳՈՈՆՈՒԼԸ. (բոլոր անդամոց յօդացաւը, որ մէջքը կը ծռէ և ծնկերը կը թուլացնէ). (ճարեր) ա) սանամաքի խոտը խաշելով հիւանդը բաղանիք (ванна) կը դնեն. բ) հրաշէկ դարձած երկաթ պղնձով լիք կաթի մէջ կամաց կամաց կը մտցնեն և շոգին կը տանեն հիւանդի անկողնոյ մէջ, և հիւանդը այնպէս կը ծածկեն որ

երբէք ցուրտ չառնէ. գ) տարթը (ոչխարի թրիք) ջրով կը խաշեն և տարթախառն բաղանիքի մէջ կը դնեն։

---

61. Տափոջիլ (ցայլ ոջիլ, տաճ. խրբիս այեաղ) — արտեւանունքի և ծածուկ մարմնոյ մազոտ տեղերը բնակող փոքր ոջիլը, որը հալածելու համար՝ ինքնին և հէնա շաղախելով շորի մէջ կը փաթաթեն և պարանոցից կը կախեն. ոջիլները կը փախչեն թէև, բայց գիւղացիք կը հաստատեն որ այս ճարը ջէնդ-ԷԷ կը պատճառէ.

62. Բզեռ սոռոռէլ (պատառի՝ կոկորդի մէջ մնալը).—հիւանդը կը պարկեցնեն քամակի վրայ, վարպետը բերանքսվէր էր կռանայ հիւանդի երեսին և, բերան բերանի դրած՝ ուժով կը փչէ և պատառը կը գլորէ ցած. (փչելու ժամանակ հիւանդի պնչներն ու ականջները կը փակեն)։

63. Որպէս զի կերակուրը լաւ մարսուի և չթթուի փորու մէջ, երեկոյեան՝ քնելուց առաջ, մամիկները սառը ջուր կը քսեն երեխայոց փորը. եթէ թթուութիւն գոյանայ և լուծումն պատճառէ ա) խնձորի ջրի մրգաջուրը (խոշապ) կը խմցնեն. բ) թան կամ շլորէ մրգաջուր կը գործածեն. գ) թթու պաստեղ (փասթել) ջրով տրորելով կը խմեն։ Բայց երբ իւղային կերակուր ուտեն և չկարողանան մարսել, հիւանդի ծնկները թուլանան, քուն և թմրութիւն տիրէ վրան, վզի երակները կսկսին արագ արագ թրթռալ, այդ ցաւը կը կոչուի ժողովրդական լեզուով՝ Տինի։

Տինին վերջացնելու համար՝ վարպետը երկու ձեռքով հիւանդի պարանոցի թրթռացող երակները՝ նախ կամաց կամաց, ապա ուժով, կսկսի քամել, տկարի ուշքը կանցնի, սրսունք կուգայ վրան և, երեսին սառը ջուր ածելով կ'սթափուի։ Երեք անդամ կը կրկնեն այս միջոցը և արդիւնքը ընդհանրապէս յաջող է։

Երբ Տինին նախապէս չբժշկուի և ժամանակ անցնի վրան, կը փոխուի դողդ-ղոդի (ջերմ, տենդ)։

64. Դողդ-ղոդի ճարերը. ա) սաֆրա-թոզի (փսխեցուցիչ փոշի) ջրախառն կը խմեն. փսխելու նպատակով նաև իշկաթուկի կաթը կը խմեն, բայց խիստ զգուշութիւն, որովհետև չափից աւել մահացուցիչ է. բ) ջարդած սխտոր մածնով կը հարեն և քսելով հիւանդի ամբողջ մարմինը՝ հով-գոլ թունդիրը կը նստեցնեն. գ) երնջնակի տակը պէտք է այնքան փորել, որպէս զի նոր շաղգամի նման կլոր արմատը դուրս գայ, որպէս զի խաշեն և ջուրը սառեցնելով խմեն, դ) Բաղնի բանջարի կամ հոռոռոռ խոտի արմատը նոյն կերպ կը խաշեն և ջուրը կը գործածեն (տես նախապաշարմանց բաժինը)։

65. ՕՐ (հարբուխ). (Ճարեր) ա) գլուխը տաք ջրով կը լուանան և տաք կը պահեն. պնչներն ևս բամբակ կը խցեն որ պաղ օդ ներս չերթայ. բ) ԽՈՏՈՒ ՀՐ կամ շաքարի փոշի կրակի վրայ դնելով ծուխը կը տանին դէպի պնչերը (տես նախապաշարմանց բաժինը)։

66. ՀՈՂ.—ա) տաք կենալ և լաւ քրտնել. բ) սոխ կամ շաղգամ խորովել և վրան տաք դեղ (ծիծակ) ցանելով ուտել. գ) ամենալաւ ճարը կը համարուի ոսպից, տաքդեղով և խմորի գնդիկներով պատրաստուած ՓԷՐԻ (տես կերակուրներ) ապուրը խմել. դ) ԽՈՏ ԽՈՏ, ԳԻՆՋԷՄԲԷ (gindembre—կոճա պղպեղ) և սև պղպեղ թէյ կը շինեն և կը խմեն. ե) մանանեխի հունդը (խարդալ) կնոջ ծծի կաթով խառնած կը խմեն։

ԾՈՒՂԼՈՒԼԻՆ.—Քանի անգամներ առիթ ունեցանք յիշելու զանազան ուլունքներ՝ որոնց բուժիչ զօրութիւնն ունենալուն ժողովուրդը կը հաւատայ. օրինակ. 1) ՅԷԼԷ, 2) ԽՈՅ ԼՈՒԷ, 3) ԻՇՈՅՈՒԷ, 4) ՓԷՇՈՅՈՒԷ և այլն ուլունքներ։ Սոցա կարգը դասելու է. 5) ՓԷՂԼՈՒՓ կոչուած զանազան ձևի և մեծութեան քարերն ևս, որոնք ժանգի, թունաւոր խոտերու և կերակուրներու թոյնը կը թափեն։ Բնականից կեռ ու մեռ գծերով նախշուած՝ մեծ քանակութեամբ քարեր ևս կը գտնուեն ժողովրդի մօտ՝ ըղեղ (ուղեղ?) անուանով, որոնք երեխայոց գլխու վրայ կը կարուեն, վասն զի, օգտակար են կասէ գիւղացին և, ուրիշ բացատրութիւն չ'տար. 6) ՓՈՆՂԷՐ՝ որ բառացի նշանակութեամբ ՓԷՂԼՈՒՓ կը թարգմանուի (պարսկերէն). քար չէ, այլ ոսկրային բաղադրութիւն, և ձեռք կը բերուի հետևեալ կերպով։

Իշու, ձիու՝ և երբեմն ևս ուրիշ անասնոց, ծնօտի տակը սարեկի ձուի չափ պինդ չորան կամ չորհան (ուռոյց) կը գոյանայ, երբ այս կենդանիք կը սատակին. չորհը հանելով կը լուանան և, երևի օդոյ ազդեցութեան տակ, կը պնդի ու կը քարանայ. այս է փանզարը, որ երբ մարդ կամ անասուն վնասակար խոտ կամ բանջար կերած ժամանակ դեղուի (թունաւորուել), ջրի մէջ տրորելով՝ ջուրը կը խմցնեն հիւանդին. արդիւնքը աջող է։

Ամենալաւ փանզարը իշու ծնօտից ձեռք կը բերուի։

Թ. Անասնոց հիւանդութիւնք եւ գիւղական ճարեր.

67. ՈՒՅՍ ԽՈՐՈՒԷԼ.—Ճարերը նոյն են՝ ինչ որ վերև յիշուեցաւ մարդոց ոտք ու ձեռքը կապելու մասին։

68. ՉԱՐՈՒՆՂ.—անասունները՝ վաղ առաւօտ անօթի փորով, շաղուտ արօտ արածելով՝ կը փքեն փորու մէջ գազ գոյանալու համար. (Ճարեր). ա) պէտք է արածելուց առաջ չոր չարդ կամ խոտ կերցնել. բ) երբ խոտ ու չարդ չգտնուի՝ փքած անասունի պոչից փունջ մի մազ առնելով հացով միասին կը կերցնեն։

69. ԱՒՈՅՊ ՓՈՅՆԷԼ.—բացի իշուց և ձիուց, միւս բոլոր կենդանիները դալար առաւոյտ ուտելով խիստ կը փքեն և շատ անգամ կը սատակին.—ա) սառը ջրի մէջ ձգելով կենդանին՝ կը վազեցնեն չափազանց, բ) ծակ փող եղէգն կը դնեն փքածի երաստանին, որ գազը

դուրս փչէ, գ) մարդու մէկ և սապոն տրորելով կածեն բերանն ի վայր։

70. Դեղ-ին.—Թունաւոր խոտ արածելուց անասունները երբ դեղուին, դեղոտ քարը (նաև փանգահրը) ջրի մէջ կը տրորեն և կը խմցնեն։

71. Ծեծե- ցա-.—գոմշեղէնները մրսելով ցուրտ կառնեն և կունենան ծեծե- կոչուած խիթը. գլխաւոր նշանն այն է՝ որ հիւանդ կենդանին ոտքերով իւր փորը կը տփտփէ (ծեծել).—Պոչի տակ մի քանի վայրկեան մաժելով (շփել) -ա- երակ մի կը կանգնի, որից արիւն կառնեն և ցաւը կանցնի։

72. Բղբրէ (տղացհարիլ անասնոց). միակ ճարն է՝ յէբ խմցնել։

73. Լէղէ կամ ղեղ-.—ոչ միայն գոմշեղէնները, այլև սեատաւարը, դարձեալ մրսելուց կունենան լեզուի հիւանդութիւն. նշաններն են՝ աչքերը կտուրս (ճպուռ) կուտան, բերանը կը փակուի, կեր չեն կարող ուտել և կը նիհարանան։ (ճար)—կենդանու լեզուն դուրս հանելով՝ տակը գոյացած սև երակներից արիւն առնել։

74. Դոքաղ (հիւանդութիւն բերանի և կճղակներու). նշաններն են՝ բերանը կը փակուի, փրփուր կուտայ, ոտաց կճղակները կը կարմրեն քերուածի նման, վերին աստիճանի բորբոքում (այրել) տեղի կունենայ և, կենդանիները ոչ կարող կը լինին ուտել և ոչ քայլել. (ճարեր).—երբ հիւանդութիւնը բերանն է՝ ժաժիր և աղ խառնելով իրար կը կերցնեն. իսկ երբ ոտքերն է, ջրերու մէջ կը պտտեցնեն։

75. Դոխղ-ղ բուլ (գլխու ուռոյց), միակ ճարն է՝ խարել (դաղել)։

76. Քոփանուլ (քէլէպէկ, թոքախտ ոչխարաց—pùtisie des moutons)։ Հովիւները կը հաստատեն որ ոչխարները՝ աշուն՝ ջրային խոտեր և մասնաւորապէս Քոսպոպ հոմ (Faraxacum officinal) ծաղիկը ուտելով այս ցաւը կունենան, (ճար չունի ժողովուրդը)։

77. Թուշ (քրդ.)—կճղակացաւ ոչխարի. դարնան ոչխարաց կըճղակները ջուր ծծելով կուռին և կը թարախակալին. (ճար).—ուռած կճղակը կը կտրեն և ծանոթ շոպ փոշիացնելով կը ցանեն վէրքի վրայ։

78. Քամոնէ (յօդացաւ).—(ճար) ա) նաւթ, ճէթ, կարագ իւղ և այլն, կը քսեն կամ՝ բ) շուրջանակի կը դաղեն։

79. Ջուղցաբէ.—սեղանատամներու մէկ կողմը մաշուելով կը ցածրանայ և միւս կողմը կը մնայ բարձրև, այդ անկանոնութիւնը կանուանեն ջաղցաւրել։ Գոմշեղէնի և սեատաւարներու համար ճար չկայ, բայց ոչխարներուն՝ երբեմն բարձր մնացած կողմը սուր դրով կը հաւասարեցնեն։

80. Խոճաւլը ղեան պուարներու.—ամբողջ 4—5 ամիս պարապ մնացող լծանը երբ դարնան պէտք եղածից աւելի չարչարեն՝ կը խոճան. ճարեր.—ա) տաք ջրով և սապոնով կը լուանան. բ) աղջուր կը քսեն

և կը մաժեն. գ) խամ հող (արտի հող) հաւկթի մէջուկով միասին կեփեն և տաքտաք կը քաշեն խամցած անդամի վրայ. դ) հաւկթի և իւղ հարելով կը քսեն. ե) Խոտոռ պատրաստելով կը գործածեն *)։ Ճամբորդութիւնից կամ աշխատելուց խամցած մարդոց ոտք ու ձեռքերը ողջուր կը քսեն և տաք ջրով կը լողանան։

81. Երբ գոմէշներու կաշին դարնան սկզբներուն այրուի, կառնեն ճարճռուկ (cichorium intibus) խոտը կայրեն և մուրը (փոշին) կարագ իւղով միասին կը քսեն այրուած տեղերը։

82. Անասնոց վէրքերու որդունքը ջնջելու համար ա) կանտոնի փայտի թփերը (берева ծառի նմանութեամբ՝ խեղդուկ հոտ ունեցող մացառ) կը ծեծեն և կը դնեն վէրքերու մէջ. բ) Բուէ (բող բոյսի կաթը, որ խիստ անախորժ հոտ ունի) կը գործածեն. գ) ժանգառի շապ մանրելով կը ցանեն. դ) վէրքը չորացնելու և միս բերելու համար ողնէ խոտի արմատը փոշիացնելով կը ցանեն։

83. Քէնոռ (հարբուխ իշու և ձիու).—այս կենդանիներու քիթը կը բռնուի. թարախանման աղտեղութիւն կուգայ ցած և մեծ նեղութիւն կը պատճառէ. ճարն է՝ կտաւատի Բոռ (ջարդած օղղուկները) ծխել քթի դէմ։

84. Քէր գոռ (իշու և ձիու).—պնչներու վերև՝ կաշու տակը աւելորդ կրճիկ (կակուղ ոսկոր) գոյանալը. ճարն է՝ կաշին կտրել և աւելորդ կրճիկը դուրս հանել։

85. Աչ (իշու և ձիու),—աչաց վերին կոպերու ներքև հէր նման կրճիկներու գոյանալը. ճարն է՝ կտրել հանել։

86. Ձիու խուլինջ.—(ճարեր) ա) հեծնելով ման կածեն. բ) ծխախոտի կամ անիսոնի (anisum) ծուխը եղունգով ընդ յեռ նոյ ներս կը տանեն։

---

*) Գիւղացին խատրան այսպէս կը պատրաստէ. Ձիու կամ իշու գլխու ամբողջ ոսկորները (գանկ, խօխ) մանրելով կը լցեն մի նեղ բերան բզողի մէջ. այս բզողը բերանն ի վայր կը դարձնեն մի ուրիշ ամանի մէջ և երկուքը միասին կը դնեն ցանէ խարոյկի տակ. փուռը (խարոյկ) կը վառի և ոսկորները հալելով կը ծորեն վերևի ամանից ներքին ամանը. այս է գիւղացու խատրանը՝ որ ջոկ է առհասարակ կուպը (խատրան) անունով նիւթերից։ Ոստերը ոսկորի փոխանակ՝ հաւկթից կը պատրաստեն։

ՄԱՀ ՈՒ ԹԱՂՈՒՄ.

Մահը խորին տպաւորութիւն կը թողէ ժողովրդի վրայ, որովհետև հիւանդութեան և մահուան մէջ ինչ որ մի անհասանելի գաղտնիք թագնուած տեսնելով սոսկումով և յուսահատութեամբ կը վերաբերուին դէպի մանաւանդ մահը։

Միակ մխիթարութիւնը այն է, որ հոգին չմեռնի, թէև խաւիասը (վանդակ) կոչնչանայ, բայց հոգին կենդանի կը մնայ և «Ստեղծու ողորմութիւնով էնդիու զունեն (աշխարհք) կերթայ ադամական դրախտ»։

Հիւանդի դրութիւնը երբ ծանրանայ, ազգական ու բարեկամները կը հաւաքուեն «նեղածի» չորս կողմը և մեղմով կուլան, պառաւները շուտով կիմանան որ հիւանդը մեռնելու է, որովհետև ֆիլը ուլէցեր է, կասեն, ուչ-էրը գբէր է և չ-էրոխ-դրոմը (ոյժը) ֆոդրէր է։ Զարաճճի կանայք շատ սնդամ հիւանդի առնիքի ոյժը չափելով էլ կիմանան որ հիւանդը կապրի կամ ոչ. իսկ տիրացուն իւր ախտարքի զօրութեամբ հիւանդի աջ կողմը նստած ձեռքը բռնելով մտքի մէջ կամ ցածից կը պտպտայ «Նաբոնդոն, Դաբիա, Միլոն (հրեշտակներ են) ցուցէք գնշան ճակատին» խօսքերը, և երբ Նաբոնդոնն ու իւր ընկերները ճակատի վրայ ան նշան մի ցոյց տուին, ան կասկած է որ հիւանդը կը մեռնի։

Հիւանդի մեռնելը կիմացուի նաև, երբ շները ոռնան, որովհեաև սոքա հոգեառ հրեշտակը կը տեսնեն։ Հիւանդն ևս իւր հոգեառը կը տեսնէ և շատ անգամ ցոյց կուտայ տանեցոց. տանեցիք էլ երեսզով հին ննջեցեալները եկած կը տեսնեն, որոնք կուգան հրաւիրելու նոր մեռնողը էնդիու աշխարհք։

Հոգեվարքի ժամանակ որ կանուանեն ուռ-ֆ ռ- ֆոֆ, ընտանիքի լացն ու ողբը աւելի կը սաստկանայ, բայց որքան կարելի է, պէտք է այնպէս լան որ հիւանդը հոգէբոյչ չեղնի, այսինքն թէ հոգին կուզէր երթալ, բայց ընտանիքի լաց ու կոծի պատճառով նորից կը դառնայ մարմնոյ մէջ, երբեմն

Աստուած գթալով ողորմելի ընտանիքի ձայնին երեք օր մ-քո-ջ (ժամանակ) կուտայ հիւանդին, որ երթացողից կարոտով չմնան։ Հոգեդարձը եթէ շատ երկարի, հիւանդը եթէ իւր կենդանութեան ժամանակ մի որ և է սովորութիւն ուտելու, խմելու կամ խաղալու մոլութիւնն ունէր, սիրած առարկայից մի բան կը դնեն սրտի վրայ որ շուտով հոգին աւանդէ. օրինակ եթէ վէգ խաղալու մոլութիւնն ունէր, վէգ մի կը դնեն սրտի վրայ։ Այդ իբրև իրողութիւն կը հաստատեն գիւղացիք յանուանէ յիշելով հոգեդարձը երկարացնող շատ մեռելներ։

Երբ թշուառ մահկանացուն բոլորովին պատրաստած մնացած տկար ոյժովը կը մաքառի քայքայիչ ցաւի դէմ, կենսատու զօրութիւնը որ մարմնոյ մեքենան կը դարձնէր, կը հաւաքուի իւր վերջին հրաժեշտը տալու, հիւանդը կսկսի սընդռտալ (ձգռտումն), այդ արդէն հոգեհանգոյն է ժողովրդի ասելով. մէկ երկու բոպէ և ահա ոտքերը կը սառեն, ու սառնութիւնը կամաց կամաց կը բարձրանայ դէպի վերև հոգին կը ելանայ հերիանայ թողնելով անշունչ դիակը։ Իսկոյն ննջեցեալի ձեռքերը (տաք տաք) կը խաչեն սրտի վրայ, ծնօտները հուպ տալով բերանը ամուր կը փակեն և երեսը կը ծածկեն թաշկինակով։

Լաց ու կոծ կը բարձրանայ. ընտանիք, ազգական, բարեկամ և նոյն իսկ գիւղացիք կսկսին բարձրաձայն լալ և կանչել։ Մեռնողը եթէ ամուսնացած էր, կինը իսկոյն գլխու զարդարանքը վար կը թափէ, ծամերը կը կտրէ. սև փուշի (ծաձկոց) մի ի նշան սուգի կառնէ գլխու վրայ, գլխուն ու ծնկներուն տփելով բարձր կը լայ և կողբայ. «իմ անուշ ընկեր, իմ տէր ու տիրական, իմ ո-մէ ու աստուր, իմ թև ու թիկունք, քու գլխուն ու արևուն մեռնիմ, յուր կը թողիս գիս մենակ, կերթաս, յորին ես քու տեղակ չմեռայ, վա՛յ լըմըն բաւ՚ո, վա՛յ լըմըն բրաւ՚ (վա՛յ ինձ հայրիկ. վա՛յ ինձ եղբայր). ո՞ն (ո՞վ) էր տեսի իդա գարուն գարնանոցով մարդու դուռ դրուէր, երդիկ կալուէր, սև ու սուգ մտնէր, թևեր թափուէր, սևաբախտիկ իմ բաւ՚ո, վա՛յ լըմըն բրաւ՚. վա՛յ լըմըն բրաւ՚։

Եթէ որդի է մեռնողը, մայրը ծնկներուն եկած, թաշկինակ ձեռք առած, սրտի հատոր որդու երեսովը կը տանէ ու կը բերէ և քրդերէն ու հայերէն երգեր և ողբեր յօրինելով կ'եղանակէ։ Մայրական սիրտը այդ ժամանակ մի յորդահոս աղբիւր է որու՝ ոչ հոսանքի առջևը կառնուի և ոչ սաստկութեան չափը կիմացուի։

«Լաւ *), իմ երկու աչաց լուս լաւ, իմ թև ու թիկունք լաւ, իմ չօլերու կռունկ լաւ, իմ սարերու կաքաւ լաւ, իմ չօլերու օրդակ (բադ) լաւ, քօռներ քու մամու երկու լուս, լաւ, (արտասունք), իմ բաւ ու բրա, իմ կեք ու ճրա (իմ հայր և եղբայր, իմ հոր հղբայր ու ճրագ), վայ լըմըն բաւ, վայ լըմըն բրաւ։ Լաւ, ես քու որ մէկն ու մէկ յիլամ, ես քու շոխի բաժն յիլամ, քու ճաւ բալաք (խատուտիկ) աչքերն յիլամ, քու անուշ նստելն ու կանելն յիլամ, քու հավալն ու հոգ՞ըրն (ընկերը) յիլամ, իմ սրտի ագիզ լաւ, իմ ջան ու ջիգար լաւ, վայ լըմըն բրաւ. բաւ, և այլն։

Մօր ու կնոջ ողբ ու լացին կը մասնակցին տան բոլոր կանայքը և բարեկամ ու դրացի իգական սեռը։ Աւելի չափաւոր կերպով կուլան տղամարդիկ, որոնց հետ և հայրը որ ձեռքերը քովերը դարկած կերթայ ու գայ և վույ-վույներով արտասունք կը թափէ։

Մեռնողը եթէ գիւղի առաջաւոր մի տանից է, համարեա ամբողջ հասարակութիւնը կը հաւաքուի սգաւորի տունը և յուղարկաւորութեանը կը մասնակցի նոյն բազմութեամբ։

Մինչ սգաւորի տունը լալու ողբալու հետ են, հարևաններից 3—4 անձ, առանց հրաւիրելու, կերթան գերեզմանոցը ՝ՔԷՂ ՓՈՐԷԼՈՒ՝, որովհետև մեռելը հոգին աւանդելուց անմիջապէս յետոյ կը թաղուի, բայց եթէ արևը մտնելուց յետոյ մեռնի կը մնայ յաջորդ առաւօտ, այդ գիշերն է որ մեռելի տուն դտնուելու պատճառով ՀԷՐԻՍՐԻ։

Մեռնողը եթէ տղամարդ է, գերեզմանը կը փորուի մինչև ԳՕՊԷԼՈՒՐ, իսկ կնոջ մինչև ԾԾԷՐԸ. գերեզմանը կը պատրաս-

*) (Քրդ.) Լ—ը (որդեակ) բառի կոչականն է, որու — տառը կոչականի մէջ կը ջնջուի, ուստի և սխալ է ոմանց Լ—ս կամ Լ—ց գրելը։

տուի առհասարակ գերդաստանին պատկանեալ ննջեցեալների մէջ տեղը կամ կշտին, եթէ փորուած տեղը կակուղ և սրբսուռ հող լինի, մեռածը արդար կը համարուի, և հակառակն մեռելի արդարութեան նշաններից մէկն էլ այն է եթէ թաղման օրը «օր ու արև» կամ «արև ու բարև» լինի (պայծառ եղանակ)։

Ընտանիքի լաց ու կոծը տակաւին կը շարունակուի. հարևանները կը փութան ննջեցեալը՝ առանձնացնել լողացնելու համար. եթէ մարդ է ննջեցեալը՝ տղամարդիկ, իսկ եթէ կին է՝ կանայք. լողացնելու համար սովորաբար մէկ երկու տախտակ կը դարսուի կամ սոցա տեղը մի ֆամ (կամն) կը դրուի, և մեռելը վրան դնելով լաւ կը լողացնեն և ամէն աղտեղութիւնը կը սրբեն, յետոյ ջրի մեծ ամանը բերանքսրվէը կը կոտրեն որ տանից ուրիշ մ' էլ չմեռնի։

Մեռնողը եթէ աղիզ (սիրելի) մէկն է, ամերիկեան եթէ ոչ, Բաղէշի թանձր կտաւ (5 – 6 արշին) բերելով՝ պատանքը կը ձևեն և պոռոնոց կարող պառաւները խոշոր-խոշոր կը կարեն մեռելի իրանի վրայ։ Հանգուցեալի երկու բութ մատները (ոտաց) կը կապեն իրարու. բերանը բաց կը թողնեն ՀՈՐՇՈՄԻՆ համար։ $^1/_2$ կամ $^1/_4$ արշին կտաւ եռանկիւնի ծալելով քահանային երես սեղով ծալել ֆոռոն և եթէ մեռնողը տարիքոտ է, նշխարքով մի-սսին կը դնեն մեռելի սրտին ու բերանին։

Եթէ պատանքից կտոր աւելանայ, քանի որ մեռելը տանը դրած է, կը կապեն ոխոն ի ՀԷՐ, իսկ մի-ևնոյն պատանքի կտաւից բարակ երէզ մի հանելով մեռելի՞ՄԷՋԸ ՀԷ ֆոպէն։ Ննջեցեալի սիրելիները շուտով կը մօտենան որ բաց երեսը համբուրեն, ու այնուհետև երեսը ծածկած կը պահեն։ Այսպէս բոլոր պատրաստութիւններ տեսնելուց յետոյ նախապէս հրաւիրուած ծխատէր քահանան *) կսկսի եկեղեցական կարգը կատարել. վերջացնելուց յետոյ տխուր եղանակով կերգէ մեռելի «ես զիս դրի հազար տարի» գովքը, և երբ կը հասնի «ման-

*) Եթէ ննջեցեալը հարուստ լինի, առանց հրաւէրի գիւղի մէջ որքան քահանայ որ կայ, կը մասնակցեն թաղման կարգը կատարելու, ստանալով 2—3 ղուրուշ (piastre) նուէր կամ վարձք։

ցէ՛ք բարի, բարեկամներ» տողին, ընտանիքի լալու և բռնալու ձայնը աստիճան մի ևս կը սաստկանայ։ Սրտակոտոր ծնողքը, եղբայրները և ազգականները բաժանման րոպէն հասած տեսնելով կը փարեն ընդմիշտ հեռացող հիւրին և երեսները կը համբուրեն, թէև մեռելի երես համբուրելը վատ կը համարուի, կարծելով որ համբուրելուց կարող է ընտանիքից ուրիշ մարդ մեռնել։

Դրկիցները խղճալով տանեցոց վրայ, թաղումը որքան կարելի է կը փութացնեն. այդ ժամանակ դաշը (դագաղը) դռան պատրաստ դրած է, որու վրայ կը փռեն կապերտներ եթէ տղամարդ է, կամ կանացի հանդերձներ եթէ կին է, ննջեցեալը տնէն դուրս տարած ժամանակ *) երեք անգամ դռան կը զարկեն որ տանից ուրիշ մ՚էլ չմեռնի։ Երբ ննջեցեալը դրին նաշի վրայ, վերև յիշած հանդերձ կամ կապերտը կը փռեն դիակի վրայ և, կսկսի յուղարկաւորութիւնը։

Եթէ մեռնողը անդրանիկ մէկն է կամ հարուստի միամօր զաւակը, նորա ձին զարդարած ու զուգած, մեռնողի ընտիր ընտիր հագուստներն ու զարդարանքներն, զէնքերն ու գլխու քօլօսը իւր հարուստ փաթոյթներով ձիու վրայ դրած առջևից կը քաշեն. եթէ նշանած լինի և չամուսնացած մեռնի, պսակի զարդարանքներ ևս կաւելացնեն, գհօլ ու զուռնայ ևս տխուր եղանակով կը մասնակցին և մօտիկ ազգականները պարելու ձևով շարժումներ կանեն։

Յուղարկաւորութիւնը երբ գիւղի միջով անցնի, կանայք տներից դուրս կը թափուեն և երեխայոց շորերը ետևից կը թոթվեն, կամ մէկ մէկ բուռ հող կը ձգեն։ Կանայք յուղարկաւորութեան մասնակցելու իրաւունք չունին, բայց եթէ ննջեցեալը եկեղեցին տարուի (որ երբեմն կը պատահի) մինչև եկեղեցին կերթան, ժամերգութեան ներկայ կը լինին և եկեղեցուց ուղղակի տուն կը վերադառնան։ Ննջեցեալի դագաղը կը տանեն և կը դնեն դերեզմանի մօտ աջ կողմը։ Երբ քա-

*) Կը պատմեն որ երբեմն երեք չորս կին առնողը, իբրև դոնէ, դռնով դուրս չէին հաներ, այլ պատը ճեղքելով ճեղքի միջից կանցկացնէին այժմ այդ սովորութիւնը վերջացած է։

Հանան եկեղեցական կարգը վերջացուց, երեք անգամ մէկ մէկ բուռ հող օրհնելով կը ձգէ գերեզմանի մէջ, ննջեցեալի հայրը (եթէ մեռնողը որդի է), որդին եթէ հայր է, կը մըտնայ գերեզմանը և մեռելը գրկելով կը դնէ հող, երեք չորս անգամ կը համբուրէ երեսը և դուրս կուգայ։ Կինը հող դնելու ժամանակ կապերտ կամ հանդերձ կը բռնեն գերեզմանի վրայ։ Քահանան նորից հող առնելով կօրհնէ և կը ցանէ ննջեցեալի վրայ, և կոկսեն գերեզմանը լցել հողով, ամէն մարդ այն ժամանակ «իր հոգու վարձքի» համար կը մասնակցի գերեզմանը հողով լցնելուն։

Քահանան թաղմելէն (թաղման վարձքը) պէտք է ստանայ 10 դուրուշ, երբեմն կանխիկ կստանայ և երբեմն կը մնայ ապառիկ, թաղումը վերջանալուց յետոյ նախ քահանան, ապա յուղարկաւորողները մէկ մէկ կը մօտենան և սգաւորի գլուխը կը հարցնեն այս խօսքերով. «Է, ինչ պակսաւ դու անուշ մնաս, Աստուած զէն խանն (հոգ) հանէ քու սրտէն, Աստուած զուր (զիւր) մեղք թողէ, զուր դատաստան քաղցր էնէ». —իմ աչքին իք իմ գլուխն իք, Աստուած ձրդի վատ օր չիտայ։

Յուղարկաւորողները խմբովին կը վերադառնան ննջեցեալի տունը և նոյն ձևով ընտանիքի ամէն մէկ անդամը կը մխիթարեն ու կը մեկնեն. միայն մերձաւոր ազգականները կը մնան տանը թէ մխիթարելու և թէ տան գործերը տեսնելու։ Եթէ ննջեցեալը առաւօտ թաղուած է, նոյն օրը ճաշին (կէսօրին), իսկ եթէ երեկոյ, յաջորդ օրուայ կէսօրին, բոլոր գիւղացիք, կանանց ձեռքով մէկ մէկ ման կերակուր կուղարկեն մեռելի տունը, և կարծես թէ հասարակաց կամ հոգու հաց գրուած լինէր, այնպէս կարգով ամանները կը դարսեն և կըստիպեն տան սգաւորներուն ճաշելու։ Այս գեղեցիկ սովորութիւնը նորա համար է, որ ննջեցեալի տէրերը ոչ ժամանակ և ոչ կարողութիւն ունին իրենց կերակուր պատրաստելու։

Եթէ ննջեցեալը երեկոյ թաղուի, էգհողը անմիջապէս յաջորդ առաւօտ կերթան, յուղարկաւորները այս անգամ կանայք են. գրեթէ ամբողջ գիւղի կանայք կը մասնակցեն։ Պատրաստելով կրակ, խունկ և իւրաքանչիւրը $^1/_2$—1 դուրուշ վա-

բայ իբրև խաչահամբոյր քահանայի համար, կերթան գերեզմանոցը, մինչ քահանան աղօթք պիտի կարդայ, կանայք խունկ ու կրակ բորբոքելով, ողբեր յօրինելով կուլան և կերգեն։ Այդի կարգը կատարելուց յետոյ համարեա ստիպմամբ տուն կը վերադարձնեն սգաւորները, ուր դարձեալ դրկից կանայք մխիթարական խօսքեր ասելով կը մեկնեն։

Երեկոյեան դեռ ճրագներ չվառուած, բարեկամ և դրացի կանայք դարձեալ կը հաւաքուին ննջեցեալի տունը և կսկսին սովորաբար մեռնողի կեանքից դէպքեր յիշել, մանրամասն պատմել նորա նիստ ու կացը, նորա քաղցր լեզուն, նորա բարի բնաւորութիւնը և այլն։ Ապա այնտեղ, ուր ննջեցեալը հոգին աւանդեց, սեղան մի կը դրուի, և վրան ճրագներ կը շարեն (սովորաբար թուով 7). այդ լուսաւորութիւնը կը կոչուի մեռելի հոգու ճրագ։

Մեռելը թաղելուց 2—3 օր յետոյ անպատճառ թեթև ճաշ մի կը պատրաստուի հոր փորոգներու համար, որոնք առանց քահանայի մասնակցութեան կը ճաշեն և սովորական մխիթարական խօսքեր ասելով տանեցոց կը մեկնին. իսկ պոռոգի հացը կամ ծոյը կը պատահի որ, 10—15 օր և երբեմն ամսով յետ տեղի կունենայ, իսկ ոմանք կը թողնեն մինչև դուռ պոռոգի օրը *)։ Բայց մեռնելու օրից մինչև տարին բոլորելը օրական մէկ ման կերակուր և 3—4 հաց անխախտ կը յատկացուի մի աղքատ ընտանիքի։

Մեռնողի ազգականները և տանեցիքը կը կոչուեն «գաւոր (սգաւոր), որոնք մեռելը թաղելուց յետոյ այլևս եկեղեցի չեն երթար, մինչև որ 10—20 օրից յետոյ ծխատէր քահանան մէկ երկու բարեկամի հետ կերթայ սգաւորներու տունը, կը մխիթարէ զանազան խօսքերով և կը հրաւիրէ եկեղեցին, և այնուհետև սովորական կերպով կը շարունակեն ժամ երթալ ու դալ. այդ հրաւէրը կը կոչուի «գահան։

*) Ամէն տուն տարուայ մէջ մի որոշեալ օր պատարագ անել կուտայ, և այդ օրուայ պատարագը անողի անունով կը կոչուի, Թորոսի կամ Մարգոսի տան պատարագ։ Առանց ապսպրելու Բուլանըխայ մէջ պատարագ չմատուցուիր, բացի նշանաւոր տօներից, իսկ նշանաւոր օրերն էլ արդէն դուռ պոռոգ անել կուտան։

Ծննդեան և ս. Յարութեան տօներուն, մի գիւղ քանի տուն որ գտնուի, տան գլուխ մի մարդ, անպատճառ, խթում անելուց յետոյ՝ կերթան ննջեցեալի տունը և տանեցիքը կը մխիթարեն. իսկ հեռու գիւղ գտնուող բարեկամները ընծաներով կուգան մխիթարելու. ընծաները սովորաբար կը լինեն կանանց համար Եռլմաներ, իսկ տան գլխաւորին կամ պարսկական գօտի մի 80—100 ղուրուշ արժողութեամբ կամ 2—3 արշին չուխա 60—90 ղուրուշ։

Սովորութիւն կայ մեռելը անքար չթողնել երբէք. այս պարագային դրկիցները ընկերովի մասնակցել գիտեն. լծելով 10—20 զոմէշներ, լեռներից ահագին մեծութեամբ անտաշ քարեր կը բերեն և օծել տալով կը շրջեն գերեզմանի վրայ։

Ննջեցեալի հասարակ շորերը կը տրուին աղքատաց կամ մի մասը ժամկոչին և միւսը աղքատաց, եթէ պայլտս ունի՝ ծխատէր քահանային. այդ է գիւղական մեռելի Հոգեպոռ-ը։

Հոգեբաժինը առհասարակ կը լինի անասուն մի, կամ մի երինջ—40—50 ղուրուշ. կամ մի կով—80—100 և կամ մի մատակ 200—300։ Բուլանըխցոց մեռելներու Հոգեբաժինը կստանայ Մշու առաջնորդարանը և 12 կտոր գիւղերուն Կոփայ վանքի միաբանութիւնը։

Հինգ նաւակատեաց տօներից միայն ս. Յարութեան, Վարդավառին և Աստուածածնայ տօներուն գիւղացիք իրենց ննջեցեալները օրհնել կուտան (մեռելոց)։ Գիւղացի կինը մէկ օր առաջ կը պատրաստէ խունկ, $^1/_2$—1 ղուրուշ խաչհամբոյր, 7—8 ձու, մէկ-երկու գաթայ, մի քանի ձմերուկ, մաղով խաղող (եղանակի համեմատ) և կերթայ գերեզմանոցը։ Որովհետև քահանան իւրաքանչիւր գերդաստանի մեռելները ջոկ ջոկ պիտի օրհնէ, մինչ մի տեղ սա մաղթանք կը կարդայ, միւս տեղերը կանայք բարձրաձայն կուլան ու կողբան և խունկը մի կտոր խեցու վրայ փռած կը ծխեն բարդ ի բարդ, և խնկան խեցին երբեմն բռնած գերեզմանի երկայնութեամբ կը տանեն ու բերեն և կրակը կը բորբոքեն փչելով։

Քահանան գերեզմանը օրհնելով խաչհամբոյրը կստանայ, իսկ ժամկոչը բերած ձուն, գաթան կը հաւաքէ, վերջը բաժանելու համար մէջերնին։

Գերեզմանոցները ընկած կը լինին կամ եկեղեցու շուրջը գիւղի մէջ, կամ եկեղեցուց հեռու գիւղի մէկ եզրը, բոլորովին անկարգ դասաւորութեամբ, առանց ծառ ու ճիւղի։ Անտաշ ու անձև քարերու ահագին դումար մի կը ներկայացնեն գիւղական գերեզմանոցները. միայն երբեմն քահանայից և ազնիւ մեռելներու գերեզմանաքարերը սրբատաշ և ձևաւոր կը լինեն, որոնցից վերջիններու վրայ միայն ննջեցեալի արհեստ և զբաղմունքը ցուցնող գործիքներ կամ նշաններ կը փորագրուեն։ Գերեզմանաքարերու վրայ գտնուած բնական փոսիկները օգտակար կը համարուին նորա համար, որ այնտեղ հաւաքուած ջուրը թռչունները խմեն մեռելի հոգու վերջի համար։

Մեռելներու մասին ունեցած նախապաշարումները.

1. Մեռելի թաղելուց մի քանի օր յետոյ, գերեզմանի հող փուլը կը դիտեն, եթէ փոսացած լինի, կասեն, աչքն ի դուռնին (աշխարհք) էր։

2. Մեռնողը իւր բաժին (ժառանգութիւն) տաւար, ոչխար և այլն կը տանէ (կը սատակեն)։

3. Եթէ քահանայ մեռնի, մինչև տարին լրանալը, 7-ը պիտի լրացնէ (6 քահանայ էլ կը մեռնի)։

4. Մեռնող քահանայի ճկոյթ մատը եթէ կարողանան կտրել և մօտերնին պահել, փակած դուռ կը բացուի առջևնին։ Դորա համար մինչև քահանայի վրայ քար ձգելը, գիշերով զգուշութեամբ կը պահեն։

5. Եթէ հաց թխողը «ՔՊԵ» թունդիրը ձգէ, անպատճառ կը մեռնի։

6. Եթէ երկու ամիս իրարու վրայ դրած նստեն, կ'այրիանան։

7. Երբ մեռնողի բամբասանքը անեն, կասեն «Ստուած

ուր մեղք թողէ, հոգ խոէաբ չտանէ ուրին» (իրենց բամբասանքի խաբարը)։

8. Ոչ-քրիստոնէի մեռելները կը լինեն գ.օռ-նուշիկ *), այսինքն գօռներից դիշերով ելնելով, շուն, չաղուռ, գէրձէի և այլ կերպարանք կստանան և կը վախթաթուեն մարդոց տունները վախեցնելու համար։

«Կրպօն կերդուէր, զհոգին կը թալէր՝ (անսուտ երդումն հոգու վրայ) թէ ես քուրդ Ա-ի **) տուն մշակ էնք, (էի), եղաւ որ իմ աղէն քնաւ (մեռաւ), տարան գրուեցին (թաղումն քրդաց, գօռել), ոլոր օր (յաջորդ օր) յիրկուն տեսանք որ աղէն եկաւ պատանքն ի վիզ, չէրկէն մէ (մի, մը) պարկաւ մըջ տախտին (տան յատակ), յընօր տարանք թազադան գրուեցինք, ոլոր օր էլման (էլի) եկաւ, տեսանք որ չարայ չեղնի, խանըմն ըսեց, Կրպոյ չարէ մ՝ էրէ, ես լէ Ասուց զէն գուզէնք, վերցի զբահն ու սուռ հա վրը վրզին. զգլուխ կտրի զրի յետև յոռուն, չունքի տլիսմն էգէ», կըսեն գիւղացիք, «տարանք գրուինք. հալա էն գալնէ, որ կիդայ»։

Ննջեցեալի մի համար մօտաւորապէս ծախք կը լինի հետևեալը.		
Մեռելին պատանքցու կտաւ	9— 12	դուրուշ.
Թաղմելէն—(կտրական)	10	»
Պատարագի	5	»
Կողոպուտ	34— 40	»
Հորփորողներուն (գերեզման պատրաստողները)		
հացի և կերակուրի	10— 15	»
Պատարագի հացի ծախքը	100—120	»
Հոգեբաժին (անասնոց գինը)	100—200	»
	249—402	

Գրեթէ 21—34 ռուբլի փող։

---

*) Գօռ (քրդ.) կը նշանակէ գերեզման, իսկ գ.շուշ.ք փշտկալ (ելնել, ցայտել, թռնել, օր. ալիւրի և նման առարկաներու) ժողովրդական բայի մի սրմատն է։

**) „Գիւղացիք յականէ անուանէ“ ցոյց կուտան գօռնափշտիկ դարձած մեռելները։

ՀՈԳԻ ԵՒ ՀԱՆԴԵՐՁԵԱԼ ԿԵԱՆՔ

1. Հոգո՝ էյանա.—Միմիայն մարդ հոգի ունի, իսկ բոլոր անասունները շունչ. մարդու հոգին գլխու մէջն է. ինչպէս ցոյց կուտայ հոգեպոռն բառը (տես մարդակազմական անունները), բայց երբ մէկի անդիմութիւնը ուզենան ցոյց տալ՝ կասեն, «հոգո՝ նմո՝ չէյայ փորո՝ մէջ»:

2. Հոգուն հոգի ևս կայ, որովհետև երբ մէկը շատ նեղացնեն և չարչարեն, կասէ «չէ՞ զիմ հոգո՝ հոգին հանիցիք»:

3. Մանուկներու հոգին փոքր իսկ մեծերուն մեծ է, որովհետև ուրացող, ստախօս տղայի մի համար կասեն. «ղչո՝ պըղ-պէկ հոգին մ՚ուրանայ», մեծերուն ևս նոյն կերպ, «չէ՞ դուք ջոջ հոգիորը է»:

4. Արդարի հոգին պէտք է որ սպիտակ լինի, քանի որ չարագործ մարդոց համար սովորաբար կասեն «դքու հոգին մի՛ սևցուր»:

5. Չար մարդի՛կ հոգի չունին, այլ անասնոց նման շունչ. «ինչ անհոգի մարդ է», կասեն գիւղացիք չարագործի մի կամ՝ «քըզի հոգի յուստ է, շունչ է մըջ քու փորուն»:

6. «Հոգին ու մարմին պուշան (թշնամի) են իրարու, էն վախտ որ մարմին զուր էրած կէնէ, հոգին կը մալուլի (տրխրել) ու խռովի»: Մարմինն իւր արած չարագործութեանց ու մեղքերու համար պատասխանատու է հոգուն. «զէդ անասուածութիւն որ կէնիս դքու հոգու՝ ջուհապ՝ իմաՀ կիտաս էնդիու դունին (աշխարհք)»:

7. «Մարդու մեռնելու վախտ Գաբրիէլ հրեշտակ կիգայ զհոգին կաւանդէ, թէ ճիժ է՝ ոսկէ խնձոր նշանց կիտայ, խաբլութինով զհոգին կառնէ: Երբոր (երբոր) մեղաւոր եղա՞ւ, Գաբրիէլ կը գաբի վրը բօկին աթլայ չիտայ (ժամանակ) կառնէ տանէ դժոխք, չուրի գալուստնի Քրիստոսին, որ կիգայ ըռնաուտի *) կալ, նստի հախ աթոռ, դատի դարդարն ու զմեղաւոր»:

*) Ըռնաուտի կալը կը պատկանէր երկու աստուածավախ և արդար եղբայրներու, որոնցից մէկը աղալ (ամուրի) և միւսն ամուսնացած և որ-

«Դատաստանի օր զմարդու մեղք ու վարձք կը կշռին, թէ մեղք շատ եղաւ՝ կերթայ դժոխք, թէ վարձք շատ եղաւ դաթան (արդէն) կերթայ դրախտ»։

Մի փոքրիկ ողորմութիւն, մի թեթև արդարութեան գործ, մարդու բոլոր մեղքը կը կշռէ և մարդը կարդարացնէ Աստծու առաջ։

«Մարդ մէ կեղնի անուն Պետրոս, շատ ղանէլի (Հարուստ) ու Բէռահմ կեղնի (անգութ), ուր օրուն ըսկի ողորմութիւն էնել չըր գինի, անուն դրած էն (էին) անողորմ Պետրոս, էն մէկ օր աղքատ մէ կը մտնայ աղոր տուն, օր ողորմութիւն ուզէ, շատ կը խնդրէ կը պաղատէ օր բան մէ տան ուրեն, բան չըն իտայ, ղերես կը տաքցու կանի՞ կանի՞՝ անողորմ Պետրոս լէ կը հեռստի (բարկանայ), կը վերցու հացի կուտ մէ (այրուածք հացի) կը զարկէ աղքըտին, աղքատ կառնէ զկուտն ու կը դնախնի։ Ին գիշեր անողորմ Պետրոս յէրազ կը տեսնայ. օր, հանդէ (ահաւասիկ) զուր մեղք յըմէն դրած է մէ ղշեռ, ըղ-հայի ղոռ լէ մէ ղշեռ, հացի կուտ կը քաշէ զմեղք (կշռել, ծանր գալ), կը խըռտի (խրտնել) չիմնայ։ Հայ հօ, կըսէ ա-նողորմ Պետրոս, մակեր օղորմութենին իդա հըմլա հունաւ լէ կեղնի. էն սհաթին զուր մալ ու գոլվաթ կը ծախէ կիտայ աղ-քատաց, ինք լէ կեղնի ճգնաւոր»։

Նախ քան դատաստանին ներկայանալը, հոգիները պէտք է անցնին մաղէ ղարմնջալ, արեան ծովով, զանազան այլանդակ մարդոց կերպարանքներու պատահին, ապա անցնին Աստուծոյ ներկայութեանը։

Դրախտը անմահութեան ջրոջ ծաղիկներով լիքն է, Աստծու

դոց տէր կը լինի. կալոցին ցորենը բաժնելու ժամանակ, ազապ եղբայրը (երբ միւսը բացակայ կը լինի) կը վերցնէ իւր բաժնից և կը լցէ եղբօր բաժնի վրայ, „ինչ կանիմ, կըսէ, այսքան ցորեն, ես մենակ մարդ մ՝ իմ, իսկ եղբայրս կնոջ և որդոց տէր է, թող նրանը շատ լինի՞»։ Ազապի բացակայութեանը ամուսնացածն ևս նոյն կերպ կը վարուի, մտածելով որ իւր փոքր եղբայրը դեռ ամուսին բերած չէ և, մինչև իւր սրտի մոռրաչ հասնելը, ծախքի կարօտութիւն կունենայ։ Ի յիշատակ այս երկու եղբայրներու արդարութեան Աստուած որոշեց որ վերջին դատաստանի տեղը այդտեղ (ընտուտի) կալ լինի, ուր պէտք է նման արդարութեամբ, առանց աչառութեան դատուին մարդոց գործերը։

ամէն բարութենով լիք տեղան սուքրէն դրուկ է. արդարներ կուտին, կը խմին, կուրախանան»:

«Դժոխք հրմալ մութ տեղ մ՚է, որ մատ կոխեն մարդու աչք չտեսնայ, մէկ դին (կողմ) կրակ կը վառի, մէկ դին կպրէ կարաներ շարուկ են, վերև ից ջուր ու կաթիլք կը կաթկըթայ, մեղաւորներ ի մէջ կը տանջուին ու կը չարչարուին». (տես նաև պէոնիչ յովհաննու-ին):

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ТИФЛИССКАГО СОБРАНІЯ БИБЛІОТЕКА

ՀԱԻԱՏՔ

Ա.

ԲԱՐԻ ԵՒ ՉԱՐ ՀՐԵՇՏԱԿՆԵՐ

Հրեշտակների մասին ժողովուրդ կը պատմէ.

ա. Աստուած 12 դաս հրեշտակ ստեղծեց. լէ երեք դաս հնազանդ չմանցին. Աստուած լէ բարկացաւ թափեց երկնուց ցած. կէս կախուան երկնուց յերսով, կէս թափան վրը գետնին, կէս լէ յիջան յանդունդք։ Էն դահ օր Գաբրէլ հրեշտակ զմեռելի հոգին կը տանէ երկինք, էն կախվուկ սատանէք կիդան ի յառջև օր խլեն զհոգին Գաբրէլից։ Ընդոք օր թափվան գետին, յրմէն հաղ (միշտ) յընկուգ ին հակառ հրտ Ադամորդուն (մարդոց), տալապ կէնին (աշխատել) օր Աստծու ճամբուց շաշ էնին (ծռել) զմարդ։ Աստծու օղորմութենով բարի հրեշտակ լէ չայէշ կիդայ օր մարդ Աստծու տօղրի (ուղիղ) ճամբուց չելնայ»։

«Վրը մարդու աջ թեւին բարի հրեշտակ մ՝ է կանուկ, վրը ձախ թեւին՝ չար հրեշտակ. մէկ կաշխատի օր մարդ ուր (իւր) խօսքն էնէ, մէկէլն՝ ուր. ամէկու (ամէն մէկուն) ձեռք դաֆտար (տոմար) մէկայ, մէկն զբարութենի գործքեր կը գրէ, մէկն զչարութենին։ Գիշեր լէ օր կէղնի, բարի հրեշտակ մարդու գլխու վրաէն (վերեւից) չհեռանայ»։

Որպէս զի պահապան բարի հրեշտակը չհեռանայ քնացողից, երեկոյեան «Խոսք չեն ուտեր, որ հրեշտակը չգարշի։

Բարի հրեշտակներն են՝ Գաբրիէլ, Մուքայէլ, Սերոբէք, Քերոբէք—ինն դաս հրեշտակներ։ Գաբրիէլ հրեշտակ հոգեւոր է [1])։

Հաց թխելու ժամանակ կանայք աղօթքի մէջ հոյն հրեշտակ մի եւս կը լիշեն.

«Հաց, հոյն հրեշտակ,
Արդար եղան վաստակ,
Ելնաք բարեխօս առ Աստուած»։

Գաբրիէլի փոխանակ՝ առաջ գրողն էր թէ մարդոց գործքեր գրողը եւ թէ հոգեւորը, հոգի տանողը։ Թէեւ գրողի գոյութեան մասին այժմ որոշ պատմութիւն մի չկայ, բայց հետեւեալ հատ ու կտոր խօսքերից եւ անէծքներից կիմացուի նորա թէ անձնաւորութիւնը եւ թէ ինչ պաշտօն ունենալը։

1. Գրողը հոյր եղած կը լինի. օրինակ, երբ դէպի մէկը ունեցած սաստիկ ատելութիւնը ուզենան ցոյց տալ, կասեն. «ես գինամ (գիտեմ) ... մարդը իմ հոր (կոյր) գրողն է։

2. Գրողն էր հոգիք տանողը, օր. «գրողի տարուկ, գրողին տամ գքրզի», (անէծքներ)։ «Զքու հոգին տաս գրողին՝ չեղնի էդ բան»։

3. Գրողը Էրդո՞ գնելով մարդոց բերանը՝ հոգիները կառնէր, ինչպէս Գաբրիէլի համար կը կարծեն՝ որ ոսկի խնձորով երեխայոց հոգիները կառնէ—«գրողի բրդուճ գնեմ քու բերան» (անէծք)։

Բ. Չար հրեշտակներու գլխաւորը Սատանէն է, որու խմբին կը պատկանին՝

1) Սա սատանէ, չարէր, որոնք մարդիկ կը մոլորեցնեն։

2. Քաջէր, որոնց կայանն է աղբիւրները, ծովերը [2]) եւ ջրային տեղերը։ Աղբիւրներու մի մասը սրբոց կը պատկանի,

---

[1]) Տաճիկներէն առնելով „Ազրայէլն“ ևս կանուանեն հոգեաւ ու միևնոյն ժամանակ Ազրայէլը քաջութեան նշանակ կը համարուի, երբ մի մարդ արտասովոր քաջ ու կտրիճ լինի՝ կանուանեն Ազրայէլ։

[2]) Տես Խաչլուայ լճի մասին եղած աւանդութիւնը։

ուր ուխտ կերթացուի, իսկ միւս մասը քաջքերու կայանը, այդ պատճառով երբ ջուր խմեն, երբ լուացուեն, երբ գետով անցնին, երբ աղբիւրի մօտ երթան՝ անպատճառ «Յիսուս Քրիստոս» կը շշնջեն։

Ինչպէս հէքեաթներից կիմացուի, քաջքերը թագաւորութիւն եւս ունէին, որոնց գլխաւորը կը կոչուէր «քաջանց թագաւոր»։

3) Դէվեր (դեւ), որոնք՝ ինչպէս կը պատմեն հէքեաթները 7—40 եղբայր եւ ընկերներ էին, խմբովին կը բնակէին, մարդոց հետ յարաբերութիւն ունէին եւ շատ ընդհարումներ ունեցած են «Ադամորդու» հետ, բայց ընդհանրապէս յաղթահարուած։ Հողածնի աղջիկ կը փախցնէին. հարամիութիւնով (աւազակ) կզբաղուէին, քառասուն կանթէ պղնձով կերակուր կեփէին, քառասուն գազկան հորեր կը փորէին թշնամին մէջ ձգելու համար եւ այլն։ Դէվերից ոմանք «եօթ գլխանի» են եղած։

4) Մէյանի դէվեր, ոտցա մասին պատմած ժամանակ, նոյնութեամբ կը յիշուի Ողիսեւսի՝ կիկլոպի հետ պատահած դէպքը, մեծ այրը, ոչխարի հօտը. հրաշէկ երկաթով կիկլոպի քնած ժամանակ աչք խարելը, ոչխարի մորթի վրայով ձգած կիկլոպի ոտքերու մէջով անցնիլը եւ այլն եւ այլն։

5. Զ–ոռ, շլօտները խմբերով կը պտտին եւ ճմեռուայ Զեատ (տասնկաց Զուբաթ—Փետրուար) ամսուն երեւան կուգան. այս ամսուայ վերջին օրուայ երեկոյեան բոլոր շինութեանց երդիքներն ու ցուիքները բոլորակի կը գծեն, եւ երբոր մթնեց, կառնեն մի գոգնոց ու ախուռի սներուն, պատերուն դարկելով Զլօտները դուրս կանեն, ասելով «Զլօտն ի դուս, Մարտէն (մարտ ամիսը) ի ներս»։

Դուրս անելուց յետոյ՝ դրսի դռան շէմքի տակ թունդրի խաչերիլը կը ձգեն որ նորից չվերադառնան, իսկ երդիքներից ներս մտնելը գծերը կարգիլեն։

Գիտնալու է՝ որ եղգիներու շուրջը գիծ քաշած ժամանակ, դուրս չեն ելներ, մինչեւ որ գիծը չաւրեն։

Զլօտ դուրս արած ժամանակ՝ ախուռի Ֆոռ–ին գլխոռ գոգ–

նոցովը չեն զարկեր, որպէս զի տան Ք՝ՀՇԼՄԸ (Հարստութիւնը) դուրս չերթայ։

«Քա սանամէր, կասեն կանայք մէկ մէկու, 'գիշերսի ես դուրս ելայ, քսմ մէ Զէօտ կանուգ էն (էին) Եղոյենց դուռ, հրմալ կանի-ծէն, հրմալ կանիծէն էդ Եղոյի տան, օր զուրանք դուրս էրին իդա ձուն ու ձմրունոցով։ Ի՞նչ կեղնէր, կրսէն Զէօտները, իդա երկու պաղ ամիս լէ թողէն զմրզի մրնէնք (մնայինք) տաք թաւլի գլուխ»։

—Վա՜յ, Խաթուն եղնիկ Տիրամէր, դու գչար խափանցուս։

«Քա, Խաթուն (Խաթուն, տիկին) կասէ մի ուրիշը, ես լէ իդա գիշեր՝ ոչ քուն էնք ոչ արթուն, հեզմ՝ լէ լսեցի, օր Զէօտ մէ կրսէր ուր ընկերոջ,—Խշոյ, արի, արի, շէնքացեր իմ վրը իդա մարդուն, արի ընձի օգնութեն»։

—Յիսո՞ս ու Քրիստոս, դու գչար յետու հեռուն էնիս։

Փետրուար ամսուն որովհետև կատուները ցուլ կուգան և կսկսին Ն՝ՈՒՈՒՉ, ժողովուրդը կը կարծէ որ սոցա և Զէօտներու մէջ մի ինչ որ յարաբերութիւն կայ։

Այս ամսուայ մէջ ծնած այծի ուլերը չեն ապրի, որովհետև Զէօտները կը տկարացնեն կամ Ի՝Ը ՓՈԽԷՆ, այդ պատճառով ուլերու վզից բոժոժներ կը կախեն։

Զատ ամսուայ գիշերները տեսնուած երազին հաւատ չեն ընծայեր, կարծելով որ Զէօտներն են ԽՈՐՇՈՒՆԵՐԸ։

6. Գաբուս.—«Գաբուսն էնէ, (կասեն գիւղացիք) օր գիշերները կը դաբի (պարկել, ծնկան գալ մէկի վրայ) վրը մարդու բօկին՝ օր զմարդ խեղդէ։ Էնվախտ օր Գաբուս կիջնայ վրը քրզի՝ քանի կռնաս զօր տու չէլի, առ զընդրա թզպեղն տար էցկէ (անցուր) կժան բերան, էդ հրմալ օր էրիր՝ Գաբուս կը դառնայ մարդու օրինակ, կեղնի քրզի հէսիր (գերի)»։

Գաբուսը մարդ խեղդել ուզած ժամանակ, իւր թզպէհն (համբիչ) կը թողնէ մարդու կշտին։ Քամակի վրայ պառկած ատեն արեան ծանրանալը կոչուած է ՓՈԽՈՒ։

Կանայք Աւագ հինգշաբթին պողպոռէ ՀՊՆԷՐ շինել տալով կանցկացնեն վզերնին՝ որպէս զի գաբուսը չմօտենայ իրենց։

7. Խէռէլէկ.—«Քա քաւոր քուր, իդա (այս) Նրկոյ տուն ամներ (ամաններ) յօրին չրմէն խոռուկ լին»։

—Ձը լը՞սերիս, Խէռէլէկ է անիծի, ադոնց մեծ պապու վախտ ցանուկ արտմէ կը քաղին, բարդոցին, սէլերով կը կրին չընկրի՝ յետք չիգայ, չարայ չեղնի՝ զդրկեցներու սէլեր չրմէն կը քօմեն տանեն ի

յարտ, ամէկ բարդոցի յառջև սէլ մէ կը կանգցուն, զսէլեր յրմէն կը բառնան, յետին բարդոցի տակ մարդու օրինակ բա մէ (բան մի) կելնայ դուս, մախաթ կը չքցուն փողպատ՝ կը բռնին, կըսին. դու դու ինիս, կըսէ. Ես Խիպիլիկն իմ, ես էնք (էի) օր ջընք թողի ցորնի բարդոցներ խլսէր (վերջանար)»։

«Հիսիպիլիկ կը բերին տուն, կէնին ուրանց մշակ, հրմալ ժիր կեղնի, օր մէկ սհաթուայ մէջ 10 մարդու բան կէնէր. 4—5 ոչխարի բուրդ դախէ մը խրդար (բոպէի մէջ) կը գզէր, մանէր՝ կանէր յօնա (այնտեղ)։ Էն մէկ օր խիպիլիկ կը քերուրտի, էդ տուն լէ գոդուէճ պառաւ մէ կեղնի, կըսէ՝ խիպիլիկ, արի տանիմ զքրզի ճալավ (ջրհոր տուն) լոզկցում. կերթան, էն վախտն օր կը տկլոզնայ խիպիլիկ օր ջուր յընայ վրը ուրին, պառաւ խալդնօք (սխալմամբ) կըսէ՝ Յիսոս—Քրիստոս, խիպիլիկ կը բօռայ կըսէ. Ձեր տան ամներ յրմէն խորուկ (խոռ, բէրանի մէկ կողմը կոտրուած) եղնին չուրի յաւիտեանս յաւիտինից, ու նա բաղիր (նա բէդեդ, աներևույթ) կեղնի»։

Խիպիլիկին քօլօս (բրդէ գդակ) մի կայ, կասեն գիւղացիք, որ եթէ կարողանայ մէկը ձեռք բերել և դնել գլուխը՝ անեւևույթ կը դառնայ, ինք չտեսնուիր թէև, բայց ամէն բան կարող է տեսնել առաջուայ նման։

8. Աշ.—Սորա համար կը հաւատան որ մարդոց փորից կերակուր կը քաշէ. ագահութիւն կը թափէ երեխայոց վրայ, որովհետև երբ երեխայ մի անկուշտ լինի՝ կասեն. «ոշ, Աշ է քաշի փորէդ». մի քանի տեղեր երեխայոց ագահութեանը վերջ տալու համար թղթարացներուն դիր անել կուտան։

Երբ մի բան յանկարծ կորսուի՝ «ալոց գալոց» եղաւ, կամ ալ-գալ եղաւ կասեն, որ անշուշտ Աշէ լինելու է։

Աշէ հետ Ղոչ և ս կը յիշուի, որ նոյնպէս ագահ մարդոց համար կը գործածուի։

9. Թպղայ.—Այս ճիւաղը յայտնի է յղի կանանց վրայ թպղոտութեան ցաւ թափելովը։

10 Փէրիներ.—Մինչ առաջինները ալա- կը կարծուին, փէրիները աղջիկ են, որոնց ծագման մասին ժողովուրդն հետևեալ գրոյցն ունի։

«Կըսին Նոյն օր մտաւ տապան, ջրհեղեղի վախտ՝ Նոյա տղէկներուց մէկն չկրցաւ օր գինք ղ-ուէր (գպել) յելաւ ուր անկողին, աղջիկ մ'եղաւ ուրին. ջրերն օր յիջան (ցածանալ) Նոյն ու ուր ճժեր

դուս պտի (պիտի) յեղնէն, էն պզտիկ աղջիկ մնաց ներս, հրիշտակն եկաւ հարցուց, թէ՝ «Նոյ, էլ մարդ չմնաց ի ներս»։—Չէ, ըսեց Նոյ.

„Թէ մարդ մանցերէ՝ եղնի՞ աներևութ՞“.

—Թըղ եղնի, ըսեց Նոյ, ուր ահուն (երկիւղից)։

„Էն սհաթին աղջիկն եղաւ ՝՝՝

քէս (ամէն մէկ) զաղուն թողեց իմ ուսուցով (յուսով) գնաց ուր տուն. յանգան գահ էր (ուշ ժամանակ էր) մենակ նստուկ էնք, ես տեսայ գոլ ու զուռնի ձէն եկաւ, դառնամ աչքիմ օր՝ 10—20 կնիկ, հագուկ, խփուկ (զուգուած, զարդարուած) պար բռնած են ու կը խաղան։ Ես տեսայ կնիկ մ'եկաւ մրտ ընձի, ըսեց. Ողէկ, յօրին իս նստի, յէլի խաղցի, չարէս կտրաւ յեղայ բռնի պար ու խաղցայ, աչքիմ աչիմ՝ տո եա, իդա կնկայ վրէն իմ քաւորքուր Ռ-ի ՝-ՀԷ-Ն է (կանանց ասուէ հագուստ), յուշիկ մէ գչախուն հանեցի ջէբէս ու զդալմի մէկ փէշ կտրեցի. հրտ իմ կտրելուն՝ կնկտիք աներևութ եղան"։

„Էն լուսուն գացի քաւորոջ տուն. ըսի ըշտէ իդա գիշեր հրմա հրմա բան մէ պատահրաւ, մարդ չաւտցաւ (հաւատալ), ըսի ջանրմ, յօրին չը աւգրնայ, բերէք գքաւոր քրոջ դալմէն սանք (տեսնանք). դալմէն օր բերին՝ օղորդ օր մէկ փէշ կտրուկ էր, իմ մտու կտոր լէ այնի (ճիշտ) էդ դալմի կտորէն էր"։

Ուրպէս զի կանանց հանդերձները փէրիները չզողանան, սնդուկ դրած ժամանակ կը խաչակնքեն [1])։

Փէրիները նոյնպէս կը զողանան Ի-ՂԸ, այդ պատճառով տանտիկինները իւղի բղիկները կը խաչակնքեն և իւղի վրայ խաչ կը քաշեն։

Ձիերու բաշի մաղերը երբեմն հիւսկէնի ձևով կը խառնուին իրար և այդ փէրիներուն կը վերագրեն։

Երեխաները, իրրև խաղ, քնացող երեխայի գլխու վերև կանգնած՝ սովորաբար երկու հոգի, փայտի մի երկու ծայրերից բռնած՝ ուրիշ փոքր փայտով կնոկնտոցի նման վրան քսելով կերգեն։

« . . . Քաղցի սատանէք,
Արէք ու տարէք,
Արէք ու տարէք »։

Քնացողը զարթնելով խենթի նման կը փախնի և կերթայ դանելու սատանէքը։

Զգիտցուիր ինչ պատճառով երբ մէկը բարկանայ և խռովի՝ գիւղացիք ծիծաղելով կասեն. «ԻԾ-ՈՆ (այծեր) ՈՐԷՐՈ-ԵԿԱԾ են մօտ» և հանդարտուելու ժամանակ նոյնպէս ԻԾ-ՈՆ ՔՈՅԼՈՆ ՈՐԷՐ (փէրիք ?)։

[1]) Հալաւ օրհնէքի աղօթքի „մի իշխեսցէ մերձենալ ի սոսա չար աղանդ-Ի-ՈՅ կամ Ի-ԽՈՒՐՈՅ" խօսքերը երևի փէրիները կակնարկեն (Մաշտոց)։

Որովհետև փէրիք, չարքեր և այլն պողպատէց կը վախենան, այդ պատճառով ամէն կին ասէղ մի կը զարկէ կամ շապկի փողպատը (օձիքը) կամ գլխարկի մէջը։ Նոյնպէս տղոցկանի բարձի տակ դանակ, ասէղ և այլն կը դնեն։ Նորապսակներ դրռնով ներս մտած և դուրս ելած ժամանակ ՝Ռ-ը կը բռնեն գլխուն։ Գարնան սկզբներուն երբ անասունները առաջին անգամ դուրս կը հանեն՝ թունդրի խոչէրէլը կը ձգեն դռան շէմքի տակ. այսպէս և անասոր կարկուտ տեղացած ժամանակ։

ԿԵՐՊԱՐԱՆԱՓՈԽՈՒԹԻՒՆ

Ժողովուրդը կը կարծէ՝ որ մարդիկ երբեմն կը կերպարանափոխուին. շատ վտիտ և տկարութեան պատճառով նիհարացած երեխաները կը կոչուին գոլոծ-ուրիկ։

ա. Երբեմն կը լինին գրողէ գլէր (տես Զնոգիոր)։

բ. Երբ գիշերով տկլոզ դուրս ելնան՝ «երկնուց դիլու փոստ (մորթի) կիջնայ վրը մարդու՝ կեղնի գէր», այդ հասկացողութեամբ վիթխարի և անճռուն մարդոց գէր-էռի, մարդագէր, ՀԷրէշ-Է (քրտ. գիշերային մարդ) անունները կուտան։

գ. Արջը ծագումով մարդ է և ինչպէս կը պատմեն պառաւները, դմբիկ կոչուած ժողովրդից սերած է, դորա համար էլ շատ կը սիրէ մարդոց հետ մօտիկ յարաբերութիւն ունենալ [1])։

Թէև հէքիաթի ձևով բայց հաստատ հաւատալով կը պատմեն գէպքեր՝ որ արջը «իշտէ ժամանակ մէ, ֆլան գեղէն կնիկ մէ կը փախցու տանէ սար, շարաթ մ՝ երկու կը նստի կանի հետ, հապամ կնիկ խարլութենով կըփախնի պրծնայ»։

ԿԱԽԵՐԳՈՒԹԻՒՆ

Մեծ հաւատք կընծայուի կսխարդութեան, որոյ ներկայացուցիչներն են՝ «Սողոմոնի», «Ամիտարք» և «Վեցհազարիկ» կարդացող թղթրացները։

[1]) Դմբիկ աղջիկ մի դոռոնի կը լինի. գետափը անասունի լէշ տեսած ժամանակ՝ կասէ „ա՜խ, երանի թէ ես ջանուրը (գազան, կենդանի) մի լինէի և ։ռ-ը դնի ուտէի. Ատծու հրամանքով կը դառնայ արջ։ Ժողովուրդը կը կարծէ, որ արջին եթէ դմբիկ ասեն՝ խսկոյն կը բարկանայ և կը յարձակուի մարդու վրայ։

Կախարդութեան նորա համար շատ կը հաւատան, որով-հետև Սողոմոն իմաստունը եղած է հեղինակը «վեց հազարիկ» և այլն գրքերու։

Թղթբացները «ղերկինք ու զգետինք կը քննեն» «կորեկ կը հանեն սունի վի (սիւնն իվեր), զմարդ կը տկլոզցուն» և այլն։

„Հազ մէ, կըսէր Ղէխեաղուպ գիւղացի Ա., մեր տուն թղթբաց մ'եկաւ, շատ մարդ լէ նստուկ էն (էին). ըսեց ես կունամ օր զմարդ տկլոզցում, ես չաւտրցայ, Ծիծղացի վրէն, թղթբաց հէրոտա, ղրէմ խուշ (գրիչ կաղամարը) առաւ ի ձեռք, գվրուցուց (պտտեցուց), հլամուն (իբրև թէ) ես գիսի գետիմ՝ առջև տեսայ, հլամուն չօլէն կեգէնք մեր տուն, հլամուն մարդ լէ չրկէր իմ բոլորտան, ես գնըցայ օր զարկէնք ի գետ... հազմէ տեսայ օր Ծիծղացին վրէս, ես բաղմէ եղայ (նուաղիլ, մարել), ամչրցայ, ընկայ թղթբացի յոտք ու ձեռք, աղաչանք պաղատանք էրի, զթուղթ բլուց (փլցնել) նոր ես պրծայ ազատայ“։

«Վեց Հազարիակի» շնորհիւ թղթբացները կը սովորին նաև ռամզարոութիւն [1]), որով կիմանան հողի տակ թաղուած դանձ և զանազան իրեր գտնել։

„Հազմէ ռամզար մ'եկաւ մեր տուն խօնաղ (հիւր), կասէր Կոփ գիւղացի Յակէն, ըսի ուրին՝ ղահ՝ թէ չըսիս, ըշտէ մեր գեղի մօտ Աջուռայ խարաբէն (տեղ մի է) խաղէնայ կայ հորուկ. ըսեց օր հրմալէ՝ յելի առ բուռ մէ սիսեռ, չընկի յաւջևս երթանք։ Գայինք, յիրկուայ դեն էր. գտեղ ցուցուցի, առաւ գսիսեռն ու չորս բոլորմրնի ցինեց, դարձաւ առաւ զգիրքն ու պտպտաց. ես տեսայ սիսեռներ չրմէն ժողովուաւ մէկ տեղ։ Ըսեց ըշտէ յօդա է խաղինէն հորուկ, դու նստի, ըսեց, ես կը կարդամ, հալա շատ բան կայ կարդալու, հանդէ քու այքին թուռլու թուռլու (տեսակ տեսակ) բան կերևայ, չեղնի վախենաս հրմա ձէն էրեցիր՝ մեր ոմն կերթայ կորի։ Հէ, ըսի, յօրին ձէն կէնիմ, քօացիր իմ. (կուրանալ)։ Կարդաց, շատ կարդաց, ես տեսայ նորէ մարդ եկաւ իմ յաւջևով՝ չընցաւ գնաց, ես գիս խայիմ (ամուր) բռներ իմ, ընձի ընձի սիրտ կիտամ օր չը վախենամ, էն օր գնաց՝ հաստ մոթներով ոչ եկաւ, էլման չվախեցայ. յետև (յետոյ) ծալ բացաւ յաւջևս մեծ ոմն հրմալ կերևէր՝ որ պտի կորձէր (կործանէր) վրը ընձի, ես էլման սիրտ տուի ընձի, չվախեցայ. յետև

[1]) „Ռամզարկի արուեստ (իբր ռամկ.) տեսակ մը կախարդութիւն, տաճ. խուէնհրաճ (Առաձեռն բառարան)։ Բնչ՝ ռոռ, ռոզամայութիւն, sorcellerie au moyen du sable, géomancie. (Ընդ լեզուեան ընդարձակ բառ. Տաճկ. Հայերէն Գաղղիերէն, Միհրան Աբիկեանի)։

գահուն ջաղջ ֆարմ՝ մէկ մագից կախեցին վըր իմ գագթին, ըսի էդ է. հա իդա սհաթին կը պատի վըր իմ գլխուն, կէնէ գիս հազար փշուր, ես լէ չկրցայ դօմեցի, բօռացի, ըսի՝ եաման գիս մկա կսպանեն։ Պառնամ իշկիմ (աչքել, նայիմ) օր՝ նա քար՝ նա բան։ Թղթբաց հէռոստաւ (բարկացաւ) վըրէս, ըսեց, Ճստուած գբո տուն աւրէ, օր էդ փշուր գահ լէ չըր բօռացեր ի ինչ կեղնէր, քու հոգին կելնէր, Ռէյ՝ աւրուաւ, յելի երթանք էլ բան չեղնի։

Փօռ ու փոշման թողնինք եկանք տուն։

Գարի թալել (Գարեհմայութիւն) Բուլանըխայ գրէթէ ամէն գիւղերու մէջ կը գտնուին կանայք՝ որոնք գարի թալելով (ձղել, քցել) կիմանան կորսուած առարկայ մի կը գտնուի կամ ոչ։

Պառաւը կառնէ 5—6 հատ գարի և, նշնէ, կասէ բան կորցնողին, քեզ համար մի հատիկ, դիմող անձը իւր գարեհատը կը ճանաչէ, նա ափ ափի վրայ դրած ձեռքերը կը շարժէ մի քանի անգամ գարիները իրար խառնելու համար, բանալուց յետոյ, եթէ նշնած գարին յառաջ է անցեր՝ կորսուած առարկայն կըգտնուի և հակառակը։

Թիզ չափել. Բազմաթիւ են նոյնպէս Ռէյ՝ չոփող կանայք, որոնք նմանապէս թէ կորսուած բան գտնելու և թէ օտարութիւն կամ հեռու տեղ գտնուող մարդոց վերադարձը իմանալու համար իրենց արհեստը կը բանեցնեն։

Թիզ չափողը ձախ ձեռքը կը պարզէ և աջ ձեռքի ճըկրուտման (լարուած) թիզը կը դնէ ձախի մատներու վրայ չափելով կը հանէ դէպի վեր, մէկ, երկու, յետոյ վերևից դառնալով դէպի ներքև՝ մէէկ, ե-ե-ըկու...։ Ցամարները (ջղերը) կծկուան, թիզ չիդայ տեղը, հետևաբար և ոչ կորսուածը կը գտնուի և ոչ հեռաւորը կուդայ, և հակառակը։

Եղունգ նայելը եւ Քալջիութիւն [1]։ Այս կախարդութիւն-

[1]) Քալջի կընշանակէ հոբյոհ. ցիգան կանայք կունենան սովորաբար կամ ձկան գլխու ոսկոր, սագաթի կամ նման փայլուն առարկայ մի, որու վրայ ուզողի ձեռքը քսել կուտան, պատուիրելով որ մտքի մէջ՝ ինչ որ կուզենան իմանալ, «խորհրդանշ». ցիգանուհին անկապ խօսքերով իբր թէ ցանկացողի պատասխանը կուտայ և գլխից անցածը պատմելով՝ ապագան ևս կը գուշակէ։

ները մեռելները (ցիգան, չինկեանա, գնչու) կը գործածեն, սրոնց, ոմանք կը հաւատան և ոմանք ոչ։ Միայն Եղեռնի մասին հետևեալ սնոտիապաշտամունքը կայ ժողովրդի մէջ։

1. Եղունգ կտրելու ժամանակ կը հաւաքեն և գլխու վրայով կը ձգեն յետև, որպէս զի դատաստանին գայ իրենց դտնէ. ձգելու ժամանակ կասեն. «դատաստանին արէք դտէք զիս»։

2. Եղունգի վրայ եթէ երակաձև սև դծիկներ լինին՝ «բէր- նշան» կը համարուին։

3. Եղունգի վրայ երբեմն երևացող սպիտակ նշանները՝ նոր հանդերձ հագնելու և դրամ ստանալու նշանակ կըհամարուին։

4. Մագլաձև կոր եղունգ՝ աղջիկը հարուստ տուն հարս կը գնայ։

5. Երիտասարդները ցիկաններու կանայքը կը կճմլեն (եղունգով ի հարկ է) որ իրանց գերանդիները լա- ուրուին։

Ընէրուիլ (ակնահարել, նազար ալմակ). Մեծ հաւատք կընծայուի աչքերեն. կը կարծուի որ մի կարդ մարդիկ վատ աչք ունին և ինչ գեղեցիկ մարդու, անասունի և լաւ գործի վրայ նային, մարդը, անասունը կը տկարանան ու կը մեռնին և գործն էլ գլուխ չիլնայ։

1. Շար աչք ունեցողի առջևից անցնելու ժամանակ ամորչիթը կը ճմլեն՝ որ աչքը չբռնի թէ իրեն և թէ առջևը դտնուած անասունին կամ գործին։

2. Երեխայք չաչքրռելու համար, գլխարկներու վրայ քիրաղ ուրուշ, ուռճիկ և ուրիշ բոժոժներ կը կարեն։

3. Լաւ ձիերու պարանոցից եռանկիւնի ծալուած ու կարուած և ուլունքներով զարդարուած ԼՈՒՂԼ (կախարդական) կը կախեն։

4. Բոստանները (սեխեստան) աչքրռելուց ազատ պահելու համար փայտի գլուխ չիու- խոչ և հաւկիթի կեճեփներ կը տնկեն։

5. Իսկ երբ ձձումը (խնոց) աչքրռի և խուռնելով իւղը շուտ չհասցնէ, ՀԷՊՐՈՒ (քրդ. և հայ. լէպ՝ կախարդութիւն

անող) պատաւանները երեք անգամ ձեռքի վրայով ։ը շնչուած այս-ու այն կողմը, և աղօթք մի պտսպտալով ։ը թաքնշանեն։

ԱՍՏՈՒԱԾՈՒԹԻՒՆ ԵՒ ՍՐԲԵՐ

Աստուծոյ մասին ժողովրդի գիտութիւնը Ս. Գրքի տուած տեղեկութիւնից այն դին չանցնիր. գիտցածներն էլ խիստ կցկտուր և մութ գաղափարով կարտայայտեն գիւղացիք։

«Աստուած՝ զօրաւոր, լուսաւոր, երկնուց ու գետնուց ստեղծողն է, չորս կողմ՝ Սերոբէք, Քերոբէք, 9 դաս հրեշտակներ կանուկ են, «եօթ խոռ քանց երկինք վերև» գրած է նորա լուսեղէն Աթոռը։

Հայր Աստծուց յետոյ, ամէն խօսակցութեան, աղօթքի, բարեմաղթութեան, անէծքի և օրհնութեան ժամանակ շարունակ կը յիշուի «Յիսուս-Քրիստոսը», որու ծագման մասին բնաւ գաղափար չունենալով՝ լսելով միայն գիտեն որ «Աստծու որդի է»։

Ս. Հոգու մասին երբէք գաղափար չունին, և բացի «անուն Հօր և Որդւոյ և Ս. Հոգւոյ» աղօթքից, որով երեսնին կը խաչակնքեն, ուրիշ պարագային չյիշուիր։

Առաւօտեան՝ արշալուսին, երբ գիւղացի կինը երեսը դէպի «Հայոց ս. Աղօթարանը» դարձուցած սրտաբուղխ կաղօթէ, այսպէս կարտայայտէ իւր հաւատոյ հանգանակը.

,,Օրհնեալի Աստուած, օրհնեալի բարի լուսու քաղցրիկ Քրիստոս, Էյ շաղաթաթախ Հայոց սուրբ աղօթրան, Էյ չորեք կողման սրբեր, Սերոբէք, Քերոբէք, ինն դաս հրեշտակներ, բարեխօս եղնաք առ Աստուած''։

,,Եա Տիրամայր ս. Աստուածածին. եա Մշու սուլտան սուրբ Կարապետ, ատենահաս (ժամանակին հասնող) բօղ ձիաւոր սուրբ Սարգիս, իմ ձեռն ի ձեր փէշն իմ թալի (երկարացնել, ձգել, քցել), բարեխօս եղնիք արար (ընդհանուր) աշխարհքին, իմ մեղաւոր հոգուն''։

,,Մեղայ իմ քզի Աստուած, մեղայ Աստծու Աստուած, երկրի և երկրի (երկնքի և երկրի) ստեղծող Աստուած, մեղայ քեզ. Տէր, դու գքու ստեղծած հոգին չկորցուս, իմ մեղք շատէ քանց քարնի քըռէն, քանց աւազն ի ծովէն, քանց թուփնի ծառէն, Աստուած, դու իմ մեղք չաչքիս (ի նկատի չառնես) իմ խեղճն (խեղճութիւնը) աչքիս. Տէր, դու ողորմանաս հաւէ ու դու հիլէն (քրդ.=72 ազգաց), ամե-

նեցու(ն) «ոչոչէ» (ի սէր, յողորմութիւն) իմ տան ընտաւորին, իմ զարիբ-զուրբաթին, իմ մէկ ու հար (միամօր) «ոչոչէ» *), յետև գահուն (ժամանակին) իմ մեղաւոր չանարժան հոգուն»։

«Տէր, դու չհանիս ահն ի սրտէն, չտանիս ամօթնի յերեսէն. դու զչար խափանիս՝ զբարին բերիս. չար երազն ի բարին դարձուս. ամէն փորձանքից հեռու պահիս։ Քու աջն հովանի եղնի, Տէր, մեզայ քեզ»։

«Է՛յ կապուտ վրան (երկինք) քի իմ ապաւինի»։

Սրբերից ամենաշատ ժողովրդականութիւն վայելողը և նշանաւոր իրենց տուած պատիժներով կամ տուածուրիկ շնորհքներով՝ հետևեալներն են։

1. Բալա (սպիտակ, խայտաբղէտ, նախշուն) Խուռբէլ (գմբէթ), Հանանչ Շուռբաթ (գլխու ծածկոց), Խալուռ Էնդիկ Ս. Տիրամէրը, որու նշանաւոր ուխտատեղի վանքը կը գտնուի Արճէշի Ականց գիւղը, և յայտնի է մարդոց վրայ թափած գորո Խար�ը (գոգութիւն)։ Տիրամօր գոգու եարան ունեցողը, պէտքէ եօթ տարի մուրայ յօղուտ յիշեալ վանքին, ապա հաւաքած ողորմութիւնը տանէ նուիրելու ս. Տիրամօր և վանքի աղբիւրի ջրովը լուացուի որ լաւանայ. իսկ եթէ չլաւացաւ կը դառնայ մշտական խոշ (ծառայ) Ականցու վանքին և ցմահ պէտքէ աշխարհքներ պտտի և մուրալով ապրի։

Տիրամօր նշանը կընկնայ նաև անասուններու վրայ ևս, բայց չէ թէ վերք կը լինի, այլ ուղղակի «ոչոչէնէր՝ մարմնոյ մի որ և իցէ անդամի վրայ. այդ նշաններով անասունները երկիւղածութեամբ ու վախվախելով կը յանձնեն վանքի անունով շրջող անձանց։ Հետևեալ ժողովրդական երգը ցոյց կուտայ Ականցու ս. Տիրամօր՝ ժողովրդի հոգու և սրտի վրայ թողած տպաւորութիւնը։

ա. Քեզ հաւատամ, խոստովանիմ,
Կանանչ չումբար սուրբ Տիրամէր,
Տաճարիդ երկրպագիմ,
Ճատ պիտուական սուրբ Տիրամէր։
բ. Քումբէթդ էր շինած բալաք՝

---

*) Ոչոչ։ կը նշ. 1. (փնջիկ մի) մազ. 2. «ոչոչ»։

Դուն էր վրէն հուրէ մուրհ [1])
Վին օր զարկէր՝ կէնէր հուրհ [2])
Ճառահ-հէքիմ [3]) սուրբ Տիրամէր։
գ. Քու ձին մըջ ըռախտին [4]) խշայ,
Ձիուդ քամին մարդ կը քշայ.
Վին օր զարկէ շատ կը նէխշէ
Էնոր գարկած եարէն նէքէջ [5])։
դ. Գովամ քումբէթի բանձր սարէն,
Լուս կը բոխայ [6]) մարմար քարէն.
Ողորմանայ լուս տաճարէն,
Ինդոր կանի կրգի՝ չարէն։
ե. Գովամ քումբէթդ, ոսկի խաչեր,
Ըխտաւորներ՝ ճէրմակ մանչեր,
Դուռդ կիգայ ընարով [7]) խոչեր [8])
(Զատ եարալու նստած դռներ)
Թափի մատներ՝ մանցի կոճեր [9])։
զ. Գովամ քումբէթդ, նէխշուն օդէն,
Զուգիմ հեռանայ քու մօտէն,
Ձիմ կշտանայ անուշ հոտէն,
Ճարահ-հէքիմ սուրբ Տիրամէր։
է. Խոյլի Վարդան [10])՝ գովաց քըզի,
Դու էր շնորհք տուիր մըզի,
Դու օգնական ու պահապան՝
Ճարահ-հէքիմ սուրբ Տիրամէր։

2) Մշու Սուրբ Կարապետ, որ ամէն իրեն դիմող «ձիաւոր և հետաւոր» ուխտաւորի մուրտը (յղճացածը, փափաքը) կուտայ և կը կոչուի մուրտատուր ս. Կարապետ, այդ պատճառով ազգ ազգիկները և տղայք եօթ տարի ս. Կարապետին պասը կը պահեն (ս. Յարութեան Զատկից մինչև վարդավառ. միայն շաբաթ և կիրակի օրերը եղեղեռոջ պասերնին կը լուծեն). որպէս զի իրենց սրտի մուրտնին հասնին։

Ս. Կարապետի մասին հետևեալ աւանդութիւնը կայ. «Գրիգոր Լուսաւորիչը երբ որ ս. Կարապետու մարմինը Ղայսարու (Կեսարիա) քաղքէն բերեց, բարձեր էր վրը ջորու մի, պէտք է տանէր Մշու դաշտ վրը Բազմայ (Բազուայ) սարին բազմեցուցէր, էն վախտն որ ջորին

---

1) Հրեշտակ. 2) Սատակեցնել. 3) Վիրաբոյժ-բժիշկ. 4) Սարք, կազմած երկվարի. 5) յայտնի է. 6) Բղխել. 7) Ընտիր. 8) Խոյ. 9) Ոսկորները ափի, ձեռքի։ 10) Խոյեցի Վարդան, երգիչ (աշըղ)։

բարձած՝ տուեց սարի կող՝ վրը ճամբուն՝ քարի մի վրա [illegible], և ծընկ-ներու տեղը [illegible] (գուբ, փոս լինել), այդ պատճառով փոսացած տեղը կոչուեցաւ [illegible]»։

«Էդ սարի վրէն [illegible] (գիւաբնակ) էր, Լուսաւորիչն որ գտաճարի հիմ տուեց թալիլ (ձգել), հարի իրիկուն պատեր կը շինէն, լուսուն կը տեսնէն քար քարի վրայ դրուկ չկայ, գիւան (գեւեր) կը քանդէն։ Ձեզաւ՝ ս. Կարապետ սրդ յերդեն ըսեց. ձեր տուն չաւրի. հիմն որ կը թալիք՝ ոձէք՝ հասպամ (ապա) գպատեր շարէք։ Ջհիմ կօձնեն (օձել), զժամ կը կանգցուն, Լուսաւորիչն էլ գգիւան կը բռնէ լցէ [illegible]. մինակ [illegible] գեւը կընկնայ լուսաւորչու օտք ու ձեռք, խընդիրք կէնէ, կըսէ. գիսի մի՞ թալի գնդան, ուխտ եղնի յառաջի Ասրծուն, հարի աշխարհքի վերջ գս. Կարապետու թունդրի փոշին ամէն օր գիշերով տանիմ թափիմ [illegible] —[illegible] [1])»։

Ժողովուրդը կը հաւատայ, որ մինչև հիմա ևս գեւերու [illegible] (ձայն, աղմուկ) գնդանից կը լսուի և ս. Կարապետի վանքի թունդրի տակը [illegible] [2])։

3. Զիրքեռն [illegible] [illegible] ս. Գէորգ.— [illegible] վերև յիշուեցաւ՝ [illegible] զարկելու և ադեթափութիւնը (ճողել, hernie) առողջացնելու շնորհքը փութիկի ս. Գէորգը կուտայ։

4. Ս. Սարգիս.—«Դուշման թագաւորմէ (մի) կելնայ վրը Ուռումի թագաւորին, շատ նեղ կը լծէ զէգի. Ուռումներ լէ Հայոց թագաւորից [illegible] (օգնութիւն) կուգին։ Հայերուց Սարգիս (ըստ ոմանց Սարգիս Մարգնեցի) անուր մարդ մէ զուր ասքար (զօրքը) կառնէ, կերթայ յօգն, (օգնութիւն), կուու մէջ Սարգիսն ու ուր ասքար շատ քաջութիւն կէնին՝ զՈւռումներ կազատեն։ Ուռումներու թագաւոր զարգանդ (վախ, զարհուրանք) կը բռնէ, Հայ հօ, կրսէ, իդա հմա քաջ ազգ լէ կեղնի՞, զադոնք օր թողինք սաղ մնան՝ օր մէ չէ՝ օր մէ, մըր գլխուն պատիժ կը դառնան։ Կուու մէջ Սարգսի ասքար յրմէն ջարդուաւ. մանցին քառսուն հոգի. թագաւոր կրսէ. էդ քառսուն մարդոց քառսուն աղջիկ տուէք. թանպէհ էրէք (պատուիրեցէք) օր գիշերով հարբեցուն՝ սպանեն»։

«Աղջկներ՝ յիրկուն օր կեղնի, կուտեն կը խմեն հընր տղէկներուն, կը հարբեցուն, էն վախտն օր կը քնին. յեռսուն ու ին աղջկներ զեռսուն ու ին տղէն լէ կսպանին. մենակ մէկ աղջիկ կը նստի Սարգսի գլխու վերև մոր-մոր (մորմոքելով) կիլայ. կիլայ կիլայ՝ գիլ գիլ արտսունք կը գլորեն թափեն վրը Սարգսի ճակտին, Սարգիս

[1]) Դիարբէքիրից ներքև սոյն անունով նշանաւոր կամուրջ մի։

[2]) Ս. Կարապետի մասին եղած ժողովրդական երգի մէջ այս զրոյցները կը յիշուեն, որ ծանօթ լինելով ամենքին այստեղ առաջ չբերինք։

կ'իմնայ (արթննալ)։—Եա, կրսէ, խէր (բարի) եղնի. յօրին կիլաս։— Ապա ինալ չի լամ, թագաւոր հրամանք է, էրի օր գձրգի սպանէնք. այլէ՝ տես, գրմէն (ամենքը) սպանածին. լէ (այլ) լա՛ ձեռք չրռնեց օր ես լէ գձրգի սպանէնք, ելի՛, բալբի (թերևս) հարմ՝ էնենք մրր գլխուն»։

„Սարգիսն ու աղջիկ ծունկ կը չոքին, գնատուած կը կանչին, Ատծու օղորմութինով բուք ու քամի կելնայ. Սարգիս կը թալ, գաղջիկ ուր բուղ չի՝ ռուր, զուրանք քագքի բադնէն (պարսպից) կը թալեն ցած. ու եա՛ ու եա՛լլայ՝ կիգան Հայոց աշխարք»։

Ս. Սարգսի պատին կանայք լուացք չեն աներ, ասպն ձեռք չեն առներ, որ սրբու ձիու ոտքը չ'փոխայ (սահել, սայթաքել)։

Այդ շաբաթապահոց ուրբաթ օրը փոխիոր կը պատրաստեն և կը դնեն մի կողմ, որ ս. Սարգիսը գայ անցնի և իր ձիու ոտքը դարկէ վրան։

(Եղիդներն ևս երկիւղածութեամբ փոխինդ կը պատրաստեն նոյն նպատակով)։

Այդ փոխնդից պատրաստուած ճաշից՝ աղջիկներ մէկ մէկ բրդոտ (պատառ) կը դնեն ծառերու կամ տան տան ցուքքներու վրայ. որպէսզի ոռնէղ թռչուն գայ տանէ և իրենց բախտը պրշէ։

Թռչուն՝ բրդուռը որու դուռ որ տարաւ, աղջիկն այն տունը հարս կերթայ։

Եթէ գերեզմանոցի կողմը տանէ՝ աղջիկը կը մեռնի։

Եթէ դէպի սարեր տանէ՝ օտար գիւղ հարս կերթայ։

Եթէ եօր ճամբու ցուքքուս (կցուելու տեղը) տանէ՝ կուռով և ադմուկով մարդու կը տանեն։

Եթէ տեղն ու տեղը կերաւ, այն տարին ևս չամուսնանար աղջիկը։

Այս նշանաւոր բրդուռը կը կոչուի ս. Սարգսի բրդոտ։

Ս. Սարգսի պահոց առաջին երեք օրերը ադամ ադայք և աղջիկները մինչեւ երեկոյ) ծոմ կը պահեն. երեկոյին աղի, խիստ աղի բաղարջ կուտեն, որպէս զի քնու մէջ իրենց ջուր պոռ, երազի մէջ ջուր տուող աղջիկը՝ (ջուր) խմող երիտասարդի ապագայ հարսնացուն է և, փոխադարձաբար։

Հայերը և Եզդիները չափազանց կը սիրեն սուրբ Սարգիսը. իսկ Յոյները այնքան կատեն, որ, ակամատեսներու ասելով, եթէ այդ պատին մէջ չկարողացան ճարել, տոքի տրեխները կեփեն և կուտեն:

Եզդիները ս. Սարգսի պահոց մէջ նաև երեք օր ծոմ կը պահեն:

5. Սանջէլագործ.—Արծկէ գիւղաքաղաքի մօտ՝ Համանուն վանքի մէջ կը գտնուի դարերէ ի վեր փաթաթուած մատուռ մը, որու համար ժողովուրդը աւանդաբար կը պատմէ թէ «Քրիստոսի լողանալու պաշտէ էրոյն է», որ Մարիամն ու Յովսէփը Եգիպտոսից բերեր են Հրէաստան, յետոյ Առաքեալներու ձեռքով Հայաստան է փոխադրուած:

Այս մատունքի մասին զանազան տարակարծիք պատմութիւններ կան, որովհետև իրաւունք չկայ որ երբէք բացուի և ներչ չէնէլը իմացուի:

Ամէն ժամանակ, երբ՝ մարդոց թէ անասնոց, համաճարակ ցաւ կը տարածուի, ս. Աքանչելագործը յատուկ հրաւիրանօք բերելով երկրի մէջ կը պտտեցնեն:

6. Տէր Սէրգ (Հուսկայ) որդէն Ի-ր Մէջիզ պարարգը.—մեծ երկիւղածութեամբ և երդման մէջ միշտ կը յիշուի այս սուրբը և իւր արած միակ պարարգը, որու մասին ծերերը կը պատմեն.

«Ինքն Տէր Յուսիկը մի սուրբ և ընտիր վարդապետի որդի կը լինի, դաւառու? Երկրէն. երիտասարդութեանը ժամանակ՝ իւր հօր ուղտերը կը վերցնէ և կերթայ գործով երկրէ երկիր պտտելու. ի միջի այլոց կը պատահի և մի գիւղ, ուր աղբիւրին մօտիկ կերթայ իւր ծարաւը յագեցնելու, այնտեղ մի շատ գեղանի աղջիկ կը պատահի, որի գեղեցկութեան կը զարկուի. բայց սովորութեանը համաձայն՝ «չոյ է՛, կասէ, մի բաժակ ջուր կուտաս որ օտարականը խմէ և անցնի».—էրէչոյ է՛, կը պատասխանէ աղջիկը. համեցէք, որքան ցանկութիւն ունիք խմելու.

«Օտարականը կանցնի, կանցնեն նաև ամիսներ և տարիներ, Աջամը (պարսիկը) արշաւելով Հայոց աշխարհը, աղջկայ հայրենիքը հուր և մոխիր կը դարձնէ, հարստութիւնը և ամէն եղած չեղածը աւարի կը մատնուի, այնպէս որ երկրի ժողովուրդը սովամահ չմնալու համար կը փախչի այս ու այն կողմը։ Գեղանի աղջիկն ու իւր հայր մայ-

ը բարեբախտութեամբ կը պատահին այն գիւղը, այն տունը, ուր կը բնակէր ջուր խնդրող երիտասարդը»։

Օրիորդը որ թոռնուհին ուրուր ջուրնոյ նման բոլորել և աւելի գեղեցկացեր էր, նորից երիտասարդի ուշադրութիւնը կը գրաւէ և սորա առաջարկութեամբ կամուսնանայ օտարական աղքատ աղջկայ հետ։ Առագաստի գիշերը, փեսան կասէ, սիրելի կինս, կը տեսնեմ որ քեզ-նէ դրջ հոտ կուգայ։ հարսն ևս կը յայտնէ՝ ես ևս քեզնէ ոգեբուրեան հոտ կառնեմ։ Հարց ու փորձ անելով կիմանան որ այդ օրուայ հարս ու փեսան՝ տարիներ առաջ աղբիւրի վրայ էոյ և էգեոյ կոչուածներն են։

Որովհետև մի անգամ իրարու էգեոյ ո՞ էոյ ասել են, կուխտեն Աստուծու առաջ, ցկեանս էգեոյ և էոյ մնալ և մեղաց պտուղը չճաշակել։

Սիրելի կինս, կասէ եղեր նորափեսայ Յուսիկը, որովհետև պսակի սուրբ խորհուրդով ես ու դու միացած ենք, այլևս բաժանուելը անհնար է, թող բոլորը գիտնան՝ որ ես ու դու մարդ ու կին ենք, բայց մեր մէջը՝ էգեոյ ո՞ էոյ։

Կանցնին օրեր ու տարիներ. Յուսիկը ձեռնադրուելով կը դառնայ Տէր Յուսիկ. նորից մի պարսկական արշաւանք տեղի կունենայ և երկրի աւերման հետ բազմաթիւ հայ գերիներ կը քշեն պարսկաստան, ի թիւս որոց և Տէր Յուսկայ երեցկինը։

Գերեվար պարսիկ խանը տիրուհու գեղեցկութեանը հաւնելով կը տանէ իւր հարեմը, բայց՝ սկզբից, արդար Յուսկայ սուրբ աղօթքով կը տկարանայ՝ և առանց մի չարութիւն գործելու՝ կը մեռնի։ Կինը կստանայ խանի փոքր եղբայրը, սա ևս վախենալով որ իւր եղբօր պատժին չենթարկուի, կը կանչէ բոզարաձ բոզ Բիբի անուն կինը և կը ծախէ սորա վրայ։ Բիբի ևս Հայ կը լինի կամ ուրիշ ազգ քրիստոնեայ։

Երէցկինը կը յայտնէ բոզ Բիբուն՝ որ ինքը Հայ դրիստոնէայ է և միևնոյն ժամանակ քահանայի կին. թէ և երեսուն և հինգ տարի է որ ամուսնացած է՝ բայց Աստծուն արած ուխտին համար, ինքն և իւր այր քահանան մեղայ պրոոչը չեն ճաշակած, ուստի կը խնդրէ, զինք չմատնել անառակներու անարգ կեանքին. և այն վաստակը, կասէ Տիրուհին, որ պիտի ստանաս դու ինձանից բոլորովին զգուելի ճանապարհով, որովհետև ես լաւ ձեռագործ շինել գիտեմ, քեզ տասնապատիկ կարող եմ շահեցնել իմ ձեռագործներով։ Որպէսզի իմ խօսքերուն դու հաւատարմութիւն տաս, այժմեանից կը յայտնեմ քեզ, որ երբ էլ լինի իմ ամուսին քահանան պիտի գայ ինձ փնտրելու, և դու կիմանաս որ ես սուտ չեմ խօսացեր։

Տիրուհուն առանձին սենեակ կը տրուի, ուր փակուած օրն ի բուն ձեռագործներ կը պատրաստէ։ Օր մի չէ օր մի՝ մի երեկոյ բոզ

Բիբին կը տեսնէ մի գծուած ծերունի, որ կանգնած տիրուհու հետ ծածուկ կը խօսի, խօսակցութեան ժամանակ, կը տեսնէ որ «Տէրն Բէրնէն ըսաւ կէնէ և Տ-ոյ Բէրնէր կը տանէ»։ Բիբին կը զարհուրի, կուգայ և կընկնայ ծերունու ոտք ու ձեռքը. իմանալով որ նա այն քահանան է, որու մասին իւր գերին առաջուց արդէն յայտներ էր, կինը յանձնէ նորան։ Իւր անթիւ մեղաց թողութիւն լինելու համար, Աստուծու առաջ երդուեցնել կուտայ քահանան և իւր կինը. և պարտ դնել կուտայ վրանին, որ գոնէ մէկ անգամ իրենց ՈՒՂՂԻՆԸ ՓԻՊԱՆ. որպէսզի Աստուած իրենց ՊՂՈՒ Տէ տայ, տղան քահանայ դառնայ և ՈՒՈՒՋ ՊՈՊՐՈՓԸ իւր մեղաց թողութեան համար մատուցանէ։

Տէր Յուսիկն և իւր կինը կը վերադառնան Հայաստան կունենան զաւակ մի՝ Սթեփան ԱՌՈՒՆՈՎ, Ստեփանը մեծնալով կը լինի 20 տարեկան, երկրի մէջ սաստիկ թանկութիւն ու սով կը լինի, մի բեռ ցորեն վերցնելով ջրաղաց կը տանէ, աղալու համար, ճանապարհին սովամահ աղքատներ պատահելով իւրաքանչիւրին մէկ մէկ բուռ ցորեն կը բաժնէ և բեռը բոլորովին կը դատարկուի, վախենալով որ դատարկ տուն վերադառնալով կարող է պատժուել, կը փախչի անապատներ ճգնելու, ուր երկար ժամանակ թագնուած կը մնայ, մինչև որ ծնողքը մի կերպ իմանալով կերթան և իրենց մէկուճար որդին կը գտնին։ Ինչպէս որ ուխտած էին վարդապետ ձեռնադրել կուտան և կը խընդրեն, որ առաջին պատարագը մատուցանէ բոզ Բիբու համար։

Պատարագի ժամանակ Տէր Յուսկայ որդին կը տեսնէ սարսափելի ՈՒԽՏ ԾՈՎ, որու մէջ ընկած կը լինի Բիբին, և երկար աղաչանք ու պաղատանք անելուց յետոյ, Աստուծոյ ողորմութեամբը կաջողի բոզ Բիբին ազատել արեան ծովից և հանել ցամաքը։

Այդ ահաւոր տեսիլքը այնքան խոր կազդէ Տէր Յուսկայ որդու վրայ, որ հաստատուն ուխտ ուխտեց Աստուծոյ առաջ, իւր կեանքի մէջ այլևս երբէք պատարագ չանել։

Այդ անդրանիկ՝ անմահ սուրբ պատարագն է, որ այսօր ևս Հայաստանի ամէն մէկ անկիւնը կը յիշուի, և անսուտ ու հաւատարիմ երդուելու համար՝ այսօր ևս մեծ ու փոքր, Տէր ՍՈՒՆ ԱՐԴՈ ՄԷՆԻ պատարագովը կերդուին։

---

7) ԹՈՒԽ-ՀԱՌՈՒՆ. Այս անունով երկու ուխտատեղի-եկեղեցի կը գտնուի Բուլանըխ գաւառը. մէկը Կոփ գիւղի մէջ, և միւսն Համզայ-Զէյլիս գիւղին, վերջնոյս համար աւանդութիւն կայ՝ որ Համզայ անուն շէյլիսի որդին կը լինի. 5—6 տարեկան եղած ժամանակ, Հայոց տղաքներու նման՝ կասեն, ականջները դինդ

անցկացնելով [1]) կերթար քահանաներու մօտ և կը կարդար Հայոց լեզուով։ Ձէյլի Համզան իմանալով, մանուկ որդին գիւղից դուրս տանելով սրախողխող կանէ, և անհաւատներու հետ նստելու կանգնելու համար կը կանչէ Հայերը և որդու պիղծ մարմինը կը յանձնէ սոցա։

Փաքրիկ նահատակի վրայ աշկարայ լուս իջնելով, Հայերը մատուռ կը կանգնեցնեն վրան և կանուանեն Ռ-խ-մանոյ։ Ոմանք կատուգարանեն իրը Ռ-խ-լամոյ, այսինքն՝ ոչ լամոյ, որ կը նշանակէ՝ (քրդ.) թուխ-որդի, որովհետև լամոյ բառը քրդերէնի լաւ կամ լաւ բառերու փոխոխուած ձևն է։

8) Քաւոսոն մանոյ. Կը յարգուին ջերմեռանդութեամբ նաև քաւոսոն մանչոնոցը, որոնց տօնին բարեպաշտ կանայք և աղջիկները 40×40 ծունր կը դնեն։

9) Գաւառիս մէջ կը գտնուին զանազան շէն և աւերակ սրբոց մատուռներ, քարակոյտեր, խաչքարեր, աղբիւրներ, ծառեր, անտառներ և այլն և այլն, որոնց բոլորին ևս ուխտ կերթան և երկիւղածութեամբ կը պատուին ու կը պաշտուին։

Ստեղծագործութիւն աշխարհի. նախահայց մասին եղած զրոյցներ. աւանդութիւններ լեռներու մասին։

«Ասուած օր զերկինքն ու զգետինք ստեղծեց սրբաւ, ապմէ հոգ առաւ զԱդամ լէ ստեղծեց, սորա (յետոյ) թմբրութեան թափեց վրը Ադամայ ձախ կողերուց կողմէ քաշեց ստեղծեց զԵւէն, զերկուս մէկտեղ դրեց ադամական (եդեմական) դրախտ»։

...զԱդամ ստեղծեց ապմէ հողէն,
զԵւէն քաշեց ձախակողէն».
(ժողով. երգ).

«Սատանէն օձու կերպարանքով մտաւ ի Եւի խաչէ (սիրտ), Եւէն խաբուաւ զպտուղ կերաւ, տուեց Ադամին՝ Ադամ լէ կերաւ, մերկացան.

---

[1]) Մինչև մեր օրերն ևս հայ երիտասարդները ֆէոդ կախելու սովորութիւնը ունէին, սկսած փոքր հասակից՝ մինչև ամուսնանալը, բայց այժմ գրեթէ վերջացած է։

«...կնիկ սև օձու նման,
Խարեց Եվէն ու զԱդամ,
Կաղնի վաշից քօքէհան
Քաշէ, արի կնկայ ջան»։
(Ժողով. երգ).

Աստուած զԱդամն ու Եվէն դրախտէն տկլոզ ու մերկ դուս էրեց, մութ գիշերն օր եկաւ՝ նստան լացին ու ողբացին, չընգինի թէ լուս պտի եղնէր. սատանէն էգ վախտ եկաւ մըտ Ադամ, ըսեց,ինչ կիտաք օր լուս լուսցում վըր ձրդի, Ադամն ու Եվէն ըսին՝ ինչ կուզես կիտանք, թաքիլան (միայն) լուս բերիս։ Խարեց ՀՅԷՈՒՓԷՐ առաւ թէ չէ՝ ադօթքրան ճղճղնաւ (ճիւղաւորել) լուս լուսցաւ վըր արար աշխարքին. նոր փօշ-մրնան, լէ ինչ օգուտ, եղաճն եղեր էր, էն ձեռագիր մնաց մըտ սատանին, հարի Քրիստոս եկաւ աշխարհք խլեց դրեց խաչի տակ, հալաւ կորաւ։

Առաջին երկրագործը.—Հրեշտակ Ամենակային եկաւ Ադամին սովրցուց վար ու ցանք էնելը. հարօր (արօր) շինելը և այլն։ Ըսեց, խտա չըմէն դաշտ ու դարան քու առջևն է, ՀՈՐԾ ԴԷՐ (տես երկրագործութիւն) քըզի արտ վարէ ցանէ, գքու իդարէն (ապրուստն) էրէ։ Լծեց Ադամ զուր արօր, քշեց հա քշեց, շատ ու քիչ գնաց, հրեշտակն եկաւ՝ ըսեց.—հար յուր պտի երթաս ՄԷՏ-մէ դիր (սահման) քու արտին, իդա խրտար տեղ քըզի կը հասնի։

—Ես ինչ գինամ սինօռն ինչ է։

—Ցօրին չըս գինայ, բեր ակոս մէ թալինք յօդա, թըզ եղնի սինօռ մըջ ընձի ու մըջ քըզի, իդա գին (կողմ) ընձի էն գին քըզի։

Էն վախտն օր զակօս կը թալեն՝ Ադամ ուր ազահութենէն ոտքով գկոշտներ կը թալէր վըր հրեշտակի տիուն, օր (իւր) ուր արտ մեծ եղնէր։

Աբէլի սպանուիլը կը յիշուի համաձայն ս. Գրքի, միայն կաւելացնեն, որ երբ Կայենը մոլթելու ձևը չգիտէր, սատանէն մտաւ ադռաւու ԽՐՇԸԽ (կերպարանք), առաւ երկու սուր քարեր գրուսեց վըր իրարու, Կային տեսաւ, սովրաւ, առաւ սուր քար մի և մոլթեց իւր եղբայրը։

Կայենի ՀՈՒՇԵՐՈՒ մասին ևս յիշատակութիւն կայ, որով

Աստուած պատժեց Կայինը, այդ կոտոշները այնքան երկար էին, որ երբէք չէր կարող մի որևէ շինութեան մէջ պատապարուէր և այդ պատճառով ստիպուած էր թափառել շարունակ։ Այժմ երբ շատ ծեր մէկը դեռ փափաք յայտնէ ապրելու՝ կասեն «կուզէ Կայենի կոտոշ հանէ»[1]։

Մաթոս-Աղա.—Ժողովուրդը կը կարծէ՝ որ Մաթուս աղան պէտք է որ տաճկական աղա մի լինի (Մաթոս-Աղա)։ Երբ մի մարդ շատ ադահ լինի՝ կանուանեն Մաթոս իբր թէ հետևեալ պատճառով։

«Մաթոս աղէն 999 տարի ապրաւ, էն խրդար անկուշտ էր, օր խնդրեց Աստծուց ուրեն (իրեն) էլ ռ-ֆ լուր, Աստուած լէ հրեշտակին ըսեց, գնա Մաթոսին ըսէ, թող գուր ձեռք զարկէ վրը եղան պառեկին, ինչխդար օր մաղ ցնկաւ ձեռաց տակ, էն խրդար տարի լէ ռ-ֆ (կեանք) կիտամ ուրեն։ Մաթոս աղան երբ հրեշտակից լսեց Աստծու հրամանը ջոր թալեց վրը եղան, հրեշտակ լէ ինադ էրեց զհոգին առաւ»։

Ջրհեղեղ.—Նոյեան Տապանի և ջրհեղեղի մասին ժողովուրդը՝ բացի ս. Գրքի աւանդածից, կաւելացնէ հետևեալ զրոյցները։

«Ին զահ (ժամանակ) օր նահրներ (հիւսներ) զտապան կը շինեն, նահարներու հաջաթները (գործիք) ձէն կը հանեն Աստծու հրամանով—թէ ջրհեղեղ պիտի եղնի, ամա՝ (բայց) մարդ ականջ չբր էնի»։

Տապանի Գրգուռ լեռան վրայով անցնելն ու գրգռու�ելը, Սիփան սարին հանդիպելը և, Սիփանայ ասելը՝ թէ գնա՛ Մաոնո, քոռչը է ջոր ղնո, և Մասիսի հրաւիրելը՝ թէ, Ռուբ՛ վըր ձղնո և այլն, ծանօթ են բոլորիցդ։

Աշտարակաշինութեան տեղը Նէմրուռ (Նեբրովթ) լեռան

---

[1]) Ռ-ֆ ածանցական մասնիկով վերջաւորուած Կայենական բառն ևս կը գործածէ ժողովուրդը, երբ կուզ՝ մի գործի, առարկայի և այլն անագին լինելը ցոյց տալ, օր. դիգա կայենական բան (գործ) ին կընայ էնէ, բայց հնչումը քիչ կրտարբերի և այդ բառի առաջին վանկի ռ տառը կը հնչուի ինչպէս տաճկաց այն կամ ալիֆին.—Կայենական։

գլուխը կը տանեն, ուր Նամրութը (Բէլը) որ խիստ զօրէ ու զօրաւոր մարդ կեղնի, կանգնեց իւր նշանաւոր բերդը (աշտարակը)։

Երբ որ Նամրութը՝ իւր բերդը կանգնեցնելու համար, ժողովուրդը չարաչար կըտանջէր և կընեղէր, բազմութիւնը մի անգամ բողոքեց, թէ՝ «չէ վերև Աստուած կայ, չըվախենայ Աստծուց զմըզի խոտ խոտար կը տանջիս», Ներրովթը կը պատասխանէ. եթէ վերև Աստուած կայ՝ պէտք է իմ բերդը այնքան բարձրացնեմ որ ծայրը հասնի Աստծու մօտ։

Մինչև ամպերը բարձրացնելով իւր բերդի ծայրը, առաւ իւր նետ ու աղեղը և «զէմ էրեց Աստծուն ու զարկեց, հրամ զարկելուն՝ էրէս-յ-ի կը պատեն (ընկնել) երկնուց. Նամրութ կը կարծէ որ զԱստուած սպանեց՝ բերեց ցած»։

«Աստծու հրամանքով մէկ մէկ ոտծ-ս (տաժի, բարակ, քերծէ շուն) դորայ մրջիմ (մրջիւն) ֆէյտ-ս կեղնին (զոյանալ), մրջմներ կը քանդեն զբերդի հիմք, տակ կը դարձնեն, էն մէկ օր բերդ՝ ինքն ուրին հրմալ կը փլի՝ օր գլխու քար կը թռնայ ի Ո-րֆ-ս (Ուրհա, Եդեսիա) [1])։

Վանայ ծովու արևմտեան կողմը գտնուած՝ Դատվան

[1]) Մի որև է տան (օջախի), քաղաքի, երևելի բերդի, աւերման, կործանուելու և քարուքանդ անելու պատմութիւնը արած ժամանակ վերջը ոչ-որ է Ո-րֆ-ս ֆէյտ-ս խօսքովը կը կնքեն։ Այստեղ բաժանուեցան 72 ½ ազգաց գլխաւորները և լեզուները։ Ասորիք ամէնքից յետ եկան և նոցա բաժին մնաց [1]) Ն-ղ-խ-ները, իբր ամենասաստ լեզուն աշխարհքի վրայ նոցա մնաց։

Կէ-ոզէ կը համարուին ըստ ոմանց Մոդրդէներդ (բօշա, ցիգան) և ըստ Տաճկաց՝ Էզրէներդ։

Մորբկներու ծագման մասին կը կարծեն՝ որ երբ սոցա նախահայրը չկարողացաւ կին ճարել, փայտեայ կոյտին կը մերձենայ և որգիք կունենայ։ Ընդհանրաբար ևս միևնոյն ծագումը տալով՝ կասեն որ հանդերձեալ աշխարհի մէջ Զոզ-ի-ոն անունով կոյս աղջիկ մի ունին պաշտպան, որ բացի իւր հաւատակիցներից, ոչ մի ազգի թոյլ չի տար ոչ-ոյ-ն-ի-ն մտնելու։

[1]) Բաբիլոնեան խառնակութեան ժամանակ՝ ժողովրդի հաւատալով յաժանուած են մարդոց և անասնոց անդամները, յատկութիւնները, լեզուները և այլն և այլն. բաժանելուց յետոյ, եկող մարդ կամ անասուն զրկուեր է մի որևէ անդամից կամ բարիքից.—Այսպէս Ասորիք ուշ գալով վատ լեզուն ստացան. տիզ (մրջաւոր) ուշանալով յ-ոյ-ից զրկուեցաւ, ուղտը՝ ոտ-ից և այլն։

գիւղի Հիւսիսը, մի ձորակի մէջ՝ ուղտի բարձրութեամբ և կարաւանի ձևով կանգնած աւազաքարեր կան, որոնք «Նամրութի դէվէքն (ուղտեր) են եղի, օր ջուր կը կրէին ծովէն ի Նամրութ սար. բերդի շինութեան վախտն Նամրութն որ կը Հպարտնայ մըջ ուր մտքին, Աստուած դէն դէվէք կէնէ քար»։

Նեմբրովթի Հսկայական սիժը ցոյց տալու Համար, Նեմբրովթ սարի արևելեան կողմը գտնուղ Թեղուտ գիւղին մօտիկ գտնուած մի քանի մեծ և ահագին քարերը, ժողովուրդը կանուանէ «պարանոցքարեր» (պարսաքարեր) զորոնք՝ ամբարտաւան բռնաւորը՝ լեռան գլխից իւր պարսէտի մէջ դրած կը ձգէ եղեր ներքև։

Նախամարդոց մասին ժողովուրդի կարծիքը այս է որ խիստ հսկայ յաղթանդամ, վիթխարի, հզօր՝ և զօրաւոր են եղած, և մարդկութիւնը հետզհետէ մանրանալու վրայ է, կասեն—«Հրմալ ժամանակ պտի դայ, մարդիկ հրմալ պտի մանտրրնան, օր Էլ Հոգէ նստեն մէկ ոտոն Բէլ տակ, չերևան». այն ժամանակ Էլ պիտի դայ և աշխարհքի վերջը պիտի լինի։

Դ—ԷՌ—ՄՀԵՐԷ կոկտուր պատմութիւնը երբեմն ծերերից կը լսուի, և ազգային կեանքի մասին դարաւոր լռութիւն պահելուց յետոյ՝ երևան կուգայ «Ծրդատ (Տրդատ) մեծ թագաւորը, որ 40 գոմէշի ուժ ունէր և պոլէր (վէմ քար) կը շրջէր»։

Լուսաւորչի՝ խոր վիրապ ձգուիլը, թունաւոր օձերու գալը և ս. Լուսաւորչի ոտքը ու ձեռք համբուրելը, սրբու մէկ անգամ «խոզ» ասելովը Ծրդատայ խոզ դառնալը, յետոյ բժշկուիլը, կոյսերու նահատակութիւնը [1]), Լուսաւորչի Ծրդատայ գործակցութեամբ իբր 1001 Եկեղեցիներէ կանգնելը՝ ժողովրդի մէջ կը պատմուին շատ ու քիչ աղաւաղումներով։

«Ինչմիաձնայ տեղը տիլ ու տլտնոց էր (տղմուտ, ճախին) Լուսաւորիչ շիւարեր էր՝ չըր գինի յուր զժամու հիմ թալէր. մըջ տեսիլքին՝ Քրիստոս յիջաւ յերկնուց, ոտէ ոտ ի ձեռք, բոլորմանի խաչեց (գծեց) զտեղ ցուցուց. Լուսաւորիչ էն լուսուն յելաւ գիմք թալեց։

[1]) Մամիկոնեքը կաւանդեն, որ երբ Ծրդատ բռնեց Հռիփսիմէի ծամերը դրեց սան (սեան) տակ, սուրբ կոյսը՝ որ Ծրդատայ չափ ուժեղ էր, քաշէց որ իւր ծամերը հանէր սեան տակից, զոյգ հիւստակը (հիւսկէն) մնաց քարի տակ և ինք փախաւ սրծաւ։

Հման (հիմքի) քարեր՝ Ծրդատ Մասիսու սարէն կը շալկէր բերէր, շալկելու վախտ Լուսաւորիչ յետևանց կը կարդէր ու կաղօթէր Թադաւորի համար»։

Մի անգամ Ծրդատ ձանձրանալով Լուսաւորչի պտպտիկներից (աղօթք) ասած կը լինի՝

«Զըմ ձանձրանայ քարն ի պառեկիս,
Կը ձանձրանամ, որ պտպտիկն է յետևիս»։

Լուսաւորիչը բար ձրանալով պտպտիկը կը վերջացնէ, և Ծրդատայ ոտքերը մինչև ծնկները կը խրուին գետնի մէջ. դառնալով դէպի Լուսաւորիչը՝ կասէ.

«ԴԷՀ պտպտայ. պտպտայ.
Պտպտիկդի հոգիս»։

ԵՐԿՆԱՅԻՆ ԼՈՒՍԱՒՈՐՆԵՐԸ

Ամ. ոբէգոչ. — Արև, ինչպէս և բոլոր երկնային լուսաւորները, այժմ ոչ թէ կը պաշտուին, այլ կը յարգուին. բայց և այնպէս այդ յարգանքը անցեալ պաշտաման մի հետքն է, որ մնացել է ժողովրդի մէջ։

Զմեռնային արևադարձից յետոյ, երբ առաջին անգամ ոբնու շողը կը զարնէ տան պատի վրայ՝ ե-ղ և ոչ-ը կը քսեն, որ եկող տարուայ իւղն ու հացը առատ լինեն։

Արև (նաև լուսին) երբ խաւարի, պատերազմի, արնհեղութեան նշան կը համարուին։

Խաւարումը կառաջանայ չար Ջիշոպի պատճառով, որ կուզէ կուլ տալ արեգակը, խաւարման ժամանակ հրացան կարձակեն և ծնծղաներ կը զարկեն չար վիշապը փախցնելու համար։

Երազով երբ տեսնեն որ արև (նաև լուսին) խաւարի, թագաւորին մահու վնաս կը համարեն։

Ամ-ոչ էղած էրդ-ոնը. — Իգա (այս) բժիկ (լուսաւոր) արև վկայ եղնի. իմ ոբնու, տու ոբնու, իմ ոչիկ ոբնու և այլն և այլն։

Անէծքներ. — Քու ոբնու մնեանի, քու ոբնու գէմ եղնի (կեանքիդ դէմ). քու չանուչ ու չոբիճ ոբնու կտուտի (կտրատել)։ Իգա արև տայ դքու պատիժ և այլն։

Բարեմաղթութիւն. — մեռնիմ քու ոբնուն, յերկէն արև եղնիս, կանչնայ քու արև, Աստուած դքու արև բաշխէ և այլն։

Երեխայք լողանալու ժամանակ երբ մթին, արևուն կուղղեն հետևեալ աղերսը.

„Արև, արև, յել դուս,
Ճիտու [1]) ջղէն [2]) հան [3]) դուս,
Ես կը լողամ, ես կը դողամ,
Թափթա [4]) շապիկ թալ վրէս“.

Լո՜ոին, լո՜ոոէ.—Լուսնի առաջին եղջիւրը կը կոչուի Նոր. երբ Նորը առաջին անգամ տեսնեն՝ կը դառնան դէպի աղօթարան և խաչ կը հանեն, (ոմանք ուղղակի լուսնի դիմաց կը խաչակնքեն): Կը հաւատան որ նորին նայելուց յետոյ, առաջին անգամ ինչ առարկայ որ տեսնեն՝ ամբողջ ամսուայ մէջ նոյն առարկայն կը տեսնեն կամ կունենան, այդ հաւատքով շատերը դրամի վրայ կը նայեն:

Լուսնին ուղղուած պառաւանց աղօթքը.
«Նոր, նոր, նորաւոր,
Կանանչ, կարմիր թագաւոր,
Ծեր գացիր, տղա եկար,
Յեզր աշխարքէն ինչ խաբրիկ բերիր։
—Աշխարքին՝ խէր ու խաղաղութեն,
Թագաւորներուն՝ բարիշութեն [5]),
Մահին, թանկութեն,
Հացին, յէժնութեն,
Իմ աղէկներուն, արևշատութեն,
Իմ հոգուն, արքայութեն»։

Յովլո՜ոին. — Սեպտեմբեր ամսուայ լուսինը կը կոչուի յովլո՜ոին (աւագ լուսին?) Խմոոոո՜ռ, Մոքվոքէ, ռոմդոք, Ընդէքոց և այլն և այլն դառնալու համար սկսած է Նոոքէչ յովլոլո՜ոին:

Թէ ինչ կը նշանակէ յովալուսին նստելը. լսենք հետևեալ պատմութիւնը նոյնիսկ Նոոոէչ։—«Լուսին որ տասնուհնգու, կասէր Ամէն (նստող կնոջ անունը), հագայ ոտքէ գլուխ ֆորմէ շրէր, վառուգ ճրագ մէ դրի գետին, մեծ պղինձ մէ կործեցի վրը ճրագին, ես լէ յելայ նստայ վրը պղինձին, հայլէ (հայելի) մէ առայ ձեռքս, ջոով ֆոո ֆոո դրի յառջևս, պառիկս ոլորի (դարձնել) դէպի լուսնակ ու հայրու

---

[1]) Ճետ, աքլոր, աքաղաղ։ [2]) Ջէջ (տես պսակ, հարսանիք) [3]) Հանէ։
[4]) Բուլանրեցիք ծիրանի հանդերձ կամ կտորը կանուանեն Ռաքիռ, (քրդերէն)։
[5]) Հաշտութիւն։

միջով անթարթ աչքեցի լուսնակին (եթէ մէկ ժամից աւել ևս հարկ լինի նայել լուսնին, չպէտք է երբէք աչքերը թարթել (փակել)»։

,,Յառէջ լուսնակ մէկ էր, ես տեսայ, Եղա՜ Էրկո՜, Եղա՜ Էրէ՜, մաղսաթ (վերջապէս) դարձ՜ Եէլ հաս. Էդ եօթ լուսնակներ եղան կտոր կտոր, դարձան մէկնան (միացան). մեծ արնծովմէ բացուաւ յառջևս։ Ծովու միջէն յելան երկու արաբ, մարուքմ՝ երկինք, մէկ գետինք, եկան կտրուկ գլխով ղաղաղ ղաղաղ մարդիկ, եկան ծծերով կնկտիք, ծծեր ուրանց թալուկ վրը փիճանուն (ուսերնուն). մէկ լէ տեսայ՝ ջաղջ մէ ֆար մէկ մազից կախեցին վրը իմ գլխուն, վռայ, եաման, ըսի, չպատի՞ Էդ քար վրը իմ գլխուն»։

«Ինչ օր կը տեսնէնք՝ աղէկ էր, շուտ կը տանէն յառջևէս. ջաղցի քար լէ տարան, ես տեսայ, մարնծով բարկցաւ (բարականալ) եղաւ քրնց գետ մէ, մաղ նարմանջ թալուկ վրէն, ես տեսայ էն երկու արաբ էլման եկան, զօրով կուզէն գիսի յընցուցէն (անցկացնել) կարմնջի վրաւով. չանէքս (ծնօտ) առաւ վկվկուն, չօքերս կը դողէր, ինչիսը-դար լայի ու աղաչանք էրի, չարայ չեղաւ, մէկ լէ տեսայ ոպիտ ղրբ-ոլ Էրկո՜ մարդ եկան, գիսի խլեցին արաբներու ձեռքէն. ըսին՝ վազ կեցէք (գործ չունիք, դատարեցէք) ընդրնէ, ընդրա անուն մեր մօտ գրուկ է»։

«Ես տեսայ, մեր գեղի խալզ (հասարակութիւնը) չրմէն եկան իմ յառջև, իմ աղպէր լէ եկաւ, չրնկաւ յառջևսի օր զրմէն բան ընի ըսրեք էնէր (պատմել)"։

,,Ազջիկ մ՝ եկաւ. ջրով լիք կուժնի ձեռք, կը բօռէր ու կը կանչէր. եաման, ես ծարաւ մեռայ։ Էդ որն է. հարցուցի իմ աղբօր մօտէն—Զանգին (հարուստ) տան աղջիկէ, ըսեց իմ աղբէր. օր ուր կեանքի մէջ թասմէ ջուր մարդու ձեռք չը տուերէ"։

«Եկաւ մարդ մէ, էշմ՝ առջև. իդա որնէ, հարցուցի։ Էդի անողորմ մարդ մ՝է, էդ էշ լէ ուր հրքեբանէ է»։

,,Զատ մարդ եկաւ ու գնաց, ամա իմ չօներ խուզում (ոյժ) չը մանցի, իմ ուշք գացեր էր, (ուշաթափութիւն) գիսի տարած էն տուն, գիշեր մէ թամամ ես մեռուկ էնք մանցի. մէկ լէ զաչքերս բացի տեսայ, օր տեղ ու բարձով ղարկուկիմ մրջ մեր տան"։

,,Օր թէ (թէ որ) հարի վերջ կրցեր ենք գօ մի (համբերել), ես թամամ իմաստուն կը դառնէնք, ամա էլման շատ ու քիչ իմաստութեն եկաւ վրէս։ Զունքի էն լուսուն, մեր դրկեցի հարսն օր եկաւ մեր տուն, ըսի. քա կնիկ, յօրին քու դէգեր կնկայ շորեր գողցերիս, չրս ետայ ուրին։ Եկաւ քաւոր քուր Ջ... ախ, ըսի, տարիմ՝ լէ եղավախտ, կ՝որբեւերնաս (այրիանալ)"։

Յովալուսին նստող խալիֆայ Պ-ի բոլորը կը հաւաքուէին գիւ-

ղի երեխաները և կը խնդրէին որ իրենց մեր դռայ, խալիֆան շրջացնելով ձեռքերը ջէրը կը տանէր և միրգ հանելով կը ցփնէր երեխայոց. և երբ կը հարցնէին՝

«Խալիֆայ, էդ որտեղէ՞ կը բերես».

—Իմ ընդերքը կը բերեն, կը պատասխանէր։

Կրակ և Ճրագ *) Կրակը սուրը օջախնէ՝ դիւղացու թունդիր եկեղեցին», որու «Հալալ հացը» և «Հացի հրեշտակը» միշտ բարեխօս են առ Աստուած իւր համար։

Կրակի վրայ մեղելը մեծ մեղք կը համարուի։

Վառուած ճրագը եթէ յանկարծ հանդի, վատ նշան կը համարեն.—մարդ կը մեռնի կամ փորձանքի կը հանդիպի։

Ճրագ վառած ժամանակ տան տախտը չեն աւելեր (տես Բարեսովը)։

Երեկոյին՝ ճրագլուսով տնից մեկնող հիւրի առաջ դուռ չեն բանար, ինչպէս որ ցերեկները պարտաւորիչ սովորութիւն է։

Ճրագի վրայ եղած երդոմ.—լոգա ճրագի սերսուր (սուրը) լուս դինայ.... քօռ աչքիմ լոգա ճրագ լաւլն։

Առաղեր.—Ամէն մէկ մարդուն մէջ առաղ կայ երկինք, եթէ աստղ պատի (ընկնալ) մարդը կը մեռնի։

Մարդը եթէ Բարի առաղի տակ ծնի՝ բարեբախտ կը լինի. եթէ չար առաղի տակ ծնի՝ դժբախտ։

Երբ մի հիւանդութեան համար Ռուզ անել պան, թուղթը ջրի մէջ տրորելով մի գիշեր առաղերու պէ կը դնեն։

Պոչով առաղը (Գիսաւոր) որ ելնէ, տարի և պատերազմի նշան կը համարուի։

Սանամոր յէրդ (յարդդող). «Գատ հին ժամանակ, սանամէր կը դողնայ գուր քաւորոջ յէրդ, քաւոր վրը դողութենէն կը հանդեպի, սանամէր կը փախնի, յէրդ կը ցփնուի երկնուց երես, որ ուրիշ սանամէրներ զուրանց քաւորոջ յէրդը չդողնան»։

«Ձէ, կասէ մի ուրիշը, ջրհէղեղի վախտ, երկինքն օր կը պատ-

*) Տես „Տէրընդեզ"։

ռուի, Աստուած կը նստի զերկնքի երկու փեղկերը կը կարէ, Էդի (յարդ-գողը) էն կարելու տեղն է՝ օր կերևայ»։

Լուծ. — «Հա խղա աստղերն օր կերևան, կասեն գիւղացիք, ը-ծ-ն է, երկուսն ամ՝ երկուս հոբէ, մէկ մանճնը է, մեկէլն՝ հոռոշ, տես, կասեն, հոգոր տնէն հաց կը տանէ լուծք վարողներուն. ֆէլ գացերէ հացւորի առջև օր գհաց խլէ, իսկ մանճկալը լուծքը թողնելով գացերէ հացւորի օգնութեան»։

Բ-ը-ջ. — Խումբ մի փոքր աստղերուն ևս Բ-ը-ջ անունը կուտան, և կը հաստատեն՝ որ մայիսի 17—20 ի գիշերները, բուլքը կայծակի նման կը զարկէ անասնոց վրայ. այդ պատճառով այդ երեք գիշերները, ոչխարները սարերու տրևմտեան կողմը՝ ստուերները կը նստեցնեն, իսկ միւս տաւարները անպատճառ ներս կը պահեն։

Բրդերն ևս նոյնը կը հաստատեն ասելով՝ Գուլան (մայիս) ամսուայ 20-ին, Պէվրը (բուլք) կը զարկէ անասնոց վրայ։

Ամպի գ-ա-լ (որոտումն). — Գարուն երբ առաջին անգամ ամպ որոտայ՝ մէջքերնին շուտով պատին զարկելով կըսեն. «ամպ գռայ, իմ պառեկ քընց խղա պատ խայիմ (ամուր) եղնի։

Կէծ-ակ (կայծակ). — Կէծակ վրը աստանին կը զարկէ Աստուած, աստանէն լէ կը փախնի մնայ եան (կամ) ա-ա խղան տալտէն (հովանին) եան մարդու՝ եան ասղիշի բլի տակ. էն յոքի կէծակ կը քիսնայ սև եղան, մարդուն և աստղիշի բլին։

Ա-ղ-ա-ծ (ծիածան). — Ծիածանի տակէց անցնել կարողացողը եթէ տղայ է՝ աղջիկ, և եթէ աղջիկ է՝ տղայ կը դառնայ։ Ծիածան երևալու ժամանակ, փոքրերը վազվզելով կերգեն.

«Կանանչ կարմիր իմ արև,
Սև ու սպիտակ քրդու արև»։

Փ-ղ-ր-ի. — Փոքրիկ փոթորիկները կը կոչուին ասղանի գամի, որոնց բարձրանալու ժամանակ երեխայք մէջը կը մտնեն, որպէս զի ատանալի ժողոված դանակ, ուլունք և այլն վերցնեն։ Իսկ ծովային փոթորիկ կամ Ղ-ղ-ա-ը կը կոչուի յ-շ-ղ, որ ծարաւելու համար ծովերու վրայ կիջնէ ջուր խմելու։

Լեռներուն մասին եղած աւանդութիւններն ու զրոյցները

1. Ընդհանուր Հայաստանի և բոլոր Հայոց սրբազան սարը Մասիս է, որ չէր կարող ժողովրդի ուշադրութիւնից վրիպել. նորա վրայ հանգչած է ընդհանուր մարդկութեան երկրորդ ծնողը — Նոյեան Տապանը, որու տեսութեան ոչոք Ադամորդիներից չէ լարող երթալ։

«Թէ մարդ կրնայ ուր մամու արգանդ մտնայ մէկ լէ՝ էնպէս էլ կրնայ Մասիսու գլուխը բանձրնալ ու զՏապան տեսնել, մինակ ս. Յակոբ ցանկացաւ ելնել Մասիսը, որ մենչև յիրկուն կիտէր ի սարի կող, կը պարկէր քնէր, լուսուն մէկ լէ զինք ներքև կը տեսնէր, հարի Աստուած խղճաց վրէն, համբեց զուր հրեշտակ, կտոր մէ Տապանից տուեց, ս. Յակոբ յետ դարձաւ ուր (իւր) տեղ»։

Փոքր Մասիսը ժողովուրդը կանուանէ Սիս։

2. Սիսիան [1].—«Առաջ, շատ առաջ, Սիսինայ կող, շէն ու բէն, Դէվերու ձեռքի տակ, կռապաշտնոց մեծ քաղաք մէ (մի) կեղնի։ Քաղքի բնակիչներ շատ անաստուած ու ՀՈՒԼՄ (բռնաւոր, անգութ) կեղնին, Աստծու հրամանքով քաղաք տեղն ու տեղ կեղնի հող ու մոխիր. զսար լէ կանիծէ, տարին 12 ամիս ձիւն վրաւէն (վերևից, վրայից) չպակսի, ու ամառն էլ օր (որ) կիգայ, կառնէ որդնիլ»։

„Զատ մարդիկ փորձեր են օր չելնան Սիսինայ գլուխ, չեն կարողացած, հարի յիրկուն (երեկոյեան) բանձրցեր են, լուսուն զուրանք մէկ լէ սարի տակն են տեսած, չարայ (ճար) չկայ, չեն կարող բանձրնայ ի գլուխ“։

„Զէխաղուպայ փաշոյի Վարդանի պապ (հայր, ըստ բուլանըխցոց) շատ կորիճ ու սրտոտ մարդ կեղնի, էն մէկ օր կըսէ, իլահի (անպատճառ) ես պիտի երթամ չելնամ Սիսինայ գլուխ։ Կառնէ զուր (զիւր) ՀՈՒՆ ՈՒՆԷՆ (զէնքերը) ու կերթայ կը հասնի Սիսինայ տակ. ցրմնօր (ամէն օր) լուսմթին կիտայ ի սարի կող, կը բանձրնայ վերև, յիրկուն կը քնի յոնի (այնտեղ), լուսուն էլման զինք ներքև կը տեսնայ. շատ կը զարկէ զարկուի (աստ ու անդ դիմել, աշխատել) մուղարէ մէ (քարայր մի) ռաստ կիգայ, կը մտնայ ի մուղարէն, շատ ու քիչ կերթայ, Աստուած է խաբար (Աստուած գիտէ), մեծ, շէնուլթեն քաղաք

[1]) Սիսիան անուան ստոյգը Ցիսիան պէտք է լինի. ինչպէս որ ցոյց կուտան այդ լեռան ստորոտը գտնուող Ցիսիներ (Ցիսիաններ) գիւղերու անունները։ Ուրբաթցոց և Տանկաց լեզուներու ազդեցութեան տակ՝ ց—տառը ս—էի փոխուած է։

մէ կելնայ ի յառէջ (առաջ), կըսէ, կըսէր Մանուկ (ասում է, ասում էր Մանուկ, ըստ Ռուսահայոց), քաղաք կանուկ, տներ, քոշկ ու սարէք ցմէն սաղ սալամաթ, ինչոր յերէկ ուստէն (որմնադիրը) յեկնէր միջէն, դուքներ (դուքան, կրպակ, վաճառատուն) ցմէն լիք հըտ բերնին (լիք լցուն) թուռլու թուռլու (տեսակ տեսակ) նամաթներով (բարիքներով), դուքնչիք առջև ուրանց սաղ, ինչոր ես ու դու, Գացի մօտեցայ, կըսէ կըսէր Մանուկ, ըսի Աղբէր, քառասուն փարի (մէկ դահեկան օսմանեան) չամիչ տուր. ձէն չկայ. մօտեցայ ձեռք տուի յինք, եղաւ փոշի, ձեռք տուի չամիչ, եղաւ փոշի, ձեռք տուի ապրնքներ (ապրանք) եղան փոշի"։

„Հազար ափսոս, կըսէր ըսի իդա պիտուական քաղաք, իդա ՠՠ ՠՠ (ինչք, հարստութիւն), օր ես մահրում (զրկեալ) կելնամ երթամ ուրնցնէ (իրենցմէ), չարէն ինչ, դարդակ յելայ քաղքէն, կըսէ, մտայ նեղ ճամբէմէ, գացի ուրիշ մուղարէ մէ, աղբէր, կըսէ, կըսէր Մանուկ, աչբու ռաստ եկայ (զարմանալի բանի պատահեցայ), աւագի վրէն մարդու ոտաց ՠՠ (հետք) տեսայ, 8 ՠՠ ՠՠ, 4 ՠՠ ՠՠ, փըշում՝ լէ (մի քիչ էլ) յառէջ գացի, գետ մէ ռաստ էկաւ, էդ քաղքէն ես հար օ՛ր (հազիւ հազ) մէկ ճոկան էնք (էլի) առի ձեռքս, պրծաւ ձեռքէս յընկաւ ի գետ, փո՛ռ ու փոշման դարձայ եկայ տուն"։

Փաշոյ Մանուկի կիգայ ի տուն, շաբաթ մը չը քաշէ, կսկծու կը հիւանդնայ մեռնի։ Սորա (յետոյ) կիմնան օր Մանուկի ճոկանը (կեռ դլուխ փայտ) Մանձկերտու առաջ Մնջանայ առուն, ջաղացպան մէ կը գտնայ, մէջ չնին (լիք) ոսկի"։

3. Նՠՠ-Ռ լեռան մասին տես վերև, որու գագաթը շինուած է Նեբրովթայ բերդը (աշտարակը) և ուր լեզուաց խառնակութիւնը ու ազգաց բաժանումը տեղի ունեցած է, ըստ ժողովրդական աւանդութեան։

Պալեր ու ծիլ պալերը (ժայռ, միապաղաղ ժայռ) պաշտելու մասին ժողովրդի մէջ այժմ յարգանաց հետքեր մնացած են։ Բուլանըխցի հայ կինը իւր զարմացքը յայտնելու ժամանակ, «վա՛յ ամամ (անմամ ?) քարեր, ամամ պալեր եղնի» խօսքերով բացագանչութիւններ կարտայայտէ, ինչպէս որ միևնոյն պարագային «Յիսուս-Քրիստոս» անունը կուտայ։ Կը տեսնուին այսօր ևս բազմաթիւ տեղեր միապաղաղ բարձր ժայռեր, դէպի որոնք ժողովուրդը յարգանքով կը վերաբերուի, ուխտի կերթայ, երբ խաչանելով գծուած կամ մի սրբու անուան նուիրուած են։

„Ժամանակով մէկ ճամբու վրայ մեծ ծիլ պալ մէ կեղնի, ինչ-

խղար (ինչքան) օր մարդ կէնէր, օր յընցնէր յառջևով. պալ կը բո-
ռէր հեռուանց, կըսէր, „ցիգամ, ցիգամ (գամ) մարդ կը զարհուրէր,
կը փախնէր, չըր կրնի յընցնի յառջևով։

„Օրերուց օր մէ, մարդուն մէկ, շատ դարտլի կեղնի, կըսէ, կել-
նամ երթամ էդ ճամբով, ուր քէֆին է, իմալ կեղնի, թըղ եղնի, բըլ-
քէմէ (թերևս) շրջի վըր ընձի էդ պալ, մեռնեմ, պրծնամ ազատիմ։
Մարդն է, կէնի օր մօտենայ պալին, պալ կը բօռայ, ցիգամ, ցիգամ“։

„Տօ՛ արի, կըսէ մարդ, օր եկար իմալ պտի եղնի, ես լէ Ամ-
ծուց գէն կուգեմ, դաս վրէս, մեռնիմ, պրծնամ, ազատուիմ“։

„Ամծու հրամանքով, պալ կեղնի երկու տապակ, կը բացուի,
բէհսաբ (անհամար) ոսկի կիգայ թափի ցած, մարդ զոսկիք կը քօսէ
բերէ տուն, կը պրծնայ ամէն դարդ ու ցաւից“։

ՆԱԽԱՊԱՀԱՐՄՈՒՆՔ

---

1) Բոյսերու մասին.

ա. Լօշտակ.—«լօշտակ այնի (ճիշտ) մարդու նմանակ է, գլուխ,
ոտք, ձեռք ունի. ըսինք (ասենք թէ) օր ուզենան լօշտակ փորին
հանեն, պէք է թել մէ կապին վըր քօքին (արմատ), գթելն էցկեն
(անցկացնել) անօթի շան մէ վիզ, ուրանք փախնեն մէկ դեն (կողմ
ու հեռուանց շան հացի մէ կտոր ցուցուն. հանդէ (աւասիկ) շունն
կը ծորտկայ (կապած տեղից յանկարծ յարձակուել) գլօշտակ ուր քո-
քէն կը պրծու, լէ (այլ) մարդու հանդին (հանդոյն) ձէն կետայ, շուն
գէն ձէն կը լսէ տեղն ու տեղ կը փետնայ (փայտանալ, սատակել)
ուրանք կերթան կառնեն գքօք բերեն»։

բ. Նորգենի (կեչու մի տեսակը).—սորա փայտից եթէ մէկը
միշտ ձեռքն ունենայ՝ չար ոչ չքանէր երբէք։

«Ես Ստամբօլն էնք, կըսէր խլաթցի հայ մէ, նորգենի փէտն
ի ձեռքս՝ մէյդան կը գվունէնք (պտտել), հաղմ՝ լէ տեսայ մարդ մէ
ընձի ռաստ եկաւ (հանդիպել), կանչեց գիսի ուր ծօտ՝ ըսեց՝

«Էդ ինչ փէտ է»։

—Նորգենի։

«Յուստէն ես բերի»։

—Ըսի՝ մեր երկրէն, այնի մեր սարէնիմ քաղի։

Ըսեց՝ „դու գինաս զըդրա տեղ»։

—Ըսի՝ գինամ։

Էդ մարդ կանչեց գիսի ուր տուն, բարիշաւ իմ հետ. գիմ տա-
ղուայ դատք տուեց՝ յեկանք յընկանք ճամբայ. եկանք Խլաթ, եկանք
մեր գեղ (Ջրհոր, Գրգուռ լեռան տակ)։ Ոլոր օր մութ ու լուս եկանք

ի սար. զնորգենու ծառի տեղ ցուցուցի ուրեն, տուեց ընձի երկու մարդաբոյ փորել, փորեցի փորեցի՝ ես տեսայ կարմիր—շէկ օձ մէ՝ (հա՝ քրնց լծկտոր մէ—լծան չափ) դուս եկաւ կոտուուկ էր նորգենու բոլոր (փաթաթուած), էլ չգեցայ, էդ մարդ —մարդ էր, թղթբաց էր ինչ էր, յիջաւ ի գուբ, զօձ բռնեց դրեց ի տոպրակ, քանի մէ ոսկի լէ տուեց՝ ու գնաց հրա ուր համբուն. ըշտէ (ահա) հրմլա (այսպէս) հոնար ունի նորգենին»։

(Պատմողը Բուլանըլցի է՝ Խլաթցիներէն առնելով)։

Սրբավայրերու մօտ գտնուած ծառ ու ծառաստանը՝ սրբոց կը պատկանին, այդ փայտերից մի ճիւղ անգամ կտրող կամ տանողը, կամ կը դիպչի կամ ձախորդութեան կը հանդիպի։ Այդ ծառերուն այցելողները իրենց շորերից մէկ մէկ կտոր կը փաթաթեն ծառերու ոստերուն, որպէսզի ամէն յա— ո— չա— (հիւանդութիւնք) այն տեղ մնան։

Երեք սրբազան և անձեռնմխելի ծառաստան կամ անտառակներ կը գտնուին Բուլանըլս գաւառը. մէկը Մէջեթլու գիւղի ս. Յովհաննէսի ծառաստանը, միւսն՝ Նազուկայ լճի հիւսիսային ափի վրայ, Գրսայ ս. Յովհաննէսի (աւերակ մի վանք) ծառերը, և երրորդը Ներքին Բուլանըլսայ Կոլոյ գիւղի առաջ գտնուած Գրբենէր բլրակի նորգենիներու անտառակը։

Մի հին օրեայ նշանաւոր ծառ կայ Լաթար գիւղի մօտը. ուր ցաւագար մարդիկ ուխտի կերթան, և շորի կտորներ կը թողնեն այնտեղ, մօտիկ բնակիչները կը հաստատեն, որ գիշերով լոյս նիջնէ այդ ծառի վրայ։

գ. Մարդի փայտով եթէ մարդու կամ անասունի գարկեն, ուրեն նը մնէն։

դ. Կորոյ նոր (Adonis aeistivalis) ծաղիկը եթէ քաղեն, ամանները կը կոտրուին, և այդ պատճառով էլ ծաղիկը նորոյ նոր անունը ստացեր է։

ե. Երեխայոց կարգիլեն երբ նոյնչ թերթիկները բերանին դրած կը փչեն, որովհետև հոգիրու պորինները (ծիծ) կուռին։

զ. Հաց.—Հոյը ուրբ է, երբ գետին ընկնայ, պէտք է համբուրելով վերցնել և. ուտել։

Թխած հացը եթէ ուռի և պորուի, նշան է որ տարուայ բերքը առատ կը լինի։

Երեխայք եթէ հացը դնեն գլխու վրայ և ման գան, կը կարծուի, որ հոյը (ցորենը) կը թանկէ։

Եփած հացը եթէ յոյն պոյ, հոյը նոնչոյ կասեն և համբաւ ստանալու նշան կը համարեն։

Դրկեցի տնէն ալիր փոխ տարած ժամանակ, մաղի մէջ դիպուած

ալիւրի սուր ծայրը կը կտրեն, որպէս զի ալիւր տուողի նոր հարը չ-
ղուանի չլինի։

Հաց ուտելու ժամանակ եթէ մէկը ագռաւ (ձգռաւ) կասեն,
բան է գողցեր ներեր։

Եթէ մէկի կոկորդի մէջ պատառ ասուլի (արգելուել) կասեն.
սիրելին յիշեց զինք։

Խմոր պատրաստելու ժամանակ եթէ մի կտոր թռնէ միկողմ.
նշան է որ հիւր կուգայ։

Է. Կերակուրի մասին.

ա. Ծննդեան տօնի հարիսան (Մարիամայ ճաշը), եթէ երեխայի
մի որևէ անդամի վրայ քսեն և մայրը լիէ, մազ չբուսիր ամենևին։

բ. Պառաւները թթու բռնած ժամանակ, դիտմամբ տանեցոց
հետ կռիւ և աղմուկ կը սարքեն որ չ-ը ընեն։ Երբ թթուն շատ ղեր
(թունդ) լինի, կասեն բռնողը ջգոնոյ (աղմկարար) է։

գ. Որպէսզի կերակուրը չխանձրահամի (այրելահոտ), եփելուց յե-
տոյ գդալով կերակուր կը դնեն պուտուկի տակ, ասելով. «Թէ խան-
ձրահամիս, եօթ պռանիկի մեղքն ի վիզդ եղնի»։

դ. Եթէ մէկը ուշանայ և ճաշին չհասնի, կասեն, ղուանը տեղ չընի-
ռեր. շուտ հասնողն ևս կը սիրուի իւր զոքանչից։

(Օղի խմելու ժամանակ վերջին կթղան որու բաժին որ ընկնայ,
կասեն, զոքանջդ կը մեռնի)։

ե. Երբ մի տեղ ճաշեն, ագահ մարդոց թևերը կը ճտան (ձայն
հանել) և իմանալով կը փութան մասնակցելու կերակուր ուտելուն։

զ. Ադապ տղայոց կը պատուիրեն որ կերակուրի ամանը ագա-
հաբար չքրթեն, որպէսզի հարսանիքի օրը չէ՞ ռ-ը չլինի։

3) Ձրի մասին.

ա. Ձրի մէջ մկելը մեղք կը համարուի։

բ. Անձրևելու ժամանակ, «երկնքից դեղքեր կը թափի»։

գ. Երբ երկար ատեն անձրև չգայ, ինչ-ի՞ չէ՞ զանգի (երբեմն
ևս աւելի և ցախաւելի) վրայ ջուր կածեն։

դ. «Ձիւն ամբրուկ (ամբարած է) երկինք, ձմեռ օր կեղնի, հրեշ-
տակներ ոտներով կը թափեն ցած»։

ե. Կարկուտն ևս կոլորացնելով կը թափեն ցած։

զ. Ծով.—Մը էծ կորաւ յանկսկծի (յանկասկածի), սար զարկուայ,
ձոր զարկուայ էծ չգտայ, վինէ օր հարցուցի, իծուն սալը տուող մէ չե-
դաւ, չարէս (ճարս) կորաւ, յելայ գացի ծովու ափ (Վանայ ծովը կը
լինի). Ծով, ըսի, եկեր իմ քու մօտ դատաստանի, երկինք ու գետինք
մը ընձի ու մը քրգի (իմ ու քու մէջ) դատաւոր, իմ էծ կորեր է,
չօրին չբս իտայ։ Իրեք հաղ թաքրրեցի (կրկնել) ու դառձայ տուն,

ոլոր օր գացի ծովու մօտ, ծով զիմ էծ տուեր էր ուր (իւր)՝ ափը, լէ (այլ) խեղդուկ»։

Պատմողը Բգնունեաց գաւառի Փրխուս գիւղացի Աւոյ անունով հայը կը լինի)։

«Միտքդ չիգայ. կասեն Կոփ գիւղացիք մէկմէկու, էն տարին օր Թորոյի մատակ ծնաւ. գիլ սպիտակ ձագմէ բերեց, էն յուստ էր,— մատակ կերթայ մըջ ծովուն, (Խաչլուայ) հրեղէն գմէջ կելնայ ի մատակ (մերձենալ), ձագ լէ ընդրհէ կեղնի»։

Հռչակաւոր Քռռ-օղլու Խաչէն՝ ինչպէս ժողովուրդը կաւանդէ, ծովային հրեղէն ձիու մի սերունդ է։

4) Հողի մասին.

Կլիմայի՝ մարդոց և կենդանեաց... վրայ արած ազդեցութիւնը՝ ժողովուրդը հող — ջրի կուտայ։

ա. Երբ տարբեր մարդոց պատկանեալ երկու գոմէշները կռիւ անեն, իւր գոմէշի յաղթուելը չուզողը՝ ծածուկ բուռ մի հող կը վերցնէ և կը ցանէ մլուսի վրայ, որպէսզի նա փախչի։ Բ. Երբ մէկի մասին երկու մարդու մէջ ծածուկ խօսակցութիւն լինի, մէկզմէկ կզգուշացնեն՝ ասելով. «Զգոյշ կաց թէ գէրէ էլ խաբար կը տանէ»։

5) Կենդանիներու մասին.

ա. Սառուցէն մորթուց եթէ մէկը կտոր մի կապէ իւր անութի տակը՝ բախտաւոր կը լինի։

բ. Էգ գայլի միզուկը (ամօթոյքը) եթէ մէկը վրան կարէ՝ բախտաւոր կը լինի և ամէն գործի մէջ յաջողութիւն կունենայ։

գ. Գայլի ճանը (վէգ) տանտիկինները կը կախեն իրենց գօտիներից, որպէսզի տան իւղին, ձմին և թան ու թացանին չար աչք չբանի։

դ. Ամպամած խաւար գիշերը, գայլը սև հող արտի մէջ սև այծի ուլը կարող է տեսնել։

ե. Սա էլը այնքան արդար է, որ վարդավառի ջրի մէջ ոչոյ կը տեսնէ։

զ. Երկրագունդը ոչ եղն մի կոտոշներու վրայ է հաստատուած, երբ եզը քերուփի (քերել) ծուռ կեղնի։

է. Ձիաւորը ընկնալու ժամանակ՝ ձին կը բարեմաղթէ «եօրդան (անկողին) դոշակ» իսկ էշը՝ քահ — ռիսկ (մեռնելը կը խնդրէ)։

ը. Էծերու մազերու մէջ ոչոսի հող կայ, նորա համար արագաշարժ են։

թ. Աղօթրան բացուելու ժամանակ՝ ոչխարները կը դառնան «դէմ աղօթրան» աղօթելու համար։

ժ. «Աշխարքի բոլոր ծով է, մէջ կայ մեծ ձուկ մէ, փաթերէ զաշ-

խարք, թեզ մէ տեղ է մանցի՝ օր հասնի իրար, եբոր հասան, աշխարքի վերջ լէ կիգայ»։

Ժա. Կատուն եթէ խոտ ուտէ՝ հաց կը թանկէ։

Ժբ. Սև կատուն եթէ երկու մարդու մէջով անցնի՝ նոցա բախտը կը կապուի։

Ժգ. Կատուն եթէ իւր քիթը քորէ՝ հիւր կուգայ։

Ժդ. Կատուն Քրիստոսի դաստմալն է (թաշկինակ), «հեղ մէ սուտ մարգարէ մէ կը փռնտկայ Քրիստոսի յառէջ, ջուխտ մէ մուկ կը պատի (ընկնալ) պնչներուց, Քրիստոս լէ գուր դաստմալ կը թալէ մկներու հետև՝ կըսէ. «օրհնած, բռնէ գիդա անիծած», դաստմալ կեղնի ֆոռ կը բռնէ գմկներ. էդ յապով ոն (ով) որ կատու մէ ըսպանէ, հարի եօթ պատարագ չետայ էն էլ, ուր հոգուն քաւութեն ու թողութեն չեղնի»։

Սողուններ.

ա. Գորգին ատամ ցոյց չեն տար, որպէսզի չհամրէ ատամները, եթէ համրեց՝ ակռաները կը թափուին։

բ. Խաչաֆառ (խեչափառ) երբ մէկը կծեց, 7 դհօլ 7 գուռնայ, 7 օր՝ 7 գիշեր զարկին չետոյ կը պրծնայ։

գ. Օձուն աղու, (թոյն) չկայ, նորան աղու տուողը մոռնի է։

դ. Օձու շապիկ հետն ունեցողը՝ օձատար չլինի. օձու շապիկը (մորթին) գտակի տակ կը պահեն՝ որ ծամերը երկարին։

«Օձու խապինին (ժողով) օր կը մօտենաս, հանդէ շաբաթ (արքայիկ օձ, օձերու թագաւոր), մըջ ուրանց նստուկէ, գլխու վրէն բուչամ (ծամ) ու երկու փիլան (փայլուն) կոտոշներ ունի, հան՝ գքու թումբան (փոխան) ու շուտմէ թալ վրէն, էն սհաթին շատմարան զուր կոտշներ կը թողէ, օր վերցուս բերիս՝ հանդէ դեղէ ըզդի ու ամէն ցաւ ու չօռի»։

Այդ կոտոշները կը կոչուին ցու հլու (ուլունք). և երբ մի մարդ գուշակութիւն մի անէ և կատարուի, կասեն. ցու հլու նոր գու էլու։

Միջատներ.

ա) Ճիտէ (խսունջ) պատեանը մեծ քանակութեամբ ժողովուրդի մէջ կը գտնուի, որոնք կը կարեն երեխայոց գլխարկի և հանդերձներու վրայ որ չուչուն։ Ճիտերքի մի տեսակն է ծիտ կոչուածը, որ դարձեալ երեխայոց վրայ կը կապեն չծմրիկ համար (ծմրիկ, ճմրել, սիրտը մէջքը կոտրիլ)։

բ. Եթէ տան տախտի մէջ (յատակ) մրջնանոց դուրս գան, հացի առատութեան նշան կը համարուի։

գ. Մրջեղ սպանած ժամանակ մէկ գմէկ օգնութեան կը կանչեն «որընէ լը խրշտ, որընէ լը պրշտ.

Նիւ մէրէուան մէրքի մա կՈշտ».

(Սուլիններով եկէք օգնութիւն, նոցա (մենք, մարդիկս) կէս մարդը մեկնից մի մարդ սպանեց)։

Թ ռ չ ո ւ Ն Ն ե ր.

ա. Պուսու (յոպոպ).—«Կնկայ մէ շատ չար տղէ մէ կեղնի, ինչ կէնէ չէնէ՝ տղէն չթողէ օր զուր (իւր) գլուխ լուայ, էն մէկ հեղ զօրով կը նստցու օր զգլուխ լուայ ու սանտրէ, էլման կիլայ կը վրժ-վժայ, զսանտր կը զարկէ զգլուխ կանիծէ՝ կըսէ եղնիս պ-պ- սարերն ոլորտիս. տղէն կեղնի պ-պ- թռնայ երթայ»։

բ. Ճնճ-ղի ոստոստելուն ժողովուրդը այսպէս բացատրութիւն կուտայ։ Նոյ կենդանիները Տապանի մէջ առած ժամանակ, բոլորի ոտքերը կապած էր. ջրհեղեղից յետոյ երբ մէկ մէկ արձակելով դուրս կը թողէր՝ ճնճուղը չհամբերելով կապած ոտքերով դուրս թռաւ և մնաց այնպէս միշտ ոստոստող։

գ. Ափ-ռ- ևս նորա համար գեղեցիկ չէ կարող քայլել, որ ուկեցեր է ինհ-ռ- (սիրամարգ) պէս քայլել, բայց սովորելու ատեն իւր նախկին քայլքն էլ է մոռացեր, և սինամհաւքին էլ չէ կարող նմանուել։

դ. Աղ-ն նորա համար չէ կարող երգել միւս թռչնոց նման, որ երբ Նոյ զրկեց ագռաւի յետևից շիւղ բերելու, ագռաւը նախանձելով խաբէութեամբ նորա լեզուի ծայրը կը կտրէ և կը մնայ այնպէս համր։

ե. Լ-ն (արագիլ)։—Լակլակ ամէն տարի իւր ձագերից մէկը կը խեղդէ, Աստծուն հաճ անելու համար։ «Լակլակները ուրանց երկիր մարդ են, գալու վախտ գեամէ կայ, կիգան էն գետ կը լողկնան կը հագնին հաւքու թեպուր՝ կիգան մեր երկիր։ Երթալու վախտ լէ, կը քամեն Դիարբէքիրու երկիր բանձր սարմէ, հաճ կէնին Աստծուն, կը շողկնան կը դառնան եղնին մարդ՝ հապէմ (ապա) կերթան ուրանց աշխարք»։

«Մեր քիրվա (քաւոր, բարեկամ) Խասօն (քիւրդ) կերդուեր, զհոգին կը թալէր, կըսէր, ես թազայ կարդուկ ենք. օրմէ իմ -ծը կելնայ տան դուռ կը լուացուի, չապռչներ (ապարանջան) կը մոռնայ յոնի, կիգայ տուն. հրտ յեռին (իսկոյն) կը դառնայ աչքէ օր՝ ապռջան չը գտնայ։ Խասօն կըսէր, ը-նկայ մըջ հաճ (հոգս, մտատանջութիւն), շատ մտածեցի ճամբէ մէ չկրցայ օր գտնէնք. ելայ զիմ պատրաստութեն տեսայ, գացի խարիպութեն, գացինք գացինք, հասանք ծովմէ, նստանք գամին (նաւ), շատ ու քիչ գացինք, քամին (ալեկոծութիւն) ելաւ գմեր գամին գարկեց քարեր կոտրաւ, կոտր մէ տախտակ չընկաւ ձեռքսի, նստայ վրէն, Աստծու օգորմութիւն էր.

քշեց հանեց գիսի կղզի մէ, ելայ ի ցամաք, գացի գացի, լուծք մէ ռաստ եկաւ ընձի, ըսի երթամ տեսնամ ինչ երկիր իմ չընկուկ. մոտեցայ լծքւորին, ըսի.

«Բարի յաջողում».

—Վա՜յ Աստծու բարին, սար սարան ու սար ճաւան (գլխուս և աչքերուս վրայ). Խասոյ, դու յոգա՜...։

«Տօ եա, ջանըմ, դու որնէս. ես զքրզի չըմ ճանչնայ, դու գիմ անուն կիտաս, ես զքրզի իսկի՞ չըմ տեսերի»։

—Զի՞ ես ձեր դռան ծառի վրաւու ՝ն՝ն՝ ի՞մ, գիսի չըս ճանչնայ, թէ չըս աւդնայ լէ, հանդէ քու կնկայ ապուչան օր կորերէ, դրեր եմ իմ բնի տակ»։ Ես չաւդցայ։

«Ջանըմ, ըսի հանդէ դու մարդիս, դու իմալ կեղնիս լակլակ»։

—Կանի՞ ըսեց, կը տեսնաս։ Ժամանակ մէ մանցի յոգի էդ մարդու տուն, վադէն օր թմաւ (ժամանակը լրացաւ), էդ երկիր ինչխ դար օր մարդ կէր, քսման, գիս լէ առան ուրանց հետ, եկանք գետի մէ մօտ լոգկցանք, Աստծու հրամանով մէկ մէկ հաւքու փոսթ (մորթի) իջաւ վըր մըզի, ես լէ ադոնց հետ եղանք ՝ն՝ն։ Կը թռանք ու հայ եաւաշ եաւաշ (կամաց կամաց) կը մօտենանք մեր երկրին, կը ճանչնամ օր իդա մեր սարնէ, ինա գիլան ձորնէ, էնա գիլան գեղնէ։

«Ըսի, ադբրդան, Աստծու սերուն եղնի, ես մանցի լակլակ, իմալ կեղնի»։

Լակլակներ քսման մէկ տեղ, ուրանց լեզուով զրուցեցին. բերին գիսի թաղադան լոգկցուցին, Աստուծու հրամանով փոստ վրէմէս յեւլաւ, ես եղայ էլման մարդ։ Եկայ եկայ, մեր տուն, իմ կնիկ ու ճիժ թափան դուս, չընձան վզովս ուրախցան։ Ըսի, ապուչներ գտեր ե՞ք, ըսին, չէ. ոն գինայ ոն է տարի։ Ըսի, ինչ կիտաք չեղնամ բերիմ,— ելայ ծառի գլխուց, լակլկու բնէ մեջէն հանի բերի գապուչներ։

Ջանըմ, ըսին, էդի ինչ բան է, էդ իմալ գեցար.

Ըսի, ոլահ (Աստուած վկայ) ըշտէ հա՜լ ու քէֆիլաթ իդա հըմլա, իմալ օր ես ձրզի խըսաէրի (պատմեցի)։ (Պատմողն է Կոփեցի Սարգիսեան Անտոն անուն անձը, որ լսեր է իւր եղբայր Սերովբիչ և սա քիրվա Խասոյի մօտիկ ազգականներից)։

Գարուն երբ լակլակները կը վերադառնան, քար կը ձգեն գէպի վեր, որ ՝ն՝ն առատ լինի այն տարին։

գ. ՝ն՝ն եթէ աքլորի նման կանչէ գժբախտութիւն պատահելու նշան կը համարուի և խսկոյն կը մորթեն։

է. Անձեղը եթէ տան մի գուռը նստի և ձայներ հանէ, համբաւ ստանալու նշան կը համարեն։

———

Մարդու մասին ունեցած կարծիքը և նախապաշարմունքը.

ա. Երկայն մարդու խելքը իւր չօքերն է (ծնկները)?

բ. Կարճահասակները, [illegible] (հնարագէտ, խորագէտ) կը լինին։

գ. Լայն բերան ունեցողը, ագահ։

դ. Սրտի վրայ խալ ունեցողը, բաղդաւոր կը համարուի, եթէ սիրտը շատ մագոտ լինի՝ մարդը գթասիրտ կեղնի, մազ չունեցողը, [illegible]։

ե. Փոսաձև ծոծրակ ունեցողը՝ [illegible] (խեռ, նախանձոտ)։

---

6. Դեղերու մասին. (սնոտի ճարեր, նախապաշարմունք).

ա. [illegible].—Երբ մէկի վրայ [illegible] կոչուած ծներ լինին, սոցա թուով գարի առնելով, առաջին հացը թունդրի կողը զարկած ժամանակ, կը ձգէ թունդիրը և շուտով կը փախչի դուրս, որպէս զի դարեհատիկներու այրուելու ձայնը չլսէ, ու կը կանգնի տանիքի ծայրը.—գորտնուկները կը փչանան։

բ. [illegible] կամ [illegible] (ջղային և խորարմատ գորտնուկ).—խնձոր մի լուսնի առաջին եղջիւրին (նոր) ցոյց կուտան և չորս կտոր անելով հողի տակ կը թաղեն, խնձորը փտելուն պէս՝ կոծոծներն ևս կը փչանան։

գ. [illegible].—մի տեսակ թեթև խոց, որ խոր արմատ չունի, կանուանուի [illegible], սա արծարծող մի վերք է, որ շուտով կը տարածուի մէկ տեղից միւս տեղը, և այդ պատճառով կոչուած է [illegible], իբր թռչող, տարածուող։ Տուաձուրիկ (երկնատուր, նուիրական, տրուած) շնորհք ունեցող պառաւը կառնէ երկու հողի կոշտեր, և թրքելով վերքերու վրայ. հող-կոշտերը կայծհանի նման իրարու կը գարկէ հողը թափելու համար խոցերու վրայ. 3—4 անգամ կրկնելով, վերքերը կառողջացնէ։

Նաև լուսնի նորը առաջին անգամ տեսնելու ժամանակ, պատի մօտ կանգնած, իբրև թէ լուսնից ծածուկ, ձեռքերը յետև տանելով պատից հող կը գողանան և կը ցանեն թրթռուկի խոցերու վրայ։

դ. Երեթիկ.— դեղնագոյն, աղտի նման վերք մի է, որ աւելի երեսի, թևերու և ոտաց թութակներու վրայ դուրս կուգայ. սա ևս արծարծող է և լուսնի նոր ու փուլի հետ կերևայ ու կը կորսուի։

Տուաձուրիկ շնորհք ունեցողը հիւանդի կշտին կանգնած, արագ կը կրկնէ հետևեալ տողերը.

«Երեթիկ, երեթիկ, բարի լուս քի,
Արտ մէ կորեկ իմ ցանի,

Ձկլոր-ձկլոր է դարձի [1]),
Իմ Տէր վրաւովն է յընցի.
Զոր իս, ու չորանաս»։

Փու, փու, փու, (երեք անգամ կը թքէ)։

Նաև հին լուսնի նոր ցոյց կուտան և օրհնել տալով կը քսեն երեթիկին։

ե. Մոլոքոր.—Սրտաժաժ կերակուր ուտելուց, մարմնոյ վրայ խոշոր դրքով ուռոյցքներ դուրս կուգան, որ սաստիկ քոր կը պատճառեն.—Մոլոքոր ունեցողը, պէտք է երեք կին ունեցողի (իբրև պոռնկի) տան տանիքի վրայ լողանայ, հողերու մէջ թաւալի և հաց թխած միջոցին նորա տնից մի հաց փախցնէ։

զ. Խաթունիկ.—Աչքի կոտերու վրայ դուրս տուած պզուկները (շիթ) կը կոչուին խաթունիկ։

Խաթունիկ ունեցողը, կասեն գիւղացիք, (եթէ տղամարդ է) ոչ (տանուտէր գիւղի) կը լինի։ Այս շիթերը վերջացնելու համար, ցաւոտ աչքը թողնելով, ողջ աչքը ոչ ոչ կը քաշեն, որպէս զի խաթունիկը որի նոյնիս պատրաստ։

է. Ձանձողիկ.—Ծանր բոկուռոյցը կամ բոկացաւը կը կոչուի յոնյուղի (թեթեւն ևս, կանուանուի նոնոյ)։ Երկոքին բերող կին մի ձանձողիկով հիւանդացածի գլխու վերև կանգնած, իւր շորին փէշը կը ձգէ նորա վիզը և կը հարցնէ.

Կին

«Ձանձողիկ, յէր (ինչու) իս եղի.

Հիւանդը

—Երկուորիկ յէր իս բէրի.

Կին

«Ես բերի, ու պրծայ.

Հիւանդ

—Ես լէ եղայ, ու պրծայ։

(Երեք անգամ պէտք է հարցնել և պատասխանել)։

ը. Նա քո (քրդ.=շնչարգելութիւն, կոդացաւ).—Տուաձուրիկ շնորհք ունեցող վարպետը մի ջոնքոք (պղնձէ մեծ պնակ) դնել կուտայ հիւանդի կոդքի վրայ և նետ մի առնելով ձեռքը՝ հիւանդին դէմ ու դէմ կանգնած, կտիպլէ նորան հետևեալ քրդերէն հարցումներն ուղղել իրեն.

Հիւանդ

«Փը քէ դարէ տէյ». «Յոուստէն կուգաս».

---

[1]) Զատ խոշոր և անդուր աչքերը կը կոչուին։ ձկլոր-ձկլոր, (տես մարդակազմ ան անունները։

Վարպետը
—Ժը ճիաէ Տօլէ —Տօլայ? սարէն.
Հիւանդ
«Չի դը գեատի». «ինչ կը փնտուես».
Վարպետը
—Ջունա Նաքսէ —Նաքսի տեղը.
Հիւանդ
«Պէդը կարի» «կարողես յաղթել».
Վարպետը

—Բ'իզնա խուդէ։—Ասոնց հրամանով։ Վերջին պատասխանը տալով, իսկոյն նետը կը թրըխկացնէ լանգառու վրայ։ Մի-քանիսը միայն դանակ մի կառնեն և սովորական հարց ու պատասխանից յետոյ կը քսեն հիւանդի կողքին։

Նաքս զարկելու շնորքը Ջրէն կամ Ֆ-ԸՆ ս. Գէորգայ [1]) տուրքը կը համարուի։ Կոփ գիւղը մի տուն յայտնի է Նաքս զարկելու արհեստով, ի փոխարէն այդ տուաձուրիկ շնորհքի՝ այդ տան անդրանիկ աղջիկները նուիրուած են ս. Գէորգին և երբ կամուսնացնեն առնուած Խաչը (բաշլըղ), իբրև աղջկանց գինը, ամբողջովին կը նուիրեն Փութկի ս. Գէորգայ վանքին։

Թ. Վախ կտրել.—Տուաձուրիկ շնորհք ունեցողը վախեցողի գօտին առնելով մէկ ծայրը ինքը կը բռնէ և միւսն հիւանդը, իւր արմունկը գօտու ծայրի վրայ (իւր կողմից) դնելով կանգունի նման կը չափէ տանելով դէպի հիւանդի կողմը, երեք անգամ պիտի չափէ և ամէն մէկ չափելուն՝ ձեռքի թաթը կը շրջէ այս ու այն կողմը, վերջին անգամ երբ ձեռքը չափը անցուց, այսինքն եթէ առաջին անգամ չափած էր մէկ արշին, վերջը ¹/₄ արշին ևս անցաւ, (իբր թէ ձեռքը կերկարի, երբ մարդը իսկապէս վախեցած է) աղօթք մի կը պտպտայ ապաւինելով շնորհատուր սուրբին՝ որ վախը կորչի։

Ժ. Խոլինջ.—(Coligue). Խոլինջի խեթը լաւացնելու շնորհքն կունենան այն ամէն անձինք, երբ տեսնեն որ շուն շան միս կուտէ՝ և այսպէս կ'ասեն. «ես տեսայ շուն շան միս կերաւ, իմ ձեռք խոլնջի

---

[1]) Զիրինի կամ փութկի ս. Գէորգայ վանքը կը գտնուի Մոկաց Նահանգի մէջ, ուր կը պահուի ամէն ժամանակ մի ոչխար, որու խորհրդով ճանապարհ կելնեն ուխտաւորները, այսինքն չկանչած՝ ոչ ոք չհամարձակուիր վանքից դուրս ելնել։ Այդ վանքի անունով շրջող անձանց մօտ կը գտնուին կոնդակներ, ուր Ֆ-ԸՆ անուան այսպէս բացատրութիւն տրուած է.—Քրդեր ս. Գէորգայ մասունքը տանելով երկար ժամանակ պ-ՊԻ (պուտուկ, պտուկ, ման) մէջ կը պահեն և չկարողանալով կոչել պ-ՊԻ՝ ասեր են Ֆ-ԸՆ? (Տես Հին հաւատք Հայոց Ելիշան եր. 49)։

դեղ» (երեք անգամ), այնուհետև եթէ ասողը իւր ձեռքը խողնջի խեթ ունեցողի փորու կամ քամակի վրայ քսէ՝ ցաւը կանցնի։

Ս. Սարգսի պահոց շաբթուայ շաբաթ օրը երբ մէկը պաս պահէ, այլևս խոլինջ չեղնի։ Խոլնջի խեթը կանցնի նաև, երբ անգրանիկ մէկը հիւանդի վրայից երեք անգամ այս ու այն կողմը շէնքայ և ասէ, «քու փոր թորկէ, (թողնիլ) աղւսուն բռնէ, (երեք անգամ)։

Ձիերու խոլինջը վերջացնելու համար կը հեծնեն և եռ֊ֆռ֊ եկեղեցու բոլորը կը պտտեցնեն։

Ժա. Ջարդքի (քրդ. դեղնութիւն. jaunisse).—Տուաձուրիկ շընորհք ունեցողը հիւանդի յետևը կանգնած բոլորովին ծածուկ և յանկարծակի երեք անգամ մէկ մէկ ձէր (ապտակ) կը զարկէ հիւանդի վզին կամ երեսին։

Ժբ. Դողդ֊ ղդ (տենդ, ջերմ). դողցուորը առողջանալու համար պէտք է 1) սպանուածի գերեզմանի վրայ լողանայ. 2) ջրաղացի ղդ֊ (ներքնատունը, ուր ջուր կը վազէ) մտնէ և լողանայ, 3) խանադան (հին օջախ, մեծանուն) մի տնից, երբ հաց կը թխեն, ֊֊ջ֊ հոգը փախցնէ և ուտէ. 4) Ղղթբացները թել մի 7 տեղով կը հանդուցեն, իւրաքանչիւր հանգոյցի վրայ աղօթք ասելով և կուտան դողցուորին, որ ձեռքը և վիզը կապէ։

Ժգ. Հաւկուրութիւն.—Կիրակմտին բան ու գործ անողը, պառաւներու ասելով, կը լինի հ֊ն֊ր։ Պէտք է, ս. Յարութեան խթման երեկոյին մի հաւ մորթել, միխակի (խարանքիլ, giroflée) ոստիկները ցցել հաւու լերդ ու թոքի մէջ, թոքերը եփելով ուտել, և ջուրը քաշել այքը։

Ժդ. Օդ։ Հարբուխը կը կոչուի օդ։ Երբ էշ զենուի (որ անսովոր բան է) օդ ու հազ կը տարածուի։ Նաև՝ երբ ֊ոչ֊ ն֊ռ֊ հետ պսակուի՝ օդ֊ ցաւ կը տարածուի։ Երբ մէկը միւսին յայտնէ՝ թէ ես օդ ունիմ, միւսն իսկոյն կը պատասխանէ. «ջաղցէն կիգամ գլուխս ալրոտ» կամ «մըջ ընձի ու մըջ քըզի (ընդ իմ և ընդ քո) իշու...»։

Օդացաւի հիւանդը եթէ կծէ մէկի գլուխը՝ ցաւը կանցնի անոր։

Ժե. Ջոպա (քրդ. Հալ (Ալք?) typhus).

«Քա՛ քաւոր քուր (կնքաւորի քոյր), գիշերսի յերզով տեսայ, քսմ մէջ (քաւթառ) պառաւ՝ գուրանց բրպուէճ (կիսախուիլ) ճժեր էցկած էն (էին) յառջև ուրանց՝ ելան Պետոյ տնէն, զօրով եկան մտան մըր (մեր) տուն. էդ ինչ պտի եղնի»։

—Քա՛ վո՛ւյ, յետ ու հեռուն եղնի, քա՛ չէ՞ Պետոյ տուն ղդ֊ կայ, իսկի մէկ վըր ուր յոտաց սաղ կանուկ կա՛յ, յրմէն ֊ղ֊ (ձկներու նման թարփ ընկած) պատուկ են գետին։

«Քա՛ պա (ապա) ինմալ կեղնի։

—Թվանք մ՝ երկու դարտկէք (պարպել) մըջ տան, բալքի (թերևս) փախնին երթան։ Էն տարին օր մըր տուն շոպա չընկաւ, (երթալ եղնի՝ գալ չեղնի), չըմէնքս հիւնդցանք, քառասուն օր մարդ չելաւ վըր յոտաց, հեղմէ սաղցանք, էլման կրկին տուեց, (կրկնել, երկրորդել)։

«Քա՛ յօրին»։

—Քա՛ մըր տանտկին (տանտիկինը) գհիւանդներու շորերն օր լուաց, ասոր շոպին դուշման է (թշնամի է), շոպէն լէ ինատ էրեց (յամառել)՝ գցաւ կրկնեց, եաման, եաման չեղնի չեղնի իդա (այս) օրեր սապոն բանցուք։

«Քա՛, կըսին գուրանք ցուցք (ցույց) կիտան»։

—Քա՛ պա, օր մէ գուս ելայ, ես տեսայ մըր տանքի յետև քօմ մէ ճիժ կանուկ էն (էին) յօնի (անդ), կը ասոր-շոպէն (տոթալ, եռալ, զեռալ, որդունրի նման վխտալ) յաւալ (առաջ) պզտկցան, եղան ամէկ (ամէն մէկ) քընց կորեկի մէ հատ, դառձան յերկնցան, յերկնցան, կորան իմ աչքերուց։

—Վա՛յ, Յիսուս ու Քրիստոս, (խաչակնքելով), դու յետ ու հեռուն էնիս։

Ժգ. Զնուոր կամ ՀՆՈՓՈՐ (քրդ. տանըշտէ ռաշ, տաճ. եանի խարա, կուշտը (կողերը, քովերը) սեղնող ցաւ).—«Էն տարին օր Զնոփոր յընկաւ երկիր, (պատմողը մի Ծերունի մարդ է) մարդու պէս աշկարայ կը զվրունէն (պտտել), էն գահ (գեահ, ժամանակ) չէ, ամա (բայց) էն գահուայ Աստուածն է, ես ու մեր մշակ Պետոն յարտէն կիգէնք, հրտ ճամբուն միամիտ կը քէլէնք, հեղմ՝ լէ տեսայ Պետոն յանկսկծի (յանկասկածի, յանկարծակի) տփուաւ ի գետին ու բոռաց (բղաւել). Եամա՛ն, ըսեց, ես մեռայ, եամա՛ն ես մեռայ։

«Ի՞նչ եղաւ քըզի, տղայ, քըզի ի՞նչ պատահրաւ, հարցուցի ես։

—Ա՜խ, ըսեց, ես մեռայ, տես, հանէ (ահա) գացին, երեք հոգի ին, մէկն կը մնէր (նմանէր) պառուս Գէվոն. յընկուկ էր յառջև ուրանց, ձեռք ուրանց ասոնէ վարոց կէր, Գէվոն գիսի ընդոց ցուցուց, էն մէկ վարոցով խտեց կողսի, աչքէ, իմալ սևցաւ։ Էլ ինչ յերկնցուս (երկարացնեմ) հարի գՊետոն թալինք խտուն, գհոգին տուեց»։

«Եղաւ օր, Զնոփոր քաշուաւ երկրէն, երկիր խաղնդաւ (խաղաղել), էդ հեղ յըմնօր (ամէն օր) կը կանչէնք գՊառուս Գէվոն կը հարցուցէնք ուրնէ (յիւրմէ).—Գէվոյ, կըսէնք, գԱստուած սիրես, արի խսա էրէ (պատմէ) սանք (տեսնենք) ի՞մալ եղար Զնոփորի (շատերը կասեն, գրողի) գէնէ»։

—Ի՞նչ խսա էնիմ, աղբէր, կըսէր Գէվոն, Զնոփորի տարին գի-

շեր քնուկ էնք (քնած էի), Աստուած նշանց չիտայ, երկու հոգի եկան, ՝ջ՝ջէ՝ շորերով. ՝ջ՝ոտ՝ քիթ ու մոթով (պարմանալի շորերով, պարմանալի տեսքով), գլուխ ուրանց, ՝ո՝ր ֆ՝ոխ՝, ձեռք ուրանց, ֆ՝ոնոնէ վ՝որ՝ (դալար փայտ). ցելի երթանք, ըսին ընձի, մըտ մեր ջոջաւոր։ Ի՛հ, հոգիս խոնտ էր օր չէրթէնք, գացինք մըտ ջոջաւոր, էն լէ սուր կնգուղով էր, կանանչ վարոցն ի ձեռք, էն օր տեսայ, մագերս կանան (կանգնել), լէշս (լաշ) փշամպաւ (քստմնիլ), ակռէք գակռէքս կը ջարդէր, հոֆ՝ո՝ ե՝ղ՝ ՝ջ՝ոց ֆ՝ոբ՝ն՝ մ՝ հ՝ոտ։—Ջոջաւորն ըսեց մը վախսենայ, գքրզի կանչեր ենք, օր չընկնաս մեր յառջև մրգի մարդ նշանց տաս։ Յընկանք տներ, հա՛ յօդա հա՛ յօնա (այստեղ և այնտեղ), հա՛ իդա տուն, հա՛ ինա տուն, տուն մ՝ օր կէրթէնք, գկանանչ վարոց վին (որուն) օր խոէն, էն էր, էն սհաթին կը գարկուէր, կը մեռնէր։ Ջնոփորներ շատ փայ (մեծ մաս) գիշերներ կը գվրռնէն, վախտ վախտ լէ, ցերեկով։

«Ընի (ճիշտ) Ջնոփորի տարին, կը պատմէ մի ուրիշը, ցաւ կընկնայ քրդու մէ տուն, գընդրա (նորա) եօթ տղէն լէ կառնէ տանի (մեռցնել), քուրդ կը փախնի կերթայ հեռու երկրներ, երկիրն օր կը խաղնդի, կը դառնայ կիգայ տուն, գրռ (գեռ) չըր նստի տուն, Ջնոփոր գգլուխ կը կախէ ցերդիկէն (երդիք), կը հարցրու։

«Տու հաթի՞».—«Դու եկար».

—Արէ, աղ հաթրմ, —Այո՛, ես եկայ,

Ջնոփոր,

«Տու հաթի, ոյահ ապժի հաթրմ. «Դու եկար, Աստուած վկայ, ես էլ եկայ»։

Քուրդն օր կը լսէ գՋնոփորի ձէն, տեղոց տեղ կը չորնայ»։

Ջնոփորը հեռացնելու համար, հայերը գիւղերու չորս կողմը խաչարձաններ կը կանգնեն, իսկ Քուրդերը հետևեալ միջոցն ի գործ կը դնեն։ Մի մարդ կուղարկեն իրենց գօռները (գերեզմանոց) ուր պէտք է նա բարձր կանգնի և իրենք ներքևից հարցնեն.

«Մոտոյ կամ հասոյ, այլևս տեղ կա՛յ որ մեռել բերենք»։

Գօռները կեցողը կը պատասխանէ. Չէ, չէ տեղ չկայ, մի բերէք։ Ջնոփորը խղճալով ջարդը կը վերջացնէ։

Մի անգամ Քուրդեր Կոփ գիւղացի Ջուրդար անունով հայն կուղարկեն իրենց գերեզմանոցը, և երբ ներքևից, «Ջուրդար, այլևս տեղ մնաց, որ մեռել բերենք» կը հարցնեն՝ նա կը պատասխանէ. բերէք այստեղէն մինչև Էրզրում տեղ կայ. կը յարձակուին Ջուրդարի վրայ որ սպանեն, բայց խոյս տալով կազատուի։

Ժգ. Կատղած շան խածածի դեղեր.—

ա. Որու շուն որ կծէ մի մարդ, նորա (շան տիրոջ) տան թրթ-

խմորից (մայեա) մի կտոր պէտք է բերել և կապել վէրքի վրայ։

բ. Վիրաւոր մարդու բոլորը կը հաւաքուին մի քանի մարդիկ և 7 օր 7 գիշեր խաղալով, պարելով զուարճալի պատմութիւններ անելով չեն թողներ որ երբէք քնանայ, որովհետև եթէ քնանայ, վատ և զարհուրելի երազներ կըտեսնէ և վախենալով նէ [illegible]։

գ. Կծող շունը երկու կտոր անելով վիրաւորը մէջ տեղից կանցկացնեն։

Կատղած շունը սատկեցնելու համար, [illegible] կը մաղեն վրան։

7) Տան [illegible] (դէօվլէթ, հարստութիւն) կամ [illegible]։

ա. Տեսանք, որ Զլոտները դուրս արած ժամանակ ախոռի [illegible] ոչ ոք գոգնոցով չպարկեր, որպէս զի [illegible] չխռովի երթայ։ Դօլվաթի բնակութեան տեղը մսուրի գլուխն է։

Մի մարդու տան [illegible] կը խռովի՝ տնից կելնէ նստի մարագը. տանուտէրը եղբայրներից մէկը երթալով կը տեսնէ մի ծերունի, մինակ նստած մարագի մէկ գլուխը.

«Կըսէ, դու ո՞րն իս՞».

—Կըսէ, Ես քու տան դօլվաթնիմ՝ խռովերիմ, պիտի թողիմ երթամ.

„Կըսէ, կերթաս կերթաս, կը խնդրիմ քըզնէ, որ իմ [illegible] (գոմէշները) չառնիս ընձնէ, բաշխիս ընձի՞“։

—Հայդէ, բաշխեցի։

Սա կուգայ տուն, միւս եղբօր խնայ կուտայ, թէ մեր դօլվաթը խռովեր է, կերթայ, այժմ նստած է մարագը. ես գնայի խնդրեցի, որ գմշտան բաշխէ ընձի, բաշխեց, դու լէ գնա ուրիշ բան մէ խնդրէ։

Երկրորդը կերթայ, ոչխարները կը խնդրէ բաշխել իրեն և, կը բաշխուի։

Երրորդը կերթայ, ձիերը կը խնդրէ, վերջապէս տան մեծ ու փոքր ամէն մէկ անդամը կերթայ մի բան կը խնդրէ և տան դօլվաթը կը բաշխէ հայրաբար։

Կը մնայ միայն նոր-հարսը. տանեցիք կը պատուիրեն որ երթայ մի բան էլ ինքը խնդրէ. հարսը ներկայանալով,—

„Բարի լուս քի, Պապէ՞“ կասէ.

—Ճստծու բարին, կը պատասխանէ Պապէն.

„Պապէ, դու ո՞նիս (ով ես)։

—Ես ձըր տան դօլվաթն իմ, խռովերիմ, կը թողիմ երթամ։

„Պապէ, մըր տանեցոց ամէկուն (ամէն մէկին) մէկ մէկ բան բաշխեցիր, ես լէ եկեր եմ խնդիրք կէնիմ քու յոտնէն (ոտքերից) օր դու կերթաս, զտան [illegible] (միաբանութիւնը, միութիւնը) հետդ չտանիս, բաշխիս ընձի՞“։

—Բաշխեցի, գնա ԸՆԷՆ գլուխ, (ախոռի) իմ տեղ փուէ հազրէ, (պատրաստէ) էլ չեմ երթայ, որ ԸՆԴԵՆ չտանիմ հետս ես յուր երթամ. տան մեծ ու պզտիկ խուրբան (մատաղ) թրդ եղնին քու ոտաց տակ։

բ. Անասուն մի ծախած ժամանակ, պոչից փունջ մի մ-ը կը քաշեն, որ գօլվաթը կամ բարաքաթը մնայ տուն, չերթայ անասունի հետը։

գ. Դրկեց դրկեցի ալիւր փոխուած միջոցին, մի բուռ յետ կառնէ, որ բարաքաթը չերթայ ուրիշի տունը։

դ. Ճրագ վառելուց յետոյ տախտ չեն աւելեր և աղբը դուրս չեն թափեր նոյն նպատակով։

8) Հի՛ւր երբ կուգայ.

ա. Եթէ կատուն իւր քիթը քորէ կամ թաթիկը լիզէ։

բ. Երբ խմոր շաղեն կամ հաց թխեն և մի պատառ թռնայ ընկնայ մի կողմը։

գ. Երբ երեխայք ձիու նմանեցնելով փայտի վրայ հեծնեն և ման գան։

9) Ե՞րբ ճանապարհորդ կը լինին.

ա. Երբ ոտքի տակ քորուի։

բ. Երբ երազի մէջ ԷՆԷՆ տեսնեն.

10) Մազ.—ա. Սափրած մազերը ոտքի տակ չեն ձգեր, որպէս զի գլուխը չցաւի։

բ. Մազերու ծայրը եթէ ԷՆԷ՞Ն-ը լինի, ունեցողի բախտը չաթալ (երկմիտ, անյաջող) է, կասեն։

11) Աչ.—Աչքի սառելը կամ պաղիլը (անթարթ, բալբալ նայելը) հեռաւորին, պանդուխտին շուտով վերադարձը ցոյց կուտայ։

Աչաց թերթերունքի վրայ եթէ Շ-ը նստի, կասեն աչքը շալակ է շալակել և շալակ ունեցող հիւր կունենան։

12) Ականջ.—Ականջը երբ ձայն հանէ, (կանչել) մատը դնելով ականջի մէջը, կասեն. խէր, խէր, խէր (բարի լինի), և կսկսեն մի քանի անուններ համրել, կանչելը ո՞ր անուան վրայ որ դադարեց, նոյն անուն անձն է յիշողը։

13) Քիթ.—Երբ երկու անձ խօսեն և երրորդ մի (մանաւանդ եթէ վերջինս փոքր-երեխայ լինի) փունգայ, „տեսա՞ր կասեն. մեղաւորն ըսեց, արդար վկեց (վկայեց)“, այսինքն իւր խօսքը հաստատեց։

14) Ձեռ.—Աջ ձեռքը որ քորուի, դրամ կստանան, ձախը, դրամ կը ծախսեն։ Աջ ձեռքի քորուելու ժամանակ կը պագեն և կը դնեն գլխու վրայ։

Մորթուած անասունը եթէ շատ տառապի, մորթողի ՅԷ-ՀԷ ծանր էր, կասեն։ Որպէս զի կենդանին շուտով շունչ փչէ, մորթողի դանակը կը դնեն կենդանու մարմնու վրայ։

15) Սիրs.—Մի մարդու լաւ կամ վատ սիրտ ունենալը, նորա մորթած կենդանու սրտին նայելով կիմացուի. եթէ վերջինս գուարթ և պայծառ է, մորթողն ևս, կասեն, գուարթ, պայծառ և անխեռ սիրտ ունի։

16) Ոsf.—Պառկած մարդու վրայով անցողը նորից իւր անունն չէ առնիլու է։

Տեղ մի երթացողը, առաջ պէտք է ոչ որչը ըլլի (ձգէ), որ գործը յաջողուի։

Ոտքի տակ որ քորուի, ճամբայ երթալու նշան կը համարուի։

17) Յաջողութիւն.—Գործի համար երբ ճանապարհ ելնեն, և առաջին անգամ դարձի ամսան ունեցողի հանդիպեն՝ անյաջողութիւն կը համարուի և, հակառակը։

Փռնգալը ապագան գուշակելու նշան կը համարուի. գործի ձեռնարկելու կամ ճանապարհ երթալու ժամանակ՝ եթէ մէկ անգամ փռնգայ մէկը՝ ուղիղ (համբերութիւն) կասեն, և չպէտքէ գործի երթալ, իսկ երկու անգամ՝ յաջողութիւն։

18) Բախs.—ա. Ճակատից դէպի գագաթը գնացող մազերու մէջ տեղի ուղիղ գծիկն կանուանեն բախտ. եթէ գիծն ուղիղ է՝ տէրը բախտաւոր է, եթէ զոյգ է՝ նշանաւոր, եթէ ծուռ ու մուռ է՝ տէրն անբախտ է։

բ. Մէկի գիմաց վարտիքի խուանջանը չեն կապեր, որպէսզի նորա բախտը չանցուի։

գ. Ճանապարհին պատահող երկու կանանց մէջ տեղովը չեն անցներ, որպէսզի բախտը չանցուի։

դ. Երեխայոց գտակի վրայ ճկան գլխու խաչանշանը կը կապեն, որ բախտաւոր լինեն։

Բաղդը կը կոչուի նաև ֆալաք (ֆէլէք), որուն ժողովուրդը Տան դշխոյին նման անձնաւորութիւն տուած է։

«Ֆալաքը ջրտրկւոր (ջուր անող, ջուր բաշխող, ջրպան) մարդ մ'է, հալւորէ (ալևոր), վին (որու) առուի հետն օր ջուր շատ թողեց՝ էն մարդ դօլվաթւոր (հարուստ) կեղնի, վին օր քիչ թողեց՝ աղքատ»։

Ամէն մի ձախորդութեան, անյաջողութեան պատահելու ժամանակ, աղքատ, թշուառ և այլն լինելու պարագային՝ սովորաբար ֆալաքից կը գանգատուեն.—«ա՛խ, ֆալաք, Աստուած գքու տուն աւիրէ, յօրին՝ իդա բան հրմլա կէնիս» կամ ֆալաք քու երկու լուս քօռնայ... ֆալաքի ձեռք կոտրէր...

Տաճիկներ ուղղակի ինչ, ոչինչ և այլն կը հայհոյեն ֆալաքին, երբ մի անյաջողութեան պատահեն։

Երազք.—Իբրև աստուածային յայտնութիւն երազին մեծ նշա-

նակութիւն կուտայ ժողովուրդը, ասելով, «երազ կայ, ճշգրիտ է». դորա համար երբ մէկը ուզէ տեսած երազը պատմել. լսողները պարտաւոր են նախապէս ասել. «Ճստուած Խէր (բարի) էնէ»։

Վատ երազները շատ գէշ տպաւորութիւն կը թողնեն ժողովրդի վրայ, և այդ տեսակ երազներ տեսնողը շատ մարդոց յայտնելով, բացատրութիւն ստանալուց յետոյ, Ճստծուն կը դիմէ աղերսելով խնդրելու. «որ չար երազն ի բարին դարձու»։

Երազներից շատերուն ևս հաւատ չեն ընծայեր. անուանելով Խիւ (երևակայութիւն). Խիւլեան երազները, ինչպէս ժողովուրդի փորձառութիւնը գտած է. կ'առաջանան հետևեալ պատճառներից. 1. երեկոյին ինչ առարկայի մասին որ խօսեն, երազի մէջ նոյն առարկան կը տեսնեն. 2. Եթէ շատ անօթի քնի մէկը, երազի մէջ անշուշտ հաց կը տեսնէ, և այլն։

Ցնորական երազներ կառաջանան նաև «գիշերուայ երկարութիւնից». օր. աշնանային երկար գիշերները տեսնուած երազներուն ժողովուրդը հաւատ չընծայեր, անուանելով, «եօթ շաբթներու երազ»։

Փետրուար ամսուայ մէջ տեսնուած ցնորական երազներն ևս կը վերագրուեն «շոգեներու», որոնք քնի մէջ մարդը կը խաբեն սուտ երազներով։

Երազներու բացատրութիւնը.—1. Երազներից մի քանիսը բոլորովին հակառակ նշանակութիւն ունին. օրինակ, եթէ մէկը երազով տեսնեն մեռած, կը նշանակէ, որ նա շատ կապրի։

2. «Կիրակնաւուր» երազը թէև մինչև կէսօրին անպատճառ կը կատարուի, բայց սուտ նշանակութիւն ունի։

3. Մնացած բոլոր երազներուն, ժողովուրդի փորձառութիւնը իւրաքանչիւրին մէկ մէկ նշանակութիւն յատկացուցած է, օրինակ. երազով «պատարագ» տեսնելը կը նշ. Խիր. «Քուրդ կամ Տաճիկ», ոռոբէ, «ցորեն», ցորդ, «չարդ», ցիր. «իսաղոդ», անձրև, «ատամ ընկնելը»—ոգեոյան կը մեռնի և այլն և այլն։

Երազներից շատերու նշանակութիւնը ըստ պատաւներու մեկնութեան՝ բոլորովին համանման է «Էֆիմերիդի»-ի մէջ գրուած Դանիէլ Մարգարէի անունով յայտնի երազահանի մեկնութեան, և պէտք կարծել որ Էֆիմերիդի երազներն նոյնպէս զուտ ազգային են և հաւաքողը մարգարէին անունով կնքեր է՝ որպէս զի ընդունելութիւն գտնեն։

Այն երազները, որոնց մեկնութիւնը կանանց և պառաւներուն յայտնի է, արդէն վերև յիշուած յայտնի նշանակութեամբ կը մեկնուին և երազ տեսնողներուն բաւականութիւն կուտան, իսկ երբ «խլքէ մտքէ վեր բան է», կը դիմեն Աղամէրդի (Էֆիմերիդի) ունեցող տիրացուցց, քահանայից և վարդապետներուն, որոնք հէր հէր հաւանելով երազները կը մեկնեն։

Տեսելք.—Պառաւ Հաֆսէն ծանր հիւանդացաւ, քառասուն օր անթարթ մնաց պարկուկ, ձէն ցրուաւ մէջ գեղին՝ թէ Հաֆսէն գացեր է ՝ՀԷՌԷ։ Երբ որ առողջացաւ՝ գեղի մեծ ու պզտիկ գացին նորա մօտ և իւրաքանչիւրն իւր տեղը իւր ծնողաց, ազգականաց «քէֆն ու հալը» հարցուց, թէ էնդիու աշխարհք իմալ է, իմալ չէ, դրախտն իմալ է, գժոխքն իմալ է, արդարներ ինչ կէնին, մեղաւորներն ինչ։

Հաֆսէն քառասուն օր՝ որ անթարթ պարկած էր, պտտեր էր էն գիու բոլոր աշխարհքը, տեսեր էր զարդարն ու գմեղաւոր, զդրախտն ու զգժոխք...

Առաջ եկաւ Կրպէն՝ հարցուց իւր հօր տեղը. «Հաֆսէ, ասաց Կրպէն, թէ զԱստուած կը սիրես՝ դու զողորդն ըսխս, իմ պապու (հօր) տեղն իմալ էր»։

—Աստծուն աւտնաս, ՀԱՅՐ ԷԼՄԱ (մարդասատան) տեղմ՝ էր, սեղան սուֆրէն՝ Աստծու ստեղծած ամէն բարութենով (բարիքներ) լիք դրուկ էր, անմահութենի աղբուրն ուր յաւէտ կը բոխէր (բղխել), կուտէր. կը խմէր՝ կուրախնէր։

«Մեր գեղի ռէսի տեղն իմալ էր»։

—Վայ, իմ չանարժան հուգուն, Աստուած իմ ՀՈՒՆԷՐ ԳՈՒՇԷՆ (թշնամուն) նշանց չիտաս, հոգով մարմնով կորուկ էր մէջ ՆՈՒԷ ՆՈՒԷՆ, խանչ մ՝ երկինք (կանչուն) մէկ գետինքն էր, կէնէր ու չէնէր, չըր կըրնե (կարենալ) օր զուր ոտներ պրծուցէր կարսի մէջէն։

«Հին—ջոջ ռէսին»։

—Ջաղցի մէ քար դրուկ էր վըր վզին ու պառեկին, գիշեր ու ցերեկ կը զվըռցուցէն (պտտեցնել), ուր կեցած տեղ հրմալ մութ էր, օր մատ խտէն մարդու աչք՝ չըր տեսնի։

«Տէրտրոջ (քահանայի) տեղն իմալ էր»։

—Տէրտէր՝ հարի չօքեր (ծնկներ) չքուկ էր (խրուած) մըջ տիլ ու ճլեհեխին (ճախին), էն գահ օր պատարագ կէնէր, կեղնէր գուս, պատարագն օր կը վերջանէր, էլման կը չըքէր մըջ տըլին [1])։

«Գեղի գրի տեղն իմալ էր».

—Գրի տեղ ցուցուցին (ցոյց տուին) ընձի, լէ (այլ) գերես չը տեսայ, յոտով գլխով կորուկ էր։

«Էղ ինչ տեսար»։

—Ես ինչ գինամ, աղբէր, ջաղցկնից ՈՒՐ կուգէն, (ալուր էր գողցի մուշտարուց), փինաչուց (հնակարկատ կոշիկակար) կաշի կուգէն (կաշի էր գողցի), հերուն կը խտէն ի կողեր, թարգուց կտոր կուգէն, ասեղ կը գարկէն ի կշտներ... և այլն և այլն։

---

[1]) Տեսելք գնացողները կենդանի մարդոց տեղն ևս կը տեսնեն։

ՆՇԱՆԱՒՈՐ ՏՕՆԵՐ

Ը. ՆՈՐ ՏԱՐԻ

Նոր տարուայ կամ կաղանդի օրը, գիւղացի կինը սեղանի վրայ կը հանէ միայն պասաւուր կերակուրներ, որովհետև կաղանդը Ծննդեան պասի մէջ կը պատահի. — Հաճէփաղ կամ ձեռով պօշմա, ձեռով փլա-, Բոռաճ, խոշապներ՝ ճիւրքէ, ծիրանէ, խախէ և չամչէ, դոցա պատրաստութիւնքը օր առաջ կը լինին։ Իբրև կաղանդի նուէր՝ տանտիկինը մառանից կը հանէ չոր ծիրան, ընկոյզ, նուռ, (չփտելու համար դետնի տակ թաղուած) կարմիր մշեկ [1]) Խնձորներ և այլն։

Երբ առաւօտեան «բարի լուս կը բացուի, վերը հանթէ ու դու (քրդ. 72) միլաթին», տանտիկինն ու տան սպիտակ մուրուքը ժամ կերթան և կը բարեմաղթեն արար աշխարհի խաղաղութիւն, շնորհաւոր տարի և բարի կաղանդ՝ դուռ դրկեցին, բարեկամին ու ազգականին, ճժուն ու երեխին, որդուն ու հարսին։

Ժամերգութիւնից յետոյ՝ գիւղական քահանան անպաճոյճ լեզուով իւր հօտի «նոր տարին» կը շնորհաւորէ, սոքա երկիւղածութեամբ քահանայի աջը առնելով (համբուրելով) տուն կը վերադառնան։

Տան ջոջաւորն ու իր տանտիկինը առաջ մէկ մէկու՝ ապա իրենց որդոց ու հարսներուն, ճժերուն ու թոռներուն կաղանդը շնորհաւորելով միրգ կը բաժանեն և սոքա Մեծաւորներու ձեռքը համբուրելով՝ ըստ սեռի և հասակի սեղանի շուրջը բոլորած կը ճաշեն տօլման ու խոշապները։

Ճաշելուց յետոյ՝ ամէն մէկը իւր բարեկամի ու ծանօթի տունը կը վազէ նոր տարին ու կաղանդը շնորհաւորելու և զիրար կաղնդելու՝ որ կը լինի մրգերու փոխանակութեամբ։

---

[1]) Մի տեսակ մանր ու խիստ կարմիր խնձոր (գաւառներից Ներմուծուած)։

Թող ամէն մարդ իւր ծանօթին ու բարեկամին երթայ, մենք մտնենք գիւղի ռէսի յոռոռ, ուր՝ իրրև գիւղի ընդհանուր ներկայացուցչի օջախ, տան գլուխ մի մարդ (առհասարակ ջոջաւորները) մէկ մէկ կապոց միրգ, մի մի շիշ օղի առած կը ներկայանայ իւր ռէսին, որ իւր յօդայի մէջ՝ կերակուրներով և խոշապներով ու առանձինն՝ չորոչոչ*) լիք՝ ամաններ դարսած սեղանի գլուխը նստած՝ կսպասէ եկողներուն։

Մտնողը բարև տալ ու առնելուց յետոյ, գօտուց օղու շիշը հանելով կը դրխկացնէ սեղանի վրայ՝ «իդա (այս շիշ օղին) մեր ռէսին հազար բարի» ասելով։—Հազար բարու տէր կենաս, կը պատասխանէ ռէսը և կսկսին զիրար կաղանդել մրգեր փոխանակելով։

Եկողը նստելուն պէս, ռէսը սորա բերած օղուց մի կթղայ կը հրամայէ, որ պարտաւոր է նա՝ խիստ յարգի և պարտադիր սովորութեան մի համաձայն, առաջ ինքը խմել **), կթղան ձեռք առնելով՝

«Է՛, ռէս, շնաւոր (շնորհաւոր) նոր տարի ու բարի կաղանդ, Աստուած հար դալիմ գքրզի հրմլա վրը քու փառքին հատատատ պահէ, աչքիս, գլուխիս յրմէն տարի հասնիք իդա օրուան, Աստուած բարի նոր տարիկ մէ բերէ վրը ամենեցուն, ամենեցու(ն) սագաղէն՝ (ի սէր) վրը մրգի. կենդանութեն»։

—Անուշ անմահութեն, կը պատասխանեն ռէսն ու բազմականքը։

Ռէսը՝ կթղան ձեռքը, կը պատասխանէ.

«Քու խմածն անուշ, բարի ես եկի, յանցկի հար յօդա (այնտեղից մինչև այստեղը) վրը իմ գլխուն ու երեսին. Աստուած մարդութենից (բարեկամութիւնից) պակաս չենէ, յրմէն տարի արժանանանք իդա օրուան։ (Ամէն, կը պատասխանեն).

*) Չորոչ կը կոչուի խմիչքի ժամանակ սեղանի վրայ դրուած մրգեղէնը։ որից՝ ամէն մէկ կթղան խմելու ժամանակ, մէկ մէկ հատ բերանին կը ձգեն օղու դառնութիւնը տանելու համար. մեւնոյն նպատակով գործածուած միս կամ պանիր... կը կոչուին (տաճ.) մեզէ, մեզէ։

**) Բարեկամութեան պատրուակով թունաւորելու առաջն առնելու համար վաղ ժամանակներից ի վեր ընդունուած քաղաքավարական պարտ կամ սովորութիւն։

Աստուած Լուսաւորչու ազգ չկորցու, մրը խղճուկ ազգին լուս ու ճար մէ էնէ (Ամէն, կը պատասխանեն). խնամի Պօղոս, աչքիս քաւոր Պետոյ, բարի ես եկե, աչքիս, գլուխս, շնաւոր նոր տարի, բարի կաղանդ, կենդանութեն չըմնուդ (ամենքիդ)»:

—Անուշ, անուշ, անուշ կը պատասխանեն չորս կողմից:

Ինչպէս սովորութիւն ունին ասելու՝ Հօմպանէ երթալով կը թանձրանայ, իւրաքանչիւր եկողին պարտաւոր է ուէսը նոյն խօսքերով դիմաւորել ու ընդունել, նորից նոյն Հէնպանու-Ուխ-ն, նոյն անու-շ անմանու-Ուխ-ը, և երբ բազմականաց գլուխը կը տաքնայ՝ կսկսեն խօսել, ուրախնալ և երբեմն «թաու-թաու»ներով մասնակցիլ երգող աշրդին, որ սեղանի զարդը կը համարուի այդ օրը, կամ պանգէէձէն (քրդերէն) խաղեր ասողին:

Տարօրինակ սովորութիւն, որ առաւօտուանից մինչև երեկոյ, գազային հեղուկը անդադարէն կը խմեն և միայն թեթև մաղոյ ուտելով կը բաւականան, այս սովորութիւնը յատուկ է Աշոյ ընդհանուր ժողովրդին: Բայց խմիչք կը գործածեն աւելի մեծ գիւղերը քան փոքրերը, որոնք (առաջինները) հետզհետէ վարակուելու վրայ են արբեցութեան ախտից:

Աւելի հանդարտ կանցնի կանանց շրջանը: Նորահարսներուն և նշանածներուն տես գնացող խնամի կամ կեսուր կանայքը, տուն մտնելուն պէս, «բարի լուս» տալուց յետոյ, հասակակիցներու հետ կը համբուրուեն, մէկմէկու նոր տարին կը շնորհաւորեն, և սեղան նստելով *ը- ռ- ֆը-ով ճաշերնին կը վերջացնեն:

Երկրորդ օրը ուրախութեան ոչինչ հետքեր չտեսնուին ժողովրդի նիստ ու կացի վրայ, բացի արբեցողներու խումբութիւնից:

Տարին յաջող և ձմեռը կարճ կը լինին, եթէ կաղանդի կամ նոր տարուայ օրը Շորեքշաբթի և ուրբաթ օրերը չընկնան: Աւելի լաւ է որ արիւն ցողէ քան անձրև, նոր տարուց առաջ, որովհետև այդ նշան է՝ որ խիստ երկար ու սաստկաշունչ ձմեռ կունենան:

Ծննդեան տօնը եկեղեցական հանդէսներով կսկսի ու կը վերջանայ, և ոչինչ ժողովրդական ցոյցեր կամ խաղեր տեղի չեն ունենայ, բացի նրանից, որ տօնի ճրագալոյցի երեկոյեան միրդ հաւաքելու համար գո-ըշայ ՝ի ՝խոխե երդիքներից, որոնք շատ անգամ մրդեղէնի փոխարէն ճաշ (կորկատ) կը քաշեն երդիքից դուրս, և յուսախաբ կը հեռանան փորձելու ուրիշ երդիքներ:

Ս. Սարգսի և իւր տօնի մասին վերև գրուած է արդէն:

Բ. ՏԷՐՆԴԷԶ

Տեառնընդառաջի ճրագալոյծի առաւօտը, ամեն տուն, կառնեն մի քանի հատ կրծլատ սուել ու ցախաւելներ, երկար փայտի ծայր կապած կը դնեն թունդիր չորացնելու համար, երեկոյեան ժամերգութիւնից յետոյ, երբ եկեղեցու դռան խաչը օրհնեալ ճրագով վառուեցաւ, երեխայք իրենց ՝ի ՝էրՊդէզ երկար աւելը բռնած և,

«Տէրնդէզ՝ դալմանը կէս,
Առնեմ գչուան ելնամ ի դէզ»,

երգելով ու աղաղակելով կը մօտենան բալան բոցին, և վառելով իրենց աւելները՝ շուտով կը տանեն և տանիքներու ծայրը կը տնկեն: Բոլոր տանիքներու վրայ բոց, մոծել, մուխ, աղմուկ, աղաղակ, վազվզոց, հարահրոց և, մանր ու բէդ, կնիկ ու ճիժ, կուրախանան ու կը զուարճանան:

Պառաւները նուիրական կրակից այն օրուայ ճրագը Տէրընդէզի բոցով կը վառեն, սոյն կրակով հաւերու փետուրները կայրեն, որ ստերջ չմնան, դռտան (թուխս) նստեն. այդ կրակի ածուխով մառանի և տան երդիքները շուրջանակի կը գրծեն, որ չար աչքը չբանի մառանի թան ու թացանին ու առհասարակ բոլոր մարակային: Երիտասարդները իրենց սիրելի գամշուկներու պոչերը կը խանձեն, որ ՝ի ՝ջաչաՊ (նագար). մէկը կրակի վրայով այս ու այն կողմը կը թռչի (հա՛ տէրտէրը թող ասէ՝ «խոտելի է շրջիլ գհրով») միւսն իւր խունջանի կամ հուռիկի ծայրը կայրէ՝ որ գայլեր ու թունաւոր օձերը իրենց չմօտենան: Ծերերը ուշադրութեամբ ծուխի այս ու այն կողմը

ծուռելը կը դիտեն, որոնց ասելով եկող տարին ծուխի գնացած կողմը առատ ցանք կը լինի։

Նորահարս ունեցող տները բոված ցորենից՝ չամչախառն փոխինդ կը պատրաստեն և կը ցրուեն դրկեցներուն ու տանիքները դոնուող բաղմութեան, դրկեց ու բարեկամ կանայք նոյնպէս ընծայներով (գլխու ծածկոց, եաղմա) պարտաւոր են երթալ և նորահարսները դուրս հանել է ՈԷՈ ՏԷԲԷԴԷԼԻ։ Իսկ երկրագործ երիտասարդները, յատուկ ՏԷԲՆԴԷՂԻ համար պահած ցորենի կապոցներ բերելով՝ նուիրական բոցովը կը վառեն և հասկերը փշրելով իբրև ԸՈՒԲՈՈՒ (օրհնութիւնարեր) կուտեն ու կը բաժնեն իրարու վրայ։

Գ. ԲԱՐԵԿԵՆԴԱՆ

Բարեկենդանին պէտք անպատճառ ուտել, խմել, հարսանիքներ սարքել և այլն. ուտելը մանաւանդ իւր չափը կանցնէ, ով որ մէկ կով ունի, բարեկենդանի վերջին երեկոյեան՝ ամէն ուտելիքներից յետոյ, պէտք է կիժէ և կաթն ուտէ, որ կարօտով չմնայ գատիկ օրուայ կերակուրներուն կամ թան ու թացանին։

Իբրև անեկդոտ կը պատմեն՝ որ այս վերջին օրը ազգատ քրտուն մէկը մի Հայու տուն հիւր կը լինի, կը տեսնէ՝ որ ամբողջ օրը կերակուր կերակուրի վրայ թունդրից կը հանեն ու կուտեն, քնանալու ժամանակ, «կնիկ, կասէ Հայն, ապա մի բան մուացանք չկերանք»։

— Ի՞նչ, կասէ կինը։

«Չկով կթեր ես»։

— Քա մարդ, ինչ աղէկ որ միտքս բերեցիր, ասասէ, մի քնիր, երթամ կովը կթեմ, կաթը բերեմ ուտենք, ապա քնանանք։

Քուրդը միւս կողմից վրայ կը բերէ. «ապա մի բան էլ մուացերէք բոլորովին, մտքերնիդ չէք բերէ, տոպրակիս մէջ կտոր մի չոր Հաց կայ, թէ ձեր բարեկենդանը կը սիրէք, այն էլ կերէք»։

Բարեկենդանի օրերը՝ գիշերները առհասարակ, տեղի կու-

նենան կերուխում, ուրախութիւն, պարեր, հարսանիքներ. գրէթէ ամէն օր, օրական մի տուն դատարկելով կը պարեն ու կը խաղան. ցերեկները, բէդաբէդ մարդիկ անդամ կալերը հաւաքուած էրիյոն Լոռոյ, շեղեր և այլն խաղալով կը զուարճանան, իսկ երիտասարդները կը սարքեն ջրիոր (մականախաղ)։ Գիւղի առաջ կընտրեն մի տափարակ և ընդարձակ տեղ, ասպարէզի մէկ գլուխը կը կանգնեն 15-20 ձիաւորներ, նոյնքան և՝ միւս գլուխը, զինուորական կարգով ձիաւորները կազմ ու պատրաստ կը կանգնեն. մինչ Հանդիսատես բազմութիւնը և դափը հատանող նժոյգ ձիերը անհամբեր կսպասեն, գուռնան ու դհէօլը յատուկ եղանակով մի խաղի սկիզբը կը դնեն։ Կանգնող խմբերից ձիաւոր մի երթալով միւսի առաջ կամ մականով նշան կանէ, կամ մականը ձգելով՝ ձիու գլուխ ետ դարձուցած կը փախչի, ձիաւոր մի նորա յետևից կրդնայ, ուրիշ մի հակառակ կողմից սորա առաջ կերթայ, մինչ առաջին կաշխատի մականը ձգելով դպեցնել իւր առջևից փախչողին մի ուրիշը կը հասնի, այս անդամ սա կը փախչի և սորա յետևից ընկնողը կաշխատի դպեցնել հարուածը և, այսպէս փոխադարձաբար հարուածներ տալով ու առնելով այնքան կերթան ու գան, որ ձիերը փրփուրի ու քրտինքի մէջ կը կորեն, իսկ ձիաւորներից շատերու ոտք ու գլուխը կը ծածկուին վէրքերով։

Երեկոյեան կը հաւաքուին ռէսի յօդան և կը սարքեն օյիններ, օրինակ ջիդիգող։

Մէկ երկու մարդու շորերը փոխել տալով Հրէայ վաճառականներու տարազով կզգեստաւորին և մէկ երկու հակ կը յատկացնեն նոցա իբրև թանկագին իրեղէններ։ Երկու երեք հոգի ևս իբրև գողեր կը պատրաստեն, որ ջհուտներու ապրանքը գողանան։ Գողերը երթալով մի ընկեր ևս կը ճարեն իրենց, որ իրողութիւնից տեղեկութիւն չունենայ, և կերթան գողանալու ջհուդներու հակերը։ Ապրանքը կը գողացուի, ջհուտները կը ներկայանան գիւղի ռէսին և կը պահանջեն խուզարկութիւն։ Ռէս ոստիկաններ ուղարկելով գողերը կը գտնէ, որոնք՝ դատաւորի՝ ըստ երևոյթին սպառնալեաց վրայ կը խոստովանին իրենց յանցանքը, ապրանք մէջ տեղ կուգայ, երբոր գողը կը-

սկսի երկիւղից դողդողալ, ջհուդները խլիբէլ անելով (իբր իրենց լեզուով խօսակցութիւն), թարգմանի միջոցով կը պահանջեն գորերու մերկացնելը. առաջ ի հարկէ միամիտ դողը կը տկլոր-նայ և Ադամայ շապկով հրապարակ կելնէ. փրխկոց կընկնայ հանդիսականաց մէջ, խեղճ դողը գաղտնիքին վերահաս կը լինի, բայց արդէն ուշ, հերիք է որ սէտք եղած գուարճութիւնը տուեց ժողովրդին: Ամէնքը գոհ են և ուրախ, բացի տկլոր դողից:

Անցած տարիներ մի գուարճասէր մարդ հետևեալ խաղը խաղաց դաւառիս փոխ-առաջնորդի և դպրիի գլխուն. Կանացի հանդերձներ հագած և երեխայի շորեր հագցուցած մի շան լակոտ գրկելով՝ նախ ներկայացաւ վարդապետին և պահանջեց սորանից արդարութիւն իւր չարագործ մարդու մասին, որ իրեն տիրութիւն չանելով ձգեր է փողանէ փոդան երեսի վրայ: Մինչ վարդապետը հրամաններ կարձակէր, մայրը է-ր ոդդ-ս- լացը կտրելու համար մի գոմի իջուց լակոտի գլխուն և սա վժալով ընկաւ վարդապետի առաջ: Ներկայ եղողները վարդապետի հետ միասին ծիծաղից Ռոբինոց եղան:

Առաջնորդը կամենալով դատին և սանմասն չթողնել այս ուրախութիւնից, պատուիրեց խեղկատակին՝ որ երբ ինք կերթայ դատու տեսութեան, միևնոյն կերպ այնտեղ ևս ներկայանայ:

Չարաճճի հայն այս անգամ շան լակոտը լաւ թրջեց և նոյն հանդերձներով ու փաթոյթով ներկայացաւ դատուն, վարդապետը յայտնեց դատաւորին եկող կնոջ թշուառ դրութեան մասին, և խնդրեց որ նորա չարագործ այրը բերուի և տէրութեան օրէնքի համեմատ պատժուի: Դատաւոր դեռ ԵՎԵՐ ԵՎԵՐԱ էր (այն, այն,) երբ կեղծ կինը նորից մի գոմի իջուց իւր որդու գլխուն և հեռուից կանգնած ձգեց դատու գիրկը ու փախաւ:

Հասկանալի է այժմ դատու վիճակը, որ իւր անսովոր շարժումներով աւելի ծիծաղ կը շարժէր քան թրջած շունը:

Այս ու այսպիսի անմեղ խաղեր ներելի են բարեկենդանի

օրերը, որովհետև «աբեղաթոզի» օրեր են, գիւղացոց ասելով՝ սարի ճգնաւորներն անդամ այդ քանի օրերը վար կիջնան և ուրախութիւններ կան՝ն։

Բարեկենդանի վերջին օրը կանայք ևս գուարճանալու համար կը սարքեն ՁՂՁԷ (Թիֆլիզեցոց ՃՂՃԷԷ). երկար թոկեր երկուտակ առաստաղից կախելով մէջը կը նստեն և երթալով գալով կօրօրեն մէկզմէկ։

Դ. ՋՈՋ ՊԱՍ

Ջոջ պասի առաջին օրը՝ որ կը կոչուի ԽՈՃՈՒ [1]), «լուացարուք սրբեցարուքի» օրն է նաև, գիւղացի կինը իւր մրաստան տախտ ու առիքը կը սրբէ, աման չամանը կը լուանայ, յետոյ երկայն փայտ մի առնելով՝ ծայրը շոր կապած, ալիւրի մէջ կը թաթախէ և կոկսի առաստաղի գերանները սաղանման նախշել ու զարդարել, այնպէս որ գիւղական տան ծածքի տակ մի խայտուտիկ ու շնորհալի համաստեղութիւն կը գոյանայ, տան սներու վրայ նոյնպէս ալիւրով պատկերներ կը գծէ ի նշան խոյի, ուղտի, գառանի և այլն։

Մինչդեռ կանայք տունը կը մաքրեն ու կը նախշեն, փոքրիկներից մէկ կառնէ երկու կտոր խեցի կամ տափակ քար և կելնէ երդիքի մօտ կը կանգնի, մի քանիսն էլ երդիքի դէմ ու դէմ՝ թունդրի կշտին կանգնած, կսպասեն. վերևինը կը հարցնէ.

«Աղամ—աղամ, ինչ աղամ»։

—Մուկն ու կատուն, ներսից կը պատասխանեն. դը՞ռ, քարերը կը քսէ իրարու վրայ և ՀԱՂԱՅ ՄՈՒՏ ՈՒ ՀԱՊՈՒՆ։ Դարձեալ. «աղամ—աղամ, ինչ աղամ»։

—Օձն ու կարիճ, կետուռն ու թրթուռ, արջն ու գէլն, կիրիրէն ու ճրճիրէն (միջատ) և այլն և այլն։ Քարերը նորից կը դռան և վերոգրեալ վնասակար կենդանիները աղացուելով կը չքանան։

---

[1]) Կոճոն կը կոչուի անասնոց յարդ կամ խոտը ուտելուց յետոյ մնացած խոշոր մանրուկը։

Ջոջ պասի զարդարանքներից մէկն է նաև Ա-լոՒԽԸ, որ Ուրուջ-բէկ (պաս-բէկ) ևս կը կոչուի: Երեխաները վախեցնելու համար՝ մի փոքր Խ-Խ- (բաղարջիկ) կամ մի մեծ գլուխ սոխ առնելով շուրջանակի եօթ փետուր կը ցցեն, (փետուրները ԽԱ-պէտք է լինին, որ դարուն շուտ դայ) ի նշան եօթ շաբաթնե-րու, իսկ մի կողմը սուր փայտ մի կը խթեն, իբրև կտուց աքլատիպի: Թունդրի ծուխը կը բարձրանայ, աքլատիպը որս-րուելով կը պոռի և կը սաստէ երեխայոց, որ պասի բոլորը չերթան, թէ չէ՝ աչքերնին կը հանէ:

Այդ օրը պէտք է անպատճառ խունկի բաղարջ եփել ուտել, որ ծերերու ասելով՝ Իսրայէլացոց Եգիպտոսից ելնելու յիշատակին է նուիրուած. նոյնպէս իբրև պարտադիր կրօնա-կան ծէս կամ սովորութիւն Հոոխ (թիֆլիզեցոց ծանդիլը) կը խաշեն կուտեն, որ երեխաները ուտելով կերգեն.

«Խունկի հաց ու հատիկ՝
Բարով յիղայ մեր Զատիկ»:

Ջոջ պասի առաջին շաբաթուայ օրերից մէկը նուիրուած է Խոոլաած շաբ, որ չիսածէ, մէնը մէնա՝ վնաս չտալու համար, մէկը Խոյծոէն՝ մարդոց վրայ չիսփելու համար, մէկը Ռաալլոոն, (տես Տղաբերք և կնունք). որպէս զի երեխայք չթալցնեն:

Մ Ի Ջ Ի Ն Փ

Մեծ պասի միջին շաբաթը կը կոչուի Տիջնոս, միջինքին մի մեծ ձիթով բաղարջ կը պատրաստեն և մէջը մի ո-լոՒ կամ մատանի կը դնեն, ընտանիքի անդամոց վրայ մաս մաս բաժանած ժամանակ, ուլունքը կամ մատանին, որ մէկի բաժ-նի մէջ որ դուրս եկաւ, տան ԴաշլՒԸ (հարստութիւն) Ռորա գլոՒն է Խոսէն. եթէ բաղարջը կտրելու ատեն նշանը դանակի բերանը ելնէ՝ դօլմաթը բոլոր տանեցոյ կը պատկանի:

ԵՒԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻՆ

Այս օրը ամենաընտիր և սուրբ օրը կը համարուի, ինչ գործի որ ձեռք դարկեն՝ աջող կը լինի, ինչ որ խորհրդան՝ Աստուած կը լսէ, դորա համար՝ կանայք պանրի դեղջ-ը կը պատրաստեն (տես Արհեստներ), դարբիններուն պատրաստել

կուտան պողպաա օղէր, զանազան հիւանդութեանց համար ոտք ու ձեռք նաև պարանոցը անցկացնելու, պատարագից յետոյ ժամու դուռ կանգնած՝ քարեր կը գլորեն ցաւ ու չօռը հետը գլորելու համար։ Երկրագործը իւր սերմունքը ջոկջոկ կապոցներու մէջ ածած խարդան կոթի հետ միասին ժամը կը տանէ և կը դնէ ճաշոցի պոչ։

Այս տօնից յետոյ մի շաբաթ կիրակի կը պահուի ի պատիւ ֆոլորդէի և լուացք ամենևին չեն աներ, մի օր՝ օյոռ կիրակի, և այդ օրուայ եփուած թթուն կանուանեն օյոռ ԼԼոռ։

Ե. ԾԱՌԶԱՐԴԱՐՆ ՈՒ ԻՒՐ ԿԱՐԿԱՉԱՆ

Դեռ արշալոյսը չբացուած գիւղացու մեծ ու փոքրը, պառաւ ու հալոր, մարդ ու կին, աղջիկ ու տղայ, ճիժ ու երեխայ զուգուած ու զարդարուած կը լցուին եկեղեցի, «պաշտումն» է կասեն գիւղացիք. ասեղ քցես՝ գետին չընկնայ. որովհետև իգական սեռը մանաւանդ, տարին հազիւ 4-5 անգամ եկեղեցու երեսը կը տեսնէ, եկեղեցական հանդէսներու արարողութիւնքը մեծ տպաւորութիւն կը թողնեն նորա վրայ, անհամբեր սպասելով ուռ օրհնելուն, «կը խօսին ու խոստովանին» և կարգով կսկսին դուրս գալ. երիտասարդները եկեղեցու դուռը փողանաձև կանգնելով ելնող աղջկան և մանաւանդ «սրտի սիրածներուն» օրհնած ուռուվ շրի ու հա՛ շրի տալով՝ ճամբու կը դնեն։

Երբ արեգակ «բաժ մը երկու» կը բարձրանայ, փոքրիկ տղայք խումբերով տնէ տուն կը պտտին հաւկիթ հաւաքելու և գրէթէ սպառնական ձևով կը կրկնեն կարկաչալի ոտանաւորը.

«Կարկաչայ,
Կարինաչայ,
Որ չիտայ
Զիմ կարկաչէն,
Կերթամ ասեմ՝
Պոլ իրիցուն,
Կիգայ . . .
Ձեր ձձում»։

Ուստ ուրբաթին հօտաղները գեղինը կը փլնկեն [1]) «Յուղի աչքը հանելու» համար, ծերերն Յուղի ինադուն (ջզրու) ծոմերնին կուտեն: Վերջին շաբաթուայ մէջ կը ներկեն զատկի կարմիր հաւկիթը և կը պատրաստուեն Քրիստոսի սուրբ Յարութեան:

Ամէն տարի Զատկի դիշերը՝ մեր գիւղի ժամկոչ Աստուտուրը երդիքէ երդիք պտտելով փայտով կը տրխկացնէր տանիքներուն և մորմոքող ձայնով կերգէր ս. Յարութեան երգը.

«Քրիստոնէք, արթուն կեցէք,
Քրիստոնէք, ժամ հրամէցէք,
Աչք ու ձեղ մեծ աւետիք.
Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Քնաթաթախ աչքերով կը վազենք եկեղեցի և տիրացուի ժամաշապկի փէշը հաւկիթ ձգելով «ոյբ ու-ԷՂԲՈՅԲ կը դառնայինք գիւղական երեխայներու հետ:

Զ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

Ազգային ու եկեղեցական տօներից ամենաժողովրդականը դրէթէ Համբարձման տօնն է, որու հետ կապուած են Լէյլ ու Մէջլումի անունները ու կարգը, ժողովրդական աւանդութիւններ ու սովորութիւններ: Հ-մբարձ-մը գայ անցնի և Լէյլ ու Մէջլումի յիշատակութիւնը չլինի՝ այդ անկարելի է. մէկը կրօնական ու միւսը ժողովրդական վերացուցման իրէալներ,— Համբարձմանն՝ Փրկիչը կը համբառնայ երկինք, և ժողովրդական տօնին՝ Լէյլ ու Մէջլումը երկինք կը թռնան և աստղ կը դառնան:

Ժողովրդական աւանդութեամբ Լէյլ (աղջիկը) և Մէջլում (երիտասարդը) երկու ծառուկներ կը լինին (սիրահարներ), որոնք Մէջլումի ծնողաց կամակոր բռնութեան իբրև անմեղ զոհեր, մի քաղցր տեսակցութեան ըսպէին, երբ տղայի մայրը յանկարծ դրկախառնուած կը տեսնէ սիրահար զոյգը, սոքա ամօթից ու երկիւղից Աստծուն կապաւինեն և խնդիրքով ու պաղատանքով երկինքէ հը ԸՆԷՆ և ասպղ հը դառնան:

[1]) Փուռնկ կը կոչուի բանջարի տակը հողից հանելու համար յարմարեցրած տափակ և սուր քիթ փայտը:

Ամէն տարի Համբարձման գիշերը, այդ յաւիտենական սիրահար զոյգ աստղերը կուգան մէկ տեղ և գիրար կը համբուրեն. սոցա ողջագուրանքը ու համբոյրները տեսնելու համար շատ ցանկացողներ Համբարձման ամբողջ գիշերը դուրս կըմնան և պշուցեալ երկինք կը նայեն։

Քրդաց ու տաճկաց ժողովրդական բանաւոր բանահիւսութեան մէջ բաւական ընդարձակ տեղ կըդրաւեն Լէյլ ու Մէջլումի խաղերը (երգերը)։

Համբարձման գիշերը *Էմիրան ծաղիկ լոյս հոտոյ* և արթուն մնացողը փնտռելով կը գտնէ։

Այդ գիշերը ամէն ցաւագար անձ գիշերով կը լոգանայ, որ հիւանդութիւններից ազատուի։

Համբարձումից մէկ օր առաջ գիւղական փոքր աղջիկները խումբեր կազմած՝ կը բարձրանան սարերը՝ եօթ բանդ ծաղիկ հաւաքելու, եօթ տարբեր աղբիւրներից ջուր վերցնելով կածեն մի բդոզի մէջ, որ կը կոչուի Վիճակ (Վիճակ) Բղէկ, եօթներանդ ծաղկեփունջը կը դնեն բդկի բերանը, և ոնի օրը խումբ խումբ տները շրջելով կը հաւաքեն իւղ և հաւկիթ, որոնցով գաշտը կերակուր կեփեն և երգելով կուրախանան (սովորական պարերգեր)։

Իւրաքանչիւր խումբը ունի իւր զարդարուած ու գուգուած հարսը և Բղէկ Բոնոզը, վերջնոյս համար յատկացուցած է տողերս՝

Վիճակ. վիճակ, վիճակ ջան,
Վիճկի թեւերն էր նիշուն,
Խոռտեր յըմէն բալաք շուն։

Տանտիկին կանայք նոյնպէս գաշտը կերթան որոնելու երեքնուկ (Trifolium pratens) թուի խոտը, որպէս զի ձմեռի մէջ ձգեն և տարուայ իւղն ու թացանը բարաքուն (օրհնուած, լիառատ) լինին, եթէ չորոնոնը (նոյն խոտը՝ միայն չորս հակաղիր թփերով) կարողանան գտնել, աւելի լաւ։

Միևնոյն օրը կանայք կը ճարեն մի էրէոյի հոտ (պատեանը), օյոնշաղիկ (թոզած մորթը), իշոնպոյտ և փիրոնոյ ոլոնոն ու միասին կը կախեն ձեմից որ չաչքաւի (նազար)։

Համբարձման գիշերը կթան տաւարները դուրս կը տանեն արածացնելու, որպէս զի չեզրոր կանայք չկախարդեն, իսկ եթէ

ներս մնան, բոլոր երդիքներու և ցուիքներու չորս կողմը ՄԼ-ՐՈՔՈՒ կոչուած ձևով անասնոց թրիքը շուրջանակի կը դարսեն, որ կախարդանքը ներս չմտնէ։

Որպէս զի լէպրաբ պառաւը իւր դրացու իւղ ու մածունի, թան ու թացանի և մառանի ԲՈՐՈՒՆԸ փոխադրէ իւր տունը, Համբարձման գիշերը կը տկլոզնայ, իւր ձձումը կը հարէ, իւղը խաչակնքելով բդկի մէջ կածէ, իսկ ԼՈՒՆՋՈՒԸ կը թափէ դրացու տանիքի վրայ, յետոյ մազէ լարանը (թել) կը կապէ մէջքը, կաշէ գոգնոցը վրան՝ ծածուկ կը սպրդի հարևանի կթան անասնոց ախոռը և արագ արագ կը շէնքայ տաւարներու վրայով ու կը փախչի դուրս։

Այնպիսի ԼԷՊՐՈՒՆԷՐ ևս կան, որոնք միևնոյն վերոգրեալ նպատակով ՀԸ ՄԻՊԷՆ դրկեցներու դռները։

«Համբարձման գիշեր՝ ես ու իմ կնիկ դացինք դետ լոգկրցանք օր մեր ցաւ ու չոռը (հիւանդութիւնը) տէնք հրտ ջրերուն, ես քընց իմ կնիկ շուտ էլայ ջրէն, շորերս կը հագնէնք, դարձայ յետևս աչքի՝ կնիկ չկայ, հա՛ յօդա (այստեղ) կնիկ, յօնա (այնտեղ) կնիկ՝ չկէր. աներևոյթք եղաւ։ Գացի մրտ թղթբաց, թղթբացն ըսեց՝ Ախտարք նշանց կիտայ՝ օր չարքեր տարած են գքու կնիկ։ Վերջ.—վերջն էն է, օր պտի համբերես հարի տարիմ՝ լէ Համբարձման։

Եկող տարի Համբարձման՝ ես ու թղթբացը դացինք ջրի ափ, էնի (նա) նստաւ, գրեց ու ճղեց, ես կանայ ու սպասեցի։ — Հանդէ (ահաւասիկ) եկան, ըսեց. աղէկ աչքէ։ Դառնամ աչքիմ օր (որ) ԸՆԷ ՅԷ (խումբ մի) ՀՆԷՀ էն դիէն կիդան, իմ կնիկ լէ մէջ ուրանց, ճիժմ լէ գիրկ, զճիժ (երեխայ) բռնի թալի հրտ ջրին ու կնկաս ձեռք բռնելով բերի տուն»։

(ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐՈՒՅՑ)։

Վարդավառին և ս. Աստուածածնայ տօնին տեղի կունենայ ուխտագնացութիւն դէպի ս. Կարապետ և միւս՝ դաւառի մէջ գտնուած սրբավայրերը, և բացի սովորական քէֆ ու ուրախութիւններից՝ առանձինն ժողովրդական սովորութիւններ տեղի չեն ունենար, կամ ականատես չլինելով ինձ ոչինչ յայտնի չեն։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐ

Ա.

Մանկական երգեր.

***

Ելք, ժէ, ճվ, ռա,
Ճաշի պուտուկ կերայ,
Եռան մարէ, շուտ էրէ,
Ես անօթնէ մեռայ։

***

Ելք ու բեն,
Տախտակ տփեմ,
Բանի գայ փախնիմ,
Հացի գայ պուպզիմ։

***

Համբարձի՛
Ձէշ բարձի,
Գետն ընցի։

***

Հայր մեր որ երկինք՝ վկայ,
Կերայ թթու՝ փքայ,
Ընկայ ջուր՝ սրկայ, [1])
Ելայ դուս՝ լկայ [2])։

***

Ընթերցուած Յոբայ,
Երկու մարդ եկան Կոփայ,
Ամէկու ձեռք մէկ մէկ ոտքայ [3])
Վին որ զարկէն, կըսէն Ռոտայ [4])։

***

Ընթերցուած Ռաակայ,
Քասէմ թթու երկու հաց,
Երեք մարդ եկան Մոկայց,
Բերան ուրանց [5]) մնաց բաց։

***

Ամէկ ուր տուն,
Լակլակ ուր բուն,
Խաչ գաւազան
Իմ քեռու տուն։

***

Առջին *), քօռ շուէն [6])
Միջին, չամչի խէչին [7]),
Յետին, մտնայ գետին։

***

Երաբ, արաբ **),
Վիր կամն է պարապ,
Կաման տէր մեռի,
Ոտքերն էր կեռի։

***

Ենիծեմ, անիծուիս,
Ոտքէ գլուխ պղտճկիս [8])
Ելնաս հուէն, [9])
Պատիս ռուէն, [10])

---

[1]) Ընկզմիլ, [2]) կակղնալ, հալիլ. [3]) մեծ ձեռնափայտ. [4]) զղջալ, փոշմանել. [5]) իւրեանց. [6]) Մանրավաճառ. [7]) խէչին—մօտ են, կշտին։ [8]) Այրուելուց ուռել, բղբճիլ. [9]) տճ. օդ. [10]) տճ.—տապակ։

*) **) Կամը քշելու ժամանակ կերգուեն։

Իսկի չ՚պրծնաս
Գլխուդ ցաւէն։

***

Կտո՛, Կտո՛, մատանայ,
Ոտնէ գլուխ սատանայ,
Կտօն կանի վրը փլին
Փրթաւ ընկաւ մէջ տլին [1]։

***

Կարկաջա *)
Կարինաջա,
Որ չիտայ գլմ կարկաջէն
Կերթամ ըսիմ Պոլիրիցուն՝
Կիգայ . . . ձեր ձձում։

***

Զնջլիկ, բա զնջլիկ,
Թուր ու Բեվեռ ու Տոպլիկ [2]),
Ա՜ էդէ, ա՜ ճրտէ,
Կուզ մարդարէն . . . խտէ։

***

Տիտոզիկ, տիտմարոզիկ.
Զուռնաթխիկ, թուխս մանուկիկ,
Եվէ գաթա ու կուլունճա [3]),
Եղն ի վրէն ու պճպճայ,
Հաղնի իդա,
Կադէ իդա,
Խմէ իդա,
Ելնա ինա.
—Վի՞ տուն իջնայ,
—Թոզալի տուն.
Էս Գոզալ,
Էս Մուրատ,
Էս Գիլպար,
Էս Բաղդասար,
Էս Բարբոն,
Էս Գաբրոն,
Էս կատուն,
Էս մուկիկ։

***

Ա՜ստուծո՜ [4]) Երկուշաբթի,
Աշխար ընցում Երեքշաբթի,
Ձուր պղտորաւ Չորեքշաբթի,
Խմոր էրի Հինգշաբթի,
Լուացք էրի Ուրբաթ օր,
Բաղնիս գացի Շաբաթ օր.
Քոռ՜, զԿիրակին ո՞ն է բանի. որ ես բանիմ։

***

Ամառ, ա՜մէրոյ,
Ձմեռ, բէ խէրա,
Աշուն ու շուն՝
Գարուն ու նիշուն։

***

Ի՛բագելի տաք երկիրներէն վերադառնալու ժամանակ՝
Լակլկոյ, հաջի բէկոյ,
Յո՞ւստէն կիգաս։
—Սև սարերուց,
Ի՞նչ իս բերի,
—Թուղթ [1]) մի սապոն,
Վի՞ր կը տանիս,
—Հաջու մամուն,
Լուայ լաչին,
Թալէ գլխուն,
Ելնայ գարուն։

***

Ճիւ ու ճիւ ու ճնճղիկ.
Թռաւ գնաց առուի եզրիկ,
Կերաւ կտիկ, խմեց ջրիկ,
Թռաւ մտաւ Մկրոյ ծոցիկ։

***

Ճիւ ու ճիւ ագռաւու ճիւ,
Թռաւ գնաց յԵրուսաղէմ,
Բուրդ եբեր՝

---

[1]) տիլ—տիղմ. [2]) վոմնան, վահանակ, տճ. գալգան.—[3]) կլոճ, բաղարջ. [4]) իրարբնցում, դալմաղալ։

*) Ծաղկաղարդին հաւկիթ ժողովելով կերգեն։

[1]) 1/8 հօդգա։

Բամբակ չեբեր.
Ջալ եբեր՝
Ջալվար չեբեր,
Ճնճղիկ՝ թը՛ռաւ գնաց։

* *
*

Կարմիր երես բոլոր ***,
Դենգ [1]) գլուխ ու լէն ճակատ,
Բաժ ու ֆէջէջ [2]) չինարի ծառ,
Ոչ լաւ ոգիկ [3]) ու ոչ ***.
Կարմիր թշներ, ֆռ, մոդ աչքեր,
Գեղեջ [4]) երես, թուխ թուխ ընքներ,
Փամփուխ [5]) ձեռքեր ճանկ ու ճեր [6]),
Թոլթոշ, փոփոշ [7]) հաստիկ ճռներ,
Էդ կռնծուկ [8]) ոլոր ծամեր.
Այդի մընի [9]) արծթէ թել *)։

* *
*

(Երեխայք մէկմէկու ուղղելով կըսեն).

Իմ մամ կերի խաւռնել,
Զիս է բերի ոսկեծել,
Քու մամ կերի ձուածեղ,
Քըզի բերի *** ընծեղ։
Իմ կերի գարնցան,
Զիս է բերի ի հնձան,
Քու մամ կերի թթու թան,
Քըզի բերի վթվթան [1])։

* *
*

Քաչալ գացեր է սնձի՝ **)
Վախենամ կօտ կռնծի [1])։
Քաչալ գացեր է սոխի՝
Վախնամ գլուխ սղոխի,
Քաչալ գացեր է տանձի՝
Քաչլու լեզուն պապանձի։
Քաչալ գացի շլորի՝
Քաչլու գլուխ ոպլորի [2])։
Քաչալ գացի չորթնի,
Քաչլու գլուխ որդնի։
Քաչալ գացեր է բոզի՝
Քաչլու գլուխ պզոզի [3])։
Քաչալ գացի երնջկի՝
Քաչլու գլուխ պզոճկի [4])։
Քաչալ գացեր է խոտի,
Քաչլու գլուխն էր հոտի։
Քաչալ գացեր է կորդեր,
Քաչլու գլուխ որդներ։
Քաչալ գացեր է ֆէջէ՝
Արջեր թափած թամաշէն։
Քաչալ գացեր է ***՝
Գիլան ուտին ղջ***։
Քաչալ քաղեր է օղին,
Քաչալն իտամ գրոզին։
Քաչալ քաղեր է վարոց,
Քաչլու գլուխ ցրմէն խոց։
Քաչալ գացեր է ջաղաց,
Քաչլու բերան մանցի բաց։
Քաչալի ձեռք ***՝ [5])
Մեր քաչլիկներ անհոգի։
Քաչալ կաներ վըր գարին՝
Ջաֆէ գարկեր էր վըր ***։

Բ.

Զանազան երգեր, գովք, պարեր եւայլն.

Գ ո ւ բ ա ն.

Գութան, գութան
Աստուածաբան,
Ելաւ ընկաւ հրտ առափան,
Հրտ ակոսին,

[1]) Մեծ գլուխ. [2]) հասակ. [3]) բարակիկ. [4]) կարմիր, [5]) փափուկ, գէր. [6]) ճիւռտք. [7]) հաստլիկ. [8]) գռուզ. [9]) նմանել։
*) Մօր մը գովասանքը իւր որդուն։
[1]) Արագաշարժ։
**) Քաչալներու տնազ անելու համար։
[1]) Զորնալ, կուչ գալ, առհասարակ մազերու և ցորենահասկի համար.
[2]) Քաչալնալ, գլխի կաշին թոզ տալ.
[3]) Ջուր կտրիլ, բշտիլ. [4]) Նոյն.
[5]) Գործիք, հնձած ցորեն հաւաքելու խուրձ կապած ժամանակ.

Հրտ արոսին,
Ձէկն է տուեր՝ դրաու սամին,
Ջուհաբ տարէք խազնադարին։
Հորեաւոր հորուի գետին,
Փոշիտուն՝ փոշին գլխուն,
Մինտուն, մուկնի բերան,
Խոյոր տուն, խնձոր գոտին,
Խարդն տուն, խարդան թևին.
Ճաշտուն, ուժնի թևեր.
Սերն ու պանիր, մոլորեր,
Խէրն ու բարին, մանճկալորին.
Առաւէլ, հայ, առաւէլ *)։

* * *

Ջուրն է ելի առուներ,
Գրող տանէ զպաւուներ,
Ջուրն է ելի ջաղցներ,
Աստուած պահէ զաղջկներ,
Ջուրն է ելի կորդեր,
Աստուած պահէ զէրտեր **)։
Կանանչ վարոց տղէկներ,
Կարմիր խնձոր աղջիկներ.
Թաս ու թէփսիք կնկտիք,
Ուտիք, չուտիք կուրտիք։

* * *

Ձընգռ մընգրու իմ տամպուրէն,
Առայ ելայ ոչ ու ոչէն,
Ջուր մը խմի կարմիր կժնէն.
Պագ մը առայ եարոջ թշնէն,
Ձէնսի թողի Գոզալ դարէն,
Խաբար ելաւ անուշ եարէն,
Ձէնի պիտի թալիմ քարէն։
Տնէն ելար էրէ Բէրի.
Քրգի կըսէն որբէւէրի.
Կրակ ընկի ջանսի կէրի։

* * *

*) Գուլթանը, բացի սովորական հարիւրէն (զոյգմը լծեալ եզ) ունի և եօթ գոնէ, այսինքն եօթ զոյգ լծուած գոմէշներ, և իւրաքանչիւր տունն ունի իւր առանձին անունը։

**) Խոռդ քրդ. նշ. երիտասարդ։

Գիշրիկսի ես դուրս ելայ,
Թուխ ամպ անուշ կը ցօլէր,
Կը ցօլէր Հալուայ սարուն,
Ձատ բարև հեռուն եարուն։
Եարուկն էր բաղչէն ի քուն,
Ռուրսայու բարձեր գլխուն,
Քներ էր քրտներ էր,
Կզայ թէ պագիկ մ՝ առնէնք,
Գլորայ ու գնդան ընկայ։
Էն գնդան ինչ մեծ գնդան,
Մէջ վարդ էր բոլոր ռէհան,
Յուսսի ս. Սարգիսն էրի.
Եկաւ ու զընձի հանեց։

* * *

Թ ր ռ Ն ի ֆ է - պ ա ր. [1])

Որ չթռնայ զիտայ պար,
Ոտներ կոտրի քիոնայ քար.
Կտրի ընտրա ճար ու վար։
Լէն տուն ու բոլոր էրկէն,
Խօրօտկներ իմ գէրգէն.
Սուն ու գերան էր պիտէր,
Սրտով սիրով եար պիտէր։
Որ չթռնայ զիտայ քար,
Ոտներ կոտրի քիոնայ քար.
Սարէն իջայ եկայ ցած,
Կզայ վերցի թաժայ հաց,
Անտրի շուն գիս էլսած,
Ընձի ինչ խածել պիտէր,
Ընձի գերկ ու ծոց պիտէր։
Որ չթռնայ զիտայ պար,
Ոտներ կոտրի քիոնայ քար,
Ձուն թալի սարեր լորխի, [2])

[1]) Նայելով խաղալու տեսակին՝ պարերը ունին հետևեալ անունները. 1) Թռռոնէ (թռնալով պարել) 2) Քօչէրի, 3) Ձէրտր, 4) Խարոյ շրջր, 5) Ռուսեն պարի. 6) Քէլանդարի, 7) Գէրանի. 8) Եարմ ֆէրոնի. 9) Գլորիջան. 10) Ձոլ պար իմ ջուանէն. 11) Թռֆուորֆուվ. 12) Հարի՞ մայմայ։

[2]) Լորի նախ կը նշանակէ առանց

Զիմ եարն ու քուն չըմ փոխի,
Եարոջ ՝ՆՋՔ չըմ կոխի.
Ջուխտակ սարեր հովն ընկաւ
Ջուխտակ ջէյրան ծովն ընկաւ.
Որ չթռնայ զիտայ պար,
Ոտներ կոտրի քիոնայ քար։

* * *

Գեշ կնկայ գովք (պար)

Տօ, գեշ կնիկ, քո հէր հորիմ,
Մածուն կուզեմ թան կը բերես,
Թիզ մը բորբոս մուկն ի երես,
Գեշ կնիկ կիգէր վերին թաղէն,
Մկներ տապկի լցէ թաւէն,
Կուտէն ինքն ու ուր ջանաղէն։
Տօ, գեշ կնիկ, քո հէր հորիմ,
Մածուն կուզիմ թան կը բերես
Թիզ մը բորբոս մուկն ի երես։
Քիթն էր պօռտուկ[1]) ՝ՆՄ կուզէր,
Սէլի դէջ խզմա կէնէր.
Ոտներ կոտրուկ ՝ՆՄ կուզէր
Թրքի կողով ջգմա կէնէր։
Գեշ կնկայ քիթ կը՝փրփռայ,
. . . կը մընի ձիթի ՝ՆՄ.
Տօ, գեշ կնիկ, քո հէր հորիմ,
Մածուն կուզիմ թան կը բերես,
Թիզ մը բորբոս մուկն ի երես։

Գ.

Սրբոց երգեր.

Եկան սարով, եկան ձորով,
Եկան երեք կանանչ կապով,
Մէկն է Յիսոս, մէկն է Քրիստոս,
Մէկ Զնդանեց (?) Ասուարածին։
Հրեշտակ դէմ դիպաւ բարով,
Դոր կերթաս յառէջ բարով։
—Կերթամ դուռնի հիւնդին,

Զինջիլ բերիմ բոլոր պատին,
Իրեք բեռեռ կէր էն խաչին,
Մէկ սիրտ սատանին,
Մէկ բերան գէլ գազանին,
Մէկ շուռ գայ գիշերին,
Գայ նստի վերև բարձին,
Զուր գայ գալոց Քրիստոսին.
Պահապան հրեշտակ, պահապան
կանիս։

* * *

Մեր Տէրն եկաւ ամպով խաղաց,
Զորեկողմ աշխար դոզաց,
Եկաւ նստաւ աթոռ փառաց,
Զէն տուեց հրեշտակաց,
Եկաւ Պօղոս, եկաւ Պետրոս,
Որ երիք բերան զէնք ցիշայ՝
Խուր ընկնայ չխուրուրի (?),
Սուր ընկնայ չսասանի,
Աչքնի դժոխք չընկնայ,
Արքայութենին արժան եղնի։

* * *

Ճրաղ ճրաղ ճշմարիտ,
Ճշմարեալաւ (?) մարտիրոս,
Մեր սիրելի Քրիստոս,
Հեծաւ ուր կապուտ քուռակ,
Գնաց ի յուրնի քաղաք,
Կոտրեց դուռնի պղնձին,
Քունն անուշ, երազն ի բարին։

* * *

Երնէկ երնէկ զէն տարին,
Երուսաղէմ շինեցին,
Զինեցին ՝ՌՄՏԷՆ,
Անուն Յիսոս անուանեցին։
Եկեղեցի մ՝ կայ վերև մե,
Հրմալ սիւտակ քընց եղևնիկ,
Որ երեք բերան զէնի ցիշայ,
Խուր ընկնայ՝ չխուրուրի,
Սուր ընկնայ՝ չսասանի.
Աչքն ի դժոխք չընկնայ,
Արքայութենին արժան եղնի։

Հիւսուածքի այն կաշէ փոկը (դայիշ) որով լուծը կը կապեն. այստեղ՝ թերևս ՝ՌՄՏԷՆ, կապել։

[1]) Ճղած, ծակած բան որ հղուի՝ կըսեն պօռտել։

ԱՌԱԾՆԵՐ.

Աստուած որ ոչ ընծղուն անկաջ էնէ,
Վարդեվարին ձուն կը դնէ.
Աստուած զսար կը տեսնայ, գձուն կը դնէ։
Աստուած երկու ձեռք է տուի
Մէկով բաց, մէկով դիր։
Աստուած որ ձախէ, տար ծախէ։
Աստուած զմարդ Դամարդին [1]) մուխլուած [2]) չէնէ։
Աստուած դարտ տուեր, դարման լէ տուեր է։
Աստուած արժանաւորին կիտայ։
Աստուած որ տուեց, չըսէ. Դու վիր [3]) տղէն ես։
Աստուած մէկ, ուր ստեղծած հազար ու մէկ։
Աստուած որ տուաւ, երկու ձեռքով կիտայ։
Աստծու պահած դառ դէլ չուտեր։
Աստուած չհանէ ահն ի սրտէն, ամօթն չերեսէն։
Աստուած զերկէն ձեռք չկարճցու։
Աստուած զփլաւ վիրն է տուի, զիշթէն [4]) վեր։
Աստուած տայ լաքուն [5]), որ տայ իր ձագուն։
Աստուած փրկէ ու ազատէ լապտրկու [6]) չետին չուֆթից [7])։
Ածան հաւ կրկճան կեղնի։
Ակաս մակաս էդ էր պակաս։
Աստուած վատ դրկեցի տուն կաւրէ։
Ամէ կու [8]) խլինք ուր [9]) մռթին [10]) քաղցր է։
Աղուրսու բերան խաղողին չրհասաւ, ըսեց. խակ է։
Ադամորդուն բախտ չկայ։ (ապերախտ է)։
Աշխարք դմակ, մարդ մէջ դանակ։
Աղջիկն ուր պապ [11]) կելնայ, տղէն՝ մամ։
Ամէն հաւք զազու հաւկիթ չածայ։
Արպ խախուտ, մհանէն [12]) կարկուտ։

---

1) Զմարդ, տմարդի. 2) տճ. մէօխթաճ. կարօտ. 3) որոնւ, ոչր, ում. 4) տճ. իշթահ, ախորժակ. 5) լաք—ծնողք, ժողովրդական. 6) լապտրակ—նապաստակ. 7) տճ. չուֆթա, չիֆթա—աքացի. 8) Ամէկ—ամէն մէկ, իւրաքանչիւր. 9) իւր. 10) մռութ—շրթունք. 11) Բուլանրղցոց լեզուով հօր կըսեն պոպ, պապին՝ պապէ, մօր՝ մամ, մեծ մօր՝ ջաջայ. 12) տճ. պատճառ։

Ալնի էր հերք չէ, խանձրահամաւ։
Արջ կը մրմռայ, ուշքնի տանձն է։
Ահիկն է տարի զմահիկ։
Աղ ու հաց՝ սիրտը բաց։
Արջն ըսեր է. բանից չըմ վախնայ, երկու աղբօր մօտէն կը վախնամ։

Աւել քանի Բաղաց է աղէկ կաւլէ։
Աղէկ տղէն ուր պապուն աղբէր է։
Աղէկութիւն զտէր գտնէ։
Աղուրսու բան իշուկէն ինչ է։
Անուն կայ, անկուն (անկիւն) չկայ։
Ամէկ երկրին մէկ թագաւոր,
Ամէկ կնկան մէկ գլխաւոր։
Ամպ օր՝ պառուն առաւօտ։
Ամէկ Ծաղկից մէկ հոտ կիգայ։
Ամէն բան բարակութենից կը կտրի, մարդն՝ հաստութենից։
Արև ես, ամ (բայց) ուրիշին լուս կիտաս։
Աչքէն հանիր դրիր անկաջ։
Աղքատ՝ հպարտ։
Անամօթի երես թաքուցին, ըսեց. Անձրև կիգայ։
Ագռաւն ուզեց սինամ հաւքի [1]) պէս քէլէր, համ զուր մոռցաւ, համ գրնդրան [2]).

Անօթի փորուն, ջուր տուր ուռուն։
Առնելուն տալ լէ [3]) պէտք է։
Աղքտի ձեռք կտոր մէ [4]) հաց իս տեսի։
Աշխարք տես ու ուս է։
Ամէկ գկրակ ուր բաղրջի տակ կը քաշէ։
Անօթնէ՝ կէսօրընէ կը պարկի քնի։
Անհախ կեղնի, անճաշ չեղնի։
Անգահ [5]) ճեռ ես։
Առանց ճիտուն [6]) լէ լուս կը լուսնայ։
Արևով էրէ գգ ու ճար, անարև չմնաս անճար։
Աշխարք ջրբեր է։
Ամէկուն հէր, Աստուած էնա [7]) տէր։
Ամէկու գօտին խնձոր մ'է դրի։ *)

---

[1]) Սիրամարգ. [2]) զանոր, նրան. [3]) այլ, էլ. [4]) մի, մը, [5]) գահ, գեահ, ժամանակ, ատեն. [6]) ճետ—աքլոր, աքաղաղ. [7]) որբ.

*) Գեղացի մը մէկ գեղեցիկ աղջիկ մի կունենայ. քառասուն երիտասարդ կը սիրահարին այդ աղջկայ վրայ։ Հայրը երիտասարդ։ելուն

Անողորմի ճժու գլխուն մազ չբուսի։
Աղբատ իրիցու քարոզ մարդ չլսէ։
Ամէկ ուր թանին թթու չլսէ։
Ամէկ [illegible] [1]) տակ գլուխ մէ կայ։
Ամէկ ուրին (իրին) հաւան է, միզար ուրին հաւան է։
Այս օրուայ փուշ, վաղուայ նուշ։
Ամէն օր ջուր գերան չբերէ։
Անէծքն երկու բերնէն սուր է։
Ակռի կեղտով փոր չկշտանայ։
Անձրև օր հաւերուն ջուր տուող շատ կեղնի։
Արուն արնով չեն լուայ, արուն ջրով կը լուան։
Ամէկ հաւք հրտ ուր երամին։
Աշխարք արօտ, ես մէջ կարօտ։
Ամէն բանին վերջն է գովանալի։
Ամէնքն իմ մամու քէֆ կը հարցուն, իմ պապու քէֆ հարնող չկայ։
Անճար կերեր է բանջար։
Աղէկ ձին զուր է (կեր) կաւելցու, վատ ձին կը պակսցու։
Ամէն շուն գէլ չխեղդէ։

կը յայտարարէ, թէ առաւօտ եկէք իմ արտս քաղելու, տեսնեմ ձեզ-նէ ո՞ր մէկն որ ամէնքէն կարիճ քաղ արեց՝ աղջիկս նորան կըտամ։ Իսկ աղջիկ [illegible] հաւ խնձոր կառնէ և ծածուկ ամէն մէկ տղային մի հատ կը նուիրէ, ըսելով որ [illegible] ո՞ր կայ՝ [illegible] է, չկայ՝ [illegible] է։ Երիտասարդներ կը հաւաքուին և կրակ կտրած կսկսեն քաղել դեղացու արտը։ Խորագէտ աղջիկ մի կողմ կանգնած կը քաջալերէր երիտասարդները. «Ես մատաղ կեղնիմ այն երիտասարդին ո՞ր [illegible] է», բայց ո՞ր մէկի գօտին խնձոր չկար։ Իսկ հայրը կըսէր՝ ես իմ աղջիկս նորան կուտամ, որ աջ ու ձախ չայքէ, իսկի չկայնի, պարապ չմնայ, ոտքէ գլուխ փոշու ու քրտնքի մէջ թաթախուի և առ իմ աղջիկ ունեցած սէրը իւր անխոնջ աշխատութեամբը ցոյց կուտայ։ Երիտասարդներ մինչև երեկոյ զարկին ու զարկուան, փոշու ու քրտնքի մէջ կորան. դէն գացին դէս եկան և, մինչև իրիկուն՝ գեղացու արտը վերջացուցին։ —

Աղջկայ հայրը նկատեց որ երիտասարդներէն մէկը, թէև ընկերներէն յետ չմնաց. նոցա նման արիւն քրտինքի մէջ կորաւ, բայց այնպէս կը շարժուէր, որ ոչ ոտքերը փոշոտեց և ոչ հանդերձները աղտոտեց։ Բոլոր երիտասարդները հաւաքելով իր մօտ, և մինչ նոքա սրտատրոփ կսպասէին նորա վճռին, նա այսպէս հրամայեց. Ես իմ աղջիկս կըտամ այս երիտասարդին, որ թէև ձեզնէ պակաս քաղ չարեց, պակաս աշխատութիւն չթափեց, բայց և այնպէս ժամ եկաւ՝ որ իր հանդերձները իսկի չփոշոտեց։ Նա որ կրցաւ իր հանդերձները մաքուր պահել՝ կարող է և իմ աղջիկս լաւ պահպանել։ — Սորանից յառաջ է եկել առածս՝ թէ «ամէկու գօտին խնձորմ՝ է դրել»։ —

[1]) Քօլոզ (քրդ.) բրդէ գլխարկ։

Ամէն օր իծու ագին է բաց, օրմ՝ լէ թող մաքուն եղնի։
Աշխարքին եղայ գէլ ու գազան, քեզի ինչ կերայ։
Ալրուստ կայ՝ սև շապիկ է։
Աղբ փոր կեռայ՝ գինայ հրագու է։
Աղէկ լողոր ձկան փորն է։
Արջ որ գահնայ՝ քոթոթներ ձուերու հետ կը խաղան։
Աղուէս զուր պոչ շհատ կը բերէ։
Աղքտի տղէն գնաց որ խեղդուէր, տեսաւ որ գօվլաթուրի տղէն
կը խեղդուէր՝ ինք յետ դարձաւ։
Արտ հլոյին, կորեկ հալոյին, կռնկներ վրէն կռիւ կէնին։
Անալուր խաղք էր՝ ալրոտաւ էլ։
Անսովրցել մի սովրեցու, սովրցած մի կորի։
Աղէկ եզ լծան տակ բէջ- (յայտնի) կէնէ։
Աշխարն ինալ գինաս,—իմ պէս։
Ամէն Ղազար Ղազար չեղնի,
ամէն գազար գազար չեղնի։
Ամէն կնիկ կնիկ եղնի,
պատեր չրմէն պլիկ կեղնի։
Ինչքն արդար, սիրտ մեղաւոր։

Բուէ [1]) տանձն է վի (վեր) բուէ տանձի պոչ։
Բանի մէջ բան կայ. կամ կրսեն,
Բան կայ բաղնոց։
Բարակ, բարակ, քանց թուների կողերն էլ բարակ *)։
Բանի էրող եղնէր՝ մկա փախեր էր մտի մկան ծակ։
Բարեկամի հետ առուտուր մ՝ էնի, կերուխում էրէ։
Բաղդատ սխտոր ծեծեն՝ հոտ սեր քիթ պիտի առնի։
Բերանս է շող՝ քիթս ագուգայ,
Ինչ որ ասես, վրէս կիգայ։
Բերնով ուզեմ, ինչով ուտեմ։
Բան դրին փախաւ, հաց դրին հասաւ։

---

[1]) Տճ. բաղի՝—երբեմն.

*) Քաւոր (կնքահայր) կերթայ իւր սանամօր տուն, սանամէրը բոլորովին մերկ լինելով ամօթէն կը փախնի մտնայ թոնիր. տեսնելով սանամօր թշուառ դրութիւնը կրսէ քաւորը. գնացի թէ չէ, թօփ մի շիլայ կուղարկեմ, թող սանամայրս շապիկ մի կարէ հագնի և իր մերկութիւնը ծածկէ։ Կնքաւոր դեռ ոտք չէր փոխէ՝ երբ սանամէրը կրսէ երեխաներուն, թէ քաւորոջս յայտնեցէք որ բուրդ չէլայ թող ուղարկէ։ Կնքահայրը կիմանայ և դառնալով կրսէ. «սանամէր, բուրդ, բուրդ տանց Ռուների կողէրն էլ բուրդ։

Բէբախտ [1]) մարդու ձին շատ չփախնի։
Բոզին աղջիկ մի տար, բայց զաղջիկն առ։
Բոբիկ ոտք սօլկրի դուռն է։
Բրին [2]) տիրուն ցաւ [illegible] [3])։
Բուք ու սխսխ, աղքտի կերած սոխ։
Բուրդ կնտեր, խառնուեր դառներ։
Բրդուճ մը մթան, կաժէ կով մի կթան։

Գող գողուց գողացաւ.
Ճստուած վերև զարմացաւ։
Գիլ..ու անունն է ելի,
Ազուէսը աշխարքն է քանդի։
Գիլու ձագը [illegible] [4]) չեղնի։
Գիլու գլխին աւետարան կըկարդէն
Կըսէր շուտ էրէք, ոչխար զսար ընցաւ։
Գերին գին ելնայ, տիրոջ կը հասնի։
Գոլիր մի հանիր [illegible] շալաք։
(Այսինքն լաւ կերակուր ուտելէ յետոյ, վատ մի ուտեր վրան)։
Գողուն, բոզուն երդումն է։
Գողութենի, բոզութենի [illegible] (ժամանակ) 40 օր է։
(Այսինքն քառասուն օր յետոյ յայտնի կը լինի)։
Գողն որ տնէն եղնի, եղն երդիքէն կելնայ։
Գոդութեն [5]) չաժէ զարքայութեն։
Գառտ էջ աղբրի ակնէն ջուր կը խմէ։
Գեղ կանի, գերան կը կոտրի։
Գէլն անօթնէ չէր կրնե քէլի, կըսեն. տեսէք, ինչքան կերի,
որ չկրնայ քէլէ։
Գմշուն ըսին ինչքան կապրիս. ըսեց. ձէթն ու ջուր գինան։
(Այսինքն որքան լուանաս գոմէշն և ձէթ քրսես, այնքան
երկար կապրի)։
Գլորաւ խուփ՝ գտաւ զպուտուկ։
Գլուխս ալրոտ տեսար, ջաղցպան գիտցար։
Գող, սիրտ գող։
Գիտուն աղուէս երկու ոտքով կընկնայ [illegible] [6])։
Գլգլի վնաս արջուց հարցու [7])։
Գեղ դզեն, գաւառ մանեն,

---

1) ապերախտ. 2) վէրք. 3) թուալ, երևալ։
4) Ընտանիք. 5) Ծուլութիւն. 6) (քրտ.) Թակարդ 7) Գլգիլը կորեկի նման, բայց խոշոր հատերով հացաբոյս է. խիստ կը բարձրանայ և արջեր մէջ կը բնակին։

Անուն գայ Զուշան խաթունին։
Գորտան երես մէկ հալ թ.քուցին,
Էլ մարդու երես չաչքեց։
Գովացինք լալուխան,
Ելաւ կուեց պատուխան։
Գէլն ինչ գինայ ջորին գին է։
Գ-ռ-ի[1]) շան գլուխ գիլու փորն է։
Գլուխս չըմ գինայ, վըր ինչ բարձի է։
Գողն ինչ կուզէ,—մութ գիշեր։
Գնաց պագեց, գնաց պագեց,
Քօռ վարդապետի ձեռքը պագեց։
Գաւառցին թաւ դրեց ի ծու բերան,
ու դարձաւ զպոչտակ տնտղեց թէ էջ խլաւցաւ[2])։

Դատան խոզեր,
Կերան բոզեր։
Դատաւորին աչք չկայ, ականջ կայ.
(Այսինքն դատաւորը ամէն բան աչքով չի կարող տեսնել, այլ լսելով կամ երկու ու երեք վկաներու տուած վկայութեանց վրայ հիմնուելով դատաստան կընէ)։
Դաւ դատաւ
Մահրում[3]) նստաւ։
Դարբնին դանակ չեղնի, ջուլհկին՝ պատանք։
Դու ընձի ֆ-ռ մ'ըսի, ես քրզի ֆ-ռ-ի (կաղ)։
Դեռ չեղերէ կը կարդայ։
Դեռ չէ գացի աւազան,
Ձեռք կը թալէ գաւազան։
Դէ[1]) որ քոնթի[2]) իգայ,
Քոֆ[3]) Բաղդադու կիգայ։
Դիւռն հարի[4]) դժոխքի ճամբէն նշանց չիտաս,
Արքայութենի ճամբէն չճանչնայ։
Դէվէն (ուղտ) ինչքան էլ փիտնայ[5]) կաշին 7 խիտր կելնայ։
Դէվին (ուղտ) ըսին, վիզդ յօրին ողոր է, ըսեց.

---

[1]) (քրդ.) Գայլեսեզդ, գայլ խեղդող շուն։ [2]) գերանալ. [3]) (տճ.) Մահրում, զուրկ, զրկեալ։

[1]) (քրդ. և տճ.) դաճ, մատակ շուն. [2]) Ցռ-ի ֆ-ռ ցռ-ի կամ չէ ֆ-ռ բառերս խտրանօք կը գործածուին սուրբ և անսուրբ կենդանեաց համար։— Կով, մատակ՝ ցռ-ի կը գան, ոչխարը՝ ֆ-ռ-ի կը գայ, ձին, ֆ-ռ է կըսուի, իսկ շուն, գէլ, արջ, որոց հետ և էշն ֆ-ռ-ի են եկած կըսեն։ [3]) Ձուն. [4]) Մինչև. [5]) Փ-ս յտանալ, սատակել, մեռնել.

Ո՞ր տեղս է շիտակ, որ վիպս շիտակ եղնի։
Դուրս քհանայ՝
Ներս սատանայ։
Դէվլն (ուղտ) հեծեր ես,
Կուզէ կուզ կը փախնես։
Դհոչ քում, գօպալ քում,
Քանի կրնաս, զարկ հա զարկ։
Դէվի (ուղտ) ուրախութեն վրը կարմնչին կիպայ։
Դէվին գլխով ջուր կիտաս։
Եկեր է գրսենին,
Դուրս կէնէ զներսենին։
Դարբ [1]) որ աչք քիսաւ՝
Աստուած զունքն ազատ էնէ.
Գեղացիք կըսեն. կնիկն որ կը ծեծես՝ զարկ զունք կոտրէ, էն ժամանակ էլ կինը չիլայ, ինչու—կին կըսէ Աստուած զիմ աչքն ազատեց, ունքն (յօնքն) իր քէֆն է։ Վերևի առածը թէև այս մեր ըսածը ցոյց կուտայ՝ բայց հակառակ կերպով ըսուած է, և առհասարակ սրախօսութեանց ժամանակ այս ձևով կը գործածէին գիւղացիք։
Եթմու տէրն Աստուածն է։
Երեխին բան տուր ու գնայ յետև։
Երկու երնէկ [2]) մէկ տեղ չեղնի։
Ես բրդեմ դու քրթես։
Երկաթ տաք-տաք կը ծեծեն։
Ես քու ոսոսոսալ [3]) դու՝ Աստծուն։
Ես ձեր տուն, դու վեր տուն։
Ես աղա, դու աղա,
—մեր բնաղուն որ կաղայ։
Եզն որ ընկնայ։
—դանակ կը շատնայ.
Ես իմ արծած հորթիկ՝
գինամ ինչ մալ է։
Եղ կեռայ՝ վարդն ի վրէն։
Եբոր [4]) Բէյջան [5]) եղաւ պլիկ ու փարայ,
Նոր դու կեղնիս իմ Բորայ [6])։
Երկնուց աղուէս կը թափի։
Եղած են օձու լակլակ։
Երկէն մարդու խելք ուր չոքերն է։

[1]) (տճ.) Հարուած. [2]) Երանի։ [3]) (տճ.) յոյս։ [4]) Երբոր։ [5]) Ամբ է ի Բուլանըղ գաւառ։ [6]) Հալ, հաւասար։

Երսանց հայելի, տկանց արծլի։
Ետև գողնալՀն գուռ կը փակէ։
Եղաւ քրնց կիրիրի սերման բերող։ *)
Եռ [1]) աղն է պակաս եռ մաղ։

Խօսքը նոցա համար է, որ շարունակ բան կուզեն։ կուզեն, կստանան և, չանկարծ՝ դարձեալ կուզան, բան խնդրելու։ Երբ սա դեռ չէ մօտեցած՝ քթի տակէն կը մրմնջեն՝ ահա եկաւ, եռ աղն է պակաս եռ մաղը։—

Երես տուինք աստառ լէ կուզէ։
Եղեր է քրնց հարիսի ոսկոռ։
Երկու գանգատուոր որ մէկ տեղ չեղնին,
Մէկ՝ գմէկէլ խեղդել կիտայ։
Եզ կը կանկցուն, զհորթ տակ կը փնտռեն։

Զարչի, վաշխառու, արծաթասէր մարդոց համար կըսեն այս խօսքը. և առհասարակ գիւղացիք քաղաքացւոց կուզղեն, ցոյց տալով որ չեղած տեղէն բան կստեղծեն։

Ես Ենտօն եմ,
քօքանց կը հանեմ Կանդոնին [2])։
Երկնուց ինչ որ գայ, գետին պիտի վերցու։

Զողորդ խօսք ճժուց ու ՈՐԽՇԷՆ [3]) խնցիր։
Զոտով կերէք, անոտք մերծաւէն է։ **)
Զոքանչն ու փեսէն, վայ չթթուի քասէն։
Զճաշ տեսաւ՝

---

*) Կրիաներ ուզեցին ցանք անել, մէկն զրկեցին որ սերման համար ցորեն բերէր։ Գարուն գնաց, ամառ արտեր քաղելու ժամանակ նոր վերադարձաւ, ճանապարհին ընկաւ քաղած արտի մը մէջ՝ և ոտքն քիսնալով ցորենի ծղօտներուն՝ ընկաւ վար. ինքն իրեն բարկանալով բացականչեց. «Է, Աստուած վռազով երթացող մարդու տունն աւերէ. որ այսքան չշտապէի, ինչու պիտի ընկնայի և ինչու ոտքս պիտի արնոտէր»։—Գործու մը համար տեղմ՝ ուղարկուողը երբ ուշանայ՝ կըսեն Եղաւ տանց կիրիրի սերման բերող։

[1]) (տմ.) կամ։ [2]) Կանդոնին մացառէ. որ տներու և առուներու եզրները կը բուսնի, ու ՈՐԽՔԷ ՓՈՅԼ կը համարուի՝ եթէ տներու վրայ բուսնի։ Կծու հոտ ունի, որոյ թփերը կը ծեծեն և անասնոց վէրքերու մէջ կը դնեն որդունքը սատակեցնելու համար։ [3]) Հարբած։

**) Գաւառցին իր տղայոց հետ չամիչ կուտէին, երբ խումբ մը ԲՈՂՃ (միջատ) այն կողմէն դուրս տուեց։ Տղայք, հրամայեց հայրը, չամիչ ուտելը թողէք, դարձէք վրը բոլոՃներուն. ՈՓՏՐԷՆ ՈՒՏԷՆՔ, ՈՆՈՏՔԸ ՄԷՐ ԾՈՒԱՆ Է, երբ ուզենանք կարող ենք ուտել, էն մերն ու մերն է։

Քամէն մոռցաւ։
Զէն է ծծի՝
որ գիսէ կծի։
Զինչ շարժէր՝
զէն կաժէր։
Զարկի լորուն՝
Քիսաւ ջորուն։
Զանգինի ծուռ եղնեղն ողորդ է։
Զէն ամիս կը հոգամ որ ընձի շահ է։
Զձիան նալեցին,
Իշուան ոտներ վերցին։

Էն շուն էլ էն շնէն,
Երկուս մէկ տնէն։
Էն մալն [1]) որ իր տիրոջ չնմանի,
Եան գտածուրիկ է, եան գողածուրիկ։
Էշ չեղնի մատաղ,
Էլ իշու գին կեղնի։
Էծն որ էծ է,
Ջուր տեղ կը փորէ, ապա կը նստի։
Էծ գուր արև կիլայ,
Ղասապ գնրագուն։
(Գործի մը
Էշ հեծնելը մէկ ամօթէ,
Իջնելը երկուս։
Էշն ինչ գինայ զգէշ։
Էշ, կըսեն, եօթ լոդ գինայ,
ամա գետի մօտ զըմէն կը մոռնայ։
Էն տարին որ մեզի կոտաւատ շատ գայ,
Իշու պոչիկն էլ լուս կիտայ։
Էն գինայ մըջ լոշին հալուայ կայ։
Էծն ուր ոտնէն կը կախին, մաքին ուր ոտնէն։ *)
Էվելի բրդուած վոր աչք կը հանէ։

---

[1]) Կենդանի, անասուն, հայվան։

*) Դիւանա-Քալուլը գահէն և թագէն հրաժարած թագաւոր մ' էր. գիշեր և ցերեկ մտատանջութեան մէջ էր, թէ իմ եղբայրս (թագաւոր) որ այսքան մարդիկ մեղաւոր՝ անմեղ, կը չարչարէ ու կը տանջէ, կաքսորէ կամ կը գլխատէ, ինչպէս ես պատասխան տամ Աստծոյ առջև։ Այնպէս ըլլատահեցաւ, որ նա մի անգամ սպան-

Ըսէ՛ ջան՝ լսէ՛ ջան։
Ընչիկ ունիմ, պնչիկ ունիմ,
Իսկի բանէ խաբար չունիմ։
Ընձնէ՛ է էլի՝ լողկը սովրցու [1]։
Ըսած է առուտուր,
Ձրսած առուկուլ։
Ընձի պահէ՛ բողչամիջի,
—Ես քեզ պահեմ մարդամիջի. (ջուր է ջոդը)
Ըռէսի վրէն լուս է իջի.
—ոն է տեսի՝—գգիր։
Ըսին կրակ որ թողեց քու գլուխ՝
—Ըսեց. Ես.—Դէ՛հ, քաշէ՛ թող քու հոգին ելնայ [2]։
Ըսելն ու էնել՝ իրարու աղբէր են։

դանոցի առջևովը կանցնէր. տեսաւ որ ֆրէնշը (զասապ) այնը մորթեր՝ ջոկ իր ոտքէն է կախեր. և ոչխարը մորթեր իր ոտքէն կախեր։ Ծիծաղեց. . . ահա ինձ օրինակ, ըսաւ նա, որ այնը իր ոտէն կը կախեն և ուխարն՝ էր. եղբօրս գործքերու համար ինչու ես պիտի պատասխանատու լինիմ Աստուծոյ առջև։

[1]) Էշ վստահ լինելով որ ինք եօթ տեսակ լող գիտէ, գնաց գետ լողանալու. ջրի մէջ մտաւ թէ չէ՝ եօթ լողն էլ մոռցաւ. գետը յորդած էր, ալիքներ քշին էշն գետի մէջ տեղ, խեղճ անասուն տեսաւ որ խեղդուելու մօտ էր՝ սրտի կսկիծէն փնչէց. դարձաւ ետև նայեց՝ որ փշկուլն [1]) ալեաց վրայ հանգիստ տատանելով, լողալով յառաջ կերթայ. նայեցէք, ըսաւ նա իր փշկուլին, ինչե՞ է նէ, ինչ չը կը սովրցու։

[2]) Խլաթցիմը ձմեռ ժամանակ Բաղէշէն կելնայ որ երթայ տուն, չկրնալով գիւղ հասնել, գիշեր կը մտնայ Բաղէշի ճանապարհի վրայ գտնուած աւերակ խանէրէն միոյն մէջ. Մտնելուն պէս կը տեսնէ որ, տանց մէջ ոչխարներ լիքը լցուած. ճրագներ վառ՝ պար բռնած կը խաղան։ Էլ յետ դառնալ անկարելի կը լինի, կը նստի մէկ կողմ և կը գիտէ պարոնէրու և հարսանիքին։—Էն մէկ պարիկ (փէրի) կը մօտենայ նորեկին, ճրագ մը կուտայ ձեռք ու կը հարցնէ, «Քու անուն ինչ է»։

—Ես. կը սպասխանէ խլաթցին։

«Լաւ, կըսէ պարիկ, արի նստի իմ կշտին»։ Կը նստեն։ Խլաթցին գողտուկ ճրագ կը մօտեցնէ պարիկի գլխուն և կրակ կը թողնէ ի Ծամեր։ Պարիկ կը ճրւայ, կը բօռայ,—եաման, իմ գլուխս կրակ ընկաւ, իմ ծամեր երեցան, եաման, հասէ՛ք օգնութեան։—Բոլոր հարս-

---

[1]) Իշու և ձիու կուն՝ կը կոչուի փէնու, ոչխարին ու էշին՝ պոռ։, կովուն, եզան, գոմշուն՝ ԲԷ։, եթէ պինդ է, իսկ գարնան՝ ցոդէ։ Թրիքն որ կալերու մէջ կը տարածեն ու կսկեն մաս մաս կտրել, կըսուի պոռմ. չորնալուց յետոյ՝ ցան։ Ձեռքով շինած ցաներ ունին ԱԼԱՐ, ԽՐՅԷ, ամբարաջ Լայլն անունները նաև։—Դաշտը մնացած չոր թրիքն կըսուի ԲԷԼԷՐ։

Ըսելու մէջն ու էնելուն՝ սար ու ձոր կայ։
Ընձի չհաւատայ, իմ իշուն կը հաւատայ։ [1])

Թագաւորի քասէն էլ ճանճ կընկնայ։
Թունդիր չկայ ցան ու փոշի,
—Գլուխ կապեր է թուխ ֆ--չի։ (գլխակապ)
Թողեց գաւառան՝
—Առաւ զտամբուրէն։
Թունդիր եկեղեցի է։
Թէ խաչն իմն է՝
—Զօրութեն ես գինամ։
Թէ առաջին մարդ գենայ յետին ինչ կը խօսայ.
—Առաջին խսկի չխօսայ։
Թիզ ու կէս՝
—Գետնի Մովսէս *)։
Թուրքն անիծած՝
—Խօսքն օրինած։
Թողեր գսաղ,
Ընկեր կտորի ետև։
Թող բօլ ըլի՝
—Թող սև ըլի։

Ժամանակ էն ժամանակն էր՝
որ կատուն փահլեվան էր։
Ժողովուրդ քնած առուծ է,
որ զարթաւ էլ չքնի։
Ժամկոչին ժամ կանչել մը պիտի։

նքւորներ կը հաւաքուեն վերջնոյս մօտ, կը հարցուն.—Էդ որ ֆ-ֆ ֆ-ֆ ֆէ-ֆ.—Ես, կը պատասխանէ։—Ի՞, որ դու ես թողի կրակ քու գլուխ՝ գնա քաշէ թող հոգիդ էլ ելնայ։—Հարսանիք կը խանդարուի և դևերն աներևոյթ կը լինեն։

(Ժողովրդական զրոյց)։

[1]) Խոջա-Նասրադդինի դրկիցը գնաց խօջից էշմ՝ ուզելու, որ ցորեն բառնար տանէր ջրաղաց։ «Գլուխդ վկայ՝ ես էշ չունիմ», ըսեց խօջան։ Այդ խօսակցութեան հետն էին՝ երբ էշը ախոռի կողմէն զուռն հանեց։—Խօջա, ապա կըսէիր ես էշ չունիմ։—Ի՞հ, տեսէք հա, ընչի չհաւատայ՝ էմ էշն էլ հաւատայ, ըսեց խօջան։

*) Երհամարական խօսք մը կը համարուի այս առածը և, կուզուեն կարճահասակ՝ ու խորամանկ մարդոց։

Իմալ [1]) շիլն յԱստուած՝
Աստուածն ի շիլ (կաչքէ)։
Իրան շինող՝
ուրիշին քարոզող։
Իշու բեռ ինչքան ծանր եղնի՝
Էնքան շուտ շուտ կը քելէ։
Իմալ գեղի նախիր՝
պառուու մոզիկն էլ հետը։
Ինչ որ ցանես՝
Ջէն կը քաղես։
Իշու մրիքէ զռալն է։
Իմ բան աջ ա՝
ոն կուզէ թող հաջայ։
Իմացողին մէկ՝
Չիմացողին հազար ու մէկ։
Իշուն բանջար խաշէ,
Թէ կերաւ մէկ էլ խաշէ։
Ինչ իլիկ, ինչ խիպլիկ,
Ինչ քաչալ Յունօն, ինչ իր կնիկ։
Իմալ որ սանդն է,
Հրմալ լէ վարսանդն է։
Ինչ թալեցին վրը իմ թաւին,
Թող իջնայ վրը քու թաւին։
Իմ յետին տարուան մեղք է։
Ինչից որ կը պատռէնք՝
Էն ելաւ իմ գլուխ։
Ինչ տուն՝ ինչ տանուտէր։
Իմ կով թըղ յղի եղնի,
Երբ կը ծնի՝ թըղ ծնի։

———

Լամկու ճան ճուկ է (քրդու բան յաջող է)։
Լօլօ, լօլօ, քրդու լամկունն էլ լօլօ։
Լիք գացիր գարտակ եկար։
Լէն փորիկ՝
Ընկեր նեղ օրիկ։
Լուից ճրագու կը հանեն։
Լեզուն մէկ կը խօսայ, հացն երկուս։

———

[1]) Ինչպէս, ոնց որ։

Խաբէն որ եկաւ՝
Հրտ հիդրաց կիգայ։
Խաչն եկաւ՝
Դեւ խափանաւ։
Խրատ խեւին ինչ էնէ.
Սապոն սեւին ինչ էնէ։
Խոտորնակին խոտորնակ։
Խօսք ջոջին՝
Բան պզտկին։
Խիլն եկաւ,
Աչքն չիստկաւ։
Խունկ խաչերուն կը վէլէ.
Բլած բերդին ինչ կը վելէ։
Խիրէն [1]) թալած է շան՝
Ձուն չկերեր է։
Խանէ բէն կաղէկնայ,
Լեզուին չաղէկնայ։
Խելք մեծ ու պզտիկ չհարցու։
Խելքն է կերի գաշխարք։
Խլինքոտ քթին ծուխ ու մուխն էր պակաս։

———

Ծառ շլորի մի տնկի,
Քուրդը հեռաց մի կրէնի,
Կերթայ բերէ գալ մը նուրիկ,
Կիգայ նստի քընց մարդ ու իրիկ,
Հաց վըր ծնկան՝
Աչք վըր կնկան։
Ծուռ վըր գեղին իր աւով է.
Ծուռ գնաց հարսնքառուն,
Ըսեց յոռ [2]) աղէկ է քընց մեր տուն։
Ծուռ աղուն՝ Աստուած կաղայ։
Ծուռ ակոս մեծ եղնէն է։
Ծառ չկայ որ քամի չառնէ.
(այսինքն մարդ չկայ որ չմեղանչէ)։
Ծաղիկ վըր ուր քօքին կը բուսի։
Ծիծեռնկու վնաս՝ լողկի տիրոջ մօտէն հարցուցէք։

---

[1]) Ղայրաթ, համբաւ, պատիւ։ [2]) Այստեղ. յոնայ՝ այնտեղ։

Ծակէ գքու մոգին,
մ' ընկնայ դուռնի բոգին։
Ծակ հլուն գետին չմնայ։

Կին որ կայ՝
Մարդու կեանքն ա։
Կիսուր մեռաւ,
Հարսի տեղ լէնցաւ։
Կսկծու,
Փաւք Աստծու։
Կապրի զրկուկ, (զրկեալ)
Հապրի զրկող։
Կատուն ինչքան բարձրէն թ
վըր ուր թաթերուն կընկնայ։
Կատուին ըսին հէրդ է լաւ,թէ մէրդ,
Ըսեց. նաւ, նաւ (ոչ այս, ոչ այն)։
Կարօն կը հաւնի Մարոյին,
Մարօն չհաւնի Կարոյին։
Կով կթող զկով կթող չկրնայ խաբէ։
Կնիկ, քեզ կասեմ,
Փարչիկ, դու իմացիր։
Կնիկ առնէ վարդապետ,
Ճառմէն քաշէ Կարապետ։
Կուժ ջրի ճամբէն կը կոտրի։
Կարդալն եփուկ հաց է,
Դրուկ մարդու ծոց։
Կտաւ կտաւ,
Վիր խելք մտաւ։
Կատուին ըսին քու աղբ դեղ է,
Աղբեց ու անթողեց։
Կոշտ նստի, քարի դարդ կիլայ։
Կակուղ գչոր կը տանէ.
(Համբերութիւնը բարկութեան կը յաղթէ)։
Կերաւ փլաւ,
Ակքեր ջաւ (ուռաւ, դուրս եկաւ)։
Կատուին խաղ է,
Մկան մահ է։
Կարմիր կով կաթ կիտայ կիտայ,
Յետև աքցով կը պարկէ թափէ։

Կիրերէն իր կօտից չփախնի։
Կօտ մը կորեկին ինչ ունի — նրմանջան [1])։
Կատուն մսին չհասաւ,
ցրսօր (այսօր) Ուրբաթ է ըսաւ։
Կարճ մարդ սատանայ կեղնի։
Կնիկ ազգի ծամն երկեն է՝ խելք կարճ։
Կը կանի ոտաց փստուկ,
Չկանի լեզուի փստուկ [2])։
Կտրած նուռ, կոտրած կուռ,
Ձերկուս կառնէ խելքէ ծուռ։
Կակուղ լեզուն զօճ ծկէն կը հանէ։
Կրակն ու բամբակ մըտ երար չընապրի։

Հարի Աստծու դիւան էլ
Մարդուն մարդ պէտք է։
Հարի խելացին բոբկցաւ՝
Ծուռ զգետ ընցաւ։
Հարի հարոն եկաւ հաւաբ
Հաւ կերաւ զձաւար։
Հարի հաստ բարակնայ՝
Բարկի հոգին դուս կիգայ։
Հարի երեխէն չիկայ՝
Մամ ծիծ չիտայ։
Հարի գարուն եան էշ կը ֆիտոյ, եան իշու տէր։
Հարի յետին գայ՝ առջին կերթայ։
Հարի առուն ջուր իգայ՝
Գորդան աչքեր դուս կիգայ։
Հարի չիգայ յետին՝
Չիշուի առջին։
Հարկ զօրէն կը էրէ (լուծել. աւերել)
(Հարկ զօրէն լուծանէ)։
Հարսի ձեռքով
փեսին աղէկութիւն կէնէ։
Հարիսէն՝
կորեց զխսէն։ (խօսք, խօսակցութիւն, զրոյց)
Հաց մարդահան՝
Հաց մարդակորուս։
Հաւն որ հաւ է, որ ջուր խմէ՝
Ոստուած կաչքէ։

---

[1]) Երկաթեայ գործիք ջրաղացի։ [2]) Փստալ՝ սահիլ, սայթաքել, և փըստուկ՝ սահած, սայթաքած, լպոտրած։

Հեռանայ աչքից՝
Օտարանայ սրտից։
Հէրանց տան ասեղ որ չեղնի՝ չկրնայ կարէ [1]).
Հրտ գիլուն գառ կուտէ,
Հրտ տիրուն շիվան կէնէ։
Հինգ մատէն որ մէկ կտրես, որ արուն չեգայ։
Հացն երեսէն կուտուի։
Հում կաթ ուտողին մ՚երթար։
(Ադամորդուն՝ որ հում կաթ ուտելով կը մեծնայ, մի վատահիր.)
Հաց տուր հաց թխողին,
Մէկ էլ աւել տուր։
Հար Զուշան զարդարուի,
Պատարագ կարձակուի։ [2])
Հաստ ու բարակ մէկ գին է,
Վա՜յ գայ բարակ մանողին։
Հաց ու պանիր,
Կեր ու բանիր։
Հարի Աստուած 800 զուբուշ չառնէ, ջորիմը չիտայ [3])։

---

[1]) Աղջիկ Թառէն ոչ ոք չէր առնի։ Պառաւներ մէջ ընկան, դէն գացին, դէս եկան մինչև որ կպուցին մի տղի գլուխ։ Հա՝ Թառէն արեւուպէս փէլք կիտայ. հա, աւեր տան մը սիւն է, մատներով մարդ կը շինէ (լաւ ձեռագործ գիտէ), այսպէս է, այնպէս է ըսելով կարգեցին։ Աղջիկ Թառէն այժմ հարս Թառէ էր։ Մի օր Թառէի կեսուրը ըսաւ. հարս, որդի, վերցուր քու մարդու շապիկը կարէ։ Թառէն վերցուց շապկացու կտաւը. շրջեց, շիտկեց, ասեղ դէս խթեց, դէն խթեց, բայց Աստծու կրակ եղնի. թէ կարաց կուիմի կարել։ Կեսուր վրայ հասաւ և երբ սկսեց նախատել, «Քա ինչպէս ընեմ, ըսեց Թառէն, հէրանցս տան ասեղ որ չեղնի՝ ես ի՞նչ կարող եմ կար անել»։

[2]) Ախուրեան գետի ձախ ափի վրայ գտնուող Բագրան (հին Բագարանը) գիւղի ազգայինք կը պատմեն՝ թէ Բագարանի Տիկին Զուշանը մի անգամ կը ցանկանայ ս. Թէոդորոսի վանքը, որ 1/4 ժամ հեռաւորութիւն ունէր քաղաքից, պատարագին ներկայ գտնուել. բայց մինչև որ կը զարդարուի և այս ու այն պատրաստութիւնը կը տեսնայ՝ պատարագը կարձակուի։ Քանիցս կրկնուելով այսպէս՝ խոսակցութեան առարկայ, հուսկ ապա առած կը դառնայ ըսել, թէ հոգի Զուշան ողորմուն, պապուփ կոչցնուն։

Կը պատմեն նաև որ Տիկին Զուշան ս. Թէոդորոսի վանքի հեռաւորութեան պատճառով՝ իր ծախքով եկեղեցի մը կը կանգնէ Բագարանի մօտ, ապառաժի մը վրայ, որ մինչև այսօր էլ կայ, և Զուշանայ վանք կամ եկեղեցի կը կոչուի։

[3]) Վռշիկ քուրդ մը խիստ լաւ և ընտիր ջորի մը կունենայ։ Ջորին մի օր հիւանդանալով կը սատակի, իսկ քուրդն նստած օրնի բուն կուլար ու կողբար։ Երբ դրկեցներ եկան ու զինք մխիթարել

Հարի գռզկի ծամերն եկաւ,
Զուն (ձիւն) ցռիկ կպաւ [1]։
Հարի չ'նմանին,
Զխնամին։
Հաց դրած,
Բանն անիծած։
Հրմալ կերաւ,
Ինչ որ երեցն ուտէ ուրիշի տուն։
Հազար մեռնի մէկ չ'շիւարի,
Մէկ մեռնի հազար չշիւարի։
Հրմալ է կորտի,
Ինչ որ գզրի հօր գանկ։
Հաւ չեղի,
Հաւկիթ կածայ։
Հայու յետին խելքն ընձի եղնէր, կըսէ քուրդ։
Հեռուանց գէլու աչք կը հանէ,
Մօտեւանց գտիրուն։
Հրտ կաթին մտած,
Հրտ հոգուն կելնէ։
Հազր տղին տատ մէր է։
Հայու գլխէս կորած է դրած յետև,
Հոլ ըսեր է խաղաղութեն է։
Հաւն ի կուտն է մեռի։
Հաց հացին փոխ է։
Հազար ասեղ մէկ գութնի խոփ չեղնի։
Հէքիմն էն է, որ գլուխն է ելի։

Զեռք զձեռք կը լուայ՝
Երկուս գերես։
Զին ձիու քով կապես՝
Եռ աքցան կիգայ, եռ կծան։

ուգելով ըսին. «մի՛ լար, Աստուած ողորմած է, էգ ջորին սատկաւ՝ Աստուած մէկ էլ կուտայ»։—Է՛, բարեկամք, ըսաւ քուրդը, մեռնիմ Աստծուն, ես էլ գիտեմ որ ողորմած է, բայց հաստատ գիտեմ որ, մինչև որ Աստուած 800 ղուրուշ չտայ՝ ուրիշ ջորի մը չի տար»։

[1]) Զիւն հարսնախօս ուղարկեց գռզիկի [1]) մօտ, թէ քու աղջիկն չեմ տար իմ տղին։—Կուտամ, ըսաւ գռզիկը, բայց սպասէ, մինչև որ աղջկաս ծամերը երկննան».—Մինչև որ գռզկի աղջկայ ծամերը եկան, ձիւն կպաւ ցռիկ. հիւանդացաւ և մեռաւ....։

---

[1]) Գռզիկն բանջար մ՚ է։

Ձին ու ջորին կռուան,
Մէջ տեղ էշ գնաց ոտք։
Ձեռք վըր ձիռաց ռաբ է (վարպետ, հգօր եայլն)։
Ձուկ գլխէն կը հոտի։
Ձուն է եկի՝
որ ոտքերս մրսի։
Ձուաձղի սիրուն՝
Թաւի պոչ կը պագեն։
Ձուկն ի ծով կը մեծնայ։
Ձուկն ի ծով բազար չեն էնէ։
Ձեռք ձեռաց կուզէ։
Ձիաւորին հասի, ոտաւորը քու մօտն է։

Ղուկաս գինայ գիր խաբ. (չափ, հաշիւ)
(Ամէն մարդ իր հաշիւը գիտէ)։

Ճիժ մհանայ,
Մամ կշտանայ։
Ճգտիկն է էրի
Ձիսի պգտիկ։ *)
Ճրագն ուր տակ լուս չիտար։
Ճրագի առջև չախմախ չեն գարկի։
Ճաշ տեսաւ՝
Քամանչէն մուցաւ։
Ճնճուղ ճմրան ըսեց. Գարուն եկաւ գուրպայ կը գործեմ.
որ եկաւ գարուն՝ օրեր տաքցան՝ ես իգոր, գուրպէն իգօր, ըսեց։
Ճանճ բան մը չէ,
որ ընկաւ ի գատ (կերակուր) կը հարմէ։

---

*) Դաշտեցի մուկը գնաց գիւղ իր խնամուն տեսութեան, վաղուց էր որ գիրար չէին տեսեր։ «Խնամիջան, ըսաւ դաշտեցին, ինչու այսքան նիհարացած էք. երեսնիդ գոյնը փախեր է, դուրս եկէք, մի քիչ պտտեցէք, սրտերնիդ թող բացուի. ձեր այդ նիհարութեան և անգունութեան պատճառը ձեր նստուկ կեանքն է»։

Դաշտեցի խնամին խօսքը դեռ չէր վերջացուցեր, երբ կատուն միւս կողմէն յարձակուեցաւ և փամբ մի գարկաւ իւր խօսակցի գըլխուն, գարկելուն պէս մուկն արեց՝ ճրզ՝դ։—Ա՛խ, խնամիջան, ասեց գեղացի մուկը, ահա այս ծպտիկն է էրի ջիս պղտիկ։

Մէկ մէկով,
Երկուսն Աստծով,
Երեքն ու չորս գօրով։
Մանէն մանած՝
Պատէն կախած։
Մամ սխտորիկ, պապ սխտրիկ,
Յղէն որ պիտի ելնայ ֆ-ը ու վարդիկ։
Մէկ տնով չենք,
Մէկ հալով ենք։
Մէկ օր բարոց բարեկենդան,
Մէկ օր անօթի սնգուտան։
Մալ՝ մաքին,
Մ'ուլք՝ էգին։
Մարդախաբ՝
Աստուածախաբ։
Մարդ մարդու քահանայ,
Մարդ մարդու սատանայ։
Մարդ ու կին՝ ջարդուկին։
Մուղսի Թմէն,
Նստի ձմէն, (ծմակ տեղ)
Ինքն իր քմէն՝
Կաժէ զրմէն։
կամ կրսեն՝
Ինքն իր քմէն՝
Կաժէ զրմէն։
Մալին տէր՝
Որդուն հէր։
Մսի մէկ տուն,
Թէ տաշ կայ սուն,
Ծուռ կայ տուն։
Մի վախենար էշ գետէն, (ելած, յորդած)
Վախեցիր մարմանդ գետէն։
Մեղք լալով,
Պարտք տալով։
Մէկ բան որ հնանայ,
կը շնանայ։
Մեղրին մատ մատ,
Ձամչին հատ հատ,
Մէկ էլ տեսար տեղը դարտակ։
Մէկ տէրտէր քառասուն մօլին ինչ ընէ։

Մէկն ամօթու ձէն չհանեց,
Մէկէլն ըսեց, ընձնէ կը վախենայ։
Մեռելից խարաջ չեն ուզի։
Մեծ մարդ որ կայ, կրակ է,
Ձատ մօտենաս, կիրիցիս,
Ձատ հեռանաս, կը մրսիս։
Մուկն ուր դուռ առուծ է։
Մէկ մէկի դարտից խաբար չունէ,
Կէս գիշերին ժամ կը կանչէ։
Մուկ կատուին վատ երազ կը տեսնայ։
Մահն ընկերով, հարսնիք է։
Մարդու աչքն ելնայ,
Անուն չելնայ։
Մէկ մէկի էգի մը տուաւ,
Մէկէլ ընրան ճութ մը հաղող չտուաւ։
Մուկն իր ծակ չմտնայ,
Ցախաւելն էլ պոչը կը կապեն։
Մարդու հաւ մը չեղնի,
Հաւմը չաժէ։
Մկան շեռն էլ ջաղցին քոյրս է։
Մկաւան (այժմու) մարդու փոր շուն կոռնայ։
Մաքու առջևէն գառ չեն վերցու։
Մեռնողի ետև մարդ չմեռնի։
Մեռնելն ուղտ է, չրմէն մարդու դուռ կը չոքի։
Մեռել հրտ վախտին կիլան։
Մէկ կէնիմ ու քէն կէնիմ։
Մէկի քա [1]) որ էնին, եան դուռն է, քա երդիք։
Մարդու մալ որ կորաւ, հոգին էլ կը կորի։
Մեռնի էն գլուխ, որ տաս գլուխ ուրնէ չցաւան։
Մարդուն դոր որ ցաւայ, հոգին էլ էն տեղն է։
Մարդու հոգեառն էլ թող մեծ եղնի։
Մարդու հինգ մատ հավասար [2]) չեղնի։
Մեռնողի ետև ինչ ասես կրսեն։
Մեկ մէկին ըսեց, մուրուքդ կը բռնիմ կը պտտցում աշխարք։
Մէկէլն ըսեց. Ձէ՞ դու էլ իմ հետնես։
Մէկ չամչով—մեխոնոյ չշինուի։
Մարդն օձ է, գկրունկ կը խածէ, պուպուճակ (ծոծրակ) կուռի։
Մարդ ինչքան էլ որ կռիւ էնէ,

---

[1]) Բաս էթմէք—յիշել։ [2]) Հաւասար։

Մէկ երես բարէշ-ընկեր կը թողէ։
Մէկն ի կովէն
Տասն ի ծովէն։
Մէկ ջաղցի փէշ կը լեզէ, մէկէլն ջաղցապնին։

Յետին խագքութեն
Ծաձկեց զառջին առակութեն։
Յօրէ տղայ, յօրէ աբ [1]։
Յէրդ քում չէ,
Խօմ չէրդաման քումն է։
Յօր ջոջութեն՝
Առակութեն։

Նեղ տեղ՝ մարդ իր մամու սիրողին աբ կըսէ։
Նստցում գոգս,
Որ ճեպռէ [2] մորուքս։
Նեղն ի անմեղ. (անմեղը նեղութեան մէջ կընկնի)։
Ն՝ (ոչ) խէրն ի խիարնոց, նա բարուէն ի ձմերկնոց։

Ձիւար գնաց
Մըտ բընդէ-ոբ [3]։
Ձան հաց թալ ու ընցիր։
Ձան որ ընկեր եղար,
Փէտ ձեռքէդ չթալիս։
Ձան պոչ կաղպար չառնէ. կեռ հա՜ կեռ։
Ձատ կարդացող սատանայ կեղնի։
Ձուն պէտք է հաջայ, հաջայ՝ հարի սատկի։
Ձատ վրը շատին,
Իշու . . . աղքատին։
Ձուն կը հաջայ,
Քարան կընցնայ։
Ձէն անուն վրը աւեր քաղքներուն։
Ձնէն շուն կեղնի։
Ձո՜ւքը [4]) իմ քենէ, իշտտուկ [5]),
Ջօրացեր է գարեփշրուկ։

---

[1]) Աբօ—հայր։ [2]) Ճեպռել՝ քանդել, պոկել։
[3]) Բընդէ-ոբ (քրդ.) դոռի դռ։ Նստող ազքատ։ [4]) Ընորհակալ եմ, գոհ եմ։ [5]) Բոյս է։

Զաքար է՝
Զան բերան է։
Զատ դատողին՝
Զալէ շապիկ։
Զան հաջալով եկեղեցին չպղծուի։
Զան կը զարկեն,
Տիրուն խոնէ կէնեն։
Զատ դարտի տէր,
Զատ կը խօսայ։
Զան գլուխ շան փոր։
Զուն որ կատղի,
Դեղ սպանելն է։
Զունն ինչ ուտէ,
Էն կաղբէ։
Զան կաղալը մինչև գիլու տեսնալն է։
Զուտ կարգւոզ շուտ ագրատ ուտող չփուշմնի։
Զուն շան միս չուտէ։
Զատ բան գինամ,
Ամ յետ ու յառէջս կաչքիմ։
Զատ մի սիրեր ատել կայ,
Զատ մի ատեր՝ սիրել կայ։

Ոսկին մանր է
Բայց գին ծանր է։
Ոտքերդ քու կարպետի չափ լարէ։
Որ շուայ՝
Էն կը բուայ։
Որ կուշտ՝
Էն չուշտ։
Ուր որ մարդու ղուշն եղնի՝
Ատծուն էլ յոն (հոն) կեղնի։
Ուր որ ահ ու երկիւղ կայ,
Ատուած էլ էն տեղ կայ։
Ուրիշի չընոով հոր մ'ինջնայ։
Ոչխարին հարի գլուխ եղնի հարիւր՝
Փոռ կեղնի հաղար։
Որ խաղայ՝
Նա կաղայ։
Ողորդ ըսողի գլուխ ծակ կեղնի։
Ոչ մարդանման,

Ոչ մարդահաւան։
Ո՞ն է տեսի, ո՞ն է լսի,
Որ չոր քարէն ոսկի բուսի։
Ուրբաթ քընց շաբաթ շուտ եկաւ։
Ուլ կողվի տակ չմնայ։
Ոչ էծ ունի, ոչ ուլ,
Սատանի ականջ խուլ։
Ոչ էն արի, ոչ էն բարի,
Երկուք մէկ արտի դարի։
Ոտքովն իշաւորի վրէն կը ծեծդայ։
Որն որ պար չելի՝
Գարմ՝ աւել կը խաղայ։
Ուզողի մէկ երեսն է սև,
Չտուողին երկուս։
Ուրին կը քնի,
Խալղին երազ կը տեսնայ։
Ոչ զգիր գիտէ, ոչ զգրի գօրութեն։
Որ ուէս՝
Իմ հալն էս։
Ոն որ ամռան պարկի հովեր,
Ձմեռ կը փետնան իր կովեր։
Ուր որ տանձ կայ՝ պոչն էլ հետն է։
Որ տուն չէշիներ՝
Գինայ սուն ու գերան մէջն է բուսեր։
Որ քու յոպով՝ [1])
Ձէշ կուտէ կապով։
Որ շատ երթայ աներանց տուն,
Կը կապեն դռան սուն։
Ուր որ ահ կայ՝
Ամօթ էլ կայ։
Ոչ քաղցր եղի որ կլուն,
Ոչ դառն եղի որ թքուն։
Որն ի ՝ւչ գորգիկն ի ճաշ։

Ձախուն գուր կոթ չտաշէ։
Ձուր աղն եկաւ՝
Մատաղ գնաց։

---

[1]) Յոպով—ա) համար, բ) ոմոպով յուսով։

Զոր աղբ մարդու փէշ չկպի։
Զգինայ վիր պատարագն է,
Գդալներ կը ժողուէ։
Զընգինայ որն է մեռի՝
Վայ Վարդան կը կանչեն։
Զտեսերէ.ր պատէն ի կախ,
Տեսաւ ճակտէն ի կախ։
Զար բարուն հակառ է։
Զուտողաց մալ,
Ուտողաց հալալ։

Պանրի տիկ շան է Ռուշէ էրած։

Ճաղայն է կորէ,
Ճախչախ կը քաշէ։
Ճուր որ տեղ մը շատ մնաց՝ կը հոտի։
Ճուր լիութենէն կը ճապղի։
Ճոչի ըսած,
Գզտկի լսած։
Ճրին ըսին ինչի կը գոռաս,
Ըսեց—տեղս քարոտ է։

Ուաղին (օղի) իծու փորն էլ լցնես՝
Կոտոշներ շէշ կը կանչեն։

Սառուռ [1]) իր տիրոջ ձեռք ղար է [2])։
Սար ու ձոր՝
Իրիցու փոր։
Սէլ չգոռայ՝
Սէլուոր կը գոռայ։
Սաղ խօսք իշուն կըսեն։
Սօլին ըսին ինչի՞ չբրեթ վիրև կընստես.
—Մուշտուկ եմ կերի, ըսեց։
Սուս ու փուս՝
Փախաւ դուս։
Սեր սովոր կուտէ,
Թան՝ մոլոր։
Սէրը դարձի սուր՝

---

[1]) Արհեստ։ [2]) Գերի։

Ջիֆոր դարձի ջուր։
Սէլ ծառցու,
Տէր ծարուցու։
Սրբիկ, էնքան էրի ու չհանեցիր,
—Ինքան հանեցի ու վրէդ չառար...։
Սոխին էլ քաղցր կեղնի։
Սուչ չիմողէ որ քոս լայ։
Սիմ, սիմ՝ Սիմաւոն։
Սպիտակ շուն բամբակ ծախողին վնաս է։

Վախեցիր քոռոց, քուչէց, Ռոփէց։
Վիրև կաչքիմ ունքս է,
Ներքև կաչքիմ մուրուքս է։
Վատ օր կաղէկնայ,
Վատ մարդ չաղէկնայ։
Վանք կուտէ,
Փակաղներ կը հաջայ։
Վայ զալուր՝ մրջ երկու քարին։
Վայ գնայն ի Տաճկի ընցում։
Վախեցիր յոնկուց՝
Որ չվախենայ Աստծուց։
Վուչ բօղազ,
Ինչ որ տեսնաս կը դողաս։
Վրր խալզին շներ կը հաջան,
Վրր մրզի՝ կատուրներ։

Տրեմ ես,
Գոմբեմ գքեզ։
Տարան տարան, քրդի շուն, քեզի ինչ տարան։
Տէր գլսաչ գօրաւոր կէնէ։
Տես քաւորոջ գալ՝
Ու սանամօր ցալ։
Տարին մէկ գատիկ,
Էն էլ նաւակատիք։
Տուն աւրողի տուն տուն չեղնի։
Տան իրիցուն օրհնէ՛ք ոչ չկայ։
Տնտես՝ հափսար տես,
Դատաստանին չերթաս սևերես։
Տէրտէր չրմնօր գաթայ չուտէ։

Տուն կայ տուն է,
  Տուն կայ՝ հաւաքուն է։
Տարով ի դաս՝ սուլթան ես,
  Ամսով ի դաս՝ խօնաղ ես,
  Ցրմնօր ի դաս՝ անհամ ես։
Տեղմ՝ որ մեծաւոր չեղնի՝ քար մը դրէք մեծ։
Տուն քըզի,
  Բակ հաւերուն։
Տղամարդը դրսու պատ է,
  Կնիկ մարդը ներսի պատ է։
Տես զկով՝ կաթն աղերսայ։
Տաս չափէ, նոր մէկ կտրէ։
Տաւար կապով կը կապեն, մարդ. խօսքով։

Ցուան կով նախրի անուն կաւրէ։

Փէտ վերցուս,
  Գող շուն կիմնայ։
Փառք եմ քու տնէն գարեփշրուկ։
Փէտի որդ ուրն է։
Փարայ եղնի, թէ չէ փարի տեղ շատ կայ։
Փայ էրողին փայ չմնաց։
Փեղ-ի էշ կը քաշէ,
  Որ գնալն հանէ։
Փորս դարտակ
  Բերանս արնոտ։

Քամին մեռաւ ցրտու։
Քացախ ինչքան բարկ եղնի, գուր տիկ կը պատուէ։
Քանի անօթնայ,
  Բարկենդանքի գաթէք մխտք կընկնայ։
Քարն ուր տեղ ծանր է։
Քաղցր լեզուն զօռ ծակէն կը հանէ։
Քաչալ գարգաս հէքիմ եղնէր,
  Ուր գլխուն դեղ կէնէր։
Քրիստոս յարեաւ
  Փամեր տարաւ։
Քօռ գիլու Աստուած մեծ է։
Քիչ կար ալրտուն,

Մէկ էլ պատաւ շողտուն։
Քու եօթ ընդէն [1]) գիմ մէկ աղուէս չկրնայ բռնէ։
Քոլ [2]) լիծուն կոտոշ չկէր,
Գինէր հերուան ուլուլիկն էր։
Քոռ իշուն քոռ նալբանդ պէտք է։
Քոռը շլին մնանայ կէնէ։
Քոռ մուկ ինչքան հող փորէ՝ վրը ուր գլխուն կիտայ։
Քիչ բանից շատ բան կը ծնի։
Քոռ թոզ մնայ յոռ,
Թէ գտաղն գտանք, գտանք,
Թէ չգտանք, քոռն հուր է։
Քու էշ պիտի գայ, ու իմ տուքնի գռուռ փէտնայ։
Քըզի ըսիմ բան մը,
Որ չաժէ ճան մը։
Քու ըսածն տանձն է,
Գանձ չէ։

Օտարի աչք մարդուն լուս չիտայ։
Օտարի սիրտ վրը մարդու չցաւայ։
Օջախ չեղնի պոռնիկ։
Օրն առաւօտքէն է բելու (յայտնի է)։
Օրիկ մի Յայտնութենէն,
Ոչ հաղարն ի վարդևրէն։
Օձ դաղձեց կը պատռի,
դաղձ օձու բնի մօտ կը բուսի։
Օձ ջուէլով [3]) դուս կը հանեն ծկէն։
Օձ ինչքան էլ ծռմռի,
որ եկաւ ծկու մօտ կը շիտկուի։
Օձու կծած չուրնի հետից կը վախնայ։
Օր կերթայ,
աւուր խաղէն չերթայ։

---

[1]) Թազի, բարակ, քերծէ։ [2]) Անկոտոշ։ [3]) Քրդ. խնդրելով։

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

1. Կարմիր պուտուկ վըր դարին,
Աչքով կէնէ թաթարին։
(բազուկ, ճակնդեղ).

2. Մութ փողան
Էրկէն սողան,
Սարկաւագներ մէջ կը դողան։
(գիւղական փականք).

3. Քըսթ յոդա,
Քըսթ յոնա,
Խուովի նստի յոնա։
(Աւել)

4. Հաւք մ' ինչաւ երկնուց,
Ոսկէ լական էր կտուց.
Հա էրեց, հու էրեց՝
Եօթ բան չգտաւ աշխարք։
(1. ջորուն՝ ծնունդ,
2. ծովուն՝ ծածկոց,
3. երկնուց՝ սիւն,
4. հաւուն՝ կաթ,
5. ափուն՝ մազ,
6. ծծին՝ ոսկոր,
7. լեզուին՝ փուշ)։

5. Վերև հով,
Գետին ծով,
Բերեց կով.
(Ադամ եւ Եւան)

6. Նստիմ հով,
Կթիմ կով,
Ամբիկ զարկիմ պատիմ ծով։
(կարկուտ)

7. Փէտէ օրոց քարէ տղայ,
Քանի զարկեմ կը վղվղայ։
(Տամպուրան)

8. Բոլոր տանիս,
Մէջ վարդենիս։
(Գարայ)

9. Էս տեղէն չուրի վան գազ մի չուան,

Մէջն իլին խալխալ ու քիմզան։
(Ծիածան)
10. Կեռ մանկզոն,
Հարի Տրապիզոն։
(Նոյն)
11. Էս տեղէն չուր ի Վան
Քառասուն կօտիկ կործման։
(Սուսկ)
12. Չու կածայ՝ հաւ չէ,
Կը խփխփայ՝ կաքաւ չէ,
Կարածայ՝ ոչխար չէ։
(Կրիան)
13. Ուլուլիկ, պուլուլիկ,
Մէջն իլին կարմիր ուլինք։
(Նուռ)
14. Ինքն ի հող՝
Մուրուքն ի շող։
(Բողկ, շողգամ եւայլն)
15. Չին ի ձոր թամքեցին՝
Գ֊ֆ֊ն երդիքէն հանեցին։
(ծուխ)
16. Կօլօտ Կարապետ
Քար կը կրէ բերդ։
(Գդալ)
17. Էն ինչ է՝ կերթայ կիգայ
Քո մօր փորուն բարև՝ կիտայ։
(ձձում=խնոցի)
18 Մարդ մը գնաց տուն մը շինեց,
Հար տուն պրծաւ ինք միջէն չելաւ,
(Գերեզման)
19. Երկու ձուկ ի մէկ տապակ
Մէկն պաղ, մէկն է տաք։
(Լուսին եւ արեւ)
20, Չորս չորթան,
12 Սուլթան,
Իրարու ետև կերթան։
(Գուբան)
21. Սուր սրման,
Արծաթ թռման,

Ոչ հայ է, ոչ մուսուլման։
(Օձ)

22. Հնդստան, Արաբստան,
Երկու կաքաւ եկան նստան,
Ձագեր թռան մերեր նստան։
(Փականք գիւղական)

23. Սարէն կուգայ սլվլալին,
Ոսկէ պեխեր պլպլալին։
(Գերանդին)

24. Ձորս հրեշտակ
Մէկ բլի (բլրի) տակ։
(Կովի պտուկներ)

25. Ձուր չիգայ Դիզդարաղէն
Ձփրթիր տիզնի պատէն։
(Բանալիք եւ կողպէք)

26. Մանրիկ մանրիկ եկեղեցի,
Դանկով զարկի զդուռ բացի,
Մէջ սիրով համբուրեցի։
(Նուռ)

27. Սև սատանէն
Կախուեր պատէն։
(Ձիթի փարջ)

28. Քռնուկ դադէն
Կախուկ պատէն։
(Մաղ)

29. Անձին ծնաւ,
Անմահ մեռաւ,
Անեղնել եղաւ։
(Քրիստոս)

30. Անջուր ջաղաց,
Անկրակ բաղարջ։
(Մեղր)

31. Նստիմ տակ,
Գռ՚ռցում ծակ։
(Երկանք)

32. Ինձի՞ձի մը կայ,
Ձիու փոր՚քուռակ մը կայ,
Քուրկու փոր քուռակ մը կայ։
(Ծիրան, կուս եւ միջուկ)

33. Հինգ աղբէր իրարու տեղ կը փորեն։
(Գուրբայի ճաղեր)

34. Էն ինչէ, գինաս ու չես գինայ։
(Մահ)

35. Ինձի գօլմ՝ կար,
Գօլի մէջ օձմ՝ կար,
Օձու բերան ոսկի մը կար։
(Ձրագ, պաsրոյգ եւ լոյսը)

36. Նանէն նստի փանջարէն՝
Պզտիկ կաձէ թանջարէն։
(Հաւ եւ հաւկիթ)

37. Արտմ՝ ունէնք, քաղեցի, խորոմեցի,
Արտ գնաց, խորոմ մնաց։
(Ոչխար եւ բուրդը)։



ԱՌԱԿՆԵՐ.

Գայլն եւ առիւծը.

Գէլն անօթացաւ, գնաց գտաւ գառուծ, որ եղնէն աղբէր մէկ տեղ նէճիրուաձութեն (որսորդութիւն) էնէն, ասրէն։

Գացին մրտ ձիու նախիր. առուծն ըսեց. Գէլ աղբէր, դու կանի անկանջ էրէ, տես ես ինչ կէնիմ, ու ինչ որ կը հարցուս քըզնէ՝ դու պատասխանէն տուր —Զատ աղէկ, ըսեց գէլ։

Առուծ գնաց ու եկաւ, գնաց ու եկաւ՝ ու կանաւ հարցուց գիլուց. „Գէլ աղբէր, իմ մազեր գժկցեր է“ (ցցուիլ)։

—Գժկցեր է, ըսեց գէլ։

«Իմ աչքեր արնխռներ է»։

—Արնխռներ է։

«Իմ պոչ կեռեր է, եկի վրը իմ ճակտին։

—Հա, կեռեր է, ուղճակատ լէ ելնցեր է։

«Իմ պոչ տակ լէ կը թալէ։

—Հա, ֆռ-ֆռ (շատ) կը թալէ։

Էլման գնաց ու եկաւ, գնաց ու եկաւ՝ ու զարկ ի ձիու մը փոր. հրտ զարկելուն՝ զձին էրեց երկու տասակ, թափան վրէն կուշտ մը կերան ու ելան գացին։

Ոլոր օր գէլն ըսեց. Առուծ աղբէր, էդ հէշ իմ գօրն է (հերթ). պէտք է ես ձի մը սպանիմ։—Զատ աղէկ, ըսեց առուծ։

Գէլ գնաց ու եկաւ, գնաց ու եկաւ՝ ու հարցուց առուծից.

«Առուծ աղբէր, իմ մազեր գժկցեր է։

—Զէ, ըսեց առուծ։

«Եա, ըսէ գժկցեր է»։

—Հայդէ, քու խաթրի համար կըսիմ գժկցեր է։

«Իմ աչքեր արնխռներ է»։

—Զէ։

«Ուա՛հ, ըսէ արնխռներ է»։

—Թըղ հրմալ եղնի, արնխռներ է։

«Իմ պոչ կեռեր է, եկի վրը իմ ճակտին»։

—Զէ.

«Տօ՝ հրմալ մ՚ըսի յէհ, ըսէ կեռեր է»։

—Կեռեր է։

«Իմ պոչ տակ լէ կը թալէ»։

—Զէ.

«Հայ հօ, ըսէ կը թալէ, տնաւեր»։

—Կը թալէ, գէլ աղբէր։

Գէլ գնաց ու եկաւ, գնաց ու եկաւ՝ ու գարկ ի ձիու մը փոր, ձին աղէկ ը-ՓԸԷ (աքացի) մը յիջուց (իջեցրեց) գիլու ճակտին, աչքեր թռան եկան ի դուրս։ Առուծ մօտեցաւ գիլուն ու ըսեց —Գէլ աղ բէր, նոր քու մազեր գժկցեր է, քու աչքեր արնխուներ է, քու պոչ կեռեր է եկի վրը քու ճակտին, ու քու պոչ տակ լէ կը թալէ։

Սլիկ երէց.

Կնիկ, կըսէ անգամ մը Սլիկ երէց, ելի գմեր տուն բառնանք վրը մեր իշուն, առնինք գմեր ճժեր երթանք դրախտ։ Ջտուն կը բառնան, գճժեր կէցկին յառաջև ուրանց ու կընկնան ճամբայ. շատ ու քիչ կերթան՝ Ադամ կիգայ —••• (պատահել)։

«Եա Տէրտէր, խէր եղնի, իդա հըմլա ճժով պժով, քօչ ու բար խանով դոր (դէպի ոուր) կերթաս»։

—Կերթամ դրախտ։

«Ի՛մալ դրախտ, երեց, դու ծուռ իս, խելքդ թռուցեր իս. հարի մարդ չմեռնի, չերթայ էն դիու աշխարք, կրնայ որ երթայ դրախտ։

—Դու ոն իս, հըմլա չգիտուիթենով կը զրուցիս, ըսէ գքու անուն տեսնամ։

«Ես Ադամն իմ, չըս ճանչնայ։

—Ի՛մալ. տօ Ադօ, Ադօ, յօրին Աստուած գքրգի առօք փառօք ստեղծեց, դրեց անմահութենի դրախտ, աշխարքի անուշ չանուշ տուեց քզի որ ուտէր, խմէր, ուրախնէր. դու չկշտացար, ելար. գԱստրծու պատուերանք կոտրեցիր, գծառի պտուղ կերար, գմրգի լէ չըն կրցուցիր (ընկենուլ) իդա հալ, չէ՞ իդա չըմէն գքու մեգքն է կը քաշինք. հը՛մ, դու էգ քու հալով կրցար գացիր դրախտ. ես չըմ կրնայ։ Տէր Սլիկ կը քաշէ զգօպալ (կոպալ, կեռ գլուխ ձեռնափայտ) կընկնայ Ադամայ յետև, Ադամ կը փախնի, ինք՝ կընցնայ երթայ հրա ուր ճամբուն։

Ջատ կերթայ, քիչ կերթայ, Մատոս Աղէն (Մաթուս աղա) կը հանպտի իրիցուն.

«Օրշնեա ի Տէր, Տէր Սլիկ»։

—Աստուած օրշնէ։

«Երէց, դոր կերթաս»։

—Կերթամ դրախտ։

«Ի՛մալ դրախտ. ծուռ իս, Տէրտէր, մարդ՝հարի չմեռնի, չերթայ էնդիու աշխարք, կրնայ երթայ դրախտ։

—Դու որն իս։

«Ես Մատոս Աղէն իմ»։

Տօ քրքրուկ Մատօ, յօրին Աստուած քրգի ին հարիր տօղսան (իննսուն) և՝ ին տարի •–՞ տուեց, դու չկշտացար. Աստծուց էլ ումր ուզեցիր, Աստուած լէ զուր հրիշտակ ճամբից քու մօտ, քզի ըսեց. Մատոս Աղա, գքու ձեռք զարկ վրը եղան պատեկին, ինչխզար (ինչքան) որ մազ ընկաւ ձեռացդի տակ, էն խդար լէ քրգի ումր կիտամ,

անկշտում քրքրուկ Մատո, դու յօրին գիտրդ թալեցիր վըր եղան. տեսար իմալ հրիշտակ լէ տվեց վըր քու գլխուն, գքու հոգին առաւ։ Դու քու ագահութենով կրցար գացիր դրախտ. ես չըմ կրնայ. կերթաս դէն թէ չէ զճաներդ կը ճարդեմ։ Սլիկ Երեցն որ զգոսալ կը վերցու, Մատոս Աղէն կը փախնի, ինք կընցնայ կերթայ։

Գացին գացին՝ Նոյ Նահապետն եկաւ ռաստ.

«Օրշնեա ի Տէր Տէր Սլիկ, գոր կերթաս։

—Աստուած օրշնէ, կերթամ դրախտ։

«Տէրտէր, ծուռ մ'եղնի, մարդ հարի չմեռնի, կրնայ երթայ դրախտ»։

—Դու որն իս զիդա խէ (խօսք) ընձի կէնիս։

«Ես Նոյ Նահապետն իմ»։

—Հրհ՞ըն, կրցար զԱստուած խաբեցիր, ջրհեղեղ հանել տուիր, գաշխար չըմէն աւրեցիր, հոպէ (ետոյ, ապա) գացիր դրախտ. քու հոգին ելնայ՝ ես լէ պտի երթամ։

Գնաց գնաց՝ Աբրահամն եկաւ ռաստ.

«Խէր եղնի, Սլիկ երէց, ուր կերթաս»։

—Կերթամ դրախտ։

„Ծուռ մ'եղնի, երէց, հարի մարդ չմեռնի, կրնայ երթայ դրախտ"։

—Տօ դէ մեռի. աղէկ մարդ մ'եղնէր՝ գքու տղէն չըր մորթի, զդալալ (ապնիւ) տղէն մորթեց՝ կրցաւ գնաց դրախտ, ես չըմ կրնայ։ Սլիկ երէց զգոսալն որ կը վերցու, Աբրահամ կը փախնի, ինք կընցնայ կերթայ։

Կերթայ կերթայ՝ Մովսէս մարգարէն կիգայ ռաստ.

„Տէր Սլիկ, յուր կերթաս»։

—Կերթամ դրախտ։

„Երէց, դու ծուր իս, հուռ իս (թերևս հ-ռ=տմ. ազատ), հրմլա ճժով պժով, հալահլով իմալ կերթցուի դրախտ. մարդ պէտք է մեռնի, երթայ էն դիու դ-ռ-նէ (դ-ռ-նէ=տմ. աշխարհք) հոպէ (ապա) մտնայ դրախտ։

—Դու որն իս, հրմլա զըմէն ճամբէք ընձի նշանց կիտաս։

«Զէ՝ ես Մովսէս մարգարէն իմ»։

—Տօ թլոլ (թլուատ) Մովսէս, դու շատ արդար մարդմ՝ ես, խաբեցիր գքու ազգ. բերիր անապատներ քառսուն տարի ղ-ղ-ղ (քրդ. մանաձել, շրջեցնել), զըմէն ջարդ ու փշուր էրիր, դու որ շատ արդար էր, յօրին սարի գլուխ մեռար, գաւետեաց երկրի յերես լէ չըկրցար տեսար, գնա դէն, գնա, թէ չէ զգոսալ վերցուցի զոտներդ կը ջարդիմ։ Սլիկ Երէց զգոսալն որ վերցուց, Մովսէս փախաւ, ինք ընկաւ ուր ճամբէն։

Խել մը գնաց, Դաւիթ մարգարէն եկաւ ռաստ.

«Տէր Սլիկ, գոր կերթաս»։

—Կերթամ դրախտ։

«Երէց, Աստուած գքու տուն չակոլէ (չաւերէ), կնիկ ճժով իմալ կերթաս դրախտ, ծուռ իս դու։

—Հալա (դեռ) գքու անուն լէ ըսէ, տեսնամ դու որն իս։

«Դաւիթ մարգարէն իմ, քոռիս, չըս ճանչնայ»։

—Տо եա՛ քоռնաս ու կուրնաս, տо պռժիկ (շէկ, չուռ) Դվо, քառասուն կնիկ էրիր, զՈՒրիէն սպանիր, զկնիկ յուրնէ խլիր, դու կրցար գացիր դրախտ, ես չըմ կրնայ. քէլէ, կնիկ, սըբ Կարապետու մառմառ գերեզման լէ գինայ՝ պիտի երթամ դրախտ՝ ու հըմլա քоչ ու բարխանով պտի երթամ։

Գացին գացին՝ մարդ մը էն դիէն „հоշա, հоշա էրեց՝ ու եկաւ գերիցու իշու յարջևն առաւ, բоռաց.

„Է՞, դու որն իս, ինչ մարդ իս, հըմլա քоչ ու բարխանով ուր կերթաս անհրամանք։

—Ես Տէր Սլիկն իմ, Տէր Սլիկ, առեր իմ զիմ ճիժ ու պիժ, կերթամ դրախտ։

«Դարձի յետ, դարձի՝ թէ չէ զհոգիդ իդա սհաթին կաւանդիմ, չարուխ բճով, կնիկ ճժով, էշ ու բարխանով ի՞մալ կերթաս դրախտ»։

—Դու որն իս, հըմլա կտոր կտոր կեղնիս, հոՒՒ կը բանցուս։

«Հոգէաւ Գաբրէլ հրեշտակն իմ, քоռ է քու երկու լուս»։

—Տо քоռ Գբо, դու օրական հազար հազար մարդ հոՒ, հոՒհոՒ, (իրաւ՝ անիրաւ) կ'սպանես, դու կրնաս երթաս դրախտ. ես չըմ կըրնայ։ Կը քաշէ զգоպալ կը լարէ Գաբրէլի յետև լորտմնի (ձգովի) մը կը թալէ, մէկ կը շխկցու (հարուածի ձայն) ի ճաներն, Գաբրէլ զմէկ ոտք կը վերցու, թоփլտեալէն կը փախնի, Սլիկ երէց կերթայ հրտ ուր ճամբուն։

Զատ կերթան, քիչ կերթան՝ հեռուանց սպիտակ ՀՀՀ ՒՒՒՒՒ կերևայ, կնիկ կըսէ Սլիկ երէց, կայ ու չկայ՝ իդա դրախտն է, արի նստենք, մրգի փրշուրմը հաց ուտենք, ըռբաթինք (հանգստանալ), յետև ելնանք երթանք դրախտ։ Նստան կերան, խմեցին, ըռբաթան, ու ելան դէմ էրին ի սպիտակ տներ, դրռ (դեռ) չեն հասած էն տներուն՝ որ մարդ մը եկաւ կանաչ յառջև ուրանց՝ հարցուց, դու որն եք։

—Ես՝ Սլիկ երէցն եմ, իդա իմ երեցկին է, իդոնք՝ իմ ճժկներն են, ինա լէ իմ իշուկն է, զիմ պաշարն իմ բարձի վրէն, եկեր ենք որ մտնանք դրախտ։

„Երէց, կըսէ էդ մարդ, դու խоմ ծուռ-չես, չէ՞ դու հՒՒՒՒ (իբր թէ) տէրտէր իս, վըր քու արևուն՝ կարդցուոր իս. զգիր ու գրի գоրութին գինաս, սև ու սպիտակի վրէն կաչքիս, հարի մարդ չմեռնի, չըթաղի. չերթայ էն դիու աշխարք կրնայ երթայ դրախտ»։

—Ախբր եկեր ենք կանի դրախտի դուռ, թող մտնանք ներս, ՒՒՒ (դոնէ) զդրախտի երեսը տեսնանք։

„Հէ՞, անկարելի է, չեղնի որ չեղնի էդ բան»։

—Դու որն իս, գքու անուն լէ ըսէ ցիմանամ։

«Ես Քրիստոսն եմ».

«Հայ Աստուած գքու տուն լէ աւուրէ, որ դու շատ աղէկ մարդմ՝ եղնիր՝ գքզի լէ չընքըռնի, չընչարչի։ Դարձի կնիկ, դարձի. երթանք, Աստուած քարուքանդ ու բրիշակ (աւերակ) էնէ հըմալ դրախտն, որ եգա խպար դավաճի (դատախաղ) չեղնի մարդու»։

Տէր Սլիկ գանէ զուր կնիկ ու ճիժ՝ փоռ ու փոշման կը դառնայ յետ։

Հ.Ս.Խ. Հ ԳԻՏ. ԱՌՈՒ ԳՐՈՒ ԹՅՈՒՆ
Ս.Հ.Ս.Հ. ԱԶԳ. ԳՐՈՒԹՅՈՒՆ
7/XI 1922
ԱՆՎԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՑԱՆԿ

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ.

Պատմական տեսութիւն . . . . . 7.
Տեղագրութիւն . . . . . 9.
Աղգաբնակութիւն . . . . . 32.
Կառավարութիւն . . . . . 37.
Բնակարան . . . . . 41.
Զգեստ և զարդ . . . . . 43.
Պարապմունք . . . . . 48.
Ուտեստ . . . . . 73.

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲԱՐՔ.

ա. Ամուսնութիւն և հարսանիք . . . . . 88.
բ. Տղաբերք և կնունք . . . . . 119.
գ. Մանկանց դաստիարակութիւն . . . . . 132.
դ. Մանկական խաղեր . . . . . 134.
ե. Ընտանեկան կեանք . . . . . 143.
զ. Հիւանդութիւն և գիւղական ճարեր . . . . 153.
է. Մահ և թաղումն . . . . . 170.
ը. Հոգի և հանդերձեալ կեանք . . . . . 180.

ՀԱՒԱՏՔ.

ա. Բարի և չար հրեշտակներ . . . . . 7.
բ. Կենդանապաշտութիւն . . . . . 14.
գ. Կախարդութիւն . . . . . 14.
դ. Աստուածութիւն և սրբեր . . . . . 18.
ե. Երկնային լուսաւորներ . . . . . 31.
զ. Լեռներու մասին եղած աւանդութիւններ . 36.
է. Նախապաշարմունք . . . . . 38.
ը. Նշանաւոր տօներ . . . . . 56.

ԲԱՆԱՒՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.

Ժողովրդական երգեր . . . . . 69.
Առածներ . . . . . 74.
Հանելուկներ . . . . . 101.
Առակներ . . . . . 105.

ТИФЛИССКАГО СОБРАНІЯ
БИБЛІОТЕКА